Ս. Կ. ՋՈՒԱՆՇԻՐ

ՍՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

XVI–XVIII ԴԴ.

ՀԱՅԿ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

М. К. ЗУЛАЛЯН

ЗАПАДНАЯ АРМЕНИЯ В XVI—XVIII вв.

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1980

9(47.925)
З-94

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մ. Կ. ԶՈՒԼԱԼՅԱՆ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XVI—XVIII ԴԴ.

929

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1980

9 (Շ 43) 1 ինդեքս ԳՄԴ 63.3 (2 Հ) 1
Զ 94

Պատասխանատու խմբագիր
պատմական գիտությունների դոկտոր
Լ. Հ. ԲԱԲԱՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ,
պատմական գիտությունների դոկտորներ
Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆԸ ԵՎ Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆԸ

Զուլալյան, Մ. Կ.

Զ 94 *Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ. /Պատ. խմբ. Լ. Հ. Բաբայան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980. էջ 425։*

Մենագրությունը նվիրված է հայ ժողովրդի առավել քիչ ուսումնասիրված ժամանակաշրջանի պատմությանը։ Հայկական, արևելյան ու օտար աղբյուրների լայն հիմքի վրա լուսաբանվում են Արևմտյան Հայաստանի XVI—XVIII դդ. սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության հետ առնչվող բազմաթիվ հարցեր։ Աշխատության մեջ քննարկվում են տվյալ ժամանակահատվածում հայ ազատագրական շարժման հիմնական ուղղությունները մինչև նրա ռուսական կողմնորոշման վերջնական ձևավորումը։ Գիրքը նախատեսված է հայ ժողովրդի պատմության հարցերով զբաղվողների, ասպիրանտների, ուսանողների համար։

Զ $\frac{0505040000-000}{703\ (02)-80}$ 21—80

9 (Շ 43) 1
ԳՄԴ 63.3 (2 Հ) 1

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XVI—XVIII դդ. բախտորոշ եղան հայ ժողովրդի զգալի մի մասի՝ արևմտահայ հատվածի ազգային ճակատագրի համար։ 1555 թ. Ամասիայի և 1639 թ. Կասրե-Շիրինի պայմանագրերով Հայաստանի տարածքի մեծագույն մասն ընկավ թուրքական ֆեոդալիզմի կրնկի տակ։ Օսմանյան տիրապետությունը փաստորեն եկավ ավարտին հասցնելու հայ ավատատիրական հասարակարգի վերջնական անկման պրոցեսը։ Հայ հասարակական կյանքում նշված ժամանակաշրջանում որոշ չափով բարձրացավ վաճառականության դերն ու տեսակարար կշիռը, վաճառականություն, որը փորձեց հոգևոր դեկավարության հետ միասին գլխավորել ազատագրական շարժումները, տանելով այն տորված ավանդական ուղիներով՝ դիմելով արևմտյան կաթոլիկ աշխարհին ու Հռոմի պապին։ Ի վերջո, հայ ազատագրական միտքը հանգեց միակ ճիշտ եզրակացության՝ գտնելով, որ հայ ժողովրդի ազգային ազատագրումը հնարավոր է միայն մեծ ու հզոր Ռուսաստանի ռազմական աջակցությամբ։

Արևմտյան Հայաստանում հաստատված օսմանյան վայրագ կարգերն արգելակում էին երկրի արտադրողական ուժերի զարգացմանը։ Քաղաքական առումով թուրքական տիրապետությունն իր հետ բերեց փաստական ստրկություն. հայ ժողովուրդն ենթարկվեց անլուր կեղեքումների, ճնշումների ու տառապանքի։

Արևմտահայ ժողովրդի ճակատագրի համար բախտորոշ XVI—XVII դդ. պատմությունը դեռևս խիստ թերի է մշակված սովետահայ պատմագրության մեջ, իսկ հաջորդ՝ XVIII դարի պատմությունը առանց չափազանցության կարելի է ասել, որ ուսումնասիրված չէ։ Այս հանգամանքը բացատրվում է աղբյուրագիտական հիմքի ոչ բավարար մշակմամբ։ Եթե նկատի չունենանք Վ. Ա. Հակոբյանի և Ա. Գ. Հովհաննիսյանի ջանքերով հրատարակության նախապատրաստված «XVII դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» հինգ հատորանոց ժո-

զոված, ապա ցարդ ոչ մի աղբյուրագիտական երկասիրություն չկա հրապարակում, մինչդեռ այդ ուղղությամբ անելիքները շատ են:

Գտնվելով Օսմանյան կայսրության պետական սահմանների շրջանակներում, հասկանալի է, որ անհնարին է Արևմտյան Հայաստանի պատմության ուսումնասիրությունը կայսրության պատմության ոլորտից դուրս: Առաջնորդվելով այս սկզբունքով, սույն աշխատության մեջ XVI—XVIII դարերի Արևմտյան Հայաստանի պատմության հարցերը շարադրվում են կայսրության պատմության հարցերի հետ ամենալայն առնչակցության մեջ:

XVIII դարում կայսրության քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության մեջ տեղի ունեցան էական տեղաշարժեր, որոնք, բնականաբար, չէին կարող իրենց կնիքը չդնել նաև Արևմտյան Հայաստանի պատմության վրա: Նախ՝ քաղաքական կյանքում, չնայած դարասկզբին արտաքին աշխարհում կայսրության ունեցած մի շարք ժամանակավրեպ հաջողությունների, դարի երկրորդ կեսին երբեմնի հզոր օսմանյան պետությունը գնալով ավելի ու ավելի ընդգծված ձևով տնտեսական ու քաղաքական կախման մեջ ընկավ եվրոպական խոշոր պետություններից: Միջազգային կյանքում ուժերի փոխհարաբերությունների փոփոխությունը հօգուտ կայսրության թշնամի եվրոպական պետությունների, ստիպեցին կայսրության ղեկավար շրջաններին միջազգային իրադրության բարդ պայմաններում խուսանավել, որպեսզի դրանով իսկ կարողանային օգտվել եվրոպական խոշոր պետությունների միջև գոյություն ունեցող հակասություններից ու պահպանել իրենց գոյությունը: XVIII դարում միջազգային կյանքում ծայրահեղ սրվեցին դեռևս նախորդ դարերում եվրոպական պետությունների միջև հստակորեն դրսևորված երեք գլխավոր հակասությունները: Եթե առաջին երկու հակասությունները դրսևորվում էին գաղութների տիրապետման, միջազգային առևտրի ու Բալթիկ ծովի ավազանում գերիշխանություն հաստատելու խնդրում, ապա երրորդ խոշոր հակասության հանգուցակետը Եվրոպայի հարավ-արևելքն ու Մերձավոր Արևելքն էր: Եվրոպական պետություններից յուրաքանչյուրը ձգտում էր ոչ միայն տարածքային կորզումներ ձեռք բերել Օսմանյան կայսրությունից, այլև իր տնտեսական և քաղաքական ազդեցությունը տարածել ողջ կայսրության վրա: Եթե XVI—XVII դարերում Օսմանյան կայսրությունը հարձակվողի, իսկ եվրոպական պետությունները պաշտպանվողների դերերում էին, ապա XVIII դարում իրադրությունը հիմնովին փոխվեց: Եվրոպական պետությունները Կարլովիցի հաշտության պայմանագրից հետո սկսեցին ավելի ու ավելի նեղել թուրքերին: Եթե Անգլիան, Ֆրանսիան, Ավստրիան պայքարում էին իրար դեմ Օսմանյան կայսրությունից տնտեսական և քաղաքական արտոնություններ կորզելու խնդրում, ապա Ռուսաստանը համառորեն ձգտում էր ազատագրել իր մերձսևծովյան հողերը թուրք-թաթարական զավթիչներից, ապա նաև ունենալ դեպի Սև ծով ու նեղուցներ և ապահովել իր ազդեցությունը Բալկանների ու Կովկասի վրա: Բնական է, որ նման հանգամանքներում Բալկանների, Կովկասի և Անդրկովկասի, նաև Արևմտյան Հայաստանի թուրքերի կողմից ստրկացված քրիստոնյա ժողովուրդները իրենց հայացքը պիտի սևեռեին դեպի Ռուսաստան՝ այնտեղից ակնկալելով օգնություն ու աջակցություն օսմանյան լծից ազատագրվելու համար:

Տնտեսական բնագավառում՝ բնորոշը XVIII դարի կայսրության համար հետևյալ կարևոր հանգամանքներն էին. եվրոպական խոշոր պետություններից կայսրության տնտեսական կախման մեջ ընկնելը, ապրանքադրամային հարաբերությունների զարգացումը գյուղում ու գյուղացու վինակի ծայրահեղ վատթարացումը, թուրքական ռազմաֆեոդալական համակարգի խոր ճգնաժամը, կենտրոնախույս ավատատերերի ընդգծված անջատողական ձգտումները, թուրքական ռազմական ուժի զգալի անկումն ու քայքայումը:

* * *

Ներկա աշխատությունը գրված է հայ և օտարալեզու աղբյուրների հիման վրա: Աշխատությունը շարադրելիս օգտվել ենք այն հայ հայագետների ու սովետական արևելագետների (Մ. Չամչյան[1], Լեո[2], Ա. Գ. Հովհաննիսյան[3], Հ. Ս. Անասյան[4], Վ. Ա. Հակոբյան[5], Հ. Սիրունի[6],

---

1 Մ. Չամչյան, *Պատմություն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786 (այսուհետև՝ Մ. Չամչյան)։*

2 Լեո, *Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1969։*

3 Աշ. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Բ, Երևան, 1959 (այսուհետև՝ «Դրվագներ...»)։*

4 Հ. Ս. Անասյան, *XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961։*

5 *«Մաշտոց ժամանակագրություններ, XVII—XVIII դդ.», կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. 1, Երևան, 1951, հ. 2, Երևան, 1956։*

6 Հ. Սիրունի, *Պոլիս և իր դերը, հ. Ա, Բեյրութ, 1965 (այսուհետև՝ Հ. Սիրունի)։*

Լ. Ս. Խաչիկյան[7], Լ. Հ. Բաբայան[8], Հ. Դ. Փափազյան[9], Հ. Նաջարյան[10], Վ. Կ. Ոսկանյան[11], Վ. Մ. Մարտիրոսյան[12], Ի. Պ. Պետրուշևսկի[13], Ա. Ս. Տվերիտինովա[14], Ա. Դ. Նովիչև[15], Մ. Խ. Սվանիձե[16], Պ. Լ. Շենգելիա[17], Օ. Ա. Էֆենդիև[18], Ա. Ռ. Հովհաննիսյան[19], Գ. Ա. Գալոյան[20],

---

7 Լ. Ս. Խաչիկյան, *Հայկական գյուղական համայնքը, XIV—XV դդ., «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1958, № 1։*

8 Լ. Հ. Բաբայան, *Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության մեջ, Երևան, 1970։*

9 *«Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. Հրովարտակներ», կազմեց Հ. Դ. Փափազյան, պրակ Ա, Երևան, 1958, պրակ Բ, 1959։*

10 *Հ. Խ. Նաջարյան, Թուրք-իրանական հարաբերությունները XVI դ. և XVII դ. առաջին կեսին և Հայաստանը, Երևան, 1961։*

11 Վ. Կ. Ոսկանյան, Վ. Մ. Մարտիրոսյան, *Նոր վավերագրեր 1720-ական թվականների հայ ազատագրական շարժման վերաբերյալ, ՊԲՀ, 1962, № 4,* Վ. Կ. Ոսկանյան, Վ. Ա. Դիլոյան, *Ռուսաստանի քաղաքականությունը Անդրկովկասում XVIII դարի 20-ական թվականներին (նոր վավերագրեր), ՊԲՀ, 1964, № 2 և այլն։*

12 Վ. Մ. Մարտիրոսյան, *Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում, Երևան, 1971 (այսուհետև՝* Վ. Մ. Մարտիրոսյան*)։*

13 *И. П. Петрушевский,* Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Л., 1949 *(այսուհետև՝ И. П. Петрушевский).*

14 *А. С. Тверитинова,* Восстание Кара-Языджи-Дели Хасана в Турции. М.—Л., 1946; *Ее же,* К вопросу о крестьянстве и крестьянском землепользовании в Османской империи (XV—XVII вв.), «Ученые записки Института востоковедения», т. XVII, М., 1959; *Ее же,* Законоположения о провинциях Османской империи в XV—XVI вв., «Краткие сообщения Института востоковедения», т. XXVI, М., 1958; *Ее же,* Книга законов султана Селима I, М., 1969.

15 *А. Д. Новичев,* К вопросу о феодальных отношениях и положение крестьян в Турции во второй половине XV века, Ученые записки ЛГУ, 1961, № 249; *Его же,* История Турции, Эпоха феодализма, Л., 1963.

16 *М. Х. Сванидзе,* Из истории грузино-турецких отношений в XVI—XVII вв. (на груз. яз.), Тбилиси, 1971; *Его же,* О юрдлуках и оджаклыках, как одной из форм землевладения..., отд. оттиск, М., 1966.

17 *П. Л. Шенгелия,* Турецкие налоги и обязательство по «Пространному реестру Гюрджистанского вилайета», «Восточный сборник», т. I, Тбилиси, 1960.

18 *О. А. Эфендиев,* Образование Азербайджанского государства Сефевидов в начале XVI в., Баку, 1961.

19 *А. Р. Иоаннисян,* Иосиф Эмин, Ереван, 1945; *Его же,* Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1947.

20 *Г. А. Галоян,* Россия и народы Закавказья, М., 1976 *(այսուհետև՝ Г. А. Галоян).*

Գ. Տ. Հարությունյան[21] և այլք) ուսումնասիրություններից, ուր արծարծված են խնդրո առարկա թեմայի հետ առնչություն ունեցող մի շարք մասնակի հարցեր:

Վերը մատնանշված հայագիտական գրականության մեջ հետաքրքիր նյութերի ու ժամանակաշրջանի գիտական խոր ու բազմակողմանի վերլուծության կարելի է հանդիպել Աշ. Հովհաննիսյանի աշխատության մեջ: Հեղինակն աղբյուրագիտական ամենալայն հենքի վրա փաստորեն առաջին անգամ ոչ միայն տալիս է օտար տիրապետությունների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի դարավոր պատմությունը, այլև գիտական մանրազնին քննության է ենթարկում ֆեոդալիզմի ողջ ժամանակաշրջանի (IV—XVIII) քաղաքական, հասարակական-տնտեսական ու գաղափարական կյանքի բազմաթիվ կենսական հարցեր: Անդրադառնալով XVI—XVII դարերի հայերի ազատագրական պատմության հարցերին, Աշ. Հովհաննիսյանը նկատում է, որ նշված ժամանակաշրջանում «Մասսայական շարժումների փոխարեն հայերի կողմից հանդիսատես ենք լինում ազատագրական նպատակադրումների հետամուտ դիվանագիտական ամուլ ու ստերեոտիպ բանագնացությունների»[22]:

XVII դարի երկրորդ կեսի արևմտահայ ազատագրական շարժումների պատմության մեջ կարևոր ներդրում է Հ. Ս. Անասյանի ուսումնասիրությունը: Աշխատության մեջ հեղինակը ջանասիրությամբ ու բանասիրական հմտությամբ ի մի է բերել, մշակել և որպես հավելված վերջում հրատարակել բազմալեզու վավերագրեր (ճանապարհորդական նոթեր, նամակներ, դիվանագիտական զեկուցագրեր և այլն), որոնք նոր լույս են սփռում արևմտահայ ազատագրական շարժումների վրա: Աղբյուրագիտական լայն հենքի վրա Հ. Ս. Անասյանը շատ դեպքերում անում է կուռ ու տրամաբանական եզրակացություններ, բացահայտում ու գնահատում պատմական փաստերի ու դեպքերի ներքին կապակցությունները: Այսուհանդերձ, Հ. Ս. Անասյանի աշխատության մեջ տեղ են գտել մի շարք եզրահանգումներ, որոնք չեն բխում դեպ-

---

21 *П. Т. Арутюнян,* Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, Ереван, 1954; *Арутюнян П. Т., Тер-Авакимова С. А., Аскоян В. А.,* Армяно-русские отношения к первой трети XVIII века. Сборник документов под редакцией акад. А. Г. Иоаннисяна, т. II, ч. I—II, Ереван, 1965, 1967.

22 Աշ. Հովհաննիսյան, *Դրվագներ..., հ. Ա, Երևան, 1957, էջ 402։*

ֆերի տրամաբանական զարգացումից ու փաստերի իրական վերլուծություններից:

Ինչ վերաբերում է Լեոյին, ապա պիտի ասել, որ բազմավաստակ գիտնականն իր տրամադրության տակ չունենալով անհրաժեշտ թուրքական ու օտարալեզու աղբյուրներ, բավարարվել է հիմնականում Մ. դ'Օսոնի, Մ. Ֆեբվրի ու այլոց կցկտուր, մեծավ մասամբ ստուգման կարոտ տեղեկություններով: Նյութերը շարադրելիս խուսափել ենք անդրադառնալ Լեոյի «Հայոց պատմության» երրորդ հատորում տեղ գտած սխալներին ու թյուրիմացություններին, մանավանդ, որ նա շափազանց քիչ տեղ է հատկացրել XVI—XVIII դարերի Արևմտյան Հայաստանի պատմությանը: Էլ չենք խոսում այն մասին, որ Լեոն, գերագնահատելով հայ խոջայության դերն ու նշանակությունը հայ իրականության մեջ խնդրո առարկա ժամանակահատվածում, գտնում է, որ խոջայական կապիտալն, իբր, այն առանցքն էր, որի շուրջ պտտվում էր ամբողջ հայոց պատմությունը XVI—XVIII դարերում[23]:

Խոշոր ու անգնահատելի է Մ. Չամչյանի ծառայությունը հայ պատմագրությանը: Նա բնական մոտեցում է ունեցել դեպի սկզբնաղբյուրները՝ ենթարկելով դրանք գիտական վերլուծության: Հեղինակն օգտագործել է հայ և օտար այլևայլ աղբյուրներ, հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, դիվանական վավերագրեր և այլն, որոնք մեծապես բարձրացնում են հաղորդված նյութերի գիտական արժեքը: Մ. Չամչյանի «Պատմության» երրորդ հատորը հիմնականում պարունակում է Կ. Պոլսի հայոց պատրիարքների պատմությունն ու հայ կաթոլիկների դեմ հայոց պատրիարքների ծավալած այն պայքարի շարադրանքը, որը հարատև ալեկոծության մեջ պահեց ոչ միայն Կ. Պոլսի հայ համայնքին, այլև ողջ արևմտահայությանը: Մ. Չամչյանը հայ կաթոլիկ համայնքի ամենահետևողական պաշտպանի դերով է հանդես գալիս ու փորձում է ապացուցել, որ իբր, հայերը միշտ հակված են եղել դեպի կաթոլիկությունը: Այսուհանդերձ, Մ. Չամչյանը բոլոր ուսումնասիրողների կողմից արդարացիորեն ամենաբարձր գնահատանքի արժանացած հեղինակն է: Լեոյի բառերով ասած, Մ. Չամչյանի «Պատմությունն հայոցը» դարագլուխ կազմող մի գրական ստեղծագործություն է[24]:

Սույն թեմայի հետ անմիջական առնչություն ունի Հակոբ Սիրունու «Պոլիս և իր դերը» (հատոր Ա.) գիրքը, որտեղ հեղինակը ոչ միայն

23 Լեո, *Հայոց պատմություն, հ. Գ, էջ 153, 474, 475:*

24 Լեո, *Խոջայական կապիտալ, Երևան, 1932, էջ 6:*

տալիս է Կ. Պոլսի հայ գաղութի հասարակական, քաղաքական, պատրիարքական աթոռի պատմությունը, այլև առանձին դեպքերում կանգ է առնում արևմտահայ գավառների ընդհանուր վիճակի լուսաբանման վրա:

Աշխատության համար մեծապես օգտակար դարձավ Մ. Օրմանյանի հայ եկեղեցու պատմությանը նվիրված «Ազգապատում» մեծարժեք երկը[25]:

Ղուկաս Ինճիճյանի «Աշխարհագրությունը» մի հանրագիտարան է XVIII դարի Արևմտյան Հայաստանի նահանգների ու գավառների մասին: Քաջատեղյակ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի դիվաններին ու թուրքական պատմագրությանը և մասնավորապես XVII դարի թուրք խոշոր պատմագիր Քյաթիբ Չելեբու «Ջիհան-Նյումային», որից հանախ մեջբերումներ է կատարում հաստատելու կամ ժխտելու այնտեղ տեղ գտած վկայությունները, Ղ. Ինճիճյանը շարադրում է իր աշխատանքը: «Աշխարհագրության» մեջ խոսվում է Փոքր Ասիայի, Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի, ինչպես և Արևելյան Հայաստանի վարչական բաժանումների, վարչակարգերի, հայոց պատրիարքների, հայ եկեղեցու և սուլթանական կառավարության փոխհարաբերությունների, հողատիրության ու հողօգտագործման ձևերի մասին՝ մեկ առ մեկ թվարկելով գեմեր ու թիմար հողային տիրույթները, գոյություն ունեցող ծանր հարկային սիստեմը: Նկարագրվում է Մեծ Հայքի բուսական ու կենդանական աշխարհի հարստությունը, երկրի արդյունագործությունը, արհեստները, գյուղատնտեսության առանձին ճյուղերը և այլն: «Աշխարհագրության» առանձին էջերում տեղ են գտել նաև Արևմտյան Հայաստանի քաղաքական պատմությանն առնչվող առանձին դրվագներ. օրինակ, 1741 թ. Մուշի շրջակայքում բռնկված խոշոր հակապետական ապստամբության մանրամասն նկարագրությունը[26] և այլն:

XVIII դարի Արևմտյան Հայաստանի պատմության համար կարևոր աղբյուր է 1930 թ. Վենետիկում լույս տեսած «Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար, 1707—1773» վավերագրերի ժողովածուն: Այդ վավերագրերում (նամակներում) տեղ են գտել ժամանակի հայ քաղաքական վիճակին, դավանաբանական պատմությանը, մշակութային կյանքին, կենցաղին ու սովորություններին վերաբերող բազմաթիվ ու հավաստի տեղեկություններ:

25 Մ. Օրմանյան, *Ազգապատում, հ. Բ, Կ. Պոլիս, 1914 (այսուհետև՝* Մ. Օրմանյան):

26 *Տե՛ս* Ղ. Ինճիճյան, *Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, Վենետիկ, 1806, էջ 184—186 (այսուհետև՝* Ղ. Ինճիճյան):

Գաբրիել Այվազովսկու «Պատմութիւն օսմանեան պետութեան» երկհատոր աշխատությունը[27] հիմնականում գրված է թուրքական պատմագրության հաղորդած վկայությունների հիման վրա: Հեղինակը շարադրում է սուլթանների ու սուլթանական պալատի բարձրաստիճան պետական գործիչների ռազմական արշավանքները, պալատական դավադրությունները և այլն: Այնուհանդերձ, հեղինակը մերթ ընդ մերթ կանգ է առնում նաև Կ. Պոլսի հայ ամիրաների, խոջաների ու գաղթօջախի առանձին հարցերի վրա:

Օսմանյան կայսրության XVI—XVIII դարերի պատմության ուսումնասիրությանն են նվիրված արդի թուրք բուրժուական պատմաբանների մի շարք աշխատություններ, առանց որոնց օգտագործման միակողմանի բնույթ կստանար մեր աշխատությունը: Այդ հեղինակներից ամենից շատ օգտագործված են Ի. Հ. Դանիշմենդի[28], Ի. Հ. Ուզունչարշըլի[29], Մ. Ակդաղի[30], Օ. Լ. Բարկանի[31], Մ. Ակթեփեյի[32], Չ. Օրհանլուի[33] և այլոց երկերը: Նշված հեղինակներից Ի. Հ. Ուզունչարշըլին երկու մեծածավալ հատոր[34] է նվիրել XVIII դարի Թուրքիայի պատմությանը, ուր օգտագործվել են մեծաքանակ արխիվային նյութեր: Հարուստ արխիվային նյութեր է օգտագործել Պատրոնա Խալիլի ապստամբությանը նվիրված մենագրության մեջ նաև Մ. Ակթեփեն:

Ռուսական մինչհեղափոխական պատմական գրականության մեջ XVIII դարի առաջին քառորդի ռուս-թուրքական հարաբերությունների ընդարձակ պատմությունն իր արտացոլումն է գտել Ս. Մ. Սոլովյովի

27 Գ. վ. Այվազովսկի, *Պատմութիւն օսմանեան պետութեան, հ. Ա, Բ, Վենետիկ, 1841* (այսուհետև՝ Գ. վ. Այվազովսկի):

28 *J. H. Danişmend*, Izahlı osmanlı tarihi kronolojisi, c. I—IV, İstanbul, 1947—1955 (այսուհետև՝ *J. H. Danişmend*).

29 *I. H. Uzunçarşılı*, Osmanlı devleti teşkilâtından kapukulu ocakları, c. I—II, Ankara, 1943—1944; նույնի՝ Osmanlı tarihi, c. I—IV, İstanbul, 1947—1959.

30 *M. A. Akdağ*, Osmanlı İmperatorluğunun kuruluş ve inkişafı devrinde Türkiyenin iktisadi vaziyeti, „Belleten", c. XIII, 1942, № 51, 55 (այսուհետև՝ *M. A. Akdağ*); նույնի՝ Celali isyanları 1555—1603, Ankara, 1963.

31 *O. L. Barkan*, Problèmes fonciers dans l'Empire ottoman au temps de sa fondation—„Annales d'histoire sociale", t. I, Paris, 1939.

32 *M. Aktepe*, Patrona isyânı (1730), İstanbul, 1958 (այսուհետև՝ *M. Aktepe*).

33 *C. Orhonlu*, Osmanlı İmperatorluğunda aşiretleri iskân teşebbüsü (1691—1696), İstanbul, 1963.

34 *I. H. Uzunçarşılı*, Osmanlı tarihi, IV cilt, I kısım, Karlofca anlaşmasından XVIII yüzyılın sonlarına kadar, Ankara, 1956; Osmanlı tarihi, IV cilt, 2 kısım, XVIII yüzyıl, Ankara, 1959 (այսուհետև՝ *I. H. Uzunçarşılı*).

աշխատությունում[35], որտեղ հեղինակն օգտագործել է ռուսական արխիվային նյութերը՝ ռուսական դեսպանների զեկուցագրերը:

Աշխատության մեջ օգտագործված են նաև սովետական մի շարք պատմաբանների մենագրություններ, որոնք նվիրված են խնդրո առարկա ժամանակաշրջանի ռուս-թուրքական[36], ռուս-վրացական[37], ռուս-ադրբեջանական[38] հարաբերություններին:

Սովետահայ պատմագրության մեջ XVIII դարի Արևելյան Հայաստանի և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը զգալի չափով լուսաբանված են: Այդ ուսումնասիրություններում տեղ են գտել նաև ռուս-թուրքական, ռուս-իրանական, թուրք-իրանական հարաբերությունների, ինչպես նաև երբեմն Արևմտյան Հայաստանի պատմության մի շարք հարցեր, որոնք առնչություն ունեն թեմայի հետ ու օգտագործվել են մեր կողմից: Նման ուսումնասիրությունների շարքին են պատկանում Ա. Գ. Հովհաննիսյանի, Ա. Ռ. Հովհաննիսյանի, Գ. Ա. Գալոյանի, Պ. Տ. Հարությունյանի, Վ. Մ. Մարտիրոսյանի, Վ. Կ. Ոսկանյանի ու այլոց հիշատակված աշխատությունները:

Եվրոպացի հեղինակների Օսմանյան կայսրության տվյալ ժամանակաշրջանին վերաբերող ուսումնասիրությունների մեջ, սույն ուսումնասիրության համար առավել արժեքավոր են Մ. Բելենի[39], Յ. Համմերի[40], Մ. դ'Օսոնի[41] և բազմաթիվ այլ հեղինակների[42] աշխատությունները:

35 *С. М. Соловьев*, История России с древнейших времен, т. VII—VIII, М., 1962 (այսուհետև՝ *С. М. Соловьев*).

36 *С. Ф. Орешкова*, Русско-турецкие отношения в начале XVIII века, М., 1971 (այսուհետև՝ *С. Ф. Орешкова*).

37 *Г. Г. Пайчадзе*, Русско-грузинские отношения в 1725—1735 гг., Тбилиси, 1965 (այսուհետև՝ *Г. Г. Пайчадзе*).

38 *А. Абдурахманов*, Азербайджан во взаимоотношениях России, Турции и Ирана в первой половине XVIII века, Баку, 1964 (այսուհետև՝ *А. Абдурахманов*).

39 *M. Belin*, Essais sur l'histoire économique de la Turquie d'après les écrivains originaux, „Journal Asiatique", v. III—V, Paris, 1864; նույնի՝ Etude sur la propriété foncière en pays musulmans et notamment en Turquie, „Journal Asiatique", v. XVIII, XIX, 1873; նույնի՝ Du régime des fiefs militaires dans l'islamisme et principalement en Turquie, „Journal Asiatique", v. XV, 1870.

40 *J. Hammer*, Histoire de l'empire ottoman, v. I—XVII, Paris, 1835—1843 (այսուհետև՝ *J. Hammer*).

41 *M. d'Ohsson*, Tableau général de l'Empire Ottoman, v. I—VII, Paris, 1788—1824 (այսուհետև՝ *M. d'Ohsson*).

42 *Jonquière de*, l'Histoire de l'empire ottoman depuis les temps anciens jusqu'à nos jours, Paris, 1855; *A. Lamartine*, Histoire de la Turquie tome I—VIII,

ներ: Եթե Մ. Բելենը իր ուշադրությունը սևեռել է Թուրքիայի տնտեսական կյանքի պատմությանը, ապա Յ. Համմերը Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված իր բազմահատոր աշխատության մեջ, ի մի բերելով Թուրքիայի պատմությանը վերաբերող բոլոր հնարավոր աղբյուրները, նկարագրում է թուրքական սուլթանների, մեծ վեզիրների ռազմական արշավանքները Եվրոպայում ու Ասիայում: Համմերին շատ բարձր է գնահատել Կ. Մարքսը: «Թուրքական հարց» հոդվածում նա խիստ քննադատում է եվրոպական դիվանագետներին, որոնք արևելյան լեզուներ չիմանալով, Թուրքիայի մասին իրենց նյութերը քաղել են հույն բարգմանիչներից կամ ֆրանսիացի վաճառականներից: «Դովելի բացառություն է,— գրում է Մարքսը,— Յոզեֆ Համմերը՝ Թուրքիայի գերմանացի պատմաբանը»[43]:

Յոզեֆ Համմերը Օսմանյան կայսրության պատմության շարադրանքը հասցնում է մինչև Կյուչյուք—Կայնարջիի հաշտության պայմանագիրը: Թե ինչու նա չի տվել հետագա ժամանակաշրջանի պատմությունը, բացատրում է ինքը՝ հեղինակը. «Սկսած Կայնարջիի հաշտությունից մինչև Ադրիանապոլսինը, Ռուսաստանը Բարձրագույն Դռան դիվանագիտական բանավարությունների թելադրողն էր, հաշտության կամ պատերազմի դատավորը, կայսրության ամենակարևորագույն գործերի ոգին: Ֆրանսիան և Անգլիան, եթե բացառվի եգիպտական պատերազմն[44] ու անգլիական նավատորմի կողմից Դարդանելի անցումը[45], Բարձրագույն Դռան քաղաքականությանը եռանդուն միջամտություն ունեցել են միայն երբեմն...: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ միայն թուրքական ժամանակագրությունները և ռուսական արխիվները կարող են անհրաժեշտ նյութեր մատակարարել թուրքական կայսրության պատմությունը գրելու համար»[46]: Ուստի, չունենալով իր ձեռքի տակ ռուս-թուրքական քաղաքական հարաբերություններին վերաբերող անհրաժեշտ նյութեր, Յոզեֆ Համմերը ստիպված է եղել վերջին XVII հատորը ամբողջությամբ նվիրել կայսրության վարչական կարգի, պետական ապարատի, ֆինանսների ու ներքին բազմաթիվ հարցերի պատմությանը:

Թեմայի համար որոշ հետաքրքրություն են ներկայացնում նաև կապիտուլյացիաների ու օսմանյան հպատակների՝ Արևելքի քրիստոնյա ժողովուրդների իրավական վիճակի բացահայտման հարցերին նվիրված եվրոպացի մի շարք հեղինակների աշխատությունները: Դրանց թվին են պատկանում Սեն-Պրիեստի[47], Պելիսիե դյու-Ռոզասի[48], Ա. Շոպովի[49] ու այլոց երկերը, որոնք օգտագործվել են մեր կողմից:

Թուրք-իրանական քաղաքական հարաբերությունների պատմությանն է նվիրված ևս մի երկու աշխատություն: Մեկը, դա մեր դարի 30-ական թվականների Իրանի պետական գործիչ ու պատմաբան՝ Մուհամմեդ Ալի Հեքմաթի[50] 1722—1747 թվականների ընթացքում թուրք-իրանական հարաբերությունների, իսկ մյուսը՝ XIX դարի սկզբի անգլիացի պատմաբան՝ Ջոն Մալկոլմի Իրանի պատմությանը[51] նվիրված աշխատություններն են:

Օսմանյան կայսրության XVIII դարի 20—30-ական թվականների քաղաքական պատմության որոշ հարցեր լուսաբանված են Լավենդեր Կասելսի[52], Մերի Լյուսիլ Շեյի[53] և Ալբերտ Սորելի[54] աշխատություններում: Առավել հետաքրքիր է Մերի Լ. Շեյի աշխատությունը, որը գրված է Կ. Պոլսի վենետիկյան դեսպանի զեկուցագրերի հիման վրա:

Վերջին տարիներին Բալկանյան երկրների, մասնավորապես բուլգար, թուրքագետները հրատարակել են մի շարք աշխատություններ՝

Paris, 1854; *N. Iorga*, Geschichte des Osmanischen Reiches in Europa, Bd. I—V, Gothlia, 1902—1913.

43 *К. Маркс, Ф. Энгельс*, Соч., т. IX, М., 1932, стр. 387.

44 *Նկատի ունի գեներալ Բոնապարտի 1798 թ. եգիպտական արշավանքը:*

45 *Նկատի ունի 1807 թ. ադմիրալ Դեկուորդի հրամանատարությամբ անգլիական նավատորմի մուտքը Մարմարա ծովը:*

46 *J. Hammer*, t. XVII, p. VI—VII.

47 *M. le Comte de Saint—Priest*, Mémoires sur l'ambassade de France en Turquie et sur le commerce des français dans le Levant, Paris, 1877.

48 *Pelissié du Rausas*, Le régime des capitulations dans l'empire ottoman, Paris, 1910 *(այսուհետև՝ Pélissié du Rausas)*.

49 *A. Shopoff*, Les réformes et la protection des chrétiens en Turquie, 1673—1904, Paris, 1904.

50 *Mohammed Ali Hekmat*, Essai sur l'histoire des relations politiques irano-ottomanes de 1722 à 1747, Paris, 1937 *(այսուհետև՝ Mohammed Ali Hekmat)*.

51 *Sir John Malcholm*, Histoire de la Perse, tome III, Paris, 1821 *(այսուհետև՝ John Malcholm)*.

52 *Lavender Cassels*, The struggle for the ottoman empire 1717—1740, London, 1966.

53 *Mary Lucille Shay*, The Ottoman empire from 1720 to 1734, Urbana, 1944.

54 *Albert Sorel*, The eastern question in the eighteenth century, London, 1898.

նվիրված Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական պատմությանը[55]:

Հայերեն սկզբնաղբյուրների մեջ ուրույն տեղ են գրավում XVI—XVIII դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանները: Ցավոք, պիտի արձանագրել, որ XVIII դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները համեմատաբար աղքատ են: Բացի ձեռագրերից, աշխատության մեջ օգտագործվել են նաև ձեռագրերի տարբեր ցուցակներում[56] հրատարակված հիշատակարանները:

Հիշատակարանների գիտական մեծ նշանակության մասին շատ է գրվել: Որպես կանոն, հիշատակարանների գրիչները իրենց նկարագրած դեպքերի կամ անմիջական ականատեսները և կամ իրենց լսածների հաղորդիչներն են: Դեպքերի անմիջական ազդեցության տակ հիշատակարաններում եղած գրառումները ստույգ տեղեկություններ են պարունակում զանազան իրադարձությունների ու փաստերի մասին. հաճախ գրված են վառ, հուզիչ և գունեղ լեզվով, իսկ երբեմն էլ՝ շափածո: Հիշատակարաններում կարևոր տեղեկություններ են պահպանվել նվաճողների վարած պատերազմների, բնակչության գերեվարության, երկրի ընդհանուր ավերման, ասպատակողների գործադրած զանազան բռնությունների ու կամայականությունների, տիրող հարկային ծանր սիստեմի մասին և այլն: Պատահական չէ, որ իրենց աշխատություններում հայերեն ձեռագրերի հիշատակարաններն օգտագործել են դեռևս Առ. Դավրիժեցին (XVII դ.) և Մ. Չամչյանը (XVIII դ.):

Մեծավ մասամբ հավաստի ու ստույգ են նաև XVII—XVIII դդ. հայ պատմագրության ներկայացուցիչների (Առաքել Դավրիժեցի, Գրիգոր Դարանաղցի, Զաքարիա Քանաքեռցի, Սիմեոն Լեհացի, Սիմեոն Երևանցի, Երեմիա Քյոմյուրճյան, Աբրահամ Կրետացի կաթողիկոս, Աբրահամ Երևանցի, Հովհաննես Սեբաստացի), ինչպես և մանր ժամանակագիրների հաղորդած վկայությունները:

Սույն թեմայի համար որոշակի արժեք են ներկայացնում նաև այն նյութերը, որոնք գտեղված են Գյուտ Աղանյանցի «Գիւան հայոց պատմութեան» Ժ գրքում[57] ու Վ. Ա. Հակոբյանի հրատարակած «Մանր ժամանակագրությունների» երկու հատորներում[58]: Այս ժողովածուներում եղած նյութերի մեջ առավել արժեքավորներն են՝ Հակոբ զպիրի «Պատմութիւն պատժալի և սարսափելի մեծ սովոյն, որ եղեւ ի Տիգրանակերտ քաղաքի և ի շրջակայ նահանգս նորին»[59], Պողոս Կաղզրվանցու «Գիրք պատմութեանց վարուց և դիպուածոց, իրաց և իրականութեանց Տեառն Զաքարիայ Արքիեպիսկոպոսի և ազգասէր կարգացեալ պատրիարքի մեծի Պոլսոյ»[60], «Անանուն Վանեցու տարեգրությունը»[61] և մի շարք այլ նյութեր: Տարեգրության» մեջ նկարագրվում է Վանի և Վասպուրականի փաշաների իշխանության տարիները, նրանց կատարած ասպատակությունները ու այլ մասնավոր դեպքերը: Հեղինակն, ամենայն հավանականությամբ, XVIII դարի 60—80-ական թվա-

---

55 *В. П. Мутафчиева*, Аграрните отношения в Османската империя през XV—XVI вв., София, 1962. Նույնի De l'exploitation féodale dans les terres de population bulgare sous la domination turque au XV et XVI-ème siècles. Etudes historiques", Sofia, 1960, p. 145—164; *B. A. Cvetkova*, L'évolution du régime féodal turc de la fin du XVI-ème jusqu'au milieu du XVII-ème siècle, p. 171—203; *Burmov A.*, Les problémes de la conquête de la péninsule des Balkans par les Turcs, p. 132—143; *V. P. Mutafcieva, Str. Dimitrov*, Sur l'état du système des timars des XVII-ème — XVIII-ème ss. Sofia, 1968; *Str. Dimitrov*, Les timars et le „Nizam-i cedid" selon le defter matricul des affermages de fiefs en 1804 et 1805; *V. P. Mutafcieva*, Sur le caractère du timar ottoman, Acta Orientala Hungarica, t. IX, fasc. I, Budapest, 1959, p. 55—61.

56 *Այդ մասին տե՛ս «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ», հ. 1, Վենետիկ, 1914, հ. 2, 1924։ «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ», հ. 3, հորինեցին հ. Բարսեղ Սարգիսյան և հ. Գրիգոր Սարգսյան, Վենետիկ, 1966։ «Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա», հ. Բ., կազմեց հ. Համազասպ Ոսկեան, Վիեննա 1963։ «Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին», կազմեց Մեսրոպ վրդ. Քեշիշյան, Վիեննա, 1964։ «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Ա—Զ, Երուսաղեմ, 1966—1972։ «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», կազմեց Ե. Լալայան, Թիֆլիս, 1915։ «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանին հայոց», կազմեց Բարկեն աթոռակից կաթողիկոս, Անթիլիաս, 1961։ «Ցուցակ ձեռագրաց Մշոյ սուրբ Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայից», կազմեցին Սահակ Ա. Մուրատյան, Նաղարեթ Բ. Մարտիրոսյան, Երուսաղեմ, 1967 (այսուհետև՝ Մուրմար) և այլն։*

57 *«Գիւան հայոց պատմութեան», գիրք Ժ, հրատարակեց Գիւտ Աղանեանց, Թիֆլիս, 1912։*

58 *«Մանր ժամանակագրություններ», կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. 1, Երևան, 1951, հ. 2, Երևան, 1956։*

59 *«Գիւան հայոց պատմութեան», գիրք Ժ, էջ 193—202։*

60 *Նույն տեղում, էջ 215—310։*

61 *«Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 350—380։ Այս տարեգրությունը հրատարակել է Գարեգին Սրվանձտյանը («Մանանայ ժողովեաց և ի լոյս էած Գ. Սրվանձտեանց», Կ. Պոլիս, 1876, էջ 340—398)։ Ղ. Փիրղալեմյանի մոտ կա այս տարեգրության մի ձեռագիր տարբերակ (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 557—713)։*

ՀՍՍՀ ԳԱ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

կանների մատնանշած քաղաքական դեպքերի անմիջական ականատեսն է:

Հակոբ դպիր հեղինակի մասին կենսագրական տեղեկություններ չունենք: Նկարագրելով 1758 թ. Տիգրանակերտում տեղի ունեցած սովի մասին, հեղինակն իր մասին գրում է. «Ես նուաստ և հետնեալ ծառայս Յակոբ մեղապարտ դպիրս, ըստ իմոյ տգետ և տխմար գիտութեանս, որովհետև ականատես եղէ այս ամենայն եղելոցս, գրեցի պատմագրաբար զայս ամենայն ճշմարտութեամբ, քարց իմիք ստութեամբ»: Ինչ վերաբերում է Պողոս Կաղզվանցու պատմությանը, ապա պիտի ասել, որ բացի մի շարք քաղաքական անցքերի նկարագրությունից, որի ականատեսն ու ականջալուրը եղել է հեղինակը, այնտեղ տեղ են գտել մի շարք պետական կարևոր վավերագրերի գրաբար թարգմանություններ, որպիսիք են՝ «Օրինակն ֆերմանի Ղալաթիայու վոյվոտային հայկական բառիս», «Սա է ենիշեր աղասուն ֆերմանի հայկական թարգմանեցեալն», «եկեղեցւոց թեֆթիշ շառնելոյ ֆերմանի հայկականն է» և այլն: Պատմության վերջում՝ «Վասն տեսլեան իմոյ» վերնագրի տակ, հեղինակը համառոտ խոսում է XVIII դարի վերջի ռուս-թուրքական պատերազմի և այդ տարիներին հայերի կրած ծանր տառապանքների մասին:

Այն ուսումնասիրության մեջ լայնորեն օգտագործված են XVI—XVIII դդ. թուրքական (Սոլակզադե, Իբրահիմ Փեչևի, Նաիմա, Քյաթիբ Չելեբի, Սելանիկի, Էվլիա Չելեբի, Կարաչելեբիզադե, Կոչիբեյ, Մյունեջիմ Բաշի, Ռաշիդ, Չելեբիզադե, Սուրեի, Սամի, Շաֆիր, Իզզի, Վասֆ, Զեվդեթ և այլք) և պարսկալեզու (Շարաֆ խան Բիթլիսի, Հասան բեկ Ռումլու և այլք) պատմագրության ներկայացուցիչների երկերը:

Թուրքական պատմագրության հիշյալ ներկայացուցիչների մի զգալի մասը պետական-պաշտոնական պատմագիրներ են, այսպես կոչված, վակա-ի նեվիսներ: Նրանք սերել են արտոնյալ խավից, ու, հետևաբար, իրենց հայացքներով պաշտպանել օսմանյան տիրապետող դասակարգի շահերը: Նրանց աշխատությունների բովանդակությունը հիմնականում կազմում են ռազմաքաղաքական իրադարձությունների, սուլթանների, վեզիրների ռազմական արշավանքների, նվաճումների նկարագրությունը և այլն: Սոցիալ-տնտեսական երևույթների, ժողովրդական զանգվածների վիճակի մասին եղած նյութերը սակավ են: Այնուհանդերձ, ուշադրությամբ հետևելու դեպքում, այդ հեղինակների մոտ և՛ ուղղակի, և՛ անուղղակի կարելի է հանդիպել բազմաթիվ արժեքավոր փաստերի:

Օսմանյան կայսրության ներքին կյանքի հարցերի վերլուծությանն ու նկարագրությանն են նվիրված երկու հանրահայտ աշխատություններ. դրանք են՝ Կոչիբեյի «Ռիսալեն» («Ուղերձ») և Էվլիա Չելեբու բազմահատոր «Սեյահեթ-նամեն» («Ճանապարհորդության գիրք»): Կոչիբեյի «Ռիսալեն» խիստ հարուստ է Թուրքիայի պետականության բուլացման վերաբերյալ արժեքավոր նյութերով: Շնորհիվ Էվլիա Չելեբու «Սեյահեթ-նամեի», ինչպես և մի շարք այլ թուրքական աղբյուրների, պատկերացում ենք կազմում Արևմտյան Հայաստանի վարչական բաժանման մասին: Էվլիա Չելեբու կողմից Արևմտյան Հայաստանում նվաճող-ավատատերերի եկամուտների թվարկումը հնարավորություն է տալիս եզրակացություն անելու այն մասին, թե ինչպես էր շահագործվում Արևմտյան Հայաստանի բնակչությունը:

Պարսկալեզու պատմագրական աշխատությունների մեջ Արևմտյան Հայաստանի XVI դարի պատմության համար ամենաարժեքավորը Շարաֆ խանի «Շարաֆ-նամեն» է: Հեղինակը Բաղեշի քուրդ էմիրն էր՝ ռուզակի ցեղից: «Ես իմ գրքին տվեցի «Շարաֆ-նամե» անունը,— գրում է Շարաֆ խանը,— այն բանից հետո, երբ նկարագրեցի ոչ միայն այն ամենը, ինչ գտնվում էր պարսկական ժամանակագրություններում, այլև այն պատմությունները ինչ լսեցի վստահության արժանի ծերունի մարդկանց բերանից, նաև այն բոլորը որոնց ես անձամբ ականատես էի եղել»[62]: Աշխատության համար առավել արժեքավոր է «Շարաֆ-նամեի» այն մասը, որտեղ հեղինակը շարադրում է իր նախնիների պատմությունը: «XVI դարում Օսմանյան կայսրության սահմանների մեջ մտած Հարավային Հայաստանի ավատական հարաբերությունների ուսումնասիրողների համար,— գրում է Ի. Պ. Պետրուշևսկին,— «Շարաֆ-նամեի» շորրորդ բաժինը, ուր շարադրված է գրքի հեղինակի նախնիների ժառանգական ավատն հանդիսացող Բաղեշի էմիրատի պատմությունը, և ուր տրվում են տվյալ տարածքի արտադրողական ուժերն ու այնտեղից ստացվող եկամուտները, կարող է լինել հայերեն սկզբնաղբյուրներին համարժեք հիմնական սկզբնաղբյուր»[63]:

---

[62] *Шараф-хан Битлиси*, Шараф-намэ, перевод, предисловие, примечания и приложения Е. И. Васильевой, М., 1967, с. 77 (այսուհետև՝ «Шараф-намэ»).

[63] *И. П. Петрушевский*, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., с. 31.

XVI—XVIII դարերի Արևմտյան Հայաստանի պատմության ուսումնասիրությունը մեծապես շահած կլիներ, եթե հրատարակված լիներին առայսօր թուրքական արխիվներում պահվող ու հայկական նահանգներին վերաբերող, այսպես կոչված, ընդարձակ դավթարները (գրանցման մատյանները): Դրանք կառավարության հրամանով ու միջոցներով պարբերաբար արձանագրվում ու կազմվում էին հատուկ հաշվառման միջոցով: Թե ինչպիսի մեծ ծառայություն ունեն գիտության համար գրանցման այդ մատյանները, կարելի է գաղափար կազմել 1947 թ. Թբիլիսիում Ս. Ս. Ջիկիայի հրատարակած «Գյուրջիստանի (Վրաստանի) վիլայեթի ընդարձակ դավթարից»[64]: Կատարված հաշվառման հետևանքով, դավթարում մանրամասն արձանագրված են վիլայեթի սահմաններում եղած միավորները՝ լիվա (սանջակ), կազա և նահիեներ (փոքր վարչական միավորներ):

Մեր տրամադրության տակ չունենալով Արևմտյան Հայաստանի որևէ վիլայեթի վերաբերող նմանօրինակ գրանցման մատյան, ստիպված ենք եղել աշխատության մեջ հետևելու Ս. Ս. Ջիկիայի հրատարակած դավթարին ու մասամբ այն նմանօրինակ վավերագրին, որը ի հայտ բերեց Լ. Ֆեկետեն[65]: Մյուս կողմից, հատուկ ուշադրություն ենք դարձրել XVI դարի օսմանյան կանոննամեների (օրենքների) վրա, որոնք կազմում էին այդ դավթարների ներածական մասը, և որը 1945 թ. հրատարակեց Օ. Լ. Բարկանը[66]: Այդ կանոննամեների նիման վրա բացահայտվում են հողատիրության ձևերն Արևմտյան Հայաստանում, հարկերն ու հարկային սիստեմը, գյուղացիներին հողին ամրակցելու

[64] «Пространный реестр Гюрджистанского вилайета», турецкий текст издал, перевел, исследованием и комментариями снабдил С. С. Джикия, кн. 1, текст. Тбилиси, 1947.

[65] *L. Fekete*, Die Siyaqat-Schrift in der Türkischen Finanzverwaltung, Beitrag zur Türkishen Paläographie mit 104 Tafel, in zwei Bänden, Budapest, 1955.

[66] *L. Barkan*, XV ve XVI-inci asırlarda Osmanlı Imparatorluğunda zirai ekonominin hukukî ve malî esasları, c. I, Kanunlar, Istanbul, 1945. *Նմանօրինակ կանոնննամներ է պարունակում նաև* XVII *դարի հասարակական-պետական գործիչ Այնի Ալիի ժողովածուն* ("Osmanlı devleti arazi kanunları", çeviran *M. Tuncer*, Ankara, 1962): *Օ. Լ. Բարկանի հրատարակած կանոնննամներից Արևմտյան Հայաստանին վերաբերող մասը 1964 թ. լույս տեսավ հայերեն թարգմանությամբ (տե՛ս «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI—XVII դդ. կանոնննամներ)», թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի և Մ. Կ. Զուլալյանի, Երևան, 1964, տե՛ս նաև O. L. Barkan*, Osmanlı Kanunnameleri, III Türk Tarih Kongresi", Ankara, 1948, s. 505—519):

փաստերը և այլն: Ցավոք, պետք է նշել, որ Օ. Լ. Բարկանի հրատարակած կանոնննամեների մեծագույն մասը վերաբերում է XVI դարի առաջին կեսին ու, հետևաբար, չի արտացոլում դարավերջում Օսմանյան կայսրության ներքին՝ սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցած էական փոփոխությունները, որոնց ամիջական հետևանքն էին գյուղացիներից գանձվող հարկերի ու տուրքերի քանակի անշեղ բարձրացումը: Այդ բացը փորձեցինք լրացնել ժամանակագրությունների հաղորդած տվյալներով:

Արևմտյան Հայաստանի XVI—XVIII դարերի եվրոպացի ճանապարհորդների (իտալացի ճանապարհորդներ[67], Պիետրո դելլա Վալլե, Մ. Ֆեբվր, Բայկոտ, Ժ. Բ. Տավերնիե, Ժ. Շարդեն, Պիտտոն դե Տուրնեֆոր և այլք) և եվրոպացի հեղինակների (կոմս դե Մարսիլլի, Մ. Մինյո, դե Սալաբերի, դե Լա Կրուա, մարքիզ դե Վիլնյով, Հ. Գրենվիլ, մարքիզ դե Բոննակ, Ջեյմս Պորտեր, պարոն դե Տոտտ, պարոն դե Բոննեվալ և այլք) հաղորդած վկայությունները գալիս են լրացնելու մեր պատկերացումները ավյալ ժամանակաշրջանի Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակի մասին: Հարկ է նշել, որ եվրոպացի ճանապարհորդների մի զգալի մասն Արևելք էին ուղարկվում իրենց կառավարությունների հատուկ պետական հանձնարարությունները կատարելու առաջադրանքով: Ուստի նրանց հաղորդած տեղեկությունները երբեմն միակողմանի են ու միտումնավոր: Այնուհանդերձ, հանախ նրանք իրենց երկերում նշմարտացի են արտացոլել Օսմանյան կայսրության դաժան կարգերն ու հպատակների և շահագործվող լայն զանգվածների վիճակի իրական պատկերը:

Եվրոպական աղբյուրների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Կ. Պոլսի օտարերկրյա դեսպանների զեկուցագրերն ու այլ դիվանագիտական վավերագրերը: Արժանահիշատակ է 1716—1727 թվականների Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան մարքիզ դե Բոննակի հուշերը[68]: Դիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես դե Բոննակի հաջորդ՝ մարքիզ դե Վիլնյովի զեկուցագրերը[69]: Նա 1728-ից մինչև

[67] "A narrative of Italian travels in Persia in the fifteenth and sixteenth centuries", transl. and ed. by Ch. Grey, London, 1873 (Hakluyt ser. № 49).

[68] (*M. de Bonnac*), Mémoire historique sur l'ambassade de France à Constantinople par le marquis de Bonnac, publié avec un précis de ses négociations à la Porte ottomane, par C. Charles Schéfer, Paris, 1894 (*այսուհետև՝ M. de Bonnac*).

[69] *Albert Vandal*, Une ambassade française en Orient sous Louis XV. La mission du marquis de Villeneuve, 1728—1741, Paris, 1887 (*այսուհետև՝ A. Vandal*).

1741 թվականը գտնվելով Կ. Պոլսում, ականատես ու մասնակից է եղել պատմական շատ խոշոր քաղաքական դեպքերի. նրա անմիջական մասնակցությամբ ու միջնորդությամբ կնքվել է 1739 թ. թուրք-ավստրիական և ռուս-թուրքական բելգրադյան պայմանագրերը: Մարիզ դե Վիլնյովը ամենաեռանդուն մասնակցություն է ունեցել նաև Կ. Պոլսի հայ համայնքի ներսում ծագած տարաձայնություններին ու աշխատել հաշտեցնել հայադավանների հայ կաթոլիկների հետ[70]: Այդ մասին ակնարկում է նաև Մ. Չամչյանը[71]:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև Կ. Պոլսի անգլիական դեսպաններ Ջեյմս Պորտերի[72] և Հենրի Գրենվիլի[73] Լոնդոն հղած զեկուցագրերը: Ջ. Պորտերի, ինչպես և Հ. Գրենվիլի գրքում մեծ տեղ է հատկացված Անգլիայի լեվանտյան (արևելյան) առևտրին: Զեկուցագրերում հաղորդվում են նաև այնպիսի տեղեկություններ Թուրքիայի ներքին կյանքի, գոյություն ունեցող ծանր հարկային սիստեմի, հպատակների աղետալի վիճակի մասին, որոնք բարձրացնում են այդ երկու աղբյուրների գիտական նշանակությունը:

Աղբյուրագիտական այս լայն հենքի վրա փորձել ենք ուրվագծել Արևմտյան Հայաստանի խնդրո առարկա ժամանակաշրջանի պատմության ընդհանուր գիտական պատկերը:

---

70 Նույն տեղում, էջ 425—427։

71 Մ. Չամչյան, էջ 807—808։

72 (*Porter*), Turkey, its history and progress. From the journals and correspondance of sir James Porter... continued to the present time with a memoir of sir James Porter by his grandson George Larpent. Vol. I—II, London, 1854.

73 *Henry Grenville*, Observations sur l'état actuel de l'empire ottoman, edited by Andrew S. Ehrenkrets. The university of Michigan Press, 1971 (*այսուհետև՝ H. Grenville*).

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ XVI—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Թուրքերը պատմական Փոքր Հայքի տարածքի վրա երևացին դեռևս XIV դարի վերջին։ 1392—1398 թվականների ընթացքում գրավելով մինչև Երզնկա ու Կամախ ընկած տարածությունը, նրանք ընդհուպ մոտեցան Մեծ Հայքի արևմտյան սահմաններին։ 1402 թ. Անկարայում Թուրքերի կրած պարտությունը Թիմուրից առժամանակ հետաձգեց Արևմտյան Հայաստանի ամբողջական նվաճումը։ 1453 թ. գրավելով Կոստանդնուպոլիսը ու վերածելով այն նորաստեղծ Օսմանյան կայսրության մայրաքաղաքի, Թուրքերը աստիճանաբար շարժվեցին Փոքր Ասիայի արևելյան մասերը։ Չնայած ակկոյունլու Թուրքմեններին ականավոր սուլթան Ուզուն Հասանի (1453—1477 թթ.) ձեռք առած բոլոր միջոցների՝ կանգնեցնելու Թուրքիայի սուլթան Մեհմեդ Ֆաթիհի (Նվաճողի, 1451—1481) առաջխաղացումը դեպի Արևելք, վերջինս 1464 թվականին հարձակվեց Տրապիզոնի վրա ու գրավեց այն։ Ուզուն Հասանի ճակատագիրը որոշվեց 1473 թ. օգոստոսին Դերջանի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում, ուր նա ծանր պարտություն կրելով Թուրքերից՝ նահանջեց Թավրիզ։ Դերջանի ճակատամարտի անմիջական հետևանքն էր Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան մասի (Էրզրում, Կամախ, Դերջան, Բաբերդ և այլն) միացումը նորաստեղծ Օսմանյան կայսրությանը։

Ուզուն Հասանի մահից հետո, ակկոյունլուների պետությունը սկսեց քայքայվել ու անկում ապրել. ծայր առան անվերջ երկպառակություններ քոչվոր ցեղերի միջև, կարճ ժամանակվա ընթացքում հաջորդաբար սուլթաններն սկսեցին փոխարինել մեկը մյուսին և XV դարի վերջում ակկոյունլուների պետությունը վերջնականապես կործանվեց։ XV դարի վերջին և XVI դարի սկզբին Արևելքի պատմության ասպարեզ

իջավ մի նոր՝ սեֆյանների կամ կզլբաշների (կարմրագլուխների) պետությունը։

Սեֆյանները Արդեբիլից էին՝ հարավային Ադրբեջանից։ Նրանք սեֆյան միաբանության ժառանգական շեյխեր էին, որոնց հիմնադիրը՝ Սեֆիէդդին Իսհակ Արդեբիլին էր (1252—1334)[1]։ Սեֆյանները սկզբնական շրջանում հենվում էին յոթ թյուրքախոս ցեղերի վրա (շամլու, ռումլու, ուսթաջլու, թեքելլու, աֆշար, կաջար, զուլկադար)։ Այս ցեղերն էին, որոնք հետագայում կոչվեցին կզլբաշներ[2]։

Հենվելով այս ցեղերի ռազմական ուժի վրա, Արդեբիլի շեյխեր՝ Ջունեյդը (1447—1456) և Հեյդարը (1456—1488) ձգտեցին ստեղծել շիա դավանանքին հետևող թեոկրատական մի պետություն ու նվաճել հարևան Շիրվանի, Հայաստանի, Վրաստանի և Դաղստանի տարածքը, սակայն նրանք հաջողություն չունեցան ու սպանվեցին. առաջինը՝ Խալիլուլահ I շիրվանշահի, երկրորդը՝ ակկոյունլուների տիրակալ՝ Ցակուբ ակկոյունլուի և շիրվանշահ՝ Ֆարրուխ Յասարի դեմ մղած պայքարում[3]։ Մահացան նաև Հեյդարի որդիները, ողջ մնաց միայն մեկը՝ Իսմայիլը, որին, ինչպես վկայում են աղբյուրները, պատսպարեցին Աղթամար կղզում, ուր նա մեծացավ հայերի շրջանում[4]։ Այս հանգամանքը հետագայում ազդեց Իսմայիլի քաղաքականության վրա։

Դեռևս երիտասարդ հասակում, Իսմայիլը կզլբաշների գլուխ անցած վճռական հարված հասցրեց ակկոյունլուների պետության վերջին ներկայացուցիչներին և շիրվանշահ Ֆարրուխ Յասարին[5]։ 1499 թ. Իսմայիլը գրավեց Թավրիզը, դարձնելով այն նորաստեղծ պետության մայրաքաղաք, և 1502 թ. իրեն հռչակեց Սեֆյան պետության շահինշահը (արքայից արքա)։ Այսպիսով, XVI դարի արշալույսին Արևելքում հանդես եկավ մի նոր հզոր պետություն, որի քաղաքական շահերը խիստ բախվեցին օսմանյան պետության նվաճողական քաղաքականության հետ, մի պետություն, որն իր առաջ հեռու գնացող զավթողական նպատակներ էր դրել։ Իսմայիլը պետական կրոն հռչակեց շիիզմը ու հալածանք սկսեց իսլամի մյուս տարատեսակի՝ սյուննիզմի դեմ։

---

[1] *Edward G. Browne*. A literary history of Persia, vol. IV, Cambridge, 1953, pp. 38—44 (այսուհետև՝ *Ed. G. Browne*).

[2] *И. П. Петрушевский*, с. 63.

[3] *Ed. G. Broune*, p. 44—47:

[4] "A narrative of Italian travels in Persia in fifteenth and the sixteenth centuries (Hakluyt series № 49)", pp. 101—102.

[5] *И. П. Петрушевский*, с. 63.

Օսմանյան Թուրքիան շահի այդ քայլն ընդունեց որպես իր դեմ ուղղված մարտահրավեր։

Շիիզմը լայն տարածում ու մեծ ժողովրդականություն ուներ ոչ միայն Իրանում, այլև Թուրքիայի ճնշված խավերի մեջ։ Ինքը՝ շահ Իսմայիլը վարպետորեն օգտագործում էր այն հանուն Սեֆյան պետության գերագույն շահերի[6]։ XV—XVI դարերում Փոքր Ասիայում տեղի ունեցած համարյա բոլոր հակապետական և մինչև իսկ հակաֆեոդալական շարժումներն ընթանում էին շիիզմի դրոշով[7]։ Թուրքիայի և Սեֆյան պետության միջև մղվող պատերազմները նույնպես քողարկվում էին շիիզմի՝ սյուննիզմի դեմ մղվող պայքարի շղարշով, մինչդեռ իրականում դա մի պատերազմ էր, որ ուղղված էր գլխավորապես Թուրքիայի՝ Արևելքում վարած զավթողական քաղաքականության դեմ։

Շիիզմը այն աստիճան տարածված էր Փոքր Ասիայում, որ Թուրք պատմագիր Սոլակզադեի վկայությամբ «անհանգստացրեց սուլթան Բայազետ II-ին»[8]։ Շահ Իսմայիլի հեղինակությունը[9] այնքան մեծ էր,

---

6 Շահ Իսմայիլը խաբեպատիր գործունեությամբ ձգտում էր ամրապնդել իր պետությունը, իրեն ներկայացնելով որպես ժողովրդի շահերի արտահայտիչ։ Իտալացի ճանապարհորդ վաճառականի վկայությամբ, երբ շահը նվաճում է մերձկասպյան նավահանգիստներից մեկը, ապա ձեռք բերված ավարը «բաժանեց իր մարդկանց, ոչինչ չթողնելով իրեն» (տե՛ս *Ed. G. Browne*, p. 62)։

7 Օրինակ, Բաբինգերը ցույց տվեց այն կապը, որ գոյություն ուներ XV դարի Թուրքիայում լայն ծավալ ընդունած շեյխ Բադրեդդին Սիմավիի ապստամբության ու շիիզմի միջև (տե՛ս *И. П. Петрушевский*, с. 201—203):

8 *Solakzade Hamdemi*, Tarih-i al-i Osman, Istanbul, 1297/1879, s. 316 (այսուհետև՝ *Solakzade*).

9 Վենետիկցի Ռոտայի վկայությամբ շահ Իսմայիլը «իր պալատականների ու հպատակների կողմից պաշտվում էր որպես մարգարե» ("De celuy de sa cour et de ses subjects il est adoré comme prophète": *Raphael du Mans*, Estat de la Perse en 1660, appendix, Paris, 1895, p. 264): «Ժողովրդի հարգանքն ու սերը թագավորի հանդեպ... անհավատալի է, որովհետև նրանք պաշտում են նրան ոչ իբրև թագավորի, այլ որպես աստուծո»,— գրում է իտալացի Վինչենցո դ'Ալեսանդրին (Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 346)։ Ժ. Շարդենը գրում է, որ կզլբաշները հավատում էին, թե «հենց ինքը Աստվածն է խոսում նրա բերանով» (*J. Chardin*, Voyages du chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient, t. V, Paris, 1813, p. 233, (այսուհետև՝ *J. Chardin*). Եվ, վերջապես, ինքը՝ շահ Իսմայիլը մի բանաստեղծության մեջ իր մասին գրում էր, որ «ինքն է բացարձակ Առաջյալը... և սեժդան (աստուծուն ուղղված աղոթքը) իրեն են պարտական» (տե՛ս *V. Minorsky*, The Middle East in western politics in the 13-th, 14-th and 15-th centuries, "Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland", London, October, 1940, t. XVII, p. 450).

որ Բայազետը Փոքր Ասիայի շիայի կողմնակիցներին մոլորեցնելու համար, վենետիկցի հեղինակների վկայությամբ, ստորագրեց մի հրովարտակ, ուր շահը հեռակա կարգով մահվան էր դատապարտվում[10]։

XVI դարի Հայաստանի պատմության էջը բացվեց արյունալի իրադարձություններով։ Փոքր Ասիայում պատերազմի հրդեհի անմիջական առիթ հանդիսացավ Կարամանիայի շրջակայքում ծավալված իրադարձությունները։ Կարամանիայի տիրակալները օգտվելով այն հանգամանքից, որ 1499—1502 թվականներին Թուրքերը զբաղված էին Վենետիկի դեմ մղվող պատերազմով, ապստամբեցին օսմանյան տիրապետության դեմ։ 1500 թ. Կարամանիայի նահանգի բեյը հարձակվեց օսմանյան պետության հյուսիս-արևմտյան շրջանների վրա և կողոպուտի ենթարկեց այն։ Կարամանցիները պարտության մատնեցին սուլթան Բայազետի զորքերին։ Սակայն 1501 թ. գարնանը մեծ վեզիր Մեսիհ փաշան մտավ Կարամանիա ու արյան մեջ խեղդեց ապստամբությունը։ Կարամանցի Վարսակ և Տոդրուտ ցեղերի առաջնորդները հուսահատված դիմեցին շահ Իսմայիլի օգնությանը[11], որն էլ շահին առիթ տվեց հարձակվելու Թուրքիայի վրա։

Սկսվեց մի պատերազմ, որը որոշ ընդհատումներով տևեց մինչև 1639 թ.։ Այդ ռազմական ընդհարումները անլուր դժբախտություններ ու տառապանքներ բերեցին հայ ժողովրդին։ Սովորաբար, երբ խոսք է լինում այդ պատերազմների մասին, մասնագետների մեծ մասը, որպես գլխավոր պատճառ, մատնացույց են անում Հայկական բարձրավանդակի ռազմաստրատեգիական նշանակությունը։ Եվ իրոք, թե՛ օսմանցիները և թե՛ սեֆյանները Հայկական բարձրավանդակին տիրանալը դիտում էին որպես ռազմաստրատեգիական մեծ նշանակություն ունեցող հանգամանք։ Եթե Հայկական բարձրավանդակը զավթվեր սեֆյանների կողմից, ապա այդ դեպքում Թուրք զավթիչների համար գրեթե անհնար կլիներ ամրապնդել իրենց դեռևս խախուտ դիրքերը Մերձավոր Արևելքում, և հենց Թուրքացված Անատոլիան կդառնվեր սեֆյանների ներխուժման մշտական վտանգի առաջ։ Անգլիացի ուղեգիր Ջենկինսոնը այդ պատերազմները բնորոշում էր որպես մի պայքար, որն ուղղված էր առևտրական ուղիների և առևտրի գլխավոր առարկայի՝ հում մետաքսին տիրանալու համար[12]։ Այսուհանդերձ, սխալ կլիներ

[10] *Fisher Sydney Nettleton*, The foreign relations of Turkey 1481—1512, Urbana, 1948, p. 92.

[11] *Solakzade*, s. 312—313.

[12] Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. Բ, էջ 17։

գերագնահատել Հայկական բարձրավանդակի ռազմաստրատեգիական կամ առևտրի ուղիների տիրապետման նշանակությունը՝ որպես պատերազմի հիմնական ու միակ դրդիչ հանգամանքի։ Թուրքերը մեծապես շահագրգռված էին նաև Անդրկովկասի ռազմաավարով ու նրա բնակչության գերեվարությամբ։ Մյուս կողմից, XVI դարի կեսից Անդրկովկասի նվաճումը Թուրքերի համար ունեցավ այլ ստրատեգիական նպատակներ։ Նվաճելով Հայկական բարձրավանդակն ու Անդրկովկասը, Թուրքական բանակը պիտի սեպ խրեր Սեֆյան պետության և գնալով հզորացող Ռուսաստանի միջև, թույլ չտալով ռուսներին ընդհանուր ճակատ կազմել Թուրքիայի դեմ։ Սկսած Ուզուն Հասանից[13], Իրանի տիրակալները միշտ ձգտում էին դաշինք կնքել եվրոպական որևէ պետության հետ օսմանյան Թուրքիայի դեմ մի ընդհանուր ճակատ կազմելու համար։ Այդ նպատակով Վենետիկյան հանրապետության հետ դիվանագիտական երկար բանակցություններ էր վարում շահ Իսմայիլը[14]։ Եվրոպայի հետ դաշինք կնքելու մտադրություններ ուներ և շահ Իսմայիլի որդին՝ շահ Թահմասպը (1524—1576)։ Հետագայում՝ 1592 թվականին, Ռուսաստանի հետ Թուրքիայի դեմ ընդհանուր դաշինք կնքելու նպատակով, Մոսկվա ուղարկվեց Շահ-Աբասի հատուկ դեսպանությունը[15]։ Ահա այս բոլորը միասին վերցրած ծայր աստիճան սրում էին թուրք-իրանական հարաբերությունները։

XV դարի վերջերին տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները ավերիչ հետևանքներ ունեցան Հայաստանի համար։ Սեֆյան պետության ստեղծման ժամանակաշրջանը հայկական աղբյուրներում բնորոշվում է որպես «վրդովման» ու «ալեկոծման» մի շրջան։ Կարապետ Բերկրեցի գրիչն այդ մասին արձանագրում է հետևյալը. «... Սո-

[13] Ուզուն Հասանի դեսպանությունը Արևմուտքում գլխավորում է հայազգի Միրաթ կամ Միրաքը՝ «իր հավատարիմ սպասավորն ու պաշտոնյան» (*Mando alla presenza vostra questo Nontib e fidel servidor nosiro...*) Ղ. Ալիշան, Հայ-Վենետ., Վենետիկ, 1896, էջ 186—187։

[14] Իտալացի Ռոտան նշում է, որ Եվրոպա ուղարկված շահ Իսմայիլի դեսպանը Հունգարիա ճանապարհվելիս ձերբակալվում է։ 1523 թ. շահ Իսմայիլը նամակներ հղեց Հունգարիայի Լյուդովիկոս թագավորին ու Գերմանիայի կայսր Կարլ V-ին կոչ անելով նրանց ընդհանուր ճակատ կազմել թուրքերի դեմ (տե՛ս *V. Minorsky*, The Middle East in Western polities in the 13th, 14th and 15th centuries, "Journal of Royal asiatic society", London, 1940, t. XVII, p. 450)։

[15] *М. В. Фехнер*, Торговля русского государства со странами Востока, М., 1952, с. 12; *Н. А. Смирнов*, Россия и Турция в XVI и XVII вв., М., 1946, с. 140, 151 и 157.

ֆին (սեֆյանները— Մ. Զ.) շատ աւերք արար և գնաց ի Շամախի և էառ զՇամախի և եսպան զՇրուանշէն։ Եւ եղան դահիճ միմեանց և ազգս հայոց անկաւ ի նեղութիւն, զի մին զմիոյ երկիրն թալանէր։ Եւ քուրդն էառ զանառիկ բերդն զՎան և աւերեաց զերկիր Վանայ և ամենն պարոն զիւր տեղաց անուանի մարդն տուգանէր և թալանէր և մեք զայն տեսաք և փախաք և մտաք յԱրծկէ»[16]։

Օգտվելով ստեղծված խառնակ վիճակից, քրդերը հարձակվում են Արճեշի վրա ու ավերածություններ կատարում։ 1501 թ. արտագրված մի ձեռագրի հիշատակարանում Հակոբ գրիչը հայտնում է հետևյալ մանրամասնությունները. «Ի դառն և ի դըժար ժամանակի, որ եկաւ կարմիր գլուխ Սօֆին. և զԱղօղլու ազգն կորոյս և աշխարհս եղաւ յերերմանի, և եկաւ քուրդն ի Բաղիշու և էառ զԱրծկէ և շատ աւերք և առ թալան արար, և բազում նորաշեն տներ այրեաց և աւերեաց»[17]։

Մինչև 1507 թ. ընկած ժամանակաշրջանում շահ Իսմայիլը գրավում է Արևմտյան Հայաստանի զգալի մասը՝ Երզնկան ներառյալ։ 1508 թ. գրավում է նաև Բաղդատը։ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում արձանագրված են այդ պատերազմների ավերիչ հետևանքները. 1501 թ. մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «... յայսմ խուժադուժ խռովութեան՝ և սաստիկ պատերազմի անհանգիստ ալեկոծութեան մերոյ, որ վասն ծովացեալ մեղաց մերոց՝ որ ոչ գոյր հանգիստ քրիստոնեայ ազգիս ոչ ի քաղաք և ոչ ի գեաւղ, ոչ ի վանս և ոչ յագարակ. քանզի եկեալ ի թուականիս ՉԾ (=1501) ամի Ամասայլ (շահ Իսմայիլը— Մ. Զ.)»[18]։ Կամախի գավառից գրիչ Վրթանեսը գրում է. 1501 թ. նա այլ հայերի հետ միասին փախել է իր հայրենի երկրից «վասն աւերման չարին (ս)աւիթոյ, որ անբնակ արար զաշխարհն մեր յազգէ մարդոյ, զգաւառն ասացեալ եկեղեաց և այժմ Եղնկայ կոչելոյ»[19]։ Հակոբ գրիչ մշեցին 1504 թ. արտագրում է մի աստվածաշունչ, երբ «... մատնել է զմեզ Աստուած ի ձեռն օտար և այլազգէն արիւնարբու ազգին, որ կարմիր գլուխ Սօֆի ասին, որ յինչ տեղ որ գնացին, զամենեսեան անողորմ ի սուր քաշեցին, գերեցուցին ի թալանեցին և զորս փախստական արարին։ Եւ յայսմ ամի զերկիրն Աղբակայ զաղայ արարին, զայրս և կանայս սրով կոտորեցին։ Եւ զանմեղ, զաղջկամարդս գերեցուցին։ Եւ ի սոյն աւուրքս զՎան և զՈստան աւերեցին։ Եւ կրկին պատուհաս շարժեալ ի վերայ աշխարհիս՝ մահտարաժամն»[20]։ Հովհաննես գրիչ վանեցին 1504 թ. գրում է. «Արդ գրեցաւ ի նեղ և ի դառն ժամանակիս, որ զօրացան ազգն արիւնարբու, որ կարմիր գլուխ սօֆիք կոչեն և ասպատակաւ աւերեցին զբազում տեղիս»[21]։ Աղթամարում արտագրված մի ձեռագրում Պարսամ քահանան 1509 թ. գրում է, որ «... կայ մեծ պատուհաս ի վերայ աշխարհիս վասն ծովացեալ մեղաց մերոց։ Քանզի յայսմ ժամանակիս եղաւ փաթշախ մի ի Թավրեզ՝ Շախ Սմայել անուն, որ է Կարապետ Նեռին. և արար բազում աւեր աշխարհիս, սպանումն և թալան ընդ ամենայն տեղիս և ո՞վ կարէ ընդ գրով արկանել զչարութիւն և զաւեր նորա, զոր առնէ ի վերայ աշխարհիս»[22]։

Այսպես են սկզբնաղբյուրները ներկայացնում հայկական նահանգների վիճակը, որպես շահ Իսմայիլի արշավանքների անմիջական հետևանք։ Սակայն հանրահայտ փաստ է, որ շահ Իսմայիլը բարյացակամ վերաբերմունք ուներ դեպի քրիստոնյա հպատակներն ընդհանրապես և հայ դավանանքի ներկայացուցիչները՝ մասնավորապես։ Հետապնդելով մուսուլման-սուննիներին, հրեաներին, նա, միաժամանակ, քաղաքական նպատակներով, հովանավորում էր հայ հոգևորականությանը։ «Քրիստոնյաներին,— կարդում ենք իտալացի Ռոտայի մոտ,— նա (շահը— Մ. Զ.) ցույց է տալիս բարյացակամ (վերաբերմունք), որովհետև նա իր ամբողջության մեջ էր թողնում նրանց բոլոր եկեղեցիներն ու մատուռները՝ առանց բռնությամբ դիպչելու։ Եվ տանում է իր հետ հայոց պատրիարքին և մեր հավատին հետևող բազմաթիվ վանականների և հոգևորականների»[23]։

Շահ Իսմայիլի ատելությունն ու բռնությունը, այնուհետև վկայում է Ռոտան, ուղղված էր բացառապես սուննիտների ու նրանց հովանավորող Թուրքիայի դեմ։ Նա որոշել էր «հիմնովին խորտակել ու վերաց-

---

16 Մատենադարան, ձեռ. № 1591, էջ 389 ա, բ։ Մեկ այլ ձեռագրի հիշատակարանում կարդում ենք, որ ավետարանն արտագրված է «...ի դառն և ի նեղ ժամանակիս (1500 թ.) որ աշխարհս ամեն յերերման է, վասն զի Աղօղլուի թագաւորութիւն անհաստատ էր և յիրար անկած» (Մատենադարան, ձեռ. 6273, էջ 376—377)։

17 Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 378։

18 Նույն տեղում, էջ 379։

19 "A Catalogue of the Armenian manuscripts in the British Museum", by F. C. Conybeare, London, 1913, p. 105.

20 Հ. Ն. Ակինյան. Բաղեշի դպրոցը (1500—1704 թթ.), Վիեննա, 1952, էջ 31։

21 Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 253։

22 «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», էջ 637։

23 *Raphael du Mans*. Estat de la Perse en 1660, appendice, pp. 274—275 (Aux chrétiens il se montre bénivolent, car il laisse en son entier toutes leurs églises et chapelles sans y toucher par violence et maine avecques luy le patriarche arménien et plusieurs prestres et religieux tenans notre foy).

նել մուսուլմանական օրենքը»[24], այսինքն՝ սուննիզմը, —գրում է Ռոտան։ Շահի մասին վենետիկցի մի անանուն ուղեգիր գրում է, որ «Ներոնից մինչև այսօր, կասկածում եմ, որ եղած լինի որևէ այլ արյունարբու բռնակալ»[25]։

Ռոտայի վերոհիշյալ տվյալները հաստատվում են 1506 թ. գրված մի հիշատակարանով, ուր Թադեոս գրիչը Խիզանից հաղորդում է հետևյալ ուշագրավ վկայությունները. «...Շահ Ամայիլ ելաւ ի մահմեդական յազգէն և եղև քակտումն Թուրքաց ազգին (սուննիտներին— Մ. Զ.) և պղտորումն եղև յարևելից մինչև ի շամբատունն։ Եւ զԹաւրեզ քաղաքն քակեաց և զվաղուց փտեալ ոսկերս պարոնացն՝ եհան և այրեաց հրով, և զմսկիթն ամենայն արար փութկայս և զմընարեքն քակեաց մինչև յատակս... եւ եկաւ ի խոյ և շինեաց նոր թաղթ և կոչեաց առ ինքն զկաթուղիկոսն և ասաց. լսել եմ թէ յԵրուսաղեմ լոյս ելանէ. ասէ այո. ասէ շահն աղօթն արարեք՝ որ ես երթամ տեսնամ. և վերացոյց քահանայիցն զգլխադրամն զորոյ զվճարն Աստուած գիտէ»[26]։ 1514 թ. մի այլ հիշատակարանում Մարտիրոս գրիչը հայտնում է, որ շահ Իսմայիլը պաշտպանում էր քրիստոնյաներին ու հանդես էր գալիս մուսուլման սուննիտների դեմ[27]։

Ինչպե՞ս բացատրել աղբյուրների նման հակասական վկայությունները։ Ամենայն հավանականությամբ, Հայաստանը տվյալ ժամանակ շարաչար տուժել է ռազմական գործողություններից և այն ռազմական դիմադրությունից, որը ծավալել էին քրդական ցեղերը շահ Իսմայիլի դեմ։ Եթե ուշադիր կարդանք «Շարաֆ-նամեն», ապա ակնհայտ կդառնա, որ շահ Իսմայիլի արշավանքների ժամանակ ալեկոծվել էր ամբողջ Քրդիստանը և Հայաստանի այն մասերը, ուր գերիշխում էին քրդական ցեղապետերը։ Շարաֆ խանի վկայություններից երևում է, որ քուրդ բեկերի մեծ մասն անցել էր շահ Իսմայիլի կողմը[28]։ Սակայն մի մասն էլ նրան չեն ենթարկվել ու ցույց են տվել ռազմական դիմադրություն այն բանից հետո, երբ շահը ձերբակալել էր Թուրքերի դեմ պայքարում

---

24 Տե՛ս V. Minorsky, The Middle East in Western polities..., p. 453 ("De détruire et rager de fons en comble la foy mechométiste").

25 Ed. G. Browne, p. 23.

26 Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 254—255։

27 Նույն տեղում, էջ 259։

28 "Chéréf-nâmeh ou fastes de la nation kourde par Chéréf-Ouddine", trad. du persan et commentés par F. B. Charmoy (այսուհետև՝ Chéréf-nâmeh), t. I, 2ème p. SPB 1868, pp. 121, 187 etc.

օգնություն հայցող ցեղապետերից ոմանց։ Ճիշտ է, հետագայում, նկատի ունենալով քրդերի ռազմական մեծ ուժը, շահ Իսմայիլը ազատել է նրանց մի մասին նպատակ ունենալով օգտագործել վերջինների ռազմական ուժերը Թուրքերի դեմ մղվող պայքարում[29]։ Շահ Իսմայիլին կատաղի դիմադրություն է ցույց տալիս, օրինակ, Ջեզիրեի քուրդ բեկ Շարաֆը։ Մուհամմեդ խան Ուստաջլուն ու նրա եղբայր Կարախանը կղզբաշների գլուխ անցած հարձակվեցին Քրդիստանի այս մասի վրա, սակայն չկարողացան գրավել[30]։ Շահ Իսմայիլի հակառակորդներից էր, օրինակ, Բիթլիսի էմիր Շարաֆ խանը, որը դաշինք էր կնքել վերոհիշյալ Ջեզիրեի Շարաֆ բեկի որդի Ալիբեկի հետ։ Բիթլիսի Շարաֆ խանի դեմ շահ Իսմայիլը ուղարկեց Ուստաջլու խանին, որը երկու տարի պաշարեց Բիթլիսը։ Ի վերջո՝ քրդերը անձնատուր եղան[31]։

Քուրդ բեկերի մի մասը ընդհարվում էր ոչ միայն շահ Իսմայիլի, այլև մեկը մյուսի դեմ՝ իշխանությունը զավթելու նպատակով։ Այսպես, օրինակ, Բիթլիսում, Մուշում և Խլաթում պայքարում էին իրար դեմ Բիթլիսի էմիր Շարաֆը և նրա ազգական Իբրահիմը։ Պայքարն ավարտվեց հաշտությամբ. Բիթլիսի շրջակայքը բաժանվեց այս երկու բեկերի միջև[32]։

1508—1509 թվականներին Թուրքերի ու սեֆյանների միջև վերսկսվում են պատերազմական գործողությունները Բաբերդի և Երզնկայի շրջաններում։ Բայազետ II որդի Սելիմը, որն այն ժամանակ Տրապիզոնի շրջակայքի կառավարիչն էր, մի շարք անգամ հարձակվեց կղզբաշների վրա՝ ավերի ու ավարի ենթարկելով այս շրջանները[33]։ Սելիմը մի քանի ավերիչ արշավանքներ կատարեց նաև դեպի Վրաստան[34]։

---

29 «Բոլոր քրդերը,— գրում է անանուն իտալացի ուղեգիրը,— առավել ուղղափառ մուսուլմաններ են, քան Պարսկաստանի այլ բնակիչները, այն ժամանակվանից, երբ պարսիկներն ընդունեցին սեֆեյան վարդապետությունը. քրդերն այն չընդունեցին։ Չնայած նրանք կրեցին կարմիր չալմա, սակայն մահու չափ ատում են նրանց (պարսիկներին — Մ. Զ.) [տե՛ս Ed. G. Browne, p. 58]։

30 "Chéréf-nâmeh", t. I, 2ème partie, p. 152. "A Chronicle of the Early Safawis being the Ahsanu't-tawarikh of Hasan-i Rumlu", vol. II, transl. by C. N. Seddon, Baroda, 1934, p. 41.

31 Նույն տեղում։

32 "Chéréf-nâmeh", t. II, 1ère, pp. 280—282.

33 Solakzade, s. 324.

34 M. Brosset, Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'aù XIX siècle, SPB. 1856, t. II, p. 19.

1511—1512 թթ. ձմռանը («և ժամանակն էր ձմռան») շահ Իսմայիլը հարձակվում է Բաղեշի վրա՝ տեղի քուրդ էմիրի թուրքերի կողմը անցնելու նպատակադրությունը խափանելու նպատակով։ Քրդերը շահի գերազանցող ուժի առաջ ստիպված են լինում ամրանալ ամրոցներում, նախապես կողոպտելով բնակչության պարենն ու արջառը.

Զերկիրս բոլոր հրդեհեցին,
Ո՛չ շէն թողին և ո՛չ աւան։
Եվ զկողոպուտ երկրիս առին,
Զառ և զաւար և ըզթալան,
Զշորթոտանիս ժողովեցին,
Զիւղ և ըզմեղր և ըզցորեան
Լցին զամրոցս իրեանց իլի,
Ամբարեցին որպէս մառան.
Ի գալ զօրացըն Թըշնամեաց՝
Ելեալ ի բերդքն և ամրացան[35]։

Շահ Իսմայիլի այս արշավանքը Բաղեշի բնակիչներին հասցնում է «ի դողման» այն աստիճան, որ ողբասացի բառերով ասած՝ ամենայն որ «խնդրէր մահու տապան և գերեզման»[36]։

Վերջին հաշվով էական չէ, թե երկրի ավերվածությունը կատարվել է քուրդ բեկերի, թե կզլբաշների ասպատակություններով։ Աղբյուրների վկայությամբ, ինչպես տեսանք, ծանր կացություն էր ստեղծվել Հայաստանում։ Աղթամարի հայոց կաթողիկոս Գրիգոր Աղթամարցին կարճ ու պատկերավոր ներկայացրել է Հայաստանի վիճակը տվյալ ժամանակաշրջանում.

Հագարացիք օրինօք թիւր
Զազգս խանձեն, որպէս գհուր[37]։

Թուրքերի ու սեֆյանների հարաբերությունները ծայր աստիճան սրվեցին սուլթան Սելիմ Յավուզի (Ահեղի, 1512—1320) իշխանության տարիներին։ Այն բանից հետո, երբ շահ Իսմայիլն իր պալատում ապաստան տվեց Սելիմի հարազատներին, որոնք հանդես էին եկել վերջինիս դեմ[38], Սելիմը հրամայեց Ստամբուլում դլխատել, նախօրոք

35 Պ. Մ. Խաչատրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ—ԺԵ դդ.) Երևան, 1969, էջ 99—100։

36 Նույն տեղում, էջ 100։

37 Կ. Կոստանյանց, Գրիգորիս Աղթամարցին և իր տաղերը, Թիֆլիս, 1898, էջ 13։

38 *A. Lamartine*, Histoire de la Turquie, t. IV, Paris, 1854, p. 134.

կազմված ցուցակով, շիա դավանանքին հետևող 40 հազար մարդու[39]։ Եվ սկսվեցին նոր ընդհարումներ, որոնց դարձյալ կրոնական կերպարանք տրվեց։ Մեծ մուֆթին իր ֆեթվայով ազդարարում էր, որ ալլահի համար մի շիայի սպանությունն ավելի հաճելի է, քան յոթանասուն քրիստոնյայի[40]։

Թուրքական պաշտոնական աղբյուրների վկայությամբ 1514 թ. Սելիմ Յավուզը դեպի Իրան արշավանք է կազմակերպել Երզնկա—Դերջան—Էրզրում—Չալդրան ճանապարհով։ Այդ արշավանքը նա ձեռնարկել է ազատագրելու համար «...այն հողերը, որոնց նա (շահ Իսմայիլը— Մ. Ղ.) բռնությամբ զավթել է»[41]։ Նահանջի ճանապարհին, Ուստաջլու խանի հրամանով, կզլբաշները ամեն ինչ ոչնչացնում են, այնպես որ 40 հազարանոց թուրքական բանակը[42] ստիպված ձեռնամուխ է լինում պարեն հավաքելու[43]։ Ալպյան մարգագետիններով հարուստ Հայաստանում, Մյունեջիմ բաշիի բառերով ասած, զավթիչները ձիերի համար նույնիսկ կանաչ խոտ չեն ճարում։ «Ամեն ինչ ոչնչացված էր,— գրում է նա,— կզլբաշները ստիպել էին բոլոր հպատակներին թաքնվել լեռներում ու երկրում ոչինչ չէր մնացել, նույնիսկ խոտ»[44]։

Սուլթանական բանակը շարունակում էր խորանալ երկրում, սակայն թշնամին չէր երևում։ Այսուհանդերձ, 1514 թ. օգոստոսին Չալդրանում տեղի ունեցավ ճակատամարտ։ Թուրքերը հաղթեցին կզլբաշներին ու գրավեցին Թավրիզը[45]։ Սակայն շուտով նահանջեցին, իրենց հետ տանելով հազարավոր արհեստագործների, որոնց թվում կային շատ հայեր։

Չալդրանի ճակատամարտը, անշուշտ, թուլացրեց սեֆյանների պետությունը ու հնարավորություն տվեց թուրքերին վերջնականապես կայսրությանը միացնելու Արևմտյան Հայաստանն ու Քրդիստանը։ Դրա հետևանքները ավելի ծանր կլինեին սեֆյանների համար, եթե չլինեին ենիչերիների ապստամբությունները։ Սելիմի նպատակն էր ձմեռել

39 "Müneccim başı tarihi", Istanbul, 1858, s. 450.

40 *M. d'Ohsson*, v. I, p. 135.

41 *Ed. G. Browne*, p. 15.

42 Այնքան մեծ էր այդ բանակը, որ Հասան Ռումլուի բառերով ասած «Չի կարելի նկարագրել ոչ երևակայությամբ և ոչ էլ գրչով» (A chronicle of the Early Safawis being the Ahsanu't-tawarikh of Hasan-i Rumlu", trans. and ed. by C. N. Seddon, Baroda, 1934, p. 68. այսուհետև՝ "Ahsanu't-tawarikh")։

43 *Sa'adeddin*, Tac-ut-taawrih, c. I, Istanbul, 1740, s. 255.

44 "Müneccim başı tarihi", s. 450.

45 "Ahsanu't-tawarikh", p. 68.

3—497

Ղարաբաղում, իսկ հաջորդ տարվա գարնանը վերսկսել պատերազմական գործողությունները շահ Իսմայիլի դեմ բուն Իրանում։ Արաքսի մոտ ենիչերիների ապստամբությունը փոխեց նրա ծրագիրը. սուլթանը հրամայեց նահանջել Հայաստանի վրայով։ Համաձայն Յուսուֆի «Սելիմ-նամեյի», նահանջող թուրքական բանակը վերադառնում էր Անատոլիա՝ Երևանի, Ուշքիլիսեի (Էջմիածնի), Մաստարայի (Թալին), Կարսի վրայով[46]։

Չնայած երկրի ծայր աստիճան ավերվածությանը, ենիչերիները կողոպտում էին ժողովրդի վերջին ունեցվածքը։ Համաձայն թուրքական աղբյուրների, հոկտեմբերի 28-ին հպատակները (հայերը) ներկայացան Սելիմին՝ գանգատվելով խժդժություններ կատարող նրա զինվորներից[47]։

Չալդրանից հետո Արևմտյան Հայաստանի քաղաքները մեկը մյուսի հետևից գրավվեցին թուրքերի կողմից։ 1515 թ. գարնանը կղզիաշների ձեռքում փաստորեն մնացել էր Կամախի ամրոցը։ Կամախը, ինչպես և Արևմտյան Հայաստանի մյուս քաղաքները Դերջանում Ուզուն Հասանի պարտությունից հետո անցել էր թուրքերի տիրապետության տակ։ Այժմ թուրքերին մնում էր վերանվաճել այդ քաղաքները։

1515 թվականի գարնանը Սելիմ Ահեղը Ամասիայից շարժվեց Կամախի վրա և քաղաքն ու նրա ամրոցը հրետանու կրակի տակ առնելուց հետո, մայիսի 16-ին գրավեց այն։ Բերդում եղած բոլոր կղզիաշներին սրի անցկացրեց[48]։ Մարտիրոս գրիչն այս դեպքերի մասին հայտնում է, որ Սելիմն «...էառ զբերդն Կամախայ և զբազումն կոտորեաց ի քրիստոնէից և անհաւատից»[49]։

1515 թ. թուրքերը գրավեցին նաև Կիլիկիան՝ զուլքադարցի թուրքմենների ձեռքից[50]։ 1515—1516 թթ. Օսմանյան կայսրության սահմանների մեջ ներգրավվեցին նաև քրդական շրջանները։ Այդ հանգամանքը խիստ բացասական հետևանք ունեցավ հայ ժողովրդի հետագա ճակատագրի վրա։ Արևմտյան Հայաստանում զորեղացավ քրդական տարրը, և հայ ժողովուրդն ընկավ կրկնակի՝ թուրք ու քուրդ ֆեոդալների լծի տակ։ Հաշվի առնելով քրդերի ռազմական ուժը Օսմանյան կայսրության արևելյան սահմանները պաշտպանելու գործում, թուրքական ղեկավարող շրջանները ամեն կերպ նպաստեցին նրանց վիճակի ամրապնդմանը ոչ միայն հարավային Հայաստանում, այլև նրա հյուսիսային ու հյուսիս-արևելյան շրջաններում։

1515 թ. շահ Իսմայիլ I-ի և Սելիմ Ահեղի միջև կնքվեց զինադադար, ըստ որի Օսմանյան կայսրության տիրապետության տակ անցավ Արևմտյան Հայաստանը Էրզրումի հետ միասին և Միջագետքի հյուսիսը՝ Մուսուլով հանդերձ։ Արևելյան Հայաստանն ու Ադրբեջանը մնացին սեֆյանների գերիշխանության տակ։

Հաշտությունը ժամանակավոր բնույթ էր կրում։ Արևելքի նոր տիրակալների՝ Սուլեյման Կանունիի (1520—1566) և շահ Թահմասպի (1524—1576) միջև չէր վավերացվել հաշտության պայմանագիրը։ Երկու կողմերն էլ առիթ էին փնտրում խախտելու այդ պայմանագիրը և վերսկսելու պատերազմը։ Պատերազմի անմիջական առիթ հանդիսացավ հետևյալը. 1530-ական թվականներին Բիթլիսի քուրդ էմիր Շարաֆ խանը, դժգոհ թուրքական կառավարությունից, ապստամբեց ու անցավ շահ Թահմասպի կողմը. միաժամանակ Ադրբեջանի կառավարիչ Ուլամեն, դավաճանելով շահին, ապաստան գտավ թուրքերի մոտ[51]։ Սուլթանական կառավարությունը սիրով ընդունեց Ուլամեին և նրան նշանակեց Բիթլիսի ու նրա շրջակայքի կառավարիչ՝ Շարաֆ խանի փոխարեն[52]։ Ուլամեն թուրքական հիսուն հազար հեծյալների գլուխ անցած գալիս պաշարում է Բիթլիսը, սակայն Շարաֆ խանը նրան ուժեղ դիմադրություն է ցույց տալիս[53] ու միաժամանակ դիմում շահին՝ հայցելով օգնություն։ «Իսկ երբ թուրքերը իմացան շահի գալուստը,— գրում է Հասան Ռումլուն,— հրաժարվեցին Բիթլիսը գրավելու մտադրությունից ու նահանջեցին»[54]։ Ակնարկելով այս դեպքերը, Առաքել գրիչը հայտնում է հետևյալը. «...այլև գրեցաւ սա ի գաւառն Տարօնոյ ի սուրբ ուխտն Յովհաննու... ի դառն և ի դաժան ժամանակի, որ էրեկ Ուլամայ սուլթանն ի վերայ Բաղիշա բերդին և խսարեաց և բաղում աւերք արար երկրի մերում և վասն ծովացեալ մեղաց մերոց դեռ յերերման է երկիրս մեր և զվերջն ոչ գիտեմ, թէ ինչ լինելոց է...»[55]։

---

46 J. Hammer, t. IV, p. 424.

47 Նույն տեղում։

48 "Ahsanu't-tawarikh", p. 73.

49 Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 259։

50 "Ahsanu't-tawarikh", p. 109.

51 Նույն տեղում։

52 Նույն տեղում, էջ 110։

53 Նույն տեղում։

54 Նույն տեղում։

55 Մատենադարան, ձեռ. № 5665, էջ 201 բ։

Ուլամեի զորքերի ավերիչ ռազմական գործողությունների անմիջական հետևանքը, ինչպես վկայում է Հովհ. Արճիշեցին, մահտարաժամն էր։ «Եւ դարձեալ միւս ամին,— գրում է նա,— մահտարաժամ եղև ի վերայ աշխարհի և բազում մարդիկ խոցեցան ի հրեշտակացն աստուծոյ և մեռան»[56]։

Օգտվելով այն հանգամանքից, որ շահը այդ ժամանակ գտնվում էր Մավերենահրում, ինչպես այդ մասին վկայում է Հասան Ռումլուն, Ուլամեն վերսկսվում է պատերազմական գործողությունները ու պաշարում է Վանի բերդը[57], սակայն հաջողության չի հասնում։ Սուլթանը դեպի Վան է ուղարկում 90 հազարանոց զորք՝ մեծ վեզիր Իբրահիմ փաշայի գլխավորությամբ[58]։ Մեկը մյուսի ետևից մեծ վեզիրի զորքերը գրավում են Արծկեն (Ադիլչեվազը), Արճեշը, Խլաթն ու Վանը[59]։ Կըզըլբաշները ստիպված էին նահանջել։

Թավրիզի գրավումից հետո թուրքական բանակը ուղղություն վերցրեց դեպի Բաղդադ։ Թավրիզի կառավարիչ նշանակվեց Ուլամեն. Օգտվելով օսմանյան հիմնական բանակի բացակայությունից, շահ Թահմասպը հարձակվեց Ուլամեի վրա։ Վերջինս փախավ Վան, իսկ կզլբաշները հետապնդեցին նրան, որի հետևանքով ամբողջ Վասպուրականը կատարյալ աղետի մատնվեց և պատահական չէ, որ այդ դեպքերը մտել են մեր պատմության մեջ որպես «Վանի աղետը»[60]։ Այս դեպքերը մանրամասն նկարագրված են այդ տարիների ձեռագրերի հիշատակարաններում և Հովհաննես Արճիշեցու տարեգրության մեջ։ «... և խոնդարքն ի յետ դարձաւ և գնաց ի Բաղդատ և զՈւլամէն եթող ի Թավրէզ,— գրում է Հովհ. Արճիշեցին,— շահն լուաւ զմնալն Ուլամին շուտ ի վերայ դարձաւ և նա լուաւ զգալ շահին փախաւ ի Թավրիզոյ և ամրացաւ ի Վանայ բերդն... և լուեալ շահին ի Վան լինելն զաշխարհաւէր Ուլամին, շուտ ի վերայ հասաւ և պաշարեաց զքաղաքն և զբերդն և ի յուժ ձգել կարմիր գլխին, թողին զքաղաքն և ամրացան ի բերդն և ի յառնուլ քաղաքին երեք հարիւր մարդ ի սուր քաշեցին... և ով կարէ ճառել զպատուհասն եղև, և սկսաւ քակել զքաղաքն և զերկիրն, զի զշենսն քակէին և մինչև ի լոյս հազար տեղ կրակ վառէին և զճա-

56 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 228։

57 "Ahsanu't-tawarikh", p. 112.

58 Նույն տեղում, էջ 113։

59 "Tarîh-i Peçevi", c. I, Istanbul, 1283 (1868), s. 176.

60 Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1946, էջ 181։

նապարհներն պահէին, որ մարդ ի բերդէն չիջանէր, և հեծեալքն ցուրեալ ի շորս դիմաց աւերեցին և անմարդաբնակ արարին, զՎանայ երկիրն, զՈստանայ և զԱմկուն... (ընդգծումը մերն է—Մ. Զ.)»[61]։ «...և քանի գնայր պատուհասն սաստկանայր,— այնուհետև շարունակում է տարեգիրը,— և սիրտ բռնաւորին ի բարկութիւն շարժէր, զի պատուհասն յԱստուծոյ էր, ի յամէն օր տասն մեծ թօփ ձգէին ի բերդն և զարպազանդին և թագին թիւ չկայր, և ծովու բոլորս ի մեծ թօփի ձայնէն կուսասանէր... աւաղ, զիմ հոգւոյս, թէ քանի մարդ մեռաւ սրով և թրով, թօփով ու թուանկով, սովով և ծարաւով, ահիւ և դողալով, ի սուրբ Սարգսի պահոցէն մինչև ի Համբարձումն»[62], այսինքն՝ 1534 թ. հունվարի երկրորդ կեսից մինչև մայիսի 3-ը՝ Համբարձման տոնը[63]։ Հովհ. Արճիշեցու հաղորդած այս տվյալները հաստատվում են նաև ձեռագրերի այլ հիշատակարաններով։ 1534 թ. Վանում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում, որը «Հայապատում»-ում տպել է Ղ. Ալիշանը, գրիչ Մարգարեն մանրամասն անդրադառնում է այդ դեպքերին. «Դարձեալ ի ՋՁԳ (= 1534 թ.) թուին եղև պատուհաս և բարկութիւն ի վերայ աշխարհիս մեր Վանայ վասն ծովացեալ մեղաց մերոց, որ եկն շահ Թահմազ փաթշահն ի յաւուր ձմերայնոյ ի տասնի սուրբ Սարգսին մինչև ի Համբարձումն պաշարեաց և հսարեաց և շատ աւերս արար, փակեցին բազում եկեղեցիս և ապարանս մեծամեծս կործանեցին, աւար ածին զինչս և զստացուածս և անբնակ արարին զաշխարհս ի մարդկանէ և յրոզակէ։ Սպանին բազում քրիստոնեայս և զոմանս գերի վարեցին։ Ապա զբերդն ոչ կարացին առնել, բայց զչարիս զոր գործեցին, ոչ կարէ ոյք լեզուաւ ճառել կամ ընդ գրով արկանել։ Զի մեռան և հարսն և ի յայլ տեղիս զանձինս ԺԵՌ (15.000) և թողին մեզ սուգ անմխիթար և վերք անողջանելի։ Եւ կամք տիտուր տառապանաւք ի վերայ երկրի և ոչ գտանիմք հանգիստ կենաց մերոց։ Եւ ապա ի սուրբ և յաստուածաբնակ ուխտս Վարագ մտին կատաղիքն և արեան ծարաւիքն, ժանտքն և թշնամիքն արդարութեան և յուզեալ քանդելով ուր կայր պահարան սրբութեան զգեստաց գտեալ կողոպտեցին զամենայն գրեանս...»[64]։ Հ. Տաշյանի ցուցակում բերված հի-

61 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 229։

62 Նույն տեղում, էջ 230։

63 Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 233, ծան. 15։ Հասան Ռումլուն նույնպես վկայում է, որ շահը Վանը պաշարել է ձմռանը ("Ahsanu't-tawarikh", p. 114)։

64 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 591։

շատակարանից տեղեկանում ենք, որ Վասպուրականում զոհվել է 16 հազար մարդ. «Ի սոյն ամի, յորում էր թիւն Ջ և ՁԴ (= 1534) սուլթան Սուլեմանն եկաւ ի վերայ կարմիր գդակին և նա ոչ կարաց զդեմ առնել՝ փախաւ յարևելս, իսկ նորա հետամուտ եղեալ և էառ զբազում քաղաքս, ընդ նմին և զՎան քաղաք, զամուրն շուայլին Շամիրամայ և գնաց մինչ ի Սո(ւ)թանիա, դարձեալ ի յետ գնացի Բաղդատ, և զձմեռն անց եկաց և կարմիր գդակն դարձաւ ի վերայ Վանայ և Դ(4) ամիս խարեաց, աւաղ և վայ է զիս հազար բերան, թէ որքան անձինս կորեան, հաւատացեալ և անհաւատ, զի կարծես էր, թէ քան զԺՁԴ (16.000) անձինս մեռան, աւելի և ոչ պակաս»[65]։

Սուլթան Սուլեյմանի նոր արշավանքը վերջ դրեց Վանի պաշարողական դրությանը։ Այս անգամ օսմանյան բանակը դեպի Թավրիզ շարժվեց Քրդիստանի ու Մարաղայի վրայով[66]։ Շահ Թահմասպը թողեց Վանի պաշարումն ու շտապեց Իրան։ «Արդ՝ երբ սուլթանը իրեն ազատ զգաց Բաղդադից, նա նորից շուռ եկավ դեպի Ադրբեջան, իսկ շահը թողեց Վանն ու շտապեց դեպի Թավրիզ»[67],— կարդում ենք Հասան Ռումլուի ժամանակագրության մեջ։ Պաշարվածներից նրանք, ովքեր մնացել էին կենդանի, դուրս եկան ամրոցից «նուաղեալ և նուազեալ, խոց սիրտ և լալոտ աչօք», որովհետև «որոց հայրն և մայրն մեռեալ և որոց դուստր և որդին ի սուրն քաշեալ և որոց տունն տնցեալ և սիրտք սիրելեացն և բարեկամացն խորովեալ, և մարդ հողեղեն և ոչ կարէ ճառել կամ լեզուով պատմել»[68]։

Այնուհետև, սուլթանը «...Դարգազիի վրայով հետ վերադարձավ Թուրքիա»[69]։ Սակայն կզլբաշների դեպի Արևմտյան Հայաստան նոր ներխուժումը կանխելու նպատակով, Սուլեյմանը Ուլամեին ու երեք այլ փաշաների ուղարկեց նրանց դեմ. սրանք պարտվեցին կզլբաշներից։ «Եվ 941 թ. ռաբի առաջի ամսի 20-ին (1534 թ.) շահը,— գրում է Հասան Ռումլուն,— մտավ Վան ու գրավեց ամրոցը»[70]։ Հովհ. Արճիշեցու վկայությամբ, շահ Թահմասպը Վանը գրավում է առանց մարտերի[71] ու տեսնելով Վան-Վասպուրականի ավերված վիճակը խիստ հուզվում է։ «Եւ եկեալ շահն ի Վան, և տեսաւ զբերդն անմարդաբնակ և զքաղաքն աւերեալ՝ խիստ ուրախացաւ ի բերդին անկոիւ առնուլն ու դառն տրտմեցաւ ի վերայ աշխարհի աւերման երդուաւ, թէ «Յօրէս ի յետ Վանայ շաղաւաթ առնեմ, թէ զիմ որդին են սպաներ՝ այլ բան չեմ ասեր, խուզէն վկայ»[72]։ Այնուհետև շահը «...ի Յարճիշոյ կողմեր դեմ Հռոմոց թագաւորին գնաց զՍարուսուն թալանեց զԽլաթ, զՄուշ և դարձեալ ի Յօստան ի ներս գնաց ի Թավրէզ»[73], Վանի կառավարիչ նշանակելով Ահմեդ Սոֆի Ուղուրլիին[74]։

Այսպիսով, 1531—1535 թվականների պատերազմների ընթացքում Թուրքերին չհաջողվեց կզլբաշներին հասցնել շոշափելի հարված։ Բացառությամբ Բարձր Հայքի (Դերջան, Էրզրում, Կարս և այլն), ամբողջ Արևմտյան Հայաստանը փաստորեն շարունակում էր մնալ սեֆյանների ձեռքում։

1547 թ. շահ Թահմասպի եղբայր Ալիսաս Միրզան ապստամբեց նրա դեմ և Շիրվանն ու Վրաստանը ասպատակելուց հետո Սև ծովի վրայով մեկնեց Ստամբուլ, ապավինեց սուլթան Սուլեյմանին, արժանանալով պատշաճ մեծարանքի[75]։ 1548 թ. արտագրված մի ձեռագրի հիշատակարանում Աստվածատուր գրիչն այս դեպքերի մասին հաղորդում է հետաքրքիր տեղեկություններ. «ՋՂԵ (=1548) թուականին, ոմն շար և կախարդ յազգէն նետողաց (պարսից) շահ Դահմազ անուն թուն շխ (շեխ) Հեյդարին, որդի շահ Իսմայիլին, որ կարծէր զինքն մեծ ոմն (և ասէր) թէ յազգէ և ի տանէն իմ ելանելոյ է Մեհդի և տիրելոց իմ աշխարհիս բոլոր, նա ոչ եղև այնպէս, այլ յազգէն իրմէ ել տուն և աշխարհին իւրոյ քանդիչ և աւերիչ՝ եղբայրն իւր Ալիխան, որ տիրէր

65 «Յուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վիեննա», կազմեց Ն. Յակոբոս Տաշեան, Վիեննա, 1895, էջ 434։

66 J. Hammer, t. IV, p. 505—507.

67 "Ahsanu't-tawarikh", p. 117.

68 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 230։

69 "Ahsanu't-tawarikh". p. 117.

70 Նույն տեղում։

71 Ի. Փեչևիի վկայությամբ Վանը «...վատասիրտ և անընդունակ կառավարիչների անփութության և անհոգության պատճառով նորից ընկել էր կզլբաշների ձեռքը» (տե՛ս "Tarih-i Peçevi", c. I, p. 191)։

72 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 231։ Պատերազմական գործողությունների անմիջական հետևանքը մահտարաժամն էր։ 1534 թ. արտագրված մի ավետարանի հիշատակարանում Աբրահամ քահանան գրում է. «... ազատեն զմեզ ի յայս մահտարաժամէն զի սա՝ որ գրեցաւ այսմ ամի (ՋԺԴ) մահ երեկ, և բազումս կոտորեաց ի քաղաք և ի գեօղ՝ և անմարդաբնակ արար, և շատ գաղանաց և շանց կերակուր եղև (եղեն) և ոչ որ իշխէր թաղել զնոսա» (Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 266—267)։

73 Նույն տեղում։

74 "Ahsanu't-tawarikh". p. 118.

75 Նույն տեղում, էջ 146։

Շրուանայ և այլ բաղում գաւառաց և հակառակէ կաց եղբօր իւրում, և փախստական եղեալ (ի նմանէ) անցանէ զԴամուր ղափուն և հասանէ ի Ղրիմ շամղալն, և անտի առաջնորդեալ յերկիրն հոնաց պատէ զծովն Պոնտոսի հիւսիսային կողմամբ և գայ մատնէ ի քաղաքն Ըստամբոլ առ թագաւորն սուլթան Սուլեյման և նա յոյժ մեծարեալ զնա բազում պարգևօք»[76]։ Ալխաս Միրզան դրդեց սուլթանին արշավանք կազմակերպել Իրանի դեմ։

1548 թ. գարնանը (մարտի 28-ին) սուլթան Սուլեյմանը հսկայական բանակի[77] գլուխ անցած Կոնիա—Սեբաստիա—Ամասիա—Էրզրում—Արծկեի ճանապարհով շարժվեց դեպի Թավրիզ[78]։ Համաձայն այս արշավանքում սուլթանին ուղեկցող ֆրանսիական դեսպան դ'Արամոնի վկայության, թուրքական բանակը կազմված էր «300 հազար զինվորներից և 300 հրետանուց»։ Ի դեպ՝ դ'Արամոնը սուլթանի ռազմական խորհրդատուն էր և մեծապես շահագրգռված էր արևելյան այս արշավանքի շուտափույթ ավարտման հարցով, որպեսզի Ֆրանսիան հնարավորություն ունենար օգտագործելու օսմանյան ռազմական ուժերը Եվրոպայում իր գլխավոր թշնամու՝ Ավստրիայի դեմ։ Հավատարիմ իրենց տակտիկային, կզլբաշները դիմադրություն չկազմակերպեցին։ Արշավանքի սկզբին Ուլամեն և Փիրի փաշան իրենց հատկացված զորքով ուղարկվեցին պաշարելու Վանի բերդը[79]։ Հիջրեյի 10 ռեջեբ 955 թ. (1548 թ. հուլիսի 18) օսմանյան բանակը, Թավրիզից վերադառնալով, միացավ Վանը պաշարած զորքին։ «Ամբողջ մի շաբաթ օր ու գիշեր (բերդը) գնդակոծվեց... Տասներորդ օրը բերդը գրավվեց և ենթարկվեց փադիշահին»[80] ու նրա կառավարումը հանձնվեց Անատոլիայի նախկին դաֆթերդար՝ չերքեզ Իսկենդեր փաշային։

76 Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 435։

77 Վերոհիշյալ ձեռագրի հիշատակարանում սուլթանի բանակը 700 հազար է մատնանշվում, որն, ինչ խոսք, չափազանցություն է։ Եվ Սուլեյմանը,— կարդում ենք հիշատակարանում,— «...ասպատակեաց յարևելս բաղում հեծելօքն զի էՃՌ (700 հազ.) էր թիւ պատերազմողացն, իսկ զբեռնակիրս և զսպասաւորս անհամար էր» (նույն տեղում, էջ 436)։

78 "Tarih-i Peçevi", c. I, s. 274.

79 "Ahsanu't-tawarikh", p. 148.

80 "Tarih-i Peçevi", c. I, s. 273—274. Պատերազմական գործողությունների պատկերավոր նկարագրությունը տրված է Աստվածատուր գրչի հիշատակարանում. «[Սուլթանը] ... սկսաւ բարկութեամբ հարկանելով զպարիսպ բերդին, այնչափ հարին թոփով, զարբազանկով, թրանքով՝ մինչ զի երիվարաւ ելանէին ի գլուխ բերդին, զի ինն թոր էր, հինգ հարիւր զարբազանկ, տասներկու հազար թրակ՝ որ հարկանէին զբերդն... և էառ զբերդն Վանայ բռնութեամբ» (Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 436)։

Ֆրանսիական թագավորին ուղարկած հատուկ գրության մեջ սուլթան Սուլեյմանը այս արշավանքի ընթացքում հանդես է գալիս որպես հպատակների (հայերի) շահերի արտահայտիչ. «Արդ՝ երկրի ռայաներն ու հպատակները, մեր բարձր հովանավորության ներքո, արժանանալով թագավորական արդարության և աշխարհապարփակ ողորմության, ազատ մնացին կողոպուտից ու թալանից և վայելեցին իմ փադիշահական գթության ու ողորմության շնորհիվ ստեղծված ապահովությունը և անդորրությունը»[81]։ Թե դա ինչ ապահովություն ու անդորրություն էր, երևում է Ներսես Վարագեցու 1548 թ. հետևյալ հաղորդագրություններից։ Օսմանցիները,— գրում է նա,— «...քակեցին առհասարակ զգիւղս և զքաղաքս՝ զծառ և զտունկս առ ի յայրել զփայտս ի խանութ և յայլ ինչ պետս իւրեանց»։ Հաջորդ՝ 1549 թվականին,— այնուհետև գրում է Ներսես Վարագեցին,— սուլթանը «...հրամայեաց տանել եօթն թեռն կարմիր (ոսկի) ի Վան և պարսպել զքաղաքն, և սկսան ի շինելն, քակեցին զգերեզմանս՝ զխաչքար և զտապանաքարն և արկին ի հիմն պարսպին և եօթն ամիսն կանգնեցաւ երեք կողմն քաղաքին ի յարաց ամսոյ մինչ ի նաւասարդի։ Դարձեալ հրամայեաց մեծ արքայն՝ հունքար յամենայն աշխարհաց՝ որք ընդ ձեռամբ իւր էին, ցորեան, գարի (ժողովել) և տանել ի Վան»[82]։

Արևմտյան Հայաստանից սուլթանական բանակի նահանջից անմիջապես հետո, կզլբաշները իրենց ուժերը մտցրեցին այնտեղ ու շարժվեցին Վանի, Մուշի, Բիթլիսի, Արճեշի, Արծկեի ուղղությամբ ճանապարհին ավերելով ու ամայացնելով ամեն ինչ։ Այդ մասին են վկայում ինչպես հայկական, այնպես և թուրքական աղբյուրները։ «Այդ նույն տարին (1548 թ.),— գրում է Ի. Փեչևին,— մոլորյալ շահը, իմանալով Վանի գրավման մասին և ի վիճակի չլինելով դիմադրավել իսլամական (թուրքական) բանակին, սկսեց կողոպտել Ադիլջևազի (Արծկեի), Մշո դաշտի և Խլաթի բնակիչներին, կոտորեց իր ձեռքն ընկած թուլլերին, չքավորներին և որբերին։ Կողոպտված արջառի, ոչխարների, կովերի ու հորթերի հովիվ դարձած քշեց ու տարավ»[83]։ «...Վանի, Ոստանի, Ամյուկի, Գավաշի, Աղբակի և Խոշաբի տները

81 «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հ. Բ, Երևան, 1964, էջ 204։

82 Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 438—440։

83 "Tarih-i Peçevi", c. I, s. 274.

ավերվեցին»,— գրում է Հասան Ռումլուն[84]։ «Շահ Թահմասպը,— գրում է Շարաֆ խանը,— ներխուժեց Բիթլիս, այրեց Մուշը, ինչպես նաև Խութի շրջակայքը։ Կզլբաշները շարժվելով Բիթլիսի Գեոկ մեյդանը, այնտեղ մեծ ավերածություններ կատարեցին»[85]։

Պատերազմական գործողությունների անմիջական հետևանքը մահտարաժամն էր։ 1549 թ. Բարկիս գյուղում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք հետևյալը. «եղև մահտարաժամ և մեռա՝ անթիւ տղայք, հենց որ կալոյ ժամանակին, տղայ չկայ, որ զկամսն քշէր...»[86]։ Պատերազմները մեծ վնաս հասցրեցին գյուղատնտեսությանը։ Վախենալով, որ կողոպտված անասունները կընկնեն թուրքերի ձեռքը, շահը, Փեչևիի բառերով ասած, «բացի այդ կենդանիների ոչնչացումից, այլ քաջություն չցուցաբերեց»[87]։

1549 թ. ամռանը մեծ բանակի գլուխ անցած սուլթան Սուլեյմանը դարձյալ արշավանք կազմակերպեց դեպի Արևելք։ Այս անգամ սուլթանական բանակի գլխավոր խնդիրն էր Վրաստանի նվաճումը։ Դեռ 1548 թ. ֆրանսիական դեսպան դ'Արամոնը հայտնում էր Հենրիխ II, որ սուլթանը նպատակադրվել է հաջորդ տարի հարձակվել Վրաստանի վրա[88]։ Սուլթանը Վրաստան ուղարկեց երկրորդ վեզիր Ահմեդ փաշային՝ մի քանի հազար ենիչերիներով, Էրզրումի, Սեբաստիայի բեյլերբեյերի զորքերով։ Թորթումը գրավվեց համառ մարտերից հետո։ Թուրքերը նվաճեցին նաև Թամերետ, Էմրիտ, Ակշեկալե և 15 այլ ամրոցներ[89]։ Այդ ժամանակվանից Վրաստանի հիշյալ մասը կազմեց Օսմանյան կայսրության մի նահանգը ու հայտնի էր «վիլայեթ-ի Գյուրջիստան» անունով։

1551 թ. կզլբաշները կրկին հարձակվեցին Արևմտյան Հայաստանի ու Քրդիստանի վրա՝ ավերելով ու ամայացնելով երկիրը։ «Շահը,— գրում է Ի. Փեչևին,— կողոպտեց Ադիլչևազի (Արծկեի), Արճեշի խեղճերին և պաշարեց Արճեշի բերդը»[90]։ Չորս ամիս պաշարվածները դիմադրեցին շահին, սակայն հետո անձնատուր եղան։ «Եվ շահը հրամայեց, որ բերդը քանդվի. այդպես էլ վարվեցին»[91],— գրում է Հասան Ռումլուն։ Բերկրիում և այլուր, այնուհետև գրում է պարսիկ հեղինակը, շահը առանձնապես անողոք էր քրդերի նկատմամբ. նա կարգադրեց «...ոչնչացնել քրդերին, որպեսզի շրջակայքի հպատակները ազատվեն նրանց բռնությունից»[92]։

1551—1553 թվականներին պատերազմական գործողությունների ոլորտը ներգրավվեցին նաև Էրզրումի և Կարսի շրջանները։ Այստեղ Թահմասպի որդի Իսմայիլ Միրզան «կրկնեց նույն բռնությունները և չարագործությունները, որոնք կատարել էին կզլբաշները Մուշում և Ախլաթում»[93]։ Իսմայիլ Միրզան, համաձայն մի հիշատակարանի, հետագայում ասպատակում է նաև Վանն ու իր շրջակայքը. «Զի յաւուրս Ամերայնոյ՝ ի տօնի սուրբ Յակոբին եկաւ որդին շահ Դահմանին Իսմայիլ Միրզեն բազում հեծելօք (ի վերայ երկրին Վանայ) և երեք մասունս արարեալ՝ (զզօրս իւր) զմին մասն ի յԱմուկ ուղարկեալ, և զմին մասն ի Հայաձորն և ինքն մնաց ի խոշապն և զօրքն սփռեցաւ առհասարակ. զոմանս սպանանելով, զայլսն թալանելով՝ բայց գերի ոչ արարին, և զարձան բազում աւարաւ ի տեղիս իւրեանց»[94]։

Թե ինչքան ծանր հետևանքներ ունեցավ շահ Թահմասպի ասպատակությունները 1551—1552 թվականներին, բացահայտվում է Թադեոս Սեբաստացու հիշատակարանով և նրա «Վասն շարժման կարմիր գլխոյն որ եկեալ երեց և աւերեց զՀայոց աշխարհս Արևելից» ողբով[95]։ Թադեոս Սեբաստացին Արևմտյան Հայաստանում կատարված ավերածությունները համեմատում է Թիմուրի ասպատակությունների հետ ու գտնում, որ «Աղետք գործոց վնասու նոցա առաւել են քան զԱնկ-Թամուրայն, զորս կարծես թէ չէր տեսեալ ուրուք ի հողածնացս»[96]։ Իգնատիոս գրիչը, իր հերթին, շահ Թահմասպի ասպատակությունները այսպես է ներկայացնում. «Եւ ապա սկսան որդիք կորստեան այրել զբնակութիւնս մարդկան և զխոտս անասնոց յԱրճեշ, ի Արծկէ, ի Խլաթ և ի Բաղեշ ի Բերկրի և զՎանա, զՈստայն և զՄահմըտունք մինչ ի յԱռզրում։ Այս Գ (3) ամիս է անխափան չարիս և անթիւ ոճիրս գործէ անօրէն և անողորմ արքայն Դամազ, և զվերջն ոչ գիտեմք»[97]։

---

84 "Ahsanu't-tawarikh", p. 162.

85 "Chéréf-nâmeh", t. II, 1ère, p. 582.

86 *Մատենադարան, ձեռ. № 9222, հիշ. 10։*

87 "Tarih-i Peçevi", c. I, s. 283—284.

88 *М. Х. Сванидзе,* Из истории грузино-турецких взаимоотношений в XVI—XVII вв. (1578—1639 гг.), автореферат докт. дисс., Тбилиси, 1969, с. 27.

89 *Նույն տեղում։*

90 "Tarih-i Peçevi", c. I, s. 166.

91 "Ahsann't-tawarikh", p. 166.

92 *Նույն տեղում, էջ 167։*

93 "Tarih-i Peçevi", c. I, s. 298.

94 *Մատենադարան, ձեռ. 6273, էջ 452—453։*

95 *Տե՛ս* Ղ. Ալիշան, *Հայապատում, էջ 593—595։*

96 Մ. Չամչյան, *էջ 278։*

97 *Մատենադարան, Մագիստրոսի թղթ. № 9, էջ 85։*

Մեկ այլ հիշատակարանում գրիչը հայտնում է, որ «շահը ժողովեաց զզօրս իւր և դիմեաց գաղանաբար ի վերայ ազգիս քրիստոնէից և բազում ոճիրս գործեաց զի հանին զվաղակաւոր սուրն պատենից իւրեանց և դիմեցին առհասարակ ուր և հասին և բազումն սրախողխողեցին զՎան, զՈստան, զՋուլամերկ, զԳաւաշ, զեղեգեաց դաշտն, զԲաղէշ, զՄուշ, զԲուլանուխն, զԽնուսն, զՄանծկերտ և զՍարուսուն, զԱրզրում մինչև յԵրզնկայն, զԲասեն մինչև Կաղզւան, զԽլաթ և զԱրծկէ և զԱրճեշ և զԲերկրի զոր յառաջ ի ձեռս անկան ի սուր սուսերի մաշեաց»[98]։

Կզլբաշները այնպիսի անտանելի վիճակ են ստեղծում հիշված վայրերում, որ մարդիկ ստիպված փախչում են երկրից։ Այդ մասին են խոսում գրիչ Եղիա եպիսկոպոսի հետևյալ վկայությունները. «Վասն մեղաց մերոց փախուցեալ ընդ միաբանաւ ի յետ բազմացն. ի յանիրաւ և յանաստուած ազգէն ղզլպաշէն և յանողորմ սրոյ նորին... զի ի ՌԱ (1552) թվին եկն բարկութեամբ շահ Դահմանն զօրօքն իւրովք ի վրա երկրին այնմիկ և պաշարեաց զծովն բոլոր, զՎասպուրականն և զՌըշտունիքն, զԲաղէշ և զՏարօնն, զԽլաթ և զԲզնունիք, զԲաջբերունին և զՏարբերունին, զԽնուս մինչ ի յԱզրում, զԱղբակ և զՄահմուտանք, ամենն առհասարակ պաշարեաց խստութեամբ... Զբնակութիւն տեղոյն այնոցիկ քանդեցին, աւերեցին և հրմնայատակ արարին, որ ոչ մնաց քար ի վերա քարի, և բան մարգարէին անդ կատարեց։ Թէ քակէ և զբնակիչսն ամենայն, զոմանս անողորմ սրոյ ճարակ արեցին, զոմանց ի ձեռացն, ի քթացն և յականջացն խոռոնոքեցին... և մնացեալքն մազապուրծ եղեալ ի գիշերի և ոչ ի ցերեկի, ահիւ և դողութեամբ, կսկծագին սրտիւ և դառն արտասուօք և յոգոց հանելով բաժանեցան ի միմիանց՝ հայր յորդոց և մայր ի դստերաց, եղբայր եղբօրէ և ազգական և սիրելի միմիանց աղիողորմ հուռացմամբ և մնացեալ փախստական ոմն ի Հորմոց տունն, ոմն ի Թուրքատունն, և ոմն ի Գուրջստունն...»[99]։

Ի պատասխան կզլբաշների Արևմտյան Հայաստանում կատարած ավերիչ ասպատակության, Թուրքերը 1554 թ. փաստորեն ավերակի կույտի վերածեցին Արևելյան Հայաստանը, Ի. Փեչեվիի բառերով

98 Մատենադարան, ձեռ. 6273, էջ 442—443։ «Սփռեցան զօրք նորա յերկիրն Վասպուրականի և Տարուբերանայ և չթողին շինութիւն ի կողմանցն Վանայ մինչև յԵզնկայ, սուր և տապար ի ձեռին այսր անդր ընթացս առեալ՝ հատին զայգեստանեայսն՝ Խլաթայ և Արծկեայ և կոտորեցին զծառատունկս անտառաց և զփայտս պտղաբերս և հրձիգ արարին զարտօրայս Կարնոյ» (Մ. Զամչյան, էջ 278)։

99 Մատենադարան, ձեռ. № 6282, էջ 625ա—625բ։

ասած, «...արյան փոխարեն արյուն խմեցին»։ 1554 թ. գարնանը սուլթանական բանակը Դիարբեքիրի վրայով շարժվեց դեպի Էրզրում և Կարս։ Մտնելով Արևելյան Հայաստան, Ի. Փեչեվիի վկայությամբ, «Հաղթական բանակը մինչև հիմքը կործանեց ու ավերեց բարեշեն գյուղերը»[100]։ «Հաղթական բանակի սարսափից,— շարունակում է Ի. Փեչեվին,— քաղաքներն ու գյուղերը, տներն ու բնակավայրերը այն աստիճան էին ամայացել, որ տեսնողին սարսափ էին պատճառում»[101]։ Ի. Փեչեվին նշում է, որ օսմանյան բանակը գերեվարում էր «սիրեկան աղաներ», «քնքուշ ու մատաղ աղջիկներ», «մանավանդ հարսներ»։ «Չկար մի վրան, որի մեջ գտնվող սիրեկան և սիրուհիների թիվը երեքից պակաս լիներ, հինգից, տասից ավելի ունեցող վրաններն անթիվ էին»[102]։

Գրավելով Արևելյան Հայաստանի մի զգալի մասն ու Նախիջևանը, Թուրքերը ստիպված եղան դադարեցնել բանակի հետագա առաջխաղացումը՝ պարենամթերքի պակասի ու ռազմիկների շարքերում տարածված համաճարակի պատճառով։ Սուլթան Սուլեյմանը Էրզրումի վրայով իր բանակը հետ քաշեց Ամասիա։

Երկյուղ կրելով, որ հաջորդ՝ 1555 թվականին, սուլթան Սուլեյմանը Ամասիայից նորից կհարձակվի Իրանի վրա, շահ Թահմասպ I-ը իր ներկայացուցիչներին ուղարկեց Ամասիա՝ խնդրելով օսմանյան գահակալից հաշտություն։

Երկար բանակցություններից հետո, 1555 թ. մայիսի 29-ին Ամասիայում պատերազմող կողմերը հաշտություն կնքեցին, ըստ որի գրեթե նույնությամբ վերականգնվեցին երկու պետությունների նախկին սահմանները՝ Հարավային Հայաստանը (Վան, Մուշ, Բիթլիս և այլն) անցավ Օսմանյան կայսրությանը, իսկ Արևելյան Հայաստանը, Արևելյան Վրաստանն ու ամբողջ Ադրբեջանը մնաց կզլբաշների տիրապետության տակ։ Պայմանագրով նախատեսված էր երկու պետությունների սահմանագծում գտնվող Կարս քաղաքը դարձնել ամայի ու անմարդաբնակ։

* * *

Ամասիայում կնքված հաշտության պայմանագիրը չէր նշանակում հարատև խաղաղություն արևելյան երկու պետությունների միջև։ Դա

100 "Tarihi-i Peçevi", c. I, s. 313.

101 Նույն տեղում։

102 Նույն տեղում։

կարճատև մի զինադադար էր, քանի որ այդ պայմանագիրը չէր վերացնում դրանց միջև գոյություն ունեցող, կրոնական շղարշի տակ թաքնված, խոր քաղաքական հակասությունները։

Վերը նշվեց, որ XVI դարի կեսերից Թուրքերին մեծապես մտահոգում էր Ռուսաստանի առաջխաղացումը դեպի հարավ ու նրա հնարավոր դաշինքը Իրանի հետ։ Ռուսներից ունեցած վախը Թուրքերին ստիպեց Իրանի սահմանի մոտ գտնվող Էրզրումում քաղաք-ամրոցում նոր ու ամուր պաշտպանական պարիսպներ կառուցել։ Մ. Սելանիկին այդ մասին գրում է, որ իբր թե, Էրզրումի բնակիչները, վախեցած արևելքից սպասվող հարձակման վտանգից, «դիմում ներկայացրին նորին վսեմություն փադիշահին», որի համար «արտոնություն շնորհվեց,— շարունակում է նա,— և 10 հազար արշին երկարությամբ պարիսպ կառուցելու համար քար ու կիր հավաքելու ձեռնարկվեց և երկրի ռայաթների ապահովության և հանգստյան համար անհրաժեշտ շինանյութ, գործիքներ և նյութեր պատրաստվեցին և սկսեցին պարսպի աշտարակների կառուցելու աշխատանքները՝ 980 թվականի մուհարրեմ ամսի սկզբին (10 մարտ 1578 թ.)»[103]։ Վախենում էին, անշուշտ, Թուրքական ղեկավարող շրջանները։

Պատերազմի դեպքում, դուրս գալով Կասպիական (Խազարական) ծով, Թուրք նվաճողները, ինչպես խոստովանում է Ի. Հ. Դանիշմենդը, հնարավորություն կունենային անմիջական շփման մեջ մտնել միջինասիական Թուրքերի հետ և նրանց հետ մի ընդհանուր ճակատ կազմել «կրոնի և պետության թշնամի» Սեֆյան Իրանի դեմ[104]։

Թուրքական աղբյուրներում «պարսկական արշավանք» անվանված պատերազմական գործողությունների առաջնահերթ նպատակը պիտի լիներ Շիրվանի ու Վրաստանի (Գյուրջիստան) զավթումը։ Մյուս կողմից Թուրքական բանակը պիտի ընդառաջեր Դաղստանի ու Շիրվանի ֆեոդալների դիմումներին», ուր «...աղգաբնակչության զգալի մասը սուննի Թուրքեր էին»[105]։

Թուրքական նվաճողների նման ստրատեգիան շուտով Հայաստանը կրկին պիտի դարձներ պատերազմական գործողությունների թատերաբեմ՝ հայ ժողովրդին պատճառելով անլուր ու անասելի դժբախտություններ։

---

103 «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հ. Բ, էջ 119։

104 *I. H. Danişmend*, c. III, Istanbul, 1950, s. 16, 17, 27.

105 Նույն տեղում, էջ 15։

Չնայած սուլթան Սուլեյմանի մահից հետո գահ բարձրացած սուլթան Սելիմ II-ի (1566—1574) ժամանակ Ամասիայի հաշտության պայմանագիրը 1566 թվականի վերջերին երկու պետությունների միջև վերահաստատվեց, սակայն այս հանգամանքը դարձյալ ժամանակավոր երևույթ էր[106]։

1571 թ. հոկտեմբերի 7-ին եվրոպական երեք պետությունների միացյալ նավատորմից Լեպանտոյի ծովամարտում Թուրքերի կրած ծանր պարտությունը նպաստավոր էր սեֆյանների համար։ Դա վերջիններիս հնարավորություն էր տալիս պատերազմական գործողությունների նախաձեռնությունը վերցնելու իրենց ձեռքը և ներխուժելու Թուրքական սահմանները։ Սակայն 1576 թվականին, շահ Թահմասպի մահից հետո, Իրանում սկսված դահակալական կռիվները վերին աստիճանի թուլացրին Սեֆյան Իրանի հզորությունը՝ դրանով իսկ նախապայմաններ ստեղծվեցին օսմանցիների համար խախտելու Ամասիայի հաշտության պայմանագիրը և ներխուժելու Իրանի սահմանները։

Խախտելով Ամասիայի հաշտության պայմանագիրը, 1578 թվականին օսմանյան բանակը Լալա Մուստաֆա փաշայի գլխավորությամբ ներխուժեց Արևելյան Հայաստան։ Այդ նույն ժամանակ 30 հազարանոց կզլբաշների բանակը Թոքմաք խանի գլխավորությամբ ասպատակեց Արդահանի նահանգը[107]։

1578 թվականի օգոստոսի 10-ին (6 ջեմազուլ-ախիր 986 թ.) Չղրում տեղի ունեցավ մեծ ու արյունալի ճակատամարտ, ուր հաղթանակ տարան օսմանցիները[108]։ Ներխուժելով Վրաստանի սահմանները՝ օսմանյան բանակը մեկը մյուսի հետևից գրավեց Թումեք (Թմուկ), Ճխալքալաք բերդերը և շուտով մտավ Թիֆլիս[109]։

Այս տարիների քաղաքական դեպքերը արձանագրված են Խլաթում արտագրված մի ճառընտիրում, ուր գրիչներ Սարգիսը, Ներսեսը, Վար-

---

106 Մ. Սելանիկին մանրամասն նկարագրում է Ամասիայի հաշտության պայմանագրի վերահաստատման հետ կապված արարողությունները և այն թանկարժեք նվերները, որ շահ Թահմասպը ուղարկել էր Սելիմ II-ին [տե՛ս "Tarih-i Selâniki", Istanbul, 1281 (1865), s. 78—95]։

107 "Tarih-i Peçevi", c. II, s. 39.

108 Նույն տեղում, էջ 38. տե՛ս նաև "Tarih-i Selâniki", s 146—150. Ճակատամարտից հետո, գրում է Ի. Փեչևին, «իսլամ զազիներն այնքան ձիեր, ջորիներ, ուղտեր վրաններ ու այլ զանազան իրեր են ձեռք բերում, որ դրանց թիվը միայն բարձրյալ Աստուծո է հայտնի»։

109 "Tarih-i Peçevi", c. II, s. 42.

դանը և Հովհաննեսը հաղորդում են վերին աստիճանի հետաքրքիր և ուշագրավ տեղեկություններ։ Հիշատակարանը ընթերցողներին ցնցում է նվաճողների կատարած չլսված ու չտեսնված գազանությունների նկարագրությամբ, երկրի ընդհանուր ավերման ու խաղաղ բնակչության զանգվածային գերեվարության մասին հաղորդած մանրամասնություններով։ Այն աստիճան ողբալի են նկարագրված պատկերները, որ գրիչներն իրավամբ գրում են՝ «...ոչ կարեմք լեզուաւ պատմել, և ոչ զաչիրն նոցա (թուրք զավթիչների— Մ. Ջ.) ընդ գրով արկանել»։ Բերում ենք այդ հիշատակարանը որոշ կրճատումներով։ Գրիչները նշում են, որ ճառընտիրն արտագրված է «...ի թագաւորութեան տաճկաց՝ ի Բիւզանդիայ, որ այժմ Ստամբաւլ ասի՝ սուլթան Մուրատայ, զոր հրամայեաց նախարարաց իւրոց և առաքեաց ի Վան՝ առ խոսրով փաշայն իւր, թէ «ժողովեա զզաւրս քո՝ և եկ գնա ի վերայ կարմիր գլխու աշխարհին ի սահմանս Թաւրիզոյ՝ յառ և աւար, հուր զտեղս և զերկիրս նոցա, սպա՛ն, գերեցո՛ւ, այրէ՛, աւերեա՛ և ի յետս դարձիր։ Եւ յորժամ լուաւ զհրաման թագաւորին իւրոյ՝ մեծ փաշայն խոսրով և ժողովեալ բազում զօրս և յաւուրս պահոց առաջավորին՝ ասպատակեալ դիմեցին և գնացին ի դեպ յարևելս՝ ի վերայ գաւառաց շահին, որ կարմիր գլուխ ասի, և գնացեալ հասին մինչև ի Թավրէզ և ի Նախջուան և զբազում քաղաքս՝ և զգեղս՝ և զգաւառս աւերեալ քանդեցին, զարսն սրով սպանին, և զկանայսն և զտղայսն գերի վարեցին, և այնչափ անողորմ բան արարին, զի տղայն՝ որ որովայնով կալան և ընկեցին ի վառեալ բոնիրն ի մէջ կրակին, և այլ ևս զի զտղայքն ի գիրկս մարցն ջամբէին զսաինսն, և յանկարծ հասանէին ի վերայ նոցա, զմարս սպանանէին և արիւնն և կաթն իրար խառնէին և ջամբէին և մանկտեաց, ոչ գիտէին զվայս իւրեանց։ Եւ յետ այնորիկ բերէին նիզակ և հարկանէին զտղայսն ի ծայրս նիզակաց, և վիրացուցանէին զնիզակսն յերկինս և հարկանէին զտղայսն ի վերայ քարի և ի վերայ փայտի և սպանանէին, և ոմանք հարէին զտղայսն ի ծայրս նիզակաց և վերացուցեալ զնիզակսն տընկէին զմիւս ծայրն ի գետինն, և տղայքն ի վայրի ծայրն աղաղակէին և ճչային, թալկանէին ի սաստկութենէ ձմեռանն սառեալ մեռանէին։ Եւ այլ բազում ազգի հնարս գործեցին, զի ոչ կարեմք լեզուաւ պատմել. և ոչ զաղետն ընդ գրով արկանել»[110]։

110 Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 510—512. տե՛ս նաև Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, հ. 2, Կ.Պոլիս, 1888, էջ 268—269։

Չլդերի ճակատամարտից հետո օսմանյան մեկ ուրիշ բանակ, որն այդ ժամանակ գտնվում էր Էրզրումում, Ուզդեմիր Օսման փաշայի գլխավորությամբ՝ Ղրիմի թաթարների ու լեզգիների օգնական ուժերով, ասպատակեց Դաղստանն ու Շիրվանը[111]։ Մինչ արշավանքը, Ուզդեմիրի զորքը կատարում էր խժդժություններ, որն իր արտահայտությունն է գտել Բարսեղ վարդապետի տարեգրության մեջ։ «Իսկ ի վերին դարուս և ի նսեմ ժամանակիս մեր,— գրում է նա,— եղև բարկութիւն և պատուհաս ի վերայ աշխարհիս վասն ծովացեալ մեղաց մերոց, քանզի մեծ թագաւորն խոնդքար զօրաժողով արար հեծելոց եօթն հարիւր հազար (sic!), և ետ նոցա գլուխ զոմն անուն Օսման փաշայ և եկեալ բազմութեամբ զօրաք ի Թեոդապոլիս՝ որ է Առզրում և զչարիսն զոր արար ով կարէ պատմել՝ կամ ընդ գրով արկանել կացեալ անդ աւուրս բազում, որ և զայր մարդիկ ի դուրս ձգէին և կանայս և զկոյս աղջկունս և զտղայս խայտառակէին, այսպիսի պիղծ գործովք էին անօրէն ազգն Մահմետի»[112]։

1580 թվականի գարնանը օսմանյան բանակը շարժվեց Կարս և վերակառուցեց քաղաք-ամրոցը՝ հակառակ Ամասիայի հաշտության պայմանագրի։ Դրանով օսմանցիները ձգտում էին ավելի բորբոքել պատերազմական գործողությունները։ Կարս քաղաք-ամրոցի կառուցման մասին վերոհիշյալ ճառընտիրի հիշատակարանում կարդում ենք հետևյալը. «...Եւ յորժամ հնսաք ի համբարձումն, առաքեաց թագաւորն Մուրատ զմի ի գլխաւոր փաշայից իւրոց, որ մականուն Լալայ փաշայ կոչի ՀՌ (70.000) արամբք՝ ի մեծ քաղաքն յԱրզրում, թէ գնա՛ և շինէ՛ զկայսր (Կարս) քաղաք, որ ի բազում ժամանակաց աւեր էր, զի սինօռ (սահման) է երկու թագաւորացն։ Եւ նա եկեալ և բնակեցաւ ի դաշտն Բասենու և հրաման ել յաշխարհս, և ժողովեցան բազում ճար-

111 Օսման Ուզդեմիրի 1580 թ. կատարած ասպատակությունների մասին ահա թե ինչ է հաղորդում Իսրայել գրիչը. «...երեկ Աւսման փաշէն Հոռոմացոց (թուրքերի — Մ. Ջ.) Դամուր զապուն էառ ի աշխարհն Շիրվանայ և կոտորեաց ազգս զիզիլպաշին, բազում խանս և սուլթանս և արար փախստական։ Երեկ ազգ մի կայր Ղայտաղ կու ասեն և գերեաց բազում տեղիս՝ Ղարայպաղն, Ղարաղաջն, Խաչեն, Վարանդայ մինչև Տիզակ» (Մատենադարան, ձեռ. № 173, էջ 95ա)։ Ղրիմի խանը, ինչպես այդ մասին նշում է Էրզրումի գավառից Առաքել սարկավագ Սալաձորեցին, Ղարաբաղից ու Շիրվանից 100 հազար գերի է տանում իր հետ, որոնց թվում և շատ հայեր (Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 598)։

112 Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 319։

տարf և fարագործf, և ձեռնարկեալ շինեցին զբերդն և զքաղաքն առ ի հակառակութիւն կարմիր գլխուն (ընդգծումը մերն է— Մ. Զ.)»[113]։

XVI դարի իտալացի ճանապարհորդ Վինչենցո դ՝ Ալեքսանդրիի վկայությունից երևում է, որ դարի կեսերից ամայացված էր ոչ միայն Կարսը, այլև Թուրք-իրանական սահմանամերձ շրջանները։ «Թագավորի (շահ Թահմասպի— Մ. Զ.) ուժը կայանում է նրանում, որ նա երկիրը ավերակ է դարձրել Թուրքական սահմանների վրա՝ ամեն կողմ վեց օրվա ճանապարհ հեռավորությամբ, և շրջանում քանդած է բոլոր ամրոցները, որպեսզի զորացնէ իր դիրքերը և Թուրքերը հակում չունենան գրավելու և պահելու այն»[114]։

Կարսի ամրոցի վերակառուցման աշխատանքներին զուգընթաց օսմանյան բանակը Ջաֆեր փաշայի գլխավորությամբ ասպատակում է Արարատյան դաշտավայրը[115]։ Թուրքերին մեծ դիմադրություն է ցույց տալիս շահ Թահմասպի որդի՝ Համզա Միրզան իր ոչ մեծաթիվ ջոկատով։ Խոսելով այդ արշավանքի ընթացքում Երևանի բնակչության և ամենից առաջ հայերի[116] զանգվածային գերեվարության մասին, Ի. Փեչեվին նշում է, որ գերիները հարց հարուցեցին, թե արդյո՞ք խաղաղ բնակչության գերեվարումը օրինական է։ Մուֆտի Քեմալ-փաշա զադեն իր ֆեթվաներով (մեկնություններով) հաստատեց դրա «օրինականությունը»։ Մուֆտին մինչև իսկ գտավ, որ «...շարիաթով թույլատրվում է գերի վերցված կանանց հետ միասին գերի վերցնել նաև նրանց փոքրահասակ երեխաներին»[117]։

1584 թվականի գարնանը օսմանյան բանակը Ուզդեմիր Օսման փաշայի գլխավորությամբ Երևանից շարժվեց Նախիջևան։ Չնայած Համզա Միրզայի Մարանդում ու Խոյում օսմանյան հսկայական բանակին ցույց տված դիմադրությանը, փաշայի զորքերը 1585 թ. սեպտեմբերի 21-ին (26 ռամազան) գրավեցին Թավրիզը, հրի ու սրի մատնելով քաղաքը[118]։ Սակայն շուտով, Համզա Միրզայի ջոկատների հետ մի ընդհարման ժամանակ իր մահն է գտնում Ուզդեմիր Օսման փաշան (29 հոկտեմբերի 1585 թ.)։ Օսմանյան բանակը, թողնելով Թավրիզը, նահանջում է դեպի Վասպուրական՝ ասպատակելով Վանն ու իր շրջակայքը, որի մասին մեզ տեղեկացնում է 1585 թ. Արճեշում արտագրված ավետարանի հիշատակարանում Կարապետ եպիսկոպոսը։ Նա գրում է. «Ի դառն և ի նեղ ժամանակի...։ Եւ ելեալ ի յրստմպօլայ վեզիր փաշայ մի Աւսման անուն ի վերայ Արզռումայ գնաց երելով ու աւերելով, և զհայոց ազգս կողոպտելով՝ գնաց ի Շահաստան ի Թաւրեզ և ի տեղն բերդ պատրաստեաց և ինքն (անդ) սատակեցաւ և հեծալազօրքն անգլուխ ի յետ դարձան, և եկեալ գծովու բոլորս (Վանայ) երելով և աւերելով՝ և զհայոց ազգս կողոպտելով և զորն բռնէին իսկանչէին (տանջէին) և զօրապահաց թէ թագուցած կեր, թէ ի հացէ, թէ ի փարթալէ (ի շորեղենէ) թէ ինչ որ գումանք (կասկած) ունէին զամէն ի ձեռներն տային, դեռ չէին ազատեր, և զորն ֆար ու ֆասատ (զրպարտանք) ունէին և զհայոց ազգս խիստ դառն ու դիժար նեղէին, մինթէ Աստուած զվերջն բարի առնէ և զհայոց ազգս ազատէ»[119]։

Պատերազմական գործողությունների անմիջական հետևանքը սովն ու համաճարակն էր։ Սովի ցնցող նկարագրությունը տրված է Հովհաննիսիկ Ծարեցի գրչի և ուրիշների կողմից. «Ի սոյն ամի (1580 թ.),— գրում է գրիչը,— ընդ երկուց պատժոյս՝ մահուն և սրոյն, եղև ահագին և անասելի սով սաստիկ, այնքան՝ մինչ մարդիկ գազանապէս անկան ի հմայկերութիւն վասն յորոյ մնալոյն, ի մահոյն և վասն անինչք և անյարկ շրջելոյն ի գերչացն»[120]։ Սովի սաստկությունը առանձին վայրերում տեղի տվեց մարդակերությանը. «Եղո՜ւկ թշուա-

113 Համաձայն Մ. Սելանիկիի վկայության, Կարս քաղաք-ամրոցը իրը վերակառուցել է Թուրքական բանակը. «... բերդի կառուցումն սկսեցին և զինվորներն բեյլերբեյիներին զուլեր (ծառաներ) դարձան... կարճ ժամանակում մեծ եռանդով բերդի աշտարակների և պարիսպների կառուցումն ավարտվեց» ("Tarih-i Selâniki", s. 154)։ Մ. Սելանիկիի այս վկայությունը հավաստի լինել չի կարող։

114 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 352։

115 Այդ մասին պահպանվել են մի շարք հիշատակարաններ։ Դրանցից մեկը (1584 թ.) պատկանում է Բաղեշի Բոռ գյուղից ոմն գրչի։ Նա գրում է, որ Հայսմավուրքն արտագրված է «...ի թագաւորութեան թախտին Խոնդքարի սուլթան Մուրատ խանին, որ առաքեալ զզաւրս իւր որք ելին ի յարևելս և դիմեցին ի վերայ քրիստոնէիցն և աւերեցին զհայոց աշխարհն, զվերին կողմն արևելից և արին զԵրևան և տիրեցին և զայլսն ամենայն աւերեցին և գերեցուցին, և շատ անձինս քրիստոնէից ի սուրն քաշեցին և բազում սրբութիւնս աւերեցին...» (Մատենադարան, ձեռ. 6206, էջ 291 բ)։

116 Որ գերյալների մեծ մասը հայեր էին, երևում է ինչպես Թուրքական աղբյուրների հաղորդած տվյալներից, այնպես էլ XVI դարի անգլիացի վաճառականճանապարհորդ Ջոն Նյութերի հետևյալ վկայությունից. «Պարսկաստանի վերջին պատերազմներում (1578—1584 թթ. — Մ. Զ.) շատ քրիստոնյա գերիներ էին վերցրել Երևանում և ուրիշ տեղերում» (Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 544)։

117 "Tarih-i Peçevi", c. II, s. 58—59.

118 *I. H. Danişmend*, c. III, s. 86—87.

119 Մատենադարան, ձեռ. № 8939, էջ 274ա—274բ, ձեռ. № 6273, էջ 517—518։

120 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 243։

ռականիս,— այնուհետև շարունակում է նա,— և պատմութեանս եղբարք, քանզի բազումք ի պիղծ մսէ, զազիր շանց և կատաց կամաւ յուզեալ եղեն (մորթեալ) եղեն և մարմնոց մարդկան ևս»[121]։

Արդեն նշվեց, որ Իրանում ծայր առած ներքին գահակալական կռիվները վերին պատճառի թուլացրին սեֆյանների պետության հզորությունը և այդ է պատճառը, որ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում (1587—1590) թուրքերին հաջողվեց գրավել ամբողջ Անդրկովկասը։

1587 թ. հունիսին Իրանի գահին տիրացավ երիտասարդ ու հեռատես քաղաքագետ Շահ-Աբասը։ Հաշվի առնելով երկրում ստեղծված ճգնաժամային վիճակը (շամլու, ռումլու, ուստաջլու, զուլքադիր թուրքմենական ցեղերի առաջնորդների ապստամբությունները ծայր աստիճան քայքայել էին երկիրը), նա դիմեց թուրքերին՝ հաշտություն կնքելու խնդրանքով։ Կ. Պոլսում տեղի ունեցած երկար բանակցություններից հետո, 1590 թ. մարտի 21-ին արևելյան երկու պետությունների միջև կնքվեց հաշտության նոր պայմանագիր, ըստ որի օսմանցի նվաճողների արյունոտ տիրապետության տակ ընկավ ամբողջ Անդրկովկասը և Հարավային Ադրբեջանը՝ Թավրիզի հետ միասին։

* * *

1590 թ. Կ. Պոլսում կնքված հաշտության պայմանագրով Թուրքիան մասամբ իրագործեց քաղաքական ու տնտեսական իր ծրագիրը՝ զավթելով Անդրկովկասի ու Հարավային Ադրբեջանի կարևորագույն առևտրական ուղիները։ Ֆեոդալական մասնատվածությունից ուժասպառ եղած Իրանը շոշափելի ռազմական ու բարոյական պարտության կրեց։ Նվաճված ընդարձակ տարածքի հարստությունը[122], նախ և առաջ մետաքսի հումքը, բացահայտորեն սկսվեց կողոպտվել օսմանցի ֆեոդալների կողմից, բնակչությունը ենթարկվեց ծանր հարկատվության, կեղեքման ու կրոնական հալածանքի։ Տեղական ֆեոդալների տիրույթները կամ հափշտակվեցին, կամ նրանց պարտավորեցրին արքունական գանձարանին միանվագ խոշոր վճարումներ կատարել։

121 Նույն տեղում։

122 Միայն Բաքվի նավթը թուրքերին տալիս էր «տարեկան տաս բեռ ակչէ», այսինքն մեկ միլիոն ակչե (վաթսուն ակչեն մեկ ոսկի հաշվով), իսկ ընդհանուր եկամուտը արդի թուրք պատմաբանների նվազեցրած թվերով կազմում էր 25 միլիոն 200.000 ակչե, այսինքն՝ 420.000 ոսկե դրամ (տե՛ս I. H. Danişmend, c. III, s. 26)։

Այդ ամենը չէր կարող ընդհանուր դժգոհություն չառաջացնել նվաճողների նկատմամբ և՛ ֆեոդալների, և՛ բնակչության շրջանում։

Նման իրավիճակում տեղական ֆեոդալները իրենց տիրույթների փրկությունը տեսան Իրանի երիտասարդ Շահ-Աբաս I-ի (1587—1628) ռազմական միջամտության մեջ։ Վերջինիս հաջողվել էր Կ. Պոլսի հաշտության պայմանագրի կնքումից հետո ընկած կարճ ժամանակամիջոցում ապահովել իր արևելյան թիկունքը ուզբեկների ներխուժման մշտական վտանգից, սանձահարել կենտրոնախույս քոչվոր ֆեոդալների մի մասի դիմադրությունը և երկրում անցկացնել ռազմական բարենորոգում՝ վերակառուցելով Իրանի պաշտպանության գործը Թուրքիայի օրինակով։

Այսպիսով, Իրանի արյունռուշտ նոր բռնակալն ու «աւերող Հայաստան աշխարհին և կործանողն Հայոց ազգին», Անդրկովկասի ֆեոդալների կողմից դիտվում էր որպես հույսի ու փրկության ապավեն[123]։ «Բազումք ոմանք,— գրում է Առ. Դավրիժեցին,— յաշխարհէս Ատրպատականի իշխանք և կողմնակալք մահմետականք և քրիստոնեայք, գնացեալ էին առ թագաւորն Պարսից, վասն զի յոյժ չարաչար նեղութեամբ նեղէին զնոսա ազգն Օսմանցւոց ծանր հարկապահանջութեամբ, և կեղեքմամբ զրկէին և կողոպտէին, և հաւատոց կուռէճութիւն (խրստութիւն) առնէին, և այլ բազում տառապանօք չարչարէին ոչ միայն զազգս հայոց, այլև զազգս վրաց և զՄահմետականաց (ադրբեջանցիներ) և վասն այնր նեղութեան գնացին առ թագաւորն Պարսից, զի թերևս նովաւ դիւրութիւն գտցեն զեղծեալք ի ծառայութենէն օսմանցւոց»[124]։ Դիմելով Շահ-Աբասին, ֆեոդալները մտածում էին «...մտե-

123 Հետաքրքիր է նշել, որ այդ տարիներին արտագրված ձեռագրերի հիշատակարաններում գրիչներից ոմանք կարծես գերադասում են պարսկական տիրապետությունը օսմանյանից։ Ամենամռայլ գույներով ներկայացնելով օսմանյան տիրապետությունը Հայաստանում, նրանք որոշ հույսեր են կապում Շահ-Աբասի անվան հետ։ Այսպես՝ Եփարայ գյուղից 1601 թ. Ղազար Ագուլեցի գրիչը գրում է. «...յաւուրն նորին (սուլթան Մուհամմեդին, ձեռագրում սխալմամբ Ահմեդ է գրված— Մ. Զ.) այնչափ հալածումն լինել քրիստոնէից մինչև հայրն զորդիս վաճառէին»։ Հակադրելով սուլթանին Շահ-Աբասի հետ ու նշելով, որ վերջինը «...խիստ բարեկամ էր քրիստոնէից ազգին», շարունակում է. «...երանի էր մեզ, թէ թագաւորել ի վերա մեր զնա տեսանէք» (Մատենադարան, ձեռ. № 2845, էջ 267 բ)։ 1604 թ. Խիզանում արտագրված ավետարանի հիշատակարանում Սարգիս քահանան Շահ-Աբասին անվանում է «էդիլ փաթշահ» (այսինքն՝ «արդար թագավոր». տե՛ս Մատենադարան, ձեռ. № 6420, էջ 338 ա)։

124 «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ...», Վաղարշապատ, 1896, էջ 15 (այսուհետև՝ Առ. Դավրիժեցի)։

րիմք երևեսցին առաջի շահին, զուցէ թերևս դիւրութիւն և օգտութիւն ինչ գտանիցեն ի նմանէ նեղութեանց և պարտուց իւրեանց»[125]։

Երբ Իրանում ամրապնդվում էր Շահ-Աբաս I-ի կառավարությունը, XVI դարի վերջին սուլթանական Թուրքիան անկման նշաններ էր ցույց տալիս՝ ընկնելով ճգնաժամային վիճակի մեջ։ Երկրի ներսում ծայր առած այդ ճգնաժամը, անշուշտ, աննկատելի չէր կառավարող վերնախավին։ Ճգնաժամից դուրս գալու ելքը նրանք գտան եվրոպական ճակատում նոր պատերազմական արկածախնդրությունների մեջ[126]։ Այս պատերազմական գործողությունները բացի անհաջողությունից ուրիշ ոչինչ չբերեցին։ Ամեն օր Կ. Պոլիս էին հասնում նորանոր լուրեր՝ թուրքերի կրած ծանր պարտությունների մասին՝ հունգարական և վալախական սահմաններում։ 1593 թ. Բոսնիայում ամբողջությամբ ոչնչացվեց Հասան փաշայի զորքը։ Այդ տարին օսմանյան պետության պատմության մեջ հայտնի է որպես «կազմալուծման կամ պարտության տարի» (Bozgun senesi)։ Եթե եվրոպական ճակատում թուրքերը լրիվ չջախջախվեցին, ապա դրա պատճառը Գերմանիայում ծայր առած կրոնական ներքին վեճերն էին։ Այս հանգամանքը թույլ չտվեց օսմանցիների դեմ ընդհանուր հարձակում կազմակերպել։

Վերջիվերջո խռովության ալիքը բարձրացավ և օսմանյան պետության ներսում։ Երկրում ծայր առավ ջալալիների հզոր ապստամբությունը[127], որին հետևեց 1600 թ. կայսրության մայրաքաղաքում բռնկված սիփահիների ապստամբությունը։ Այդ տարին թուրքական պատմագրության մեջ հայտնի է որպես «ապստամբության տարի»[128]։

125 Նույն տեղում, էջ 17։

126 Անշուշտ քննադատության չի դիմանա արդի թուրք պատմաբան Ի. Հ. Դանիշմենդի այն կարծիքը, որ իբր պատերազմական այդ արկածախնդրություններին կայսրությանը մղեց մեծ վեզիր՝ «այդ հարբեցող դեշիրմե ստահակ» Սինան փաշան, որը պետությանը կանգնեցրեց կործանման եզրին (տե՛ս I. H. Danişmend, c. III, s. 70, 24, 150, 198 և այլն)։

127 XVI դարի վերջին և XVII դարի սկզբին կենտրոնական Անատոլիայում, Արևմտյան Հայաստանում, ինչպես և Օսմանյան կայսրության այլ շրջաններում (Սիրիայում, Միջագետքում) լայն ծավալ ընդունած ջալալիների շարժումներն իրենց ունեցած աղետալի հետևանքներով մեծապես շոշափել են հայ ժողովրդի կենսական շահերը, անդրադարձել են նրա պատմական ճակատագրին։ Ջալալիների շարժումներն ու այդ տարիներին Շահ-Աբասի կազմակերպած «մեծ սուրգունն» հայ ժողովրդի պատմության առավել դաժան դրվագներից էին։ Ուստի, նպատակահարմար գտանք, տալ այդ շարժման պատմությունը Արևմտյան Հայաստանում քաղաքական պատմության ընդհանուր շարադրանքից անմիջապես հետո։

128 "Fezleke-i tarih", c. I, Istanbul, 1869, s. 202.

Շահ-Աբասը ուշի-ուշով հետևում էր Թուրքիայում տեղի ունեցող իրադարձություններին՝ տեղեկություններ հավաքելով իր մոտ ապաստանած ֆեոդալներից։ Խորամանկ շահը,— գրում է պատմագիր Առ. Դավրիժեցին,— «...սնոտի և պատիր խաբէութեամբ» բարեկամ ձևանալով իր մոտ ապաստանած ֆեոդալներին, «...զամենայն խորհուրդս սրտից նոցա յինքն գողացաւ, և զամենայն որպիսութիւն աշխարհաց նոցա զել և զմուտ և զաշխարհակալ արանց իմացաւ»[129]։

Կ. Պոլսի պայմանագրով, Անդրկովկասի կորուստը, Իրանի ղեկավարող շրջանները դիտում էին որպես ժամանակավոր երևույթ, գտնելով, որ այդ երկրամասը իրենց ժառանգական «հայրենի աշխարհն է»։ Այս տեսակետից ուշագրավ են Առ. Դավրիժեցու մեջ բերած Զուլֆիղար խանի դիմումը Նախիջևանում պաշարված օսմանյան կայազորին։ Շահ-Աբասի զորավարը, հորդորելով կայազորին անձնատուր լինել, ասում էր, պաշտպանությունը զուր է, որովհետև գալիս է «ինքնակալ թագաւորը բազում զօրոք» և խնդրում է «զհայրենի աշխարհն իւր» (ընդգծումը մերն է—Մ. Ղ.)[130]։

Շահ-Աբասի հզորացումը, ըստ երևույթին, համակրանք էր առաջացնում նաև քուրդ որոշ ցեղապետների, և նախ և առաջ, Բաղեշի էմիրների մոտ։ Դրանով պիտի բացատրել այն պատժիչ արշավանքը, որ ձեռնարկել է Վանի Ահմեդ փաշան 1601 թ. Բաղեշի Շարաֆ խանի դեմ։ Այդ մասին Սարգիս Հիզանցին հայտնում է. «...որ ի յայսմ ամի ելեալ Ահմատ փաշէն ի Վանայ բազում զօրօք և եկեալ առ Շարաֆ խանն՝ ի Բաղէշ և կամէր գաղտածիգ նետի(-)ք որսալ զնա՝ և ոչ կարաց»[131]։ Երկար դիմադրությունից հետո Բաղեշը գրավվում է և Ահմեդ փաշան, մտնելով քաղաք, «...զորս սպան և զայ(լ)ս փախստական արար, մինչ որ հանեալ անթիւ խազինաս և բազում ոսկի և արծաթ ու տունս մեծագին և մարգարիտս, ազգի-ազգի Գ. հատիք (sic!) և պատուական հանդերձս, որ ոչ կարեմ ընդ գրով արկանել։ Եւ կացեալ անդի խաչի պահոցէն մինչ ի մեծ պահոց միջինքըն և անթիւ վնաս և նեղութիւն հատոյց քաղաքին և երկրին...»[132]։

129 Առ. Դավրիժեցի, էջ 18։

130 Նույն տեղում, էջ 23։

131 «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Ե, էջ 512։

132 Նույն տեղում, էջ 105։ 1602 թ. արտագրված մի այլ ձեռագրի հիշատակարանում այդ դեպքերի մասին կարդում ենք լրացուցիչ տեղեկություններ. «ՌԾԱ (1602) զՇարաֆ խան խարեութեամբ սպանեցին, և զՂեսերիկն (Կեսարիա՞) բովանդակ թալանեցին, և զքաղաքն երկրովն աւերեցին, և դեռևս են ի մարտ պատերազմի և զառաջիկայն Աստուած գիտէ» (Ղ. Փիրղալեմյան, Նշխարք..., հ. Ա, № 63, էջ 175 բ)։

Նշենք նաև, որ 1603 թ., ինչպես այդ մասին վկայում է Գր. Դարանաղցին, Եկեղեաց գավառը շարաշար տուժում է քրդական արշավանքի պատճառով։ «Եւ ապա դարձեալ դիմեցին (քուրդք) ի վերայ Եկեղեաց գաւառին Երզնկոյ,— գրում է ժամանակագիրը,— և շատ վնասակարութիւն և հրձգութիւն արարին։ Եւ ոչ ոք էր իշխան և կամ պարոն, որ ընդդէմ գնայր նոցա։ Եւ Հարզուլումի փաշան հեռի գոլով, մինչև որ ազդ լինէր նորա, նոքա զաշխարհն բնաջինջ կառնէին»[133]։

Նախքան օսմանցիների դեմ պատերազմ սկսելը, Շահ-Աբասը դեսպանություններ է ուղարկում Մոսկվա, Գերմանիա, Վենետիկ, Տոսկանա և Հռոմի պապի մոտ՝ Թուրքիայի դեմ միասնական ճակատ կազմելու համար[134]։

Շահին մնում էր միայն պատերազմի առիթը, որը շուտով ներկայացավ։ Դժգոհ օսմանցիների տիրապետությունից՝ Սալմաստի բեկ քուրդ Ղազին ապստամբում է և շահի օգնությանը դիմում՝ հորդորելով նրան շարժվել Թավրիզ[135]։ Օգտագործելով ստեղծված հարմար առիթը, 1603 թ. սեպտեմբերի 14-ին (7 ռեբի-ուլ-ախիր), Շահ-Աբասը մի քանի հազար զինվորների գլուխ անցած Սպահանից սրընթաց շարժվում է Թավրիզ ու գրավում այն։ Սակայն Թավրիզի բերդը գրավվում է Սոֆյանի դաշտում տեղի ունեցած ճակատամարտից հետո՝ հոկտեմբերի 21-ին (15 ջեմազուլ-էվվել)[136]։ Շուտով գրավվում է նաև Նախիջևանը, որի անկմանը հաջորդում է Երևանի պաշարումն ու գրավումը նոյեմբերի 15-ին (10 ջեմազուլ-ախիր)։ Սակայն Երևանի «նոր բերդը» գրավվում է միայն վեց ամիս պաշարումից հետո՝ 1604 թ. մայիսի 28-ին (28 զիլհիջե)[137]։ Երևանը ենթարկվում է ավերածության. շահը «Երևանը քանդեց, այրեց ու հողի հետ հավասարեցրեց»[138],— գրում է Ի. Փեչեվին։

133 «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», հրատ. Մեսրոպ Նշանյանի, Երուսաղեմ, 1915, էջ 23 (այսուհետև՝ Գր. Դարանաղցի)։

134 *J. Hammer*, t. VIII, p. 38.

135 "Fezleke-i tarih, c. I, s. 204.

136 Որ Թավրիզի անկումը տեղի է ունեցել Սոֆյանի ճակատամարտից հետո, վկայում են ինչպես թուրքական, այնպես էլ հայկական աղբյուրները։ Հենվելով «Ֆեզլեքե»-ի վրա, Ի. Համմերն, օրինակ, գրում է. «1603 թ. սեպտեմբերի 25-ին (19 ռեբիուլ-ախիր) տեղի ունեցավ ճակատամարտ, որտեղ օսմանցիները պարտվեցին պարսիկների թվական գերակշռության առաջ...»։ «Օսմանցիների պարտությանը հետևեց Թավրիզի անկումը» (տե՛ս *J. Hammer*, t. VIII, p. 39—40, հմմտ. Առ. Դավրիժեցի. էջ 19—20)։

137 "Fezleke-i tarih", c. I, s. 218; *J. Hammer*, t. VIII, p. 59.

138 "Tarih-i Peçevi", c. II, s. 261.

Դեռ պաշարված էր Երևանը, երբ շահը հրամայեց զորավար Ալահվերդի խանին ասպատակել և ավերել Արևմտյան Հայաստանի գավառները և բնակչությանը բռնի տեղափոխել Արարատյան դաշտավայր. «Իսկ շահն միշտ նստեալ ի վերայ բերդին Երևանու պատերազմէր, ոչ դադարէր յաւերելոյ զաշխարհս, և գերելոյ զազգս Հայոց. քանզի առաքեաց զորագլուխս բազում զօրօք ի կողման Արզրումայ, որք գնացեալ աւերեցին զերկիրն Բասենու, և զԽնուսայ՝ և զդաշտն Արզրումայ՝ և զայլս ուրև կարացին հասանիլ, քանդեալ՝ աւերեալ, այրեալ՝ և ապականեալ զերկիրն և զշէնսն, և զինչս և զստացուածս կողոպտեալ, և զարս սպանեալ, և զկանայս և զմանկունս գերեցուցեալ բերին յԵրևան ի բանակն իւրեանց։

Սոյնպէս և յերկիրն Արճիշու առաքեաց զօրս՝որք գնացեալ արարին ըստ վերոյասեցելումդ աւար և գերութիւն և ապականութիւն ազգին Հայոց ի ժամանակս ձմերայնոյ»[139]։

Արևմտյան Հայաստանի գավառներում Ալահվերդի խանի կատարած ավերման և ավարման, բնակչության գերեվարման ու բռնի տեղահանման պատկերը հետևյալ կերպ է նկարագրում մեր պատմագիրը. «...և յարձակեցաւ (խանն) ի վերայ գաւառաց աշխարհին, և զամենայն երկիրն Արծկէոյ հաւասար աւերեաց, և հրդեհ արկեալ այրեաց, և զամենայն արս կոտորեաց՝ և զինչս, և զստացուածս՝ զուստերս և զդստերս և զկանայս յաւար և ի գերութիւն առեալ։ Եւ ելեալ անտի եկն յԱրճէշ՝ և ի Բերկրի, և ի Վան, և յամենայն գաւառս նոցա արար այնպէս... եւ ժողովեալ զամենայն գերեալսն, և հօրանս անդեոց, և ջոկս ոչխարաց, և երեմակս ձիոց, իբրև մեծ և յորդեալ հեղեղ զամենեսեան վարեալ ածեալ բերեալ հասուցին, յԵրևան ի լիութիւն բանակին Պարսից»[140]։ Արևմտյան Հայաստանից Արարատյան դաշտ քշված բնակչության թիվը մի հիշատակարանում հաշվվում է 60.000 մարդ, առանց սպանվածների ու մահացածների[141]։ Միայն վերոհիշյալ Ալահվերդի խանը Արճեշից, Բերկրիից ու Վանից տեղահան արեց 23.000 հայերի[142]։

Թուրքերի համար խիստ վտանգավոր այս իրադարձությունների պայմաններում, սուլթան Ահմեդի օրոք, հսկայական բանակով Արևելք ուղարկվեց մեծ վեզիր Ջղալ օղլի Սինան փաշան։ Ջղալ օղլու խորա-

139 Առ. Դավրիժեցի, էջ 30։

140 Նույն տեղում, էջ 32—33։

141 Մատենադարան, ձեռ. № 5315, էջ 208ա—208բ։

142 Առ. Դավրիժեցի, էջ 33 [«...գերեցան այսքան անձինք քրիստոնէից զորոց թիւն ԻԴՌ (23.000), ասեն զոլ՝ թող զսպանեալսն»]։

մանկ բանակցությունների հետևանքով ջալալի ապստամբների մի շարք ղեկավարներ Էրզրումում ավարառության տվոր իրենց զորքերով միացան օսմանյան բանակին։ Ճանապարհին ջալալիները «կողոպտէին, թալանէին, զոր ինչ գտանէին՝ յաւարի առնէին ի պէտս կերակրոց և զոր ոչ գտանէին՝ մարդոց և անասնոց և ի ձեռս անկելոց մարդոցն՝ վերին աշխարհաց շար ղուլիցն նման առնէին, զերկորիսն ծամէին և այլ զանազան տանջանօք կու չարչարէին թէ՝ հոր գարոյ եւ ցորենոյ ցոյց տո՛ւր, կամ այլ կարասիս ընչից և ստացածոց գանձուց, զոր թագուցեալ էք ընդ հողով։ Եւ չարչարեալքն զոր ինչ որ գիտէին, ցուցանէին՝ թէ իւրն էր, թէ այլոց։ Եւ այլ զոր ոչ գիտէին՝ զի՞նչ ասէին և կրկին դառն տանջանօք չարչարելով սպանէին գնային»[143]։

Սա չարիքի սկիզբն էր միայն։ Սինան փաշայի զորքերի թվական գերակշռության առաջ Շահ-Աբասը ստիպված եղավ նահանջել՝ հրաման արձակելով տեղահանված ու Արարատյան դաշտավայրում հավաքված հայ բնակչությանը, ինչպես և տեղացիներին բռնի քշել դեպի Իրան։ Շահի հրեշային հրամանը շուտով ի կատար ածվեց։ Իր զարհուրելի մտադրությունն իրականացնելու համար շահը դիմեց խորամանկության։ Նա իր մոտ կանչեց «զմեծամեծս երկրից հայոց», ինչպես գրում է Առ. Դավրիժեցին, հորդորելով նրանց համաձայնվել ժամանակավորապես տեղափոխվել Իրան՝ օսմանյան զորքերի ասպատակություններից զերծ մնալու համար։ Իրականում շահի հեռանպատակն էր ամայացնել երկիրը, որտեղից պիտի անցներ օսմանյան բանակը և որ գլխավորն է՝ բռնի տեղահանվող բնակչությունը ամեն կերպ պիտի նպաստեր Իրանի տնտեսության ու առևտրի զարգացմանը։ Առ. Դավրիժեցին միանգամայն ճիշտ է կռահել այդ բռնի տեղահանման պատճառը. «Զի եկեալ Օսմանցւոցն անբնակ գտանիցեն զերկիրն ի մարդկանէ։ Եւ ոչ գտցի կերակուր և ոռճիկ և այդ ինչ պիտոյք նոցա՝ և անասնոց նոցա, և առ ի չգոյէ հարկաւորաց վտանգեսցին զօրքն օսմանցւոց։ Նաև ժողովուրդն լինիցին նմա անզերծանելի հարկատու՝ ծառայք, և հողագործք մինչև գլուխ տեան» (ընդգծումը մերն է— Մ. Զ.)[144]։ Հետագայում, Անդրկովկասից բնակչության բռնի տեղահանումը դեպի Իրան շարունակվեց։ Հենվելով այս փաստի վրա, Ի. Պ. Պետրուշևսկին գալիս է այն եզրակացության, որ բռնի տեղահա-

143 Գր. Դարանաղցի, էջ 43։

144 Առ. Դավրիժեցի, էջ 38։

նումը առավելապես նպատակ ուներ գյուղացիներին ամրացնել հողին և առավելագույն չափով շահագործել նրանց[145]։

Երկրից գաղթեցվող բնակչության շարասյունը, Առ. Դավրիժեցու ասելով, «...ածեալ բերեալ հասուցին ի գաւառն Արարատու, և զլայնանիստ դաշտն նորա լցին ծագէ ի ծագ, քանզի ի ստորոտէ լեռանցն Գառնւոյ մինչ ի յեզրն Երասխայ մեծի գետոյն, լայնութիւնն էր բանակին. ի զերկայնութիւնն զովիմբ կշռեաց դու. բայց ես ասեմ աւուր միոյ ճանապարհ»[146], այսինքն մոտ 30—40 կիլոմետր ճանապարհ։

Տասնյակ հազարավոր զոհերի գնով գաղթական զանգվածն անցավ Արաքս գետը։ Նրանց կրած անլուր տառապանքների, սովի, կամայականությունների, հայ կանանց ու աղջիկների լլկումների բազմաթիվ դեպքերի, պարսիկ հրամանատարների կատարած վայրագությունների, ջրահեղձման դժնդակ պատկերների մասին մանրամասն գրված են Առ. Դավրիժեցու «Պատմության» ձեռագրերի հիշատակարաններում[147], հայ կաթոլիկ քահանա Ավգուստինոս Բաջեցու[148] և այլոց գրած էջերում։ «Ինչպիսի՞ դժբախտությունների տեղի տվեց այդ ողբերգական տեղահանումը,— բացականչում է իտալացի ճանապարհորդ դելլա Վալլեն,— ինչպիսի՞ սպանությունների, ինչքա՞ն մարդիկ մահացան սովից, ինչպիսի՞ հափշտակումներ, աղջիկների ու կանանց բռնաբարումներ, ինչքա՞ն երեխաներ հուսահատության պատճառով խեղդվեցին կամ ջրահեղձ արվեցին իրենց հարազատ հայրերի աչքի առաջ, այլք սպանվեցին պարսիկ ղեկավարների կողմից կամ խլվեցին իրենց մոր կրծքից ու նետվեցին փողոցներն ու ճամփաները՝ դառնալու համար կենդանիների սնունդ, կամ տրորվեցին բանակի ձիերի և ուղտերի ոտքերի տակ մի ամբողջ օր։ Հայրերի՝ իրենց երեխաներից, ամուսինների՝ իրենց կանանցից, եղբայրների՝ իրենց քույրերից ինչպիսի՞ դժոխային բաժանում, որոնք ուղարկվեցին Պարսկաստանի հեռավոր նահանգները հույս չունենալով այլևս իրար գտնելու։ Կազմվեցին մարդկանց ու կա-

145 *И. П. Петрушевский*, с. 252—253.

146 Առ. Դավրիժեցի, էջ 40։

147 Պահպանվել են բռնի տեղահանումը նկարագրող («մեծ սուրգունը») զգալի քանակությամբ հիշատակարաններ, որոնցից ամենաընդարձակն, ըստ երևույթին, Ն. Ակինյանի հրատարակածն է (տե՛ս Ն. Ակինյան, *Բաղեշի գպրոցը (1500—1701 թթ.)* էջ 185—197)։ Մյուս հիշատակարաններից տե՛ս Մատենադարան, ձեռ. № 5345, էջ 206բ—207բ, № 4692, էջ 613բ, № 6093, էջ 355բ, № 3843, էջ 189բ, № 5057, էջ 293ա, № 4721, էջ 655բ—656բ, № 4515, էջ 363, 364—365, 369 373—374 և այլն։

148 "Itinéraire du très révérend frère *Augustin Badjetsi*", traduit par M. Brosset, Journal Asiatique, Paris, 1837.

նանց ճամբարներ, որոնց զգալի մասը էժան գնով վաճառվեցին, ինչպես անասուններ»[149]։

Դեպքերի ականատես մի գրիչ հետևյալ հուզիչ տողերով է ներկայացնում բռնագաղթվածների վիճակը.

Ափսոս քեզ հայոց խղճուկ ժողովուրդ,
Ցիրուցան եղաք անմեղ անխորհուրդ
Դերի գնման աք դեպի Խորասան
Քաղցած ու ծարավ, տկլոր, թշվառական[150]։

Այս զարհուրելի դեպքերն, իր հերթին, խորը կսկիծով նկարագրելուց հետո, Առ. Դավրիժեցին գրում է. «Եւ զայս ամենայն լսելով և գրելով մեր, ճմլին սիրտք մեր, և գալարին աղիք որովայնի մերոյ և աչք մեր վտակս արտասուաց թորեալ իջուցանեն, վասն եկելոյ հասելոյ թշուառութեանս ժողովրդեանս մերոյ»[151]։

Տեղահանումը ոչ միայն մարդկային մեծ զոհեր խլեց, այլև ամայի դարձրեց երկիրը։ Հայազուրկ դարձան Հայաստանի շատ գավառներ, մանավանդ Արարատյան դաշտավայրը։ Ժ. Բ. Տավերնիեն, խոսելով հայերի բռնագաղթի մասին դեպի Իրան, գրում է. «Երևանի և Թավրիզի միջև ընկած երկիրը ամբողջությամբ ավերվեց Պարսկաստանի թագավոր Շահ-Աբաս I-ի կողմից, որպեսզի թուրքական բանակը, որն առաջանում էր այս կողմերից, ոչինչ չգտնի իր գոյությունը ապահովելու համար ու կործանվի։ Նա ուզեց ամբողջ երկիրը դարձնել ամայի և Պարսկաստան տարավ Ջուլֆայի ու նրա գավառների բոլոր բնակիչներին՝ երիտասարդ և ծեր, հայրեր, մայրեր և երեխաներ»[152]։

Երկու հարյուր հազարանոց բանակով հասնելով Կարս, Սինան փաշան տաս օր մնում է այնտեղ ու, այնուհետև, շարժվում դեպի Նախիջևան։ Շահը, իր համեմատաբար փոքրաթիվ բանակով, խուսափում է ճակատամարտել օսմանցիների հետ և հրամայում է հրկիզել ու քանդել ճանապարհին ընկած գյուղերը։ Ամբողջ երկրամասը ավերված ու ամայացված լինելու և շահի դեպի Թավրիզ նահանջելու պատճառով, Սինան փաշան որոշում է ձմեռել Շիրվանում, իսկ գարնանը վերսկսել պատերազմական գործողությունները։ Սակայն նրա ծրագիրը հանդիպում է կատաղած ենիչերիների դիմադրությանը, որոնք պահանջում էին ձմեռն անցկացնել «Ռումի երկրում», այսինքն՝ Փոքր Ասիայում։ Սինան փաշան իր զորքը քաշեց դեպի Վան, սակայն շուտով պարսիկները պաշարեցին այն։ Սինան փաշան ստիպված Վանա լճի վրայով շարժվեց դեպի Արծկե (Ադիլջեվազ)։ Քառասուն օրվա պաշարումից հետո շահը թողեց Վանը և հեռացավ Իրան[153]։

Վանում և շրջակա գավառներում Սինան փաշայի կատաղած զորքերը կողոպտում են բնակչությանը ու կատարում խժդժություններ։ «Իսկ զօրքն,— գրում է Առ. Դավրիժեցին,— որք նստան զշլաղ ի վերայ երկրին (Վանայ) իբրև զգազանն տեսեալն Դանիելի՝ կերան և մանրեցին, և զմնացորդսն ոտից կոխան արարին, փոխանակ շինելոյ զերկիրն՝ աւերեալ քայքայեցին՝ և ի վերջին թշվառութիւնն հասուցին, թէ անողորմ կեղեքելով՝ և թէ այլ պղծագործութեամբ»[154]։

Հաջորդ տարի (1605) պատերազմական գործողությունները վերսկսվեցին։ Սինան փաշան օգոստոսին Դիարբեքիրից շարժվեց դեպի Սալմաստ ու Խոյ։ Ուրմիա լճի մոտերքում տեղի ունեցավ մեծ ճակատամարտ։ Պարսկական բանակը ղեկավարում էր ինքը՝ շահը։ Ճակատամարտը վերջացավ օսմանցիների պարտությամբ։ Օսմանցիները հապճեպ դիմեցին փախուստի, ռազմի դաշտում թողնելով «...զկահ և զկարասիս, զուղտս և զգրաստս, զմթերս կերակրոց, և զգանձս սնդկով, և սապատով. քանզի զճրագունսն վառեալ թողին և զվրանսն կառուցեալ՝ որպէս կանխաւ կառուցեալ էր...»[155]։ Օսմանցիների պարտությունը այն աստիճան ազդեց Սինան փաշայի վրա, որ նա Դիարբեքիրում մահացավ[156]։

Պատերազմական գործողությունները և ջալալիների շարժումը Հայաստանում՝ սկզբում նրա արևմտյան, այնուհետև արևելյան մասե-

---

149 "Voyages *de Piétro della Vallé*", t. III, Rouen, 1645, p. 398 (այսուհետև՝ *Della Valle*).

150 Մ. Միանսարյան, *Քնար հայկական*, Թիֆլիս, 1886, էջ 134։

151 Առ. Դավրիժեցի, էջ 52։

152 *J. B. Tavernier*, Les six voyages, Paris, 1679, p. 44 (այսուհետև՝ *J. B. Tavernier*). "Tout le païs entre Erivan et Tauris fut entièrement ruiné par Cha-Abas le I du nom Roy de Perse, afin que l'armée des Turcs qui marchoit de ce côté-là ne trouva rien de quoy subsister, se détruisit d'elle même. Il voulut rendre le païs désert et emmena en Perse tous les habitans de Zulfa et des environs, jeunes et vieux, les pères, les mères et les enfants".

153 *J. Hammer*, t. VIII, p. 59–60.

154 Առ. Դավրիժեցի, էջ 71։

155 Նույն տեղում, էջ 77։

156 «Ոմանք ասում են,— գրում է Ի. Փեչևին,— որ նա թույն է խմել ու մահացել, ոմանք էլ՝ թե նա մահացավ հուզմունքից ու վշտից» ("Tarih-i Peçevi", c. II, p. 266)։

ռում իրենց հետ բերեցին անլուր դժբախտություններ՝ սով ու համաճարակ, որը խլում էր տասնյակ հազարավոր մարդկանց կյանք, Գրիշ Կարապետն Արտամետից թողել է այդ տարիների սովի ու նրա հետևանքների պայմաններում թուրքերի կատարած կամայականությունների ցնցող պատկերը։ Սինան փաշայի դեպի Վան նահանջը նկարագրելուց հետո, նա գրում է. «...որ ի սովու կերան զշուն և կատու, էշ և ձի և կաշիք նոցա։ Աղքատքն ժողովէին զերեք շորս տարու շոր ոսկորներն և սձկէին և ուտէին և կուտուց կուտուց մեռանէին... Որ կերաւ մայր զորդին, հայրն ծախեաց զորդին (2) կորեկ հաց, որ մեռան ի սովու հազարք հազարաց և բիւրք բիւրոց...։ Եւ այն, որ մնաց փախեան ի Զգիրեն, ի Բաղդատ և յԱրաբստան, ի յԱսորեստան, ի Թաւրէզ, ի Ղազմին և ի Խորասան և ի Գուռջստան և հազարէն մեկ չի դարձ ի յետս, ամենեքեան մեռան ի զարիբութիւն, ...ի Սալմաստայ մինչև ի Գուռջստան և մինչև յԸստամպուլ հիւսիսակողմով մինչև Յամիթ և Յալապ եղև անմարդաբնակ, որ առջք և գայլք, խոզք և մարդակերքն ի շուռ գային։ Եւ այն անօրէն և պիղծ գազանաբարոյ ազգն Հռոմեցիքն (Թուրքերը— Մ. Ջ.) բռնէին զմարդիքն հայոց, շարշարէին և զնոսա ամաւթն ծամեցնէին և ասէին «Մեզ հաց և զահրա տուեք» և նոքա ոչ ունէին զատ որ տային նոցա (և) շարաշար մահուամբ սպանանէին զհայս։ ...Որ ի սովու կերան զմիմիանս հայրն՝ զորդին, մայրն՝ զդուստրն, եղբայրն՝ զեղբայրն, ուտէին կենդանին զմեռեալն, որն մեռան կորան, որն թուրքացան, և որն փախան, այլ ոչ դարձան իրենց տեղն»[157]։

Այսպիսի պայմաններում էր ահա, որ հայ ժողովրդի մի հատվածը, հատկապես առևտրաարհեստավորական խավը, գաղթում էր դեպի Կոստանդնուպոլիս, Թավրիզ, Սպահան, Թրակիա, Ղրիմ, Ռուսաստան, Լեհաստան և այլուր։ «Եւ յայսմ ժամանակի եղեն ցիր ու ցան ազգն հայոց և գնացին իւրաքանչիւր ոք հանդեպ երեսաց իւրոց գտանել տեղի կելոյ և ապրելոյ։ Ոմանք յՈւռումելի, ոմանք ի Բուղդան, ոմանք ի Լեհ, ոմանք ի Կաֆայ, ոմանք ի ծովեզերեայ Պոնտոսի, ոմանք ի Թավրէզ և յԱրտաւել և ի գաւառս նոցա»[158],— գրում է Առ. Դավրիժեցին։

1607—1608 թթ. ջալալիների նոր ապստամբությունները Թուրքիայի ասիական մասում, օսմանցի ֆեոդալներին հնարավորություն

[157] *С. В. Тер-Аветисян*, Город Джуга, Тбилиси, 1937, с. 48—49.
[158] Առ. Դավրիժեցի, էջ 88։

չտվեցին պատերազմական գործողություններ ձեռնարկել պարսիկների դեմ։ Միայն 1608 թ. վերջերին, երբ ջալալիների ապստամբությունը հիմնականում ճնշվեց մեծ վեզիր Կույուջի Մուրադ փաշայի կողմից, սուլթանական Թուրքիան հնարավորություն ստացավ մտածելու իրական ճակատի մասին։ 1609 թ. աշնանը Կույուջի Մուրադի ձեռնարկած արշավանքը ձախողվեց ենիչերիների ցուցաբերած դիմադրության պատճառով, որոնք վախենում էին արշավանքի ընթացքում ընկնել սովի հիրանների մեջ։ «Ինչպես հնարավոր է պարեն գտնել էրզրումում, երբ այնտեղ սով է, ու մի կիլոգրամ գարին արժե հինգ դուկատ և պաքսիմատի կիլոն մեկ զուրուշ»[159],— ասում էին նրանք։

Այսուհանդերձ, 1610 թ. գարնանը մեծ վեզիր Կույուջի Մուրադի բանակը էրզրում—Զալդրան—Խոյ—Սալմաստ ճանապարհով շարժվեց դեպի Թավրիզ[160]։ Սկսված երկար բանակցություններից հետո՝ 1612 թ. նոյեմբերի 20-ին (26 ռամազան 1021 թ.) կնքվեց հաշտության նոր պայմանագիր արևելյան այդ երկու պետությունների միջև։ Հաշտության հիմքում ընկած էր 1555 թ. Ամասիայի պայմանագիրը։

Այսպիսով, Թուրքիան հրաժարվում էր Մուրադ III օրոք Անդրկովկասում կատարած նվաճումներից, Իրանին թողնելով Ադրբեջանը, Արևելյան Հայաստանն ու Արևելյան Վրաստանը։ Իրանը պարտավորվում էր տարեկան 200 բեռ մետաքս հանձնել Թուրքիային որպես հարկ, որից, սակայն, շուտով նա հրաժարվեց։ Փաստորեն, հաշտության պայմանագրով, Թուրքիան ճանաչում էր իր պարտությունը։ Նա ստիպված էր այդ քայլին դիմելու, որովհետև, ինչպես իրավացիորեն նշում էր Համմերը, «Ասիայի ապստամբության կործանիչ հետևանք-

[159] *J. Hammer*, t. VIII, p. 158.
[160] Այս դեպքերը ի նկատի ունի Զաքարիա գրիչը հետևյալ չափածո տողերում՝

Ի ժամանակս յոյժ անբարի
Սու(լ)թան Ահմատ թագաւորի,
Եւ վազիրքն Նուսուֆ փաշի,
Եւ միւսույն Խալիլ փաշի։

Սոքա երկոտասան տարի,
Սաֆար արարին պարսկաց տանի,
Բաղում քաղաք առին անտի
Եւ ըզԹավրէս ի յայսմ ամի (1611 թ.)

(Մատենադարան, ձեռ. № 1541, էջ 129բ)։

ները օսմանյան քաղաքականությանը նոր ուղղություն էին տվել և ստիպել նրան Հունգարիայի և Պարսկաստանի հետ հաշտություն կնքել...»[161]։ Որպես պարտության փոխհատուցում, Թուրքիան հաշտության պայմանագրում ստիպում էր Իրանին Ռուսաստանի դեմ իր որևէ հնարավոր գործողությունների ընթացքում խոչընդոտ չհանդիսանալ, այլ, ընդհակառակը, օգնել։ Դաղստանի ու Դերբենտի շրջանում ռուսական զորքերի երևալը խափանելու ու «ռուսի այս կողմերում երևալը կանխելու համար նրա կողմից կառուցված Թերեք ամրոցի խորտակման գործում... շահի զինվորներից և ոչ մեկը արգելք չպիտի հանդիսանա»[162]։ Սա, իրոք, զիջում էր Իրանի կողմից Թուրքիային։ Հավանաբար, Իրանը, ինչպես և Թուրքիան, սաստիկ վախեցած էին Ռուսաստանի հզորացումից։

Կնքված հաշտության պայմանագիրը կրում էր ժամանակավոր բնույթ։ Ոչ օսմանյան Թուրքիան էր հաշտվում Անդրկովկասի կորստի և ոչ էլ Իրանը՝ իր համար ստորացուցիչ մետաքսահարկ վճարելու գաղափարի հետ։ Եվ ոչ միայն չէր հաշտվում, այլ հաճախակի խախտում էր 1612 թ. հաշտության պայմանագիրը։ 1614 թ. արտագրված մի ճառընտիրի հիշատակարանում գրիչը հայտնում է, որ «...վասն մեղաց իմոց ի նոյն ամն (1614 թ.) եկն ազգն պարսից ի վերայ Տարօնոյ բազում արիւն հեղին և գերի վարեցին»[163]։ Թուրքիան մեղադրում էր Իրանին հաշտության պայմանագրի խախտման մեջ։ «Շահ-Աբասը, չնայած որ հանձն էր առել տարեկան (Թուրքիային) ուղարկել 100 բեռ մետաքս և 100 բեռ թանկագին ապրանքներ, ոչինչ չուղարկեց երկու տարվա ընթացքում ասելով. «Միթե՞ ես հարկատու եմ եղել»[164],— գրում է Նաիման։ Սա պատերազմական նոր գործողությունների առիթ էր։

1616 թ. գարնանը օսմանյան 100 հազարանոց բանակը Հալեպից Հասանկալա—Սողանլու ճանապարհով շարժվեց դեպի Կարս։ Կարսի բերդը, որը շահի կողմից ավերված էր, ինչպես այդ մասին գրում է Քյաթիբ Չելեբին, տեղական բնակչությանը բռնի աշխատանքի լծելու միջոցով մի շաբաթվա ընթացքում վերանորոգվում է, որից հետո օս-

[161] J. Hammer, t. VIII, p. 191.

[162] "Tarih-i Nâima", c. II, Istanbul, 1260 (1863), s. 113—114.

[163] «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ», հ. I, Վենետիկ, 1914, № 228, էջ 476։

[164] "Tarih-i Nâima", c. II, s. 141—142.

մանյան բանակը շարժվում է դեպի Երևան[165]։ 1616 թ. սեպտեմբերի 11-ին (26 շաբան) Երևանի բերդը պաշարվում է օսմանյան բանակի կողմից։ 55 օր տևած անհաջող պաշարումից հետո, ընկնելով պարենային ու զինամթերային դժվարությունների մեջ, օսմանցիները ստիպված թողնում են պաշարումը և Կարսի վրայով հետ քաշվում դեպի Էրզրում[166]։ Թուրքերի այս արշավանքին իրանական կողմը պատասխանում է ասպատակիչ զորք ուղարկելով Արևմտյան Հայաստանի գավառները։ «Ի թուին հա(յ)ոց ՌԿԶ (1617) յամսին մարգաց,— կարդում ենք մի հիշատակարանում,— դումարեցաւ զաւրն պարսից՝ խմ (40.000) թիւ զաւրքին, և զաւրագլուխ Ամիրգունին, ելաւ գնաց յաշխարհ Հոռոմին, Վայ և եղուկ հայու ազգին և մեղաւոր Ղազար իրիցս որ տեսայ»[167]։

Նման պայմաններում, օսմանյան բանակի հրամանատար Կարա Մեհմեդ փաշան ստիպված վերահաստատում է 1612 թ. հաշտության պայմանագիրը։ Իրանը կտրականապես հրաժարվում է մետաքսի հարկը վճարելուց։ Այդ պատճառով, սուլթան Ահմեդը չեղյալ է համարում հաշտության վերակնքումը և իրանական ճակատ է ուղարկում մեծ վեզիր, ծագումով հայ, Խալիլ փաշային։ «(Գրեցաւ) յայն տարին որ գնացին ի վերայ Խրզիլպաշին անհուն ճամբաւ, որ զաշխարհս աւերեցին. ի թուին ՌԿԵ (1618)»,— կարդում ենք մի հիշատակարանում[168]։

Օսմանյան բանակի տրամադրության տակ գտնվող թաթար խան Ջանիբեկ Գիրայը 40 հազարանոց զորքով ասպատակում է Գյանջան, Նախիջևանը և Ջուլֆան՝ իր շրջակայքով։ 1618 թ. սեպտեմբերի 10-ին Փուլ-ի Շիքեստե կոչված վայրում, թաթար խանը և օսմանյան բանակի մի մասը պարտության են մատնվում պարսիկներից՝ կրելով ծանր կորուստներ։ Պարտության լուրը ստանալով, սերդար Խալիլ փաշան

[165] "Fezleke-i tarih", c. I, s. 37—40.

[166] J. Hammer, t. VIII, p. 191.

[167] Մատենադարան, ձեռ. № 2775, պահպանակ Բ։ Մի այլ ձեռագրի հիշատակարանում Մելքոն դպիրը Ամիդից հաղորդում է. «...Եւ ի բռնակալութեան Տաճկաց՝ Ամանցւոց սուլթան Ահմատին, որք են մահմետանք և անիրաւք, և խիստ հարկապահանջութեամբ կեղեքեն զազգս քրիստոնէից։ Եւ յամենայն ամի երթան գնան ի պատերազմ բազում զաւրաւք ընդ ազգն պարսից, աւերելով զաշխարհս և զերկիրս հայոց, զի կոխան եղան այդ երկու շարաբարոյ ազգացն, որ գրեթէ բնաջինջ արարին զազգս մեր» (Մուրմար, № 68, էջ 62բ)։

[168] Ղ. Փիրղալեմյան, Նշխարք..., հ. Ա, № 695, էջ 197ա։

շարժվում է Արդեբիլ և շահին ստիպում է կնքել նոր հաշտություն. դա տեղի է ունենում սեպտեմբերի 20-ին՝ Սերավի դաշտում[169]։ Պայմանագրի կետերը նույնն էին, ինչ որ նախորդը։ Միայն Իրանը տարեկան 200 բեռ մետաքսի փոխարեն պարտավորվում էր Թուրքիային հանձնել 100 բեռ։

Պատերազմական նոր գործողությունների մասին այդ տարիներին արտագրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «...Հայաստան երկիրս կոխան առնելոյ աւերեցին, զոր ոչ կարեմք զաւերումն ընդ գրով արկանել»[170]։

1618 թ. աշնանը կնքված հաշտությունը ևս երկար չտևեց։ Վերսկսված պատերազմական գործողությունների թատերաբեմ դարձավ Միջագետքը։ Օգտագործելով Բաղդադի թուրքական կայազորի հրամանատարի դավաճանությունը, Շահ-Աբասը գրավեց այն[171]։

Էրզրումի շրջանում Աբազա փաշայի ապստամբության նոր պոռթկումները (1623—1627 թթ.), Եգիպտոսում ծայր առած ընդվզումները, պարսկական բանակի առաջխաղացումը Միջագետքում կաշկանդում էին Թուրքիային՝ ձեռնարկելու պատերազմական գործողություններ Իրանի դեմ՝ Անդրկովկասին տիրելու համար։

Ահնուհանդերձ, թուրքերը 1630 թ. սկզբին՝ Շահ-Աբասի մահից հետո, մի շարք ասպատակիչ ու ավերիչ արշավանքներ ձեռնարկեցին Միջագետքից Համադան։ Համադանում թուրքերի բարբարոսությունը սահման չուներ։ Սերդար Խոսրով փաշայի հրամանով, որ ստացել էր «Անխիղճ Խոսրով» մականունը, վեց օր շարունակ թուրքերը հրի մատնեցին քաղաքը, քանդեցին տները, իսկ բնակչությանը մասսայաբար կոտորեցին։ Այս դեպքերի մասին մանրամասն հաղորդվում է մի ձեռագրի հիշատակարանում. «...յայսմ ամի (1630) աղգս հայոց ի մեծ վտանգի է, զի այլազգիքն զօրացեալ են ի վերայ քրիստոնէից... զի եկ ողիրն Ըստըմբօլայ բազում զօրօք և գնաց ի Բաբելոն, որ այժմ ասի Բաղդատ, և հասեալ ի գետն Տիգրիս, որ պատէ զԱսորեստան, և այլ

169 "Tarih-i Nâima", c. II, s. 172.

170 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու», հ. Ա., կազմեց Արտաւազդ արքեպ. Սիրմէեան, Փարիզ, 1950, էջ 20—21։

171 «...թվին ՌՀԵ (1628),— կարդում ենք Ամիդում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում,— որ յայսմ ամի խիստ նեղութեան մէջ են(ք), որ վաղիրն բազում զօրօք գնաց ի Պաղտատ ի վերայ Պարսից, հասար արաց (պաշարեց), զախերան յամթայ կու տանէին, խիստ նեղութեան մէջ ենք» (տե՛ս Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, հ. 2, էջ 324 և այլն)։

ճանապարհաւ գնաց ի յարևելս մինչև ի դուռն պարսից, և բազում անիրաւ գործեաց զԱմատուն և զՔարքու և զՇարազուլ, զամենն քանդեաց և աւերեաց զայն, (այնպես) արարին որ մարդ ոչ կարէ մեկնել կամ (ընդ) գրով արկանել զարհաւիրքն և զպատերազմն, որ անդ եղև»[172]։

Թուրքերը ասպատակում են նաև Նախիջևանի շրջակայքը։ Այդ նույն հիշատակարանում կարդում ենք. «Եւ Ալի փաշան Վանայ ելեալ բազում հեծելօք և գնաց ի վերայ Նախչուանայ և շատ աւեր ետուր և բազում արիւնահեղութիւն արար, և բազում առ և աւար և գերիս բերեալ ի Վան։ Ոչ թէ զինչ տեսաք աչօք մերովք՝ զդառն կսկիծ և զաղիողորմ արտասուքն քրիստոնէից գերելոցն, զլալումն, զողբումն և զհառաչումն նոցա ոչ կարեմք հայել»[173]։ Մեծատուն հայ վաճառականները փրկագնով ազատում են հայ գերիներին[174]։ Թուրքերի այս արշավանքին ի պատասխան, պարսիկները ևս մի քանի անգամ ասպատակում են Արևմտյան Հայաստանի գավառները։ «Եւ յետոյ ազգն պարսիցն զօրացն,— կարդում ենք այդ նույն հիշատակարանում,— և եկին ի վերայ Արճիշու և յերկիրն Արճիշու բազում աւերս արարին զառ և զաւար, և զգերին քան զնախչուանայն երկու աւելի տարան, և այլ ոչ երևացան»[175]։ Հետագայում պարսիկները ձեռնարկում են ևս մի շարք ասպատակություններ։ Գրիչ Մարութան, նկարագրելով պարսիկ Ռուստամ խանի 1634 թ. Վրաստան կատարած արշավանքը, հաղորդում է այդ նույն խանի կողմից Վանի պաշարման ու նրա շրջակայքի ավերման մասին. «Եւ դարձեալ եկն անտի (Ռուստամ խանն) և գնաց ի վերայ Վանայ և Դ (4) ամիս պաշարեաց, և նստաւ ի վերայ նորա, և ոչ կարաց առնուլ զնա և շատ աւերութիւն արար։ Եւ դարձեալ յետս գնաց ի Թավրէզ առ թագաւորն իւր շահ Սեֆին, և անդ նստաւ, այլ ոչ գիտեմք վերջն զինչ է լինելոյ...»[176]։

172 Ղ. Փիրղալեմյան, Նշխարք..., հ. Ա, № 733, էջ 204բ—205ա։

173 Նույն տեղում։ Նախիջևանի շրջակայքի ավերման ու ավառման, բնակչության գերեվարման մասին վկայում է նաև Հոսեփ Թացուեցի գրիչը։ «Յանկարծ շարժեցաւ օսմանլուն ի Վանայ, գնաց ի Նախչուանայ երկիր,— գրում է նա,— քանդեցին, աւերեցին, զառ ու գերին բերին ի Վան, ի Մահմբտունք, ի Բերկրի ի յԱրճէշ, ի Պաղէշ ԴՌ (4.000), ԵՌ (5.000) հարիւր գերի բերին, թող ոչխար ու տաւար։ Սուղ փարեալ աւաղ զհայոց ազգս ի բերել Տաճկաց։ Ով կարէ պատմել կամ ընդ գրով արկանել զաղէողորմ հայոց ազգիս» (Ղ. Փիրղալեմյան, Նշխարք..., հ. Բ, № 499, էջ 413—415)։

174 Ղ. Փիրղալեմյան, Նշխարք..., հ. Ա, № 733, էջ 204բ—205ա։

175 Նույն տեղում։

176 Մատենադարան, ձեռ. № 4175, էջ 376ա։ Այս նույն դեպքերի մասին Գրիգոր Երեցը գրում է.

1635 թ. պատերազմական գործողությունները կրկին տեղափոխվեցին Հայկական լեռնաշխարհ։ Նույն տարվա գարնանը սուլթան Մուրադը հսկայական բանակի[177] գլուխ անցած Էրզրում—Կարս—Գյոկ-կյումբեթ (Գեղանիստ) ճանապարհով եկավ ու պաշարեց Երևանը։ Ականատես մի գրիչ այդ մասին հաղորդում է հետևյալը. «...Թագաւորն Տաճկաց սուլթան Մուրատն ի Կոստանդնուպօլսէ շարժեցաւ բազում և անթիւ հեծելով եկեալ ի Կարնի քաղաք, որ է Յարզրում, յունիս ԻԸ (28), վարդավառի բարեկենդանին ելեալ գնաց պատերազմի ի Պարսս։ Եւ ի յԱյրատեան քաղաքն, որ է Երևան, ընդդիմացան և ի խսար մտին և նա պաշարեալ նստաւ ի վերայ, և ոչ գիտեմք զվերջին»[178]։

Երևանի պաշարման ժամանակ, համաձայն 1635 թ. մի հիշատակարանի, սուլթանի վեզիրներից մեկը արշավում է Վան ու ավարի են-

---

Ի յայսմ զառն և նեղ ժամանակիս
Ցիսար ընկաք Վան քաղաքիս,
Կարմրագդակն պատեց, նստաւ վերա քաղաքիս,
Շատ նեղութիւն հասոյց ի մեզ,
ՅԶ (56) որ պաշարեց զմեզ,
Ի թվականութիւնս հայոց ազգիս,
ՌՅ և երեքիս (1634),
Ըստամբոլայ հասաւ ի մեզ,
Ազգէն տաճկաց ՃՌ (100.000)-իս
Ժողովեցան Քառափոսիս (գյուղ Վանի մոտ)
Խմբեցան մեծ պատերազմիս,
Փախուցին կարմրագդակն,
Աւարն առին հասին ի մեզ,
Աւետիս մատուցին մեզ,
Կարմրագդակն փախեաւ ի յետս։

(Մատենադարան, ձեռ. № 5397, էջ 103բ)։ Վանից մեկ այլ ականատես՝ Գրիգոր քահանան, խոսում է պարսիկների կամայականությունների մասին. «Եւ խիստ չարչարէին զտառապեալ ազգն քրիստոնէից, ի պարիսպն, ի խանդակ փորելն, և զորս ի քաղաքն գտանէին բազում չարչարանօք տային։ Եւ վասն չար գործոց իմոց եկեալ գերին զիս և զականջս կտրեցին և խիստ վախեցայ և տկարութիւն շատ քաշեցի» («Սիոն», 1933, էջ 422—423)։

177 Առ. Դավրիժեցին 700 հազար է մատնանշում սուլթանի բանակը, որը անշուշտ չափազանցություն է։ «Իսկ յորժամ ժամանեալ թուականն մեր եհաս ՌՁԴ ամն (1635),— գրում է պատմագիրը,— Թագաւորն Ստամբոլայ սուլթան Մուրատ կոչեցեալ՝ այր կարի խրոխտ, հզօր յաղթող և իմաստուն, ելեալ ի Ստամբոլայ եօթն հարիւր հազար հեծելազօրօք, և եկն յաշխարհս Արարատու» (Առ. Դավրիժեցի, էջ 316)։

178 «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Դ, № 1127, էջ 195։

թարկում քաղաքը։ Հիշատակարանում նկարագրված այս քաղաքական անցուդարձերը կասկած է հարուցում, քանի որ վերջում վանեցիներին փրկում է սուլթանի հավատարիմ վեզիրներից Մուրթազա փաշան։ Արդեն՝ կամ այս փաշան ապստամբել էր սուլթանի դեմ և կամ թե, որը ավելի հավանական է, նա պարզապես ասպատակության գնացած շահական զորավարներից մեկն էր։ Ահա այդ հիշատակարանը. «...եկաւ (վեզի՞րն) նստաւ ի Վանայ վերայ, զա(յ)ն չարիքն գործեցին, որ չէր տեսեալ ակն մարդոյ, Աստուածածնի երեքշաբթին եկաւ մինչև ի նաւասարդի աւրն բազում քրիստոնեայք սպանեցին, բազումք գերեցին, զՎանայ երկիրն՝ զգեղօրայքն և զվանորայքն զամէն քակեցին և քանդեցին, զքաղաքի այգեստանն զամէն կոտորեցին։ Եւ զգերեզմանատուն Հայոց Ռ (1000) ճօղ նաղմ զարկեն, և յոմանք լուայ թէ ԿՌ (60.000) է, և բերքն հասուցին զնաղմն ի տակն պարսպին։ Եւ ազգս, որ ի մէջ քաղաքին էին բազում տանջանաց մէջ էին՝ գիշերն զԲագանն պահել տային և ցերեկն զխանդակն փորէին, այնպէս տառապանք էին որպէս ազգն Իսրայելի ի ձեռն փարաւոնի...»։ Այնուհետև գրիչը պատմում է, թե գալիս է Մուրթազա փաշան և փրկում Վանի ու նրա շրջակայքի հայերին ծանր մղձավանջից[179]։ Ի միջի այլոց, այս Մուրթազա փաշան հայկական աղբյուրներում անվանվում է «խիստ հայասեր»[180]։

Պաշարված Երևանը շուտով գրավվեց։ Ամբողջ մի շաբաթ պաշարողների հրետանին, աղբյուրների վկայությամբ, կրակ էր տեղում պաշարված քաղաքի վրա, քանդելով նրա կավե պարիսպները։ Երևանի հողե պարիսպները, Ժ. Բ. Տավերնիեի սրամիտ արտահայտությամբ, ավելի շուտ կարող էին քանդվել անձրևից, քան թե թնդանոթից[181]։ 1635 թ. օգոստոսի 8-ին (23 զաֆեր 1045 թ.) Երևանի խան Թահմազ Կուլին՝ Ամիրգունա խանի որդին, ստիպված եղավ բերդը հանձնել թուրքերին։ Գրավելով Երևանի բերդը, թուրք պատմագրի վկայությամբ, սուլթանական դաֆթարդարները «...ներսի ու դրսի բոլոր գույքերը, ինչպես և առկա ու պահված բոլոր հարստությունները հաշվառման ենթարկեցին ու վերցրեցին։ Նրանք հափշտակեցին իրենց համար անսպառելի այն գանձերն ու անհաշիվ հարստությունները, որ երեսուն տարվա ընթացքում կուտակել էին Երևանի տիրակալն ու նրա հայր Ամիրգունա

---

179 Մատենադարան, ձեռ. № 5348, էջ 275ա։

180 Գր. Դարանաղեցի, էջ 518։ Առ. Դավրիժեցի, էջ 317։

181 *...Ces murailles n'estant que de terre la pluye y feroit plus de mal, que le canon* (*J. B. Tavernier*, p. 38).

խանը։ Մտնելով խազինան (պետական գանձարանը) ու պահեստները, (զավթարդարները) այնտեղ այնքան հարստություն ու մթերք հայտնաբերեցին, որ բանակին երկու տարի կբավարարեր»[182]։

Թուրքական բանակը Երևանից Մարանդի վրայով շարժվեց Թավրիզ և սեպտեմբերի 12-ին (29 ռեբիուլի-էվվել) մտավ ու հրկիզեց քաղաքը՝ կողոպտելով ու կոտորելով բնակչությանը[183], բայց քանի որ մոտենում էր ձմեռը, սուլթանական բանակը ստիպված եղավ նահանջել դեպի Դիարբեքիր։

Օգտվելով առիթից, գահ բարձրացած Շահ-Աբասի թոռ՝ շահ Սեֆին 100 հազարանոց բանակի գլուխ անցած գալիս պաշարում է Երևանը ու 1636 թ. մարտի 30-ին[184] գրավում այն։ «Իբրև էանց այն ամառն, և ի գալ ձմրանն՝ յորում էր թուականն մեր ՌՁԵ (1636),— գրում է Առ. Դավրիժեցին,— ելեալ թագաւորն Պարսից Շահսեֆի հարիւր հազար հեծելօք եկեալ եմուտ յաշխարհս Արարատու, և նստաւ ի վերայ բերդին Երևանայ յաւուրս ինն սուն և երեք, մեծաւ տաժանմամբ և բազում շարշարանօք, և բազում արեանց հեղմամբ հազիւ թէ կարաց յետ առնուլ զբերդն ի ձեռաց Օսմանցւոց»[185]։

Այս պատերազմական գործողությունները նույնպիսի ավերիչ հետևանքներ ունեցան Հայաստանի և այս անգամ առավել չափով՝ նրա արևելյան մասի համար։ «Եւ ի շարժմանէ այս երկուց ինքնակալ թագաւորաց, աւերեալ ապականեցան աշխարհք՝ արևելք և արևմուտք և մանաւանդ աշխարհն Արարատու իւր շրջակայ գաւառօքն»[186]։

---

182 "Tarih-i Nâima", c. I, s. 264.

183 «Թավրիզի գեղեցիկ շինությունները քանդում են, շուկաները հրկիզում ու նրա ծովածավալ այգիների մոտ մեկ տասներորդը ոչնչացնում»,— գրում է պատմագիր Նաիման ("Tarih-i Nâima", c. I, s. 268)։

184 1636 թ. արտագրված մի ձեռագրի հիշատակարանում Երևանի պաշարումը շահ Սեֆիի կողմից թվագրված է 1635-ի դեկտեմբերի 15-ին, իսկ գրավումը՝ 1636 թ. մարտի 15-ին։ «Ի թուին ՌՁԵ (1636) ի դառն և դիժար ժամանակիս,— կարդում ենք հիշատակարանում,— որ սուլթան Մուրատ թագաւորն ելաւ ի Բիզանդիայ քաղաքէն եկաւ ի վերայ Արարատեան գաւառին յԵրևան քաղաքն էառ, գնաց ի Թավրէզ աւերեաց, յուլիսի ամսոյ ելն քաղաքն էառ և դարձաւ։ Զաշխարհս վրդովեաց որ Վանայ երկիրն գարին ամառն ԺԵ (15) զուռուշ եղև։ Դարձեալ Պարսից շահն եկաւ անչափ հեծելուք ի վերայ Երևանայ քաղաքին, դեկտեմբերի ամսոյ ԺԵ (15) քաղաքն ծեծեց մինչև ի մարտի ամսոյն ԺԵ (15)՝ առաւ զքաղաքն» (Ղ. Փիրղալեմյան, Նշխարք..., հ. Ա, № 775, էջ 209ա—209բ)։

185 Առ. Դավրիժեցի, էջ 317։

186 Նույն տեղում։

1637—1638 թթ. պատերազմական գործողությունների թատերաբեմը կրկին տեղափոխվեց Միջագետք։ Ի վերջո՝ Բաղդադը վերջնականապես ընկավ թուրքերի ձեռքը (25 դեկտեմբեր 1638 թ.)։

Բաղդադի պաշարման ընթացքում սուլթանի հրամանով Էրզրումի կառավարիչ Քենան փաշայի զորքերը, օգնական թաթարական զորքերի հետ միասին, ասպատակեցին Արարատյան նահանգը։ «Դարձեալ յայսմ և թուին ՌՁԷ (1638),— գրում է Գր. Դարանաղցին,— կրկին զերեւան և զշրջակայ գաւառքն գերեցուցց տաթարն, այլ յորժամ թագաւորն գնաց անհուն զօրօք դեպի կողմն Պաղտատու, հրաման արար տաթար խանին ամենայն զօրօք գնալ ի յԱրզրումն, իսկ տէր Արզրումին Քէնան փաշան զօրագլուխ լիցի ամենայն զօրաց անդ հաւաքելոցն, զի միաբանութեամբ գնասցեն ի վերայ Երևանու գաւառացն և գերեսցեն առհասարակ զամենայն հայք և զտաճկահաւատսն, և զամենայն անասունք զորս գտցեն՝ յաւարի առցեն, որպէս և արարին իսկ»[187]։

Բաղդադի գրավումից հետո, պատերազմող կողմերի միջև սկսվեցին հաշտության նոր բանակցություններ, որի հետևանքով Կասրե-Շիրինում 1639 թ. մայիսի 17-ին (17 մուհարրեմ, 1049 թ.) կնքվեց հաշտության պայմանագիր։ «Փառք իւր առատ բարերարութեան,— գրում է գրիչ Մարտիրոսը 1639 թ.,— իւր առատ գթութեամբն գթութիւն ձգեալ ի սիրտս թագաւորաց վասն ողորմեալ հայոց ազգիս և արարեալ սահման ի խաղաղութիւն և բարիշութիւն։ Եւ ետուր թագաւորն արևել(ե)ան Բաբելոնի բերդն ի ձեռն արևմտեան թագաւորին և նոքա բարիշութիւն հայոց ՌՁԸ (1639) ամէն»[188]։ Պայմանագրի համաձայն Հայաստանը վերաբաժանվեց օսմանյան Թուրքիայի և Իրանի միջև. Արևելյան Հայաստանը՝ Արարատյան նահանգով, մնում էր Իրանի, իսկ Բաղդադն ու Արևմտյան Հայաստանը՝ Թուրքիայի տիրապետության տակ։ Այս բաժանումն անփոփոխ մնաց մինչև Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, այսինքն՝ 1828 թվականը։

Հաշտության կնքումից հետո, արևմտահայ բնակչության քաղաքական անդորրը հաճախակի խանգարվում էր փաշաների հակակառավարական ապստամբություններով, Էրզրումի, Վանի փաշաների ու քուրդ ցեղապետների ընդհարումներով, վերջիններիս թալանչիական արշավանքներով դեպի հայկական գավառներն ու, երբեմն, վանքերը և այլն։ Այսպես, Վանի շրջակայքի հայ բնակչությունը մեծապես տուժեց

---

187 Գր. Դարանաղցի. էջ 578։

188 Մատենադարան, ձեռ. № 7087, էջ 363բ։

1651 թ. Վանի Հյուսեյն փաշայի ապստամբությունից, որի մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Առ. Դավրիժեցին[189]։ Սկզբում Հյուսեյն փաշան պատժիչ արշավանք է ձեռնարկում Խոշապի քուրդ ցեղապետ Սուլեյման բեկի դեմ, որը զբաղվում էր առևտրական քարավանների կողոպուտով. «...եղև երբեմն զի զճանապարհորդ կարաւանս որ ի Վանայ գնային ի Թարվէզ և ի Թարվիզու ի Վան, սա (իմա՝ Սուլեյման բեկը) զկարաւանաց բեռինսն բռնութեամբ բանայր և որ ինչ իրաց և հաւանէր, սուղ ինչ գին ձգէր ի վերայ տիրոջն և կորզեալ ի տիրոջէն յինքն առնոյր զինչսն, և պատճառէր թէ գնով գնեցի»[190]։ Այնուհետև, պաշտոնազրկվելու մասին կառավարության հրամանը ստանալով, ապստամբում է ինքը՝ Հյուսեյն փաշան։ «Այլ և պատահեցաւ գործ ինչ այսպիսի,— գրում է մեր պատմագիրը։ —Որպէս սովորութիւն է Օսմանցւոց ազգին, որ զհին փաշան մանղուլ առնեն և ի տեղի նոցա ի դրանէ Թագաւորին նոր փաշայ առաքեն. այսպէս և զՎանայ քաղաքի հին փաշայէն մանղուլ արարին, և նոր փաշայի Մուսալիմ (տեղակալ) ուղարկեցին ի Վան ի դրանէ Թագաւորին։ Իսկ Հուսէյն աղայն և հին փաշայն միաբանեալ ոչ ընկալան զեկեալ Մուսալիմն նոր փաշային, այլ յետս դարձուցին ի Ստամբոլ»[191]։

Օգտվելով առիթից, վերոհիշյալ քուրդ ցեղապետ Սուլեյման բեկն ու ոմն այլ ապստամբ՝ փաշա Զոմարը, համատեղ հարձակվում են Վարագա վանքի վրա ու կողոպտում նրա հարստությունները։ Ի վերջո, մի քանի տարի տևած այս ապստամբությունները ճնշվում են։ Վանքի կողոպտված հարստությունը Վանի մեծահարուստ հայ խոջաները քսակի ուժով գնում ու վերադարձնում են Վարագա վանքին։

1654 թ. մղձավանջային օրեր են ապրում նաև Բաղեշի ու նրա շրջակայքի հայ բնակիչները՝ Վանի Մելիք փաշայի և Բաղեշի ցեղապետ Աբդուլ խանի զինված ընդհարումների ժամանակ։ Այդ մասին մանրամասն հաղորդում է Վարդան Բաղիշեցին[192]։ Ընդհարման համար գլխավոր պատճառ է հանդիսացել ջիզիե հարկի դումարի զավթումը քուրդ ցեղապետի կողմից[193]։ Զինված ընդհարումը ավարտվում է Աբդուլ խանի պարտությամբ։ Փաշայի զորքերը մտնում են Բաղեշ ու կողոպտում քաղաքը. «...իսկ զօրք փաշային... մտին ի քաղաքն և

189 Առ. Դավրիժեցի, էջ 494—512։

190 Նույն տեղում, էջ 494։

191 Նույն տեղում, էջ 497—498։

192 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 395—397։

193 Նույն տեղում, էջ 396։

յաւարի առին, և կողոպտեցին զքրիստոնեայս, և աստ էր տեսանել զաղաղակ և զողբն մեր, զի զբազումս սպանին, այսինքն քառասուն այր քրիստոնեայ սպանին»[194]։

Անշուշտ, այս վկայությունների արձանագրմամբ չի սահմանափակվում XVII դարի երկրորդ կեսի Արևմտյան Հայաստանի քաղաքական պատմությունը։ Այսուհանդերձ, աղբյուրների խիստ սակավության պատճառով, ստիպված եղանք Հայաստանի քաղաքական պատմության հարցերը շարադրել Հետկարլովիցյան ժամանակաշրջանից։

* * *

1699 թ. Կարլովիցի հաշտության պայմանագիրը չափազանց ծանր հետևանքներ ունեցավ կայսրության թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության համար։ Ի. Հ. Ուզունչարշըլիի բառերով ասած, «հորցրած հսկա տարածքից ու երկրներից բացի, երկիրը վարչական, ռազմական ու ֆինանսական, տնտեսական, արդարադատության և հասարակական տեսանկյունից ծայրահեղորեն ծանր վիճակի մեջ ընկավ. կարգ ու կանոնից ոչինչ չմնաց։ Լինի որպես պատերազմի հետևանք, հարկերի ու տուրքերի ավելացման պատճառով, լինի տեղ-տեղ ծայր առած ավազակությունների ու կողոպուտների պատճառով, գյուղացիների մի մասը թողնելով իրենց վայրերը ապաստանվել էին քաղաքներում ու ավաններում կամ թե զբաղվում էին ավազակությամբ»[195]։

Վիճակը հատկապես ծանր էր օսմանյան կառավարության տեսադաշտից հեռու՝ Փոքր Ասիայի արևելյան նահանգներում, այսինքն Արևմտյան Հայաստանում և Քրդիստանում։ 1702 թ. մայիսին (զիլհիջե 1113) խոշոր ապստամբություն բարձրացրեց Շեհրիզորի քրդերի առաջնորդ Բեբե Սուլեյմանը։ Միայն մեծ զոհողությունների գնով վերջի—ազամ Հասան փաշային, Հալեպի ու Դիարբեքիրի փաշաների ջանքերով, հաջողվեց ճնշել ապստամբությունն ու հաշվեհարդար տեսնել ապստամբների հետ[196]։ Շուտով ապստամբություններ բռնկվեցին նաև Անթալիայում, Ուրֆայում, Մալաթիայում և այլուր, որոնք երկար ժամանակ լարված վիճակում պահեցին կառավարությանը[197]։

Համաձայն Անանուն Վանեցի տարեգրի հաղորդած տվյալների,

194 Նույն տեղում, էջ 397։

195 *I. H. Uzunçarşılı*, c. IV, I kısım, s. 1.

196 *J. Hammer*, t. XIII, s. 59.

197 *I. H. Uzunçarşılı*, c. IV, I kısım, s. 6—7.

1702 թ. քրդական ապստամբական ելույթներ են տեղի ունեցել Վան-Վասպուրականում։ Վանի Աբդի փաշան «...բազում զօրս հաւաքեաց առ ինքն ի յԱրճէշոյ, ի յԱրծկոյ, ի Բերկրոյ և ի Բաղէշոյ, Սհաթ խանն եկն ԲՌ (2000) զօրոք, և (ի հոկտեմբեր 2) ելեալ ՁՌ (6000) զօրօք և թօփով գնացին ի վերայ Խօշաբայ, և կամէին զի խան Մահմատ հանիցեն ի բերդէն և զԻբրահիմ բէգի տղայն դնիցեն պարոն և ոչ կարացին, այլ բազում գիւղս այրեցին, իսկ զօրքն Մահմուտանայ (գաւառի) եկեալ ի մէջ բանակին հարին զզօրսն Բաղիշոյ, և կողոպտեալ վիրաւորեցին և տարան ի նոցանէ ՃԻ (120) ձի, վասն որոյ ամօթալի դիմօք դարձան ի քաղաք»[198]։

Կարլովիցի հաշտությունից խիստ դժգոհ տիրապետող ավատական խավը դիմեց ներքին ու արտաքին արկածախնդրությունների։ Այսպես, երկրի ներսում սաստկացավ հալածանքը քրիստոնյա հպատակների նկատմամբ, հատկապես մեծ վեզիր Ահմեդ Ջելաիրլիի օրոք։ Եվրոպացի հեղինակ դե Սալաբերիի վկայությամբ, Ջելաիրլին սերել է կեսարացի հայ ծնողներից, երիտասարդ հասակում ընդունել է մահմեդականություն ու դարձել քրիստոնեության մոլեռանդ թշնամին։ Նա կարգադրել էր քրիստոնյաներին հագնել միայն սև գույնի զգեստներ, փողոց դուրս գալ թևի վրա կրելով փոքրիկ զանգակներ։ Քրիստոնյա հպատակների նկատմամբ այս աստիճան ստորացուցիչ հրաման մինչ այդ և ոչ մի վեզիր չէր արձակել։ Ուստի, նրա ծայրահեղություններից դժգոհեցին նույնիսկ զեկավար շրջանների չափավոր թևի ներկայացուցիչները, որոնց պահանջով և Ջելաիրլին պաշտոնազուրկ արվեց ու աքսորվեց Էգեյան կղզիներից մեկը։

Այսուհանդերձ, Ահմեդ Ջելաիրլիի հաջորդները շարունակում էին այս կամ այն կերպ հալածել քրիստոնյաներին։ «Յետ աւուրց ինչ հրաման սաստիկ արար (մեծ վեզիր) Տալդապան զի մի ոք ի քրիստոնէից կամ ի հրէից իշխեսցէ յայնմհետէ զեղին ագանել հողաթափս, և գտակ կարմիր, այլ սեաւն ևթ և կանանց էր լայնատարածս ագանել վերարկուս, և զկողպատսն մի ևս նրբինս առնել որպէս ցայնժամ, այլ խոշորս և թանձունս, և զեղերս կողպատին ժապաւինել սեաւ երիզօք»[199],— գրում է Գ. վ. Այվազովսկին։

198 «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 362։

199 Գաբրիել վ. Այվազովսկի, Պատմութիւն օսմանեան պետութեան, հ. Բ, էջ 238—239, հմմտ. J. Hammer, t. XIII, p. 81.

Արդյո՞ք 1705 թ. Բաղեշի և Վանի հայերից կրոնադարձություն պահանջող «չարագլուխ» մոլլայի գործունեությունը Ա. Ջելաիրլի մեծ վեզիրի հրամաններից չէր ոգեշնչված հետագայում, դժվար է ասել. «Ի սոյն թիւն ի քաղաքն Բաղէշ ոմն (չարագլուխ) մօլայ, որ էր դատաւոր, ի գրոց իւրեանց հրաման (եհան), թե ի հայոց ով ոք, որ տաճկանայ, նորա մօտակայ ազգականաց մէջ ով, որ անկատար արու տղայ (լինի), տղայն նմա հասանի։ Սահմանեաց զայս ի Բաղէշ, և ինքն եկն ի քաղաքս Վան, զի և անդ զնոյն հաստատեսցէ։ Իսկ Բաղիշոյ մեծ վարդապետք և դօլաթաւորք միաբանեալ աղերսանաց գիր խրկեցին առ մեր առաջնորդ Ստեփաննոս վարդապետ և իշխանաց իշխան պարոն Խօջայ Ախիջան Ղարասաֆարն, և ծանուցին զաղէտս դառնութեան իւրեանց, զսուգ և զկորուստ ազգիս հայոց։ Իսկ Խօջայ Սաֆարն հրամայեաց վարդապետին, որ յեկեղեցիս ծանուսցէ, և ինքն յոլով գանձս և փեշքաշ ցրուեաց ի դրունս օճախ աղայիցն և մեծամեծաց, և զամենեսեան դարձոյց յինքն»[200]։ «Աւելի քան զէՃ (700) դուրուշ խարջ եղև թէ դատաւորին կաշառ և թէ աղայից և ուլամայից փաշքաշ, որ ամենեքեան եղեն ի կողմն Խօջայ Սաֆարին, և ապա թէ շարն այն բարձաւ ի մէնջ և ի Բաղիշոյ»[201]։

1703 թ. ենիչերիները գահընկեց արեցին սուլթան Մուստաֆա II-ին։ Ապստամբության համար առիթ էր ծառայել շեյխ-ուլ-իսլամ Ֆեյզուլլահ-էֆենդիի կամայականություններն ու բռնությունները։ Նա, օգտվելով սուլթանի վրա ունեցած ազդեցությունից, պալատի ու նահանգների բոլոր բարձրաստիճան պաշտոններն հանձնել էր իր հարազատներին ու բարեկամներին։ Իրենց պաշտոնները կորցրած ընդդիմադիր ավատատերերը դրդեցին ենիչերիներին կատարելու պետական հեղաշրջում։ Սուլթան հռչակվեց Ահմեդ III (1703—1730)։

Անցնելով իշխանության գլուխ, նոր սուլթանը դաժանորեն հաշվեհարդար տեսավ իրեն դահ բարձրացրած «խռովարարների» հետ։ Լա Մոտրեյի վկայությամբ, մի քանի տարվա ընթացքում սուլթանի հրամանով սպանվեցին ավելի քան 30 հազ. մարդ[202]։ Մահապատժի էր ենթարկվում յուրաքանչյուր ոք, ով կասկածվում էր պետության նկատմամբ ամենափոքր անհավատարմության մեջ։ Անընդհատ փո-

200 «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 363։

201 Նույն տեղում, էջ 364։

202 Motraye de la, Voyages d'Aubrey de la Motraye en Europe, Asie et l'Afrique, vol. II, La Haye, 1727, p. 21.

փոխվում էին մեծ վեզիրները. 1703 թ. օգոստոսից մինչև 1706 թ. փոխվեցին չորս մեծ վեզիրներ[203]։

Սուլթան Ահմեդի օրոք ծայր աստիճան սրվեցին ռուս-թուրքական հարաբերությունները։ Պալատական վերնախավի հետադիմական թևը ձգտում էր ամեն գնով նվաճել Կարլովիցի հաշտության պայմանագրով կորցրած տարածքը, այլ կերպ ասած՝ ծարավի էր պատերազմի։ Այս հարցում, ռազմատենչ խավի ներկայացուցիչներին ընդդեմ Ռուսաստանի ոգեշնչում էին նաև Անգլիան և Ֆրանսիան, մեղադրելով Ռուսաստանին՝ Թուրքիայի կողմից ստրկացված քրիստոնյաներին հովանավորելու մեջ։ Եվ որպես «ապացույց», հիշյալ պետությունների ներկայացուցիչները սուլթանին ներկայացրին Ամստերդամում կտրված մի մեդալյոն, որի վրա լատիներեն հետևյալ արձանագրությունը կար. "Petrus primus, Russo-graecorum imperator", այսինքն՝ «Պետրոս առաջին, ռուս-հունական կայսր»[204]։

Ինչ խոսք, XVIII դարի սկզբին Ռուսաստանի արտաքին քաղաքականության համար կարևորագույն խնդիրները՝ Բալթիկ ու Սև ծովերն ազատ ելք ունենալու հարցերն էին։ Զբաղված լինելով Հյուսիսային պատերազմով (1700—1721) Պետրոս I-ը առժամանակ հետաձգեց Թուրքիայի դեմ որևէ մի ռազմական ձեռնարկ։ Ֆ. Էնգելսի բառերով ասած, «դեռևս Թուրքիայով զբաղվելու ժամանակը չէր եկել»[205]։ Այսուհանդերձ, Թուրքիայի կողմից ընկճված քրիստոնյա ժողովուրդների ներկայացուցիչները, ի թիվս որոնց հայերը, մեկնում էին Պետերբուրգ և օգնություն ու աջակցություն հայցում Ռուսաստանից, որի միջազգային հեղինակությունը XVIII դարի սկզբին խիստ մեծացել էր։

1701—1703 թվականներին Թուրքական տիրապետության տակ գտնվող Վրաստանում[206], Բոսնիայում, Չերնոգորիայում և Բալկանյան թերակղզու այլ վայրերում անվերջ ապստամբություններ էին տեղի ունենում։ Կառավարությունը մի կողմից ապստամբների դեմ պատժիչ ջոկատներ էր ուղարկում, մյուս կողմից, ինչպես նշում է Ի. Հ. Ուզունչարշըլը՝ վկայակոչելով մյուհիմմե դավթարներին, քրիստոնյաներին «...պետության հանդեպ հավատարիմ պահելու նպատակով, սահմանամերձ շրջանների բնակչության նկատմամբ մեղմ վերաբերվելու ու խռովությունների առիթ չտալու մասին հրահանգներ էր արձակում»[207]։

Սակայն, վրաց-հայ հայրենասերները, ինչպես իրավացիորեն գրում է Գ. Գ. Պայճաձեն, «...խորապես ըմբռնելով Ռուսաստանի նշանակությունը թշնամու գերիշխանությունը թոթափելու՝ իրենց քաղաքական երազանքների իրականացման գործում, և նկատի ունենալով Ռուսաստանի Արևելքում ունեցած իրական շահերը, ռուսական պետությունը համարում էին իրենց ամենահուսալի հովանավորն ու դաշնակիցը»[208]։

Որ Ի. Օրու ազատագրական ծրագիրը շոշափում էր ոչ միայն արևելահայ, այլև արևմտահայ լայն զանգվածների իղձերն ու շահագրգռությունները, վկայում են աղբյուրները։ Ա. Գ. Հովհաննիսյանը, անդրադառնալով այդ հարցերին, գրում է. «Պատահական չէ, երբ, գծագրելով եվրոպական արշավի հեռանկարները՝ Օրին հաշվի էր առնում ոչ միայն թուրք առևտրական ճանապարհների հետ կապված իրանահայ վաճառականների, այլև Հայաստանի արևմտյան մասսաների տրամադրությունը, ուր հայ երիտասարդությունը, նրա ասելով, ոչինչ ավելի չի տենչում, քան «պատերազմ հավատքի համար»։ Հայաստանի արևմտյան հատվածի նկատմամբ ևս նշելով ազատագրական որոշ հեռանկար՝ Օրին ելնում էր դարձյալ այն գիտակցությունից, որ Թուրքիայի լծի տակ գտնված հայ ժողովուրդը սնում է իր կրծքի տակ քաղաքական-ազատագրական ձգտումներ»[209]։ Մի այլ տեղ, անդրադառնալով արևմտահայերի ազատագրական ձգտումներին ու Ի. Օրիի գործունեությանը, Ա. Գ. Հովհաննիսյանը գրում է. «Ուշադրության արժանի են մանավանդ Օրիի հավաքած տեղեկությունները Թուրքիայի մասին, նրա դիտողությունները ցամաքային ուղիներով Թուրքիան նվաճելու հնարավորությունների մասին և այլն։ Նրան շատ լավ հայտնի էր ըստ երևույթին «Թուրքիայի ավերակների վրա» ամրանալու այն հեռանկարները, որոնցից մի պահ ստիպված եղավ հրաժարվել Պետրոս ցարը Պրուտի ձախողած արշավանքից հետո»[210]։

Ռուսաստանից արևմտահայերի ակնկալած օգնության մասին խոսում է նաև լեհ կաթոլիկ միսիոներ Կրուշինսկին, որը բազմիցս եղել

---

203 *J. H. Danişmend*, c. IV, s. 1—3.

204 *De Salabery*, Histoire de l'empire ottoman. t. III, Paris. 1748, p. 80 (այսուհետև՝ *De Salabery*).

205 *Կ. Մարքս, Ֆ. Էնգելս*, Սոч., т. 22, изд. 2, с. 20.

206 *I. H. Uzunçarşılı*, c. IV; I kısım, s. 20—21.

207 Նույն տեղում։

208 *Г. Г. Пайчадзе*, с. 23.

209 Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ..., հ. Բ, էջ 386—387։

210 Նույն տեղում, էջ 601։

էր Թուրքիայում։ Նրա ասելով, ինչպես գրում է Ա. Գ. Հովհաննիսյանը, «Թուրքերի ճնշումներին ենթարկված արևելյան քրիստոնյաները դիմում են ռուս ցարին որպես ապագայի համար կանխանշված իրենց իշխողին։ Նրանք մեծարում են ցարերին, հարգալիր խոսում նրանց մասին և հիշատակում նրանց անուններն իրենց պատարագների մեջ»[211]։

Պետրոս I-ը, նկատի ունենալով շվեդական պատերազմը, խուսափում էր Թուրքիայի հետ ընդհարվելուց, սակայն դա անխուսափելի էր։ Այդ մասին էին վկայում Կ. Պոլսի ռուսական դեսպան Պ. Ա. Տոլստոյի զեկուցագրերը։ Պատերազմի դեպքում Պետրոս I-ը մեծ հույսեր էր կապում Թուրքիայի քրիստոնյա հպատակների, և նախ և առաջ Բալկանյան ժողովուրդների ապստամբության ու աջակցության վրա։

Ի. Հ. Ուզունչարշըլը Բալկանյան ժողովուրդների ազատագրական այդ ձգտումները համարում է ռուսների կողմից երկրի ներսում կատարվող «քայքայիչ» աշխատանքի արդյունք։ Որպես ապացույց նա մեջ է բերում 1119 զիլհիջջե (1708 թ. մարտ) սուլթանական մի ֆերման ուղղված Սալոնիկի կուսակալ Հասան փաշային, որտեղ վերջինս զգուշացվում է առևտրականների դիմակի տակ գործող ռուսական լրտեսներից։ Այնուհետև ֆերմանը պահանջում է կտրուկ միջոցներ ձեռնարկել նրանց նկատմամբ[212]։ Նման անհեթեթ պնդումներն, անշուշտ, հեռու են իրականությունն արտացոլելուց։

1709 թ. հունիսի 27-ին Պոլտավայի ճակատամարտում շվեդների նկատմամբ ռուսական բանակի փայլուն հաղթանակը ուժեղ ազդեցություն գործեց սուլթանական պալատի վրա։ Թվում էր, թե առժամանակ հնարավոր է հետաձգել ռուս-թուրքական ընդհարումը, սակայն Կարլ XII-ի և Մազեպայի փախուստը Թուրքիա կրկին ոգեշնչեցին պալատական վերնախավի հետադիմական թևին, որոնք, կրկնում ենք, ծարավի էին պատերազմի։

Պատերազմ հայտարարվելուց հետո, Փոքր Ասիայի մի շարք շրջանների կառավարիչները, պատմագիր Ռաշիդի վկայությամբ, ոչ միայն հրաժարվեցին զորք տրամադրել պետությանը, այլև ուղղակի դիմեցին ապստամբության։ Ապստամբություն բարձրացրեց, օրինակ, Մարաշի բեկլերբեկ Խալիլ փաշան, որին պաշտպանեցին հարևան շրջանների քուրդ բեկերը։ Ապստամբների դեմ կառավարությունը ստիպված եղավ մեծ զորք ուղարկել Ուրֆայի վալի Յուսուֆ փաշայի գլխավորությամբ[213]։

Քրդերի կողմից ապստամբություններ և հակակառավարական ելույթներ շարունակում էին տեղի ունենալ Վան-Վասպուրականում։ «ՌՃԿ (1711) օգոս. Իե(25) Ռաջաբ փաշայն եկն ի Վան, սա յունվար Ա(1) սպան Զալիվար (գուցէ Տիլավար) օղլի Հուսէն աղէն, և յուլիս Ի(20) գնաց բաղում հեծելօք թօփով մեծաւ ի վերայ խօշաբայ, և ի ճանապարհին թալանեաց Զեռնակայ բերդ, որ լի էր բաղում գանձիւք, զի բոլոր նահանգ յահէ փաշային և հեծելին անդ էին թագուցեալ զամենայն ինչս իւրեանց վասն ամրութեան, և ապա անցեալ գնացին ի խօշաբ, և Իբրահիմ բէգն, որ էր ի բերդ, ոչ եկաց հակառակ ընդդէմ, այլ ինքնին իւր կամօք էջ ի բերդէն, և տարեալ զխան Մահմատի տղայն եդ պարոն և ի մայիս Ա(1) դարձան բաղում աւարաւ»[214]։

Քուրդ բեկերի ապստամբական ելույթները շարունակվում էին նաև ռուս-թուրքական պատերազմից հետո։ «Եւ ՌՃԿԴ (1715)-ին,— կարդում ենք Անանուն Վանեցի տարեգրի մոտ,— այս Մուրթազայ փաշայն (Վանի կառավարիչ Մ. Զ.) գնաց ի վերայ Խօշաբայ Զէ(յ)նալ բեգ պարոն հանել և զԻբրահիմ բէգ դնել պարոն. և ի գնալն՝ իմացեալ Զե(յ)նալ բէգն բաղում զօրօք եկն ի դէմ փաշային, և ի Զանկայ դաշտն հանդիպեցան միմեանց և յոյժ պատերազմեցան, և յերկու կողմանց աւելի քան զԾ (50) այր անկան, մինչ զի և դատաւորն, որ էր միականի Աւդուլլահ աֆանդին մեռաւ, և փաշայի գլուխն ևս վիրաւորեցին, բայց յետոյ Զէյնալ բէգ խիլայեաց զփաշայն և հաշտեցան»[215]։

Սակայն թուրքերի կողմից ստրկացված ժողովուրդներին 1711 թ. հերթական ռուս-թուրքական պատերազմում վիճակված չէր ազատագրվելու, քանի որ Պետրոս I-ի զորքերը Պրուտ գետի ափին անհաջողության մատնվեցին։ Ուժերն անհավասար էին. ռուսական բանակը, որին անձամբ ղեկավարում էր Պետրոս I-ը կազմում էր ընդամենը 38 հազ. մարդ, մինչդեռ թուրքերի բանակը՝ 100—120 հազ. էր, չհաշված 70 հազարանոց թաթարական զորքը։

1711 թ. հուլիսի 23-ին Պրուտ գետի ափին գտնվող ռազմական ճամբարում Թուրքիայի և Ռուսաստանի միջև կնքվեց հաշտության

211 Նույն տեղում, էջ 512—513։

212 *I. H. Uzunçarşılı*, c. IV, I kısım, s. 73.

213 "Tarih-i Raşid", c. II, Istanbul, 1153 (1740—1741), s. 86. *J. Hammer*, t. XIII, p. 232 (այսուհետև՝ Raşid).

214 «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 365։

215 Նույն տեղում, էջ 367։

պայմանագիր՝ վերջինիս համար բավական ծանր պայմաններով. Թուրքիային վերադարձվեց Ազովը՝ տեղում պահված զենքով ու զինամթերքով (վիլայեթներին ուղարկված սուլթանական հրովարտակում ասված է, որ ամբողջ զենքն ու զինամթերքը, հրետանին հանձնվեց Բարձրագույն Դռանը)[216], Ռուսաստանը զրկվեց Սև ծովում առևտուր անելու իրավունքից և այլն։

Հաշտության կնքումից հետո ո՛չ Ռուսաստանը և ո՛չ էլ Թուրքիան չէին շտապում կատարել պրուտյան պայմանագրի հոդվածները։ Քանի դեռ շվեդական թագավոր Կարլոս XII-ը գտնվում էր Թուրքիայում, Պետրոս I-ը թուրքերին չէր հանձնում Ազովը ու Լեհաստանից դուրս չէր բերում իր զորքերը։ 1712 թ. դեկտեմբերին սուլթանը դարձյալ պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, սակայն գործը չհասավ ռազմական ընդհարումների։ 1713 թ. հունիսի 24-ին (30 ջեմազուլա) երկու կողմերի միջև կնքվեց Ադրիանապոլսի պայմանագիրը՝ 25 տարի ժամկետով[217]։ Յոթ տարի անց՝ 1720 թ. նոյեմբերի 16-ին, Ռուսաստանի ու Թուրքիայի միջև կնքվեց նոր պայմանագիր «Հավերժ ժամանակների համար», որտեղ հաստատվում էին 1713 թ. Ադրիանապոլսի հաշտության պայմանագրի հոդվածները[218]։

Չնայած նման քաղաքական անբարենպաստ հանգամանքներին, Բալկանյան քրիստոնյա ժողովուրդները, հայերն ու վրացիները շարունակում էին փրկություն սպասել Ռուսաստանից, որը մնում էր Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների միակ հովանավորողն ու հետևողական պաշտպանը։

* * *

XVIII դարում արևմտահայ հասարակական խավերը ալեկոծված էին ներհամայնքային պայքարից։ Հայ կաթոլիկների ու հայադավանների միջև սուր տարաձայնությունները քաղաքական որոշ հոսանքների խմորումների արգասիք էին։ Եթե հայ կաթոլիկները իրենց գործունեությամբ հաճախ անդիտակցաբար ընդառաջում էին Եվրոպայի կաթոլիկ աշխարհի՝ Արևելքում հետամտած գաղութային նպատակներին, ապա հայադավան եկեղեցին, իր հակակաթոլիկական դիրքորոշումով,

[216] *I. H. Uzunçarşılı*, c. IV, I kısım, s. 85.

[217] Նույն տեղում, էջ 91—98։

[218] Նույն տեղում, էջ 101—146։

ոչ միայն արևմտահայ լայն զանգվածներին հեռու էր պահում կաթոլիկ Եվրոպայի՝ Արևելքում վարած քաղաքականության վնասակար ազդեցությունից, այլև դրանով իսկ փորձում էր շտկել հայ համայնքի և օսմանյան պետության փոխհարաբերությունները։ Այսպիսով, հայադավան եկեղեցին փորձում էր հայերին փրկել Եվրոպայի նենգ քաղաքականության ձեռքին կույր գործիք դառնալու իրական վտանգից։ Արևմտահայ լայն զանգվածների շրջանում, ինչպես տեսանք, գնալով ավելի ու ավելի արմատավորվում էր այն գաղափարը, որ հայ ժողովուրդը բուրքական ստրկական լծից կարող է ազատագրվել միմիայն մեծ ու հզոր Ռուսաստանի օգնությամբ։

XVIII դարի վերջին Ֆրանսիայի թագավորները ձգտում էին լըրտեսների դեր կատարող իրենց միսիոներների միջոցով Արևելքի քրիստոնյաներին, ի թիվս դրանց և հայերին, կաթոլիկացնելով օգտագործել նրանց իրենց հեռու գնացող շիլ նպատակների համար։ Ինչպես իրավացիորեն նշում է եվրոպացի մի հեղինակ, «Եթե Կոլբերը կազմակերպում էր Օսմանյան կայսրության տնտեսական նվաճումը, ապա Լյուդովիկոս XIV երազում էր գաղափարապես, բարոյապես նվաճել այն»[219], այսինքն՝ Արևելքում ստեղծել կաթոլիկական հենարան։

Արևելքի քրիստոնյաները կատարելապես հիասթափվել էին Ֆրանսիայի վարած այս քաղաքականությունից։ Կաթոլիկ միսիոներների գործունեությունն Արևելքում միայն ատելություն էր առաջացնում օսմանյան քրիստոնյա հպատակների մոտ։ Միսիոներների թույլ տված կոպիտ ծայրահեղություններն Արևելքում քննադատվում են հենց իրենց՝ ֆրանսիացի հեղինակների կողմից։ Մարքիզ դե Վիլնյովին նվիրված աշխատության մեջ, օրինակ Ալբեր Վանդալը գրում է. «Լյուդովիկոս XIV իշխանության վերջին տարիներին, այն հետաքրքրությունը, որ Ֆրանսիան ցուցաբերում էր դեպի (Արևելքի) կաթոլիկները, ընդունեց նեղմիտ ու անտանելի բնույթ։ Բարձրագույն դռան հետ իր հարաբերությունների սկզբում, Ֆրանսիան հանդես էր գալիս որպես Արևելքի ամբողջ քրիստոնեության պատվարի դերով (sic!)։ Մեր թագավորները գիտակցում էին լայն քաղաքականության օգտակարությունը, նրանք որոշակի հետևողությամբ գրում էին Մեծ Տիրակալին (սուլթանին— Մ. Ջ.)՝ Կ. Պոլսի հույն պատրիարքի և Էգեյան ծովի արշիպելագի հոգևորականների օգտին։ Դժբախտաբար միսիոներների բացավառ եռանդը շուտով անցավ ամեն մի չափ ու սահման և նրանց

[219] *G. Pélissié du Rausas*, p. 47—48.

դեմ հանեց հերձվածող հոգևորականության (իմա՝ հայերին ու հույներին)։ Նրանց (իմա՝ միսիոներների) ազդեցության ներքո, մեր քաղաքականությունը թույլ տվեց հարձակումներ այլախոհների նկատմամբ, դիմեց բռնությունների ու զզվելի արարքների, որոնք պատճառ հանդիսացան կաթոլիկների նկատմամբ սկսված դաժան հալածանքների. Լյուդովիկոս XIV-ը շոյվում էր Արևելքի բոլոր եկեղեցիներին հռոմեական եկեղեցուն միացնելու գաղափարով, նա դրանց թողեց սոսկալի խռովության ու բաժանման վիճակում»[220]։

Ա. Վանդալի՝ կաթոլիկ միսիոներների հասցեին ուղղված այս քննադատությանը պիտի ավելացնել ու ճշտել այն, որ ֆրանսիական թագավորներն Արևելքում հանդես էին գալիս ոչ թե որպես «Արևելքի ամբողջ քրիստոնեության պատվարի դերով», ինչպես գրում է հեղինակը, այլ միայն և միայն կաթոլիկների օգտին, դրանով իսկ խռովություն սերմանելով Արևելքի քրիստոնյա համայնքների ներսում։ Հռոմի պապերը, ինչպես դա խոստովանում է Կրուշինսկին, օրինակ, Իրանում պաշտպանության տակ էին վերցնում միայն իրանահայ կաթոլիկներին և իրենց հանձնարարականում մինչև իսկ արդարացնում էին հայադավան «կեղծ քրիստոնյաների» դեմ խաների կողմից գործադրվող դաժանությունները։ «Ավելի մերկ ցինիզմ, քան եռհարկ գլխարկ կրող խրտվիլակի երկդիմի վարքագիծը, դժվար է պատկերացնել»,— գրում է Ա. Գ. Հովհաննիսյանը[221]։

Որ արևմտահայ համայնքի ներսում XVIII դարի սկզբից ծավալված պայքարը ոչ թե կրոնական, այլ քաղաքական հողի վրա էր ու փաստորեն ուղղված էր արևմտահայերի եվրոպական կողմնորոշման, այսինքն կաթոլիկության դեմ, երևում է XVIII դարի սկզբում Կ. Պոլսում ապրող Մխլեիմյան Գևորգ վարդապետի (1681—1758) «Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկբնակաց» գրվածքից[222], որը, ինչպես գրում է Ա. Գ. Հովհաննիսյանը, «...առատ լույս է սփռում այն խավերի դիրքորոշման վրա, որոնք պայքարում էին հայերի արևմտաեվրոպական կողմնորոշման դեմ»[223]։

Գ. վ. Մխլեիմյանը մի կողմից պայքարելով կաթոլիկ դաղափարախոսության դեմ, մյուս կողմից կոչ էր անում հնազանդվել օսմանյան տիրապետող կարգերին։ Սա, անշուշտ, բխում էր նրա նեղ աշխարհայացքից։ Մտնելով արևմտահայ գավառները, գրում էր նա, կաթոլիկացած («ֆռանկացած»[224]) հայերը գայթակղության օրինակ էին դառնում մյուսների համար։ «Եւ որչափ բովանդակ գեղօրէք տեսեալ զֆրանկանալն քաղաքացւոց իւրեանց, և գայթակղեալք ի նոցանէ ուրացան ամէնքն զհաւատս Քրիստոսի»։ Կաթոլիկները ապստամբեցնում են հայերին թուրքերի «աստվածատուր սրի դեմ» և հորդորում էին նրանց «բարեկամութիւն և միաբանութիւն առնել ընդ թշնամեաց թագաւորացն մերոց»[225], այսինքն՝ թուրք սուլթանների թշնամիների հետ։ Ըստ Մխլեիմյանի, հայերը չպիտի հրապուրվեն միսիոներների քարոզներով ու ապստամբեն թուրքերի դեմ, քանզի «...յետոյ ի յայտ եկեալ տաճկաց, ապա բովանդակ ազգին և եկեղեցւոյն և հաւատոցն Քրիստոսի վնաս ինչ եկեսցէ»[226]։

Այս մտայնությամբ էին գործում ոչ միայն Գևորգ վ. Մխլեիմյանը, այլև Կ. Պոլսում ու գավառներում աթոռներին բաղված հայ հոգևորականության վերնախավը։ Նրանք թուրքական ղեկավար շրջաններին հասկացնել էին տալիս, թե միսիոներները ձգտում են հայերին ապստամբեցնել թուրքերի դեմ, և որ եվրոպական պետությունների օգտին լրտեսություն են կատարում ոչ միայն միսիոներները, այլև նորադարձ հայ կաթոլիկները։

Երբ թերթում ենք XVIII դարի թուրքական պաշտոնական տարեգրության էջերը, ապա մի անգամ ևս համոզվում ենք, որ եթե թուրքական կառավարող շրջանները պաշտպանում էին հայադավան եկեղեցու ներկայացուցիչներին, ապա դա այն պարզ պատճառով էր, որ նրանք արդեն քաջ գիտեին միսիոներների քայքայիչ գործունեության մասին։ Մ. Օրմանյանն անդրադառնալով այդ հարցին գրում է, որ «...պետական շրջանակներու մեջ շատ նշանակալից կը դառնար միաբանեալ են ընդ ֆրանկս բացատրութիւնը, զոր եթե հայեր դավանական իմաստով կիմանային»[227]։ Իսկ եթե, երբեմն, կառավարության կողմից պատժվում էին հայադավան

220 *A. Vandal*, p. 14.

221 Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ..., հ. Բ, էջ 553։

222 Գևորգ վրդ. Մխլեիմ-օղլի, Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկբնակաց, Կ. Պոլիս, 1730։

223 Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ..., հ. Բ, էջ 397։

224 Թուրքիայում Եվրոպայի կաթոլիկ աշխարհի երկրներին անվանում էին «Ֆրանկների երկիր» և նկատի չունեին միայն Ֆրանսիային։ Կապիտուլյացիաներում «Ֆրանկների կրոն» արտահայտությունը վերաբերում է «կաթոլիկ կրոնին» (տե՛ս *Pélisslé du Rausas*, p. 45)։

225 Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ..., հ. Բ, էջ 399։

226 Նույն տեղում, էջ 311։

227 Մ. Օրմանյան, էջ 2699։

եկեղեցու ներկայացուցիչները, ապա դա կատարվում էր եվրոպական, նախ և առաջ ֆրանսիական դիվանագետների ճնշման ներքո։ Այսպես, Չելեբիզադեի մոտ, 1725 թ. դեպքերի շարադրման ժամանակ, կարդում ենք հետևյալը. «Կաթոլիկ միսիոներներից սատանայական մոլուցքով պաշարված անձինք ստոր նպատակներով, շրջագայելով օսմանյան երկրի մեծ ու փոքր քաղաքները հույն և հայ հպատակների մոտ տարածում էին ֆրանսիական (կաթոլիկական— Մ. Ջ.) սնոտի ու կեղծ դավանանքը և ֆրենգի ախտի (սիֆիլիսի) նման վարակելով նրանց, տարածում էին կաթոլիկական կրոնը։ Դրանով իսկ, նրանք սերմանում էին նրանց մեջ խռովություն ու ապականություն, նենգություն ու ոճրագործություն։ Որոշ վայրերից, երբ քրիստոնյա հպատակները բողոք ներկայացրին կառավարությանը, ապա Թումելիի և Անատոլիայի նահանգներին հրամայվեց, որով կարգադրվում էր ֆրանկ միսիոներին, բացի նախօրոք թույլ տրված վայրերից ուրիշ տեղեր չճանապարհորդել ու խռովություն չսերմանել հպատակների շրջանում։ Հրամանին չենթարկվողները տեղն ու տեղ ձերբակալվում ու բանտարկվում էին՝ նախապես տեղեկացնելով կառավարությանը»[228]։

Որ հայ և հույն կաթոլիկները ծառայում էին օտար պետության շահերին ու դրանով իսկ բախվում օսմանյան պետության քաղաքական նկրտումներին, երևում են պատմագիր Ջևդեթի՝ XVIII դարի առաջին կեսին վերաբերող հետևյալ վկայություններից։ «Հանրահայտ ֆրանկ միսիոներները շրջագայելով հայերի մեջ, կարողացան նրանց մի մասին կաթոլիկացնել ու ենթարկել նրանց Հռոմի պապի հոգևոր իշխանությանը։ Հույն և հայ պատրիարքները գտնվում են օսմանյան պետության իրավասության տակ, մինչդեռ կաթոլիկ եկեղեցին հպատակվում է օտարերկրյա հոգևոր պետին ու օսմանյան պետության փոքրաթիվ մի հատվածի օտարերկրյա եկեղեցուն հպատակվելը համարվում է քաղաքական խռովություն»[229]։

Ջևդեթի նման խորհրդածությունները, ինչպես նշվեց, վերաբերում են XVIII դարի առաջին կեսին, սակայն, երբ 1740 թ. հավերժ կապիտուլյացիա կորզելու հետևանքով Ֆրանսիայի ազդեցությունը խիստ ուժեղացավ կայսրության վրա ու առավել ևս սրվեցին ռուս-թուրքական հարաբերությունները, ապա օսմանյան կառավարությունը, ինչպես դա բացահայտվում է հենց Ջևդեթի վկայությունից, փոխեց

228 "Tarih-i Çelebizade", Istanbul, 1153 (1740—1741), s. 314—315.

229 "Tarih-i Cevdet",, c. I, Istanbul, 1309 (1893), s 159.

իր դիրքորոշումը կաթոլիկ հայերի նկատմամբ։ «Ներկայումս (XVIII դարի 70-ական թվականներ— Մ. Ջ.), պապական իշխանությունը (հայ կաթոլիկների նկատմամբ) լոկ հոգևոր իշխանություն է և հիշյալ դավանանքի (կաթոլիկների— Մ. Ջ.) կապը քրիստոնյա պապի հետ ունի միայն կրոնադավանաբանական ու բարոյական նշանակություն։ Ուստի այդ կապը այսուհետև քաղաքական ու պետական վտանգ չի կարող ներկայացնել»[230],—գրում է Ջևդեթը։

Արդ, վերադառնանք հայ համայնքի ներսում ծագած պայքարի պատմության ժամանակագրական շարադրանքին։ 1703 թ. Ավետիք պատրիարքը հալածանք ձեռնարկեց հայ կաթոլիկների դեմ և նրանցից շատերին բանտարկել տվեց։ Եվ քանի որ հայ կաթոլիկները մինչ այդ բողոքել էին կառավարությանը պատրիարքից, ինչպես այդ մասին գրում է Մ. Չամչյանը, ուստի պատրիարքը ստիպված եղավ մեկնել Ադրիանապոլիս՝ մեծ վեզիրին բացատրություններ տալու նպատակով։ Երբ Ավետիք պատրիարքը ներկայացավ մեծ վեզիրին, վերջինս, թուրքական աղբյուրների վկայությամբ, կատաղած դիմեց նրան հետևյալ խոսքերով. «Շո՛ւն, չգիտե՞ս, որ միայն սուլթանն իրավունք ունի իր հպատակներին բանտ նետել»[231]։ Եվ հրամայեց պատրիարքին բանտարկել, սակայն մուֆթիի միջնորդությամբ ստիպված եղավ շուտով նրան ազատել. նրա փոխարեն չորս մեծահարուստ հայ կաթոլիկների դատապարտեց թիավարության[232]։ Ավելին, պատրիարքին հաջողվեց մեծ վեզիրից հրովարտակ կորզել ու բացահայտ հալածել հայ կաթոլիկներին։ «Յետ այսորիկ,— գրում է Մ. Չամչյանը,— առեալ Ավետիք վարդապետ ձեռամբ դենպետէ հրովարտակ ի դրանէ՝ առաքեաց զարքունի սպասաւորս յամենայն քաղաքս Անատոլիոյ և Յունաստանի՝ շարշարել զազգն, և առնուլ յիւրաքանչիւրոց բազում ինչ, պատճառելով՝ թէ նոքա ֆռանկացեալ իցեն, զորս և կոչէր կաթոլիկս։ Եւ յայս տուգանս էարկ ոչ միայն զհայս, այլև զբազումս ի յունաց եղելոց՝ ի հեռաւոր քաղաքս, և անկաւ շփոթ և շշուկ մեծ ի մէջ ազգին, և ընծայեցաւ այլոց ազգաց ամենայն նիւթ ծանակելոյ զազգ մեր»[233]։

230 Նույն տեղում, էջ 161։

231 J. Hammer, t. XIII, p. 84—85.

232 Նույն տեղում։

233 Մ. Չամչյան, էջ 743։ «Այսպիսի հրովարտակ մի բնական կերպով դուռ կը բանար բազմադիմի անիրաւութեանց և բռնադատութեանց, որոնք կուգային անձնական թշնամութիւններէ, անհատական վրեժխնդրութիւններէ, և ստորին շարաշահութիւններէ»,— գրում է Մ. Օրմանյանը (տե՛ս Մ. Օրմանյան, էջ 2705)։

Սուլթան Ահմեդի գահ բարձրանալուց հետո, սուլթանական հրովարտակով պատրիարք է նշանակվում Գալուստ վարդապետը, որի դեմ հանդես են գալիս Ավետիք պատրիարքի կողմնակիցները[234]։ Հետագա տարիներին հայ համայնքի ներսում բորբոքված կրքերը չմեղմացան։ Հայադավանների ու կաթոլիկների միջև «...հանապազ կագ և կռիւ, նախատինք և թշնամանք անհնարին, թող զսարսափելի հայհոյութիւնս»[235],— գրում է Մ. Չամչյանը։ Պատմագիր Ջելեթը գրում է, թե «...հայերի ու կաթոլիկների միջև թշնամությունն այն աստիճան մեծ է, որ մեկի մորթած կենդանին մյուսը չի ուտում, մեկի կորուստը մյուսի համար փրկություն է համարվում»[236]։

Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Ֆերիոլն ու կաթոլիկ միսիոներները Թուրքական կառավարության միջոցով 1706 թ. աքսորեցին Ավետիք պատրիարքին և ապա՝ բանտարկեցին սկզբում Մարսելի մի վանքում (1707—1709 թվականներին), իսկ այնուհետև Բաստիլի բերդում, ուր նրան բռնի կաթոլիկ դարձրին։ Նման քայլը ավելի ևս սաստկացրեց հայադավանների ատելությունը դեպի կաթոլիկ աշխարհը[237]։

1705 թ.,— գրում է Յոզեֆ Համմերը,— կառավարության կողմից կաթոլիկների նկատմամբ սանձազերծված հալածանքները սաստկացան։ Հայ կաթոլիկները Կ. Պոլսում հիմնել էին մի տպարան, ուր «...ֆրանսիական դեսպանի անմիջական հովանավորության ներքո տպում էին թուրքիկներ պատրիարքի և ոչ կաթոլիկ հայերի դեմ։ Մեծ վեզիրը սաստիկ հսկել տվեց յեզվիտների տունը ու հրամայեց ձերբակալել այն բոլոր հայերին, որոնք հաճախում էին այնտեղ։ Նրանցից վաթսունը ուղարկվեցին տաժանակիր աշխատանքի ու թիավարության»[238]։ Այնուհետև, «...սուլթանական մի խաթթ-ի շերիֆ (հրովարտակ) արգելում էր նրանց (յեզվիտներին) ամեն մի պրոպագանդա ու հրամայում ձերբակալել բոլոր կաթոլիկադավան հայերին։ Այս վերջինների պատրիարքը՝ և վեց այլք, որոնք տքնում էին բանտերում, մահվան դատապարտվեցին մեծ վեզիրի (Չորլուլու Ալի փաշայի) կողմից։ Ձերբակալվածներից վեցը փրկեցին իրենց գլուխը ուրանալով իրենց կրոնն ու ընդունելով իսլամը։ Միայն մեկը՝ Կոմիտաս վարդապետը քաջություն ունեցավ մնալու որպես կաթոլիկ և պատրաստակամություն հայտնեց ընդունել մարտիրոսի դափնեպսակը»[239]։

Հետաքրքիր է նշել, որ այս բոլորի պատասխանատվությունը Համմերը վերագրում է յեզուիտների գործունեությանը։ «Եվ այսպես,— եզրակացնում է նա,— առաջին հալածանքները, որ կրեցին կաթոլիկ հայերը և Կ. Պոլսի հայկական տպարանի փակումը, միայն ու միայն յեզուիտների գործերն են. նրանց պետք է վերագրել նաև ոչ կաթոլիկ հայ պատրիարքի ձերբակալումը, հայադավան հայերի կրոնադարձությունն ու իսլամ ընդունելը...»[240]։

Ընդառաջելով Կ. Պոլսի ավետիքյանների դիմումին, Էջմիածնի կաթողիկոս Ալեքսանդր Ջուղայեցին ստիպված նամակ է գրում «Ի Կոստանդնուպոլիս մեծ վեզիրին օսմանցւոց, թե ես հայոց ազգին Ֆեթվա տուողն եմ, և դոքա իմ ժողովուրդք՝ հնազանդիլ ոչ կամին ինձ, և ելեալ են կրոնից մերոց, ահա ետու ֆեթվայ, զի պատժիցեք այս անուն և այն անուն թուով իբրև 175 կամ 200 անձինս, որք ֆրանկ են եղեալ Հայքդ»[241]։

Հայ կաթոլիկների դեմ կառավարության սանձազերծած հալածանքները գործադրվում էին ոչ միայն Կ. Պոլսում, այլև արևմտահայ բոլոր գավառներում։ Կաթոլիկ քարոզիչների՝ Պոլսում և արևմտահայ գավառներում առաջ բերած հուզումները, երկպառակությունները ու թշնամությունները ստիպեցին Ալեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսին դիմել այս անգամ Կլեմենտ պապին՝ 1709 թ. փետրվարի 25 թվակիր նամակով, ուր մասնավորապես նշում էր, որ պապի քարոզիչները «...ոչ պարտին աշխատ լինել առ մեզ, այլ առաւել առ այնոսիկ՝ որք ոչ կարդան զանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», մինչդեռ կաթոլիկ քարոզիչները ատելությամբ են լցված հայ քրիստոնյաների հանդեպ։ Նրանք «...զմեծք շրջապատեալ պաշարեն, արկանելով ի մէջ քրիստոնէիցս աղմուկ խռովութեան և փոխանակ շինութեան և հաստատութեան արկանեն յոլով գայթակղութեանս»։ Հիշեցնելով, որ պետությունը «...այլազգի է և ոչ պաշտոնեայ քրիստոնէութեան, զթով զթայ և նախախնամեալ պահպանէ զմեզ թարց զզուանաց, իսկ առ մեզ եկեալ պատրիքն ոչ այսպէս, այլ ներհակաւն վարին ընդ մեզ», ուստի կաթո-

234 Մ. Չամչյան, էջ 745։

235 Նույն տեղում, էջ 751։

236 "Tarih-i Cevdet", c. I, s. 160.

237 Այդ մասին մանրամասն տե՛ս Մ. Օրմանյան, էջ 2730—2743։

238 J. Hammer, t. XIII, p. 185.

239 Նույն տեղում։ Ի դեպ, այս Կոմիտաս վարդապետը Երեմիա Չելեբի Քյոմյուրճյանի եղբայրն էր (տե՛ս Մ. Օրմանյան, էջ 2756)։

240 J. Hammer, t. XIII, p. 187.

241 Մ. Օրմանյան, էջ 2752—2753։

ղիկոսն առաջարկում է, որ կաթոլիկ քարոզիչներին «թուղթ առաքես ի ձեռս մեր, և մեք ցուցցուք պատրոցն, թերևս կասեսցին յատելութենէ քրիստոնէից»[242]։ Կաթողիկոսի այս նամակը ոչ մի արդյունք չի տալիս[243]։

1720 թ. թուրքական կառավարությունը հայոց պատրիարքին տալիս է նոր հրովարտակ՝ թույլատրելով նրան կայսրության բոլոր շրջաններում ամենախիստ պատժի ենթարկել հայ կաթոլիկներին։ Պատրիարքը «...էառ ի նմանէ (սուլթանէ) հրովարտակ՝ ըմբռնել և մատնել ի գանս կամ ի ծառայութիւն թիոյ զայնոսիկ՝ որք ոչ գնան յեկեղեցիս հայոց։ Եվ իբրև տարածեցաւ հրաման այսր հրովարտակի յամենայն գաւառս թագաւորութեան, բազում տառապանք հասանէին ի վերայ բազմաց. ի Կոստանդինուպօլիս կարգեցան սպասաւորք յիշխանէն Ղալաթիոյ, որք սպասեալ յանցս ճանապարհաց մոտ ի գրունս եկեղեցեացն լատինացւոց՝ ըմբռնէին զորս միանգամ տեսանէին՝ ի հայոց գնալ անդր։ Եվ ապա առեալ դրամս ի նոցանէ ըստ իւրաքանչիւր կարի՝ յոմանց յիսուն դահեկան, յոմանց հարիւր և աւելի ևս էր զի ի բաց թողուին, և էր զի ի բանտ և ի կոճեղս մատնէին և զոր միանգամ գտանէին ուրէք կաթոլիկ անուամբ՝ ոչ թողուին առանց վնասու և տուգանաց։ Սոյնպես էր և առաւել ևս նաև յայլ քաղաքս ի Բերիա, ի Կարին, յեդեսիա, Անկիւրիա, ի յԱմիդ և այլն (ընդգծումը մերն է— Մ. Ջ.)»[244]։

1721 թ. Էրզրումի կուսակալը իր նահանգում համատարած հալածանք է սկսում հայ կաթոլիկների դեմ։ «Առաքեաց յետ այսորիկ— գրում է Մ. Ջամչյանը,— Բդէշխն Կարնոյ զբազում պաշտոնեայս ի Հասան Ղալայ և ի Բասէն՝ ըմբռնել զհայս, պատճառելով՝ թե ֆռանկք իցեն, և վաղվաղակի կալան նոքա ի հայոց երկու հարիւր իննսուն և վեց ոգիս՝ խառն յերկուց կողմանց ևս, և Բդէշխն կապեալ զամենեցուն նոցա զձեռս՝ կացոյց արտաքոյ քաղաքին՝ ի ժամանակի սաստիկ ձմերան՝ ի դեկտեմբերի 9, մինչև ոմանց ի նոցանէ սառեցան ոտք։ Եւ թէպէտ բազումք ի կապելոյ անտի աղաղակէին և երդնուին թէ մեք ոչ եմք յայնցանէ՝ զորոց ամբաստան եղև Խաչատուր վարդապետ, և աղաղակէին զԲդէշխն ողորմիլ ինքեանց, բայց ոչինչ անսաց Բդէշխն,

242 Նույն տեղում, էջ 2768—2768։
243 Նույն տեղում։
244 Մ. Ջամչյան, էջ 777։

այլ պահանջէր ի նոցանէ դրամս. և ապա գրեալ առ նոսա 1200 դահեկան, և այլ ինչ բազում էառ զայնս և արձակեաց զնոսա»[245]։

Այսպես, հայերի միջհամայնքային պայքարից օգուտ էին քաղում փաշաներն ու կուսակալները։ Մի այլ տեղ Մ. Ջամչյանն արձանագրում է, որ յուրաքանչյուր պատժի ենթակա հայից փաշաները գանձել են 2500 դահեկան[246]։

Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես Կոլոտի բոլոր ջանքերը՝ համոզելու հայ կաթոլիկներին հեռու մնալու օտարամոլությունից, ապարդյուն անցավ։ Ինչպես գրում է Մ. Օրմանյանը, պատրիարքն «...սկսաւ կաթոլիկական կուսակցութեան գլխավորները իրեն մոտ հրաւիրել, անոնց ցուցնել իրենց օտարասիրութեան վտանգները, պետական շրջանակներուն կասկածները, յառաջ եկած և տակաւին հաւանական երեւացող հետեւանքները, որոնք ամէնքը հետեւանք էին իրենց ազգային ուղղափառ եկեղեցին անարգելուն, և օտարադաւան եկեղեցիներ յաճախելուն»[247]։ Իսկ երբ պատրիարքը, —գրում է Մ. Օրմանյանը,— համոզվեց, որ խաղաղ միջոցներով հնարավոր չէ կաթոլիկների հետ լեզու գտնել և առկախ հարցերը լուծել, վախեցավ, որ պետությունը իրեն ևս կմեղադրի օտարասիրության մեջ, հարկադրված եղավ բացատրել կառավարությանը, թե կաթոլիկության հետամուտ եղողները ունեն «Իւրեանց ի ծածուկ առաջնորդ յազգէ ֆռանկաց, և մերժեն զհրամանս իմ, և նմա հնազանդին», իսկ դրա հիման վրա կառավարությունը խստագույնս սկսեց հալածել կաթոլիկադավան հայերին[248]։

Սխալ կլիներ, անշուշտ, ասել, որ հալածվում էին միայն հայ կաթոլիկները։ Մարքիզ դե Վիլնյովին նվիրված աշխատության մեջ Ա. Վանդալն այդ մասին գրում է. «Կես հարյուրամյակից ի վեր, քաղաքացիական պատերազմը տիրում էր հայ ազգի մեջ։ Հայադավանները ու կաթոլիկները հաջորդաբար գնում էին աշխարհիկ բռունցքը, այսինքն՝ թուրքական իշխանության հովանավորությունը, փոխադարձաբար իրար հալածելու նպատակով։ Բռունցքն (թուրքական պետության հովանավորության ձեռք բերումը— Մ. Ջ.) որոշ իմաստով գրված էր աճուրդի»[249]։ Օգտվելով թուրքական տիրապետող խավերի վրա ունեցած մեծ ազդեցությունից, ֆրանսիական դեսպանը, քաղա-

245 Նույն տեղում։
246 Նույն տեղում, էջ 778։
247 Մ. Օրմանյան, էջ 2826։
248 Նույն տեղում, էջ 2827—2828։
249 A. Vandal, p. 426.

քական նկատառումներով, միջամտում է հայերի ներհամայնքային պայքարին՝ նրանց հաշտեցնելու նպատակով։ «Խոհեմության ու ճարպկության շնորհիվ,— գրում է Ա. Վանդալը,— (ֆրանսիական) դեսպանը վերջակետ (sic!) դրեց այս ծայրահեղություններին։ Նա կարողացավ հերձվածողներին (հայադավաններին— Մ. Զ.) համոզել, որ Ֆրանսիան, հանդես գալով կաթոլիցիզմի անունով, չէր հետապնդում նրանց (հայադավանների— Մ. Զ.) անմիջական և ընդհանուր կրոնադարձությունը, որ նա սոսկ ուզում էր «մեղմացնել խոշընդոտները» երկու դավանանքների միջև, որ նրա նպատակը ոչ թե նվաճում, այլ միությունն էր։ Այդ հեռավոր նպատակին հասնելու համար, նա երկու կողմերի միջև փոխզիջումների վրա հիմնված ուղղակի աշխարհիկ մի համաձայնություն կայացնել տվեց։ Կաթոլիկները պարտավորվեցին որոշ տուրքեր վճարել այլախոհ (հայադավան) հոգևորականության օգտին, իսկ հերձվածողները թույլ էին տալու հայերին հաճախելու մեր (լատինական— Մ. Զ.) եկեղեցիները, և երբեք չգոռոզանալ այն խստագույն ֆերմաններով, որ իրենք ձեռք էին բերել (կառավարությունից) մեր համակրոնակիցների նկատմամբ»[250]։

Որ այդ բոլորը հետապնդում էր սոսկ քաղաքական նպատակ, բացահայտում է ինքը՝ Ա. Վանդալը, գրելով, որ իբր «հետ այսու ամբողջ հայ ազգի մոտ նկատվում էր ոգեշնչված մի շարժում դեպի Արևմուտք ու դեպի Ֆրանսիա (sic!)»[251]։

Մարքիզ դե Վիլնյովի հաջորդի՝ Միքայել-Անգեղոս Կասթելլան կոմսի (Michel-Ange, comte de Gastellane) և Նալլյան պատրիարքի օրոք, 1741 թ., նորից բորբոքվեցին կրքերը և «թագաւորական և եպարքոսական հրամաններ արձակուեցան օրինազանցութիւնները արգելելու և օրինազանցները պաշտպանելու, և ահա նորէն առիթ տրուեցաւ ձերբակալութեանց և բանտարկութեանց, տուգանաց և աքսորանաց, որոնք ուրիշ պատճառ չունէին, բայց եթե հայ կաթոլիկներուն ըմբոստութիւնը՝ լատիններէ հրապուրուելով, որոնք իրենց օտարահպատակութեան արտոնութենէն օգտուելով անփորձ և անպատիժ կը մնային և չէին խղճեր իրենց հետեւողները պետական օրենքներու ցասումին մատնել»[252]։

* * *

XVIII դարի 20-ական թվականներին Ռուսաստանը օգնության ձեռք մեկնեց Անդրկովկասի ժողովուրդներին։ 1720 թ. Պետրոս I-ի և վրացական թագավորի միջև համատեղ ռազմական գործողության մասին համաձայնություն կնքվեց։ Վրաց թագավորը քաջ գիտեր, որ անհրաժեշտ է համախմբել Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական գործին նվիրված ուժերը ու համատեղ հանդես գալ Թուրք-իրանական տիրապետության դեմ։

1722—1723 թվականներին **Պետրոս I-ը սկսեց** իր կասպիական արշավանքը։ Շվեդիայի հետ կնքած Նիշտադյան հաշտությունը և 1720 թ. ռուս-թուրքական պայմանագիրը որոշ առումով ապահովում էր Ռուսաստանի թիկունքը ու հնարավորություն ստեղծում կասպիական արշավանքի համար։ 1720 թ. պայմանագիրը Թուրքիայի հետ, ինչ խոսք, ռուսական դիվանագիտության հաղթանակն էր։ Եվ, անշուշտ, հենվելով այդ նույն պայմանագրի վրա, Պետրոս I-ը Մոսկվայից Աստրախան մեկնելուց առաջ, անհրաժեշտ համարեց պաշտոնապես հաղորդել Թուրքիային կասպիական արշավանք սկսելու մասին։ Այդ մասին 1722 թ. հուլիսին ռուսական դեսպան Նեպլյուևը պաշտոնապես տեղեկացրեց սուլթանական պալատին[253]։

Պետրոս I-ի կասպիական արշավանքը ամենևին ձեռնտու չէր Թուրքիային։ Դիմելով կասպիական արշավանքին, Ռուսաստանը ոչ միայն օգնության էր հասնում Անդրկովկասի ժողովուրդներին, այլև ապահովում էր իր թիկունքը Կովկասում։

Թուրքիան ուշի-ուշով հետևում էր Արևելքում տեղի ունեցող իրադարձություններին։ Իրանի անցուդարձերի մասին մայրաքաղաք անընդհատ զեկուցագրեր էր ուղարկում Էրզրումի վալի Սիլահդար Իբրա-

250 Նույն տեղում։

«Եւ ապա միջնորդութեամբ դեսպանին գաղղիացւոց առին արքունի հրովարտակ. զի մի ևս լիցի վնաս ու կռիւ ի վերայ բանի կաթոլիկութեան, և այս եղև ի սկզբին տարւոյն յամի տեառն 1736 ի տօնի յայտնութեան և գրեցին ոմանք վասն այսր թուղթ շնորհակալութեան առ թագաւորն Դաղղիոյ և առ սրբազան պապն, զի ասէին, թէ նոցա ակնարկութեամբ եղև այս» (Մ. Զամչյան, էջ 807—808)։

Երեք տարի անց, 1739 թ. Բելգրադյան հաշտության կնքումից հետո, մարքիզ դե Վիլնյովի միջնորդությամբ «Հայեր նոր Հաթթը շերիֆ կամ նուիրական հրովարտակ ստացան Մահմուտ Ա. սուլտանին կողմէն, որով վճռապես կորոշուէր, որ «զոր ինչ ունէին բաժին ժառանգութեան և որպիսի եղենակաւ վարէին զպաշտամունս և զսովորութիւնս իւրեանց» անխափան պահին «այժմ է առ-սպագայն» և այլևս փոխադարձ «վէճս և խռովութիւնս» չհանեն» (Մ. Օրմանյան, էջ 2923)։

251 *A. Vandal*, p. 426.

252 Մ. Օրմանյան, էջ 2934—2935։

253 Վ. Մ. Մարտիրոսյան, էջ 49։

հիմ փաշան, որը միաժամանակ իր կառավարությանը խորհուրդ էր տալիս անհապաղ գործի անցնել։ Առաջարկում էր նախ դաշինք կնքել Դաղստանի խաներ՝ Հաջի Դավուդի և Սուրխայի հետ և ապա հարձակվել Իրանի վրա։ Քաջատեղյակ Իրանի ծայրաստիճան խառնակ վիճակին, Էրզրումի կուսակալը նույնիսկ փորձել է առանց կենտրոնական կառավարության համաձայնության անցնել հարձակման։ 1134 թ. Էվաիլ-ի ռամազան (1723 թ. մայիս) թվակիր սուլթանական մի հրովարտակով կառավարությունը հայտնում է նրան Իրանի վրա չհարձակվել մինչև Իսպահանի անկումը։ «Քանի դեռ շահական Պարսկաստանի մայրաքաղաք Իսպահանը չի ընկել և քանի դեռ Իրանի վրա հարձակվելու մասին իմ՝ Բարձրագույն Դռան և իմ կայսերական համաձայնությունը չկա, տեղից չշարժվես։ Իսպահանի անկման լուրը ստանալուց հետո, անհապաղ անցիր հարձակման»[254]։

Որ սուլթանական կառավարությունը, իրոք, քաջատեղյակ էր Իրանի ու Անդրկովկասի քաղաքական վիճակին, երևում է Կ. Պոլսի ռուսական դեսպանների զեկուցագրերից։ Դեսպան Ալեքսեյ Դաշկովը 1720 թ. դեկտեմբերի 17-ին գրում էր. «Հայտնում եմ, որ այստեղի արքունիքը հավաստի տեղեկություններ ունի, որ Թուրքմենյան կամ Թուրքմանյան (Թեմուրլանկի կամ Թեմիրականի) սերնդի թաթարները հավաքվելով բազմութեամբ հանկարծակի հարձակում են գործել պարսից երկրի վրա, արդեն գրավել են որոշ ամրոցներ... և այստեղ այսպես են դատում, ինչ էլ որ եղած լինի, միևնույն է հուսով են, թե Բ. Դուռը դրանից օգուտ կքաղի՝ մի բան որ ժամանակը ցույց կտա»[255]։ Ի. Նեպլյուևը 1722 թ. փետրվարի 8-ին Կ. Պոլսից հայտնում էր, թե Թուրքիան քաջատեղյակ է Պարսկաստանի թուլությանը և նպատակ ունի «իր հովանավորության ներքո վերցնել Դաուդ-Բեկին ու Սուրխային»[256]։ Իսկ 1722 թ. մարտի 22-ի իր գաղտնի զեկուցագրում հայտնում էր, որ Բ. Դուռը Անդրկովկասում հակաիրանական ապստամբության կողմնակիցներին հրահրում էր, որպեսզի «...նրանք Պարսկաստանի հետ իրենց գործերը վարեն աներկյուղ, քանի որ պարսից թագավորին Բ. Դռնից օգնություն չի տրվի»[257]։

254 *I. H. Uzunçarşılı*, c. I, I kısım, s. 174.
255 Վ. Մ. Մարտիրոսյան, էջ 43։
256 Նույն տեղում, էջ 129—170։
257 Նույն տեղում։

Այնուհանդերձ, Թուրքերը զորք ու զինամթերք են կենտրոնացնում սահմանամերձ շրջաններում։ Այդ մասին հաղորդվում է Պետրոս դի Մարգիս Դիլանենցի ժամանակագրության մեջ[258]։ Թուրքերի ռազմական նախապատրաստությունների մասին գրում է նաև Ի. Նեպլյուևը։ Նա հայտնում էր իր կառավարությանը, թե «Վրաստան արշավելու համար Էրզրումի փաշայի տրամադրության տակ շուրջ 100.000 թուրքական զորք է կենտրոնացված»[259]։

Անդրկովկասում Թուրքիայի զավթողական նպատակների մասին է հայտնում Ի. Նեպլյուևը նույն թվականի մայիսի 9-ի իր զեկուցագրում[260]։ Պետրոս I-ը իր պատասխան-հրովարտակում Նեպլյուևին հանձնարարում էր աչալուրջ հետևել «Թուրքերի արարքներին» «նրանց իսկական մտադրություններին» և «հաճախակի զեկուցել» այդ մասին[261]։

Մինչ այդ մերձկասպյան շրջանները, ներառյալ Մազենդարանն ու Գիլանը, արդեն գրավված էին ռուսների կողմից։ Մերձկասպյան շրջանների գրավումը Թուրքական պլանների լիակատար ձախողում էր նշանակում, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, Թուրքերն իրենց առաջ նպատակ էին դրել զավթել ամբողջ Անդրկովկասն ու Իրանը։ Այս հողի վրա չափազանց սրվեցին ռուս-թուրքական հարաբերությունները, որին մեծապես ձգտում էր Անգլիան։ 1722 թ. հունիսի 18-ի զեկուցագրում Ի. Նեպլյուևը հայտնում էր, որ Կ. Պոլսի անգլիական դեսպանը, ձգտելով բորբոքել թշնամությունը Ռուսաստանի նկատմամբ, զրույցի ժամանակ հայտնել է վեզիրին, որ Ռուսաստանը տենդագին նախապատրաստվում է Թուրքիայի դեմ պատերազմի[262]։ Անգլիական դեսպանը շարունակ ներշնչում էր սուլթանին, որ «ռուս տիրակալը խոհեմ է ու ձգտում է Թուրքերին խաբել խաղաղությամբ։ Հիմա նա կգրավի պարսկական նահանգները, իսկ եթե սուլթանը զենքով նրան չարգելի, ապա նա (Ռուսաստանը— Մ. Զ.) այն կողմերից կհարձակվի Թուրքիայի վրա»[263]։

Ս. Մ. Սոլովյովը գրում է, թե անգլիական դեսպանը շարունակելով գրգռել Թուրքերին ընդդեմ ռուսների, հավաստիացնում էր նրանց, որ իբր Ռուսաստանի դեմ պատերազմը վտանգավոր չէ, որ կայսրու-

258 Նույն տեղում, էջ 44։
259 Նույն տեղում։
260 Նույն տեղում։
261 Նույն տեղում։
262 *А. Абдурахманов*, с. 25.
263 Նույն տեղում։

թյան մեջ խռովություններ կան և այլն, և այլն[264]։ Անգլիան գրգռիչ խորհուրդներից աստիճանաբար անցնում էր ուղղակի սպառնալիքների։ Ս. Մ. Սոլովյովի վկայությամբ, անգլիական դեսպանը զգուշացնում է Թուրքական կառավարությանը, որ եթե սուլթանը զենքի ուժով չկասեցնի ռուսների առաջխաղացումը կասպիականի ափերին, ապա «...անգլիացիներն ու մյուս եվրոպացիները դուրս կգան Թուրքիայից, ի մեծ վնաս սուլթանական գահին», իսկ եթե Թուրքիան պատերազմ հայտարարի Ռուսաստանին, «ապա (անգլիական) արքայից ֆինանսական օգնություն կստանա»[265]։

Շուտով Թուրքիան պատերազմ հայտարարեց Իրանին։ Ի. Հ. Ուզունչարշըլին ստիպված է ընդունել, որ Թուրքերը դրանով իսկ սկսեցին բացահայտ զավթողական քաղաքականություն վարել. «Այս անգամ արդեն պատերազմը ոչ թե իրանական ժողովուրդը աֆղաններից պաշտպանելու համար հայտարարվեց, այլ որոշվեց իրանական հողերը զավթել ու միացնել օսմանյան երկրին։ Եվ այդ հարձակման օրինական բնույթի մասին ֆեթվա տվեց շեյխուլիսլամ Աբդուլլահ էֆենդին»[266]։ Ֆեթվան որոշում էր թե ինչ վերաբերմունք պետք է ունենան Թուրքերը իրանցիների ու Անդրկովկասի քրիստոնյաների նկատմամբ։ «Ինչպիսի վերաբերմունք պետք է որդեգրել Իրանի հերձվածողների և այս երկրի բնիկ անհավատների, օրինակ, Վրաստանի բնակիչների ու այլոց նկատմամբ,— հարցնում է ֆեթվան։ — Պատասխան. ինչ վերաբերում է հերձվածողներին՝ պետք է սրի անցկացնել տղամարդկանց, ստրկության մատնել կանանց ու երեխաներին և տիրանալ նրանց ինչքերին։ Պետք է ստիպել կանանց և երեխաներին ընդունելու իսլամը, սակայն ոչ թե թրի, այլ ուրիշ միջոցներով։ Չի թույլատրվում ամուսնանալ նրանց կանանց հետ, մինչև որ վերջինները ուղղափառ (սուննի— Մ. Զ.) չդառնան։ Ինչ վերաբերում է տեղաբնիկ անհավատներին, պետք է նրանց կանանց ու երեխաներին ստրկության մատնել ու տիրանալ նրանց ունեցվածքին։ Առանց ուժ գործադրելու կարելի է ստիպել այս ստրուկներին գրկելու իսլամը, այսուհանդերձ թույլատրվում է ամուսնանալ դեռ իսլամը չընդունած կանանց հետ»[267]։

Թուրքիայի կողմից Իրանին պատերազմ հայտարարելը նոր իրադրություն ստեղծեց Անդրկովկասում։ Շվեդական երկարատև պատերազմից նոր դուրս եկած Ռուսաստանը դժվարանում էր ընդհարվել Թուրքիայի հետ, նամանավանդ, որ վերջինիս թիկունքում կանգնած էին Անգլիան և Ֆրանսիան։ Բացի այդ, ռուսները հանդիպել էին զորքերի փոխադրման, պարենավորման, բժշկասանիտարական մեծ դժվարությունների։ Ուստի Պետրոս I-ը ստիպված էր ընդհատել արշավանքը ու վերադառնալ Աստրախան։ Ռուսական դիվանագիտությունը եռանդուն գործունեություն ծավալեց Թուրքիայի հետ ռազմական ընդհարումից խուսափելու համար։ 1723 թ. հուլիսին Կ. Պոլսում հրավիրվեց այդ հարցի քննարկման շուրջ առաջին միջազգային կոնֆերանսը։ Բաց անելով կոնֆերանսը, ռուսական ռեզիդենտը Օսմանյան կայսրության նկատմամբ ցարի խաղաղ նպատակների մասին հաղորդելուց հետո հայտարարեց, որ ցարը «...դիմել էր այդ քայլին, որպես հավաստիացում Բարձրագույն Դռան նկատմամբ ունեցած բարի մտադրությունների մասին և Ֆրանսիային հարգանք մատուցելու իր բարեկամության ու խորհուրդների համար»[268]։

1723 թ. վերջերին կայացած կոնֆերանսի երկրորդ նիստում, նեպլյուևը մի անգամ ևս հավաստիացնում էր սուլթանական կառավարությանը ցարի խաղաղասիրական ձգտումների մասին ու հայտնում, որ մերձկասպյան շրջանները, ներառյալ Գիլանը, Մազենդարանն ու Աստարաբադը, 1723 թ. հոկտեմբերին շահ Թահմասպի հետ կնքված պայմանագրի համաձայն անցել են ռուսական գերիշխանության տակ։ Նա միաժամանակ արեց հետևյալ առաջարկները. 1) օսմանցիների և ռուսների միջև սահման ընդունել Կուր գետը։ Շամախին մնալու է Թուրքերի դաշնակից՝ Շիրվանի խան Դավուդ խանին և 2) քանի որ ցարի ու շահի միջև կնքված պայմանագրում ընդգծված էր Թշնամու գեմ Թշնամի, բարեկամի հետ բարեկամ կեր, ուստի ցարը պահանջում է Թուրքական կողմից դադարեցնել պատերազմական գործողությունները Իրանի դեմ[269]։ 1724 թ. հունվարի 13-ին Մ. դե Բոննակին հղած նամակում մեծ վեզիր Նեվշեհիրլի Իբրահիմ փաշան, նկատի ունենալով այս առաջարկները, դժգոհում էր ռուսներից. «Պարսկաստանի թագավորությունը մուսուլմանական երկիր լինելով, մեր բարեկամ՝ ցարը եկել է այնտեղ ու զավթել կասպիական ծովի մի շարք վայրերը. փոխանակ մենք նրան ասենք, թե դուք ինչ գործ ունեք մահմեդական մի թագավորությունում, նա թելադրող ոգով պահանջում է

264 Նույն տեղում, էջ 697։
265 Նույն տեղում։
266 *I. H. Uzunçarşılı*, c. IV, I kısım, s. 175.
267 *Mohammed Ali Hekmat*, p. 119.

268 *M. de Bonnac*, p. 202—203.
269 *I. H. Uzunçarşılı*, c. IV, I. kısım, s. 191.

մեզնից ամենևին չհարցնել այդ իրավունքի մասին, քանի որ մեծ կայսրությունը (Ռուսաստանը) Թուրքիայից ոչ մի տարածքային հավակնություն չունի»[270];

1724 թ. գարնանը ռուս-թուրքական հարաբերություններն այն աստիճան սրվեցին, որ օրը օրին սպասվում էր պատերազմի հայտարարությունը թուրքերի կողմից։ Ի. Հ. Ուզունչարշըլը, հենվելով մյուս-հիմմե դեֆթերների վրա, այդ մասին գրում է. «Կառավարությունը ռուսների դեմ պատերազմի նախապատրաստվելով՝ Աղուլի ու Թամանի բերդերում զինվորների համալրում կատարեց և գարնանը ռուսների դեմ պատերազմի մասին Անատոլիա և Ռումելի ֆերմաններ ուղարկվեցին, սակայն հետո գործը համաձայնության հասնելով, հրաժարվեց ռազմական ընդհարումներից»[271];

Ի վերջո, Մ. դե Բոննակի միջնորդությամբ երկու պետությունների միջև Կ. Պոլսում 1724 թ. հունիսի 24-ին (2 շեվվալ 1136 թ.) կնքվեց համաձայնություն[272]։ Կնքված պայմանագրով Թուրքիան ճանաչում էր մերձկասպյան շրջանների Ռուսաստանին միացումը ու հրաժարվում էր նվաճել ամբողջ Իրանը և պարտավորվում էր անհրաժեշտության դեպքում Ռուսաստանի հետ համատեղ հանդես գալ Իրանը զավթած աֆղանների դեմ։ Իր հերթին, Պետրոս I-ը հարկադրված եղավ ճանաչել թուրքերի կողմից Արևելյան Հայաստանի, Վրաստանի և Իրանի հյուսիսարևմտյան շրջանների գրավումը։

1723 թ. ամռանը թուրքերը երեք ճակատով հարձակվել էին Անդրբկովկասի ու Իրանի վրա։ Էրզրումի բեկլերբեկ Սիլահդար Իբրահիմ փաշան ներխուժել էր Վրաստան, Վանի վալիի՝ Քյոփրյուլյու— զաղե Աբդուլլահ փաշայի[273] զորքերը ասպատակում էին Արևելյան Հայաստանն ու Ադրբեջանը։ Բաղդադի վալի Հասան փաշան զավթում էր հյուսիսարևմտյան Իրանի՝ Համադանի ու Քերմանշահի շրջանները։ Թիֆլիսը գրավելուց հետո, 1723 թ. աշնանը թուրքական զորքերը շարժվում են դեպի Գանձակ։ Սակայն այստեղ՝ հայերն ու ադրբեջանցիները մի քանի օր տևող մարտերում ծանր պարտության են մատնում թուրքական բանակին և հարկադրում նահանջել։ Թուրքերը, որպես օսմանի դավանանքին պատկանող մուսուլմաններ, դաժան վերաբերմունք ունեին նաև դեպի շիա-ադրբեջանցիները։

1724 թ. թուրքական զորքերը Քյոփրյուլյու փաշայի գլխավորությամբ Կարսի վրայով շարժվեցին Երևան։ Թուրքերի հիմնական նպատակն էր «...վերացնել Ռուսաստանի և Թուրքիայի արանքում խցկված հայկական սեպը»[274]։ Եղվարդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքերը հաղթանակ տարան, և նրանց թվում էր, թե հեշտությամբ կգրավեն Երևանը։ Սակայն Կարբի գյուղի մոտ նրանք հանդիպեցին տեղի հայերի լուրջ դիմադրությանը, որը զարմացրել էր Աբդուլլահ փաշային։ Գյուղը գրավելուց հետո նա հարցրել էր բնակիչներին. «Չի՞ կայ ձեր զինուորիլ վասն երկրիս, որոնց տէրութիւնն ոչ է ձեր»[275]։

Հունիսի 7-ին թուրքերը պաշարեցին Երևանը։ Պաշարումը տևել է երեք ամիս։ Հայերը հերոսական դիմադրություն են ցույց տվել թուրքերին։ Երևանի հերոսամարտը մանրամասն նկարագրված է Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն» աշխատության մեջ։ Երևանի պաշարման մասին ընդարձակ տեղեկություններ կան նաև թուրք տարեգիր Չելեբիզադեի մոտ[276]։ Հայ մարտիկները կամ սրի քաշվեցին և կամ գետահեղձ եղան, կանայք և երեխաները գերեվարվեցին. «Կոտորեցան հզօրքն հայոց ի սուր, սուրերի և գետահեղձ եղեն բազումք ի նոցանէ։ Ի գերութիւն վարեցին օսմանցիքն զկանայս նոցա և զմանկունս և տարեալ լցին զնոսա ի բանակ իւրեանց և շար գործովք ապականեցին զնոսա»[277]։ Երևանը թուրքերը գրավում են 1724 թ. սեպտեմբերի 22-ին և ոչ թե հունիսի 7-ին, ինչպես գրում է Աբրահամ Երևանցին։ Այդ մասին է վկայում Ի. Նեպլյուևի զեկուցագիրը[278]։ Խոսելով Քյոփրյուլյու Աբդուլլահ փաշայի կատարած վայրագությունների մասին, Անանուն Վանեցի տարեգիրը գրում է. «Եւ հրամանաւ թագաւորին Ի ՌՃՀԲ (1723) եկին ի Վան Ամասիոյ փաշայն, Ուրհայու փաշայն, Չանգրու փաշայն, և այլ փաշայք զօրօք իւրեանց են հեծելովք առ Ավտուլլահ փաշայն, որ եղև նոցա զօրագլուխ և սարասքար, եւ գնա-

---

270 *M. de Bonnac*, p. 214—215.

271 *I. H. Uzunçarşılı*, c. IV, I kısım, s. 192.

272 Պայմանագրի կետերի մասին տե՛ս նույն տեղում, էջ 193—199։

273 Ի դեպ՝ այս Աբդուլլահ Քյոփրյուլյու փաշան, Անանուն Վանեցու վկայությամբ, դեռևս 1719 թ. եղել է Վանում «Հրամանաւ-թագաւորին ...Դաւթիշ (քննիչ) և դատաստան, քննել և իմանալ և հատուցնել ըստ գործոց» Վանի ու նրա շրջակայքի պետական գործերը («Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 369)։

274 «Армяно-русские отношения в первой трети XVIII в.», т. II, ч. II, док. 315, с. 249, 250.

275 Ա. Երևանցի, Պատմութիւն պատերազմացն, Երևան, 1938, էջ 11։

276 "Tarih-i Çelebizade", c. VI, s. 219—223.

277 Ա. Երևանցի, նշվ. աշխ., էջ 22։

278 Վ. Մ. Մարտիրոսյան, էջ 148—149։

ցին ի վերայ Պարսից և առին զՄոյ, զՈրմի, զԵրևան, զԹավրիզ, զՇամատան, զՄուղան, և այլ բազում փոքր քաղաքս։

Բայց թե ո՞րչափ անողորմ արիւնս հեղին և գերի բերին, որ ի թիւ և ի գիր ոչ մտանէ, զի ոչ մնաց աշխարհ, որ ԴՃ, ԵՃ (400—500) գերի ոչ տարան, մինչ զի, յՍտամբօլ Անկիւրեցի նորընծայ կաթողիկոս ԸՃ (800) գերի գնեալ ազատեաց, թող զայն որ ուրացուցին, և այլազգի գերիս կրկին էին քան զքրիստոնէից գերիս, որք ամենեքեան ցիր և ցան եղեն, և ցրուեալ խառնեցան յայլ ցեղս և յազգս և ի լեզուս օտարս, և նեղեալք ըստ ամենայն յամենայնի»[279]։

Այստեղ հետաքրքիր է նշել նաև դե Սագրեդոյի վկայությունները Երևանի գրավման ու հայերի՝ թուրքերին ցույց տված դիմադրության մասին։ «Թուրքական բանակի մյուս թևը,— գրում է նա,— որ մուտք գործեց Պարսկաստան Երևանի կողմից, գրավեց գրոհով այս վայրն առաջին իսկ հարձակումից (sic!). կոտորվեցին երեսուն հազար հայեր։ Պաշարված բերդը դիմադրեց երկու ամիս, իսկ մերձակա շրջանների բնակիչները ավելի քիչ դիմադրություն ցույց տվեցին։ Թուրքերի դեմ Ղափանի լեռների հայերը քաջությամբ կռվեցին... հենց այս հայերն էին, որ անցյալ տարի, միանալով շահ Թահմասպին, իրենց մեծ լուման էին ներդրել Թավրիզի պատերի տակ թուրքական բանակի կրած պարտության գործում։ Թուրքերը հանդգնեցին երկրորդ անգամ պաշարել Թավրիզը միայն այն ժամանակ, երբ իմացան, որ նրանք (իմա՝ հայերը) չեն մասնակցում (պաշտպանությանը)»[280]։

1724—1730 թթ. ընթացքում հայերը ադրբեջանցիների հետ համատեղ պայքար ծավալեցին թուրքական զավթիչների դեմ և մի շարք վայրերում, հատկապես Ղարաբաղում, Սյունիքում ու Ղափանում, լուրջ հարվածներ հասցրին նրանց։ Սյունիքի ու Ղափանի ազատագրական պայքարը ղեկավարել է հայ ժողովրդի պանծալի զավակ Դավիթ-Բեկը, իսկ նրա մահից հետո՝ Մխիթար Սպարապետը։

Երևանն ու Նախիջևանը գրավելուց հետո թուրքերին հաջողվում է իրենց գերիշխանությանը ենթարկել նաև հյուսիսարևմտյան Իրանի զգալի մասը, ներառյալ, Թավրիզը։ Այս երկրամասում հայերի ու տեղաբնիկների նկատմամբ թուրքերի կատարած վայրագությունների մասին մի ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «Ի թուին ՌՃՀԲ (= 1723) յարեաւ ազգն օսմանցւոց ի վերայ ազգին պարսից. և

279 «Մանր ժամանակագրություններ» հ. 2, էջ 370—371։

280 *De Sagredo*, Histoire de l'empire ottoman, t. VII, Paris, 1732, p. 345—346.

գնացեալ էառ զմեծ քաղաքն Շահաստան, որ է Թէվրիզ բազում եւ անթիւ զօրօք մեծ թոփերով և ջեպախանայով, և այլ անթիւ քաղաք և զաւառայք և գիւղք ամենայն առին և աւերեցին։ Եւ զտէրս նոցին զամենայն ի սուր մաշեցին, թե հայ և թե պարսիկ, զկանայս և զտղայս, և զամէնայն ինչս գերի վարեցին, որ ոչ կարէ ընդ գրով պատմիլ զիրն և զաղէտ նոցին, և զդառն կսկիծ նոցին, զի բաժանեցան հայր յորդւոյ, և որդի ի մօրէ, այր ի կնոջէ, և կին յառնէ, և տիրեցին օսմանցիքն աշխարհին պարսից հինգ ամ»[281]։

Գահակալական պայքարը, ներքին խռովությունները հնարավորություն չէին տալիս Իրանին հակահարված տալու թուրքերին։ 1725 թ., աֆղանական ավատական տարբեր խմբավորումների միջև ծավալված պայքարի հետևանքով, սպանվեց Մահմուդ շահը և իշխանությունն անցավ նրա հորեղբորորդի Աշրաֆին (ի դեպ նշենք, որ այս նույն ժամանակ Արդեբիլում էր գտնվում իշխանությունից զրկված թագաժառանգ Թահմասպ II-ը)։ Աշրաֆը 1727 թ. հոկտեմբերի 23-ին Համադանում Իրանի համար վերին աստիճանի ծանր հաշտության պայմանագիր ստորագրեց. համաձայն որի 1) շահը ընդունում էր Թուրքիայի սուլթան Ահմեդ III (1703—1730) որպես բոլոր մուսուլման-սուննիների հոգևոր պետ՝ խալիֆ, 2) շահը ճանաչում էր սուլթանից իր վասալությունը և 3) բացի 1724 թ. հունիսի 24-ին Կ. Պոլսում կնքված ռուս-թուրքական պայմանագրով նախատեսված տարածքից, Աշրաֆը Թուրքիային էր զիջում նաև համարյա ամբողջ Իրանի 2/5-րդ մասը[282]։ «Աշրաֆը Բարձրագույն Դռանը նվիրաբերելով Իրանի տարածքի մի զգալի մասը, որոշ առումով, գնում էր Իրանի գահը»[283],— գրում է Մուհամմեդ-Ալի Հեքմաթը։ Օսմանյան կայսրությունն, անշուշտ, բոլոր հիմքերն ուներ գոհ լինելու այս պայմանագրից։ «Աշրաֆի հետ կնքված պայմանագիրը,— գրում է Մ. Մինյոն,— ամենափառահեղներից էր, որ երբևիցե կնքել էին օսմանցիները Պարսկաստանի հետ, քանի որ այդ պայմանագիրը Բարձրագույն Դռանն էր հանձնում այս ընդարձակ թագավորության (Իրանի— Մ. Զ.) զգալի մասը»[284]։

1727 թ. Համադանի պայմանագիրը փաստորեն 1724 թ. Կ. Պոլսի ռուս-թուրքական պայմանագրի կետերի խախտում էր նշանակում,

281 Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 650։

282 *Mohammed Ali Hekmat*, p. 183—184.

283 Նույն տեղում, էջ 184։

284 *M. Mignot*, Histoire de l'empire ottoman depuis son origine jusqu'à la paix de Belgrade en 1740, Paris, 1742, p. 306—307 (այսուհետև՝ *M. Mignot*).

Սակայն Թուրքական դիվանագիտությունն արեց ամեն ինչ Ռուսաստանի հետ չընդհարվելու համար։ 1729 թ. փետրվարի 13-ին Ռեշտում Պետրոս II-ի և Աշրաֆի միջև կնքվեց պայմանագիր, համաձայն որի Իրանի տիրակալը ճանաչում էր մերձկասպյան տարածքի միացումը Ռուսաստանին, բացառությամբ Մազենդարանի ու Աստարաբադի, այն պայմանով, որ Աշրաֆը այդ նահանգները չէր հանձնելու որևէ մի այլ երրորդ պետության[285]։

Պետրոս I-ի մահը[286], ինչ խոսք, կաթվածահար էր դարձրել Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը։ Եկատերինա I ու Ռուսաստանի ղեկավար շրջանները խուսափում էին պետրոսյան արևելյան ակտիվ քաղաքականությունից։ Այսուհանդերձ, ինչպես գրում է Գ. Գ. Պայճաձեն, «Իր արտաքին քաղաքական կուրսը իրագործելիս Եկատերինա I-ի կառավարությունը Թուրքական զավթիչների դեմ պայքարող Վրաստանին ու Հայաստանին նայում էր որպես օժանդակ ուժի ու նրանց նկատմամբ վարում էր բարոյական աջակցության ու ոգեշնչման քաղաքականություն, չհանդգնելով սակայն ցույց տալու իրական օգնություն, որպեսզի չսրեր իր հարաբերությունները Թուրքիայի հետ»[287]։

Կնքելով 1727 թ. Համադանի պայմանագիրը, թվում էր, թե Թուրքիայի գործերը խիստ բարեհաջող են ընթանում ու նրա ղեկավար շրջանները կարող են նստել դափնիների վրա։ Իրականում, սակայն, և՛ պատերազմական տարիներին, և՛ Աշրաֆի հետ հաշտություն կնքելուց հետո, երկրի ներքին վիճակը ծայրահեղ վատացել էր։ Փոքր Ասիայում գլուխ էին բարձրացրել ավազակաբարո լևենդներն[288] ու սեկպաններները[289], որոնք կատարյալ ազատ ու չարիք էին դարձել գյուղացիության

285 Mohammed Ali Hekmat, p. 184.

286 Հետաքրքիր է նշել, որ պատմագիր Ռաշիդը, անդրադառնալով Պետրոս I մահվանը, բավարարված գրում է, թե նա հեռացավ այս երկրից ու ընկավ դժոխք (տե՛ս J. Hammer, t. XIV, p. 487)։

287 Г. Г. Пайчадзе, с. 96.

288 Ենթադրվում է, որ լևենդ բառը ծագել է իտալերեն levantius, այսինքն՝ «արևելցի» և կամ ֆրանսերեն levée «զինվորագրում» բառից (տե՛ս "Islâm ansiklopedisi", c. VII, s. 46—48)։ XVII դարում Թուրքական բանակի առանձին մասը կազմող լևենդները իսլամացած նախկին տեղարնիկներն ու գերազանցապես հույներն էին։

289 Սեկպանները կազմում էին ենիչերական զորքի մի մասը, որի պարտականությունն էր հսկել արքունի որսորդական շներին։

գլխին։ Կայսրության դեմ ապստամբել էր անկախության ձգտող Եգիպտոսի ժողովուրդը։ Խռովություններ էին ծագել Ղրիմում[290]։

Շուտով Իրանում տեղի ունեցան քաղաքական լուրջ փոփոխություններ։ Իրանի հյուսիսում ժողովրդական զանգվածները Թուրքերի ու նրանց հետ համագործակցող աֆղանական զավթիչների դեմ ապստամբություն բարձրացրեցին։ Ապստամբ զորքերի գլուխ կանգնեց եռանդուն և ընդունակ ռազմական առաջնորդ Նադիրկուլին։ 1726 թ. Նադիրն իր ջոկատով ծառայության մեջ մտավ Մազենդարանում գտնվող շահ Թահմասպի մոտ և երեք տարում աֆղան զավթիչների զորքերը ջարդեց ու փաստորեն տիրացավ Իրանին։ 1729—1730 թթ. ընթացքում նա գլխովին ջախջախեց Աշրաֆին։

Նադիրի հաջողությունները խիստ անհանգստացրեցին Թուրքերին։ Կ. Պոլսում հրավիրվեց գերագույն դիվան, ուր շեյխ-ուլ-իսլամը պահանջում էր պաշտպանել հավատակից Աշրաֆին, հատուկ ընդգծելով, որ Նադիրը շուտով կհարձակվի Թուրքիայի վրա, և մինչև իսկ կդիմի Ռուսաստանի օգնությանը։ Հիրավի, 1730 թ. ամռանը Նադիրը դուրս եկավ Թուրքերի դեմ, պարտության մատնեց ու վտարեց նրանց Համադանից, Քերմանշահից և իրանական Ադրբեջանից։

Այս իրավիճակում, սուլթան Ահմեդ III-ը Երևանի, Թիֆլիսի, Գյանջայի, Կարսի և Վանի զորահրամանատարներին ամենախիստ հրամաններով ֆերմաններ էր ուղարկում ու պահանջում, որ նրանք դիմադրեն Նադիրին։ Չդիմադրելու դեպքում, սուլթանը ֆերմաններում նրանց մահապատիժ էր նախատեսում։ «Եթե թուլն իսկ լինեք, չեք փրկվի իմ ձեռքից»,— հայտարարում էր սուլթանը[291]։ Նա միաժամանակ հայտնում էր, որ անձամբ արշավանք է ձեռնարկելու Իրանի դեմ։ Եվ երբ արշավանքի նախապատրաստությունը ավարտվել էր, «...տարիների ընթացքում հանգիստ կյանքի սովոր փադիշահը, մի քանի ժամ տատանվելուց հետո, հայտարարեց, թե ինքը չի գնալու արշավանքի, մեծ վեզիրի չորս կողմը ծովի վերածվեց»[292]։

1730 թ. սեպտեմբերին Կ. Պոլսում բռնկվեց քաղաքային արհեստավորության մեծ ապստամբություն, որի հետևանքով երկար տարիներ իշխանության ղեկն իր ձեռքում պահած Նեվշեհիրլի Դամադ Իբրահիմ փաշան սպանվեց, իսկ սուլթան Ահմեդ III-ը ստիպված եղավ հրա-

290 J. Hammer, t. XIV, p. 175.

291 I. H. Uzunçarşılı, c. IV. I kısım, s. 201.

292 Նույն տեղում։

ժարվել գահից հօգուտ իր եղբորորդի Մահմուդի։ 1731 թ. մարտ-օգոստոս ամիսներին Կ. Պոլսում տեղի ունեցան քաղաքային ազգաբնակչության նոր ելույթներ, որոնց մասնակցում էին նաև ենիչերիները։ Այդ բոլորը սասանում էին Օսմանյան կայսրության հզորությունը։

Ապստամբության համար առիթ ծառայեց, ինչպես մատնանշում են աղբյուրները, Թուրքերի պարտությունն իրանական ճակատում ու Թավրիզի անկման լուրը։ Սակայն աղբյուրների վկայություններից երևվում է նաև, որ Պատրոնա Խալիլի ապստամբության հիմքում ընկած էին սուր հասարակական հակամարտություններ։ Մեր նպատակից դուրս է այստեղ անդրադառնալ այդ հարցերին։ Նշենք միայն, որ, աղբյուրների վկայությամբ, ապստամբության ժամանակ դժնդակ օրեր է ապրել պոլսահայ համայնքը։ Ընկնելով ծանր կացության մեջ, սուլթան Ահմեդ III-ը փորձել է Կ. Պոլսի քրիստոնյաներին, ի թիվս որոնց հայերին, օգտագործել ապստամբների դեմ, մյուս կողմից, ապստամբներն իրենց հերթին, փորձել են քրիստոնյաներին մասնակից դարձնել կատարվող կողոպուտներին։ «Պատրոնա Խալիլի խռովարարները,— գրում է Մ. Մինյոն— կողոպտեցին նաև Գալատայի և Պերայի կառավարչի տունը, երկու թաղամասեր, որոնք համարյա ամբողջությամբ բնակեցված են քրիստոնյաներով և հրեաներով։ Քրիստոնյաները մշտապես վախենում էին խռովությանը որևէ կերպ մասնակցություն ունենալուց։ Կառավարչի տունը խուզարկող ու կողոպտող ենիչերիները համարյա հարկադրում էին նրանց հավաքել պատուհանների տակից այն ոսկյա ու արծաթյա իրերը, որոնք առանց որևէ խտրության նետվում էին փողոց»[293]։ Իր հերթին, նույն հեղինակի վկայությամբ, Պատրոնա Խալիլը «հրամայեց, որ քրիստոնյաները ոչ մի տեղ չհավաքվեն, և ոչ մի ձևով մասնակցություն չունենան ընթացիկ իրադարձություններին։ Միայն այդ դեպքում նրանց նկատմամբ բռնություն չի կատարվի։ Պատրոնան այս նախազգուշական քայլին դիմեց, որովհետև հայտարարված էր արդեն, որ կայսրը (սուլթանը) մտածում էր դիմելու քրիստոնյաների օգնությանը»[294]։

Օգտվելով Թուրքերի ծանր վիճակից, շահ Թահմասպը 1731 թ. գարնան ու ամռան ամիսներին երկու անգամ փորձեց գրավել Երևանի բերդը, սակայն անհաջողության մատնվեց։ Ավելին, թուրքական զորքերը Հեքիմ-օղլու Ալի փաշայի գլխավորությամբ 1731 թ. հոկտեմբերին ուղղություն վերցրին դեպի Թավրիզ[295]։ Նման պայմաններում, 1732 թ. հունվարի 10-ին (12 ռեջեբ 1144 թ.) թուրքերը շահ Թահմասպի հետ հաշտություն կնքեցին, համաձայն որի Երևանը, Գանձակը, Նախիջևանը, Թիֆլիսը, Շիրվանը, Շամախին, Դաղստանը, Քարթլին մնում էին օսմանցիներին, իսկ ամբողջ հյուսիսարևմտյան Իրանը, ներառյալ Թավրիզը, հանձնվում էր Սեֆյան Իրանին[296]։

Գտնվելով Արևելքում ու իմանալով պայմանագրի հետևանքով Իրանում ծայր առած դժգոհության մասին, Նադիրկուլին գալով Իսպահան գահընկեց արեց շահ Թահմասպին և իր խնամակալության ներքո Իրանի շահ հռչակեց նրա նորածին որդուն՝ Աբաս II-ին։ Փաստորեն Նադիրկուլին դարձավ Իրանի ինքնիշխան տիրակալը։ Այնուհետև նա Բաղդադի վալի Ահմեդ փաշային հաղորդեց, որ չեղյալ է համարում Թուրքերի հետ կնքված պայմանագիրը և շարունակելու է պատերազմը[297]։

Իրանում կատարված այս քաղաքական նոր փոփոխությունները որոշ ուղղումներ մտցրեցին նաև ռուսական արևելյան քաղաքականության մեջ։ Ռուսական կառավարությունը ձգտում էր իր կողմը գրավել Նադիրին, որպեսզի կանխեր Թուրքերի հետ դաշինք կնքելու որևէ մի հնարավորություն։ Եվ Աննա Իվանովնայի կառավարությունը 1732 թ. հունվարի 21-ին Ռեշտում Իրանի հետ կնքեց պայմանագիր, համաձայն որի Գիլանը, Մազենդարանը և Աստարաբադը հանձնվում էր Իրանին։

Անցնելով Թուրքերի դեմ հարձակման, Նադիրկուլին պատերազմական գործողություններ սկսեց 1733 թ. ամռանը՝ Բաղդադի շուրջը։ Եթե սկզբում հաջողությունը ուղեկցեց Թուրքերին (Թուրքական զորքերի գերագույն հրամանատար սերասքյար Թոփալ Օսմանը պարտություն մատնեց Նադիրին), ապա նույն տարվա նոյեմբերին Քերքուկի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում Թուրքերը գլխովին ջախջախվեցին։ Ճակատամարտում իր մահը գտավ սերասքյար Թոփալ Օսմանը[298]։

Առաջին ընդհարումը Նադիրի և Աբդուլլահ փաշայի միջև տեղի է

---

293 *M. Mignot*, p. 335.

294 Նույն տեղում, էջ 336։

295 *I. H. Uzunçarşılı*, c. IV, I kısım, s 221.

296 Նույն տեղում, էջ 222։

297 Նույն տեղում, էջ 223։

298 Նույն տեղում, էջ 226։

ունենում, ըստ Աբրահամ Կրետացու, 1735 թ. ապրիլին[299], իսկ ըստ թուրքական աղբյուրների՝ մայիսի 25-ին (2 մուհարրեմ 1148) Կարսի մոտ, որը կողմերից որևէ մեկին առավելություն չի տալիս։ «Եւ յորժամ էանց դառնութիւն օդոյն ձմեռայնոյ, և կակղացաւ սակաւ մի եղանակն և մտաք ի թուականն ՃՌԶԴ (1735), և ապրիլ ամսոյն,— կարդում ենք Ա. Կրետացու մոտ,— շուեաց խաղաց Թահմազ (զուլի) խանն ի վերա Ղարսայ քաղաքին՝ կողմամբն Ղաղախու և Լօռու՝ մինչև սպառեալ էր ձիւնն ի լեռնային կողմանցն յայնցանէ։ Քանզի լուաք ի զօրաց պարսից և մերձակայից խանից, թէ զծործոր մի յորում կամէին անցանել և շրջիլ ի վերա Ղարսայ, սուսերօք իւրեանց պեղեցին, հատին և ճանապարհորդեցին անցանել։ Որ և ի գիշերին այնմիկ կըրկին ձիւն եկեալ ելից զճանապարհն, յորում աշխատեալ էին աւուրս Բ(2)։ Եւ ապա այնուհետև ընդ այլ ճանապարհ անց գտեալ բազում դժուարութեամբ հասին ի սահմանս Ղարսայ։

Որ և ելեալ ընդդէմ միմեանց զմի օր պատերազմեցան ընդ իրեարս։ Եւ երկուց կողմանց անկան մեռեալք և վիրաւորեալք՝ իբրու Զ(6)—Է(7) հարիւրից։ Բայց կողմն հագարացւոց ի փախուստ դարձան։ Եւ խանն դարձաւ ի բանակատեղն իւր՝ ի տեղի անուանեալ Եախնի Թէփէ»[300]։

Պատերազմող երկու կողմերի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1735 թ. հունիսի 8-ին Եղվարդի մոտ։ «Զի յետ շաբաթուն յաւուրն կիրակէի, որ էր Ը(8) ամսոյն հունիսի, ի յերկրորդ ժամէ աւուրն սկսան պատերազմիլ»[301]։ Ճակատամարտի գունեղ ու

299 Աբրահամ Կրետացի, Պատմութիւն անցիցն իւրոց և Նադր-շահին Պարսից, քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ Ն. Կ. Ղորղանյանի, Երևան, 1973, էջ 48 (այսուհետև՝ Ա. Կրետացի)։

300 Նույն տեղում, էջ 48։

301 Նույն տեղում, էջ 58—61։ «Իսկ ի խմբել պատերազմին՝ որովհետև վասն սակաւութեան պարսից զօրաց պարտեան օսմանցիքն, և հեռացան ի ստորոտէ լեառնն Արայի և դիմեցին ի վերա պարսից զօրացն, և սոցա խոյս տուեալ սակաւ սակաւ հեռացուցին ի լեռնոտէ անտի և ածին մինչև Եղուարդայ դաշտն։ Ապա ելեալ է ձորոց ի կողմանցն Երևանու զօրք պարսից, որպես ասեն թուք ԺԸՌ (18000)աց ... Եւ խմբեցան ընդ միմեանս ճակատ առ ճակատ... Եւ յանկարծակի խանն հասաւ ի Թօփխանային օսմանցւոց և տիրեաց։ Եւ յորժամ տեսին և լուան զտիրելն Թօփխանային առժամայն ի փախուստ դարձան օսմանցիքն և պարսիկքն՝ զկնի կոտորելով... հասուցին զմի ծայրն ի վերի կողմն Արայի լեառն՝ հանդէպ Սաղմոսավանից և զվարի ծայրն զօրաց՝ ի կողմն Աշտարակու, և մի միջև եղեալսն՝ դէմ ածին Քարսահ գետոյն ի դիմաց Յոհանավանից և Կարբու և Մօղնու։ Որ և թուի, թէ բազումք էին զահավիժեալքն ի ձորն Քարսահ գետոյն, քան թէ սրով սպանեալքն»։

մանրամասն նկարագրությունը տալիս է Աբրահամ Կրետացին։ Զնացած թուրքերի թվական բացարձակ գերակշռությանը՝ Նադիրը գլխովին ջախջախեց նրանց։ Հ. Մալկոլմը, հենվելով Նադիրի կենսագիր Մուհամմեդ-Քյազիմի վրա, գրում է. «Աբդուլլահ (փաշան) վստահ իր զորքերի գերազանցության վրա հարձակվեց պարսիկների վրա Երևանի մոտ գտնվող Բեհավենդի (sic!) հովտում։ Պարսիկ հրամանատարը (Նադիրը), տեսնելով նրա առաջխաղացումը, մեծ ոգեշնչությամբ դիմեց իր զորքերին։ «Թշնամիներն,— ասաց նա,— մեկի դեմ ութն են, սա առավել ևս պատճառ պետք է հանդիսանա, որ տանենք փառահեղ ճակատամարտ»[302]։ Հիրավի, մեծ էին թուրքերի կորուստները, սպանվեց ինքը՝ Աբդուլլահ փաշան։

Այս հաղթանակի անմիջական հետևանքը համարյա ամբողջ Անդրկովկասի զավթումն էր Իրանի կողմից։ «Ագահ ու դաժան Նադիրը» (Կ. Մարքս) թուրքերի դեմ մղած պատերազմում օգտագործեց հայ ու վրաց զորքերը։ Ինչպես իրավացիորեն գրում է Գ. Ա. Գալոյանը, «Հայ մելիքներն և վրաց թագավորները Թուրքիայի դեմ իրենց պայքարում սատարեցին Նադիրին, որպեսզի նրա օգնությամբ կարողանան վտարել թուրքերին, իսկ այնուհետև զենքը շուռ տալ նրա դեմ։ Նրանք ելնում էին այն բանից, որ նման քաղաքականությունը համահնչյուն է Պարսկաստանի նկատմամբ ռուսական քաղաքականության հետ։ Քարթլիի թագավոր Թեյմուրազ I-ը, բացատրելով Նադիրին սատարելու պատճառների մասին, 1736 թ. մարտի 25-ին գրում էր կայսրուհի Աննա Իվանովնային. «Քանի որ մենք տեղեկացանք, որ Թահմասպկուլի խանը (Նադիրը) հավատարմություն հանդես բերավ ձեզ և դուք բարյացակամություն ցուցաբերեցիք նրան, այդ պատճառով մենք ինչով որ կարողացանք, նրան հավատարմություն ու ծառայություն մատուցեցինք»[303]։

Նադիրը ոչ միայն զավթում է Անդրկովկասը, այլև Ա. Կրետացու վկայությամբ ասպատակիչ արշավանք է ձեռնարկում դեպի Արևմտյան Հայաստանի նահանգները՝ ավերելով երկրամասը ու գերեվարելով բնակչության մի մասին։ «Եւ ինքն խանն անց գնաց ի վերա Ղարսայ և պաշարեաց զնա ամսօրեայ ժամանակ։ Արգելեաց զգետն որ ոռոգանէր և արբուցաներ զքաղաքն, կտրեաց զջուրն, որ ի վերուստ գայր

302 *John Malcolm*, p. 86.

303 *Г. А. Галоян*, с. 80.

խողովակով ի բերդն։ Եւ յամենայն կողմանց նեղ էարկ զքաղաքն։ Եւ պատեալ պաշարեցան յամենայն դիմաց։

Այլ և ասպատակս արձակեաց երկուց կողմանց, մինչ գնայր ի Ղարս՝ յաջ և յահեակ, զմի կողմն ի վերա Պայազիտու կրկին և զմիւս կողմն ի վերա Կաղզուանայ և ինքն ի միջի։ Յորում գնացեալ քանդեցին զերկիրն, այրեցին զշինուածսն, գերեցին զմարդիկք և զանասունս և բազում աւարաւ դարձան ի բուն բանակն՝ ի Ղարս։ Եւ անտի կրկին արձակեաց ասպատակս, որ գնացեալ հասին մերձ Թէոդուպօլսոյ։ Եւ գերեցին զնարիմանու նահանգն զՋաւախէթու, զՁլտրու և զՂայի Ղուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ։ Եւ քշեցին զայր և զկին, զծէր և զտղայ և տարան ի Խորասան թուով ՁՌ(6000), որպես և լսեմք»[304]։

Թուրքերը ստիպված խնդրում էին Նադիրին դադարեցնել ասպատակությունները՝ խոստանալով կատարել նրա պահանջները. «Եւ ապա գիջան և հագարացիքն ի բարձցավզութենէ և ի զոռոզութենէ իւրեանց։ Եւ ելեալ Արզրումայ արք ոմանք երևելիք և եկին իբրև դեսպանս առ խանն, որ դեռևս նստեալ կայր ի վերա Ղարսայ։ Եւ միաբանեալ ընդ զարսեցւոց մեծամեծացն գնացին առ խանն աղերս և ուղաչանս, զի մի աւերեսցէ զերկիրն իսպառ։ Եւ խոստացան տալ զԵրևան, յորմէ բերկրեցաւ խանն և պատուեաց զնոսա խիլայիւ»[305]։

Ուշագրավ է, որ թուրքական աղբյուրները շրջանցում են այս կարևոր քաղաքական դեպքերը։ «Օսմանցի պատմագիրները խորը լռություն են պահում մինչև հաշտության կնքումը Պարսկաստանի հետ վարած պատերազմի (1732—1736) իրադարձությունների մասին,— գրում է Համմերը,— նրանք, անշուշտ, հույսով էին դրանով իսկ թաքցնել իրենց հետնորդներից ճշմարտությունն այն կորուստների ու պարտությունների մասին, որ նրանց բանակները կրում էին այդ պատերազմի ընթացքում»[306]։

* * *

Ընկնելով ծանր կացության մեջ, Թուրքիան ձգտում էր իր արտաքին քաղաքականության մեջ որոշ շտկումներ կատարել։ Նա հակված էր հաշտություն կնքել Իրանի հետ, եթե այն ուղղված լինի Ռուսաստանի դեմ։ Ուշի-ուշով հետևելով Թուրքիայի դիվանագիտական քայլերին, որոնք հաճախ թելադրվում էին Ֆրանսիայի ու Անգլիայի կողմից, Ռուսաստանը բանավարության մեջ մտավ Նադիրի հետ, հասկացնելով նրան, որ ռուսական զորքերը մուտք գործեցին մերձկասպյան շրջանները «միայն պարսկական պետության շահի ու գոյության պահպանման համար» և որ Ռուսաստանը պատրաստ է հանձնելու իր գրաված տարածքը Իրանին[307]։ Երկար բանակցություններից հետո, 1735 թ. մարտի 10-ին Գանձակում ստորագրվեց նոր իրանա-ռուսական պայմանագիրը, համաձայն որի Ռուսաստանը Իրանին վերադարձրեց մերձկասպյան երկրամասը, Իրանը պարտավորվեց այդ երկրամասը երբեք չհանձնել մի երրորդ պետության, համաձայնվեց Ռուսաստանի հետ «հավերժ բարեկամություն» դաշինքին ու պարտավորվեց անջատ պայմանագիր չկնքել Թուրքիայի հետ[308]։ Սակայն, Նադիրը նենգաբար դրժեց Գանձակի պայմանագրով ստանձնած պարտավորությունը և 1736 թ. անջատ հաշտություն կնքեց Թուրքիայի հետ։ Շուտով նոր պատերազմ ծագեց Թուրքիայի և Ռուսաստանի միջև։ Ռուսաստանը ձգտում էր ձերբազատվել Պրուտյան և Ադրիանապոլսի պայմանագրի կաշկանդող կապանքներից ու ազատ ելք ունենալ դեպի Սև ծով։

Ռուս-թուրքական հերթական պատերազմը նոր հույսեր էր ներշնչել Թուրքիայի քրիստոնյա հպատակներին։ Վերջիններս պատրաստ էին դիմելու ապստամբության ու Ռուսաստանի օգնությամբ փշրելու ստրկական շղթան։ Այդ մասին վկայում է Վիշնյակովը կայսրուհի Աննա Իվանովնային հղած նամակում. «Նահանգների հույները և նամանավանդ բուլղարները, վալախները, մոլդավացիները և այլք, մեծ եռանդով ձգտում են ազատագրվել բռնատիրությունից և այն աստիճան նվիրված են Ռուսաստանին, որ երբեք չեն տատանվի զոհաբերել իրենց կյանքը Ձերդ Մեծության համար. սպասում են Ձեզ որպես ազատագրողի»[309]։

1735—1739 թթ. ռուս-թուրքական պատերազմի վերջին տարում, չնայած Ռուսաստանի դաշնակից ավստրիացիների որոշ անհաջողություններին, ֆելդմարշալ Մյունիխը վստահ էր, որ ռուսական զենքը և Օսմանյան կայսրության հպատակ քրիստոնյաների զինված ապստամբությունը խորտակելու էր, ի վերջո, Թուրքիային։ «Պետք է հենվել,— գրում էր նա կայսրուհուն,— ապստամբ քրիստոնյա հպատակների

304 Ա. Կրետացի, էջ 67։
305 Նույն տեղում, էջ 68։
306 J. Hammer, t. XIV, p. 333.

307 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Г. Г. Пайчадзе, с. 150—151.
308 Նույն տեղում, էջ 161։
309 Տե՛ս A. Vandal, p. 248.

ոգևորության վրա և քայլել ուղիղ դեպի Կոստանդնուպոլիս»[310]։ Սակայն ռուսական արքունիքի ներկայացուցչի իղձերը չիրականացան։

1739 թ. սեպտեմբերի 18-ին ֆրանսիական դեսպան մարքիզ դե Վիլնյովի միջնորդությամբ Բելգրադի մոտ հաշտության պայմանագիր կնքվեց Ռուսաստանի և Թուրքիայի միջև, որով, փաստորեն, անհետևանք մնաց ռուսական զենքի տարած փայլուն հաղթանակը Թուրքերի նկատմամբ Ղրիմում և Բալկաններում։ Չնայած Ազովն անցնում էր Ռուսաստանին, սակայն վերջինս այդ պայմանագրով Սև ծով ազատ ելք ունենալու իրավունք ձեռք չէր բերում։ Մինչ այդ, 1739 թ. սեպտեմբերի 1-ին կնքվել էր Թուրք-ավստրիական հաշտության պայմանագիրը, որը Ավստրիայի համար, Յոզեֆ Համմերի բառերով ասած, ունեցավ այն նույն նշանակությունը, ինչպիսին ունեցավ 1711 թ. Պրուտյան հաշտությունը Ռուսաստանի համար[311]։

1735—1739 թթ. պատերազմի ընթացքում Թուրքերի հաջողությունը պետք է դիտել պատահական, ժամանակավրեպ և ժամանակավոր։ «Այդ հաղթանակը ժամանակավոր էր, իսկ Թուրքիայի անկումը մոտենում էր»[312], —գրում է Դմիտրի Բուխարովը։ Իր ունեցած քաղաքական հետևանքներով այդ հաջողությունները չափից դուրս աննշան էին, որպեսզի կարողանային կասեցնել Թուրքիայի թուլացումն ու անկումը, որոնք պայմանավորված էին ներքին ու արտաքին լուրջ պատճառներով։

* * *

XVIII դարի 40-ական թվականներին Նադիր շահը, խախտելով Թուրքիայի հետ կնքված հաշտությունը, դարձյալ անցավ հարձակման, որից, աղբյուրների վկայությամբ, տուժեցին Հայաստանի երկու մասերի բնակչությունը։ Հնդկական արշավանքից (1731—1741) հետո, Նադիրը, հղփացած իր հաջողություններով, 1743 թ. սեպտեմբերին (24 ռեջեբ 1156) պաշարեց Մոսուլը։ Նա Բաղդադի Թուրք վալի Ահմեդ փաշայից պահանջեց հանձնել քաղաքը[313]։ Միաժամանակ, հիսունվաթսուն հազարանոց մի բանակ ուղարկեց Էրզրում՝ ասպատակելու Բարձր Հայքի գավառները[314]։

Նադիր շահի այս նախահարձակ քաղաքականության դեմ, օսմանցիները հրապարակ հանեցին Կ. Պոլսում ապաստանված և, իբրև թե, սեֆյան ծագում ունեցող Սաֆի անունով մեկին՝ հայտարարելով նրան, ի հակակշիռ Նադիրի, Իրանի գահակալ։ Սակայն դա ոչ մի արդյունք չտվեց։ 1744 թ. մայիսի 31-ին (18 ռեբիուլախիր 1157) Նադիր շահը շարժվեց դեպի Կարս, ուր կենտրոնացված էր, պատմագիր Իզզիի խոսքերով ասած, թուրքական բանակի ընտրանին[315]։ Օգոստոսի 24-ին (15 ռեջեբ 1157) տեղի է ունենում արյունալի ճակատամարտ, որը կողմերից ոչ մեկին հաղթանակ չի բերում։ Կարսի շրջակայքում Նադիր շահի բանակը մնում է մինչև ձմեռնամուտ, իսկ այնուհետև նահանջում է (9 հոկտ. 1744—2 ռամազան 1157)։

1745 թ. գարնանը Թուրքերը, իրենց հերթին, մի քանի ասպատակիչ արշավանքներ ձեռնարկեցին Իրանի հյուսիսարևմտյան շրջանները, օգտվելով քրդական որոշ ցեղերի աջակցությունից[316]։ Իսկ ամառանը մի մեծ բանակ ուղարկեցին արևելք՝ մեծ վեզիր, սերասքյար Եգեն Մեհմեդ փաշայի գլխավորությամբ։

1745 թ. հունիսի 26-ին (26 ջեմազիուլէվվել 1158) սերասքյարը Էրզրումից շարժվեց դեպի Երևան։ Եղվարդի[317] մոտ տեղի է ունենում վճռական ճակատամարտ, որտեղ օսմանցիները կրում են ծանր պարտություն։ Ճակատամարտում իր մահն է գտնում Եգեն Մեհմեդ փաշան։ Թուրքական աղբյուրներում և արխիվային նյութերում պարտության պատճառը վերագրվում է լեվենդական զորքերի հրամանատարներ Հաջի Նասուհի և Դելիի դավաճանությանն ու փախուստին[318]։ Լեվենդների նման վարքագիծը ծայրահեղորեն գրգռում է սուլթանական կառավարությանը, և գտնելով, որ, այսուհետև, այդ բանակի գոյությունը մեծ վնաս կարող է պատճառել երկրին (مضر الناس و ساعی بالفساد), սուլթանը հատուկ հրովարտակով կարգադրում է ամենուր ոչնչացնել նրանց[319]։ Վերջիններս, սակայն, սկսում են թափառել Փոքր Ասիայի

310 Նույն տեղում, էջ 353։

311 *J. Hammer*, t. XIV, p. 470.

312 *Dimitri Boukharov*, La Russie et la Turquie depuis la commencement de leurs relations politiques jusqu'à nos jours, Amsterdam, 1887, p. 13 (այսուհետև՝ *Dimitri Boukharov*).

313 "Tarih-i Izzi", c. I, Istanbul, 1199 (1783), s. 6; *J. Hammer*, t. XV, p. 71—72.

314 *I. H. Uzunçarşılı*, c. IV, I kısım, s. 301—302.

315 "Tarih-i Izzi", c. I, s. 67; *J. Hammer*, t. XV, p. 82.

316 "Tarih-i Izzi", c. I, s. 11; *J. Hammer*, t. XV. p. 86.

317 Պատմագիր Իզզիի մոտ գրված է Ցագովարդ ("Tarih-i Izzi", c. I, s. 30), իսկ Համմերի մոտ՝ Կագավերդ (*J. Hammer*, t. XV, p. 95)։

318 *I. H. Uzunçarşılı*, c. IV, s. 305.

319 Նույն տեղում, էջ 307։

ու Արևմտյան Հայաստանի տարբեր մասերում և, ինչպես կտեսնենք, հետագայում շարիք ու պատուհաս դառնում արևմտահայ ժողովրդի գլխին։

Եղվարդի ճակատամարտի պարտությունից հետո թուրքական զորքերի սերասքյար է նշանակվում Կարսի կառավարիչ, նախկին մեծ վեզիր՝ էլհաջ Ահմեդ փաշան։ Նադիր շահը նոր սերասքյարին հաշտության առաջարկ է անում՝ պահանջելով Վանը, Քրդիստանը, Բաղդադը, Բասրան ու շիաների սրբավայրեր Նեջեֆն ու Կերբելեն։ Սակայն հետագայում, երկար բանակցությունների ընթացքում, Նադիր շահը ստիպված է լինում չափավորել իր պահանջները և 1746 թ. սեպտեմբերի 4-ին (17 շաբան 1159) Իրան ուղարկված թուրքական դեսպան Նազրֆ Մուստաֆա էֆենդիի հետ կնքել հաշտության պայմանագիր[320]։

* * *

Թուրք-իրանական ընդհարումների ժամանակ արևմտահայ զանգվածները տուժում էին ոչ միայն ծավալված ռազմական գործողություններից, այլև, աղբյուրների տվյալներով, թե՛ պատերազմի ընթացքում և թե՛ հատկապես պատերազմից հետո լեվենդների, քրդերի, ենիչերիների («ղուլերի») ապստամբական ելույթներից։ Այսպես, 1743—1745 թթ. իրադարձություններին անդրադառնալիս Հովհաննես Սեբաստացին հաղորդում է հետևյալ ուշագրավ տեղեկությունները։ 1743 թվականին «...էր սով սաստիկ և պատերազմ այլազգեաց ընդ պարսից իբրև զհուր բորբոքեալ, վասն որոյ և բազմութիւնք դաժանագոյն զօրացն երթ և եկս արարեալ, գրեթէ լափէին, կիզէին և խարէին զգիւղ և զքաղաք և նեղեալ տառապեցուցանէին զազգս մեր հարպապահանջութեամբ»[321]։ Իսկ 1745 թ., մեծ վեզիր Եգեն Մեհմեդ փաշայի՝ պարսիկներից կրած պարտությունից ու լեվենդների փախուստից հետո, ծանր իրավիճակ է ստեղծվում արևմտահայ գավառներում։ «...Եւ յետ իբրև երկու ամաց (ՌՃՂԴ—1745) սպարապետն տաճկաց Եէկէն բդեշխն,— շարունակում է Հովհաննես Սեբաստացին, —եկն ի քաղաքս մայիսի 1 երկոտասան Ռ (1200) զօրոք, 8 օր եկաց և անցեալ գնաց ի Գարս ի վերայ Թահմազին և անդ մեռաւ։ Եւ Թահմազն տիրեաց ամենայն կահուց և կարասեացն, և զօրքն փախստական եղեալ և անգլուխ ափռեալ յամենայն տեղիս, բազում վնասս հասուցին ազգիս մերոյ, զի ի Սեբաստիոյ մինչև ի Մարզուան անապատ արարին (ընդգծումը մերն է— Մ. Զ.), ընդ որս և զվանս Մարզուանի, ինքեանք այրեսցին անշէջ հրով զեհենին։

Յաջորդ ամին (ՌՃԶԵ — 1746) մայիսի 18 Եղիական կիրակէին եկն ի քաղաքս Հեքիմօղլի Ալի բդեշխն՝ անուամբ սպարապետութեան, և ժողովեաց առ ինքն զբազում զօրս իբրև ԲՃՌ (200.000) զի 38 երկդուզեան նախարարք եկին, թող զայլսն։ Եկին և Ղաբուսուզ կոչնցեալ պիղծ լեվենտին իբրև ԺՌ (10.000)՝ հանդերձ զօրագլխովք իւրեանց, որք էին կէնճալի կէնճ Օսման, Կէմալմազ, Աւշարօղլին և այլն։ Եւ բանակեցան մօտ իրերաց՝ յեղր քաղաքիս և ամենից սոցա զպիտոյսն սպարապետն հոգայր, բայց ոչ շատացեալ պիղծ լեվենտքն՝ անկանէին ի գիւղօրայս և բազում վնաս գործէին, որ և ի գիշերի միում գնացեալ ի գիւղն Բոգնիկ բազում ոճրագործութիւնս արարին, զկանայս յղացուցին, աղջկունս ապականեցին, ինքեանք եկեալ պատմէին ի քաղաքին։ Եւ գիւղօրայքն ամենայն փախուցեալ՝ եկին ի քաղաքն, բայց սուրբ վանս, շնորհիւ տեառն և զօրութեամբ սրբոյ նշանին անխախտ և անվնաս մնաց ի տեղւոջ իւրում, դրունքն բաց և եկեալքն կերակրեալք գնային։ Եւ յետ քանի մի ամսոյ՝ կոտորեցին աստ ի Սեբաստիա զամենայն լէվէնտսն և գնացին իւրաքանչիւր ոք ի տեղի իւր։ Թուի թէ սպարապետութիւն և զօրաց գումարումն ամենայն վասն լէվէնտիցն էր, սրովք ջնջեալ բարձան զազիր և չար գաղանին ի միջոյ»[322]։

1746 թ. Այդինի կուսակալ Վելի փաշան կառավարության կողմից նշանակվեց Փոքր Ասիայի տարբեր մասերում լեվենդների ապստամբությունները ճնշելու համար հատկացված հատուկ բանակի գերագույն հրամանատար, սակայն նա, Յոզեֆ Համմերի խոսքերով ասած, «ոչ միայն կոտորում էր լեվենդներին ուր որ և հանդիպում էր, այլ իր հերթին, ասպատակում ու կողոպտում էր այն երկրամասը, որտեղից նա անցնում էր»[323]։ Կասկածից վեր է, որ նախ և առաջ տուժում էին քրիստոնյա հպատակները։

320 Տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, հ. Ա, Երևան, 1961, էջ 196—197։

321 Հովհաննես Սեբաստացի, Պատմութիւն Սեբաստիոյ, աշխատասիրությամբ Բ. Լ. Ջուգասզյանի, Երևան, 1974, էջ 87 (այսուհետև՝ Հովհ. Սեբաստացի)։

322 Նույն տեղում, էջ 88։

323 J. Hammer, t. XV, p. 115.

1750 թ. Կարամանիայում և Կեսարիայի շրջակայքում լեվենդները բարձրացնելով ապստամբության դրոշը, բնակչության նկատմամբ ամեն տեսակի բռնություններ էին գործադրում։ Չբավարարվելով կողոպուտներով, Կեսարիայի գյուղերից մեկում, լեվենդները «քսանվեց տղամարդու, քսանինը կանանց և քառասուներեք երեխաների, որոնք ապաստանել էին մի քարայրի մուտքի մոտ՝ կրակ վառելով խեղդամահ են անում»[324]։

1751 թ. Մալաթիայի շրջակայքում, թուրքմենական խասիլի ցեղից՝ ոմն Կալենդարօղլի կոչեցյալ «...սպառնում էր կրկնել այն խժդժությունները, որը մի ժամանակ՝ Ահմեդ Առաջինի ժամանակ, կատարել էր նույն անունը կրող տխրահռչակ Կալենդարօղլին»[325]։ Մի քանի հազար լեվենդների գլուխ անցած, նա 1752 թ. շարժվեց Մարաշի կուսակալ Ռիշվան-զադե Սուլեյման փաշայի զորքերի դեմ, սակայն պարտություն կրեց ու գլխատվեց[326]։

Լեվենդները հաճախ միանում էին քրդական ցեղերին ու համատեղ զբաղվում ավարով ու թալանով։ Այսպես, 1752 թ. «...լեվենդների բազմաթիվ առաջնորդներ Չորումի քրդերի հետ միանալուց հետո, Ամասիայի սանջակում կատարել էին ամեն տեսակի ավազակություն, հրի ու սրի մատնելով երկիրը»[327]։

Սակայն հակակառավարական ամենամեծ ապստամբությունն, ըստ երևույթին, որն անմիջականորեն առնչվում էր արևմտահայ գավառների բնակչության խաղաղ կյանքին, Էրզրումի շրջակայքի դեպքերն էին։ Չկարողացանք պարզել, թե ինչու այդ ապստամբությունը Ղ. Ինճիճյանի մոտ թվարկված է 1747 թ., մինչդեռ Յոզեֆ Համմերը, հենվելով թուրքական աղբյուրների վրա, մատնացույց է անում 1754 թ.։ Ապստամբությունը ղեկավարում էր Բաղեշի խան Ալաեդդինը, որն, ըստ երևույթին, օգտվելով օսմանյան պետության թուլացումից, ձգտել է Բաղեշի ու Մուշի շրջակայքում իրեն լիիրավ անկախ հայտարարել։ Այդ մասին Ղ. Ինճիճյանը գրում է. «...հռչակաւոր Ալայէտտին, ռամկորէն Ալատտին պէյն Մշոյ զօրացեալ յոյժ յամին 1741, ինքն դնէր և փոփոխէր ըստ կամի գլխանս Բաղիշոյ, մանաւանդ զի յաւուրսն յայնոսիկ ոչ սակաւ հակառակութիւն և խռովութիւն կայր առ բաղիշեցիս սակս յաջորդութեան խանին։ Այս Ալատտին պէյ ունէր զօրս 70.000, և գանձս բազումս, շինեաց զբերդն Լիզ. և զանառիկ բերդն Ոսպնբլուր. կամ Մերճիմեք գալեսի զորմէ ստորև. և բռնանալ կամէր ի վերա ամենեցուն, որոյ վասն շրջակայ պէյք և տեառք առհասարակ միաբան բողոք կալան ի դուռն թագաւորին՝ ի Կոստանդնուպօլիս, որ հրաման եհան Իպրահիմ փաշային (sic!) Էրզիռումայ և Մահմուտ փաշային Պայէզիտոյ, պատերազմաւ ի վերա ելանել Ալատտին պէյին և սպանանել։ Որոց ընդ իւրեանս առեալ զպէյն Մալազկերտի Խնուսայ և Կեղոյ հանդերձ զօրօք իւրեանց 24 հազարօք, եկեալ բանակեցան յափն Մեղրագետոյ հանդէպ քաղաքին Մշոյ, իբրև 2 ժամաւ հեռի է նմանէ յամին 1747 թ. երբեմն երբեմն յարձակեալ ի վերա, ոչինչ կարացին գործել»[328]։

Ալաեդդին խանի վրա հարձակվողը ոչ թե Իբրահիմ փաշան, այլ Էրզրումի Աբդուլլահ փաշան է եղել, որը «պայքարում էր բազմաթիվ ապստամբ ղեկավարների դեմ, որոնք ասպատակում էին (Էրզրումի) շրջակայքը։ Այդ ղեկավարներից էր Ալաեդդինը, որը, պատսպարվելով Մերջիմեկ ամրոցում, որոշ ժամանակից ի վեր իր իշխանությանն էր ենթարկել շրջակայքը։ Էրզրումի կառավարիչը շարժվեց նրա դեմ, գրավեց ու հիմնահատակ արեց ամրոցը։ Նույնպիսի հաջողությամբ նա հարձակվեց Մանազկերտի (ապստամբ) Նուհբեկի վրա՝ քանդելով նրա երկու ամրոցները։ Երկու այլ ապստամբներ՝ Մահմուդիեյի Միհրաբը և Հաջարիի թաթար խանը, որոնք հանդգնել էին նրան դիմադրություն ցույց տալ, ստիպված եղան (ի վերջո) ենթարկվել։ Որպեսզի հետագայում այս խռովությունների առաջն առնի, Աբդուլլահ փաշան Մուշի և Բիթլիսի բնակիչներին ստորագրել տվեց մի փաստաթուղթ, համաձայն որի նրանք հանձն էին առնում վտարել իրենց շրջաններից այս ապստամբներին, եթե նրանք նորից ներկայանային և փակել իրենց քաղաքների դռները Բիթլիսի պաշտոնազուրկ արված Բուրհանխանի առաջ»[329]։

Աբդուլլահ փաշայի զորքերի պատժիչ արշավանքի ժամանակ մեծամեծ տուժում են Մուշի և Բիթլիսի շրջակայքի բնակչությունը։ «Իսկ ընդ այդն ամենայն մեծամեծք և դատաւորք քաղաքին միաբան գնացին ի բանակն. առաջի եդեալ զիւրեանց անմեղութիւն, և դանդատ կալեալ զբռնութենէ Ալատտին պէյին, բայց ի վերա այսր ամենայնի

324 Նույն տեղում, էջ 220։
325 Նույն տեղում, էջ 222։
326 Նույն տեղում։
327 Նույն տեղում, էջ 223։

328 Ղ. Ինճիճյան, էջ 185։
329 J. Hammer, t. XV, p. 288.

փաշային Էրզիռումայ և Պայէզիտոյ 25 քսակ տուգանս առեալ ի քաղաքէն, զգերեալսն՝ ի պատերազմին միայն շնորհեցին նոցա, իսկ զգիւղօրայս, զցորեան, զխոտ և այլն, առհասարակ հրձիգ արարին. (ընդգծումը մերն է— Մ. Ղ.) և այսպէս նախ քան զպատերազմն և զկնի պատերազմին զաւուրս 25 անդէն մնացեալ, գնացին մեկնեցան։ Յետ վեց ամսոց եկեալ Ալատտին պէյին ի Մուշ, նուէնպէս տիրէր առաջին սահմանաց իւրոց. յորոյ վերա դարձեալ յարձակեցաւ հռչակաւոր Ջեթեճի փաշայն Երզիռումայ յետ երկուց կամ երից ամաց մեծամեծ ոմբակործեօք, այսինքն զօփովք եկեալ ի յառնուլ զբերդն Ոսպնբլուր կամ զՄերճիմեկ գալէսին, որ էր տեղի ապաստանի Ալատտին պէյին։ Իսկ Ալատտին պէյին զնորաշեն պալատ իւր, և զամենայն գիւղաքաղաքն որ առ ստորոտով բերդէն հրկէզ արարեալ, և արս 70 'ի պահպանութիւն բերդին թողեալ, ինքն խոյս ետ ի գաւառն Կինճ»[330]։ Այս վկայութիւնից պարզ երևում է, որ Ալաեդդինի ապստամբությունը տևել է մի քանի տարի։

Ալաեդդինի պարտությունից հետո, ապստամբությունը շարունակում է նրա որդին։ «Յուրաքանչյուր տարի նա Թադվանի և Զարջիխանի բնակիչներից բռնությամբ հազարից մինչև երկու հազար զուրուշ տուրք էր վերցնում և ասպատակում էր Խլաթի և Ադիլջևազի (Արծկեի) շրջակայքը, համոզված լինելով, որ ... ինքը Խեչերեսի ամրոցում ապաստան կգտնի (Էրզրումի) կառավարչի գերազանց ուժերի դեմ»[331]։ Սակայն այս ապստամբությունը ի վերջո ճնշվում է կառավարական զորքերի կողմից։ Հետագա ապստամբությունների առաջն առնելու համար, կառավարությունը ստիպված որոշ զիջումների է գնում, նշանակելով Ալաեդդինի թոռան՝ Բիթլիսի կառավարիչ, «որ ընկալաւ ի թագաւորէն դուղս երկուս»[332]։

1758 թ. լեվենդները դարձյալ ահ ու սարսափի մեջ են պահում Սեբաստիայի ու նրա շրջակայքի բնակչությանը, որոնք առանց այն էլ խիստ տուժել էին 1757 թ. երաշտից։ «Ի մէջ այս խստագոյն սովոյս (ՌՄԷ— 1758)— գրում է Հովհ. Սեբաստացին,— յայտնեցան բազում անդուռն լէվէնտք, աւելի քան զերկու հազարս ի կողմանս վիճակիս Սեբաստիոյ, որք սփռեալք ի գիւղօրայս խօշտանգանօք կեղեքէին զխղճալիսն և անողորմաբար տանջելով՝ պահանջէին ի նոցանէ զինչս

330 Ղ. Ինճիճյան, էջ 185։
331 J. Hammer, t. XV, p. 289.
332 Ղ. Ինճիճյան, էջ 185։

և, ի չկարելն զդէմ ունիլ բազմավիշտ տառապանացն, փախստական եղեն աստ և անդ, ի քաղաքն և ի մեծամեծ գիւղօրէս՝ առ ի ապրեցուցանել զոնէ զանձինս իւրեանց ի բռնութենէ նոցա, վասն որոյ ուր ուրէք գտանիւր շինութիւն և այն քաղցեալ և ի յետին դառն աղքատութեան ժամանեալ։

... Եկն ի սոյն աւուրս (ՌՄԷ—1758) հրաման յարքայէն տաճկաց առ Ֆեզուլահ երկդուղեան նախարար Սեբաստիոյ՝ կոտորել զէէվէնտսն։ Եւ նա՝ թէպետ գոլով մանուկ հասակաւ և անբնտել պատերազմի, բայց իբրև 500 զօրօք ել և անակնկալ պահու հասեալ ի վերայ նոցա՝ կոտորեաց զամէնեսին զնոսա՝ մինչև սակաւ ոմանք ի նոցանէ մազապուրծ փախստական եղեն, և զգլուխս սպանելոցն առաքեաց առ թագաւորն»[333]։ Հովհ. Սեբաստացու այս վկայությունները հաստատվում են թուրքական աղբյուրներով, որտեղ, սակայն, հիշատակվում է, թե Սախելի զադե Ֆեյզուլլահ փաշան կոտորեց ոչ միայն Սեբաստիայի, այլ «...մի քանի հազար լեվենդների, որոնք ասպատակում էին Էրզրումի և Զորումի մերձակայքը։ (Սուլթան) Մուստաֆան ճանաչեց Ֆեյզուլլահ փաշայի այս ծառայությունը, նրան ուղարկելով ևս մի դուղ»[334]։ «Եւ տեսեալ արքայի զքաջութիւն նորին դուղ մի ևս շնորհեաց նմա»[335],— գրում է Հովհ. Սեբաստացին։

1758 թ. Էրզրումի շրջակայքում ենիչերիների ու լեվենդների կատարած խժդժությունների, բռնությունների ու կամայականությունների մասին մի սրտաճմլիկ հիշատակարան է թողել Բաղդասար քահանա գրիչը։ Ահա այն. «...Քաղաքիս ինկիչարիքն ամենայնքն զոռպայք են դարձեր ամենայն օր կու արբենան, կու կողոպտեն զքաղաքիս խեղճ և ողորմելի զքրիստոնեայսն ոմանք Ի (20) հոգով, ոմանք Լ (30) կամ Խ (40) հոգով կու գնան քրիստոնէից տունն կուտեն կուխմեն և վերջ փեշքաշ մի այլ կառնուն այն տանէն, ապա թէ կելանեն ու գնան միւսին տունն, զոր խնդրեմք յԱստուծոյ որ ինքն այց արասցէ, և միւս ևս սատիկ պատիժ մի այլ այս է որ պաշիպոշ լեվենտքն ճանապարհին փակեալ են, երթևեկութիւն վաճառականացն փակեցաւ, քանզի ոմն Ղոճայ Արապ անուն կոչեցեալ Զճ(600) արամբ մի կողմ տիրեալ էր որ այս ամի Վանայ երկիրն զլուխ կտրեցին և ոմն Ինճայ Արապ անուն Ռ(և) Բճ(12000) արամբ ապստամբեցաւ, ընդ իւր թիքնապահ Թամուր

333 Հովհ. Սեբաստացի, էջ 91։
334 J. Hammer, t. XVI, p. 96.
335 Հովհ. Սեբաստացի, էջ 91։

ԲՃ(200) արամբքն ի քաղաքէս ապստամբ ելան և գնացեալ գաւառն Բասենու միաբանեալ սկսան գիւղորեաքն աւերել և սոյն աւուրքս եկն հրաման սուլթան Մուսթաֆայէն առ ի կոտորել զապըստամբեալքն ի թագաւորէն զոր և քաղաքիս մովպետ Մուստաֆայ փաշայն ժողովեաց ի քաղաքիս օճախ աղասիքն իւրեանց եթպահովն և ինկիշար-աղասի Մուստաֆայ աղան իւր եթպահովն և փետրվարի ԻԳ(23) ելին ի քաղաքէս մինչ զի ԵՌ(5000) հոգի և գնացին ի վերայ պաշիպոշին և նոքա կռուելով եղեն փախստական դեպի երկիրն Ղարսայ քաղաքն. զօրքն մինչ մարտ Ը(8) էին ի քաղաքս թէպէտ Ծ(50) Կ(60) գլուխ կտրեցին բերին քաղաքս, և մանաւանդ անկիսի պոյուկ կոչեցեալ Պոլուկ-պաշին եկն փախստական իբր թէ չքմեղէ զոր լուեալ ինկիշարիքն իսկոյն դիմեցին նոցա շարամահ սատակեցուցին զնոսայ և դամենայն ինչսն և զստացուածս նոցա յափշտակեցին։ Սակայն սոքա մի մասն էին պաշիպոշացն։

Նա ևս զորպաներն էին սվայի գիւղորայքն և իջեւանեցան ի գուղ մի որ կոչի Կոմք և ուղարկեցին մեկ տալիպաշ մի ի քաղաքս պարութ, զուրշուն ունելոյ՝ գնաց չու մինչև մի ժամ ի քաղաքէն դուրս և ապա իմաց էլ վերս գրեցեալ փաշային մարդիքս հասին ի վերայ սորա և շարաշար սատակեցուցին զնոսայ, իսկ մարտի Ի(10) քաղաքիս օճախաղասիքն դիմեցին առ պալատն վերոգրեցեալ Մուստաֆայ փաշային առ ի խօսակցութիւն առնելով սակս պաշիպոշացն կողմանէ, և ի վաղեեան աւուրն ելին քաղաքէս օճախաղասիքն իւրեանց աթպահովն և կարդացողքն իւրեանց աթպահովն և ինիշկար աղասին իւր աթպահովն և փաշան իւր աթպահովն մինչ զի եղեն ԵՌ(5000) ոգի ընդամէն և գնացին վերոյիշեալ գիւղն որ կոչի Առի Կոմք մարտելոյ ընդդէմ պաշիպոշացն և զուլնաց, մի ժամ ոչ էանց քաղաքիս ելեալ զորք փախստական եկին կրկին քաղաքս և կոտորեցան քաղաքայնոցս Ծ հոգից աւելի Ծ—4 (50—60) ոգի արալի կայր և յինկիշարիքն թոփով թուանքով երեկոյին եկին այս քաղաքս և նոքա իջեալ գնացին կողոպտելով զգիւղորայքն»[336]։

Աթանաս եպիսկոպոսը 1757 թ. հուլիսի 21-ին Կ. Պոլսից գրած նամակում անդրադառնալով մայրաքաղաքում ու գավառներում, մասնավորապես Սեբաստիայում, հակակառավարական ելույթներին, հաղորդում է հետաքրքիր տեղեկություններ։ Նա գրում է. «Վասն հիւանդութեան շահզատէին՝ մեծ աղմուկ երևի լինել ի քաղաքն և յոյժ

336 Տե՛ս Մուրմար. էջ 91—92։

ծանր է։ Հացն յոյժ սեաւ է և սուղ։ Միսն յոյժ ցանցառ գտանի։ Տրտունջ մեծ ի քաղաքին։ Օրըստորէ ենիչերի աղասին ժողովէ զապստամբս։ Արքան, դատաւորք արթուն են, այնքան առաւել ապստամբք շատ։ Ի Անատոլու Քիւփելի Առապն քայլէ հանդերձ 700 ձիաւորօք, զշէնս կոխէ, զգիւղս աւերէ, զկարավանս յափշտակէ, և զընդիմացողսն ի սուր սուսերի մաշէ։ Ընդդէմ սորա ոչ ոք փաշայ գնաց ի պատերազմ, անձնապաստան ընթանայ. և զայն ի նորոյ լուաք, զի ի Սեբաստիայ իբրև արք հինգ հազարք ապստամբեալք ընդդէմ փաշային, կոխեալ զախոռ նորա, զերիվարս նորա առեալ գնացեալ են և թողեալ զկաղ երիվար մի, և ազդ արարեալ փաշային թէ ահա մեք գնամք, և դու հետևեաց մեզ կաղ երիվարաւ, և հետևեալ զնա մեծապէս»[337]։

Այս նույն տարիներին, թուրքական աղբյուրների վկայությամբ, ապստամբություններ էին բռնկվել Չլդըրում, Կարամանիայում և այլուր։ Չլդըրում ապստամբության համար առիթ էր ծառայել Ախլցխայի կուսակալ էլհաջ Ահմեդ փաշայի պաշտոնազրկվելը։ Արյունալի ընդհարում է տեղի ունենում հիշյալ կուսակալի ու նրան փոխարինելու եկած Դիարբեքիրի կուսակալ Իբրահիմ փաշայի միջև. հաղթում է վերջինը[338]։

Խոշոր իրադարձություններ են տեղի ունենում հատկապես Կոնիայի մերձակայքում։ Տեղի բնակչությունը բազմիցս բողոքել էր կառավարությանը Կարամանիայի արյունարբու կուսակալ Աբդուրրահման փաշայից, և մեծ վեզիր Ռահիբ փաշան ստիպված էր եղել նրան պաշտոնազրկել։ Շտապ կարգով ավազակաբարո մի զորք հավաքելով, Աբդուրրահման փաշան շարժվում է ուղիղ դեպի մայրաքաղաք, սակայն, բանակցությունների հետևանքով, հետ է քաշվում դեպի Լակայն, բանակցությունների հետևանքով, հետ է քաշվում դեպի Լակայն։ Պատմագիր Վասֆի մեկնաբանությամբ այս ապստամբությունը լոկ մեծ վեզիրի կողմից կազմակերպված խաղ է եղել՝ սուլթանի վրա իր ազդեցությունն ուժեղացնելու նպատակով։

Չնայած կառավարության ձեռք առած բոլոր միջոցներին, լեվենդները վխտում էին ամբողջ Փոքր Ասիայում։ 1763 թ. Փոքր Ասիայի տարբեր մասերում, մասնավորապես Կարամանիայում, շարագործություններ էին կատարում լեվենդ-ավազակները։ Բ. Դուռը նրանց ոչնչ-

337 «Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար։ 1707—1773», կազմեց Հ. Ղևոնդ Տայեան, Վենետիկ, 1930, էջ 185։

338 Հովհ. Սեբաստացի, էջ 91։

չացնելու համար պատժիչ բանակ ուղարկեց երկրորդ վեզիր Զափարզադե Ահմեդ փաշայի գլխավորությամբ[339]։

1765 թ. Դիվրիկի շրջակայքում լեվենդների կատարած չարագործությունների մասին մանրամասն հաղորդում է Հակոբ Դիվրիկեցին. «ՌՄԺԴ(1765) ամին կամաւն Աստուծոյ ոչ գոյ խաղաղութիւն ի մէջ քաղաքին, զի ձմեռն եղև սաստիկ և ձիւն եկեալ յերկնից բազում անգամ։ Եւ ի ամառն Թշնամի և կողոպտիչ կար ի կողմս մերում, այսինքն լէվէնտ, զի աւերին բազում գիւղօրայս։ Եւ զապիթ քաղաքին ժողովեալ զամենայն գունդս իւր, գնացին բացին ի գիւղն Մուրսալ պատերազմեցան ընդ հետ Թշնամւոյն և բերին վեց գլուխս նոցա, և շատ մարդ վիրաւորեցին և բոլուքբաշի լէվէնտին աւերեալ բազում տեղիս, որ զինչ գիւղս ի բոլոր քաղաքին յահէ նոցա փախան եթէ այլազգ և թէ քրիստոնեայ ամենեքեանն օղուլով, ուշաղով, մալով, եկեալ ի քաղաք կեցան։ Եւ Թշնամին այնքան հակառակ եղաւ ի հետ քաղաքին, զի կապեալ էր ի շորս կողմանց զճանապարհս և ոչ թողոյր, որ գար քէվրան ի յայլ երկրէ, այլ կողոպտէր և բազում վնասս առնէր. և ի հնձոց ժամանակին ցորեան մնաց ի մէյտան վասն ահէ նոցա. և քաղաքացիքն ոչ գտեալ զհնար ի հետ Թշնամւոյն՝ շատ երկաթեղէնս, նալ, մըխ, լաթեղէն, քիւրք, հանդերձ փէշկէշ տվին և հաշտեցան ընդ իրարս։ Եւ պարտք քաղաքին շատացեալ և զուկուրդ քրիստոնէի մարդկանց, և աստ և անդ ցրուեալ վասն երկրին անխաղաղ լինելոյ»։ Հետագա տարիներին լեվենդների խժդժությունները շարունակվում են։

1769 թ. էջմիածնից գրիչ Գրիգոր վարդապետ Եղվարդցին պատմում է ոմն քուրդ Ալիբեկ անունով ավազակապետի կատարած չարագործությունների մասին Կարսի ու Երևանի շրջակայքում, երբ Կարսի փաշան ստիպված է եղել օգնության դիմելու վրաց Հերակլ II թագավորին։ «...ի յայսմ ժամանակի (1769),— գրում է նա,— ի մէջ Կարսայ եւ յԵրեւանու, քուրդ մի զօրաւոր եղև որ անուն նորա կոչիւր Ալիբեկ, սա զբազում վնասս գործէր աստի և անտի, և ոչ թողուր հանդարտիլ և խաղաղ մնալ զճանապարհ եւ զկարաւան։ Վասն որոյ Կարսայ փաշայն իւր մեծամեծօքն եւ քիւրդ Սուլեյմանին, եւ Եաղուպ աղայն և այլք գրեցին առ արքայն Վրաց Հերակլեա զի գայցէ և բառնայցէ զայն ի միջոյ։ Վասնորոյ և յանկարծակի եկն Հերակլեան բազում զօրօք յերկիրն Կարսայ, եւ իմացեալ քրդին փախեաւ յետ և մնացեալ ինչք առին, եւ ոչ նոքոք լիացան աչք զօրացն, այլ պատճառաւ քրդին գերեցին

339 J. Hammer, t. XVI, p. 103—104.

զբազում գիւղորայս խղճալի ազգին հայոց եւ կոտորեցին։ Որ եւ անդ էր տեսանել զհեղումն արեան, եւ զհառաչումն մարց եւ որդւոց։ Եւ զձայն զօրացն զի որպէս բաժանումն աշտարակի էր, ոչ եթէ վասն բազմութեան զօրացն միայն, այլ վասն այլև այլ լեզուացն, որք էին նախ վրացիք, չարքեազ, օս, թուշ, փչաւ, խեսուր, լազկի, տաճիկ, եւ այլն պէսպէս միլլեթ շատք։ Արքայն Հերակլ այնքան զօրսն ընդ ձեռամբ իւր առնելով հնազանդութեամբ, զամենայն գերիսն դարձոյց, եւ յաւարն ոչ, եւ ինքն դարձաւ դէպ յերկիրս մեր Երևան»[340]։

Ահա այսպիսին էր Արևմտյան Հայաստանի քաղաքական վիճակը, երբ սկսվեց հերթական ռուս-թուրքական պատերազմը։

* * *

XVIII դարի 30-ական թվականներից հայ համայնքի ներսում ծայր առած խռովությունը նորից սրվում է։ 1737 թ. «Ի Կոստանդինուպոլիս դարձեալ սկսաւ գրգռութիւն վեճմանց ի մէջ հայոց զի ի յաճախել միոյն կողմանն յեկեղեցին լատինացւոց...»։ Դարձյալ գործին միջամտում է մարքիզ դե Վիլնյովը ու խափանում խռովության նոր ալիքը[341]։ Սակայն 1744 թ. «Հայ կաթոլիկների դեմ այս դարում արդեն երրորդ անգամ մի հալածանք է սանձազերծվում։ (Սուլթանական) մի ֆերման թիավարության ու կախաղանի սպառնալիքով արգելում էր բոլոր հայերին մտնել կաթոլիկ եկեղեցիները»[342]։

1761 թ. խռովության ալիքը հայադավանների ու կաթոլիկների միջև նորից բարձրանում է մայրաքաղաքում։ Պոլսեցի ոմն երեց Մանուել դիմում է սուլթանին. «...բազումք յազգէ հայոց դարձեալ են ի ֆռանկութիւն... և ճոխացեալ են ի վրա ստրկոց քոյ իշխանութեամբ ֆռանկ դեսպանաց»[343]։ Մանուել երեցը ամբաստանում է նույնիսկ Հակոբ պատրիարքին՝ կաթոլիկներին համակրելու մեջ։ Կառավարությունը կրկին դիմում է խիստ միջոցների, անշուշտ, հայերից առավելագույն օգուտ քաղելու նպատակով։ «Հայ կաթոլիկների դեմ սանձազերծված հալածանքն սպառնում էր վերսկսել նոր ուժգնությամբ. Ֆրանսիայի հովանավորության ներքո գտնվող Գալատայի եղուիտների դոմինիկյանների և կապուչինների եկեղեցիները անարգվեցին և ավելի

340 Մատենադարան, Մագիստրոսի թղթ. № 133, էջ 1769։

341 Մ. Չամչյան, էջ 822։

342 J. Hammer, t. XVI, p. 90.

343 Մ. Չամչյան, էջ 841։

քան հիսուն հայեր, որոնք այս վայրերում էին ապաստանվել, թիավարության դատապարտվեցին (22 նոյեմբեր 1761 թ.)»[344]։

* * *

1768 թ. պատերազմ ծագեց Թուրքիայի և Ռուսաստանի միջև։ 1739 թ. Բելգրադյան հաշտության պայմանագիրը չէր լուծել ռուսական արտաքին քաղաքականության գլխավոր հարցերից մեկը՝ Սև ծով ազատ ելք ունենալու խնդիրը։ Բացի այդ, թրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների՝ ռուսների կողմից հովանավորումը ծայր աստիճան սրում էր երկու պետությունների միջև գոյություն ունեցող քաղաքական հարաբերությունները։ 1765—1766 թթ. Վրաստանում բռնկված ապըստամբությունների ժամանակ վրացիները անվերջ դիմում էին Ռուսաստանի օգնությանը։ 1768 թ. Իմերեթիայի թագավոր Սոլոմոն Ալեքսանդրովիչը հատուկ պատվիրակություն ուղարկեց Պետերբուրգ՝ կայսրուհու մոտ, խնդրելով «...ազատել իրենց այլադավան օսմանցիներից և տարածել Ձեր ամենազոր ձեռքը մեր երկրի ու մեր ժողովրդի վրա...»[345]։ Նույնպիսի խնդրով, դեռևս 1762 թ., Եկատերինա II-ին դիմել էին չերնոգորցիները։ Հույները հավաստիացնում էին կայսրուհուն, որ պատերազմի դեպքում սուլթանի դեմ կհանեն 50 հազարանոց բանակ։

Եկատերինա II-ը, բնականաբար, պատերազմի դեպքում նախատեսում է օգտագործել ապստամբ քրիստոնյա հպատակներին։ Ամենուր ուղարկվում էին ներկայացուցիչներ. կայսրուհին մինչև իսկ հատուկ հրովարտակով, ուղղված հույներին և բալկանյան երկրների սլավոններին, կոչ էր անում դիմել զենքի ու կռվել թուրքերի դեմ, քանի որ, հայտնում էր նա, ռուսների մղած պատերազմի հիմնական նպատակը քրիստոնյա հպատակների ազատագրումն է[346]։

Ստեղծված իրավիճակից ձգտում էին օգտվել նաև հայերը։ Ռուս-թուրքական պատերազմը և Կովկասում ռազմաճակատ բացելու հեռանկարը ոգեշնչում էին Ռուսաստանում ապրող հայրենասեր հայերին, որոնք վաղուց ի վեր երազում էին ռուսական զենքի օգնությամբ իրենց հայրենիքը փրկված տեսնել։ Նրանք, 1768 թ. պատերազմի ընթացքում, ռուսական արտաքին գործերի կոլեգիային ներկայացրին մի ծրագիր,

344 *J. Hammer*, t. XVI, p. 70.

345 *Г. А. Галоян*, с. 91.

346 *С. М. Соловьев*, т. VI, с. 585.

որով նախատեսվում էր հայկական մարզերի ազատագրումը և Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական պետության ստեղծումը[347]։

Որ բալկանյան ժողովուրդների ամբողջ համակրանքը պատերազմի ընթացքում ռուսների կողմն էր, վկայում է բազմիցս ինքը՝ պատմագիր Վասըֆը։ Մոլդավիայի իշխան Լիգորն անցել էր թշնամու կողմը՝ ձերբակալվել ու գլխատվել էր, «Մոլդավիայի հույն բոյարներն ամբողջությամբ նվիրված էին Ռուսաստանին», «Մեծ վեզիրը հրամաններ էր արձակում Մոլդավիայի նոր իշխանին՝ ամենախստագույնս պատժել այն հպատակներին, որոնք համակրում են ռուսներին», 1770 թ. ձըմռանը Մոլդավիայում և Վալախիայում «...հազիվ սկսել էին մարտերը, երբ տեղում գտնվող (քրիստոնյա) հպատակները ապստամբեցին թուրքերի դեմ և սպանեցին խազնեդարին (ֆինանսական կառավարչին) և մուսուլման այլ պետական գործիչների», «Գալացի իշխանը ռուսների առաջ բաց էր արել Վալախիայի դռները»[348] և այլն։ Ահա այսպիսի վկայություններով լեցուն է Վասըֆի տարեգրությունը։

Անհաջողություններից կատաղած թուրքական զորքերն ամենուրեք զբաղվում էին կողոպուտով ու սպանություններով։ Դրանում է տեսնում Վասըֆը թուրքերի պարտության բուն պատճառը. «Դա մի պատիժ էր, որ նախախնամությունը վերապահել էր իսլամական զորքերին այն խժդժությունների ու ավազակությունների համար, որ նրանք կատարել էին իրենց անցած բոլոր նահանգներում»[349]։ Մի այլ տեղ պատմագիրը գրում է. «Այն ավազակությունները, որ նրանք (թուրքերը— Մ. Ջ.) կատարել էին ամենուր՝ ամեն տեսակի խժդժություններ ու այլ հանցագործություններ, իր վրա էր սևեռել բարձրյալն Աստուծո զայրույթը, որն ուղեց նրանց գլխին պայթեցնել իր պատիժն ու ընտրեց անհավատներին, որպես գործիք»[350]։

Ջանդրադառնալով պատերազմական գործողությունների նկարագրությանը, նշենք միայն, որ պատերազմի ընթացքում դրսևորվեց Օսմանյան կայսրության ամբողջ նեխվածությունը։ Ամենուրեք՝ Չերնոգորիայում ու Բոսնիայում, Մորեայում, Սիրիայում ու Լիբանանում, Քրդստանի տարբեր մասերում և Վրաստանում, բռնկվեցին ապստամ-

347 *А. Р. Иоаннисян*, Иосиф Эмин, с. 266.

348 "Précis historique de la guerre des Turcs contre les Russes par Vassif-effendi", pp. 28—29, 31, 35, 66, 68 և այլն։

349 Նույն տեղում, էջ 59։

350 Նույն տեղում, էջ 109։

բություններ։ Հատկապես Վրաստանի ապստամբության նկարագրությանը մեծ տեղ է հատկացրել Վասրֆը իր տարեգրության մեջ[351]։

Պատերազմի ամբողջ ընթացքում ռուսական բանակները կռվում էին Դանուբի մերձակայքում և Ղրիմում, Կուբանում, Վրաստանում և Մորեայում, իսկ ռազմական նավատորմը ճեղքում էր Սև ու Միջերկրական ծովերը[352]։ Հատկապես հիշարժան է ռուսական ռազմական նավատորմի փայլուն հաղթանակը Չեշմեյի ծովախորշում։ Ուշագրավ է այն գնահատականը, որ տալիս է Յոզեֆ Համմերը Չեշմեյի ծովամարտում ռուսների հաղթանակին։ «Լեպանտոյի ծովամարտից հետո, Չեշմեյինը ամենամեծ պարտությունն էր, որ երբևէ կրել էր օսմանյան ռազմական նավատորմը... Եթե Լեպանտոյի ծովամարտը վերջակետ էր դնում Սուլեյմանի և Սելիմ II-ի իշխանության տարիներին, Օսմանյան կայսրության փայլին, ապա Չեշմեյի հրդեհը Կայնարջիի պայմանագրի ավետաբերը դարձավ»[353]։

Թուրքիայի վիճակը բավական ծանր էր, ուստի ստիպված եղավ Ռուսաստանից հաշտություն խնդրել։ 1774 թ. հուլիսի 21-ին, 1711 թ. Պրուտյան հաշտության պայմանագրի ստորագրման 63-րդ տարեդարձի օրը, ստորագրվեց Կյուչյուք-Կայնարջիի պայմանագիրը, որի համաձայն Թուրքիան պարտավորվում էր երեք տարվա ընթացքում չորս ու կես միլիոն ռուբլի ռազմատուգանք վճարել Ռուսաստանին։ Ռուսաստանը, վերջապես, իրավունք էր ձեռք բերում իր առևտրական նավերի համար ազատ երթևեկություն ունենալ Թուրքիայի առափնյա ջրերում և անցնել նեղուցներով։ Պայմանագիրը Ռուսաստանի հպատակներին տալիս էր այն նույն կապիտուլյացիոն իրավունքները, ինչպիսիք ունեին Անգլիայի և Ֆրանսիայի հպատակները։ Պայմանագրի ամենակարևոր կետերից մեկն այն էր, որ Ռուսաստանն իրավունք էր ձեռք բերում հյուպատոսություններ բացել Օսմանյան կայսրության ցանկացած քաղաքում։ 7-րդ և 16-րդ հոդվածներով Թուրքիան պարտավորվում էր ներում շնորհել բոլոր քրիստոնյա հպատակներին, որոնք պատերազմի ժամանակ կամ համագործակցել և կամ համակրել էին ռուսներին և այլն[354]։

---

351 "Mehasinul aser ve hakayik-el-ahbar", c. II, Mısır, Buiak, 1246 (1830—1831), s. 121 (այսուհետև՝ *Vasif*).

352 *Г. А. Галоян*, с. 94—97.

353 *J. Hammer*, t. XV, d. 253.

354 *Այս մասին տե՛ս A. Shopoff*, Les réformes et la protection des chrétiens en Turquie (1673—1904), Paris, 1904, p. 3—11.

Կյուչյուք-Կայնարջիի հաշտության պայմանագիրը շրջադարձային կետ հանդիսացավ ռուս-թուրքական հարաբերությունների մեջ։ 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմը ցույց տվեց, որ Ռուսաստանը միայնակ ընդունակ է Թուրքիային հասցնել մահացու հարվածներ, և որ Ռուսաստանը միակ երկիրն է, որի վրա կարող են հույս դնել իրենց երկրների ազատագրման խնդրում Թուրքիայի կողմից ստրկացված քրիստոնյա ժողովուրդները։ Այս տեսակետից ուշագրավ է այն զեկուցագիրը, որ ուղարկել էր Կ. Պոլսի ավստրիական դեսպանն իր կառավարությանը. «Ամենաուշագրավն այս պարագաներում այն է, որ Արևելքի կայսրության անձեռնմխելիությունն այլևս կախված չի լինելու մյուս պետությունների բարի ցանկությունից, այլ միայն և միայն Ռուսաստանի կամքից»[355]։

* * *

Պատերազմի տարիներին արևմտահայ գավառները, դատելով մեզ հասած հայերեն կցկտուր տեղեկություններից, շարաշար տուժում էին ոչ միայն հարկերի ու տուրքերի խիստ ավելացումից (այդ մասին խոսք կլինի առանձին), այլև, առավել քան դա առաջ էր, լեվենդ ավազակախմբերի ասպատակություններից, Հարավային Հայաստանում քրդերի մեջ հաճախակի ծագած միջավատական ընդհարումներից, քուրդ ավատատերերի հակակառավարական ելույթներից և այլն[356]։ Դա պարզ երևում է Հակոբ Դիվրիկեցու և Անանուն Վանեցու տարեգրություններից։ «Եւ այս տարի (1770 թ.),— գրում է Հակոբ Դիվրիկեցին,— պատրաստեալ սուլթան Մուստաֆա պատերազմ ի հետ Մոսկոֆին, խաբար ուղարկեալ ոլորտս տիեզերաց իւրոց, վասն զօրու, զի գնասցեն պատերազմ թագաւորին. խառնակում էր ամենայն տեղիս եւս առաւել ի մեր քաղաքն (ընդգծումը մերն է— Մ. Զ.). զի յոյժ նեղէին զքրիստոնեայ ազգն, վասն ինչքի և այլ շար գործի համար»[357]։

Հաջորդ տարի վիճակն ավելի ևս վատթարանում է։ «ՌՄԻ (1771) ոչ եղև խաղաղութիւն յամենայն տեղիս,— շարունակում է մեր հեղինակը,— վասն պատերազմի թագաւորաց, զի հրաման թագաւորին սաստիկ էր ոլորտս տիեզերաց։ Եվ բազում զօրք կայր ի վերայ երկրի և լէվէնտ թշնամի հակառակ մեր քաղաքին և զապիթն ժողովեալ զամե-

---

355 *Dimitri Boukharov*, p. 37.

356 «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 376—377։

357 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 456։

նայն գունդս գնացին պատերազմեցան ի դուրս քաղաքէն, բերեալ սակաւ գլուխ և մարդ, և զմարդսն կախեալ, և այլազգիքն որ ոչ երթային սէֆէր, վասն լեվենտնուն համար և թշնամիքն օր ըստ օրէ շատանային։ Եւ ամառնային ժամանակի եկեալ Պօլսոյ զապիթ Դուռնաճի պաշի՝ զոմանս սէֆէր խրկեց և զոմանս սպաննեց և զոմանս զապիթ արար... Եւ պարտք քաղաքին շատացեալ և քրիստոնեայքն աստ և անդ ցրուեալ, զի ոչ գոյր վաստակ որ ջանային զպարտսն հատուցանել, վասն այնորիկ՝ նեղութեամբ անցունէին տարիս»[358]։

Կառավարությանը, ինչպես երևում է սույն վկայությունից, դժվարությամբ էր հաջողվում համալրել բանակի շարքերը, իսկ համալրելուց հետո էլ շատերը[359], հատկապես քրդերը, լքում էին ռազմաճակատը, վերադառնում իրենց հայրենի օջախն ու հաճախ բարձրացնում ապստամբության դրոշ։ Այդպես վարվեցին, օրինակ, Դիարբեքիրի շրջանից հավաքագրված քուրդ զինվորները[360]։

1771 թ. լեվենդների մեծ ապստամբություն էր բռնկվել Քյութահիայի շրջանում։ Նրանք հրի ու սրի էին մատնում ամբողջ նահանգը։ Կառավարությանը մեծ դժվարությամբ հաջողվեց ճնշել ապստամբությունը[361]։

1772—1775 թթ. ընթացքում վիճակն արևմտահայ գավառներում առավել ևս վատանում է։ «ՌՄԻԱ (1772) ոչ գոյ երբեք խաղաղութիւն երկրիս ամենայն, զի պատերազմ թագաւորաց սաստիկ էր. ամէն շաբաթ մէնզիլ գար քաղաքէ ի քաղաք վասն մարդկանց, զի երթեալ պատերազմեսցին, և շատ անօրէն լէվէնտ կայր ի մեր քաղաքն, վասն սպանման ընկերաց իւրեանց աւերէին բազում գիւղօրայս (ընդգծումը մերն է— Մ. Ղ.)»[362]։ «ՌՄԻԳ (1774) ամին ոչ եղև խաղաղութիւն ընդ ամենայն տիեզերս, զի հրաման թագաւորին սաստիկ էր, ահա Մօսկոֆին յոյժ նեղէր ամենայն քաղաք, զամենայն մարդ, զի զօրեղութիւն և արուեստագործութիւն լինէին ամենայն, որ ոչ երթային սէֆէր։ Եւ ի յայս տարիս անհուն մարդիկն բազում մալ և շատ ձի ջրին տուեալ ի մեծ գետն Թունայ (Դանուբ)։ Եւ Պոլիս սաստիկ սղութիւն եղեալ, որ մինչ երեսուն տիրէմ հացը երկու փարայ եղեալ, որ խաբարն գայր

358 Նույն տեղում։

359 Այդ մասին ցավով է արձանագրում պատմագիր Վասրֆը (տե՛ս «Précis....», pp. 108—109, 147, 187, 266, 272 և այլն)։

360 J. Hammer, t. XVI, p. 264.

361 Նույն տեղում, էջ 310—311։

362 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 456։

յերկրէ երկիր և ի մեր քաղաքն»[363]։ «ՌՄԻԹ (1775) ամին եւս առաւել ոչ գոյ երբէք հանդարտութիւն... և ի գարնան եկեալ, ի յարևմտից կողմանէն, Սախբը փաշան մի երեք թուղրով, բազում էսքէրով, և շատ մալով կեցեալ ի քաղաքն մեր եօթ օր, շատ խարճ և շատ մասրաֆ եղեալ վասն բազում զօրացն. և զապիթ քաղաքին յետոյ ժողովեալ զամենայն գունդս իւր, բաշխ արարեալ զպարտսն քաղաքին, յետոյ ժողովեալ քրիստոնէից ինը քէսէ զուրուշ պարտք, որ թէ և թէրով 130 տուն էին, այսմ տարւոջ ոմանք տուին 150 զուրուշ, ոմանք տուին 100 զուրուշ, և ես տառապեալս տուի 70 զուրուշ, այսպես զամենեքեան բռնադատութեամբ պէս պէս նեղութեամբ հատուցին զպարտս իւրանց, ոմանք պարտրկան եղեալ գնացին ի յօտար երկիր, և ոմանք չքաւորեալ փախեան ի յօթեանէն իւրեանց»[364]։ Կարծում ենք, սխալված չենք լինի, եթե արձանագրենք, որ նման վիճակ տիրում էր ոչ միայն Դիվրիկի, այլ ամբողջ Արևմտյան Հայաստանի գավառներում։

Ի. Հ. Ուզունչարշըլը, խոսելով 1768—1774 թթ. պատերազմի աղետաբեր հետևանքների մասին, ստիպված խոստովանում է. «Ռուսների հետ պատերազմը պետական գանձարանը դատարկեց ու նյութական ու բարոյական աղետի գլորեց երկիրը. ոչ միայն տեղ-տեղ կայսրությունը տարածքային կորուստներ ունեցավ, այլև պատճառ հանդիսացավ այն բանի, որ երկրի տարբեր մասերում ծայր առան ապստամբություններ և Անատոլիան ու Ռումելին... ավերակի վերածվեցին»[365]։

Սուլթան Աբդուլ Համիդ I-ի ժամանակ, Արևմտյան Հայաստանի հարավային քրդաբնակ շրջաններում բռնկվեց մի մեծ ապստամբություն, որը ղեկավարում էր իրեն «Մահդի» հորջորջած՝ նախկինում իտալացի կաթոլիկ մի կրոնավոր։ Նա իր առաջ նպատակ էր դրել գավթել ամբողջ Փոքր Ասիան[366]։ 1785 թ. նա քրդական զորքերի գլուխ անցած գրավում է Արևմտյան Հայաստանի մի մասը, ներառյալ Կարինը (Էրզրումը)։ Ընդունելով Մանսուր («Հաղթական») անունը, նա արշավանք է ձեռնարկում Սեբաստիայի, Թոխաթի և Զմյուռնիայի վրա։ Կառավարությանը մեծ դժվարությամբ հաջողվում է ճնշել ապստամբությունը[367]։

363 Նույն տեղում։

364 Նույն տեղում։

365 I. H. Uzunçarşılı, c. IV, s. 437.

366 Jonquière, Histoire de l' empire ottoman, t. I, Paris, 1914, p. 317—318.

367 Նույն տեղում։

* * *

1775 թ. Թուրքիան ռազմական ընդհարման մեջ մտավ Իրանի հետ այն բանից հետո, երբ իրանական գահը զավթած Զենդ Քերիմը գրավեց Պարսկական ծոցի գլխավոր նավահանգիստ Բասրա քաղաքը։ Բացի այդ, Քերիմ խանը 1775 թ. մարտին (1189 թ. մուհարրեմ) քառասուն հազարանոց մի բանակով ասպատակում է Արևմտյան Հայաստանի գավառները[368]։

Թուրքական կառավարությունը Էրզրումի և Տրապիզոնի վալի, արևելյան ճակատի սերասքյար Էլհաջ Ալի փաշային ուղարկած հրամանում պահանջում էր ոչ միայն նախապատրաստվել Զենդ Քերիմի դեմ մղվելիք երկարատև պատերազմին, այլև ապահովել Վրաստանի թագավորների և Ադրբեջանի խաների չեզոքությունը պատերազմի տարիներին[369]։

1778 թ., երբ դեռևս շարունակվում էր պատերազմը Իրանի հետ, Քերիմ խանի և Ռուսաստանի միջև համաձայնություն կնքվեց։ Քերիմ խանը պարտավորվում էր ռուս-թուրքական պատերազմի դեպքում ասպատակել Արևմտյան Հայաստանի նահանգները։ Դա բխում էր ռուսական արտաքին քաղաքականության շահերից, սակայն այդ իրանո-ռուսական ծրագրին վիճակված չէր իրականանալ։ Զենդ Քերիմի մահից հետո, Իրանի ղեկավար շրջանները 1779 թ. Բասրան հանձնեցին Թուրքիային և հաշտության պայմանագիր կնքեցին։

* * *

1783 թ. հուլիսի 24-ին Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկ ամրոցում Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքվեց համաձայնագիր՝ դաշինքի ու հովանավորության մասին։ 13 կետից բաղկացած այդ համաձայնագրի (տրակտատի) առաջին կետում ասված էր. «Քարթլիի և Կախեթիայի թագավորը իր, ժառանգորդների ու հետնորդների անուններից ընդմիշտ հրաժարվում է որևէ մի ենթակայությունից կամ կախումից, ինչպիսի ձևով էլ նա եղած լինի Պարսկաստանից կամ մի որևէ այլ տերությունից և իր ու իր հետնորդների վրա չի ճանաչում մի այլ իշխանություն, բացի համայն Ռուսիո արքաների գերագույն իշխանությունից ու հովանավորությունից, խոստանալով համայն Ռուսիո գահին հավատարմություն ու բոլոր դեպքերում, երբ դա պահանջվում է իրենից (ռուսական) պետության շահերին օժանդակելու պատրաստակամություն»[370]։

Համաձայնագրի գաղտնի հոդվածների համաձայն, Ռուսաստանը պարտավորվում էր խաղաղ ժամանակ Վրաստանում պահել երկու գունդ, իսկ պատերազմի դեպքում ավելացնել զորքի թիվը։ «Գեորգիևյան տրակտատը,— գրում է Գ. Ա. Գալոյանը,— հանդիսացավ կարևոր իրադարձություն ոչ միայն վրաց, այլև Անդրկովկասի մյուս ժողովուրդների կյանքում։ Այդ իմաստուն արարքով Հերակլ I-ը սկզբնավորեց Ռուսաստանի հովանավորության ամուր հիմքը և դրանով իսկ ապահովեց Վրաստանի անվտանգությունը Թուրքիայից և Պարսկաստանից»[371]։

Գեորգիևյան դաշինքի կնքումն ու ռուսական զորքերի մուտքը Վրաստան ահաղանգեց Թուրքիային. նա այդ քայլը դիտեց որպես սպառնալիք իր փորբասիական արևելյան նահանգներին։ Այդ պատճառով, նա ձգտեց Անդրկովկասում, իսլամի դրոշի ներքո, իրանական խաների գլխավորությամբ հակառուսական, հակավրացական դաշինք ստեղծել։ Այդ գործի գլխավոր կազմակերպիչը, ինչպես դա երևում է պատմագիր Ջևդեթի վկայություններից, Ախալցխայի վալի Սուլեյման փաշան էր։ Ահա այդ վկայությունները. «Հերակլ խանը (գեներալ) Պոտյոմկինի նվերներով շլացած 1197 թ. Ռամազան ամսի կեսերին (1783 թ. հուլիս) ընդունեց Ռուսաստանի հովանավորությունը և Եկատերինային գրավոր հավաստիացրեց, թե հետ այսու չի ճանաչելու որևէ այլ պետության հպատակությունը և կարիքի ու անհրաժեշտության դեպքում պատրաստ է օգնել Ռուսաստանին, իսկ վերջինս էլ հանձն էր առնում նրան ու նրա երկիրը պաշտպանել»[372]։ Այս պայմանագրի կնքումով, այնուհետև շարունակում է Ջևդեթը, Ռուսաստանը «...նպատակադրվել էր Հերակլի ու Սոլոմոն խաների օժանդակությամբ հարձակվել փադիշահական սահմանների վրա»[373]։ Այս հանգամանքը, գրում է տարեգիրը, «...պատճառ հանդիսացավ օսմանյան կառավարության և Ռուսաստանի միջև գոյություն ունեցող սառնության ուժեղացմանը»[374]։ Ուստի, մայրաքաղաքից Ջլդրրի վալի Սուլեյման փա-

368 *I. H. Uzunçarşılı*, c. IV, I, s. 459.

369 Նույն տեղում։

370 *Г. А. Галоян*, с. 103.

371 Նույն տեղում, էջ 104—105։

372 "Tarih-i Cevdet", c. II, s. 122.

373 Նույն տեղում, էջ 123։

374 Նույն տեղում, էջ 149։

շային հրաման տրվեց «...լինել աշալուրջ, կրոնամոլությամբ, քաջությամբ ու առնականությամբ հայտնի Դաղստանի ժողովուրդներին ամեն կերպ սիրաշահել, նրանց առաջնորդներին հանձնել մայրաքաղաքից ուղարկված նվերներն ու կայսերական շնորհագրերը՝ կոչ անելով նրանց ջիհադի (սրբազան պատերազմի)»[375] ընդդեմ Ռուսաստանի։

1784—1785 թվականների ընթացքում Կ. Պոլսի ռուսական դեսպան Բուլգակովը, արտաքին գործերի կոլեգիայի և անձամբ կայսրուհու պահանջով, բազմիցս բողոքներ էր ներկայացնում թուրքական կառավարությանը Զլդրրի վալի Սուլեյման փաշայի հակառուսական գործունեության համար։ Սակայն այդ բողոքներին, ինչպես դա երևում է Ջեվդեթի վկայություններից, թուրքական կողմը խուսափողական պատասխաններ էր տալիս։ Տեսակցելով ռեիս էֆենդիի (արտաքին գործերի մինիստր) հետ, գրում է Ջեվդեթը, ռուսական դեսպան Բուլգակովը հիշեցրեց նրան, որ Վրաստանի և Ռուսաստանի միջև գոյություն ունի դաշինք, և որ Զլդրրի վալիի դրդմամբ Դաղստանի խանը հարձակվել է Թիֆլիսի վրա։ «Դեսպանը պահանջեց, որ (Զլդրրի) վալին պաշտոնազրկվի, օսմանյան կառավարությունը դադարեցնի հովանավորել հիշյալ ցեղին (դաղստանցիներին— Մ. Զ.) ու հեռացնի նրանց Թիֆլիսի սահմաններից»[376]։ Ռեիս էֆենդիի պատասխանը ոչ միայն խուսափողական էր, այլև փաստորեն պաշտպանության տակ էր վերցնում հովանավորյալին՝ Դաղստանի խանին[377]։

Ռուսաստանը հովանավորում էր ոչ միայն Վրաստանին, այլև, դեռևս 1783 թ. Պոտյոմկինի առաջ քաշած ծրագրով, Թուրքիայի տիրապետության տակ ընկած Արևմտյան Վրաստանին և Արևմտյան Հայաստանին։ «Իսկ թուրքական Հայաստանը,— գրում է Ա. Ռ. Հովհաննիսյանը,— պիտի միացվեր իր կորպուսին, այսինքն՝ հայկական պետականությանը, որը պիտի կազմվեր պարսկական նախկին նահանգներից։ Հետևաբար, վերջին հաշվով նախատեսված էր ստեղծել ընդարձակ հայկական պետականություն, որը պիտի ընդգրկեր հին հայկական բոլոր հողերը»[378]։

---

375 Նույն տեղում։

376 "Tarih-i Cevdet", c. III, s. 154.

377 Նույն տեղում։

378 *Ա. Ռ. Ոսկանիսյան*, Россия и армянское освободительное движение..., с. 130—131.

Սուլթանական պալատում Ռուսաստանի հանդեպ ատելությունը գնալով սաստկանում էր։ Բազմատենչ հոսանքը գլխավորում էր մեծ վեզիր Կոջա Յուսուֆ փաշան, որի մասին ակնարկում են նաև հայկական աղբյուրները։ Համաձայն Պողոս Կաղզվանցու տարեգրության, հիշյալ Յուսուֆ փաշան պատերազմի ընթացքում, որպես աննախադեպ երևույթ, մայրաքաղաքի հայերից ու հույներից ռազմական ծառայության համար մարդիկ է հավաքագրել, ենթարկել քրիստոնյա հպատակներին, ինչպես և հրեաներին, ծանր հարկատվության. «Արդ՝ յաւուրս թագաւորութեան սուլթան Համիդի և ի թուականութեան հայոց ՌՄԼԶ (1787) յարեաւ պատերազմն Օսմանցւոց ընդ երկուց տէրութեանցն՝ Մոսկովու և Նեմցեի (Ավստրիայի), յորում ժամանակի էր Եպարքօսն Եուսուֆ փաշայն, որ էր այր նախանձախնդիր դէնի իւրեանց, և ըստ մեծի մասին՝ պատճառ պատերազմին, որ ոչ սակաւ բանիւք յորդորեալ զթագաւորն զրդռեաց յայս գործ մեծ, և եբարձ զդեսպանն ռուսաց և արգել ի կալանս ի յեօթն կլայն ըստ նախնի սովորութեան իւրեանց. ի վերոգրեալ թուականին յօգոստոսի Ե(5)-ին. և թէպետ սկսաւ պատերազմն, յորմէ ի տրտմութիւն մեծ պաշարեցաւ բոլոր աշխարհ Օսմանցւոց, այլ և ինքն Եուսուֆ փաշայն անկաւ ի տագնապ տարակուսութեան, յաղագս սակաւութեան զօրաց ուստի և հնարս եգիտ այսպէս. նախ՝ առաքեալ կոչեաց զմեծամեծս հայոց, և խնդրեաց ի նոցանէ զհազար այր հզօր ի պատերազմի, յորում յոյժ բազում պաղատելով՝ հազիւ կարացին իջուցանել ի հինգ հարիւրն։ Ապա կոչեցեալ զՅունաց մեծաւորսն և պահանջեաց ի նոցանէ ևս երկու հազար այր պատերազմական՝ որք ծառայեսցեն ի նաւսն գնացողս ի պատերազմ. և նոցա ևս աղաչեալ՝ հազիւ իջուցին ի հազար ութն հարիւր, և այս սահման մարդապահանջութեան՝ մնաց հաստատուն՝ ի վերայ երկուց ազգաց՝ յունաց ասեմ և հայոց, յամ ըստ յամէ, ԵՃ(500) հայք, հազար ութն հարիւր յոյնք, յամս չորս բռնութեամբ Եուսուֆ փաշային, որ յաւիտենից ոչ էր եղեալ և ոչ տեսեալ զայսպիսի արտաքոյ կանոնի հարկադրութիւնս. և ոչ ի մի ժամանակ թագաւորաց, և յետ չորից ամաց և անդր հատուցանեն զվարձս հինգ հարիւրոցն դրամս հինգ հազար հայք, նմանապէս և յոյնք հազար ութն հարիւրոցն ըստ այնմ հաշուի»[379]։

Իրենց առաջ գլխավոր խնդիր համարելով Ղրիմի վերանվաճումը, թուրքերը հիմնական ճակատը տեղափոխեցին այնտեղ և միաժամա-

---

379 «Դիւան հայոց պատմութեան», հ. ժ, էջ 331—334։

նակ հրահանգեցին Զլդրրի վալի Սուլեյման փաշային՝ «...Դաղստանի և Ադրբեջանի խաների հետ դաշինք կնքել և լրիվ մեկուսացնել Հերակլ խանին ու ոչնչացնել նրան»[380]։ Սուլթանը ձգտում էր այս անգամ ևս «ջիհադ» կազմակերպել Ռուսաստանի դեմ ու նրան հարվածել և՛ Անդրկովկասի, և՛ Հյուսիսային Կովկասի վրայով։

Անգլիայի և Պրուսիայի դրդմամբ Շվեդիան պատերազմ էր հայտարարել Ռուսաստանին 1788 թ. հունիսին։ Անգլիան և Պրուսիան չէին բավարարվում ոգեշնչել ու պաշտպանել մի կողմից Լեհաստանի խռովությունները, մյուս կողմից՝ Շվեդիայի զավթողական նպատակները։ Նրանք դեռևս հավակնում էին պահանջել Ռուսաստանից հրաժարվելու իր բոլոր նվաճումներից և թողնել օսմանյան տիրույթները անձեռնմխելի՝ վերականգնելով status quo վիճակը։ Եվ այդ նպատակով էր, որ 1789 թվականին Պրուսիան սուլթանական կառավարության հետ կնքեց գաղտնի դաշինք, համաձայն որի նա պարտավորվում էր հաջորդ գարնանը պատերազմ հայտարարել Ավստրիային և Ռուսաստանին։ Անգլիական դեսպան Վիտվորդը հայտնեց կայսրուհուն, որ թուրքական սահմանները պետք է մնան նույնությամբ, ինչ որ էին պատերազմից առաջ և որ անգլիական կառավարությունը դեմ է արտահայտվելու Ռուսաստանի որևէ մի նոր նվաճման[381]։ Վերջնագրի ձևով ներկայացված այս պահանջին, կայսրուհին պատասխանեց. «Գիտեմ, որ ձեր կառավարությունը որոշել է դուրս մղել ինձ Եվրոպայից։ Համենայն դեպս, հուսով եմ, որ նա չի ընդդիմանա ինձ տեղավորել Կոստանդնուպոլսում»[382]։

Շուտով Շվեդիան պատերազմից դուրս եկավ։ Իսպանիայի միջնորդությամբ։ 1790 թ. Վարեենում կնքված պայմանագրով երկու պետությունները ճանաչում էին մինչպատերազմյան սահմանները։

Մինչ այդ, տիրակալների փոփոխություն էր տեղի ունեցել Թուրքիայում. մահացել էր Աբդուլ Համիդ I-ը, գահ էր բարձրացել Սելիմ III-ը (7 ապրիլ 1789—11 ռեջեբ 1203)։ Ջեվդեթի վկայությամբ, վերջինս որոշ հույսեր էր ներշնչել ծանր պարտություններից դեռևս չսթափված թուրքական ղեկավար շրջաններին։ Նա իր առաջին պաշտոնական ելույթում հայտնել էր, որ սուրը չի դնելու պատյանը մինչև վրեժ չլուծի Թուրքիայի կրած պարտությունների համար[383]։ Շուտով նա հանդես

380 "Tarih-i Cevdet", c. III, s. 156.

381 *Dimitri Bockharov*, p. 47.

382 Նույն տեղում։

383 "Tarih-i Cevdet", c. IV, s. 363.

եկավ բանակին ուղղված մի ընդարձակ ֆերման-կոչով, որը մեջ է բերել պատմագիր Ջեվդեթը իր տարեգրությունում։ Ֆերմանում, հիշեցնելով թուրքերին իրենց փառավոր անցյալը, «երբ թշնամու առաջ, որպես երկաթյա պատնեշ կանգնած, առյուծների նման մռնչալով (թուրքերը) հարձակվում էին նրանց (թշնամու) վրա», սուլթանը հույս էր հայտնում, որ «ներկայումս էլ, թուրք զինվորները կկռվեն Մոսկովի դեմ»[384]։

Սակայն դա ոչ մի հետևանք չունեցավ։ Թուրքիան կրում էր պարտություն պարտության ետևից։ Գեներալ Ա. Վ. Սուվորովը Ֆոկշանում և հատկապես Ռիմնիկ գետի ափին թուրքերին հասցրեց մահացու հարվածներ (հիշարժան է, որ նա 28 հազարանոց զորքով գլխովին ջարդեց մեծ վեզիր Կոջա Յուսուֆ փաշայի 100 հազարանոց բանակը)։ Մոլդավիայում, Վալախիայում և Կովկասում տարած հաղթանակներով, ռուսական զորքերն իրենց առաջ բաց արեցին Ռումելիի և Փոքր Ասիայի ճանապարհները, մի հանգամանք, որը Թուրքիայի համար հղի էր ռազմական և քաղաքական ծանր հետևանքներով։

1789 թ. ֆրանսիական հեղափոխությունը որոշակի շոկում մտցրեց եվրոպական որոշ պետությունների՝ դեպի Ռուսաստան տածած քաղաքականության մեջ։ Այսպես, Լոնդոնի և Բեռլինի կաբինետները հակում ցուցաբերեցին վերջ տալու ռուս-թուրքական պատերազմին՝ զիջումներ կատարելով Ռուսաստանին։

1792 թ. հունվարի 10-ին (15 ջեմազիուլէվվել 1206 թ.) Յասում Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեց հաշտության պայմանագիր, որը բաղկացած էր 13 հոդվածից ու մի հավելվածից։ Համաձայն պայմանագրի երկրորդ հոդվածի, օսմանյան պետությունը ճանաչում էր 1774 թ. Կյուչյուք-Կայնարջիի պայմանագրի կետերը։ Եվրոպայում Թուրքիայի և Ռուսաստանի սահմանները կազմում էին Դնեստրը, իսկ Կովկասում՝ Կուբան գետը։ Պայմանագրի հինգերորդ հոդվածով Թուրքիան հանձն էր առնում չմիջամտել Վրաստանի ներքին գործերին։

* * *

XVIII դարի 70—80-ական թվականներին Կ. Պոլսում և արևմտահայ գավառներում կրկին սրվեց միջհամայնքային պայքարը հայադավանների ու կաթոլիկների միջև։ Այդ պայքարը առանձնապես սուր

384 Նույն տեղում։

բնույթ ընդունեց Զաքարիա պատրիարք Կաղզվանցու ժամանակ (նա բաղմել է պատրիարքական աթոռին 1772 թ. նոյեմբերի 30-ից)։ Այդ մասին մանրամասն տեղեկություններ են թողել Պողոս Կաղզվանցին, պատմագիր Ջեվդեթը և ձեռագրերի մի շարք հիշատակարաններ։

Պողոս Կաղզվանցու՝ թուրքերենից թարգմանաբար բերած պաշտոնական փաստաթղթերից կարելի է եզրակացնել, որ օսմանյան կառավարության ամբողջ համակրանքը եղել է կաթոլիկ հայերին հալածող հայոց պատրիարքի կողմը։ Ավելին վավերագրերը ցույց են տալիս, որ կառավարությունը լիազորել է պատրիարքին խստագույնս պատժել հայ կաթոլիկներին։ Բայց, ի վերջո, ավստրիական կառավարության ճնշման ներքո, ստիպված է եղել 1781 թ. պաշտոնազրկել պատրիարքին ու աքսորել Բրուսա։

Եթե XVIII դարի 60-ական թվականներին, օսմանյան կառավարությունն, ինչպես տեսանք, Ֆրանսիայի՝ Արևելքում վարած քաղաքականությանն ընդառաջելով, դադարեցրել էր հալածանքը հայ կաթոլիկների նկատմամբ, ապա 70-ական թվականներին դարձյալ պաշտպանության տակ վերցրեց հայոց պատրիարքների հակակաթոլիկական քաղաքականությունը։ Դա բացատրվում է նրանով, որ 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, Ֆրանսիան փոխել էր իր թշնամական վերաբերմունքը դեպի Ռուսաստանը և, ինչպես տեսանք, հանդես էր գալիս ռուս-թուրքական նոր ընդհարման հնարավորության դեմ։ Ուստի և Ֆրանսիայի ազդեցությունը Բ. Դռան վրա զգալի չափով թուլացել էր։ Մնում էր կաթոլիկ Ավստրիան, որը դաշնակցել էր սուլթանական պետության «հավերժ թշնամի» Ռուսաստանի հետ։ Հետևաբար, սուլթանն ու նրա պալատականները չէին կարող ունկն չդնել նման բողոքների. «...Հայքս, ահա այսքան ամ է որ հաւատարմաբար ծառայութիւն առնեմք Տէրութեան ձերում և մինչև ցմահ ևս ունիմք առնել զայսպիսի ծառայութիւն, ապա ուրեմն կամք բաժանեալք ի մէնջ, և սերեալք ըստ ինքեանց իբրև ազգ մի, որ կամին լինել միակամ ընդ Ֆռանկաց՝ որ են ձեզ մեծ թշնամիք (ընդգծումը մերն է— Մ. Ջ.)»[385]։

Եվ, ահա, Ղալաթիո վոյվոդային և ենիչերի աղասուն ուղղած ֆերմաններում Աբդուլ Համիդ I պահանջում էր խստագույնս պատժել հայ կաթոլիկներին՝ հատուկ ընդգծելով այդ հարցում պատրիարքներին ընձեռած իրավասությունները։ Ջանդրադառնալով պատրիարքների

385 «Դիւան հայոց պատմութեան», հ. ժ, էջ 218։

լիազորություններին, որոնք արտացոլվել են Պողոս Կաղզվանցու բերած սուլթանական ֆերմաններում (դա առանձին հարց է), նշենք միայն հայ կաթոլիկների նկատմամբ կառավարության որդեգրած քաղաքականությունը։ Ղալաթիո վոյվոդային ուղղված ֆերմանում կարդում ենք. «...Ի մեծի քաղաքիս իմոյ բնակեալք ազգն հայոց, զտանին ոմանք հեստեալք ի հաւատոց։ Որոյ յատկական անունն կաթոլիկ ձայնեալ. և օր ըստ օրէ հաւատովն այնու, զբաղում անձինս որսացեալ ճոխացեալ գտան. զի մեծք և փոքունք յայտնի և անյայտ՝ ել և մուտս առնեն յեկեղեցիս Ֆռանկաց և ի տունս իւրեանց զփաթերայս տանելով՝ զկարգ և զկանոն Ֆռանկաց բացարձակ կատարելով զտունն տեղի եկեղեցւոյ առնելով. զայս ապա կարգ և անօրէն գնացս ի լուր թագաւորութեանս հասանելով, որք անկասկած մնալով սարսափելի պատժոյն արքայականի. զայնպիսի անձինս կաթոլիկս՝ կայունս ի նոցին հաւատս ըմբռնեալ շարաշար պատժոք յանձնեսցեն յարքունական նաւս և ի թիս. ծառայութեամբ կեալ ի նոսին, որպէս գերի ըմբռնեալ ի թշնամւոյ (ընդգծումը մերն է Մ. Ջ.)»[386]։ Սուլթանական ֆերմանում հայադավաններն համարվում էին «հավատարիմք», իսկ կաթոլիկները՝ «շարագործք», «նենգաւորք» («միֆսիտք»-խռովարարք), «...զշարագործսն զայնոսիկ արքունական հրամանաւ պատժիցեն»։

Որ Զաքարիա պատրիարքի պաշտոնազրկվելը 1781 թ. կատարվել է կառավարության կամքին ու ցանկության հակառակ, Ավստրիայի ճնշման ներքո, երևում է Ջեվդեթի հետևյալ վկայություններից։ «...որոշ ժամանակ առաջ,— գրում է նա,— Նեմչեի (Ավստրիայի) պետական ղեկավարներից մեկը (կառավարության հաստատմամբ) մի նամակ էր ուղարկել, ուր անդրադառնալով վիճաբանության առարկա կաթոլիկական հարցին, բողոքում էր, թե հայոց պատրիարքն արգելում է (հայ) վաճառականներին այցելել Տրիեստի նավահանգիստը ու պահանջում էր նրա պաշտոնազրկումը»[387]։ Նույնը պահանջում է նաև ավստրիական դեսպանը Կ. Պոլսում[388]։ Ռեիս էֆենդին ավստրիական դեսպանին պատասխանում է, որ «Ձեր այդ պահանջը չի բխում մեր միջև կնքված պայմանագրերից և հոդվածներից» և որ «հայոց պատրիարքը, լինելով հազարավոր արքունի հպատակների առաջնորդը, չի կարող պաշ-

386 Նույն տեղում, էջ 229։

387 "Tarih-i Cevdet", c. I, s 211.

388 Նույն տեղում։

տոնադրկվել մի օտար պետության թելադրանքով. դա կնշանակեր մեր վարչական գործերին ու հպատակների ներքին գործերին միջամտել»[389]։

Նման իրավիճակում, ավստրիական դեսպանը Զաքարիա պատրիարքի դեմ ներկայացնում է քաղաքական մեղադրանքներ՝ ամբաստանելով նրան միջպետական գաղտնի փաստաթղթեր հրապարակելու մեջ։ Մեծ վեզիր Իզզեթ փաշան, Պողոս Կաղզվանցու բառերով ասած, «...գոլով այր խոհական և իմաստուն՝ եղև հետաքրքիր այսմ բանի, առ ի ճանաչել թե ստո՞ւգ իցէ թե սուտ»[390]։

Ի վերջո, ինչպես ասվեց, կառավարությունը ստիպված է եղել արտաքին ճնշման ներքո պաշտոնազրկել բարեկամների կողմից «Ազգասեր», իսկ հակառակորդների կողմից «հալածիչ»[391] հորջորջված Զաքարիա պատրիարքին։ Սակայն, մինչ նրան պաշտոնազրկելը, 1781 թ. կառավարությունը, ինչպես վկայում է Ջեվդեթը, վախենալով, որ այդ քայլը առիթ կտա Ռուսաստանին հետագայում միջամտելու «...օսմանյան հպատակների եկեղեցական գործերին», որոշում է հայ կաթոլիկ առաջնորդներից ոմանց ձերբակալելով պատժել, իսկ հայոց պատրիարքին մեղադրել այն բանում, որ չի կարողացել «հպատակների մոտ կարգ ու կանոն ստեղծել»[392]։

Հաջորդ՝ 1782 թ., կառավարությունը կրկին պատրիարքական աթոռի վրա է բազմեցնում Զաքարիա պատրիարքին[393]։

---

389 Նույն տեղում։

390 «Դիւան հայոց պատմութեան», հ. ժ, էջ 292։

391 1786 թ. Տրիեստում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում կաթոլիկ Իսահակ Կուտինացի գրիչը այսպես է որակում պատրիարքին. «...էջմիածնայ կաթողիկոսն էր Սիմոն վարդապետ եւ Կոստանդնուպոլսոյ պատրիարքն էր Զաքարեայ հալածիչ (ընդգծումը մերն է— Մ. Ջ.) վարդապետն։ Այս Զաքարիայ վարդապետ մեծ հալածանք եհան ի վերայ ամենայն մերազնեայ ուղղափառաց (կաթոլիկների— Մ. Ջ.) յիշխանութեան տակաց եղելոց» («Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա», էջ 312)։ Հռոմեադավանների՝ Զաքարիա պատրիարքի հասցեին ուղղված մեղադրանքների մասին, Մ. Օրմանյանը գրում է. «Անցողակի յիշատակենք, որ Զաքարիայի և ուրիշ պատրիարքներու ընթացքը դատափետող հռոմադաւաններ, պետք չի մոռանան Հռոմի պապերուն, հաւատաքննական հալածանքները։ Հայոց կողմէ եղածները ծանոթ քաղաքներ աքսորէ և ժամանակաւոր բանտարկութենէ և գաւազանի քանի մը հարուածնէ անդին անցած չեն։ Անոնք պապերուն պես բոցակէզ խարույկներ չեն բորբոքած, քստմնելի խոշտանգանքներ չեն գործածած, և նորանոր տանջարաններ չեն հնարած» (Մ. Օրմանյան, էջ 3114)։

392 "Tarih-i Cevdet", c. I, s. 211—212.

393 Նույն տեղում, էջ 212։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՋԱԼԱԼԻՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԻՃԱԿԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ջալալիների[1] առաջին ապստամբությունը, որը թուրքական աղբյուրներում ներկայացվում է որպես «ջալալիների խռովություն» (Celali fitreti), բռնկվում է 1595 թ. և ընդգրկում է Փոքր Ասիայի զգալի մասը՝ ընդհուպ մինչև Բրուսա[2]։ Սակայն բուն ապստամբությունը սկսվում է 1598 թ.[3], երբ շարժման գլուխ է կանգնում միջին դիրքի ֆեոդալ Աբդուլհալիմը, որը պատմության մեջ հայտնի է Կարա-Յազըջի անունով։ Կառավարության հրամանով զրկվելով իր տիրույթից, նա ստիպված ապստամբության դրոշ է բարձրացրել։ Պատմագիր Ի. Փեչևին այդ մասին հետևյալն է հաղորդում. «Կարա Յազըջին

---

1 Ջալալիների շարժման բնույթի, շարժիչ ուժերի ու շարժման նախադրյալների մասին տե՛ս Մ. Կ. Ջուլալյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966, էջ 117—143։

2 Այդ մասին Կոչիբեյի մոտ կարդում ենք. «Այսպես մի ժամանակ, այն է 1004 (1595—1596) թվականին, անատոլիական նահանգներում հանդես եկան ջալալի ավազակները։ Անատոլիայի նահանգներում գտնվող Կարամանի, Սիվասի, Մարաշի, Հալեպի, Դամասկոսի, Ուրֆայի, Դիարբեքիրի, Էրզրումի, Վանի և Մոսուլի գյուղերն ու բնակելի վայրերը կողոպտվեցին ու ավերվեցին, որոշ շրջաններ հիմնահատակ արվեցին։ Անգամ հին մայրաքաղաք աստվածախնամ Բրուսան նույնպես ավերվեց և նրա մի շարք թաղամասեր այրվեցին» ("Risale-i Koçibey", Istanbul, 1277 (1860), s. 18 -19)։ Կոչիբեյի այս վկայությունը չպետք է տառացի հասկանալ։ Ջալալիների շարժումների հետևանքով առաջացած ավերածությունների մասին նրա տվյալները հավանաբար վերաբերում են հետագա տարիներին։ Կարևորը այս վկայության մեջ այն է, որ շարժումը սկսվել է դեռևս 1595 թվականին, այսինքն՝ մինչև Կերեշտեսի ճակատամարտը։

3 «Նախ Ղարայ էաղըշին բազում հեծելօք, որ ի Ռիէ (1598) թուին ապստամբեցաւ ի թագաւորէն»,— կարդում ենք Առ. Դավրիժեցու մոտ (Առ. Դավրիժեցի, էջ 86, 632)։

Սիվասի սանջակներից մեկի միրիլիվայի կայմակամն էր (կառավարիչը— Մ. Ջ.)։ Միրիլիվան (այդ ժամանակ) գտնվում էր արշավանքում։ Հիշյալ սանջակը Ասիթանեի[4] կողմից տրվում է մեկ ուրիշի։ Երբ գալիս է նոր միրիլիվայի մուսալիմը (տեղակալը— Մ. Ջ.), Կարա Յազըջին թույլ չտվեց, որ նա տիրի (սանջակին)։ Եվ երբ միրիլիվան մեծ թվով մարդկանց հետ որոշեց հարձակվել (իր վրա), Կարա Յազըջին ևս մարդիկ հավաքեց ու (նոր) նշանակված միրիլիվային սպանեց։ Այնուհետև, երբ հայտնի դարձավ, որ հնարավոր է նոր հարձակում իր վրա, նա ապստամբության դրոշ բարձրացրեց և իր շուրջը համախմբեց այդ շրջաններում եղած ավազակներին, լեվենդներին»[5]։

Ջալալիների ապստամբությունների անմիջական շարժառիթների մասին գրելիս մասնագետները սովորաբար վկայակոչում են 1596 թ. հոկտեմբերին Կերեշտեսի (Հաջ Օվա— Հունգարիայում) ճակատամարտից փախչող զինվորականներին, որոնք մեծ վեզիր Սինան փաշայի կողմից հեռակա կարգով մահվան դատապարտվեցին։ Երեսուն հազար փախստականներ («ֆիրարիներ») անցան Փոքր Ասիա ու միացան արդեն ապստամբած ջալալի ֆեոդալներին։

Կարա Յազըջիի մասին կենսագրական տվյալները խիստ սակավ են ու երբեմն հակասական։ Համաձայն Հյուսամմուդինի, Կարա Յազըջին եղել է «Ուրֆայի շրջաններում բնակվող Կլջլու ցեղի երևելիներից Ալիի որդին»[6]։ Մ. Սելանիկին նրան շահական ծագում է վերագրում[7], հավանաբար այն պատճառով, որ ապստամբ Կարա Յազըջին իրեն սուլթան է հայտարարել ու ընդունել «Հաղթական Հալիմ շահ» (حليم شاه مظفر باد) տիտղոսը։ Նաիման, Քյաթիբ Չելեբին նրան անվանում են «սեկպանների վաշտի պետ»։ Առ. Դավրիժեցին հաղորդում է այսպիսի կենսագրական տվյալներ. «Այս Եազըշիս աշխարհաւ էր Կապադովկիոյ, սուխթայ գոլով՝ և ժամանակս ինչ եկաց ի յՈւռհայ առ մօլլայ մի ուսման աղագաւ և յետոյ եղև թֆանքչի և եկաց զինուորութեամբ ի սպասաւորութիւն այլոց իշխանաց, յաղթող ի պատերազմունս, և յետոյ ինքնագլուխ եղեալ ժողովեաց զընկերս՝ ապստամբեալ ի թագաւորէն, բազմացոյց զզօրս իւր, մինչ զի ասէին թէ, զերեսուն և

4 Այսպես էր կոչվում սուլթանական մայրաքաղաքը՝ Ստամբուլը։

5 "Tarih-i Peçevi", c. II, s. 252.

6 *I. H. Danişmend*, c. III, s. 104.

7 Նույն տեղում։

զվեց հազարապետս ունէր, որ բօլուկբաշի կոչէին»[8]։ Ազարիա Սասնեցին Կարա Յազըջու մասին գրում է, որ նա «ի Սեւերակն եղև սընեալ, այլև անդէն զինուորեալ»[9]։

Հակված ենք ենթադրելու, որ ամենահավանականը Առ. Դավրիժեցու հաղորդած տեղեկություններն են։

Շուտով ապստամբությունը լայն ծավալ է ընդունում։ Ամենուրեք հանդես են գալիս ապստամբ ղեկավարներ, որոնց տրամադրության տակ եղել են երեք-հինգ հազար[10], Երեմիա Չելեբիի բառերով ասած՝ «խառնիճաղանճ գունդք խուժադուժք»[11]։

Ապստամբությունը հենց սկզբից ընդգրկում է ընդարձակ տարածք։ Այդ մասին է ակնարկում Երեմիա Չելեբին.

Եւ զճելալի՜ն զոր վերհիշեալ.
կողմ կողմ ելեա՜լ և շատացեալ.
Ամբայ կողմի՜ւ Կեսարիով.
Կիլիկիո՜վ Բերիաւ այլ։
Մալաթիո՜վ ու Ուռհայիւ.
Եւ աշխարհի դաշտիւ սրփռեալ,
Սեբաստիի՜ւ Եւդոկիով.
Գալատիւ Ղոնէայով այլ։
Երզընկո՜վ և Կամախիւ,
Մինչ ի Պոլի՜ և տարածեալ,
Եւ Իզմիրիւ Լիկացոց.
Մանիսօք ի՜ ծովեզր հասեալ[12]։

Աղբյուրները միաբերան վկայում են, որ Կարա Յազըջին սկզբնական շրջանում իր շարժումը ծավալում է Ուրֆայի մոտակայքում, գրավում է քաղաքն ու շրջակայքը և մեծ ավերածություններ գործում։ Առ. Դավրիժեցին գրում է, որ Կարա Յազըջին «...ապստամբեցաւ ի թագաւորէն, և եկեալ յՈւռհայ քաղաք եմուտ ի բերդն և ամրացաւ»[13]։ Գր. Դարանաղցին հաղորդում է լրացուցիչ տեղեկություններ. «Թվ.

8 Առ. Դավրիժեցի, էջ 632։

9 Ազարիա Սասնեցի. Ողբ ի վերա հարուածոց արևելեան գաւառացն և աշխարհին Հայոց ի ձեռաց Ճելալեանց, «Հանդէս ամսօրյա», 1936, էջ 327 (այսուհետև՝ Ազ. Սասնեցի)։

10 *Hüsammudin Amasyalı*, Amasya tarihi, c. III, Istanbul, 1327 (1935), s. 361.

11 Մատենադարան, ձեռ. № 1675, էջ 88 բ։

12 Նույն տեղում, էջ 84բ—85ա։

13 Առ. Դավրիժեցի, էջ 86։

ՌԽԶ (1597) ոմն ապստամբ Ազիճի անուն ել ի միջոյ իւրեանց և ապստամբեցոյց զբազումս ընդ իւր և անթիւ զօրս գումարեաց և ապականեաց զբազում գաւառս։ Նախ ամրացաւ յամուր դղեկին Եդեսիոյ մի ամ եւ էէս, և եկին շատ իշխանք բազում զօրօք ի թագաւորէն, բազում ժամանակ պատերազմեցան ընդ Եդեսիոյ և անկարացան առնուլ զնա։ Յոր կողմն որ խրամահատէին ի դրսեւէն՝ նա ի ներքուստ արագ-արագ ամրացքներ ի գիշերի»[14]։ Քյաթիբ Չելեբին, իր հերթին գրում է, որ Կարա Յազըջին «...ավազակների գլուխն անցած... Ուռհայի (Ուրֆայի) շրջակայքում ապստամբության դրոշ բարձրացրեց»[15]։

Կարա Յազըջիի ապստամբությունը ճնշելու համար կառավարությունը նրա դեմ է ուղարկում Եթովպիայի նախկին միրիմիրան Հյուսեյն փաշային, որը ժամանելով Ուրֆա՝ անցնում է ապստամբների կողմը։

Կառավարությունն այս անգամ, ստիպված, ապստամբների դեմ է ուղարկում երրորդ վեզիր՝ Մեհմեդ փաշային։ Ապստամբ ուժերը քաշվում են Ուրֆա ու կազմում ապստամբ կառավարություն «Աբդուլ-Հալիմ շահի»՝ Կարա Յազըջիի գլխավորությամբ։

Կառավարական զորքերը պաշարում են Ուրֆան, սակայն քաղաքը գրավել նրանց չի հաջողվում։ Կնքվում է փոխադարձ զիջումներով հա-

---

14 Գր. Դարանաղցի, էջ 24—25։

15 "Fezleke-i tarih", c. I, s. 127: Ուրֆայի շրջակայքում Կարա Յազըջիի կատարած ավերածությունները այսպես է ներկայացնում Ազարիա Սասնեցին.

Սա ճելալոց սկիզբն եղեալ,
Եւ աշխարհի աւեր ածեալ,
Անտի յառաջ յՈւրֆա դիմեալ,
Քառասուն հազար զօրօք հնձեալ,
Եւ ըզքաղաքն պաշարեալ,
ամիսս երկու շրջապատեալ։
Եւ յետ աւուրց ի նա մրտեալ,
եւ ըզդղեակն անդէն առեալ,
Զիւր մեծամեծսն գլխատեալ,
եւ ի նոցա տեղն նըստեալ։
Եւ ըզքաղաքն աւար առեալ,
զամենեսեան կողոպտեալ...
Զրոլոր զերկիրն աւերեալ,
Բնաջինջ զամէնն արարեալ...

(Ազ. Սասնեցի, էջ 327)։

մաձայնություն, ըստ որի, Կարա Յազըջին Հյուսեին փաշային հանձնում է կառավարության ներկայացուցիչներին, հավանաբար, վախենալով նրա դիրքից ու ազդեցությունից, փոխարենը ստանալով Ամասիայի սանջակի կառավարումը[16]։ Այս դեպքերի մասին Գր. Դարանաղցին գրում է. «...եւ յորժամ որ ոչ կարացին առնուլ զբերդն քաղաքովն, և մին փաշա մի այլ ապստամբեալ էր ի թագաւորէն և եկեալ յարեալ էր առ Ազիճին (խոսքը Հյուսեյն փաշայի մասին է— Մ. Զ.), և ասացին պատերազմողքն թէ՝ զայն փաշան առ մեզ տուէք, որ թողեալ գնամք։ Նա զառաջինն ոչ կամեցաւ տալ, նա՛ քաղաքացիքն և իւր զօրքն ամենեքեան միաբան աղաղակեցին թէ՝ տո՛ւր զինչ նոքա խնդրեն, զի կու նեղիմք յերեսաց սովին, լաւ է մին մարդ կորնչել, քան մեք ամենեքեանքս։ Յակամայ և ի հարկէ ետուր ի ձեռս նոցա, և նոքա կախեցին զպարսպէն և իջուցին առ նոսա։ Եւ նոքա առեալ գնացին ի բաց և այլ ոչ կամեցան պատերազմել առ ժամանակ մի»[17]։

Հաջորդ տարվա գարնանը, հավանաբար, վստահ չլինելով ստանձնած պաշտոնի հարատևության վրա, Կարա Յազըջին նորից է ապստամբում։ Կառավարական զորքերի ու ապստամբների միջև ընդհարումը դառնում է անխուսափելի։ 1600 թ. ապրիլին Դիվրիկի շրջակայքում՝ «Ջեհեննեմդերէ» («Դժոխքի հովիտ») կոչված վայրում, տեղի ունեցած ճակատամարտում Կարա Յազըջին պարտության մատնվելով կառավարական զորքերից շարժվում է դեպի Սեբաստիա՝ ճանապարհին ավարի ու՝ավերի ենթարկելով գյուղերն ու բնակավայրերը. «Թուին ՌԾ (1601),— կարդում ենք Դավրիժեցու մոտ,— աւերեաց Ղարայեազիչին զՍեբաստիա կողոպտելով և այրելով, և զբազումս կոտորելով. և եղև սով մեծ»[18]։ Սեբաստիայի ճանապարհին Կարա Յազըջիի կատարած ավերածությունների մասին Ազարիա Սասնեցին գրում է.

Եւ Եաղբճին գարունն ելեալ,
Եւ ի Սեւաստ դիմաւորեալ,
Եւ ըզքաղաքն կոխեալ առեալ,

---

16 "Fezleke-i tarih", c. I, s. 123. Համաձայն Առ. Դավրիժեցու վկայության, Կարա Յազըջին Ամասիայի կառավարումը ստացել է կաշառքով, «ի ծածուկ կաշառօք կուրացոյց զաչս վեզիրին» (Առ. Դավրիժեցի, էջ 633)։ Այս վկայությունը հազիվ թե համապատասխաներ իրականությանը, քանի որ կառավարությունը ինքը փորձում էր կաշառել Կարա Յազըջիին։

17 Գր. Դարանաղցի, էջ 25։

18 Առ. Դավրիժեցի, էջ 634։

Բազում աւարս ժողովեալ.
Զբոլոր երկիր գերեցուցեալ
Զինչս և զապրանս յափշտակեալ։
Վասն այն սաստիկ մեծ սով եղեալ,
Եւ հաց ուրեք չեղև գրտեալ,
Զի լիտր մի հաց տասն ոսկի լեալ,
Եւ զայն ոչ ոք եղև գրտեալ.
Քանզի արտերն ամեն այրեալ
Եւ ըզհասկ նոցա հետ իւր տարեալ[19]։

Սիմեոն Լեհացին այդ դեպքերից 15 տարի անց վկայում է, որ «...կային շուրջ Սեւբստու բազում անուանի գեղօրայք, շէն և փարթամ, գեղ կայր որ հազար տուն էր, և Պինկօլն և Էնկելն իւր գաւառովն ամէնն ճելալիք աւերել էին»[20]։ Մի ձեռագրի հիշատակարանում Մելիքսեթ եպիսկոպոս սեբաստացին Կարա Յազըջիի՝ Սեբաստիայում ու նրա շրջակայքում կատարած ավերածությունների մասին գրում է. «...Զի ի յայսմ ժամանակի... ել ժանտաբարոյ և պիղծ թիւնաւոր մի տաճիկ Ղարայ Ազիճի անուն ի հիւսոսու կողմանէ և եկն ի վերա Սեփաստի քաղաքին։ Եւ տէրն Սեփասթիու բերթին Մահմատ փաշան դեռ մանուկ գոլով երկեաւ ի նմանէ և զօղեցաւ բազում և անթիւ հեծելաւքն ի մէջ բերդին, և ամրացան ինքեանք։ Եւ մատնեցաւ քաղաքն և երկիրն մարդով և անասնով, ընչուքն և ապրանաւքն ի ձեռն արեանարբու գաղանին որ անխնայ կոտորեաց բազում քրիստոնեայս և զմանկունս նոցա տարեալ և հանդերձիւք զարդարէին և ի սուրբ հաւատոցն մերկ արարին։ Եւ բազում աւուրս նստեալ յեղր քաղաքին այրեաց և աւերեաց զգեղեցկայշէն քաղաքն և զաւանքն, մինչ զի ամայի մնաց Սեփաստիայ թեմովն ու վիճակովն բազում ժամանակս»[21]։

Մեկ այլ հիշատակարանում ջալալիների կողմից Սեբաստիայում սպանվածների թիվը ավելի քան 20 հազար է մատնանշվում։ Կարա Յազըջին,— կարդում ենք հիշատակարանում,— «...աւելի քան ԻՌ (20.000) այր ջարդեաց և սրախողող արար, և ութ հարիւր անմեղ տղայս ի հայոց և ի Հոռոմոց գերի վարեաց և յետոյ զքաղաքն ամենայն հրով այրեաց...»[22]։

19 Ազ. Սասնեցի, էջ 328։
20 «Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն», «Հանդէս ամսօրեայ», 1934, էջ 189։
21 Մատենադարան, ձեռ. № 1875, էջ 229 բ։
22 Մատենադարան, Մագիստրոսի թղթպ. № 30, էջ 91։

Սխալ կլիներ մտածել, թե ջալալի ապստամբները գերեվարում, սպանում ու կողոպտում էին միայն քրիստոնյաներին։ Հակոբ Թոխատեցու թողած հիշատակարանից (1601 թ.), ինչպես և այլ հայկական աղբյուրներից իմանում ենք, որ ջալալիները ոչ միայն չէին խնայում յուրայիններին, այլև Գր. Դարանաղցու բառերով ասած, «...մանաւանդ տաճկաց առաւել անողորմաբար գործէին զամենայն չարիս»[23]։ Հակոբ Թոխատեցին գրում է. «...Ղարահազրճի ոմն յարեաւ հակառակ թագաւորին, և ժողովեց իւրեան համախոհ քսան հազար այր պատերազմող։ Նախ էառ զՈւռհայ քաղաք, և տիրեց իւր բոլոր գեղի և մանր քաղաքացն։ Եւ զամենեցուն զապարանքն՝ և զմալն առեալ, զոմանս սպանեալ, և... զտղայքն գերի առեալ։ Եւ տարի մի այլ եկեալ ի Մալաթիայ բնակեալ և զնոսա այլ թալանեալ և մերկացուցեալ ի հոգևոր և ի մարմնաւոր բարութեանց։ Եւ անտի եկեալ բազում զօրօք ի Սեբաստիայ քաղաք և մտեալ անդ. զփաշայն ի բերդն փախոյց. և զբազումս ի անկիչերացն, և ըսպահացն (սիփահիներ) և շատք ի գեղէ և ի քաղքէ սպանեաց և ի սուր մաշեաց, և զտունս և զբնակութիւնս զպազաստանս և զչարշուներն նախ թալանեցին և ապա հրով այրեցին, և զնոցա տղայքն գերի առին, և իւրեանց շար գործոց կցորդ արարին, ոչ հայ ոչ տաճիկ ասին, զամենայն սրով մաշեցին (ընդգծումը մերն է— Մ. Ջ.)»[24]։

Կարա Յազըջու ապստամբությունը ծավալվում է այն աստիճան, որ կառավարությունը, ստիպված, բռնում է նոր զիջումների ուղի։ Կարա Յազըջին ոչ միայն ներում է ստանում, այլև հրաման՝ կառավարելու Զորումի սանջակը[25]։ Սակայն, շուտով, նա նորից է ապստամբում։ Կարա Յազըջիի նման վարքագիծը, հավանաբար, պայմանավորված էր երկու պատճառով. 1) նա ոչ միայն չէր հավատում կառավարության ներման խոստումներին, այլև գտնում էր, որ դա իր դեմ լարված թակարդ է և 2) ապստամբության մասնակիցների ճնշումով։ Մահվան դատապարտված փախստական («ֆիրարի») ավատատեր-սիփահիները մահապատժից խուսափելու այլ ելք չունեին, քան ապստամբությունը շարունակելը։ Մյուս կողմից, Եվրոպայում մղվող պատերազմները այլևս հարուստ ավար չէին խոստանում, մինչդեռ ապստամբությունը ավարառության լայն հնարավորություն էր բացում

23 Գր. Դարանաղցի, էջ 144։
24 Մատենադարան, ձեռ. № 1875, էջ 229։
25 "Fezleke-i tarih", c. I, s. 143.

նրանց առաջ։ Ինչ վերաբերում է շարժման մասնակից չիֆթրոզաններին, լեվենդներին և սուխտաններին[26], ապա պիտի նշել, որ նրանք առավել ևս շահագրգռված էին ապստամբության հետագա ծավալմամբ, նամանավանդ, որ այդ շարժումները վերջնականապես քայքայել էին երկրի գյուղատնտեսությունը, ու գոյության միակ միջոցը մնում էր բնակչության կողոպուտն ու գերեվարումը։

Կարա Յազըջիի նոր ելույթը ճնշելու նպատակով, կառավարությունը նրա դեմ զորք ուղարկեց վեզիր Իբրահիմ փաշայի ղեկավարությամբ, նրանց առաջ խնդիր դնելով՝ «ինչ գնով էլ լինի՝ ձերբակալել» Կարա Յազըջիին ու այդ ժամանակ արդեն հռչակված նրա եղբորը՝ Դելի Հասանին («խենթ Հասանին»)[27]։ Սակայն Կեսարիայի մոտ տեղի ունեցած արյունահեղ մարտում, Կարա Յազըջիի 20.000-անոց զորքը պարտության է մատնում Իբրահիմ փաշային։ Ռազմի դաշտում սպանվում են «...ավելի քան հազար ենիչերիներ»[28]։ Հաղթանակից հղփացած Կարա Յազըջին իր գրաված շրջաններում անկախ սուլթանություն է հռչակում՝ իրեն վերապահելով սուլթանի պաշտոնը։ Նա ամենուր արձակում է «սրբազան հրամաններ», որոնցից մեկը մեզ է հասել պատմագիր Նաիմայի շնորհիվ[29]։ Այդ փաստաթղթում նա հայտարարում է, որ «...օսմանցիների իշխանությունն այս կողմերում ամբողջովին վերացված է ու սուլթանությունն անվիճելիորեն ինձ է հանձնված»[30]։

Դեպքերի նման վտանգավոր զարգացումից ահաբեկված, կառավարությունը մեծ զորք է ուղարկում ապստամբների դեմ՝ սերդար Հասան փաշայի գլխավորությամբ։ Թշնամի ուժերը, թուրքական աղբյուրների վկայությամբ, հանդիպում են «Ալբիստանի յայլաղում Սեփեդլու կոչված վայրում»[31]։ Ապստամբները կրում են ծանր կորուստ՝ կորցնելով դինված ուժի «երկու երրորդը»[32]։ Կարա Յազըջին փախչում է «Ջանիկի լեռները»[33]։ Այդ մասին Ազարիա Սասնեցու «Ողբում» կարդում ենք հետևյալ ստույգ տվյալները.

Յետոյ Սարդարն յԱմթայ եկեալ,
Եւ Եազըճուն վերայ դիմեալ,
Ալպաստանու դաշտըն հասեալ,
Անդէն զրնակըն հաստատեալ։
Եւ Եազըճին անդէն հասեալ.
Դեմ յանդիման ճակատ եղեալ,
Պատերազմի պատրաստ եղեալ,
Եւ ի յիրեարս մարտուցեալ,
Եւ Եազըճին փախուստ առեալ
Դեպ ի ճանիկ դիմաւորեալ[34]։

1602 թ. փետրվարին Ջանիկի լեռներում մահանում է Կարա Յազըջին, հավանաբար, վերջին ճակատամարտերում ստացած վերքերից։ Նրա մահից հետո ջալալիների ապստամբություններն անհամեմատ ավելի մեծ ծավալ են ստանում՝ ընդգրկելով Փոքր Ասիայի համարյա բոլոր շրջանները։ Հենց այս ժամանակաշրջանին են վերաբերում Գր. Դարանաղցու հետևյալ տողերը. «...այնպէս զօրացան ջալալիքն՝ որպէս զարծուի և կամ որպէս զհուր որ յեղէգն ընթացցի...»[35]։ Մի այլ տեղ նա գրում է, որ սուլթան Ահմեդի (1603—1617) ժամանակ «...ջալալիքն զաշխարհն Անատոլեայ ծածկեալ էին որպէս զձիւն»։ Վ. Ա.

---

26 Այդ մասին տե՛ս Մ. Կ. Զուլալյան, Ջալալիների շարժումը..., էջ 130—132։ Գյուղից փախչողներին ընդհանուր առմամբ անվանում էին «չիֆթրոզաններ», այսինքն չիֆթը՝ հողակտորը, քայքայողներ։ Չիֆթրոզանների մի զգալի մասը դառնում էին ավազակներ, որոնք կատարում էին ամեն տեսակի հանցագործություններ։ Այդ մարդկանց անվանում էին նաև լեվենդներ (թափառաշրջիկներ)։ Հենց այս դատարկապորտ թափառաշրջիկներն էին, որոնք դարձան ջալալի ապստամբների հիմնական շարժիչ ուժը։

Սուխտաններ էին կոչվում մուսուլմանական դպրոցում՝ մեդրեսեյում, սովորողները։ Նրանք հիմնականում, գյուղացու երեխաներ էին։ Տարրական կրթություն ստանալով, սուխտանները նորից լրացնում էին հարկատու գյուղացիության շարքերը։ XVI դարի վերջին տասնամյակներում գյուղում տիրող աղքատության պայմաններում, նրանք կազմում էին ավազակախմբեր ու զբաղվում կողոպուտով [տե՛ս M. Akdağ, Türkiye'nin iktisadî ve ictimaî tarihi, c. I (1242—1453), Ankara, 1952, c. 379—380 (այսուհետև՝ M. Akdağ)]։

27 "Tarih-Naima", c. I, s. 232.

28 Նույն տեղում, էջ 233։

29 Նույն տեղում, էջ 237—239։ Կարա Յազըջիի «Սրբազան հրամանի» հայերեն թարգմանությունը տե՛ս Մ. Կ. Զուլալյան, Ջալալիների շարժումը..., էջ 153—154։

30 "Tarih-i Naima", c. II, s. 237—239.

31 "Fezleke-i tarih", c. I, s. 143.

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում։

34 Ազ. Սասնեցի, էջ 328։

35 Գր. Դարանաղցի, էջ 41։

Գորդլևսկու բառերով ասած, այս ժամանակ «Նրանք (ջալալիները— Մ. Զ.) ամենուր հանդես եկան ինչպես պղպջակներ եռացող ջրից»[36]։

1602 թ. գարնանը ապստամբների գլուխ անցած Դելի Հասանը Ջանիկից շարժվում է դեպի արևմուտք։ Կառավարական զորքերը Հասան փաշայի գլխավորությամբ, իրենց հերթին, շարժվում են Դելի Հասանի վրա։ Անցնելով Ափանաղ կամ երկրորդ Եփրատ կոչված գետը, ինչպես այդ մասին վկայում է Գր. Դարանաղցին, Դելի Հասանի ապստամբները «...զզօրքն (փաշային) կոտորեցին եւ այլքն ցրուեցան։ Առին զխազինան և բազում ոճիրս գործեցին... և զինչ որ հաճոյ թուեցան աչաց նոցա՝ առին և զայլ մնացեալքն՝ թէ հանդերձեղէնք և դիպակք պատուականք ոսկեթել եւ ոսկեղօծ վրանաւն՝ հրձիգ արարին և թողեալ գնացին ի բանակն իւրեանց»[37]։ Հասան փաշան խուճապահար փախչում է դեպի Թոխատ. Նրան կրնկակոխ հետևում է Դելի Հասանը։ «Եւ Հասան պէկն յորժամ ետես զիւր աջողութիւնն ի վերին զօրութենէն լինելով,— շարունակում է Գր. Դարանաղցին,— դարձեալ ուժ առեալ գրոհ տալով գնաց ի Թոխաթ ի վերայ փաշային ի պատերազմ»[38]։

Ապստամբները շուտով պաշարում են Թոխատը։ Մի ամիս տևած այդ պաշարման ընթացքում՝ հայ, թե թուրք ապրում են դժնդակ օրեր։ «Մայիս ամսոյ քսան և իններին» Դելի Հասանի ապստամբները մտնում են քաղաք, կատարում չլսված վայրագություններ, կողոպտում ու գերեվարում բնակչության մի մասին և հրդեհում քաղաքի ծաղկուն թաղամասերը։ Ա. Ս. Տվերիտինովան, հենվելով Ի. Փեչևու վրա, գրում է, թե, իբր, Թոխատի բնակչությունը աջակցել է Դելի Հասանին ընդդեմ Հասան փաշայի[39]։ Հազիվ թե նման դեպք իրականում տեղի ունեցած լիներ։ Ընդհակառակը, վախենալով ջալալիների հնարավոր հարձակումից, թոխատցիները, Ստեփանոս Թոխատեցու վկայությամբ, ինքնապաշտպանությունն ապահովելու համար դիմել են պաշտպանական միջոցների։ «Մաթարիսներ և մահալլի դռներ շինեցաք և յամէն գիշեր պահեաք»[40],— գրում է նա։ Թոխատցիները իրենց ամբողջ հույսը դրել էին Հասան փաշայի հիսուն-վաթսուն հազարանոց բանակի վրա, սակայն այդ բանակը պարտվում է ու խուճապահար դիմում փախուստի։ «Հասան փաշան սարտար էր,— կարդում ենք Ստեփանոս Թոխատեցու 1603 թ. գրած հիշատակարանում,— Դ(4) փաշայ հետ իւրն Թոխաթու մեջն էին։ ԻՌ (20.000) հոգով երբոր նոքա եկին, թողին փաշաներն ու վազիրն և ամենայն լաշքարն և փախեան, և մնաց քաղաքն Գ(3) ամիս ի ձեռքն նոցա...»[41]։

Երեք ամիս շարունակ քաղաքն ու շրջակայքը ենթարկվում է անասելի կողոպուտի, իսկ բնակչությունը՝ գերեվարման, կոտորածի և մանուկների հավաքի։ «Շատ մարդիկ սպանեցին, և զբազումս չարչարէին, թէ մեզ ըռզակ և մանչ ցցուցէք. Զ—է(6—7) տարու ի վեր տղակներն զամէնն առին և հագուցին, զի մինչև ի Ռ (1000) տղայ առէր էին ի Հայէ և ի Տաճկէ...»[42],— կարդում ենք Ստեփանոս Թոխատեցու հիշատակարանում։

Ստեփանոս Թոխատեցին խոր կսկիծով է նկարագրում հայրենի քաղաքի կործանումը։ Արհավիրքներից մազապուրծ, գտնվելով տարագրության մեջ Ղրիմի Կաֆա քաղաքում, նա գունեղ պատկերներով նկարագրում է Թոխատի հարստությունը՝ կյանքի բաղում բարիքները մինչև վերահաս աղետը։ Ջալալիների ապստամբությունների նախօրեին հայրենի քաղաքի մասին Ստեփանոս Թոխատեցին գրում է.

Շատ գեղորայք շէն, բարելի
Այգով, արտով, պաղչով իլի,
Ջրրով առատ, բոյս, բանջարի
Եղեմ դրախտին էր նմանի[43]։

Իսկ ջալալիների ապստամբությունից հետո՝

Քաղաքացիքն հազար բարով
Ըզտունն և զտեղն ձրգեցին,
Ելեալ փախեան, ոմն ի բերդին,
Ոմանք լերին, շատք ի սարին։

Գրավելով քաղաքն ու շրջակայքը՝

---

36 *В. А. Гордлевский.* Внутреннее состояние Турции во второй половине XVI в. (ТМИВ АН СССР), сб. 2, 1940, с. 89.

37 Գր. Դարանաղցի, էջ 28։

38 Նույն տեղում, էջ 29—30։

39 *А. С. Тверитинова,* Восстание..., с. 75.

40 Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Կահիրե, 1952, էջ 1572։

41 Նույն տեղում։

42 Նույն տեղում։

43 Մատենադարան, ձեռ. № 2672, էջ 401 բ. հմմտ. նաև Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 606։

Զգեղ և քաղաք թալանեցին,
Ոչ հոր թողին ոչ պահման
Զամէն հանին նման նեռին,
Յետոյ հրով բորբոքեցին...
Էրեցին զտուն և զգեղի,
Զմանուկ տղայքն արին գերի,
Ոսկի արծաթ և զդումաշնի՝
Զայն թալնեցին անյագելի։

Կատարած սպանդի մասին գրում է.

Զսպանելոցն թիւն ոչ ասին
Կամ փախուցեալք լեռն՝ ի սարին,
Ոմանք քաղցած և ծարաւի
Մերկ և բոկիկ և անօթի։
Եւ զրսպանեալքն ի փողոցին՝
Շունք և գազանք զայն ուտէին.
Եւ ոչ որ էր թաղէր զնոսին[44]։

Քաղաքի կործանումն այն աստիճան ցնցող էր, որ Հակոբ Բաթուկենցը բացականչում է.

Թոխաթ քաղաք աւաղելի
Քո ճոխութիւնդ յէ՞ր չերևի
Արդ ես եղեալ դու ամայի
Եւ նըշաւակ ամէն ազգի[45]։

Թոխատի անկումով սկսվում է հայերի զանգվածային փախուստը Արևմտյան Հայաստանից ու անդրեփրատյան հայաշատ շրջաններից դեպի Կ. Պոլիս և այլուր։ Սիմեոն Լեհացին նկատում է, որ Թոխատում «...կար 500 հայի տուն յառաջն հազար խանայ էր, զոր ճելալիցն ցըրվել են»[46]։ Դեպքերին ժամանակակից մի տաղերգու, անդրադառնալով հայերի զանգվածային գաղթին դեպի Կ. Պոլիս, գրում է.

Երբ շարն եկաւ յանկարծակի
Սև Եաղըճին ի Թոխաթի
Ցըրվեց զամէնն ոնց փոշի
Զըգեց զամէնն մի մի տեղի,
Ոմանք գնացին յԿստամպոլի,
Ոմն ի Պուրսայ, յԱտրանայի,

44 Մատենադարան, № 2672, էջ 402 բ։
45 Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 609։
46 «Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն», էջ 187։

Շատք գնացին յՈւռումելի,
Ֆրանկաց տուն, Պուղտան, Լեհի[47]։

Հետագա տարիներին այդ փախուստը գնալով ավելի մեծ ծավալ է ընդունում[48]։

Թոխատի անկումից հետո, սուլթանական կառավարությունը կարգադրում է Դիարբեքիրի բեկլերբեկ Խոսրով փաշային դուրս գալ Դելի Հասանի դեմ։ Իմանալով այդ մասին, Դելի Հասանը 20—30 հազարանոց զորքի գլուխ անցած շարժվում է դեպի արևմուտք ու ասպատակում Արևմտյան Անատոլիայի նահանգները[49]։ Կառավարական զորքերը դիմում են փախուստի։ Դեկտեմբեր ամսին Քյութահիան պաշարվում է Դելի Հասանի կողմից, սակայն սաստիկ ցուրտ ձմեռը ստիպում է նրան թողնել Քյութահիայի պաշարումը ու գնալ Կարահիսար՝ ձմեռելու[50]։

Սուլթանական կառավարությունը՝ ստիպված նոր սերդար նշանակելով Գյուզելջե Մահմուտ փաշային, մեծ զորքով ուղարկում է Դելի Հասանի դեմ։ Սակայն 1603 թ. հուլիսին մայրաքաղաք է ժամանում Դելի Հասանի պատգամավոր Շահվերդին և ներում խնդրում սուլթանից՝ «գործած ոճիրների համար»[51]։ Սուլթանը ներում է Դելի Հասանին ու «...սիրով զնա ընկալեալ»[52]։ Նրան շնորհվում է կառավարելու

47 Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 315։
48 Այդ մասին Գր. Դարանաղցին գրում է. «Տեսաք որ Հարզուլում են ի վայր ամենայն աշխարհի մարդիկ երկրաթող էին արարեալ ի յահէ սպանողացն և չարաշար տանջողացն, ի փախուստ տեղացն մազապուրծ լինելով, թափուր և ունայն յամենայնէ, մերկ և բոկ մուրանալով եկին, յԿստամբոլ...»։ Մի այլ տեղ՝ «Եւ յորժամ ի Կաֆայէն յԿստամպոլ եկաք, և ամենայն Հայոց աշխարհն ի Թեոդուպոլսէն ի վայր, ոմանք երկու ամառ առաջ եկեալ էին, և ոմանք բազումք ընդ մեզ եկին, որ էր թվ. ՌԾԴ (1605) և շատք այլք յետոյ եկին, և ցրուեցան յԱնատոլ, յՈւռումելս, յամենայն քաղաքս, մինչ ի Պէլգրատ, մինչ Պուղտանաց աշխարհն, և ի Լեհաց» (Գր. Դարանաղցի, էջ 68—69)։
49 "Tarih-i Peçevi", c. II, s. 270.
50 Արևմտյան Անատոլիայում Դելի Հասանի կատարած ավերածությունների մասին Ազարիա Սասնեցին գրում է.

Եւ Հասան բեկն անտի (Թոխատից— Մ. Զ.) ելեալ,
Եւ յԿստամպոլ դիմաւորեալ,
Եւ յինչ երկիր որ պատահեալ,
Քար վրայ քարի չեղև թողեալ (Ազ. Սասնեցի, էջ 330)։

51 "Fezleke-i tarih", c. I, s. 193.
52 Ազ. Սասնեցի, էջ 330։

Բոսնիայի սանջակը. այստեղ նա կապեր է հաստատում օտարերկրյա պետությունների ներկայացուցիչների հետ։ «Մեծ դավաճանությունը» բացահայտվում է, և 1605 թ. վերջին Դելի Հասանը Բելգրադում գըլխատվում է[53]։

Դելի Հասանի մահից հետո, ջալալիների շարժումը շարունակվում է ու խիստ ընդարձակվում։ Կազմակերպվում են ապստամբական բազմաթիվ նոր խմբեր, որոնք, Քյաթիբ Չելեբիի բառերով ասած, «...զենք ու զինամթերք ձեռք բերելով, հեծյալ ու հետևակ առանձին խմբերով ցրվեցին երկրի տարբեր մասերը ու շարունակեցին թալանն ու կողոպուտը, բռնություններն ու բռնաբարությունները»[54]։

Երեմիա Չելեբին մեկ-մեկ թվարկում է ջալալի նոր ապստամբ ղեկավարների անունները՝ միաժամանակ տալով նրանց համապատասխան բնութագիրը։ Այսպես՝ «քեսեքես» (կտրի հա կտրի), «քեօր ղայա» (կույր ապառաժ), «թանկրի-թանըմազ» (անաստված), «թոփուզի պօյուկ» (մեծ թոփուզավոր), «ապուխանշեր» (դաշույն պահող), «ղարա-սահաթ» (շարժամ) և այլն[55]։ Մականուններ են սրանք, որոնք խոսում են այն մասին, թե ինչպիսի չարագործություններ կարող են գործել նրանք։

Առ. Դավրիժեցին հիշատակում է հետևյալ ջալալի ապստամբ ղեկավարների անունները. «Հուսեյին փաշայ՝ ՌԽԸ (1599) թուին ապստամբեցաւ ի թագաւորէն։ Քօսայ Սաֆար ՌԽԸ (1599) թուին ապստամբեցաւ։ Ահմատ փաշայ ՌԾ (1601) թուին ապստամբեցաւ։ Ինջաղան ՌԾԳ (1603) թուին ապստամբեցաւ։ Յուլարղստին ՌԾԴ (1605) թուին ապստամբեցաւ։ Թաւուլն ԺԲՌ (12.000) մարդով ՌԽԲ (sic!) թուին ապստամբեցաւ։ Այս թաւուլիս եղբայրն՝ զորոյ անուն ո՛չ գտաք։ Մահմատ փաշայ ԻՌ (20.000) մարդով։ Մանօղլի։ Ջանփօլատօղլի Ալի փաշայ։ Սորին եղբայրն՝ զորոյ անունն ո՛չ գտաք։ Քօռօղլի, այս այն Քօռօղլին է, որ բաղում խաղ է ասացեալ՝ զոր այժմ աշղներն եղանակեն։ Գզիրօղլի Մուստաֆայ բէկ Ռ (1000) մարդով, և սա ևս ընկեր է Քօռօղլւոյն՝ զոր յոլով տեղիս ի մէջ իւր խաղին զսա յիշէ։ Միւս Մուստաֆայ բէկ։ Ղարաղաշ։ Դալունասիպ։ Եօլայ սրդմաղ, թանզրի թանիմազ։ Գօկապախան Զըփլախ։ Քէասաքեաս։ Քրլու։ Ղարասահաթ։ Աղաջղանփիրի։ Սոքա ամենեքեան Ջալալիք էին, որք ոչ հնազանդէին թագաւորին. և ոչ ի տեղի ուրեք զկայ առեալ բնակէին, այլ աշխարհաւերք և աշխարհակործանք. և ուր և լըսէին զհամբաւ շինութեան, դիմեալ անդր հասանէին, աւարեալ կողոպտէին և զշինուածսն հրդեհեալ այրէին։

Ի մերձակայից Կոստանդնուպօլսի՝ մինչև զԵրևան քաղաք, ի Բաղդատայ մինչև զԴամուրղափուն, զսպիտակ ծովու մէջն և զսեաւ ծովու մէջն. այս եզերքս՝ զորս ծրագրեցի, զսոցա մէջն զայսքան աշխարհս յաւեր և յապականութիւն դարձուցին»[56]։

Ապստամբության նոր ղեկավարներից աշքի ընկնողները շարունակում էին փաստորեն այն նույն գիծը, որը վարում էին իրենց նախորդները։ Կառավարությունը նոր ապստամբ ղեկավարներին առաջարկում էր զանազան սանջակներ կառավարել[57], իսկ եթե նրանք հրաժարվում էին կառավարական պարգևներից, ապա լոկ այն պատճառով, որ նրանք նախ՝ չէին հավատում կառավարության ներկայացուցիչներին ու նրանց անկեղծությանը, և ապա՝ նրանց երևակայությունը շոյում էր ավարն ու թալանը։ Այդ նպատակով ապստամբ նոր ղեկավարները հարձակվում էին ոչ միայն կառավարության իրավասության ներքո գտնվող շրջանների, այլև մեկը մյուսի վրա, ավարում ու ասպատակում էին ամբողջ շրջաններ։ Նման դեպքերում դարձյալ խաղաղ բնակչությունն էր, որ ենթարկվում էր հաղթող կողմի վայրագություններին ու կողոպուտին։ Այսպես, 1603 թ. օգոստոսին, վերոհիշյալ Կարակաշը կամ Ղարաղաշը Երզնկայից հարձակվում է Բաբերդում ու Գյումուշխանեում հաստատված ջալալիների վրա ու հաղթում նրանց։ Տեղի բնակչությունը սարսափահար փախչում է մոտակա լեռներն ու ձորերը։ Հեռանում են նաև Վահանշեհի վանականները, որոնց մեջ է եղել և ժամանակագիր Գր. Դարանաղցին, որը հաղորդում է այդ դեպքերի հետ կապված մանրամասնությունները[58]։

Այսպիսով, ստեղծվեց մի դրություն, երբ, Իսկենդեր Մունշիի բառերով ասած, ջալալիները «խռովություններ սարքեցին, և նրանցից յուրաքանչյուրը գործում էր համաձայն իր կամայականության»[59]։ Եվ Շահ-Աբասը, ինչպես տեսանք, չհապաղեց օգտագործել բարենպաստ

---

53 "Fezleke-i tarih", c. I, s. 272—273.

54 *Նույն տեղում, էջ 389։*

55 *Մատենադարան, ձեռ. № 1675, էջ 88ա—88բ։*

56 Առ. Դավրիժեցի, *էջ 86—87։*

57 *I. H. Danişmend*, c. III, s. 219.

58 Գր. Դարանաղցի, *էջ 41—43։*

59 *А. Рахмани*, Тарих-и алем-и арай-и Аббаси, как источник по истории Азербайджана, Баку, 1961, с. 95 *(այսուհետև՝ А. Рахмани)*.

պայմանները, հարձակվեց Թուրքիայի վրա՝ Անդրկովկասը «Սեֆևիների հարստության տիրապետության ոլորտը վերադարձնելու»[60] նպատակով։ Չի բացառված այն հանգամանքը, որ շահը իր լրտեսների միջոցով կապեր հաստատած լիներ ջալալի ապստամբների ղեկավարների հետ։ Մյուս կողմից՝ ջալալիների համար անհրաժեշտ էր որևէ հզոր հենարան ունենալ սուլթանի դեմ պայքարում։ Իսկ այդ հենարանը, բնականաբար, պարսից շահը պիտի լիներ։ Հետագայում, ջախջախված ջալալիների մնացորդները իրենց առաջնորդ Կալենդար օղլիի ղեկավարությամբ անցնելով Իրան հավաստիացնում էին շահին, թե իրենք «անկեղծորեն նվիրված են» նրան, որ «Հոռոմների (թուրքերի) դեմ (ջալալիների) ելույթները հետևանք էին մեծարգո շահի ու նրա կառավարության նկատմամբ իրենց տածած բարեկամության ու նվիրվածության»[61]։

Առաջին անգամ ջալալիները Անդրկովկաս մուտք գործած պետք է լինեն Սինան փաշայի բանակի հետ, երբ վերջինին, ինչպես տեսանք, հաջողվեց նրանց մի մասին ներգրավել իրանական արշավանքի մեջ։ Իրանական արշավանքի ժամանակ էլ ջալալիները կողոպտում էին ճանապարհի վրա ընկած գյուղերի ու բնակելի ավանների բնակչությանը, կատարում այնպիսի խժդժություններ, որ տեղի բնակչությունը աղիողորմ դիմում է Սինան փաշայի օգնությանը[62]։

Սակայն իրանական արշավանքը չխանգարեց ջալալիների շարժումների հետագա ծավալմանը Փոքր Ասիայում։ Ապստամբ ջոկատները գործում էին ամբողջ Փոքր Ասիայում. Կալենդար օղլին և Կարա Սաիդը՝ Այդընի ու Սարուխանի շրջաններում, Կրնալրն՝ Բուրսայի շրջակայքում, Ջեմշիդը՝ Ադանայի, Թավիլ Ահմեդ Սաչլրն՝ Կարամանիայի և Անատոլիայի էյալեթներում և այլն։ Ապստամբների ընդհանուր թիվը Ա. Դ. Նովիչևի կարծիքով, ամենայն հավանականությամբ, կազմում էր ոչ պակաս, քան 200 հազար մարդ[63]։ Վերոհիշյալ Թավիլի կամ Թավուլի ապստամբության մասին, այդ տարիներին արտագրված մի ձեռագրի հիշատակարանում, կարդում ենք. «...ի յայսպիսի դառն և ի նեղ ժամանակիս, քանզի ի յայս ժամանակիս ելաւ Նեռի որդին կոչեցեալն Թաւուլ խիստ աւերութիւն էառ յերկ(ր)իս Ղարիբերդու Ե(5)

60 Նույն տեղում։

61 Նույն տեղում, էջ 113։

62 Գր. Դարանաղցի, էջ 44։

63 *А. Д. Новичев*, История Турции, т. I, Л., 1963, с. 131.

ամիս ի դաշտն նստաւ, զգեղորայքն այրեց, շինութիւն պակասեցաւ»[64]։ Մեկ այլ հիշատակարանում Հակոբ Ջեյթունցին Կեսարիայից գրում է. «...ի դառն և ի նեղ ժամանակիս երերեալ և տատանեալ կամք ի մէջ այլազգաց, որ և զօրացեալ են ազգք ի վերայ ազգաց, և բազում քաղաք և գաւառք աւերեցան, և ճալալիքն քակտեցին և աւերեցին...»[65]։

Ջալալիների ապստամբությունների մեջ ամենահուժկուն ու ամենավտանգավորը Ջանփոլադ Ալիի և Կալենդար օղլիի գլխավորածներն են։ Թուրքական աղբյուրներում Ջանփոլադ Ալիի ապստամբության համար հետևյալ պատճառն է մատնանշվում։ 1605 թ. աշնանը, երբ Սինան փաշան պարտություն է կրում Թավրիզի մոտակայքում ու հալածվում է Վան, նրան է ներկայանում քուրդ բեկ Ջանփոլադ զադեն այն հույսով, որ պարգևատրում կստանա Սինան փաշայից՝ օսմանյան բանակի մնացորդները բարեհաջող Վան տեղափոխելու գործում մատուցած ծառայության համար։ Սակայն Սինան փաշան տեղն ու տեղը սպանում է նրան։ Ջանփոլադի եղբայրները՝ Ալի բեկն ու Խդրբեկը, իրենց ենթակա 30 հազարանոց զորքով ապստամբում են սուլթանական կառավարության դեմ ու շարժվում դեպի Հալեպ։ Անշուշտ, Սինան փաշայի նման արարքը միայն առիթ կարող էր ծառայել ապստամբության համար։ Իսկական պատճառը պիտի փնտրել այն քաղաքականության մեջ, որ վարում էր օսմանյան կառավարությունը առավել ինքնուրույնության ձգտող քուրդ բեկերի նկատմամբ, այն է՝ վերացնել վերջիններիս անկախությունը և ուղղակիորեն ենթարկել կենտրոնական կառավարությանը։ Ինչ խոսք, Ջանփոլադի ապստամբության մեջ կարելի է նշմարել ազատագրական երանգ՝ ուղղված ատելի սուլթանական տիրապետության դեմ։ Որ, իրոք, դա այդպես է, երևում է այն բանից, որ շուտով Ջանփոլադ Ալիին է միանում Լիբանանի դրուզերի առաջնորդ Ֆախրեդդին Մանօղլին։ Այս երկու ապստամբ ղեկավարները,— գրում է Յ. Համմերը,— «...իրենց միացյալ ուժերով սպառնում էին Սիրիան մի անկախ թագավորություն հռչակել»[66]։

Ջանփոլադի և Ֆախրեդդին Մանօղլիի ապստամբ զորքերը Համայում պարտության են մատնում կառավարական զորքերին, ներխուժում են Դամասկոս, հրի, սրի ու կողոպուտի մատնում քաղաքը։ Այնու-

64 Մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թղթ., № 118, № 62։

65 Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 185։

66 *J. Hammer*, t. VIII, p. 88.

հետև, ապստամբները շարժվում են դեպի հյուսիս, մտնում Կիլիկիա, ուր գտնվում էր Ալի Ջանփոլադի ֆեոդալական տիրույթը՝ Քիլիսը։ Այդ բոլորը նշանակում էր, որ փաստորեն Սիրիան, Լիբանանը, Կիլիկիան ամբողջությամբ անջատվել էին կայսրությունից։ Որպեսզի այդ անջատմանը օրինական բնույթ տա, Ջանփոլադ Ալին դրամ է կտրել տալիս իր անունով և իսլամի դրույթների համաձայն, որպես գերագույն արքա՝ խութբե (աղոթք) է կարդալ տալիս մզկիթներում։ Նա մինչև իսկ դիվանագիտական հարաբերությունների մեջ է մտնում ու 1607 թ. հոկտեմբերի 2-ին առանձին պայմանագիր կնքում Թոսկանայի արքունիքի Ֆերդինանդի հետ։ Նա դիվանագիտական բանակցություններ է վարում նաև այլ պետությունների հետ[67]։

Սուլթանական կառավարությունը 1607 թ. ամռանը ապստամբների դեմ է ուղարկում ռազմի դաշտերում կոփված սերդար «Կույուջի» (հոր փորող) Մուրադ փաշային։ Փորձառու Մուրադ փաշան քաջ գիտեր, որ հնարավոր չէ միայն զենքով վերջ տալ ապստամբությանը։ Եվ նա դիմեց խորամանկության. ապստամբության մի շարք ղեկավարների առաջարկեց կառավարական զանազան պաշտոններ ու ավատներ, իրեն՝ Կալենդար օղլիին Անկարայի սանջակը, պայմանով, որ վերջինս թույլատրի օսմանյան բանակի ազատ անցումը նրա ղավթած շրջաններից՝ Ջանփոլադի դեմ գնալու համար։ Կալենդար օղլին համաձայնվում է ու կայսերական հրովարտակով շարժվում է դեպի Անկարա։ Ճանապարհին, թուրքական աղբյուրների տվյալներով, նա հրի ու կողոպուտի է մատնում ամբողջ շրջակայքը[68]։ Երբ նա մոտենում է Անկարային, քաղաքի կադին՝ Վելդանզադե Մեվվլանա Ահմեդը, թույլ չի տալիս նրան մտնել քաղաք։ Եվ երբ Կալենդար օղլին ցանկանում է իմանալ, թե ինչու կադին չի ենթարկվում կայսերական հրամանին, վերջինս պատասխանում է. «Չնայած դուք սանջակբեկ եք նշանակված, բայց չեկաք որպես այդպիսին, այլ եկաք որպես ավազակ ու խռովարար։ Դուք կողոպտեցիք քարավանները, այրեցիք բերդերը...»[69]։ Կատաղած Կալենդար օղլին պաշարում է քաղաքը, սակայն այն գրավել չի կարողանում։ Ստանալով օժանդակ ուժ՝ պաշարվածները ստիպում են Կալենդար օղլին նահանջել[70]։

---

67 Նույն տեղում, էջ 114։

68 "Fezleke-i tarih". c. I, s 292—293.

69 *J. Hammer*, t. VIII, p. 113.

70 "Fezleke-i tarih", c. I, s. 293.

Մի շարք մարտերում Կույուջի Մուրադը գլխովին ջախջախում է Ալի Ջանփոլադի և Ֆախրեդդին Մանօղլիի միացյալ զորքերին։ 1608 թ. գարնանը Ալի Ջանփոլադը թողնելով Ասորիքը հաղթական սերդարին, մտնում է Փոքր Ասիա, Հայաստան ու Ճանապարհին կատարում մեծ ավերածություններ։ Այդ մասին բավական ընդարձակ հիշատակարան է թողել գրիչ Սրապիոնը՝ Տրապիզոնից։ Նա գրում է. «...Որ և ազդմանէ շարին բնակարանն բանսարկուի մեծ գազանն և շար վիշապն, շունն կատաղի և երկրորդ ըՌաբսակն, պիղծն Ալիփաշան Ճանփօլատին որդին որ ժողովեաց բազում զօրս ԿՌ (60.000) հետևակ անկման և քան զայս աւելի և ոչ պակաս զինուորս ձիաւորս տիրեաց բռնութեամբ երկրին Տիբերոյ որ Հալապ ասի և բազում քաղաքաց և գեղօրէից աւէր էած, զոր թէ գրեաք մի ըստ մեոջէ չէ բաւական տանել թխթոյ։ Որ և սոյն շարէն ապստամբեալն շարն և ժանգն տասնապատիկք զսա պիղծ Թաւուլն և եկեալ ԺՌ (10.000) հեծելօք ի յերկիրն Կիլիկեցոց և առեալ զԱտանայ, զԹարսիս, զՍիս, զՂարս և բազում աւեր էած և ԵՃ (500) արս մատաղ տղայք գերի տարաւ ի Ատանոյ, և անտի դիմեալ ի վերայ երկրին Մարաշոյ աւերելով և եկեալ հասաւ ի Սեբաստիայ և անտի եկեալ ի եկեղեաց գաւառն և բազում աւեր էած երկիցս և երիցըս որ սովոր[եալ] էր պիղծ արենարբուն որ թոյլ ետ աստուած վասն ծովացեալ մեղաց մերոց և այլ բազում աւեր էած աշխարհի մինչև ի մեծ ծովեզերն Եփեսոսի Զմռին, և անտի դարձեալ եկն Իկոնիան ի Գաղատիայ, ի Կաստամոնի և անտի ի մեծն Պոնտոս Տրապեզոն և այրեաց զքաղաքս զայս և գնաց կրկին ի Երզնկան, զոր տէր աստուած մեր ոչ կամեցաւ զկորուստ մարդկան, այլ ետուր զօրութիւն ալևոր Մուրատ փաշային որ եկեալ բազում զօրօք էառ զմեծ զոռոզն զՃանփաւլատի որդին և անխնա կոտորեաց և զինքն փախստական արար և ամենայն տունն բնաջինջ արար և այլ բազում կոտորս արար ի յերկիրն Տիբերոյ և անտի եկեալ դիմեաց ի վերայ շարին որ Թաւուլ ասէին և եկեալ եհաս ի մեծ դաշտն Տարօնոյ և կոտորեաց զնոսա անխնայաբար. փախուց զսակաւս մինչև ի զզրլպաշն և ինքն քաջ ծերն որ աստուած զօրացուց նստաւ ի մեծ դաշտն Բաբերդու և զօրս արձակեաց այսր և անդր և բազում գերեալ ի ապստամբ պարոնացն և փաշաներուն բերեալ սուր եդ ի վերայ եսպան և զոր գտանէին բերէին և սպանէին և արար մեծ խաղաղութիւն ի վերայ երկրի»[71]։

---

71 Մատենադարան, ձեռ. № 1354, էջ 199բ—200ա։

Ալի Ջանփոլադի ապստամբության ճնշումով ջալալիների շարժումը չի ավարտվում։ Կալենդար օղլին, թողնելով Անկարայի պաշարումը, իր զորքով շարժվել էր դեպի Բուրսա և ասպատակում էր քաղաքի շրջակայքը[72]։ Ճանապարհին, իմանալով Ջանփոլադի պարտության մասին, կոչ արեց վերջինիս միանալ իր զորքերին և համատեղ պայքարել ընդհանուր թշնամու՝ սուլթանական կառավարության դեմ[73]։ Ալի Ջանփոլադը համաձայնվեց, բայց վերջին պահին փոխեց իր որոշումը[74], գնաց մայրաքաղաք ու, ինչպես վկայում են Գր. Դարանաղցին[75] և այլք, ներողություն հայցեց սուլթանից, ստացավ Բուդումի սանջակը Բոսնիայում, ուր և սպանվեց։

Ջանփոլադի ապստամբության ճնշումից հետո, սերդար Մուրադ փաշան իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրեց Կալենդար օղլիի ապստամբությունը ճնշելու վրա։ 1608 թ. օգոստոսի 15-ին (22 ռեբիուլ-էվվել 1017 թ.) թշնամի զորքերը հանդիպեցին Ալբիստանից ոչ հեռու՝ Ալաջա-Ջայըր կոչված վայրում։ Հաղթեց Մուրադ փաշան, որից հետո Կալենդար օղլիի զորքի մնացորդները Էրզրումի և Արդահանի վրայով անցան թուրք-իրանական սահմանը ու հպատակություն հայտնեցին սեֆյաններին[76]։

Կալենդար օղլու ապստամբությունը բնութագրելու առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Ալաջա-Ջայըրի ճակատամարտի նախօրեին ռազմական խորհրդում նրա ելույթի մի շարք դրույթները։ «Ես դադարեցի օսմանցիներին հնազանդվել այն ժամանակ, երբ այդ նենգերի ու կեղեքիչների (օսմանցիների— Մ. Զ.) զոռոզությունն հասավ գագաթնակետին ու նրանց տիրապետությունը ճզմեց աշխարհը»,— ասում է Կալենդար օղլին։ Սակայն օսմանյան տիրապետության դեմ ոտքի ելած այդ նույն Կալենդար օղլին հետևյալ կերպ է շարունակում իր ելույթը. «Մենք ասպատակեցինք Միխալիջէ, Այդընի և Սարուխանի շրջանները և վերադարձանք հսկայական ավարով։ Կոնիայում... կողոպտեցինք ամբողջ շրջանը»[77]։

Շուտով Կույուջի Մուրադին հաջողվում է ամենայն դաժանությամբ ճնշել վերոհիշյալ մյուս ապստամբ ղեկավարների դիմադրությունը և արժանանալ «կայսրության սուրը» և «սուլթանաթի վերականգնող» տիտղոսներին[78]։

Վերջին ճակատամարտը ջալալիների և Կույուջի Մուրադ փաշայի զորքերի միջև, Իսկենդեր Մունշիի տվյալներով, տեղի է ունենում Էրզրումի շրջակայքում՝ 1608 թ. աշնանը։ Նույն այդ թվականին արտագրված մի հիշատակարանում գրված է, որ «...դրեցաւ վերջի յիշատակարանս ի թվականիս Հայոց Ռ երրորդի յիսներորդի և է (7) աւելի (1608), ի թագաւորութեան սուլտան Ահմատին, և ի սարդարութեանն աւրհնեալ Մուրատ փաշային, որ ահա եօթն տարի է որ այս միջոցս աշխարհս ի տարտարոսի կար, եկեալ բազում զաւրաւք և կոտորեաց ի յանաստուած ազգէ, որ ճալալ ասեն, աւելի քան զԻՌ (20.000) և արար սակաւ ինչ խաղաղութիւն, զոր տէր Աստուած զինքն ընդ երկայն աւուրս պահեսցէ»[79]։ Կրելով ծանր պարտություն, ջալալի-

---

72 "Fezleke-i tarih", c. I, s. 295. *J. Hammer*, t. VIII, p. 122.

73 Նույն տեղում։

74 Նույն տեղում։

75 Գր. Դարանաղցի, էջ 101։

76 Անշուշտ, Կալենդար օղլին նկատի ունի Գրիգոր գրիչը Կողոնիայից, երբ 1609 թ. գրել է հետևյալ հիշատակարանը. «...արամ ամի եկաւ Մուրատ փաշան ՃՌԾ (150.000) հոգով, և փախստական արաւ զՃալալին, որ անուն Մոհամատ Չաուշ կոչի, և զամենեսեան սրայխոխոս արաւ, թուով ԺԵ (15) հազար հոգի, շարդեց իբրև զշուն սատակեալ ի յերկիրն Շեսխան, և գնաց նստաւ ի քաղաքն Բաբերդ, որ է կուրծք երկրի և նստաւ Ա(1) ամիս, և բազում չարայբարու մարդիս սպանանեց, որ անուանի Մուրատ խանլու։ Եւ գնաց Մահամատ Չաուշն ի Պարսկաստան փախստական, և ուրացաւ զՄահմատի ազգն, և եղև կարմիր գլուխ ԺՌ (10.000)» («Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Գ, № 840)։

77 *J. Hammer*, t. VIII, p. 126.

78 Երեմիա Չելեբին հետևյալ չափածո տողերում նկարագրում է Կույուջի Մուրադի հաղթական մուտքը մայրաքաղաք.

Երբ լրաւ զայս թագաւորն,
Մեծամեծաց խիլաթ յղեալ.
Եւ սերտարն Մուրատ փաշայն
Յիստամպո՛լ լինէր դարձեալ։
Զորս հարիւր կրտոր պայրաղ,
Զորս ի ճելալեացն էր առեալ,
Զայնք ամենա՛ն ի գլուխ ի վայր
Բառնան և ի պալատ մրտեալ։
Ամէն մի պայրաղի վերայ
Զանունս ճելա՛լոցն են գրրեալ,
Երբ առ արքա՛յն եմուտ վեղիրն.
Խլաթուք սիրո՛վ յոյժ մեծարեալ։

(Մատենադարան, ձեռ. № 1675, էջ 93բ—94ա)։

79 «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ», հ. 3, էջ 432։

ների մնացորդները թողնում են Թուրքիայի սահմանները և ապաստան գտնում սեֆյանների մոտ[80]։

Դարձյալ Ի. Մունշիի վկայությամբ, Երևանի Ամիրգունա խանը շատ սիրալիր ընդունում է ջալալիներին, սկզբում տեղավորում է նրանց էջմիածնում, ապա ուղարկում Թավրիզ[81]։ Ակնարկելով այս դեպքերը, Երեմիա Չելեբին գրում է.

Մինչ ի Պարս փախեան նոքա.
Երբ յԵրևան եղին մրտեալ.
Էմիրկիսնէ՝ խանին ասեն,
Թէ շահին ձեր եմք հնազանդեալ։
Եւ նոքա ըստ սովորութեան
Խոշամէսի՝ են ասացեալ,
Եւ գրէ՝ արդու շահին.
Պարսիկ լինե՛ն և դու ընկալ[82].

Գալով Արևելյան Հայաստան ու հատկապես Արարատյան դաշտավայր, ջալալիները և տեղացի թուրքախոս մի շարք ցեղեր, օգտվելով երկրում տիրող անիշխանությունից, կատարում են բազմաթիվ ոճրագործություններ[83]։

Այսպիսով, Արևելյան Հայաստանի բնակչությունը նույնպես տուժում է ջալալիների ասպատակություններից, որոնց մասին մանրամասն հաղորդում է Առ. Դավրիժեցին։ Այսուհանդերձ, այդ շարժումներն անհամեմատ ավելի աղետալի հետևանքներ ունեցան Արևմտյան Հայաստանի հայ զանգվածների համար։ Այդ մասին միաբերան վկայում են մեր մատենագիրների տվյալները։ Երեմիա Չելեբիի մոտ կարդում ենք.

Խառնիճաղանճ գունդք խուժադուժք
Զոր տեսանո՛ղք էին սարսեալ,
Զկանայս մանկա՛մբք քարշին գերի,
Եւ ընդ իրեանս շրջեցուցեալ։
Զեկեղեցի՛ս և զվանորայս.
Կոխեն զկաչուածս նոցուն սպռեալ,
Զբազումս ի սո՛ւր ածեն անխնայ,
Զշատոց բընա՛կս հրով լուցեալ...
Հաղար եղո՛ւկ և դազգս պատեալ
Զի եղեն թափառական,
Մոլորական ցիրս ի ցան լեալ։
Ի բնակութեանց ։ ի հայրենեաց
Ցակամայ կամս են տարագրեալ,
Հայածեն տարամերժեն.
Հարք շատք յորդւոցդն բաժանեալ[84]։

Ջալալիները,— գրում է Ազ. Սասնեցին՝

Հայաստանու հիմքն քակեալ
Մինչև իսպառ զնա կործանեալ[85]։

Թուրք-պարսկական պատերազմներն ու ջալալիների շարժումները մի կողմից և գյուղացիների զանգվածային փախուստը իրենց հողակտորներից՝ մյուս կողմից, այլ խոսքով՝ հասարակական արտադրության և վերարտադրության ընթացքի տևական խանգարման պատճառով, երկրում համատարած սով սկսվեց, որը խլեց տասնյակ հազարավոր մարդկանց կյանք։ Որ սովը ջալալիների շարժման անմիջական հետևանք էր, պարզորոշ երևում է մեր մատենագրության տվյալներից։ Ջալալիների շարժումների հետևանքով, գրում է Երեմիա Չելեբին՝

Ցանօղք, հընձօղքն պակասին
Եւ արմրտիք իսպառ ջընջեալ,
Զի նուազեալք յուժոյ հեծին,
Գիւղք և աւանք թափուր մնացեալ,
Ի քաղաքներ հետեէին.
Ուր երթային սովն էր խրստեալ[86]։

«...Հողագործք և երկրագործք՝ որք յիւրաքանչիւր տեղիս գոյին,— գրում է Առ. Դավրիժեցին,— յերկիւղէ և յահէ սոցա (իմա՝ ջալալիների) փախուցեալք ի բերդս և ի դղեակս, և ի փապարս լերանց ամրանային. և ոչ կարէին առնել զերկրագործութիւն, վասն որոյ սերմանել և հնձել և կալ և կուտ բարձաւ ամենևին և սկսաւ լինիլ սղութիւն հացի և

80 Գր. Դարանաղցի, էջ 144։
81 А. Рахмани, с. 113.
82 Մատենադարան, ձեռ. № 1675, էջ 93ա։
83 Այդ մասին մանրամասն տե՛ս Մ. Կ. Զուլալյան, Ջալալիների շարժումը..., էջ 180—184։

84 Մատենադարան, ձեռ. № 1675, էջ 85ա։
85 Ազ. Սասնեցի, էջ 324։
86 Մատենադարան, ձեռ. № 1675, էջ 86ա։

ամենայն ուտելի իրաց և ոչ գտանիւր. և թէ ուրեք ուրեք ևս գտանիւր և այն ևս ծանր գնոյ»[87]։

Փոքր Ասիայում ջալալիների ապստամբությունը ճնշելուց հետո, սուլթանական կառավարության առաջ իր ամբողջ հասակով ծառացավ մի հարց՝ վերականգնել երկրի քայքայված էկոնոմիկան և, նախ և առաջ, գյուղատնտեսությունը։ Սակայն, ինչպես ասվեց, գյուղացիության զգալի մասը ջալալիների ապստամբությունների ժամանակ լքել էին իրենց հայրենի օջախները ու մեկնել արևմուտք՝ Կ. Պոլիս և այլուր։ Ուստի, շուտով, հատուկ սուլթանական հրովարտակ է հրապարակվում այն մասին, որ Կ. Պոլսում ու այլ խոշոր քաղաքներում ապաստանած գյուղացիները պարտավոր են երեք ամսվա ընթացքում վերադառնալ իրենց հայրենի վայրերը։ Ստեփանոս Թոխատեցին այդ մասին հաղորդում է. «...և Թագաւորէն՝ սուլթան Ահմատէն, հրաման եղև, թէ ամէն մարդ թող իւր քաղաքն երթայ»[88]։ 1609 թ. արտագրված մեկ այլ ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Յայսմ ամի, որ է թիւն ՌԾԸ (1609), խիստ անհնարին սուգ դարձեալ եղև երեկ թշուառեան վշտաւէս աղգիս, որ խիստ հրաման էլ ի Թագաւորէն, ի հալածելոյ զքրիստոնեայքս ի քաղաքէս (Կ. Պոլսից— Մ. Զ.) թէ գնացէք ի ձեր երկիրն և եմք այսօր ի մէջ տարտարոսի և չեմք տեղեակ թէ աւուրքն ոնց տի լինի»[89]։

Գր. Դարանաղցին հատուկ գլուխ է նվիրել սուլթանական վերոհիշյալ հրովարտակին ու հայերի, ինչպես և տաճիկների (Թուրքերի) սուրգունին։ Ահա թե ինչ է գրում նա. «Եւ յորժամ յետ դարձաւ Մուրատ փաշան ի կոտորածէ ջալալոցն, մեծաւ յաղթանակաւ եմուտ յԿստամբոլ, բոլոր քաղաքն ամենայն ելին ընդ առաջ նորա, որպէս հզօր Թագաւորի, որ էր թվ. ՌԾԸ (1609) եւ ի մուտ իններորդին, եւ մէկ քանի օր հանգիստ էառ։ Եւ յետոյ հրաման հանեց ի Թագաւորէն և իւր հրամանաւն մունէտիւ ձայնեց ամենայն քաղաքին թէ՝ աստից երեք ամիս՝ ամենայն ոք, որ յԱնատօլուէն եկեր, ամենայն ազգ և ազինք զձեր պատրաստութիւնն տեսէք, որ հազըր (պատրաստ) լինիք, սուրկուն կառնեմ, ամենայն ոք իւր հայրենի տեղիսն կու դրկեմ, յետոյ չպատճառէք զանպատրաստութիւնն. ահա՛ ասացի ձեզ, այսուհետև անպարտ եմ ի ձէնջ յայնմ ժամանակին»[90]։

Գր. Դարանաղցու վկայությամբ, շատ նորաբնակներ չեն ցանկացել վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը՝ դիմելով զանազան հնարքների։ Եվ «որ եղեն իսկ այնպէս,— գրում է Գր. Դարանաղցին,— որպէս և բազումք աստ և անդ հնարեցան և կացին, ոմանք կաշառօք եւ ոմանք յարքունի գործակալութեան աղագաւ ի շինումն տան ազօթարանի, որ ճամի ասեն՝ յանուն Սուլթան Ահմատի կոչեն, և շատք՝ ի մեծամեծաց իշխանաց հովանիս ի ներքոյ թեւոց ապաւինելով զերծան և այլ բազումք աստ և անդ յենելով պատսպարեցան»[91]։

Սակայն նորաբնակների մեծ մասն ստիպված է լինում տեղի տալ բռնությանը ու մեկնել հայրենի վայրերը։ Նրանց արտաքսում էին «բրովք և ֆալախովք»[92]։ 1611 թ. Կ. Պոլսում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում այդ մասին կարդում ենք. «Սայ գրեցաւ ի դառն և անբարի ժամանակն՝ որ զքրիստոնեայքն քշէին և հարկանելով ուղարկէին իւրեանց տեղն, զի երկիր նոցա էր աւերեալ և ոչ է մնացեալ բնաւ ամենեւին շէն, ի թվականութեանս հայոց ՌԿ (1611) ի մայրաքաղաքս Կոստանդնուպոլիս...»[93]։

Ջալալիների ապստամբության ճնշումից հետո ժողովրդական զանգվածների և, նախ և առաջ, գյուղացիության վիճակը ոչ միայն չէր բարելավվում, այլ, ինչպես նշվեց, ավելի էր վատթարանում։ Ռազմավարի նվազումը արտաքին աշխարհում, տասնմեկ տարի շարունակ ջալալի ապստամբներին ճնշելու նպատակով կատարված պետական արտակարգ ծախսերը, անհաջող պատերազմները պարսիկների հետ, չորսից հինգ տարի տևած սովը, պետական եկամտի հիմնական մասից

87 Առ. Դավրիժեցի, էջ 87։ Սարգիս Հիզանցին, խոսելով 1606 թ. երկրի ընդհանուր ավերածության ու սովի մասին, գրում է. «... և քանզի եղև աւարտումն սր. գրքիս ի դառն և ի նեղ ժամանակիս յորում նեղիմք ի բրոնութենէ ի սաստկութենէ այլազգեաց և յանօրինաց՝ զի կայ ի մէջ աշխարհիս բազում նեղութիւն և պատուհաս սով սաստիկ, սուր անխնայ, գերութիւն անողորմ, աւերումն աշխարհաց և քանդումն գեղօրէից, կործանումն տանց և շարժումն յերկրէ երկիր և ոչ գտանէին բնաւ հանգիստ։ Զի ի մայրաքաղաքէն Ստամբոլայ մինչև յայսմ աշխարհս ուրէք շինութիւն ոչ գտանիւր, ոչ ի քաղաք և ոչ ի գիւղ, ոչ ի լերինս և ոչ ի դաշտս։ ...Եւ բազումք ի սովոյ և ի ցրտոյ մեռանէին ի տունս և ի դուրս, ի փողոցս և ի հրապարակս... (Մատենադարան, ձեռ. № 4721, էջ 655բ)։

88 Մատենադարան, ձեռ. № 7377, էջ 627բ։

89 «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանին հայոց»», էջ 34։

90 Գր. Դարանաղցի, էջ 144—145։

91 Նույն տեղում, էջ 145—146։

92 Նույն տեղում։

93 «Ցուցակ ձեռագրաց Անկիւրոյ Կարմիր վանուց և շրջակայից», Անթիլաս, 1957, էջ 264։

(գյուղացիությունից գանձվող հարկերը) զրկվելը, վերջնականապես դատարկել էին պետական գանձարանը։

Այդպիսի իրադրության մեջ օսմանյան պետությունը իր առաջ խնդիր էր դրել անհապաղ լուծել մի շարք կարևոր հարցեր։ Սակայն ինչպե՞ս։ Նախկին ձևով, այսինքն գյուղացիության բացարձակ կողոպուտի, բազմաթիվ ու բազմապիսի կամայականությունների միջոցով։ Կային այնպիսի պետական գործիչներ, ինչպես կենտրոնում, այնպես էլ նահանգներում, որոնք գիտակցում էին գյուղացիների նկատմամբ կիրառված այդ հնավանդ մեթոդների արատավորությունը ու աշխատում էին հանուն քայքայված գյուղատնտեսության վերականգնման, ու, հետևաբար, պետական եկամուտների ապահովման, վարել ավելի զգույշ ու մեղմ քաղաքականություն։ Կային և այնպիսիները, որոնք հին բիրտ իշխանության կողմնակիցներն էին։ Վերջինների իշխանության տարիներին գյուղացիները զանգվածորեն փախչում էին հայրենի վայրերից։ Գր. Դարանաղցին և, առհասարակ, հայկական աղբյուրներն առաջին տեսակի պետական գործիչներին անվանում են «բարի» իսկ երկրորդներին՝ «չար»։ Խոսելով ջալալիների ապստամբության ճնշումից հետո Էրզրումում նշանակված ոմն Հասան փաշայի մասին, Գր. Դարանաղցին գրում է. «Եւ Հարզուլումին խաղաղասէր, հեզաբարու եւ ողորմած, գթած և երկիւղած փաշայ մի կայր խնամատար աշխարհի՝ Հասան անուն, այնքան խաղաղութիւն էր արկեր յերկրի, որ գրեթէ գայլք և գառինք ի միասին ճարակէին»[94]։ Հասան փաշային հաջորդել է Զիլֆիդար անունով մի ուրիշ փաշա, որն եղել է «այր անողորմ և գաղանաբարոյ»[95]։ «Չար» փաշաների իշխանության տարիներին «...չքաւորութիւն էր յաշխարհն»[96] և բիրտ կամայականությունների օրենքն էր տիրապետում։ Նման պայմաններում «...շատք փախան ոչ նորեկքն այլ հինքն այլ»[97], այսինքն ոչ Կ. Պոլսից վերադարձածները։

Անշուշտ, Գր. Դարանաղցին չի գիտակցում, որ երկու դեպքում էլ՝ և՛ «բարի», և՛ «չար» փաշաներն արտահայտում էին նույն օսմանյան ֆեոդալական հասարակության շահերը, միայն այն տարբերությամբ, որ առաջինները ջալալիների ապստամբությունից հետո ստեղծված պայմաններում ավելի հեռատես էին, քան երկրորդները։ Ըստ երևույթին, հեռատես պետական գործիչ է եղել հենց ինքը՝ սուլթան Օսման II-ը (1618—1622), որին ապստամբ ենիչերիները սպանում են 1622 թվականի մայիսի 15-ին։ Այս տեսակետից հետաքրքիր է այն բնութագիրը, որ տալիս է սուլթան Օսմանին Գր. Դարանաղցին։ Սուլթանն,— ասում է նա,— «...յոյժ խելացի էր և հոգացող աշխարհաց և ասախով և հնարաւոր, բայց սաստիկ արծաթասէր էր և ոչ դնէր պատիւ ումէք։ Այլակերպէր և ի շուրջ գայր վասն գիտենալոյ զամենայն վնասակարութիւն զօրացն ի իշխանացն և ամենայն գործոց մարդկան շարութեանցն և խորհէր ըստ դէնի նամոսաց իւրեանց առնել զամենայն բարեկարգութիւն թագաւորութեանն»[98]։

Եվ իրոք, ի՞նչն էր սուլթան Օսմանի սպանության պատճառը, եթե ոչ պետական վարչակարգն ուժեղացնելու, գյուղացիության շահագործման աստիճանը կարգավորելու, կենտրոնախույս ուժերը սաստելու նրա կամքը։ Այս առումով սուլթանը ձգտում էր սահմանափակել խոշոր ֆեոդալների հենարանը հանդիսացող բարձր հոգևորականության (ուլեմա դասի) ու նրանց հետ համագործակցող ընդդիմադիր որոշ ֆեոդալների ավատական իրավունքները։ Կարճ ասած՝ սուլթան Օսմանը միապետական նկրտումներ էր ցուցաբերում և դրանով իսկ հակադրում իրեն կենտրոնախույս ուժերին[99]։

Կենտրոնախույս ուժերն ու հետադեմ տարրերը սուլթանի դեմ պայքարելիս հենվում էին ենիչերիների վրա։ Իսկ ենիչերիներն այն ժամանակ «գաղանացան և վիշապացան ամենայն ուրեք»[100], և սկսեցին իրենց կամքը պարտադրել կառավարող շրջաններին։ «Եւ զուլքն (ենիչերիները— Մ. Ղ.),— այնուհետև գրում է Գր. Դարանաղցին,— ամենայն կատաղեալ յարևելից յարևմուտս վիշապացան, իւրեանց կամն մնաց՝ որպէս կամէին այնպէս առնէին, զթագաւոր, զվազիր իւրեանցն բարօքն դնէին, թէ հետ իւրեանց կամացն չգնայր՝ քարակոծ առնէին զվազիր սպարապետն, և երկու ամիսն կամ երեք՝ մեկ վազիր այլ փոխէին»[101]։ Ջալալիների նկատմամբ կառավարության տարած հաղթանակը ենիչերիները վերագրում էին իրենց ու զգում երկրի լիիրավ տերն ու տնօրենը։ Այս էր պատճառը, որ սուլթան Օսմանն իր զենքն ուղղեց նաև չափը կորցրած ենիչերիների դեմ ու զոհվեց այդ պայքարում, ժամանակակիցներից շատերի վրա թողնելով «բարի» ար-

94 Գր. Դարանաղցի, էջ 155։
95 Նույն տեղում, էջ 158։
96 Նույն տեղում, էջ 159։
97 Նույն տեղում, էջ 160։

98 Նույն տեղում, էջ 205—206։
99 Նույն տեղում, էջ 206։
100 Նույն տեղում, էջ 210։
101 Նույն տեղում, էջ 207։

քայի և ռամիկների «պաշտպանի» համբավ։ Սուլթանի սպանվելու լուրն ստանալիս «...որք չար ծառայքն էին Թագաւորին, խնդային և որք ռամիկքն էին աշխարքին և կոծ առեալ ողբայաք զանտերունջ լինել մեր»։ Այնուհետև՝ «Թէպէտ որ այլասեռ էր (Օսմանի մասին է խոսքը— Մ. Ջ.), նա ցանկ էր և պահապան, որ յետ նորա ինչ կրեց բազում նեղութիւնս և վիշտս ամենայն աշխարհ ի պատառող գայլացն երկու ամ...»[102]։

Ենիչերիները երկրորդ անգամ գահ բարձրացրին Մուստաֆա I-ին (1622—1623)։ Սուլթան Մուստաֆան լոկ խաղալիք էր ենիչերիների ձեռքին։ Սուլթանի խելագարությունը նրանք վերագրում էին նրա սրբությանը և մարգարեությանը[103]։ «Երկու տարի և կես եկաց, նա բնաւ յաստնաւորէն խապար չունէր, ոչ զչարն գիտէր, ոչ զբարին...»[104]։ Գրիչ Նիկողայոս Լեհացին Թեկիրդաղից (Ռոդոստո) գրում է, որ «...Յորժամ սպանին զսուլթան Օսմանն նայ, զհօրեղբայրն իւրեանց դրին զսուլթան Մուստաֆայն, և եկաց մէկ ամ և կէս։ Նա իսկի յաստնուորէս բնաւ խապար չէր, միայն անուն էր, յետոյ տեսան որ հնար չէ, միաբանութեամբ և կամաւք ամենեցուն եդին աթոռ զայս մատաղ Մուրատս, որ խիստ է խելացի»[105]։ Եվ, այսպես, գահ բարձրացվեց սուլթան Մուրադ IV-ը (1623—1640)։

Սուլթան Օսմանի սպանությունը որոշակի դժգոհություն էր առաջացրել ֆեոդալական վերնախավի չափավոր թևի ներկայացուցիչների մոտ։ Մի շարք վայրերում ապստամբություններ էին տեղի ունենում կառավարության ու նրա ներկայացուցիչների՝ ենիչերիների դեմ։ Այդ ապստամբությունների մեջ ամենախոշորը Աբազա փաշայի գլխավորածն էր։ Նիկողայոս Լեհացին այդ նույն հիշատակարանում ասում է, որ Մուրադ IV-ը անցնելով իշխանության գլուխ «...խիստ վշտաց և շփոթմանց մէջ է, և զօրքն չեն հնազանդ, և իշխանք պառակտեալ են և շփոթեալ, և զօրաժողով լեալ ի վերայ ամուր դղեկացն, և զաշխարհ ամենայն առատն հարկանելով»[106]։

Աղբյուրների վկայությամբ, Աբազա փաշան եղել է ապստամբ Ալի Ջանփոլադի աջակիցներից մեկը, գերի է ընկել Կույուջի Մուրադ

102 Նույն տեղում, էջ 210։
103 Նույն տեղում, էջ 208։
104 Նույն տեղում։
105 «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Գ, № 961, էջ 529—530։
106 Նույն տեղում։

փաշայի ձեռքը, սակայն ներում է ստացել կապուտան փաշա (ծովակալ) Խալիլի (ի դեպ, վերջինս ծագումով մարաշցի հայ է) միջնորդությամբ։ Ծովակալ Խալիլ փաշան որդեգրել է Աբազային ու նրան նշանակել սկզբում Մարաշի, այնուհետև՝ Էրզրումի բեկլերբեկ[107]։ Նա ազգությամբ եղել է աբխազ, այստեղից էլ՝ նրա Աբազա անունը։ Գր. Դարանաղցին և հայկական մի շարք այլ աղբյուրներ դրական գծերով են ներկայացնում Աբազա փաշային։ «Յորժամ էր թվ. ՌՀԲ (1623)-ին, ի ժամանակի սուլթան Մուսթաֆային, որ ոմն... որ Յապաղայ ասեն, վասն յաղդէ յապաղայիցն լինելոց կոչի անուամբ,— գրում է Գր. Դարանաղցին,— սա տիրէր հրամանաւն սուլթան Օսմանին և էր ի սպասու զինուորական դասուցն մեծ խալիլ փաշային և սիրելի և որդեգիր և սիրող քրիստոնէից, մանաւանդ ևս առաւել հայոց վշտատես տառապեալ ազգիցս, հոգածո և խնամակալ աշխարհաց և սիրող աղքատաց ամենայն ազգաց»[108]։ Նիկողայոս Լեհացին նրան բնութագրում է որպես «...խիստ յոյժ խնամածու և հոգածու աշխարհաց...»[109]։ Աբազա փաշայի կողմից հայերի նկատմամբ նման վերաբերմունքը չի բացառվում, քանի որ լինելով մեր մատնանշած չափավոր թևի աչքի ընկնող ներկայացուցիչներից, չէր կարող անտարբեր լինել դեպի աշխատասեր հայ ժողովուրդը։

Աղբյուրների վկայությամբ, Աբազան դեմ է եղել գյուղացիների նկատմամբ կիրառվող ծայրահեղ կամայականություններին։ Նա կողմնակից է եղել, եթե կարելի է այդպես ասել, գյուղացիների «օրինական» շահագործմանը ու օսմանյան ֆեոդալական հասարակության տնտեսական ու քաղաքական հզորության հետագա ամրապնդմանը։ Այս է պատճառը, որ նա զենքը ուղղել է շարիքի աղբյուր ենիչերիության դեմ։ Այս առումով խիստ հետաքրքրական է Գր. Դարանաղցու վկայությունը Էրզրումի շրջանի հայ գյուղացիության բողոքի հարցում Աբազա փաշայի վերաբերմունքը։ «Օր մի փաշան ի զբօսանս կու գնայ յայս գեղօրէքն (Էրզրումի մոտ գտնվող Կանեց, Մուտուկա և այլ գյուղերում— Մ. Ջ.),— գրում է Գր. Դարանաղցին,— նա՛ յոտն կու անկանին, կու գանգատին ի տեղացի ենկիչարեցն. մեք գերի եմք ի ձեռս նոցա ամենայն ընդանովք մերովք վասն անվճար սուտ պարտուց նոցին, անճարակութենէ մեկ քանի ղուրուշ ի փոխ եմք առել և

107 *I. H. Danişmend*, c. III, s. 316—317.
108 Գր. Դարանաղցի, էջ 212։
109 «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Գ, № 961, էջ 530։

ի հարկապահանջութիւնն եմք տուել, մէկին տասն շահ վճարել եմք՝ չկարացաք աղատիլ, այնչափն շատցուցին, զարտ և զանդատան և զամենայն արչառ և զտունքն իւրեանցն եմք տուել և իւրեանց մարապութիւն կառնեմք, եւ դիհաց մի գնալու ճարակ չունիմք, ի՞նչ կու հրամայես, ո՞րպէս խրատ կուտաս մեզ տիրաբար»։ Երբ փաշան,— շարունակում է Գր. Դարանաղցին,— «...լուաւ զայս աղէտաշարժ գանկատն, նա՛ ճմլեցաւ ի սրտին և գալարեալ աղիք արտասուեաց զեղկութիւն նոցա ի ձեռաց անողորմ գազանասիրտ թշնամեացն և դարձաւ մխիթարեաց զգեղջացիքն ասելով, մէկ քանի օր սապր (համբերություն) արարէ՛ք և համբերեցէ՛ք և յԱստուծոյ խնդրեցէ՛ք, որ ինձ օգնական լինի, ինշալլահ (այսինքն՝ եթե հաճո է աստծուն) ես զձեզ կազատեմ»[110]։

Մեծ թիվ էին կազմում ենիչերիները Էրզրումում՝ «...վասն պահպանութեան ընդդեմ պարսից»[111]։ Թուրք ռազմական պատմաբան Ջևվադ բեյի տվյալներով, մշտապես Էրզրումում գտնվող ենիչերիների թիվը կազմել է 526 մարդ[112]։

Գիտակցելով, որ միայնակ չի կարող պայքարել ենիչերիների դեմ, Աբազա փաշան, ինչպես այդ մասին վկայում է Ի. Փեչեվին, կապվում է Անատոլիայի մի շարք սանջակբեկերի հետ՝ կոչ անելով նրանց համատեղ հանդես գալու ենիչերիների դեմ[113]։ Եվ Աբազա փաշան բարձրացնում է ապստամբության դրոշը, հավանաբար, օգտվելով այն հանգամանքից, որ օսմանյան բանակի զգալի մասն այդ ժամանակ զբաղված էր Միջագետքում արաբական Իրաք ներխուժած պարսկական զորքերի դեմ մղվող մարտերով։ Արդյո՞ք Աբազա փաշան նախօրոք չի համաձայնեցրել իր ապստամբության ժամանակը՝ բանակցությունների մեջ մտնելով Շահ-Աբասի հետ։ Այս հարցին բացասաբար պիտի պատասխանել։ Հետագայում, Աբազա փաշան, իրոք, բանակցություններ վարեց պարսիկների հետ և նրանցից օգնություն խնդրեց, սակայն նա այդ քայլին դիմեց միայն այն ժամանակ, երբ զգաց, որ իր պարտությունն անխուսափելի է։ Աբազա փաշայի նպատակը երբեք սուլթանի իշխանության տապալումը չի եղել, այլ, ընդհակառակը նա ցանկացել է ամրապնդել սուլթանի գահը։ Նա պարզապես ձգտում էր

110 Գր. Դարանաղցի, էջ 216։

111 Նույն տեղում, էջ 212—213։

112 *Djevad bey*. Etat militaire de l'empire ottoman, Paris, 1882, p. 164.

113 "Tarih-i Peçevi", c. II, s. 393.

երկիրը տեսնել բարեկարգ վիճակում, առանց ենիչերական խժդժությունների։ Իր քառյակներից մեկում նշելով, որ ապստամբել է «սուլթան Օսման խանի արյան վրեժը առնելու» նպատակով, Աբազա փաշան գրում է.

Մուրազոս է գնալ Ստամպոլ
Ու կարգավորել գահն օսմանյան
Լինել սուլթան Մուրադ խանի վեզիրը
Եթե մեռնեմ դրանից հետո՝ ցավ չէ ինձ համար[114]։

Իսկ որպեսզի օրինական բնույթ տա ենիչերիների դեմ մղած իր պայքարին ու համախոհներ շահի, նա այդ պայքարին փորձում է «սրբազան պատերազմի» տեսք տալ[115]։

Ապստամբությունը սկսվել է այսպես. Աբազա փաշան խիստ նախազգուշացնում է ենիչերիներին, որ այլևս բռնություններ չգործադրեն ու հույս չդնեն մայրաքաղաքի վրա[116]։ Ենիչերիները կատաղի մոլեգնությամբ են դիմավորում Աբազայի նախազգուշացումները ու սպառնում հենց իրեն՝ Էրզրումի տիրակալին[117]։ Եվ Աբազան, հարձակվելով նրանց վրա, այնպիսի մի ջարդ է տալիս ենիչերիներին, որ «...ենկիչարի անուն ոչ ոք չմնաց ի Կարին քաղաքի և ազատեցան գեղացիքն քաղաքայնովքն հանդերձ և օրհնէին զԱպազան, որ փրկիչ եղեւ նոցունց և զոհանային զԱստուծոյ, որ զօրացոյց զնոսա, այսինքն՝ զԱպազան զօրօքն հանդերձ»[118]։ Արիստակես Խարբերդցին իր «Ոտանաւոր ասացեալ Արիստակէս վարդապետէ» չափածո պատմվածքի մեջ գրում է, որ Աբազա փաշան՝

Զարքային արիւնն խնդրէր՝
Վրէժխնդիր նմա լինէր,
Ենկիչերիքն կոտորէր[119]։

114 *I. H. Danişmend*, c. III, s. 317.

Muradımdır İslambol'a varmağa
'Al-i Osman'in tahtını düzmeğe
Sultan Murad Han'a vezir olmağa
Andan sonra ölürsemde ğam degül.

115 Նույն տեղում։

116 Գր. Դարանաղցի, էջ 215։

117 Նույն տեղում, էջ 216։

118 Նույն տեղում, էջ 217։

119 Մատենադարան, ձեռ. № 2039, էջ 321բ։

Այնուհետև՝

Վասն այն մեծացաւ, զօրացաւ
Մէջ աշխարհիս համբաւեցաւ,
Զարիւն թագաւորին առաւ.
Սրտին կամէն կատարեցաւ[120]։

Աբազա փաշան ենիչերիներից «...զոմանս շարամահ կատաղօք սպանելով, և այլքն կերպափոխեալ զիւրեանց փախստական լինելով, ի վրէժխնդրութիւն արեանն սուլթան Օսմանին լինելով ի տեսչութենէն Աստուծոյ»[121]։

Նաիման Աբազա փաշայի կողմից Էրզրումում ենիչերիներին կոտորելու մասին գրում է. «1031 թ. (1621—1622 թթ.), երբ տեղի ունեցավ սուլթան Օսման II-ի գահընկեցությունը, Աբազա փաշան, լսելով այդ, որոշեց փաղիշահին սպանողներից՝ ենիչերիներից, վրեժ լուծել... զինվոր և հարստություն հավաքելու ընդունակ լինելով, մեծ թվով սեկպաններ հավաքեց։ Նա հատկապես հարգանք էր ցույց տալիս անվանի, քաջ և կարող մարդկանց։ Ենիչերիները խիստ ինքնահավան էին դարձել և գոռոզացել էին. Էրզրումումն էլ անկարգ և ապօրինի շարժումներից հետ չէին մնում, էմիր-ուլ-ումերայի մարդկանց (ֆեոդալներին) նեղություններ էին պատճառում, իրար հայհոյում ու անարգում։ Աբազա փաշան խառնակչություններ առաջացնողներին, հայհոյողներին ու կռվողներին անխնա կոտորեց, կախեց իր ձեռն ընկած ենիչերիներին և Էրզրումը նրանցից մաքրեց»[122]։ Աբազա փաշան իր համախոհ ֆեոդալների աջակցությամբ կոտորել է տալիս նաև Ախալցխայում ու նրա շրջակայքում գտնվող ենիչերիներին։ «Հետո իր էյալեթին ենթակա Ախասխայի բերդում եղած բերդապահ ենիչերիներից 70-ի չափ մարդ կոտորեց, Վրաստանի սահմանները նրանցից մաքրեց»[123],— այնուհետև գրում է Նաիման։

Ենիչերիները խիստ բողոքում են մայրաքաղաք։ Տեղի տալով նրանց բողոքներին ու սպառնալիքներին, սուլթանական կառավարությունը մի հրամանագրով Աբազա փաշային Էրզրումի փոխարեն նշանակում է Սեբաստիայի բեկլերբեկ։ Երբ նոր նշանակված Էրզրումի

120 Նույն տեղում։

121 «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Գ, № 961, էջ 530։

122 "Tarih-i Nâima", c. II, s. 253.

123 Նույն տեղում։ Այդ մասին վկայում է նաև Արիստակես Խարբերդցին (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 2039, էջ 321)։

բեկլերբեկի մութասալլիմը ժամանում է Էրզրում՝ ստանձնելու քաղաքի կառավարումը, Աբազան մերժում է հանձնել քաղաքը[124]։ Կատաղած ենիչերիները կառավարությունից պահանջում են կտրուկ միջոցներ ձեռնարկել Աբազայի դեմ։ Վերջինիս խնամակալ հայրը՝ ծովակալ Խալիլ փաշան նամակ է գրում Աբազային, խորհուրդ տալիս ենթարկվել կառավարությանը և հանձնել բերդը։ Սակայն Աբազա փաշան այս անգամ էլ չի ենթարկվում կառավարությանը[125]։

Ըստ երևույթին, սուլթանական կառավարությունն աշխատում էր Աբազայի ապստամբության հարցը կարգավորել խաղաղ ճանապարհով։ Երբ պարսիկների դեմ պատերազմը շարունակվում էր, սուլթանական կառավարությանը ամենևին էլ ձեռնտու չէր Աբազա փաշայի ապստամբությունը։ Սակայն մայրաքաղաքում ու նահանգներում դեռևս կային սուլթան Օսմանի այնպիսի համախոհներ, որոնք դրդում էին Աբազային ընդլայնել ապստամբությունը։ Այդպիսիներից էր, օրինակ, սուլթան Օսմանի վալիդեն՝ մայրը և այլք։ Աբազայի ապստամբությունից,— գրում էր Գր. Դարանաղցին,— «...ուրախ եղեն ամենայն տուն թագաւորութեանն՝ մայրն եւ ամենայն բարեկամք Սուլթան Օսմանին եւ ամենայն մեծամեծ իշխանք եւ ամենայն ուլամայքն և ամենայն աշխարհք վասն զօրանալոյ նորա և խնդրէին օգնութիւն Աստուծոյ։ Եւ մայր Սուլթան Օսմանին ֆաթվայ առ ի մուֆթուն վասն տիրասպանացն վրէժխնդրութեանն և ինքն այլ գրեաց գիր զօրանալոյ և քաջալերութեան թէ՝ զօրացի՛ր եւ քաջ լէ՛ր, Աստուած է քեզ օգնական վասն անպարտ արեան որդոյն իմոյ»[126]։

Ոգևորված ղեկավար որոշ շրջանների նման խրախուսանքից, Աբազա փաշան անհապաղ ձեռնամուխ է լինում բանակի կազմակերպման գործին։ Թուրքական աղբյուրների տվյալներով, նրա դրոշի ներքո շուտով 40.000-անոց զորք է հավաքվում[127]։ Անցնելով այդ մեծ բանակի գլուխը, Աբազա փաշան ասպատակում է Փոքր Ասիայի մի շարք շրջանները։ Նա հարձակվում է Կարահիսարի վրա, որի սանջակբեկ Մուրթազա փաշան տասն օր դիմադրելուց հետո անցնում է նրա կողմը։ Այնուհետև, Աբազան գրավում է Սեբաստիան ու պաշարում Ան-

124 Solakzade, s. 725.

125 Գր. Դարանաղցի, էջ 217—218։ Ավելի մանրամասը տե՛ս Մ. Կ. Ջուլալյան, Ջալալիների շարժումը..., էջ 201—203։

126 Գր. Դարանաղցի, էջ 218—219։

127 "Tarih-i Peçevi", c. II, s. 299.

կարան (Գալաթիան), սակայն գրավել քաղաքը նրան չի հաջողվում[128]։ Մի ձեռագրի հիշատակարանում գրիչ Գինոս երեցն Էրզրումից անվանելով Աբազա փաշային «չար բռնաւոր Էրզրում քաղաքիս», գրում է, որ «ՌՀԳ (1624) թվին, ելան միահամուռ բաղում զօրօք Ղարահէսար առին, զՄութազա փաշան հնազանդեցուցին և կոտորելով գնացեալ հասին յԱնկարայ քաղաք և պաշարեցին Ժ(10) ամիս այլ ոչ կարացին առնուլ»[129]։ Աբազա փաշան ճանապարհին, ինչպես վկայում են աղբյուրները, անխնա կոտորել է տալիս բոլոր ենիչերիներին։

Շուտով Աբազա փաշային են միանում Մուրթազայից բացի ևս մի քանի բեկլերբեկեր և սանջակբեկեր[130]։

Կառավարությունը Աբազայի դեմ սերդար է նշանակում Սինան փաշայի որդի՝ Մահմուդ փաշային (դեռևս 1623 թ. մայիսին)։ Սակայն վերջինս իմանալով Աբազայի գերազանց ուժի մասին, խուսափում է ընդհարումից ու քաշվում է Բուրսա։ Սերդարի նպատակն էր Բուրսայում համալրել իր անկարգապահ բանակի շարքերը, մայրաքաղաքից լրացուցիչ ուժ ստանալ և ապա՝ ընդհանուր հարձակում գործել։ Ձմեռնամուտին Աբազա փաշան թողնում է Անկարայի բերդի պաշարումը և իր զորքով քաշվում Նիգդե։

1624 թ. գարնան և ամռան ամիսներին օսմանյան բանակն անցնում է հարձակման Աբազայի դեմ։ 1624 թ. օգոստոսին (2 զիլկադե 1033 թ.) Կեսարիայից ոչ հեռու գտնվող Սեփեդլու կոչված վայրում, տեղի է ունենում ճակատամարտ, ուր Աբազան պարտվում է ու փախչում իր բանակի մնացորդներով դեպի Էրզրում[131]։

Գալով Էրզրում, Աբազա փաշան անհապաղ ձեռնամուխ է լինում նոր՝ ավելի մեծ բանակի կազմակերպման գործին։ «Եւ յԱպազան գնաց

---

128 Նույն տեղում, էջ 298։

129 Մատենադարան, ձեռ. № 7786, էջ 249ա։

130 Փոքր Ասիայի թուրք ֆեոդալների մի մասի Աբազայի կողմը անցնելը ի նկատի ունի Արիստակես Խարբերդցին, երբ գրում է.

> Մեծ մեծ խաներն առ ինքն եկան
> Եվ պարոնայք ամենեքեան
> Ըստ նմա եղան միաբերան,
> Թէ ո՞ւր է մեծ արքայն Օսման
>
> (Մատենադարան, ձեռ. № 2039, էջ 322ա)։

131 Գր. Դարանաղցի, էջ 221։

յԱրզրումն և ամրացաւ ի տեղին և շատ զօրս գումարեաց քան զառաջինն եօթնապատիկ»[132],— կարդում ենք Գր. Դարանաղցու մոտ։

Այդպիսի բանակի ստեղծումը, բնականաբար, պահանջում էր մեծ ու արտակարգ ծախսեր։ Այդ ծախսերը կատարելու համար Աբազան ուներ միմիայն մի միջոց՝ խիստ ավելացնել տեղի բնակչությունից գանձվող հարկերի ու տուրքերի չափը։ Այս հանգամանքն է, ըստ երևույթին, պատճառն այն բացասական վերաբերմունքի, որ ունի Գինոս գրիչն (Էրզրումից) Աբազայի նկատմամբ։ «Եւ այս պիղծ Ապազայս,— գրում է նա,— նոր չարիք արաւ և քրիստոնէից զապրանք, զկերակուր թալնեց և ելից ի բերդն. և այլ առաւել չարութիւն այնէր, որ մարդն տունէն դուրս ելից, զտունն և զկալն ամէնքն կրակեց և տոչորեց, և մտաւ ամրացաւ բերդն»[133]։ Գր. Դարանաղցին, սակայն, բացատրում է Աբազայի կողմից հարկապահանջության ավելացումը, նշելով, միաժամանակ, որ ծանր վիճակի մեջ ընկան ոչ միայն հայերը, այլև տեղացի թուրքերը։ «Եւ այս անգամ (Աբազան) սկսաւ հարկապահանջութեամբ տառապեցուցանել զաշխարհին մարդիկն,— գրում է նա,— զշինական ռամիկսն և զքաղաքացիսն՝ զԹուրք և զՀայք, վասն երկու պատճառի, նախ՝ որ մերկացան ի ժամ պատերազմին, երկրորդ՝ առ ահի շատ զօրս գումարեաց, որ պիտոյ էր նոցա թոշակ և համբարանոց»[134]։

Սերդար Մահմուդ փաշան, հետապնդելով Աբազա փաշայի զորքին, հասնում է մինչև Դերջանի հովիտը, սակայն մոտալուտ ձմեռը ստիպում է նրան հրաժարվել Էրզրումը պաշարելու մտքից։ Նա բանակցություններ է մտնում Աբազա փաշայի հետ, որի արդյունքը լինում է խաղաղության հաստատումը՝ փոխադարձ զիջումների հիման վրա։ Սուլթանական կառավարությունը նորից ճանաչում է Աբազային որպես Էրզրումի բեկլերբեկ։ Իր հերթին, վերջինս համաձայնվում է Էրզրումի բերդում թողնել երկու հազար ենիչերիների։ Այս դրությունը, ինչպես կարելի է կռահել աղբյուրների վկայություններից, տևում է բավական երկար՝ մինչև 1627 թ. աշունը։

---

132 Նույն տեղում։ Գր. Դարանաղցին մի ամբողջ օր տևած ճակատամարտը նկարագրելուց հետո, գրում է. «...ամենայն զօրօքն գիշերագնացեալ՝ գնացին շուտ աւուր ճանապարհաւ յետ, դէպ ի վեր ի Կարին ամրոցի՝ ի Թեոդուպոլիսն» (նույն տեղում, էջ 221—222)։

133 Մատենադարան, ձեռ. № 7786, էջ 249ա։

134 Գր. Դարանաղցի, էջ 223։

1627 թ. օգոստոսին պարսկական բանակը պաշարել էր Ախալցխայի բերդը։ Պաշարվածներին օգնելու համար այնտեղ էր ուղարկվել Անատոլիայի բեկլերբեկ Դիշլենկ Հյուսեյն փաշան, որը դիմում է Աբազային համատեղ պատերազմել ընդդեմ պարսիկների։ Աբազա փաշան համաձայնվում է, պայմանով, որ իրեն հանձնվի սարդարության պաշտոնը։ Այդ ընթացքում Աբազան իր ձեռքն ընկած մի գաղտնի նամակից տեղեկանում է, որ կառավարությունը որոշել է ենիչերիների միջոցով սպանել իրեն։ Կատաղած Աբազան կարգադրում է իր աչքի առաջ սրի անցկացնել 800 ենիչերիների[135]։ Դիշլենկ Հյուսեյն փաշայի և Աբազայի միջև ընդհարումը դառնում է անխուսափելի։ Մի ճակատամարտում Աբազան փայլուն հաղթանակ է տանում. գերի ընկած Դիշլենկ Հյուսեյն փաշային ու բոլոր ենիչերիներին նա սրի է անցկացնում[136]։

Վեզիր-ի-ազամ Խալիլ փաշան, թողնելով պարսկական արշավանքը, իր ամբողջ բանակով շարժվում է ապստամբ Աբազա փաշայի դեմ։ Քառասունմեկ օրվա Էրզրումի ապարդյուն պաշարումից հետո, «վերահաս ձմեռվա ցրտերն ստիպեցին (օսմանցիներին) հրաժարվելու բերդի պաշարումից և մեկնելու ձմեռելու վայրերը»[137],— գրում է պատմագիր Սոլակզադեն։ Մի ձեռագրի հիշատակարանում այդ մասին կարդում ենք հետևյալը. «...ի թվականիս հայոց ՌՀԶ (1627)-ին Խալիլ փաշէն յԱրզրումա վերայ եկաւ յԱպազան փաշին յառնուլ չկարաց, Բասեն և Ցաղրում յաւերեց։ Մէկ քաղաքէն մէկ ալ քաղաքն մարդ չէր երթալ, ամէն իրեն պարոնն եղան, այնպէս դառն ժամանակ(է)»[138]։

Անհաջողության մատնված Խալիլ փաշան պաշտոնազրկվում է. նոր վեզիր-ի-ազամ Խոսրով փաշան, լայն նախապատրաստություններ է տեսնում Աբազայի վրա հարձակվելու։ Զգալով վերահաս մահացու վտանգը, Աբազա փաշան բանակցությունների մեջ է մտնում Շահ-Աբասի հետ ու օգնություն հայցում։ Շահը չի հապաղում օգնական ուժ ուղարկելու Աբազային[139]։

Ձեռնարկելով արշավանք ապստամբ փաշայի դեմ, Խոսրով փաշան դիմում է խորամանկության։ Նախ և առաջ նա ձգտում է մեկուսացնել Աբազային, գործի դնելով վերջինիս զենքը, այն է՝ ցույց տալ իրեն

135 *I. H. Danişmend*, c. III, s. 337—338.

136 Նույն տեղում։

137 *Solakzade*, s. 744.

138 Մատենադարան, ձեռ. № 7994, էջ 3բ։

139 *Solakzade*, s. 745.

գյուղացիների շահերի արտահայտիչ։ «Եվ այս Խոսրոֆ փաշաս յոյժ հոգացող էր աշխարհաց և ռայիցն և ահարկու ի վերայ զօրացն և կարի առաւել ասախով, և շատ զուլում այնողք կոտորէր ընդ գնալն և ամենայն չարագործքն սարսէին ի նմանէ և քննութիւն առնելով կու գնայր և լաւ ունկն կու դնէր գանգատաւորացն»[140],— միամտորեն գրում է Գր. Դարանաղցին։ Որպեսզի վերջնականապես կազմալուծի Աբազայի բանակը, Խոսրով փաշան ներում է խոստանում Աբազայի այն զինվորներին, որոնք կլքեն նրան։ Մեծ վեզիրի այս քայլն ունենում է իր արդյունքները, որովհետև շատերը «...փախան և եկին առ վեզիրն և (նա) սիրով ընկալաւ զնոսայ»[141]։ Այնուհետև, մեծ վեզիրը դիմում է Աբազա փաշային, կոչ անելով հնազանդվել կառավարությանը, խոստանալով, որ «...գործած ոճիրները պիտի ներվեն» ու ինքը պիտի ստանա իր «...հայցած դիրլիքները (ավատները)»[142]։ Աբազա փաշան չի հավատում մեծ վեզիրի խոստումներին ու մերժում է նրա առաջարկը։

Օսմանյան բանակն օգոստոս ամսին գրավում է Երզնկան, ապա և Հասան-կալան (27 օգոստոս—26 զիլհիջե)[143]։ Սեպտեմբերի 5-ին կամ 6-ին (6/7 մուհարրեմ) Էրզրումն արդեն պաշարվում է Խոսրով փաշայի կողմից։ Վախենալով քաղաքի ընդհանուր ավերածությունից և արյունահեղությունից, ինչպես դա երևում է Գր. Դարանաղցու վկայությունից, բնակչությունը ճնշում է գործադրել Աբազայի վրա, որպեսզի վերջինս անձնատուր լինի[144]։

Պաշարման 12-րդ օրը, մի քանի օր տևած բանակցություններից հետո, Աբազա փաշան հուսահատ վիճակում անձնատուր է լինում[145]։

140 Գր. Դարանաղցի, էջ 224։

141 Նույն տեղում, էջ 225։

142 *Solakzade*, s. 745 և հետ.։

143 Նույն տեղում։

144 Գր. Դարանաղցի, էջ 225։

145 Էրզրումի պաշարման ու Աբազա փաշայի անձնատուր լինելու մասին բավական ընդարձակ հիշատակարան է թողել Գրիգոր երեց Կողոնացին։ «Ապա այս Խոսրով փաշայ,— գրում է նա,— խաղաղութիւն սերմանելով գնաց ի յԱպազայի վերայ և ոչ կարաց մենամարտել, մտաւ ի յարմրանոց բերդն և զԱստուած ոչ յուսացաւ, այլ ի յամրանոցն յուսացաւ, հիսար եղաւ, որ այսչափ քրիստոնեայք մնացին ի յանաւրին հետ ի բերդն։ Եւ Խոսրով փաշային զաւրքն շատ էր, թուով ՃՁՌ (180.000) մարդ. Խ (40) աւրն պատերազմացաւ ի յամրոցին ի վերայ և Աստուծոյ աջողութեամբ հաղթեցին զբերդն և նկուն արարին զԱպազան «թէ չելանես ի յարմրանոցէդ ՃՁՌ (180.000) զաւրաւք մտանեմ ի ներ(ք)ս, ոչ տաճիկ, ոչ քրիստոնեայ Ա (1) հոգի ոչ ապրի ի ձեռաց իմոց.

«Եւ ելեալք ի քաղաքէն ոմանք ի մեծացն և յօլամացն եկին մօտ առ վազիրն և սկսան պաղատելով միջնորդել և ցածուցանել զբարկութիւն նորա և վազիրն այլ սիրով և յօժարութեամբ ընկալաւ զպաղատանս նոցա և դաշնագիրք եդին երդմամբ մեծաւ, զի ոչ վնաս առնել նմա եւ կամ ումեք մեծի և փոքու՝ վասն նորա։ Եւ դարձան միջնորդքն առ փաշան՝ ի Յապազան և ասացին զամենայն հրամայեալն ի վազիրէն և նա խնդութեամբ գնաց ի մօտ և վազիրն յոտն եկաց և համբուրեցին զմիմեանս և նստան»[146],— գրում է Գր. Դարանաղցին։

Վերցնելով իր հետ Աբազա փաշային, մեծ վեզիրը վերադառնում է մայրաքաղաք և հանձնում նրան սուլթան Մուրադ IV-ի դատաստանին[147]։ Պայքարելով կենտրոնախույս ֆեոդալների ու նրանց ձեռքում գործիք դարձած ենիչերիների կամայականության ու անկարգության դեմ, սուլթան Մուրադ IV-ը չէր կարող չներել Աբազա փաշային, գիտակցելով հանդերձ, որ երկրի ներսում բռնկված խռովություններն ու ապստամբությունները մեծապես թուլացնում են օսմանյան պետության տնտեսական, քաղաքական և ռազմական հզորությունը։ Սակայն, սուլթանը միաժամանակ քաջ գիտեր, որ Աբազա փաշայի ապստամբությունը ոչ միայն ուղղված չէր օսմանյան գահի դեմ, այլ, ընդհակառակը, այն կոչված էր պաշտպանելու և ամրապնդելու այդ գահը։

Աբազա փաշային, ինչպես մի ժամանակ Դելի Հասանին, տալիս են Բոսնիայի բեկլերբեկությունը կառավարելու[148]։ Այնուհետև՝ Աբազային տեսնում ենք սուլթանական պալատում «նեդիմ-ի խաս»-ի (փադիշահին զվարճալի խոսքերով ու պատմվածքներով զբաղեցնող անձնավորություն) դերում[149]։ Սակայն Աբազայի թշնամիները շարունակում են դավեր լարել նրա դեմ, ու նորից գրգռել ենիչերիներին։ Վերջիններիս ճնշման ներքո սուլթանն ակամա մահվան է դատապարտում Աբազային։ Լսելով իր մահավճիռը, Աբազան, համաձայն Գր. Դարանաղցու, հիշեցնում է սուլթանին իր նկատմամբ ունեցած երախտիքի մասին. «...ես այլ վերայ քեզ շատ երախտիս ունիմ, որ առի զվրէժ արեան եղբօրն քո և զղուլին կատաղութիւնն զիջուցի և զբորբոքումն հրաբորբոք բարկութեանց նոցա շիջուցի, որ ապա դու թագաւորեցեր և ապա ուղղեցան ամենայն բարեկարգութիւնք թագաւորութեանդ, թէպէտ յետ ժամանակն որ շարացան, Աստուծով դու զօրացար և նոքա տկարացան և նկուն եղեն»[150]։ Մուրադ IV-ի կարգադրությամբ Աբազա փաշային թաղում են «արքայավայել»[151]։ Սա, անշուշտ, սուլթանի կողմից օսմանյան գահին Աբազայի մատուցած ծառայությունները ճանաչելու արտահայտությունն էր։

Կենդանության օրոք, ինչպես տեսանք, Աբազա փաշան հայերի, և, նախ և առաջ, հայ գյուղացիության «բարեկամի» համբավ էր ձեռք բերել։ Այդ պատճառով նրա մահը, համաձայն Գր. Դարանաղցու, սգում է հայ ժողովուրդը։ «Եւ թէպէտ որ կոծեցին զնա թագաւորն և ամենայն տուն նորա և սգացին, մանաւանդ ազգս հայոց առաւել սգացաք և լացաք, որ իբրև զհայր հայոց էր խնամարկութեամբն և հոգաբարձութեամբն, որ շատ կենալովն ի մէջ հայոց, տեղեակ էր մեր ամենայն որպիսութեանցն՝ լաւին և վատին և նեղչացն և վշտակրութեանցն, և սիրէր զազգս մեր առաւել քան զամենայն ազգսն որ են ի վերայ երկրի քրիստոնեայ անուանք, և գովէր ոչ գիտողաց»[152]։

հրամ(ան) տամ զաւրաց իմոց որ ի սուր սուսերի մաշեմ զիւրեանց։ Յայնժամ աղաղակ բարձեալ այլասեռին և տառապեալ ազգի մերոյ քրիստոնեայք գոչեցին կողկողագին պաղատանաւք. ով կարէ գրով արկանել դաղաղակ դոցա. և անկան ի յոտն Ապազին. թէ «Քեզ ազատելու ճար չկայ, մեր արեանն է՞ր պարտական լինես, ով արեանարբու գազան»։ Յայնժամ ողորմեցաւ Աստուած իբրև զնինուէացոց երկիրն և զբարացեալ սիրտն բռնաւորին քաղցրացուց և ելաւ ի յամրանոցէն։ Եւ ազատեցան քրիստոնեայքն և ապա ըմբռնեալ տարան ի յՍտանպալ, վերջն Աստուծոյ է գիտելի» («Յուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանի մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, № 334, էջ 839բ)։

146 Գր. Դարանաղցի, էջ 225—226։

147 Համաձայն Ի. Փեչեվիի, սուլթանի և Աբազայի միջև տեղի է ունեցել հետևյալ խոսակցությունը, որը բնորոշում է ապստամբության դրդապատճառները։

«— Քյաֆիր (անհավատ) ի՞նչ էր քո այս ապստամբությունը,— հարցրել է սուլթանը։

— Իմ ամենազոր փադիշահ, երբ ենիչերիները սպանեցին ձեր հանգուցյալ եղբորը, բոլոր բեկլերբեկերը օրինականություն պահանջեցին ու իրար հետ դաշինք կնքեցին,— Ձեր ստրուկը բողոք բարձրացրեց... Աբազա ստրուկը ոչ մի նպատակ չուներ փադիշահ դառնալու։ Իմ վրա արշավանքի եկած վեզիրների խոսքերին հավատ ու վստահություն չունեի։ Միայն անձնական ապահովությունից վախեցած հնազանդություն չհայտնեցի։ Հրամանը փադիշահինն է. ահա՛ վիզս ու ահա՛ սուրս.

— Դնա այժմ, քյաֆի՛ր, ներում եմ քեզ, որովհետև իմացար քո չափն ու տեղը,— պատասխանել է Մուրադ IV-ը» ("Tarih-i Peçevi", c. II, s. 402 և հետ)։ Մոտավորապես նույնն է պատմում Գր. Դարանաղցին (տե՛ս էջ 226—227)։

148 Գր. Դարանաղցի, էջ 228։

149 "Tarih-i Naima", c. III, s. 224.

150 Գր. Դարանաղցի, էջ 230—231։

151 Նույն տեղում, էջ 232։

152 Նույն տեղում, էջ 234։

* * *

Կարա Յազըջիի, Դելի Հասանի, Կալենդար օղլիի, Ալի Ջանփոլադի, Աբազա փաշայի և այլոց գլխավորած շարժումներն ըստ էության ունեցել են բարդ ու բազմերանգ բնույթ։ Այդ շարժումներն սոցիալական հակամարտությունների արդյունք են։ Անառարկելի փաստ է, որ շարժումների մասնակիցների հիմնական զանգվածն եղել է ծանր հարկերից, տուրքերից ու ֆեոդալների կամայականություններից ծայր աստիճան քայքայված գյուղացիությունը։ Այլ հարց է, որ այդ գյուղացիության զգալի մասը կազմում էր դեռևս XVI դարի 60—70-ական թվականներին ապադասակարգայնացված տարրերը (չիֆթբոզանները, լեվենդները, սուխտանները), որոնք, վերածվելով ավազակախմբերի, դարձել են շարիք ու պատուհաս ժողովրդի գլխին։ Սխալվում են այն հեղինակները, որոնք կարծում են, թե հողագործ նստակյաց գյուղացիությունը ամենուր աջակցել է ջալալիներին ու անցել նրանց կողմը։ Ընդհակառակը, ինչպես միաբերան վկայում են աղբյուրները, գյուղացիները զանգվածորեն փախել են ջալալիներից ու ապաստան փնտրել Կ. Պոլսում ու Միջերկրական ծովի աջափնյա շրջաններում։

Ջալալիների շարժումը ղեկավարել են, եթե նկատի չունենանք Կարա Յազըջիին Ուրֆայում դաշնակցած Հյուսեյն փաշային, զինվորական ծառայության մեջ գտնվող մանր ֆեոդալները, որոնց ավատական տիրույթներն ու ավատական իրավունքները վտանգված էին խոշոր ֆեոդալների շահերն արտահայտող սուլթանական կառավարության կողմից։ Ապադասակարգայնացված գյուղացիության ընդվզումը նրանք օգտագործեցին իրենց նպատակներին։

Ո՛չ Կարա Յազըջին, ո՛չ Դելի Հասանը, ո՛չ էլ Կալենդար օղլին երբևիցե իրենց առաջ խնդիր չեն դրել բռնությամբ ոչնչացնելու տիրող հասարակարգը, ընդհակառակը, նրանք այդ հասարակության ծնունդն էին և նրա հետևողական պաշտպանները։ Ինչպես կարելի է եզրակացնել նյութի շարադրանքից, նրանք ցանկացած ժամանակ պատրաստ են եղել համագործակցելու կառավարության հետ, եթե վերջինից ստանային ներում և երաշխիք իրենց ավատական տիրույթների վերականգնման մասին։

Ջալալիների շարժումը ոչ միայն չնպաստեց դաժանորեն շահագործվող գյուղացիության տնտեսական ու հասարակական վիճակի բարելավմանը, այլ, ընդհակառակը, սարսափելի հարված հասցրեց նախ և առաջ գյուղացիությանը։ Թուրք-պարսկական պատերազմները

մի կողմից, ջալալիների ապստամբությունները մյուս կողմից, ծայր աստիճան քայքայեցին երկիրը և ահավոր սովի պատճառ հանդիսացան, սով, որ խլեց տասնյակ հազարավոր մարդկանց կյանք։

Ինչ վերաբերում է Աբազա փաշայի ապստամբությանը, ապա դա տեղի ունեցավ յուրահատուկ պայմաններում և այդ շարժումը միայն պայմանականորեն կարելի է առնչել ջալալիների շարժումներին։ Օսմանյան բռնակալ կառավարության ներկայացուցիչների՝ ենիչերիների դեմ ըմբոստացող այդ «բարի» փաշայի գլխավորած ապստամբության հիմնական նպատակն է եղել՝ որոշ բարեփոխությունների միջոցով ամրապնդել ջալալիների շարժումներից ու արտաքին աշխարհում կրած ռազմական պարտություններից ցնցված օսմանյան ավատատիրական կարգերը։

Լինելով օսմանյան ֆեոդալական հասարակության ներքին հակասությունների բարդ տեղաշարժերի արդյունք, ջալալիների շարժումները մեծապես նպաստեցին Օսմանյան կայսրության տնտեսական, քաղաքական և ռազմական հզորության անկմանը։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVI—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

XVI դարի երկրորդ կեսին Օսմանյան Թուրքիան, որի քաղաքական գերիշխանության տակ ընկել էր և Արևմտյան Հայաստանը, հասավ իր քաղաքական ու ռազմական հզորության գագաթնակետին։ Այն ասիական ընդարձակածավալ կայսրություն էր, որի թևերը տարածվում էին դեպի Եվրոպա ու Աֆրիկա մայրցամաքները։

Կայսրության գերագույն կառավարիչն ու տերը համարվում էր սուլթանը՝ աստուծո շուքը երկրի վրա («Զիլուլլահ»)։ Նա միահեծան կայսր էր և ինքնակալ տեր, իր հպատակների կյանքի ու գույքի լիիրավ տնօրենը։ Կայսրության երկրորդ դեմքը մեծ վեզիրն էր. փաստորեն նրա ձեռքում էր գտնվում երկրի կառավարման ղեկը, նա էր բարձրաստիճան պաշտոնյաներ նշանակում, վարում արտաքին գործերը և այլն։

Կայսրության ամբողջ տարածքը բաժանված էր նահանգների կամ կուսակալությունների (էյալեթ կամ վիլայեթ), որոնք կառավարվում էին սուլթանի կողմից նշանակված բեյլերբեյերի կամ միրիմիրանների կողմից։ Պատերազմի դեպքում վերջիններս հանդիսանում էին իրենց նահանգների ռազմական ուժերի գերագույն հրամանատարները։

Յուրաքանչյուր նահանգ իր հերթին բաժանվում էր մեծ կամ փոքր շրջանների, որոնք կոչվում էին սանջակներ կամ լիվաներ. դրանք բաժանվում էին էլ ավելի փոքր վարչական միավորների՝ կազաների։

Օսմանյան պետության վարչաքաղաքական բաժանումը սերտորեն առնչված էր երկրում տիրող հողատիրության ֆեոդալական սիստեմի ու ավատաբաշխման սկզբունքի հետ։ Դեռևս XVI դարի առաջին կեսում կատարված վարչաքաղաքական բաժանումը հետագայում ենթարկվել է հարատև փոփոխությունների, որը պայմանավորված է եղել Եվրոպայում և Ասիայում Թուրքերի կատարած նոր նվաճումներով և դրանցից բխող տնտեսական և քաղաքական շահերով։ Այս առումով դժվար է պնդել, որ անգամ 1639 թ. Կասրե-Շիրինի հաշտությունից հետո Արևմտյան Հայաստանում կազմակերպված վարչական միավորները դարձան կայուն ու որոշակի։

Օսմանյան ավատատիրական համակարգում եղած փոփոխությունները XVIII դարում իր հետ բերեցին նաև վարչական փոփոխություններ։ Կառավարության վարչական քաղաքականության մեջ նկատվող հիմնական միտումը նահանգների մեջ մտնող փոքր վարչական միավորներ ստեղծելու մեջ էր։ Դա բխում էր երկրի հարկահանության շահերից։ Սակայն, մյուս կողմից Արևմտյան Հայաստանում կառավարության վարչական քաղաքականության մեջ նկատվում է նաև մի ուրիշ գիծ։ Ստեղծվում է մի նոր առանձին նահանգ՝ Բայազետի փաշայությունը, որը նախկինում մտնում էր հարևան վարչական միավորումների մեջ։ Այս հանգամանքը, ինչպես դա դժվար չէ կռահել Ղ. Ինճիճյանի բերած նյութերից, բխում էր Բայազետի նահանգում տեղի ունեցած էթնիկական մեծ տեղաշարժերից։ Քրդերն այստեղ արդեն կազմում էին բնակչության զգալի մասը։ Օսմանյան կենտրոնական պետության թուլացման պայմաններում, արևմտահայ նահանգների քրդական խիտ բնակչություն ունեցող գավառներում, քուրդ բեկերը ձգտել են ինքնուրույնության։ Եվ կառավարությունն ստիպված է եղել լռելյայն համաձայնվել քրդական նոր խոշոր ժառանգական տիրույթների ստեղծման փաստի հետ։

Եթե Յոզեֆ Համմերը, հենվելով XVII դարի Թուրքական աղբյուրների վրա, Էրզրումի նահանգում 14 սանջակ էր արձանագրում[1], ապա XVIII դարի վերջին, Ղ. Ինճիճյանի տվյալներով, դրանք արդեն 12 էին։ Դրանք են՝ Էրզրում, Խնուս և Թեքման, Բասեն, Թորթում, Սպեր, Բաբերդ կամ Պայպուրտ, Դերջան, Էրզնկա, Կամախ կամ Քեմախ, Քալքյութ կամ Քելքիթ, Կեղի կամ Քիղի, Կուղիջան[2]։ Ղ. Ինճիճյանը նշում է, որ Էրզրումի նահանգն առաջներում ավելի ընդարձակ է եղել։ Այս ցուցակից բացակայում են նախկինում Էրզրումի նահանգի մեջ մտնող Մամրվանը, Մշնկերտը, Մանազկերտը, Ալաշկերտը, Բայազետը,

[1] J. Hammer, t. XVII, p. 58.

[2] Ղ. Ինճիճյան, էջ 65։

որոնք մասամբ մտել են արդեն նոր կազմված Բայազետի վարչական միավորման մեջ։ «Իշխանութիւն փաշային Էրզիռումայ՝ որ է վէզիր եռդուղեան,— գրում է Ղ. Ինճիճյանը,— յառաջին ժամանակս ձգէր ի բազում սահմանս, մինչև նաև Պայէզիտ և Մալազկերտ էին ընդ իշխանութեամբ նորա, այլ այժմ արտաքոյ են իշխանութեան նորա։ Քուրդք որ ի սահմանի նորա են, չեն ապստամբք ի նմանէ՝ բաց ի միոյ վիճակէ՝ որ կոչի տուժիկ, որք ի բազմաց հետէ միշտ ապստամբ եղեն ի նմանէ։ Իսկ այլ քուրդք երբեմն երբեմն միայն վնասեն գիւղօրէից, խնդրելով ինչ ի նոցանէ, որոց ի զլանալն՝ կամ գողանան զանասունս գիւղականացն և կամ այրեն զշեղջս տարեկան խոտոց նոցա»[3]։

Իսկ համաձայն XVI—XVII դարերի թուրքական աղբյուրների, Էրզրումի վիլայեթի մեջ մտել են հետևյալ սանջակները՝ Էրզրում, Սպեր, Բասեն, Թորթում, Խնուս, Կարահիսարի-շարկի կամ Շապին-կարահիսար, Կուզուջան, Մամերվան կամ Նարիման, Կեղի, Մջնկերտ, Բայազետ։

XVIII դարում կազմավորված Բայազետի նահանգը ընդգրկում էր արևմուտքից «...զսահմանակից զԲասեն գաւառ Էրզիռումայ, յարևմտից հիւսիսոյ՝ զփաշայութիւն Գարսայ, ի հիւսիսոյ՝ զԵրևան զգաւառն պարսից, յարևելից՝ զայլ սահման պարսից, ի հարաւոյ զփաշայութիւն Վանայ»[4]։

Նահանգում, ինչպես դա երևում է Ղ. Ինճիճյանի վկայությունից, գերիշխող դիրք են գրավել քուրդ բեկերը։ «Այս նահանգ յառաջագոյն էր մի ի սանճագացն Էրզիռումայ, որպէս յայտ է յարքունի դիւանագրէն՝ զոր եդաք ի բաժանման գաւառացն Էրզիռումայ, այլ այժմ ի բազմաց հետէ արտաքոյ ել Էրզիռումայ, և եղև փաշայութիւն երկդուղեան։ Իսկ ի վերջին ժամանակիս (XVIII դարի վերջ Մ. Զ.) հռչակաւորն Մահմուտ փաշա յաղագէ քրդաց էառ զփաշայութիւն եռդուղեան, որոյ ցեղն՝ որ ժառանգութեամբ տիրէ յորդւոց յորդիս...։ Պէկք ամէնայն գաւառացն Պայէզիտոյ են քուրդք»[5]։

Բայազետի սանջակները եղել են՝ Բայազետը, Դիադինը, Խամուրը, Նահեան կամ Նահինը, Ալաշկերտը։ «Յայսոսիկ գաւառս բացի Նահինոյ նստին և իշխեն պէկք քրդաց»[6]։

3 Նույն տեղում, էջ 64։

4 Նույն տեղում, էջ 113։

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում, էջ 113—114։

Վանի նահանգն, որը նախորդ դարերում ընդգրկում էր 13 սանջակ[7], XVIII դ. արդեն ուներ 11-ը։ Նահանգը սահմանակից էր արևելքից «...զԱտրպեճան յորում և զԴէվրիզ. ի հիւսիսոյ՝ զփաշայութիւն Պայէզիտոյ և զպէյութիւն Մանազկերտի, ի յարևմտից՝ զփաշայութիւն Տիարպէքիրի, իսկ ի հարաւոյ զճեզիրա և զայլ գաւառս ինչ Տիարպէքիրի զԱմետիա և զՇեհրիզուր։ Անկանի ընդ մեծի մասին յերիս հին նահանգս մեծին հայոց՝ որք կոչէին Վասպուրական, Տուրուբերան և Մոկք»[8]։

XVIII դարում Վանի նահանգի սանջակները կազմել են՝ Վանը, Խոշապը, Ջուլամերկը, Խլաթը, Արծկե (Ադիլջեվազ), Արճեշը, Բերկրի, Բաղեշ կամ Բիթլիս, Խիզան, Զբրբխան, Մուշ։ XVIII դարում նահանգի մեծ մասում փաստական իշխանությունը գտնվում էր քուրդ բեկերի ձեռքին. «Փաշայութիւն Վանայ այժմ է ի ձեռս ցեղի ինչ քրդաց՝ որ է ի քաղաքէն Վանայ, իսկ գաւառք նորա են ի ձեռս քուրդ պէյից՝ բայց հպատակք՝ նմա բաց ի Բաղիշոյ և ի Մշոյ՝ որք գրեթէ անուամբ ևեթ ասին լինել ընդ տէրութեամբ փաշային»[9]։

Բաղեշն ու Մուշը պարտական են եղել տարեկան որոշ տուրք վճարել «...Վանայ գուլին, որք են զինուորք պահնակք բերդին զորոց ստորև. այս տուրք է բաժանեալ ի վերա քաղաքաց և գիւղօրէից իւրաքանչիւրոց ըստ իւրեանց մեծութեան, ոմանց գիւղօրէից 30 ղուրուշ և ոմանց 40 և այլն»[10]։

XVIII դարում, հատկապես նրա երկրորդ կեսում, Բաղեշի շարաֆյան հարստության խաների իշխանությունը խիստ թուլանում է, ավելի մեծ դեր են սկսում խաղալ Մուշի քուրդ բեկերը։ Թուրքական աղբյուրները, ի տարբերություն նախորդ դարերի պատմագրության վկայությունների, համարյա լռում են նրանց մասին։ «Մահման սորա (Բաղեշի քուրդ էմիրների Մ. Զ.),— գրում է Ղ. Ինճիճյանը,— յառաջագոյն ի ժամանակս զօրաւոր խանիցն ձգէր մինչ ի սահմանս Վանայ քաղաքին, և մինչ ի սահմանս Տիարպէքիրոյ փաշային, ընդ որով կային բազում պէյութիւնք քրդաց, բայց յետ 1741 ամին օրըստօրէ նուազեաց

7 J. Hammer, t. XVII, p. 59. Այդ սանջակներն էին՝ Վան, Ադիլջեվազ (Արծկե), Արճեշ, Մուշ, Բերկրի, Կարկա, Կեսանի, Ասիաբերդ, Աղաքիս, Բենիկուտուր, Կալա-Բայազետ, Բերդա, Օվաջրկ։

8 Ղ. Ինճիճյան, էջ 134։

9 Նույն տեղում, էջ 136։

10 Նույն տեղում, էջ 136—137։

տէրութիւն նորա, և եղև նկուն գրեթէ ընդ ձեռամբ Մշոյ պէկին, մանաւանդ յորժամ Մշոյ պէկն լինի այր զօրաւոր»[11]։

Օսմանյան իշխանության տարածումը Բաղեշի վրա, ինչպես XVIII, այնպես էլ նախորդ դարերում սահմանափակվում էր վանկուլիների (զինվորների) ծախսերի համար տարեկան գանձվող որոշակի տուրքով. «...Բայց յայլ գործս ոչինչ կարէ իշխել փաշայն Վանայ, ոչ կարէ առաքել միւպաշիր[12] ոք, և ոչ միւթէսէլլիմ[13] և այլն։ Նաև ի սկզբանէ անտի ազատ եղև յարքունի հարկաց և ի տրոց...։

Կրէ խանն զուղս երկուս առաջի իւր ըստ փաշայից. հանդէս սորա մեծ է քան զհասարակ փաշայից, նաև երբեմն հատանէ դրամս պղընձիս. կարող է հանել հեծելազօրս սրվար կոչեցեալ ի քրդաց, 20 կամ 25.000, և հետևակս բազումս»[14]։ Սակայն, ինչպես ասվեց, XVIII դարի երկրորդ կեսին, Բաղեշի խանության մեջ տիրում է կատարյալ քաոս, որից չարաչար տուժում է տեղի հայ բնակչությունը։ «...Այժմեան իշխանութիւնն սորա (Բաղեշի խանի— Մ. Ղ.) չէ որպես յառաջն։ Ցաջորդութիւն ոչ է օրինօք, որ պարտ է լինել յորդւոց յորդի, այլ բռնութեամբ և անկարգութեամբ, որդին յառնէ ընդդէմ հօրն, եղբայր ընդդէմ եղբօր, և ազգականք ընդդէմ ազգականաց, ի յափշտակել զխանութիւն, յոյր սակս չիք ինչ դժուարութիւն բայց եթէ տալ գիր աղերսանաց առ Թագաւորն, և ընծայ ի դուռն փաշային ի Ստանպոլ, որովք ընկալեալ հրովարտակ արքունի, նովին հրովարտակաւ յառնէ իւրայնովք հանդերձ ընդդէմ առաջին խանին, և ի բաց արկեալ՝ ինքն նստի փոխանակ նորա, յետ նորա միւսն, և յետ նորա այլք. և յայսպիսի բռնութեանց անդադար լինին՝ ի քաղաքին և ի համօրէն գաւառին կազ, խռովութիւնք, պատերազմունք ի մէջ նոցա և կեղեքումն և զրկանք մանաւանդ ի վերա հայոց ազգին (ընդգծումը մերն է— Մ. Ղ.). այս անընդհատ զրկանք որք յաճախեցին յոյժ յայսմ դարու՝ եղեն պատճառ ցրուելոյ հայոց յայլ երկիրս»[15]։

Համարյա նույն ճակատագրին են արժանանում XVIII դարի երկրորդ կեսին Մանազկերտի ու նրա գավառների հայ բնակչությունը

11 Նույն տեղում, էջ 170։

12 Կառավարության կողմից վերակացուի, հսկիչի դեր կատարող պաշտոնյայի անունն է։

13 Կուսակալների, փաշաների պաշտոնական ներկայացուցիչներին տրված անունն է։

14 Ղ. Ինճիճյան, էջ 170։

15 Նույն տեղում, էջ 171։

քրդական գերիշխանության ներքո։ «Պէյ սորա (Մանազկերտի— Մ. Ղ.),— գրում է Ղ. Ինճիճյանը,— քուրդ ինքնագլուխ, որ յառաջին ժամանակս էր ընդ տէրութեամբ Պայէզիտոյ պէյին կամ փաշային Էրզիռումայ, որպէս յայտ է յարքունի դիւանագրին, և էին ի համօրէն Մալազկերտ գաւառին 360 գիւղօրէք բնակեալք ըստ մեծի մասին ի հայոց. բայց յամին 1762, խռովութիւնք և մարտ ի մէջ պէյից բազում քանդմունս գործեցին յայս գաւառ, և հաղիւ մնացին 100 գիւղօրէք. յետ այնորիկ խռովութիւնք և պատերազմունք որ եղև սակաւ ամօք յառաջ ի մէջ սորա և Խնուսայ պէյին, մեծապէս ապականեցին զայս երկիր, և հաղիւ թողին 20 գիւղօրէս, որք առհասարակ հանդերձ ամենայն գաւառաւ են թեմ մենաստանին սբ. Աղբերկայ՝ որ ի Մուշ»[16]։ Ավելի ծանր վիճակ ստեղծվում է Մանազկերտ կենտրոնում. «...յառաջագոյն էին ի սմա տունք 6000, այլ այժմ մնացին տունք իբր 107, յորոց 7 կամ 8 տունք են հայոց, մնացեալքն քրդաց»[17]։

Աղբյուրների վկայությամբ, Վանի կուսակալներն անվերջ պատերազմական գործողությունների մեջ էին ոչ միայն իրենց նահանգի ապստամբ քրդերի, այլև, երբեմն, իրենց նահանգների սահմաններից դուրս այլ ֆեոդալների հետ։ 1776 և 1779 թթ. Վանի Թամուր փաշան փորձեց իրեն ենթարկել քրդական Հեքյարի շրջանը, սակայն ստիպված եղավ բավարարվել ավարառությամբ[18]։

Կարսի նահանգը կամ փաշայությունը սահմանակից է եղել «...յարևելից՝ Բասենոյ գաւառին Էրզիռումայ, ի հարաւոյ՝ Ալաշկերտ գաւառին Պայէզիտոյ, իսկ յարևմտից՝ պարսից աշխարհին, յորմէ բաժանի՝ ի ձեռն վտակին, որ կոչի Արփայ չայը»[19], այսինքն Ախուրյան գետը։ Կարսի նահանգն, ըստ Ղ. Ինճիճյանի, ունեցել է 6 սանջակ, մինչդեռ ըստ XVI—XVII դարերի թուրքական աղբյուրների՝ սանջակների թիվը 5 էր[20]։ Վեց սանջակ են մատնանշված նաև Յոզեֆ Համմերի բերած ցուցակում[21], Այդ սանջակներն են՝ Կարս, Կաղզման կամ Կաղզվան, Կեչվան, Զարեշատ, Խուջվան կամ Խուջուջան, Շորագյալ

16 Նույն տեղում, էջ 112։

17 Նույն տեղում։

18 «Դիւան հայոց պատմութեան», հ. ժ, էջ 144—145։

19 Նույն տեղում, էջ 119։

20 Այդ սանջակներն էին՝ Փոքր Արդահան, Խուջուջան, Զարեշատ, Քեհրան, Կաղզվան։

21 J. Hammer, t. XVII, p. 58.

կամ Շորեկեր, «Յորս յիւրաքանչիւրսն նստի դատաւոր»[22]։ Այս ցուցակում չի հիշատակված նախորդ դարերում տվյալ նահանգի մեջ մտնող Արդահանը, որը մտել է Չլդբրի (Ախալցխայի) նահանգի մեջ։

Ելնելով Ղ. Ինճիճյանի հաղորդած վկայություններից, պիտի ենթադրել, որ XVIII դարում բավական ընդարձակվել էր Չլդբրի վիլայեթի սահմանները։ Հավանաբար, դա պիտի բացատրել նրանով, որ Չլդբրի կամ Ախալցխայի նահանգը, հատկապես XVIII դարի երկրորդ կեսից, փաստորեն դարձել էր սահմանային շրջան, և որ Չլդբրի վալիի քաղաքական դերն ու նշանակությունն կայսրության արևելքում խիստ մեծացել էր։

Այս նահանգը կամ փաշայությունը «Ի հիւսիսոյ և յարևելից՝ սահմանակից է վրաց, ի հարաւոյ Կարս նահանգին, յարևմտից հարաւոյ՝ Էրզիրումայ նահանգին, իսկ յարևմտից՝ Լազիստանայ։ Սահման փաշայութեան Ախալցխայու ձգի յերկուս հին նահանգս մեծին հայոց՝ որք կոչէին Գուգարք և Տայք։ Եւ այս գաւառք մեծին հայոց՝ ի վաղ ժամանակաց անտի գոլով ընդ տերութեամբ, և մինչև ցայժմ բնակեալ ի վրաց բազմաց, նաև ի հայոց՝ որք խօսին ի լեզու վրաց յայն սակս մեծ մասն այսր փաշայութեան կոչի Վրաստան կամ ըստ տաճկաց՝ կիւրճիսթան»[23]։ Հիրավի, XVI դարի կեսերին գրավելով այս երկրամասը, թուրքերն այն անվանեցին «Վիլայեթ-ի Գյուրջիստան»[24]։

Չլդբրի նահանգի մեջ մտել են 23 սանջակ։ Դրանք են՝ Ախալցխա, Նարիման, Օլթի, Ֆենեսկերտ կամ Ֆանասկերտ, կամ Ֆենեք (Փենեք), Թավսկեր, Չլդբր, Չեվախեթ՝ «...որ է Ջաւախք հին գաւառն Գուգարաց նահանգին», Ազդոր, Կուապլեան, Ախալքալակ, Փոցխով, Շավշեթ, Վերին և Ստորին Իմերխեվ, Արտանուշ, Արդահան, Արդուին, Սինգոթ, Մաճխել (Մաճախալի), Վերին և Ստորին Աջարա, Թերալեթ, Պարխալ, Կիսկիմ, Բերդագրակ (օջակլըկ է) Լիվանե (օջակլըկ է)»[25]։ Ի միջի այլոց Բերդագրակի բնակիչները, որոնք «...էին յայզգէս հայոց, այլ

22 Ղ. Ինճիճյան, էջ 119—120։

23 Նույն տեղում, էջ 122։

24 М. К. Зулалян, Армения в первой половине XVI века, М., 1971, с. 78.

25 Ղ. Ինճիճյան, էջ 124։ Յոզեֆ Համմերի մոտ սանջակների թիվը 20 է (J. Hammer, t. XVII, p. 58). Համաձայն XVI—XVII դարերի թուրքական աղբյուրների, Չլդբրի էյալեթի մեջ մտել են 13 սանջակ՝ Չլդբր, Օլթի (Ուղթի), Խերթուշ (Խերթվիս), Արտուշ (Արտանուշ), Արդահան, Հաչրեք, Փոսխով (Փոցխով), Մախչել (Մաճախալի), Աչուրա, Բենեք (Բանակ), Բարդրեք (Բերդագրակ), Լիվանե, Շեվշար (Շավշեթի)։

սոցա ըստ մեծի մասին դարձան ի տաճկութիւն և սակաւ մնացին ի քրիստոնէից»[26]։

Պատմական Հայաստանի Դիարբեքիր նահանգում XVIII դարում տեր ու տնօրենություն էին անում քուրդ բեկերը։ Այս նահանգը «...ըստ մեծի մասին բնակեալ է ի քրդաց»[27]։ Այնտեղ ապրում էին նաև քրիստոնյաներ՝ ասորիներ, քելդանիներ, բայց «...ի մէջ քրիստոնէից բազմութիւն են՝ ազգիս հայոց կրկնապատիկ առաւել քան զայլ ամենայն ազգս քրիստոնէից»[28]։ Նահանգում, ինչպես դա նախորդ դարերում են, հողերի զգալի մասը քուրդ բեկերի ժառանգական տիրույթներ հանդիսացող հյուքյումեթներ, յուրթլուկներ և օջակլըկներ են։ Իսկ օսմանյան կառավարության ենթակա շրջաններում, քուրդ բեկերն անվերջ ապստամբ վիճակում են ու ձգտում են թոթափել օսմանյան լուծը։ «Սահման իշխանութեան Տիարպէքիրոյ վալիին,— գրում է Ղ. Ինճիճյանը,— ընդարձակ ձգի յոյժ, և սանճագք նորա բազում. բայց ութ ի սանճագաց իւրոց ի վաղուց հետէ են օճագլըգ քուրդ ազգին, որք և ոչ անսան հրամանի տէրութեան յելանել և յիջանել նոցա յիշխանութեան, իսկ հինգքն են հիւքիումէթ, յորս ըստ ժառանգութեան զարմի յորդւոց յորդի իշխեն պէյք քրդաց, իսկ մնացեալ բնիկ սանճագք օսմանեան տէրութեան բնակեալ գոլով մանաւանդ ի քրդաց, ըստ մեծի մասին ապստամբք են ի նմանէ, որպէս և նոյն իսկ օճագլըգ և հիւքիումէթ սանճագքն գրեթէ առ հասարակ, յորոց բազումք ծանր վիշտս և խռովութիւնս հասուցանեն փաշային. յայտնի պատերազմ մղելով ընդ նմա. ուստի սահման հնազանդեալ ընդ իշխանութեամբ փաշային է փոfr, առ սահմանօfն՝ nrf ըստ արfունի հրովարտակին անկանին նմա. և ունի գիտօրէս հնազանդեալս 360 (ընդգծումը մերն է— Մ. Ղ.)»[29]։

Եթե Ղ. Ինճիճյանի ցուցակում Դիարբեքիրի նահանգում սանջակների թիվը 16 է, ապա Յոզեֆ Համմերի մոտ 26 սանջակ է մատնանշված[30]։ Մի շարք նախկին սանջակներ միավորվել են ու կազմել մեկ վարչական միավոր, օրինակ՝ Զարսանջակը (ի դեպ, սա նշանակում է չորս սանջակ)։ Ըստ Ղ. Ինճիճյանի, Դիարբեքիրի նահանգի սանջակներն են՝ Ամիդ, Թերջիլ, Մայաֆարկին, Միհրանի, Աթաք, Էգիլ, Ճա-

26 Ղ. Ինճիճյան, էջ 132։

27 Նույն տեղում, էջ 203։

28 Նույն տեղում, էջ 213։

29 Նույն տեղում, էջ 209—210։

30 J. Hammer, t. XVII, p. 59.

պաղջուր, Բալու, Ջարսանջակ (որի մեջ մտնում էին Մեծկերտ, Սաղման, Փերի, Բերդակ գավառները), Ջմշկածագ, Սևերեկ, Սավուր, Սղերտ, Խզու, Հիսընիքեֆ, Սահման Մատեն Էմինիին (որի մեջ մտնում էին Խարբերդ, Ջերմուկ, Շնքուշ և Արղնի գավառները)[31]։

Դիարբեքիրի նահանգին կից էր քրդահպատակ մի հզոր իշխանապետություն՝ Ջեզիրեն, մի հյուքյումեթ, «...սեփհական հին ցեղի ինչ քրդաց ուստի է պէյ ինքնագլուխ և զօրաւոր. ունի ընդ իւր և գիւղօրէս բաղումս, այլև վիճակս ինչ, որոց բնակիչք ըստ մեծի մասին են քուրդք, յորոց կարէ հանել ասեն զօրս մինչև 70 հազար»[32]։

Պատմական Փոքր Հայքի Սեբաստիա նահանգը, եթե նախորդ դարերում ունեցել է 7 սանջակ[33], ապա XVIII դարում դրանց թիվը կրճատվել է 4-ի։ Դրանք են՝ Սեբաստիա (Սիվաս), Բոզոք, Դիվրիկի, Արաբկիր[34]։ Նահանգը «ի հիւսիսոյ՝ սահմանակից է Ճանիկոյ յարևելից՝ Տիվրիկոյ և Շապին Գարա Հիսարի, ի հարաւոյ Գայսերիոյ, իսկ յարևմտից ըստ մասին սահմանակից է Ջանկրոյ»[35]։ Այս նահանգում, ի տարբերություն Հարավային ու Հարավ-արևմտյան Հայաստանի, հայերի հետ միասին ապրում են թուրքեր ու քոչվոր թուրքմեններ[36]։

Ելնելով աղբյուրների վկայություններից, թուրքմեն վաչկատուն ցեղերն առավելապես քոչվորական կյանք էին վարում Փոքր Հայքի հարավային մասերում և Կիլիկիայում, ուր XVIII դարում հոծ հայություն էր բնակվում։ Ղ. Ինճիճյանը խոսելով Ադանայի նահանգի մասին և շեշտելով, որ թուրքմենները տարածված էին նահանգի համարյա բոլոր գավառներում, նշում է, որ «...բազմութիւն բնակչաց այսր նահանգի պարապին յաւազակութիւնս և յաւարառութիւնս, կալեալ ունելով զկիրճս լերանց և զանցս ճանապարհաց»[37] և որ «թիւրքմանք ըստ օրինի քրդաց վրանաբնակք են և բաժանեալ ի պէս-պէս տոհմս»[38]։

31 Ղ. Ինճիճյան, էջ 210—211։ XVI—XVII դարերի թուրքական աղբյուրների տվյալներով Դիարբեքիրի նահանգի մեջ մտել են հետևյալ 18 սանջակները՝ Ամիդ (Դիարբեքիր), Խարփուտ (Խարբերդ), Արղնի, Նիսիբին (Մծբին), Հիսընքեֆ, Ջմշկածագ, Սղերտ, Մեֆարկին (Նփրկերտ), Ակշակալա, Սենջար, Խաբուր, Սաղման, Կալեր, Մեհրան, Թերջիլ, Աթաք, Ճապաղջուր և Ջերմիկ։

32 Նույն տեղում, էջ 349։

33 J. Hammer, t. XVII, p. 58.

34 Ղ. Ինճիճյան, էջ 282։

35 Նույն տեղում, էջ 283։

36 Նույն տեղում։

37 Նույն տեղում, էջ 355։

38 Նույն տեղում։

Ադանայի նահանգի մի զգալի մասը, համաձայն Ղ. Ինճիճյանի հաղորդած տեղեկությունների, XVIII դարի 70—80-ական թվականներին չէր ենթարկվում կենտրոնական կառավարությանը։ «Այժմ ոչ սակաւ տեղիք ի բաց ելին յիշխանութենէ փաշային,— գրում է նա,— զի ապստամբք աւազակապետք տիրապետեալ ունին ի կողմանս կողզի ապստամբք աւազակապետք տիրապետեալ ունին ի կողմանս կողմանս՝ յորս գլխաւորն յաւուրս սուլդան Համիտի էր Քիւշիւք Ալի կոշեցեալն, որ զառաջինն ոչ այնչափ՝ ի վեր հանեալ ունէր զիւր ապստամբութիւն, իսկ ի վերջին ամս նորին արքայի խնդրեաց ի տէրութենէ կամ տալ նմա զփաշայութիւն Ատանոյ և կամ տալ բազմութիւն քսակաց»[39]։ Մերժում ստանալով, նա «...յայնժամ առիթ առեալ յայտնի ի վեր եհան զապստամբութիւն»[40]։

Փաստորեն, XVIII դարի վերջերին Կիլիկիայի հայկական գավառների մեծ մասը գտնվում էր Կոզանօղլուների դերեբեյական իշխանության տակ և միայն անվանապես էր ենթարկվում Ադանայի և Մարաշի կուսակալներին։ Մ. Օրմանյանի համաձայն, 1737 թվականից «Սիսի վրայ բռնացողը Լիւան-օղլուն էր. թուրք մը ըլլալով ինքը կըսէ թէ Լևոն թագաւորին ցեղէն սերեալ եմ։ Ասոր դեմ ելաւ Եուսուֆ Գօզանողլու, անառնմիկ մարդ մը, որ Տեվելու գաւառի ցեղապետին այրին հետ ամուսնանալով, նախ այն տեղ կը զորանայ, և վերջին Լիւանօղլուն ալ հալածելով կիշխէ Քաղաքին և սահմանացն Սսոյ, և մինչև իսկ Տաւրոսի լեռնաշղթային այդ մասը յանուն իւր անուանէ Գօզանտաղի»[41]։

Մի երկու խոսք քոչվորական ցեղերի մասին։ XVI—XVII դարերում, ինչպես դա երևում է թուրք պատմաբան Ահմեդ Ռեֆիկի հրատարակած արխիվային նյութերից, Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան մասերում տարածված էին թրքախոս քոչվորական ցեղեր[42]։ XVI դարի 70-ական թվականներից սկսած քոչվորական ցեղերն այստեղ զգալի տարածություններ գրավեցին։ Կենտրոնական կառավարությունը ձգտում էր մի կողմից քոչվորներին դարձնել նստակյաց հողագործներ, մյուս կողմից, նպատակ ունենալով տարաբաժանել ու թուլացնել տեղական նստակյաց բնակչությանը, շնորհում էր նրանց արտոնություններ։ Քոչվորներին իրավունք էր վերապահվում իրենց հոտերի հետ շարժվել ցանկացած ուղղությամբ։ «Արոտատեղիների

39 Նույն տեղում, էջ 358։

40 Նույն տեղում։

41 Մ. Օրմանյան, էջ 2998։

42 Ahmed Refik, Anadolu'da Türk aşiretleri, Istanbul, 1932. s. VI—X.

համար որոշված սահմաններ չկան։ Հնագույն ժամանակներից կարգն այս է՝ հոտը որ կողմն էլ շարժվի, այնտեղ էլ թող արածեցվի։ Հնագույն ժամանակներից անհամատեղելի է արոտավայրերի ծախելն ու բաժանելը։ Եթե մեկը բռնությամբ մշակի, ապա անհրաժեշտ է (հողը) դարձյալ արոտավայրի վերածել... գյուղերի բնակիչները ոչ մի առնչություն չունեն արոտավայրերի հետ և հետևաբար չեն կարող որևէ մեկին արգելել քոչը»[43]։

Քոչվորների առաջնորդները, այսպես կոչված բաշբուղները, ռահսները, կառավարությունից զինվորական ծառայության դիմաց ստանում էին իշխանական կոչումներ[44]։ Այդ առաջնորդները, զգալով իրենց արտոնյալ վիճակում, քոչում էին մի վայրից մյուսը, ճանապարհին, երբեմն, մեծ վնասներ պատճառելով հողագործ գյուղացիությանը։ Վավերագրերում նրանք անվանվում են «քոչողներ» (konar, göçer)։

Կառավարության ամեն մի փորձ՝ սահմանափակել քոչվորների կամ նրանց առաջնորդների իրավունքները, հաճախ հանդիպել է վերջիններիս զինված կատաղի դիմադրությանը։ Նման դեպքերում նստակյաց հողագործները մեծապես տուժում էին։ Քոչվորները հեղեղի նման իջնում էին լեռներից, ոչնչացնում ցանքսերը, կողոպտում գյուղերի հարստությունները, քշում-տանում խոշոր ու մանր եղջերավոր անասուններին՝ ահ ու սարսափի մեջ պահելով շրջանի բնակչությանը։ 1689 թ. թուրքմենները քառասուն օր ծանր կացության մեջ թողեցին Ալբիստանի բնակչությանը[45]։ «XVI—XVII դարերում,— գրում է Վ. Ա. Գորդլևսկին,— թուրք քոչվորները պահում էին իրենց այնպես, ինչպես Դերսիմի քրդերը XX դարում»[46]։ 1664 թ. մի ձեռագրի հիշատակարանում Միքայել գրիչը հաղորդում է. «...եւ առաւել ևս յայսմ ամի զօրացան ազգն թուրքմանց եւ յաւար հարին զանասունս գեղօրէից ամենայն երկրի, եւ ի տեղիս զբնաւին ինչք գիւղից յաւար հարին, որպէս և զԱղք կոչեալ գէօղն Թալանեցին ի գաւառն Սեբաստիոյ... եւ դադարեցան ճանապարհորդք եւ կարաւանք և ամայացան ճանապարհք ամենայն, զի բազումս կողոպտեցին, ի վաճառականաց և սպանին»[47]։

43 *А. С. Тверитинова.* К вопросу о крестьянстве и крестьянском землепользовании в Османской империи XV—XVII вв., с. 47.

44 *Ahmed Refik*, Anadolu'da..., v. № 219, s. 182.

45 *В. А. Гордлевский*, Государство сельджукидов Малой Азии, М.—Л., 1941, с. 65.

46 Նույն տեղում։

47 «Արարատ», 1883, էջ 486—487։

Քոչվորների հիմնական վայրերը Փոքր Ասիայի արևմտյան նահանգներն էին (Անկարա, Այդին, Բոլու, Խուդավենդիգյար, Քյութահիա, Սարուխան և այլն), սակայն քիչ չէր նրանց թիվը նաև Արևմտյան Հայաստանի հարավային մասերում և այլ գավառներում։ Հայկական նահանգներին վերաբերող կանոնագրքերում քոչվորներին (նրանք վավերագրերում կոչվում են յուրյուկներ, յուզդիջիներ, թերաքեմներ, ջամաաթներ, աշիրեթներ, օյմաղներ, թաիֆաներ, բոյեր և այլն) հատուկ հոդվածների նվիրումը խոսում է նրանց ընդգրկած մեծ տարածության մասին։ Նրանք հայտնվել էին մինչև իսկ Էրզրումի նահանգում[48]։ Քոչվորների հիմնական զբաղմունքը անասնապահությունն էր, հազվագյուտ՝ երկրագործությունը[49]։

Վաչկատուն թուրքմենները XVII դարի վերջին հակակառավարական հզոր ապստամբություններ բարձրացրին, որոնք երկար ժամանակ ալեկոծության մեջ պահեցին արևմտահայ գավառների մեծ մասը։ Այդ դեպքերն իրենց արտահայտությունն են գտել հայկական աղբյուրներում։ Կառավարությունը դիմեց, ի վերջո, կտրուկ միջոցների, որոնք, առաջ անցնելով նշենք, որ ունեցան միայն ժամանակավոր ազդեցություն։ 1691—1696 թթ. թուրքմեն ցեղերի բարձրացրած ապստամբությունների, կառավարության ձեռք առած միջոցառումների ու թուրքմեն ցեղերի անհնազանդության ու կատարած ավարների ու ավերումների հետագա ժամանակաշրջանի պատմության հարցերին է նվիրված ժամանակակից թուրք պատմաբան Ջենգիզ Օրհոնլուի հատուկ ուսումնասիրությունը՝ հիմնված արխիվային ու պատմագրական նյութերի վրա[50]։

«Երբ Թուրքիան XVII դարի վերջին,— գրում է Ջ. Օրհոնլուն,— զբաղված էր Եվրոպայում «Սրբազան դաշինքի» պետությունների դեմ մղվող պատերազմներով ու դեռևս չէր կնքված Կարլովիցի հաշտության պայմանագիրը», թուրքմենական ցեղերը արևմտահայ գավառներում և Փոքր Ասիայի այլ մասերում, «...օգտվելով բանակի բացակայությունից, ապստամբություններ բարձրացրեցին։ Սկզբում հարյուր հո-

48 Տե՛ս «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 30։

49 Այդ մասին մանրամասն տե՛ս *O. L. Barkan*, Essais sur les documents statistiques des registres de recensement dans l'Empire ottoman au XV et XVIème siècles (Journal of Economic and Social History of the Orient", v. I, Leiden, 1957).

50 *C. Orhonlu*, Osmanli Imperatorlnğunda aşiretleri iskân teşebbüsü (1691—1696), Istanbul, 1963 (այսուհետև՝ C. Orhonlu).

գուց բաղկացած, իսկ այնուհետև գնալով ավելի ու ավելի մեծ խմբերով (Թուրքմենները) Սեբաստիայից մինչև Բոլու ընկած շրջակայքի գյուղերն ու ավանները կողոպուտի ու ավերածության ենթարկելով արգելք հանդիսացան ժողովրդի երթևեկությանը։ Պատժիչ զորաջոկատները ոչինչ չկարողացան անել նրանց նկատմամբ»[51]։ Սեբաստիայի արևմուտքում, հյուսիսում և արևելքում ուղղությունով ցեղը, Դիարբեքիրի և Էրզրումի շրջակայքում բոզուլուս ցեղը, Զորումի և Թոխատի մերձակայքում չունքար, չեպնի և այլ ցեղեր ասպատակեցին արևմտահայ գավառները[52]։ Թուրքմենները դաշնակցած դասալիք սեկպանների և այլ ավազակախմբերի հետ, ինչպես գրում է Ջ. Օրհոնլուն, «...հարձակվում էին գյուղերի, ավանների, հատկապես քաղաքների վրա, ցանված արտերը, այգիներն ու բանջարանոցները ահավոր չափով ավերում։ Սա ցույց է տալիս, թե ինչպիսի մահացու հարված էին նրանք հասցնում տեղաբնիկներին։ 1687—1689 թվականների ընթացքում, նման ասպատակությունները սկսեցին գնալով բազմանալ, բոլոր կողմերից դեպի կենտրոն բողոքներ էին գալիս։ Նրանք մինչև իսկ պատճառ հանդիսացան բերքառատ մի նահանգում՝ Մարաշում, սովի առաջացմանը։ Նման պայմաններում, բնակչությունը այլևս անկարող եղավ դիմանալ ու ստիպված սկսեց թափառել աջ ու ձախ կամ լքել ու հեռանալ երկրից։ Ասպատակողներից պաշտպանվելու համար տեղ-տեղ բնակչությունը շրջափակում էր քաղաքները պարիսպներով»[53]։

1682 թ. արտագրված մի ձեռագրի հիշատակարանում այս դեպքերը գտել են իրենց հետևյալ արտահայտությունը. «Աշխարհ ամենայն դագարկեցաւ ի զօրաց արքունականաց հաւատարմաց և բազմացան բոյլք աշխարհաւէր զօրաց կողոպտողաց, որ շրջեալ և իջեւանեալ ի գիւղորայսն ազգի ազգի պատճառանօք խնդրէին դրամս։ Եւ առաւել ևս ազգն Թուրքմանաց խորանաշրջաց, որոց չարչարութեանցն ոչ տեսեալ գեղորայքն աւերեցան բազում գեօղք. և ամայացաւ երկիր նոցա ի բնակչաց աւուրքք յառաջ։ Եւ առաւել ևս յայսմ ամի (իմա՝ 1682 թ. Մ. Ջ.) զօրացան այս ազգս Թուրքմանաց և աւար հարին զանասունս գեղօրէից ամենայն երկրի. և ի տեղիս տեղիս զբնաւին ինչք գիւղից յաւար առին... Եւ դադարեցան ճանապարհորդք և կարաւանք և ամայացան ճանապարհք ամենայն, զի բազումս կողոպտեցին ի վաճառականաց և սպանին... Զի և կոյրս մուրացիկս մերկացուցանէին, յորոյ բանիցս զառաւելութիւն չարիս իմացիս։ Եւ գեօղք առ զմիմեանս փախուցեալ ի քաղաք անկանէին։ Որ և ի ժամանակի հնձոց ոչ կարացին համարձակ գնալ ի գեօղս իւրեանց ի հունձ և ի մանգաղ։ Զի նոքա կեռակուր իւրեանց արարին զարտորայսն հասկակոտոր առնելով և արածելով զանասունս իւրեանց... Յորոց պատճառէ եղև սղութիւն ցորենոյ և թանկութիւն հացի և աւերման պատճառ»[54]։

XVII դարի վերջին և XVIII դարի սկզբներին կառավարությունը բազմիցս փորձեց Թուրքմեն վաչկատուններին նստակյաց դարձնել ու վերջ տալ նրանց ավազակաբարո նիստուկացին, սակայն ոչ մի արդյունքի չհասավ[55]։

Կոզանօղլու Թուրքմեն վաչկատուն ցեղերը տեր ու տնօրինություն էին անում Կիլիկիայի մի զգալի մասում, հատկապես XVIII դարի երկրորդ կեսից։ Մ. Օրմանյանի բառերով ասած, «Գոզանօղլու տոհմը սկսած էր բռնադատել Կիլիկիոյ մեջ, և կաթողիկոսներն ալ մերթ անոնց պաշտպանութեանց և մերթ հարստահարութեանց կը հանդիպէին»[56]։

1770 թ. սեպտեմբերի 10-ին վաչկատուն այս ցեղերը, ինչպես վկայակոչված է մի հիշատակարանում, որպես «արիւնռուշտ գազանք» հարձակվում են Սսի վանքի վրա ու սպանում Կիլիկիայի Գաբրիել Աջապահյան կաթողիկոսին[57]։

Վերադառնալով վարչական կարգերի հարցերին, նշենք, որ դեռևս XVIII դարում իրենց գոյությունը պահած հայկական իշխանությունները Սասունում, Սավուրում, Իսյանում, Մոկսում, Շատախում, Ճապաղջրում, Խնուսում և այլուր, որոնց մասին վկայում է Ղ. Ինճիճյանը[58], ընդգրկում էին ոչ մեծ տարածք և շարունակում էին հարատևել օսմանյան պետության թուլացման ու քուրդ բեկերի անվերջ հակակառավարական ապստամբությունների շնորհիվ։ Զի բացառվում նույնիսկ այն հանգամանքը, որ տեղ-տեղ քուրդ բեկերը ձգտում էին օգտագործել հայկական իշխանությունների ռազմական ուժը կառավարության դեմ։

51 Նույն տեղում, էջ 9։

52 Նույն տեղում, էջ 16։

53 Նույն տեղում, էջ 40—41։

54 Մատենադարան, ձեռ. № 1149, էջ 295բ—296ա։

55 Տե՛ս C. Orhonlu, s. 86—93.

56 Մ. Օրմանյան, էջ 2998։

57 Նույն տեղում, էջ 3071։

58 Ղ. Ինճիճյան, էջ 158, 161, 163, 200, 375 և այլն։

Հայկական իշխանություններից ամենաուժեղը Լեռնային Սասունն էր։ Որպես վարչական միավոր այն մտնում էր Բիթլիսի կազմի մեջ, սակայն պահում էր իր կիսանկախ դիրքը։ Կենտրոնական կառավարության բազմիցս փորձերը՝ վերջ տալու լեռնականների կիսանկախությանը, անցել էր անհաջող։ Ղ. Ինճիճյանը 1806 թ. գրել է, թե Սասունի «բնակիչք սորա քուրդք և հայք, որոց երկոքին ևս զմի և զնոյն ազատութիւն ունին, արք յաղթանդամբք և քաջասիրտք, երևելիք ի կորովութիւնս մարմնոյ, ահեղք ի պատերազմի, որոց միայն ստուարաթիւ հերաց մանաւանդ ոմանց ի նոցանէ ահացուցանէ զտեսողսն, որք ի սկզբանէ անտի միշտ եղեն ինքնագլուխ, ոչ ումեք ծառայելով, և ոչ ոք ի փաշայից կամ ի պէյից կարող զտաւ զսոսա նուաճել. տակս զօրութեան ուժոյ սոցա, և սակս ամուր վայրացն, յորս ապաստանեալ ոչ ումեք թոչուն մուտս առնել։ Ունին իւրեանց մասնաւոր պէյ ինքնագլուխ»[59]։

Կիլիկիայում ամենաուժեղ հայկական կիսանկախ իշխանությունը Զեյթունն էր՝ Ուլնիան։ Օսմանյան կառավարությունը, բազմիցս հանդիպելով հպարտ լեռնականների հզոր դիմադրությանը, ստիպված սուլթան Մուրադ IV-ի ժամանակ՝ 1626—1627 թթ. հատուկ հրովարտակով պաշտոնապես ճանաչեց Զեյթունի ինքնավարությունը[60]։

* * *

XVI դարում գավթելով Արևմտյան Հայաստանը, թուրքերն այնտեղ մտցրեցին իրենց ավատատիրական համակարգը։ Համաձայն այդ համակարգի, բոլոր մշակելի հողատարածությունները բաժանվեցին երեք հիմնական խմբի. 1) պետական հողեր, 2) վակֆային հողեր և 3) մասնավոր սեփականատիրական հողեր։

Պետական հողերի (արզ-ի միրիյե կամ արզ-ի մեմլեքեթ) մի մասը գտնվում էր սուլթանի, նրա ընտանիքի և պետական պաշտոնյաների անմիջական տնօրինության տակ, իսկ մյուս՝ ավելի մեծ մասը, բաժանված էր խոշոր ու մանր ֆեոդալների միջև՝ որպես վարձատրություն պետության նկատմամբ վերջիններիս կատարած ծառայությունների։ Այդ պարգևական հողերը, հատուկ հաշվառման հետևանքով, գրանցման մատյաններում (դավթարներում) արձանագրված տարեկան եկամտի չափի համաձայն կոչվել են խասսեր (խասսերից ստացված տարեկան եկամուտը կազմում էր 100.000 ակչե[61] և ավելի), զեամեթներ ու թիմարներ։ Զեամեթի պետական եկամուտը կազմում էր 20.000-ից մինչև 100.000 ակչե, իսկ թիմարինը՝ մինչև 20.000 ակչե։

Հողատիրության երկրորդ տարածված ձևը վակուֆներն էին, այսինքն այն հսկայական հողային տարածությունները, որոնք տնօրինվում էին մուսուլման ու քրիստոնյա հոգևորականության կողմից։

Մասնավոր սեփականատիրական հողերը (մուլք կամ հայրենիք) հատկացվում էին պաշտոնյաներին՝ պետությանը մատուցած հատուկ ծառայության դիմաց։ Հողատիրության այս ձևը XVI դարում տարածված չէր, սակայն նույն դարի վերջին, առևտրավաշխառուական հարաբերությունների աշխուժացման հետևանքով, սեփականատիրական հողերը բազմապատկվեցին կայսրության զանազան մասերում, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանում։

Արևմտյան Հայաստանում մուլքի կամ հայրենիքի իրավունքով հողային տարածություններ ունեին ոչ միայն թուրք ու քուրդ ֆեոդալները, այլև հարուստ հայ գյուղացիներն ու մեծատուն առևտրականները։ Որ իրոք հայկական գյուղական համայնքի վերնախավն ու խոշոր-առևտրական դասը տիրապետում էր զգալի քանակությամբ հողերի, վկայում են ոչ միայն հայերեն ձեռագրերի հիշատակարանները։ Էրզրումի կանոնագրքում կարդում ենք. «Եվ անհավատներից որոշ մարդիկ (նկատի են առնված հայերը— Մ. Զ.) քաղաքներում ու գյուղերում դարձել են անկախ ու գնել մուլքեր՝ այգիներ ու հողեր»[62]։

Փոքր Ասիայի նվաճման սկզբնական ժամանակաշրջանում օսմանյան հասարակությունը, որի հիմնական զանգվածը քոչվորական ու կիսաքոչվորական ցեղերն էին, հազիվ էր թևակոխել վաղ ֆեոդալիզմի փուլը։ Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական զարգացումը ընթանում էր երկու ուղիով. մի կողմից օսմանցի թուրքերը նույնությամբ թողնում էին Փոքր Ասիայում և Արևմտյան Հայաստանում մինչև նվաճումը գոյություն ունեցող զարգացող ֆեոդալների (նկատի

59 Ղ. Ինճիճյան, էջ 200։

60 Հ. Մ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը, Երևան, 1969, էջ 109։

61 Ակչե (Akçe) — թուրքական արծաթ դրամի միավոր։ Ակչե հայերեն նշանակում է սպիտակ։ Առաջին օսմանյան ակչեները կշռում էին քառորդ մսխալ (1,2 գր. արծաթ)։ Հետագայում ակչեի կշիռը փոքրանալով կամ պակասել է, կամ պղնձի տոկոսը դրամի մեջ խիստ ավելացել։

62 *O. L. Barkan*, XV ve XVI-ıncı asırlarda Osmanlı Imperatorluğunda ziraî ekonominim hukukî ve mâlî esasları, c. I, Kanünlar, Istanhul, 1945, s. 65 (այսուհետև՝ *O. L. Barkan*, Kanunlar).

ունենք Հայաստանի նախկին տիրակալներին) հողօգտագործման նախկին հաստատությունները (վակֆ, մուլք և այլն), մյուս կողմից՝ զարկ էին տալիս զեամեթի ու թիմարի թուրքական ֆեոդալական հողատիրության ձևերին։ XVI և հատկապես XVII դարից զեամեթներն ու թիմարները վերածվեցին պարզապես հողային տիրույթների՝ այլևս պայմանավորված չլինելով պետության նկատմամբ ֆեոդալի որևէ պարտավորության հետ։

Ժամանակակից թուրք պատմաբանները, ինչպես և նրանց նախորդող Թուրքիայի եվրոպացի պատմաբանները (դ'Օսոն, Համմեր, Բելեն, Տիշենդորֆ և այլք), հողատիրության բաժանումը Օսմանյան կայսրության մեջ կատարում են ոչ թե ըստ տիրապետության սկզբունքի, այլ հարկային հատկանիշի։ «Համաձայն իսլամական օրենքի,— գրում է Ուզունչարշըլը,— հողը բաժանվում էր երեք մասի՝ ուշրիե, խարաջիե և արզ-ի մեմլեքեթ»[63], ըստ որում ուշրիեն նվաճումից առաջ կամ հետո մուսուլմաններին պատկանող հողերն են, խարաջիեն՝ ոչ-մուսուլման բնակչության տրամադրության տակ գտնվող հողերը, իսկ արզ-ի մեմլեքեթը, ինչպես վերը նշվեց, պետական սեփականությունը կազմող հողերն են[64]։

Միջնադարյան Թուրքիայի հողատիրության սիստեմի նման մեկնությունը վաղուց է քննադատվել մարքսիստական պատմագրության ներկայացուցիչների (Միլլեր, Տվերիտինովա, Ցվետկովա և այլք) կողմից։ Ակնհայտ է, որ բուրժուական պատմաբանները միջնադարյան Թուրքիան ուսումնասիրելիս, հողատիրության նման բաժանումը կատարել են հիմնվելով XVI դարի երկրորդ կեսի հայտնի օրենսդիր ու շեյխ-ուլ-իսլամ էբուսուուդի ֆեթվաների՝ մեկնությունների վրա։ Ավելորդ չենք համարում այստեղ բերել այդ ֆեթվայից առանձին հատվածներ։ «Եթե իմամը (սուլթանը— Մ. Զ.),— գրում է էբուսուուդը,— նվաճելով որևէ երկիր, նրա հողերը բաժանի նվաճողների միջև, ու եթե (տվյալ երկրի) ամբողջ բնակչությունը ընդունած լինի իսլամը մինչև նվաճումը... ապա այդ հողերը ուշրիե (այսինքն՝ տասանորդ) կլինեն... եթե իմամը, նվաճելով երկիրը, չսպանի ու գերի չվերցնի (նրա բնակիչներին) և թողնի նրանց նույն տեղում և տա նրանց իրենց տնօրինության (تمليك) տակ գտնվող հողերը, ինչպես և անասունները,

[63] *I. H. Uzunçarşılı*, c. III, Istanbul, 1953, s. 307—308, *M. d'Ohsson*, v. V, p. 94—95.

[64] *I. H. Uzunçarşılı*, c. III, s. 309—310.

ապա նրանց ջիզիե (գլխահարկ) հարկ պիտի նշանակել, իսկ հողի համար (նրանց վրա) նշանակված հարկը կլինի խարաջը... իսկ խարաջը կլինի երկու տեսակ. առաջին՝ խարաջ-ի մուվազզաֆե (خراج موضف), որը գանձվում է (հողի համար) յուրաքանչյուր տարի որոշակի գումար և երկրորդ՝ խարաջ-ի մուկասեմե (خراج مقاسمه), որը գանձվում է համաձայն հողատարածությունից ստացած բերքի 1/10-րդ կամ 1/8-րդ մասը։ Եթե հողը շատ բերրի է, ապա օրենքը թույլ է տալիս վերցնել (որպես խարաջ) մինչև բերքի կեսը։ Հիշատակված երկու խմբի հողերն էլ պատկանում են նրանց տերերին սեփականության (ملك) իրավունքով։ Սակայն բերքատու այս երկրի (Ասիայի) հողերը... ոչ ուշրիե են, ոչ էլ խարաջիե, այլ պետական հողեր են (ارضى مملكت) և գտնվում են պետական գանձարանի (بيت المال) տնօրինության տակ։ (Այս հողերը) տրվում են ռայաթներին (գյուղացիներին),... (Այսպիսի դեպքում) ռայաթը սիփահուն (ավատատերերին) կվճարի խարաջի-մուվազզաֆ և խարաջ-ի մուկասեմե։ Նրանք (այսինքն՝ գյուղացիները) չեն կարող ծախել կամ օտարել այդ հողերը։ Եթե նրանք մահանան ու ունենան որդիներ, ապա վերջինները հողն օգտագործում են նույն սկզբունքներով... Այս խմբի հողերը մինչև այն ժամանակ, երբ մուսուլմանների փադիշահի կողմից որևէ մեկին չտրվի որպես սեփականություն (ملك) ոչ ոքի սեփականություն չի կարող լինել»[65]։

Էբուսուուդի ֆեթվայում մեզ համար առավել կարևոր հատվածը այն վկայությունն է, երբ նա գրում է, որ «...բերքատու այս երկրի (Ասիայի) հողերը... ոչ ուշրիե են, ոչ էլ խարաջիե, այլ պետական հողեր են»։ Առհասարակ պետք է նշել, որ սուլթանական կառավարության հիմնական ձգտումը՝ նվաճված հողերի պետական սեփականություն դարձնելն էր[66]։ Օսմանյան կառավարությունը ընդունել էր իսլամական շարիաթի այն սկզբունքը, որ հողը ընդհանրապես պետությանն է պատկանում և ազատ կարող է օգտագործվել կամ մուլքի (սեփականության) վերածվել միայն նրա մի փոքր մասը։ «Այդ էր պատճառը,— գրում է Լ. Ֆեկետեն,— որ Օսմանյան պետությունը նվա-

[65] ملى تتبعلر مجموعاسى. استانبول، ١٣٢٦ հատ. 1, էջ 50—51։

[66] *M. d'Ohsson*, v. V, p. 582.

ճելով այս կամ այն երկիրը, հողը վերցնելով նախկին սեփականատերերից, դարձրել էր պետական սեփականություն»[67]։

Իսկ ի՞նչ սկզբունքներով էր բաշխվում պետական հողերը։ Գլխավորն, ինչպես նշվեց, ծառայության խնդիրն էր պետության նկատմամբ և ավատատերերի գրաված աստիճանը ավատատիրական սանդուղքում։ Հողատիրությունն ամբողջովին կապված էր թուրքական ռազմավատատիրական սիստեմի հետ։ Ըստ այդ սիստեմի, ավատները և իրենց ավատատերերը, կանոնադրությունների ընձեռած նյութերով, բաժանված էին երեք հիմնական խմբի՝ 1) այսպես կոչված «ոչ-ազատ» ("serbest olmayan") ավատներ (սիփահիների ավատներ). սրանք ավատների ամենատարածված տեսակն էին. 2) «ազատ» ("serbest")[68] կոչված ավատներ (դրանք զեամեթներն էին ու դիզդարների[69], սուբաշիների[70], չիրիբաշների[71] և թուրքական բանակում ծառայող բարձրաստիճան այլ ֆեոդալների ավատներն էին). և 3) սուլթանի, նրա ընտանիքի ու վեզիրների խասսեր ("hass-i selâtin ve hass-i ümerâ"): «Վակֆ» հողերը նույնպես մտնում էին այս խմբի մեջ։

Այս խմբերի միջև եղած տարբերությունը հիմնականում հարկային իրավունքի մեջ էր. այսպես՝ «ոչ ազատ» ավատատերը իրավունք ուներ ստանալու տվյալ ավատի տարեկան ռենտա-եկամտի կեսը, մյուս կեսը՝ թողնելով պետական գանձարանին ու բարձրաստիճան պաշտոնյաներին, մինչդեռ «ազատ» ավատատերը ստանում էր ամբողջ ռենտա-եկամուտը։

Կանոնադրություններում հաճախակի կարելի է հանդիպել հետևյալ արտահայտությանը, երբ խոսք է լինում «ազատ» ավատների մասին. "serbestiyet üzere tassarruf olunur", այսինքն՝ «ազատորեն տիրապետվում է»։ Օգտագործված «ազատ» բառը, սակայն վերաբերում է ավատատիրոջը և ոչ թե հողը մշակող գյուղացուն՝ ռայաթին, առհասարակ։

Թիմարները կազմում էին ռազմական ավատների մեծ մասը։ Ընդ որում, ըստ օրենքի, թիմարի տեր՝ ավատատերերի, այսպես կոչված, թիմարիստների տարեկան եկամուտը հասնելու էր մինչև 20.000 ակչե, իրականում, սակայն, նրանց տարեկան եկամուտը, հաճախ, չէր անցնում 2.000—4.000 ակչեից։ Դա պարզ երևում է այն աղյուսակից, որ Բ. Ցվետկովան բերել է իր աշխատության մեջ, հենվելով Բուլղարիայում պահպանված թուրքական արխիվային նյութերի վրա[72]։

Մինչև XVI դարի վերջը թիմարիստների հիմնական եկամուտը ստացվում էր ոչ այնքան իրենց տրամադրության տակ եղած հողերից, որքան ռազմավարից (ganimet)։ Թուրքերի համար հաջող ելք ունեցած յուրաքանչյուր պատերազմի վերջում նրանք ստանում էին հավելյալ պարգևատրում, այսպես կոչված, «թերակկը»։ Դարավերջում, երբ փաստորեն դադարեց ռազմավարը, թիմարիստները մի կողմից դարձան կենտրոնական կառավարության դեմ հիմնական ընդդիմադիր ուժը, մյուս կողմից չտեսնված չափերի հասցրեցին հողագործ գյուղացու շահագործումը։

Նկատի ունենալով զեամեթների ու թիմարների եկամուտների միջև եղած մեծ տարբերությունը, կենտրոնական կառավարությունը ավելի շահագրգռված էր պետական հողերը բաժանել մանր ավատատերերին։ Այս առումով, բավական է այստեղ բերել Էվլիա Չելեբու տվյալներն այդ մասին[73]։

Էյալեթներ	Զեամեթներ	Թիմարներ
Էրզրում	132	5159
Դիարբեքիր	926	1926
Վան	46	2695
Կարս	1	1263
Զլգբը	159	689
Տրապիզոն	56	598

---

[67] Prof. *d-L. Fekete*, Türk vergi tahrirleri. Türk Tarih Kurumu, "Belleten", Nisan, 1947, s. 330.

[68] Ռումի (Սերբաստիայի) վիլայեթի սիփահու կանոնում գրված է. «Ամբողջ Ռումում զեամեթներից, սերբակերի թիմարներից և դիզդարի թիմարներից բացի մնացած թիմարները ազատ (serbest) չեն։ Դավթարներում ևս այդպես է արձանագրված» («Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 51)։

[69] Դիզդարը՝ պարսկերեն դեժդար բառից է, որը նշանակում է բերդապահ, բերդի գլխավոր պահապան։

[70] Սուբաշիները կատարում էին ներկա հասկացողությամբ ոստիկանապետի դեր, իրականում նրանք ամեն տեսակ բռնությունների, կամայականությունների գործադրիչներն էին։ Պատահական չէ, որ Գր. Դարանաղցին նրանց հեգնում է՝ անվանելով «շունրաշիք»։

[71] Կոչվում էր նաև ալաբեյ։ Ալայը (բառացի՝ գունդ) հիմնականում կազմված էր թիմարի տեր ֆեոդալների ռազմական ուժերից։

[72] *B. A. Cvetkova*, L'évolurion du régime féodal turc de la fin du XVIème jusqu'au millieu du XVIIIème siècle, "Etudes historiques", Sofia, 1960, p. 172—173.

[73] "Narrative of travels in Europe, Asia and Africa in the seventeenth century", by Evliya Efendi, transl. from the Turkish by the Ritter Joseph von

Աղյուսակից երևում է, որ ամենից շատ զեամեթներ կան Դիարբեքիրի և Զլդբրի էյալեթներում։ Դա բացատրվում է հետևյալ հանգամանքով. Դիարբեքիրում զեամեթներ, ինչպես դա կտեսնենք իր տեղում, տրված են գերազանցապես քուրդ ավատատերերին՝ նկատի ունենալով նրանց ռազմական ուժը։ Ինչ վերաբերում է Զլդբրի էյալեթին, ապա պիտի ենթադրել, որ այդ զեամեթների մի մասը պետք է տրված լիներ նաև մուսուլմանություն ընդունած այն վրացի ավատատերերին, որոնք հավատարմորեն ծառայում էին սուլթանական կառավարությանը[74]։

«Խասս» հողերի մեջ, իրենց արտոնյալ վիճակով, ուրույն տեղ ունեին և, այսպես կոչված, «մուլք» հողերը, որոնք տարբերվում էին մասնավոր սեփականություն հանդիսացող «մուլքերից»։ «Մուլք» ավատները տրվում էին պետության նկատմամբ ցուցաբերված արտակարգ ծառայության դիմաց ու, հաճախ, աղբյուրներում հիշատակվում են որպես «գազի մուլք» ("gazi mülk"): Այդ հողերից ստացված եկամուտը ցմահ հատկացվում էր «մուլք» ավատի տիրոջը։ Վերջիններս, ի տարբերություն զեամեթի տեր ֆեոդալների, ունեին նաև վարչական իրավունք իրենց շրջանի բնակչության նկատմամբ ու պատասխանատու էին միայն կենտրոնական կառավարության առջև։

Ինչ վերաբերում է վեզիրներին հատկացված հողերին, ապա դրանք գտնվում էին բացառիկ արտոնյալ վիճակում։ Վեզիրներն ու բարձրաստիճան պետական պաշտոնյաները՝ կուսակալները (միրիմիրանները), իրենց տիրույթ-հողակտորից ստանում էին հսկայական եկամուտներ։ Ստորև բերում ենք հայկական նահանգների կուսակալների՝ խասսերից ստացած տարեկան եկամտի աղյուսակը, ըստ Այնի Ալիի և Կոչիբեյի տվյալների[75]։

Hammer, v. II, London, 1850, pp. 88—89. XVII դարի եվրոպացի հեղինակներից ոմանք իրենց աշխատություններում նույնպես բերում են տվյալներ հայկական նահանգներում զեամեթների ու թիմարների քանակի մասին, բայց, մեծավ մասամբ, այդ տվյալները խիստ կասկածելի են, ուստի խուսափեցինք անդրադառնալ դրանց։ Բերենք միայն մի օրինակ. XVII դարի կեսերին, էբասկի էլիասի տվյալներով, Էրզրումի վիլայեթում եղել է 122 զեամեթ և 1548 թիմար, Վանում՝ 185 զեամեթ և 826 թիմար, Տրապիզոնում՝ 56 զեամեթ և 398 թիմար (*Ebasci Elias*, Etat actuel de l'Empire ottoman, t. II, Paris, 1692, p. 20):

[74] Այդ մասին տե՛ս *Մ. Խ. Սվանիդզե*, О юрдлуках и оджаклыках как одной из форм землевладения, с. 7—8.

[75] *Ayni Ali*, Kavanini-al-i Osman ve hulase-i mezamin-i defter-i divan, Istanbul, 1280 (1863), s. 7—8; *Ա. Ս. Թվերիտինովա*, Второй трактат, с. 240—244.

Էյալեթներ	Ըստ Այնի Ալիի (1609)	Ըստ Կոչիբեյի (երկրորդ տրակտատ, 1640—1648 թթ.)
Էրզրում	1,214.000	1,200.000
Կարս	825.770	820.000
Վան	1,132.209	1,100.000
Սեբաստիա	.900.000	900.000
Դիարբեքիր	1.214.000	1,200.000
Զլդբր	925.000	926.000

Սեբաստիայի կուսակալների խասսերից ստացված եկամտի չափը ավելի շուտ սխալ է, քան չափազանցության արդյունք։

XVI—XVIII դարերում Օսմանյան կայսրության մեջ առկա հողատիրության երեք հիմնական ձևերն ունեին իրենց բազմաթիվ տարատեսակները, որոնք, վերջին հաշվով, դարձյալ մտնում էին պետական հողերի մեջ։ Դրանց մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդում XVII դարի պետական-հասարակական գործիչներ Ավնի Օմեր էֆենդին՝ սուլթան Մուրադ IV-ին հղած «Օսմանյան կայսերական դավթարի բովանդակությունը»[76] վերնագրով զեկուցագրում և սոֆիացի Ալի Զավուշը՝ «Օսմանյան կայսրության թիմարական կազմակերպության մասին» տրակտատում[77]։

Համաձայն արդի թուրք պատմաբան Աֆեթ Ինանի ուսումնասիրության, Էրզրումի վիլայեթի միայն խասս հողերից ֆեոդալների տարեկան եկամուտը կազմել է 4.246.056, Սեբաստիայի վիլայեթում՝ 2.659.420, Կարսի վիլայեթում՝ 2.210170, Զլդբրի վիլայեթում՝ 4.563.444, Վանի վիլայեթում՝ 4.754.975, Տրապիզոնի վիլայեթում՝ 1.075.158 ակչե (տե՛ս (*Afet Inan*, Aperçu général sur l'histoire économique de l'empire turc-ottoman, Ankara, 1943, pp. 268—283):

Մեր հաշվարկները հիմնված Քյաթիբ Չելեբու «Ջիհաննումայի» և Էվլիա Չելեբու «Սեյահեթնամե»-ի վրա, տվեցին հետևյալ արդյունքները. Էրզրումի վիլայեթում՝ 2.687.381, Վանի վիլայեթում՝ 3.525.390, Կարսի վիլայեթում՝ 802.530 ակչե (տե՛ս *Մ. Կ. Զուլալյան*, Армения в первой половине XVI века, с. 23—24):

[76] *Avni Omer Efendi*, Kanun-i Osmanî mefhum-i defter-i hakanî, "Belleten", 1951, c. XV.

[77] «Трактат Али Чауша из Софии о тимаристской организации в Османской империи» — «Аграрный строй Османской империи XV—XVI вв.». Документы и материалы. Составление, перевод и комментарии А. С. Тверитиновой, М., 1963.

Այս աղբյուրներում հիշատակված հողատիրության տարատեսակներից հայկական աղբյուրներում առավելապես հանդիպում ենք մալիքանե, արփալըկ, բաշմակլըկ, յուրթլուկ, օջակլըկ, հյուբյումեթ և այլ տերմիններ։

Մալիքանեն կայսրության մեջ մեծ տարածում ստացավ հատկապես 1695 թ. հունվարի 30-ի սուլթանական հրամանագրից հետո, երբ կապալառության (իլթիզամ) տրված ֆեոդալի տարեկան եկամուտը (մուկատա՛ան) վերածվեց ցմահ հատկացված եկամտի։ Սուլթանական հրամանագիրը հետամուտ էր ապահովել պետական գանձարանի հարկային շահերը, քանի որ մուկատա՛աների դեպքում հաճախակի փոփոխվող կապալառուները (մյուլթեզիմները) բացարձակապես կողոպտում էին գյուղացիությանը։ (Այդ մասին կխոսվի իր տեղում)։

Նշենք, որ մալիքանեյի մյուս ձևը սուլթանների կողմից հատուկ ծառայության համար բարձրաստիճան պաշտոնյաներին, սպաներին և այլ անձանց ժառանգական իրավունքով նվիրաբերված հողն էր։ Սուլթան Մուրադ IV-ին ուղղված վերոհիշյալ զեկուցագրում ասված է. «Նրանց (ֆեոդալների) ձեռքում նախկին սուլթաններից և աշխարհի ապավեն ներկա փադիշահից հրովարտակներ՝ «մյուլքնամե»-ներ կան։ Դրանք (նվիրաբերված հողերը) նման են ժառանգական սեփականության։ Ցանկության դեպքում դրանց տիրապետում են սեփականության իրավունքով և փոխանցում ժառանգաբար։ Ըստ ցանկության, դրանք կարող են վաճառվել, նվիրաբերվել որևէ մեկին կամ վակֆի վերածվել»[78]։

Արփալըկը (բառացի, գարու համար) պետության նկատմամբ ցուցաբերած ծառայության դիմաց զառամյալ պաշտոնյաներին նվիրված հողն էր[79]։ Ըստ Մ. դ'Օսոնի, արփալըկ էր կոչվում այն սանջակը, որը տրվում էր սուլթանական պալատի բարձրաստիճան ավատատերերին[80]։ Արփալըկ է նվիրվել նաև ավատատերերին որպես լրացուցիչ տիրույթ[81]։ Էվլիա Չելեբու վկայությամբ, արփալըկի իրավունքով առանձին ավատատերերի տրվել են մինչև իսկ ամբողջ քաղաքներ։ Այսպես, խոսելով Ամասիայի մասին, նա գրում է. «(Ամասիան) խոշոր և կարևոր քաղաք հանդիսանալով, մի քանի անգամ արփալըկի

[78] *Avni Omer Efendi*, Kanun-i Osmani..., s. 96.

[79] "Islâm ansiklopedisi", c. I, Istanbul, 1942, s. 592—594.

[80] *M. d'Ohsson*, v. IV, p. 613—614.

[81] Chéréf-nameh", t. II, Ière, p. 164.

կարգով երեք թուղավոր վեզիրների է շնորհված»[82]։ Նույնն է գրում ճանապարհորդը նաև Շապին-Կարահիսարի մասին. «(Շապին-Կարահիսարը) մի քանի անգամ արփալըկի կարգով երեք թուղավոր վեզիրների է շնորհված»[83]։ XVI դարի կեսերին Վանն ամբողջությամբ որպես արփալըկ շնորհվել է Ստամբուլի դավթարդար Չերքեզ Իսկենդեր փաշային[84]։

Բաշմակլըկը (բառացի՝ բաշմակի, կոշիկի համար), ինչպես և արփալըկը, խաս հողերի մի տարատեսակն է, որը տրվում էր պալատում բարձր դիրք ու կշիռ ունեցող կանանց։

Հայկական լեռնաշխարհի հարավային ու հարավ-արևմտյան հատվածներում, ուր հաստատված էին արդեն քուրդ բեկերը, ինչպես նաև Քրդիստանում, XVI—XVIII դարերում լայնորեն տարածված էին հողատիրության յուրթլուկ և օջակլըկ կոչված տեսակները[85]։ Հողատիրության այս ձևերը այստեղ տարածվեցին սուլթան Սելիմ I-ի (1512—1520) ժամանակվանից։ Յուրթլուկի ու օջակլըկի իրավունք ստացան այն քուրդ բեկերը, որոնք ընդունելով օսմանյան գերիշխանությունը՝ անցան վերջինիս ծառայությանը։ Ամենից առաջ, յուրթլուկներ և օջակլըկներ հիմնվեցին Դիարբեքիրի էյալեթում, մասնավորապես՝ Միհրանիում, Թերջիլում, Աթաքում, Պետրեկում, Ճապաղջրում, Ջերմուկում և այլն։ Այնուհետև յուրթլուկ ու օջակլըկներ հիմնվեցին նաև Վանի էյալեթում։

---

[82] اولیه‌چلبی محمد ظلل ابن درویش، اولیه چلبی سیاحتنامه‌سی، جلد ۲، استانبول ۱۳۱٤، ص ۱۸۳ (այսուհետև՝ Evliya Çelebi).

[83] Նույն տեղում, էջ 189։

[84] Նույն տեղում, հ. IV, էջ 176։ 1610 թ., երբ սուլթանական հրովարտակով Վանը տրվում է Էրզրումի փաշային որպես արփալըկ, ինչպես այդ մասին վկայում է Առ. Դավրիժեցին,— Վանի բնակչությունը դա համարում է իրենց քաղաքի համար նվաստացուցիչ. «Եւ ըստ հրամանաց թագաւորին,— գրում է Առ. Դավրիժեցին,— եկեալ Մահմատ փաշայն յԱրզրում վարէր զփաշայութիւնն։ Իսկ քաղաքն Վան և այլ շրջակայ դասաբէքն (գաւառ) ոչ հաճեցան յայս գործ, քանզի ծանր թո եցաւ նոցա թէ Վան քաղաք իւրովք բերդորէիւք այնքան նուաստացաւ՝ որ լեցի Արզրումայ արփալըղ, վասն որոյ և ո՛չ կամէին հնազանդել Մահմատ փաշային» (Առ. Դավրիժեցի, էջ 31)։ Դժվար չէ եզրակացնել, որ արփալըկը ավելի ցածր է դասվել, քան մի որևէ վեզիրի խաս տիրույթը։

[85] *I.-H. Usunçarşılı*, c. II, Ankara, 1949, s. 573. Օջակլըկը (թուրք.) համապատասխանում են հայերեն «հայրենիքին»։ Յուրթլուկը օջակլըկի հոմանիշ տերմինն է։ Շարաֆ խանը այս տեսակի հողատիրությունը համարում է ժառանգական սեփականություն և հաճախ օջակլըկի և յուրթլուկի փոխարեն օգտագործում է «թեմլիք» (*И. П. Петрушевский*, с. 228)։

Համաձայն թուրքական աղբյուրների, յուրթլուկն ու օջակլըկը մտնում էին պետական հողերի մեջ։ Յուրթլուկի ու օջակլըկի տեր քուրդ բեկերը պարտավոր էին պատերազմի դեպքում սուլթանական բանակին տրամադրել որոշակի քանակությամբ զորք։ Սովորաբար, այս տիրույթներում թույլատրվում էր հողը բաժանել նաև զեամեթի ու թիմարի իրավունքով։ Յուրթլուկ ու օջակլըկ տիրույթները ժառանգական էին, սակայն ամեն անգամ նոր տիրակալը պարտավոր էր այն հաստատել տալ կենտրոնական կառավարության կողմից՝ ստանալով հատուկ հրովարտակ (բերաթ)։ Յուրթլուկներում ու օջակլըկներում երկար շրջագայած է. Չելեբու հաղորդած նյութերից կարելի է հանգել հետևյալ եզրակացության. բուն Քրդիստանում, ինչպես և նրան սահմանակից Հարավային Հայաստանում, սուլթանական կառավարությունը, հակառակ իր կամքի, չի կարողացել հողերը բաժանել իր ավատատերերին որպես զեամեթներ ու թիմարներ։ է. Չելեբու վկայություններից երևում է, որ զեամեթներ ու թիմարներ այս շրջաններում անհամեմատ ավելի քիչ են եղել, քան Բարձր Հայքում կամ Արևմտյան Հայաստանի այլ շրջաններում։ Դա ցույց է տալիս թուրքական կառավարության զգույշ քաղաքականությունը, իսկ որոշ առումով նաև անզորությունը քուրդ բեկերի նկատմամբ։ է. Չելեբու տվյալներով ամբողջ Քրդիստանում ու Հարավային Հայաստանում (ներառյալ Բիթլիսի ու բացառյալ Վանի էյալեթները) կազմվել է մոտ 40 զեամեթ և ոչ ավելի, քան 450 թիմար։ Շատ շրջաններում թիմարներ ու զեամեթներ ամենևին չեն եղել։ Այսպես, խոսելով Սաղման բերդի մասին, է. Չելեբին գրում է. «Այս բերդը ևս Դիարբեքիրի էյալեթում, որպես յուրթլուկ և օջակլըկ, գտնվում է սանջակբեյի իշխանության տակ։ (Այստեղ) թիմարներ ու զեամեթներ չկան»[86]։ Մի այլ տեղ, խոսելով Բալուի մասին, գրում է. «Ներկայումս (Բալուն) Դիարբեքիրի էյալեթում մշտական հյուրյումեթ է։ (Կայսերական) հրամաններում սրանց էլ «Մեծաշուք վեհապետ» (عاليشان) տիտղոսն է տրվում։ Էյալեթից ստացված եկամուտները նրանց (այսինքն՝ հյուրյումեթի տեր ֆեոդալին՝ հաքիմին) հատկացված են որպես կայսերական խաս։ Այս իշխանության մեջ... թիմար, զեամեթ չկա»[87]։

Օսմանյան կայսրության մեջ յուրթլուկներ և օջակլըկներ կային ոչ միայն Արևմտյան Հայաստանում և Քրդիստանում, այլև Բալկաններում։ Հարավսլավացի թուրքագետ Ն. Ֆիլիպովիչը ուսումնասիրել է

[86] *Evliya Çelebi*, c. III, s. 222.

[87] Նույն տեղում, էջ 225։

հողատիրության այս ձևերը Բոսնիայում և Հերցոգովինիայում ու համեմատություն անցկացրել Քրդիստանի ու Հարավային Հայաստանի յուրթլուկների և օջակլըկների միջև։ գտել դրանց մեջ ընդհանուր ու տարբերիչ կողմեր։ Նա գրել է. «Անհրաժեշտ է ընդգծել այն տարբերությունը, որ կա XVII դարից գոյություն ունեցող Բոսնիայի օջակլըկ-թիմար հաստատության և Անատոլիայում օսմանյան նվաճումների շրջանից գոյություն ունեցող կալվածք-օջակլըկների միջև։ Այդ օջակլըկները հայտնի էին յուրթլուկ անունով։ Դրանք ցմահ տիրապետության իրավունքով հատկացվում էին այս շրջանների ավատատերերին հպատակության ու ռազմական ծառայության դիմաց։ Այդպիսիք էին քրդական էմիրների տիրույթները։ Նրանց ձեռքում կային բերաթներ։ Նրանցից (այսինքն՝ քուրդ բեկերից) որևէ մեկի մահանալու դեպքում կամ թե որոշակի պարտականությունները չկատարելիս իր աշիրեթի վրա ունեցած իշխանության հետ միաժամանակ, թիմարը հանձնվում էր նրա որդիներին կամ ազգականներին։ Այն ժամանակ, երբ Փոքր Ասիայում օջակլըկ-կալվածք և օջակլըկ-թիմարը կենտրոնական իշխանությանդեմ անհնազանդության դեպքում մնում էր ընտանիքի ձեռքում, Բոսնիայում այդ բանը թույլ չէր տրվում։ Անհավատարմության դեպքում, այստեղ օջակլըկ-թիմարը հետ էր վերցվում ընտանիքի ձեռքից»[88]։ Այս հանգամանքը Ն. Ֆիլիպովիչը բացատրում է հետևյալ ձևով. «Փոքր Ասիայում օջակլըկը իրենից ներկայացնում էր նահապետական կարգերի և թիմարիական սիստեմի միջև եղած փոխադարձ զիջումների արդյունք, մինչդեռ Բոսնիայում օջակլըկ-թիմարը ոչ այլ ինչ էր, քան թիմարային սիստեմը փրկելու կենտրոնական իշխանության փորձերը, որը հետամուտ էր ամրապնդել Օսմանյան կայսրության այս կարևոր մարզում իր ռազմական հզորությունը»[89]։

Ինչ վերաբերում է հյուրյումեթներին, ապա աղբյուրների ընձեռած վկայություններից կարելի է եզրակացնել, որ դրանք՝ Արևմտյան Հայաստանի քրդական ազդեցությունների ոլորտն ընկած շրջանում, համարվել են ինքնավարության աստիճանի արտոնյալ տիրույթներ։ Այդ է պատճառը, որ օսմանյան կենտրոնական իշխանությունը ձգտել է հնարավորության սահմաններում սահմանափակել հյուրյումեթի տեր՝ հաքիմի իշխանությունը։ է. Չելեբու աշխատությունը ուշադրությամբ կար-

[88] Այս մասին տե՛ս *М. Х. Свакидзе*, О юрдлуках и оджаклыках как одной из форм землевладения..., с. 7—8.

[89] Նույն տեղում։

դալիս չի կարելի չնկատել, որ նա զանազանում է երեք տեսակի հյուբյումեթ. ա) հյուբյումեթներ, որոնք պատկանում են քուրդ բեկերին հնագույն ժամանակաշրջաններից՝ որպես արտակարգ ու անձեռնմխելի հյուբյումեթներ»։ բ) Հյուբյումեթներ, որ պետության կողմից տրվում են հաքիմներին (իշխողներին) որպես ազատ մերիմիրանլըք. այս դեպքում հաքիմները պարտավոր են մշտապես վավերացնել իրենց իշխանությունը տվյալ հյուբյումեթում կառավարական հատուկ հրովարտակով։ Այդպիսի հյուբյումեթներ էին Ամիդի էյալեթի հինգ հյուբյումեթները՝ Ջիզիրեն, Էգիլը, Գենջը, Բալուն, Հեղուն. «Այս հինգ հյուբյումեթները,— գրում է Էվլիա Չելեբին,— (պետության կողմից) տրվում են նրանց իշխողներին, որպես ազատ միրիմիրանլըք»[90]։ գ) Հյուբյումեթներ, որոնք հաճախ գտնվում էին կառավարության կողմից նշանակված վիլայեթի բեկլերբեյիի կամ սանջակբեյի եթե ոչ անմիջական իշխանության, գոնե հսկողության տակ։ Այս հյուբյումեթները, է. Չելեբու բառերով ասած, «այլ էյալեթների նման զեամեթ ու թիմարներ ունեն» և «բեյն (այստեղ) նշանակվում ու հեռացվում է պետության կողմից»[91]։

Խասսերի, զեամեթների ու թիմարների տեր ֆեոդալներն իրենց հողերը բաժանում էին այն գյուղացիներին, որոնք հատուկ վճարով (թափուի իրավունքով) զբաղեցվում էին դավթարներում։ Դա ոչ այլ ինչ էր, քան գյուղացիությանը հողին ամրացնելու ձևերից մեկը։ Թափուի վճարումից հետո գյուղացիները հնարավորություն էին ստանում մշակելու իրենց հատկացված հողակտորները[92]։ Թափուն ֆեոդալի կողմից գանձվում էր ամեն անգամ, երբ հողակտորը մի հողատիրոջից անցնում էր մեկ ուրիշին։ Ըստ որում, նշանակություն չուներ այն հանգամանքը, թե փոխանցումը կատարվում էր վաճառքի, նվիրատվության թե ժառանգություն ստանալու միջոցով։ Բացառություն թույլատրվում էր միայն այն ժամանակ, երբ հողը փոխանցվում էր անմիջական ժառանգին՝ որդուն, որը տիրում էր հողին առանց թափու վճարելու։ Էրզրումի կանոնամեում ասված է, որ հայրական հողը որդու ժառանգական սեփականությունն է (մուլքը)[93]։

Թափուն ոչ միայն հողակտորին տիրանալու իրավունքի համար գանձվող տուրք էր, այլև մի պարտականություն, որի հիման վրա հողագործը որպես ռայաթ (գյուղացի) ամրացվում էր ֆեոդալին պատկանող այս կամ այն կալվածքին[94]։

Գյուղացու հողակտորի մշակման իրավունքը ժառանգվում էր հետևյալ եղանակներով՝ հորից որդուն հողը փոխանցվում էր առանց թափուի վճարման։ Եթե որդին չափահաս չէր, ապա հողակտորը ժամանակավորապես տրվում էր մեկ ուրիշի։ Եթե վախճանվածը մի քանի որդի ուներ, ապա հողը տրվում էր ամուրի (մյուշերեդ) որդուն, սակայն մյուս որդիներն էլ պարտավոր էին հողակտորը համատեղ մշակել և ֆեոդալին վճարել նախատեսված հարկերն ու տուրքերը։ Եթե մահացած գյուղացին միայն դուստր ուներ, ապա հազվադեպ էր հողակտորը փոխանցվում նրան, սովորաբար այն տրվում էր ուրիշի։ Եթե մահացած գյուղացին ժառանգ չուներ, ապա նրա հողակտորը, թափուի վճարումից հետո, կարող էր անցնել եղբորը, մորը կամ մերձավոր որևէ ազգականի։

Էրզրումի կանոնամեում նշված է, որ «եթե ռայաթը մահանա և անչափահաս որդի և չիֆթլիք (հողակտոր) թողնի... Մինչև չափահասդառնալը (չիֆթլիքը) որպես ավանդ, մեկ ուրիշի պետք է տալ, (որովհետև) հողը մշակելն ու ծառայություն մատուցելը փադիշահական օրենք է։ Երբ որբը մեծանա ու հողը մշակելու կարող դառնա և եթե հորից մնացած ու իբրև ավանդ տրված հողը (ետ) պահանջի, ապա (հողը) նրան պիտի վերադարձվի։ Սիփահին նրանից թափու չպիտի վերցնի»[95]։ Իսկ, այնուհետև, նահանգի հայ գյուղացիներին ակնարկելով՝ կանոնամեն պարտավորեցնում է. «Անհավատները պապերից փոխանցված հողերը նույնպես համագործակցության կարգով պիտի մշակեն, իսկ մինչև որբերը հողագործությամբ զբաղվելու կարող դառնան, հոր հողը ավանդ պիտի մնա։ Եղբոր հողը՝ եղբորը, իսկ պապի հողը թոռանն է փոխանցվում»[96]։

XVI—XVII դարերի թուրքական պաշտոնական վավերագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ֆեոդալները հաճախ խախտում էին վերոհիշյալ կարգը և հողը փոխանցում մի հողօգտագործողից մյուսին։ Պատրվակներ դրա համար միշտ կարելի էր գտնել, ասենք, մեղադրելով գյուղացուն հողն անմշակ թողնելու մեջ։ Էրզրումի կանոնամեի 19-րդ հոդվածում ասված է. «Մշակման համար պիտանի հողերը, եթե ռայաթը առանց արդարացի պատճառի երեք տարի շարու-

---

[90] *Evliya Çelebi*, c. IV, s. 27.

[91] Նույն տեղում, c. *III*, s. *223*։

[92] *J. Hammer*, Das osmanischen Reiches Staatsvesfassung uud Staatsverwaltnng, bd. II, Wien 1815, p. 376.

[93] *O. L. Barkan*, Kanunlar, s. 66.

[94] *J. Hammer*, Das Osmanischen Reiches Stnatsverfassung und Staatsverwaltung, bd. !, p. 337.

[95] «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 20։

[96] Նույն տեղում, էջ 21։

նակ անմշակ թողնի, թիմարին հասցված վնասը հատուցելու համար թույլատրվում է (հողը) նրանից վերցնել ու թափույով ուրիշին տալ։ Սակայն եթե (հողը) լեռնոտ ու բլրոտ վայրերում լինի կամ տեղում ջուր չլինի և (հողը) ամեն տարի մշակելու համար պիտանի չլինի ու անմշակ մնա, (այդ դեպքում) հողը ռայաթից վերցնելն ու ուրիշին տալը արգելվում է»[97]։

Չնայած այն հանգամանքին, որ հայ գյուղացիությունը Արևմտյան Հայաստանում մշակում էր ֆեոդալ նվաճողներին պատկանող կամ ժամանակավորապես վերջիններիս տնօրինության տակ գտնվող հողերը, այնուամենայնիվ, նա ընդգրկված էր գյուղական համայնքի մեջ, որն իրավազոր էր լուծելու հողօգտագործման հետ առնչվող որոշ հարցեր։

Ելնելով պետության շահերից, օսմանցի նվաճողները հաճախ ստիպված էին լինում հաշվի առնել նվաճված երկրի վաղուց ի վեր գոյություն ունեցող կարգերը, սովորույթները, տնտեսությունը վարելու եղանակը ու մինչև իսկ հարկային սիստեմը[98]։ Մասամբ այդ պատճառով գյուղական համայնքը հայկական շրջաններում պահպանում էր իր կենսունակությունը։

Հայկական գյուղական համայնքի հետ կապված հարցերը (գյուղական համայնքի կառավարումը, հողօգտագործման ձևերը, գյուղական համայնքի դասակարգային կազմը և այլն) քննարկված են Լ. Ս. Խաչիկյանի հոդվածում[99]։ Ճիշտ է, հոդվածում տեղ գտած նյութերը վերաբերում են XV դարին, սակայն հետագա երկու դարում էլ հայկական գյուղական համայնքը, ըստ երևույթին, էական փոփոխության չի ենթարկվել։ Ծանոթանալով խնդրո առարկա ժամանակաշրջանի հայերեն սկզբնաղբյուրների հաղորդած նյութերին, պիտի ենթադրել, որ գյուղական համայնքի կախվածությունը տեղական ֆեոդալներից այս շրջանում մեծապես աճել է։ Մյուս կողմից՝ վաշխառուական հարաբերությունների զարգացման հետևանքով հողը համայնքի ներսում սկսել էր կենտրոնանալ համայնքի հարուստ գյուղացիների կամ խոջա-առևտրա-

97 Նույն տեղում, էջ 23։

98 Պատահական չէ, որ XVI դարի կանոնագրքերում հաճախ կարելի է հանդիպել այսպիսի արտահայտությունների՝ «Ըստ հնուց ի վեր գոյություն ունեցող օրենքների», «ըստ տեղական սովորության» և այլն։ Մի կանոնագրքում նշված է, որ «ամենալավ հարկը, դա ժողովրդի հնուց ի վեր տալու սովորած հարկն է» ("En iyi vergi halkın ötedenberi vermeğe alışmış olduğu vergidir" — *O. L. Barkan*, Kanunlar, s. 220).

99 Տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, XIV—XV դդ. հայկական գյուղական համայնքի մասին, ՊԲՀ, 1958, № 1, էջ 110—134։

կանների ձեռքում, որոնք, ինչպես հաճախ հանդիպում ենք հայերեն ձեռագրերի հիշատակարաններում, «հոգու փրկության» համար իրենց կալվածքներից հողային նվիրատվություններ էին անում հայոց վանքերին[100]։

XVII—XVIII դարերի սահմանագիծը կայսրության մեջ բնութագրվում է ռազմաավատական համակարգի ճգնաժամի սրացումով և թիմարիստական հողատիրության աստիճանական վերացումով ու մասնավոր սեփականատիրական հողատիրության արմատավորումով։ Սակայն անցումը հին ռազմաավատական համակարգից դեպի նորը բնութանում էր շափազանց դանդաղ ու հակասություններով լի, որը ծնունդ էր տալիս ֆինանսների, պետական կառավարման մարմինների ոլորտներում ու բանակում նոր ճգնաժամային երևույթների։

Կառավարությունն ամեն կերպ ձգտում էր թույլ չտալ ռազմաավատական համակարգի հետագա քայքայումը։ Այդ նպատակով, 1701/1702 թթ. տեղի ունեցավ զեամեթների ու թիմարների տեր ավատատերերի բերաթների ստուգումը (յոկլամա), որը ցույց տվեց, թե հաճախակի են դարձել այն դեպքերը, երբ միևնույն հողային տիրույթին հավակնում են մի քանի ավատատերեր։ 1703 թ. սուլթանական ամենախստագույն հրամաններ էր ուղարկվում նահանգների ալայբեյներին[101], զգուշացնելով, որ երկրորդական պատճառների համար չզրկել զեամեթի ու թիմարի տեր ավատատերերին իրենց տիրույթներից ու դրանով իսկ շքայքայել ռազմաավատական համակարգը[102]։ Սակայն նման հրամանները ցանկալի արդյունք չէին տալիս։

100 XVI—XVII, ինչպես նաև նախորդ դարերի աղբյուրներում «գյուղական համայնք» տերմինի փոխարեն հանդիպում ենք «ժողովուրդ», «ժողովուրդ գեղիս» և կամ «ամենայն ժողովուրդ գեղիս զմեծ և զփոքր, զաղքատ և զհարուստ, զայր և զկին, զծեր և զտղա» արտահայտություններին։ Գյուղական համայնքի գլուխ կանգնած էր «ռաիսը» («ռեսը») կամ «ձեռնատորը»։ Հանդիպում ենք նաև «տանուտեր», «քեդխուդա», «իշխան» և այլ տերմինների։ Ռաիսը պատասխանատու էր տեղական ֆեոդալի առաջ՝ հարկերի հավաքումն ապահովելու, համայնքի ներսում ներքին կարգ ու կանոնի պահպանման և այլ հարցերում։ Ձեռագրերի հաղորդած տեղեկություններից երևում է, որ XVI—XVII դարերում բավականաչափ ուժեղացել էր դասակարգային շերտավորումը հայկական գյուղերում։ Հաճախ կարելի է հանդիպել այսպիսի արտահայտություն՝ «հարուստք և աղքատք»։ Համայնքի ներսում գյուղացիության զգալի մասը զուրկ էր հողից ու աշխատում էր կա՛մ նվաճող-ֆեոդալի, կա՛մ ռաիսի և կա՛մ վանքապատկան հողերում՝ ենթարկվելով դաժան շահագործման (տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, նշվ. հոդվածը)։

101 Սիփահիների (զեամեթների ու թիմարների տեր ավատատերերի) ջոկատի հրամանատարներին տրված անունն է։

102 Տե՛ս *I. H. Uzunçarşılı*, c. IV, s. 9.

Ռազմաավատական համակարգի գոյության հարատևմամբ շահագրգռված էին ոչ միայն սուլթանական կառավարությունը, այլև նահանգների բարձրաստիճան ավատատերերը և առևտրավաշխառուական դասի վերնախավը։ Նրանք կառչում էին հին համակարգին այն պատճառով, որ սուլթանը կամ նրա անունից գործող մեծ վեզիրը, իրենց հայեցողությամբ, ավատները կարող էին հատկացնել իրենց հարազատներին, սիրելիներին կամ թե նրանց, ովքեր կվճարեին մեծ գումար։ Ռազմաավատական հին համակարգը ամենաեռանդուն ձևով պաշտպանում էր մուսուլման հոգևորականության վերնախավը, որը XVIII դարի վերջին իր ձեռքում էր կենտրոնացրել մշակելի հողային տարածությունների ոչ թե 1/5-րդ մասը, ինչպես դա նախատեսված էր օրենքով, այլ 2/3-ը։

XVIII դարում, Օսմանյան կայսրության ռազմական և քաղաքական թուլացման պայմաններում, տիրապետող ավատական վերնախավի տարբեր խմբավորումների միջև գնալով ուժեղանում է եկամտի հիմնական աղբյուրի՝ ավատատիրական renտայի համար կատաղի մի պայքար։ Փաստորեն, այդ պայքարի հիմքում ընկած էր ավատատիրական հողատիրության երկու՝ ռազմաավատական ու մասնավոր-սեփականատիրական, ձևերի միջև ծագած սուր ընդհարումը, այլ կերպ ասած, ինչպես վկայում են թուրքական աղբյուրները, մրցակցությունը գնում էր «սրի մարդկանց» և «գրչի մարդկանց», ինչպես նաև ռազմաավատական ազնվականության ու բյուրոկրատական վերնախավի միջև։ Այս վերջին հանգամանքը, օսմանյան պետության քաղաքական թուլացման պայմաններում, ծնունդ էր տալիս անջատողական ձգտումների, միտումների։

Ռազմաավատական համակարգի քայքայման հետևանքով Օսմանյան կայսրության տնտեսական ոլորտում ծագած փոփոխությունները հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում առաջ բերեցին խոր փոփոխություններ։ Նախ և առաջ քայքայվեց, ապականվեց վարչական ապարատը։ Պետական պաշտոնյաների շրջանում, դեռևս XVII դարում նկատվող կաշառակերությունը, ամեն ինչ առուծախի առարկա դարձնելը, դավադրությունները, սպառնալիքները սովորական երևույթ էին դարձել։ Գլխավոր, վճռորոշ դեր էր կատարում դրամը։ Հարստությունն իր հետ բերում էր իշխանություն։ Դրամի միջոցով հնարավոր էր կառավարությունից կորզել նահանգի փաշայի կամ նահանգի վարչական կենտրոնի՝ վալիի, այանի պաշտոնը։ Կապալառուական համակարգը թույլ էր տալիս ոչ միայն հարկերի գանձման մենաշնորհը,

այլև կապալառու այանների և վալիների կողմից սեփական բանակի ստեղծումը։ Դառնալով կենտրոնախույս սատրապներ, նրանք, փաստորեն, չէին ենթարկվում պետությանը։

Զափազանց դժվար էր դարձել պետության համար փրկել ռազմաավատական համակարգը։ Ստեղծված իրավիճակում, պետությունը, ինչպես դա ցույց է տալիս 1715 թ. փետրվարի 20 (15 սաֆեր 1127) Էրզրումի նահանգում կատարված յոկլաման (ստուգումը), հարբունիս էր զավթում զեամեթների ու թիմարների տեր ավատատերերին հատկացված հողային տիրույթները։ Ստուգման փաստաթղթում հատուկ շեշտված է, որ նշված ցուցակում արձանագրված են Էրզրումի նահանգի սանջակների, կազաների և նահիեների այն թիմարները, որոնք լքված են[103]։

Ստուգման արդյունքների վերջնական տարբերակը կատարվել է 1715 թ. մայիսի 15-ին (15 ջեմազիուլէվվել 1127), որտեղ մասնավորապես ասված է. «Ստուգումը կատարվել է կայսերական հրամանով՝ նպատակ ունենալով գանձել Էրզրումի էյալեթի զաիմների և թիմարիստների (ստացած տարեկան եկամտի) բեդելը (փոխարժեքը) 1127 թվի համար»[104]։ «Այս ստուգման ժամանակ, որին ներկա էին հիշյալ էյալեթի սանջակների և կազաների ալայբեյերն ու չիրիբաշիները, հաստատվեց, որ 602 հոգի բացակայում են», մինչդեռ 1517 ավատներ «դատարկվել են ռայաթներից», այսինքն՝ անմարդաբնակ էին դարձել[105]։ Սուլթանական հրամանը կարգադրում էր այս 2119 թիմարները և զեամեթները «վերածել որոշակի մուկատա՝այի ու կցել այն սուլթանական խասսերին»[106]։ «Բացակա (ավատատեր) մարդկանց, ինչպես նաև անմարդաբնակ շրջանների ավատները հավուր պատշաճի հանվեցին դավթարխաներում պահված համապատասխան մայր ցուցակներից»[107],— գրված է վերոհիշյալ ստուգման փաստաթղթում։

Կ. Պոլսի անգլիական դեսպան Հ. Գրենվիլը, իր կառավարությանը հղած 1766 թ. հունիսի 12-ի թվակիր զեկուցագրում, անդրադառնալով բարձրաստիճան պետական պաշտոնյաների կողմից զեամեթների զավթման հարցին, գրում է, որ զեամեթների տեր ավատատերերի «իշխանությունն այնքան մեծ չէ, որպեսզի կարողանան դիմագրավել բար-

---

103 V. P. Mutafçieva, Str. Dimitrov, Sur l'état du système..., p. 34.

104 Նույն տեղում։

105 Նույն տեղում, էջ 36։

106 Նույն տեղում։

107 Նույն տեղում։

ձրրաստիճան պաշտոնյաների ոտնձգություններին։ Հենց կուսակալների ոտնձգություններն են պատճառը, որ վերջին ժամանակներս կրճատվեցին մեծ թվով զեամեթներ ու թիմարներ։ Նրանք (կուսակալները— Մ. Ղ.) էին, որ ամայի դարձրին ամբողջ գյուղեր և դրանով իսկ զինվորականության այս ճյուղին արժանացրին մյուս ճյուղերի դժբախտ ճակատագրին»[108]։

Օսմանյան ավատական դեկավար շրջանները ձգտում էին իրենց ֆինանսական կարիքներն ապահովել ի հաշիվ զեամեթների ու թիմարների տեր ավատատերերի ստացած եկամուտների՝ սաստկացնելով գյուղացիների շահագործումը, թույլ տալով ամեն մի չափն ու սահմանն անցնող կամայականություններ ու բռնություններ։ Իսկ այս հանգամանքը խախտում էր հիմքից զեամեթի ու թիմարի համակարգը և ամբողջ XVIII դարի ընթացքում կառավարության ձեռք առած բոլոր միջոցները, պարբերաբար հրապարակվող սուլթանական ֆերմանները անզոր էին կասեցնելու այդ համակարգի վերջնական կործանումը։

1777 թ. սեպտեմբերին սուլթան Աբդուլ Համիդ I-ը, 1768—1774 թ. ռուս-թուրքական պատերազմում կրած պարտության պատճառներից մեկը համարելով նահանգների աշխարհազորի երբեմնի համակարգի կազմալուծումը, հրատարակեց, այսպես կոչված, «Նիզամնամե (կանոնադրություն) զաիմների և թիմարիոտների մասին», ուր կայսրության բոլոր սանջակբեկերին հրամայում էր ավատներ չտալ այն մարդկանց, ովքեր չեն արժանացել այդ իրավունքին[109]։ Սակայն դա մնաց որպես մեռյալ թուղթ։ Ռազմաավատական համակարգը հոգեվարք էր ապրում։

Պատահական չպիտի համարել այն փաստը, որ XVIII դարի վերջին Ղ. Ինճիճյանը, նկարագրելով արևմտահայ գավառները, խիստ հազվադեպ էր հիշատակում զեամեթների ու թիմարների մասին[110]։ Եթե XVI—XVII դարերի թուրքական աղբյուրներում Էրզրումի նահանգում զեամեթների թիվը 132, իսկ թիմարներինը՝ 5159 է մատնանշված, ապա 1715 թ. տուգման ժամանակ թիմարների թիվը զգալիորեն կրճատվել էր[111]։

* * *

Մասնակիորեն նշվեց, որ XVI—XVII դարերում Արևմտյան Հայաստանի ու հատկապես նրա հարավային մասերի սոցիալ-տնտեսական

[108] *H. Grenville*, p. 86.
[109] "Tarih-i Çevdet", c. I, s. 184.
[110] Ղ. Ինճիճյան, էջ 81, 156։
[111] *V. P. Mutafçieva, Str. Dimitrov*, Sur l'état du système..., p. 34.

կյանքում խոշոր դեր էին կատարում քուրդ ֆեոդալները։ 1515—1516 թվականներին, Քրդիստանը Օսմանյան կայսրության կողմից նվաճվելուց հետո, քուրդ ֆեոդալների դրությունը Հայաստանի այս մասերում ամրապնդվեց։ Դիտակցելով քուրդ ֆեոդալների ռազմական ուժը, Օսմանյան կայսրությունը նրանց նկատմամբ վարում էր մեղմ ու սիրաշահող քաղաքականություն։ Նա օգտագործում էր քրդերի ռազմական ուժը օսմանյան բանակի մղած անվերջ պատերազմներում ոչ միայն Ասիայում, այլև Եվրոպայում[112]։ Միայն է, սակայն, ենթադրել, որ քուրդ ֆեոդալների ու օսմանյան պետության փոխհարաբերությունները մշտապես ներդաշնակ են եղել։ Աղբյուրների որոշակի վկայություններից երևում է, որ հաճախ օսմանյան պետությունը ձգտել է ոչնչացնել ինքնուրույնության ձգտող քուրդ ֆեոդալներին։ Այդ հողի վրա հաճախ տեղի են ունեցել արյունալի ընդհարումներ կառավարական զորքերի ու քուրդ ցեղապետների զինված ուժերի միջև։

Մինչև արաբական արշավանքները հայկական աղբյուրներում բացակայում են վկայություններ այն մասին, որ քրդական տարրեր լինեին բուն Հայկական լեռնաշխարհում։ Արաբական նվաճումներն իրենց հետ բերեցին նաև էթնիկական փոփոխություններ։ Մի շարք արաբական ցեղեր թափանցեցին Մեծ Հայքի խորքերը ու այնտեղ ստեղծեցին արաբական էմիրատներ։ Արաբների հետ միասին Հայկական լեռնաշխարհ ներթափանցեցին նաև սունի դավանանքին պատկանող քրդերը։ Երկրի հարավային մասերում հայ ավատատերերից ոմանք, ստեղծված նոր իրադրության պայմաններում, ստիպված եղան ընդունել տիրողների կրոնը՝ իսլամը, ու ձուլվել քուրդ-արաբական տարրերի հետ։

XI դարում սելջուկյան արշավանքները ավելի ևս ամրապնդեցին քրդական տարրերի վիճակը Հայկական տարածքի վրա։ Քրդական շատ իշխաններ (բեկեր) ծառայության մտան սելջուկ սուլթանների մոտ ու մասնակցեցին վերջիններիս ռազմական արշավանքներին, իսկ սելջուկ սուլթաններն էլ, իրենց հերթին, վարձատրեցին նրանց ընդարձակ հողային տիրույթներով՝ Հայաստանի ու Քրդիստանի տարբեր շրջաններից[113]։

Մոնղոլական արշավանքների ժամանակ քուրդ բեկերի զգալի մասը դարձյալ համագործակցում էր նվաճողների հետ, իսկ չհամագործակցողների նկատմամբ մոնղոլ իլխանների ձեռք առած ռազմական միջո-

[112] "Chérêf-nameh, t. I, lère p., p. 70.
[113] "Chérêf-nameh", t. II, lème p., p. 240—244.

ցառումները ապարդյուն անցան։ «Եթե որոշ սուլթաններ (նկատի ունի մոնղոլ իլխաններին— Մ. Ղ.),— գրում է Շարաֆ խանը,— փորձեցին իրենց ենթարկել Քրդիստանը ու այս ուղղությամբ մեծ ջանքեր գործ դրեցին, ապա գործը վերջացավ նրանց զզջմամբ»[114]։

Անգամ Թիմուրն ստիպված եղավ քուրդ բեկերին թողնել իրենց ժառանգական տիրույթներում։ Քուրդ բեկերը, Շարաֆ խանի վկայությամբ, գտնվում էին ինչպես Շահռուխի, այնպես և կարակոյունլու Թուրքմեն տիրակալների հովանավորության ներքո։ Միայն ակկոյունլուների տիրակալ Ուզուն Հասանը փորձեց ոչնչացնել այն քուրդ բեկերին, ովքեր ծառայություն էին մատուցել կարակոյունլու սուլթաններին[115]։ Այսպես վարվեց, օրինակ, Ուզուն Հասանը Բաղեշի քուրդ էմիրի հետ։ «Բաղեշի շրջանը,— գրում է Շարաֆ խանը,— քսանիններ տարի հպատակվեց ակկոյունլու տիրակալներին»[116]։ Այսուհանդերձ, Ուզուն Հասանը բարյացակամ էր վերաբերվում այն քուրդ բեկերին, ովքեր իրեն հավատարմորեն էին ծառայում։ Դրանցից էին Թերջիլի քուրդ բեկերը[117], Մահմուդի[118] և Դումբուլի[119] ցեղի էմիրները և այլն։

XVI—XVII դարերում քրդական ցեղերն Արևմտյան և Հարավային Հայաստանում ընդարձակ շրջաններ էին զբաղեցրել։ Համաձայն «Շարաֆ-նամեյի», Վանի էյալեթում հաստատված էին քրդական հետևյալ ցեղերը. 1) Նեմիրան ցեղը՝ Խիզանի էմիրի գերիշխանության տակ, 2) Մահմուդի ցեղը, որը հիմնականում բնակվում էր Խոշաբում (Վանի և Սալմաստի միջև), 3) Դումբուլի ցեղը՝ Թուրք-իրանական սահմանի՝ Սոկմանի շրջակայքում, 4) Փաղուլի ցեղը՝ Արճեշի և Արծկեի (Ադիլջևազ) սանջակներում։ «Շարաֆ-նամեյում» հիշատակվում են նաև Հաքարի, Բելիլան, Բիլբասի, Կավալիսի, Քիսանի կամ Կեսյանի, Շեկակի և այլ ցեղերի անուններ, որոնք հաստատվել էին Հարավային Հայաստանի տարբեր շրջաններում[120]։

Քրդական այս ցեղերը գտնվում էին հասարակական զարգացման ցածր մակարդակի վրա։ Տակավին պահպանվում էին ցեղային-նահապետական հարաբերությունները, որոնք բացասական դեր էին կատա-

114 Նույն տեղում։

115 Նույն տեղում, հ. I, մաս 1, էջ 34։

116 Նույն տեղում, էջ 116—117։

117 Նույն տեղում, էջ 118։

118 Նույն տեղում, հ. II, մաս 1, էջ 101։

119 Նույն տեղում, էջ 159, 169։

120 «Шараф-намэ», с. 78.

բում քուրդ ժողովրդի կյանքում։ Ցեղերի մեծ մասը շարունակում էին քոչվորական կամ կիսաքոչվորական կյանք վարել։ Քրդական այս ցեղերի միջև հաճախ տեղի էին ունենում արյունալի ընդհարումներ, որից տուժում էր նախ և առաջ հայ ժողովուրդը։ «Քրդական ցեղերը համերաշխ չեն ու չեն ենթարկվում մեկը մյուսին և նրանց մեջ միասնություն չկա»[121],— գրում է Շարաֆ խանը։

Քուրդ ֆեոդալներն իրենց ենթակա շրջաններում, որպես գերագույն կառավարիչներ, ներքին բոլոր հարցերը լուծում էին ինքնուրույնաբար։ Նրանք, գրում է Շարաֆ խանը,— «չնայած չէին հավակնում սուլթանական տիտղոսին, սակայն իրավունք ունեին իրենց անուններով (մզկիթներում) խութբե (աղոթք) կարդալ տալու ու սեփական դրամ հատելու»[122]։ Եթե հետևելու լինենք «Շարաֆ-նամեյին», ապա կնկատենք, որ այնտեղ շատ սովորական են քրդական ցեղապետների մասին հետևյալ արտահայտությունները. «դարձավ անկախ կառավարիչ», «միանձնյա իշխեց այս վիլայեթում», «միանգամայն անկախ իշխանություն էր վարում» կամ թե՝ «իշխանական գահը բարձրացավ նրա որդին» և այլն և այլն[123]։ XVI—XVII դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում, երբ խոսք է լինում այս կամ այն քուրդ ֆեոդալի մասին, ապա օգտագործվում են հետևյալ արտահայտությունները. «Եւ ի մերոյս պարոնութեան», «Եւ ի մերոյս ամիրայութեան», «Եւ ի մերոյս սուլթանութեան», «իշխանութեան», «տէրութեան» և այլն[124]։ Խոսելով Հարավային Հայաստանում և Քրդիստանում այս կամ այն քուրդ ֆեոդալին յուրքլուկի և օջակլըկի իրավունքով տրված տիրույթի մասին, Է. Չելեբին համարյա միշտ շեշտում է, որ «ներկայումս բեյի սեփականությունն է», և որ «Կ. Պոլսից ուղարկված փաղիշահական հրովարտակներում (բեյին) մեծաշուք վեհապետ տիտղոսն է տրվում... նրա հողերը խասս են (համարվում), բոլոր (տեսակի) եկամուտները նրան են պատկանում»[125]։

Հարավային Հայաստանում քուրդ իշխողների մեջ դիրքով և ազդեցությամբ աչքի էին ընկնում Բիթլիսի խաները՝ Ռուժակի կամ Ռուզակի ցեղից, «որոնց,— ինչպես գրում է Է. Չելեբին,— փաղիշահական հրա-

121 Նույն տեղում։

122 Նույն տեղում, էջ 85—86։

123 Նույն տեղում, էջ 155, 158, 175, 229, 237, 239 և այլն։

124 Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 278, 303, 327, 334 337 և այլն, ձեռ. № 6273, էջ 378, 383, 420, 483, 500, 522, 535 և այլն։

125 *Evliya Çelebi*, c. II, s. 267, 299.

մաններում «վեհաշուք խան» տիտղոսն էր տրվում»[126]։ Այստեղ իշխում էր Շարաֆյան հարստությունը ընդհուպ, ինչպես տեսանք, XVIII դարի կեսերը։ Խանության սահմանների մեջ մտնող տարածքից ստացված համարյա ամբողջ եկամուտը գնում էր խանի գանձարանը։ «Քաղաք (Բաղեշ) եկող ու գնացող քարավանների մաքսն ու տուրքը խանին է պատկանում,— գրում է Է. Չելեբին։ — Մշո դաշտի տուրքերը Երևանի նվաճող սուլթան Մուրադի կողմից ընդմիշտ խանին է շնորհված»[127]։ Է. Չելեբու հավաստիացումով, «Բիթլիս քաղաքից ջիզիեի (գլխահարկ) կեսը Վանի բանակին, կեսը (Բիթլիսի) Աբդուլ խանին է պատկանում»[128]։ Մի հանգամանք, որն ուրիշ շրջաններում թույլ չէր տրվում, և քրիստոնյա հպատակներից գանձված ջիզիեն բացառապես գնում էր պետական գանձարանը։ Շարաֆ խանը բաղմիցս ընդգծում է այդ հանգամանքը։ Այսպես, խոսելով Ջերմուկի գավառի քուրդ կառավարիչների մասին, նա գրում է, որ «...Ջերմուկը դարձավ (Իսֆենդիար բեկի) ժառանգական օջախը, սակայն այստեղի անհավատներից (հայերից— Մ. Ջ.) գանձված խարաջը (գլխահարկը) կաղմում է Դիարբեքիրի դիվանի եկամուտը ու մտնում է Ամիդի (պետական) գանձարանը»[129]։

Բիթլիսի խանն ամեն կերպ ձգտում էր պահել իր ինքնուրույնությունը և թույլ չտալ Վանի փաշային միջամտելու իր ներքին գործերին։ Իսկ երբ Վանի փաշան փորձում էր միջամտել, գործը հասնում էր անգամ զինված ընդհարման։ Այսպես, մի անգամ Բիթլիսի խանի զինված մարդիկ Էրզրումի վիլայեթում գտնվող Բինգյոլի յայլաղը բարձրացող քրդերից 70 հազար ոչխար են խլում։ Տուժածները դիմում են Վանի Մելեք փաշայի օգնությանը։ Երբ վերջինս գրավոր դիմում է խանին ու խնդրում ոչխարները վերադարձնել տերերին, Բիթլիսի խանը պատասխանում է. «Ես նրա էյալեթում չեմ, ինքնուրույն խան եմ, Մելեք փաշայից ոչ մի կախվածություն չունեմ»[130]։ Վանի փաշան, ձգտելով ապացուցել սուլթանական պետության գերագույն իշխանությունը կայսրության բոլոր մասերում ու խանի կախվածությունը պետությունից, ստիպված նրան գրում է երկրորդ զգուշացնող նամակը. «Ես Վանի էյալեթի տերն եմ, դու էլ իմ էյալեթի իշխանության ներքո գտնվող ազատ իշխող ես և օջակլըկի իրավունքով այս էյալեթի մշտական տերն ես...

126 Նույն տեղում, հ. IV, էջ 26—27։

127 Նույն տեղում, հ. II, էջ 207—209։

128 Նույն տեղում, հ. IV, էջ 26—27։

129 «Шараф-намэ», с. 247.

130 *Evliya Çelebi*, c. IV, s. 126.

Շնորհ արա ու Վանում իմ եղած ժամանակ ժողովրդի հետ լավ վերաբերվիր»[131]։ Ի վերջո, 1640 թ. գործը հասնում է զինված ընդհարման[132]։

Բիթլիսի Շարաֆյան հարստության խաները XVI դարի ընթացքում մի քանի անգամ ապստամբեցին կենտրոնական կառավարության դեմ՝ անցնելով Իրանի կողմը։ Շահ Թահմասպը 1532 թ. սեպտեմբերի 21-ին հատուկ հրովարտակով էմիր Շարաֆին ճանաչեց որպես «Քրդիստանի բոլոր էմիրների ավագը, տալով նրան էմիրների էմիր (էմիր-ուլ ումար) կոչումը և Բիթլիսի, Խլաթի, Մուշի, Խնուսի ու նրանց շրջակայքի կառավարումը»[133]։ Նույն ձևով էր ստիպված վարվել նաև XVI դարի 80-ական թվականներին սուլթան Մուրադ III-ը (1574—1595)՝ տալով վերոհիշյալ Շարաֆի թոռ՝ պատմագիր Շարաֆին, Բիթլիսի իշխանությունը։ Այս բոլորը թույլ են տալիս ասելու, որ փաստորեն քրդական որոշ իշխանություններ ձգտում էին դառնալ պետություն պետության մեջ։

Քուրդ ցեղապետները դաժանորեն շահագործում էին իրենց ենթակա աշխատավոր բնակչությանը, և, նախ և առաջ, հայ գյուղացիությանը։ Դա իր արտահայտությունն է գտել մինչև իսկ Բիթլիսի կանոնադրում, որտեղ ասված է, որ հարկերը գանձվել են «քրդերի սովորության համաձայն»։ Գյուղացիությունից գանձված ապօրինի հարկերի քանակը այնքան շատ էր, որ դրանց «բռնությունների շարան»[134] էին կոչում։

Հսկայական հարստություններ էին կուտակում քուրդ ցեղապետները։ Այս իմաստով հիշարժան են Է. Չելեբու գրքի այն էջերը, որոնք նվիրված են Բիթլիսի խանի պալատի և բաղնիքի նկարագրությանը։ Այնտեղ եղած շլացուցիչ շքեղությունը, ոսկյա իրերն ու Աբդուլ խանի այլ բազմաթիվ գանձերը ապշեցրել են թուրք ճանապարհորդին[135]։ Իսկ այդ բոլոր հարստությունների կուտակումը, կրկնում ենք, կատարվում էր հպատակների բացարձակ շահագործման ու կողոպուտի միջոցով։ Ահա թե ինչ է գրում այս նույն Աբդուլ խանի մասին Դավիթ Բաղիշեցին 1650-ական թվականներին. «Եւ այս ԽԳ (43) ամ է, որ ամիրայ է Բաղեշու քաղաքին, և զանբաւ չարիս, զոր սա անցուցանէ, ո՞կարէ ծրել ի

131 Նույն տեղում, էջ 128։

132 Նույն տեղում, էջ 124—128։

133 *Шараф-намэ»*, с. 26.

134 «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 86—87։

135 Աբդուլ խանի հարստությունների մասին, հիմնականում հենվելով Է. Չելեբու հաղորդած տվյալների վրա, հոդված է գրել Ա. Սակոյանը (տե՛ս A. Sakassian, Abdal Khan, seigneur kurde de Bitlis au XVIIème siècle et ses trésors, "Journal Asiatique", t. CCXIX, Paris, 1937, avril-juin, pp. 253—270):

քարտիսի՝ զհարկապահանջութիւն, զկեղեքել, զթալանել, զտուգանան, որ հասուցեալ է զմեզ ի յետին չքաւորութիւն»[136]։

Հարստության այսպիսի հսկայական կուտակումը հատուկ էր նաև այլ խաների։ Նրանք ևս իրենց տիրած կալվածքներից ստանում էին մեծ եկամուտներ և ունեին խոշոր ու մանր եղջերավոր անասունների ամբողջ հոտեր։ Է. Չելեբու վկայությամբ, միայն Զմշկածագի բեկը «...տարեկան 40 բեռ ակչեի եկամուտ ունի», որը հավասար է 4 միլիոն ակչեի[137]։ Իհարկե, ոչ բոլոր բեկերն էին տարեկան այդքան մեծ եկամուտ ստանում, սակայն, Է. Չելեբու վկայության համաձայն, 130.000 ակչեից պակաս տարեկան եկամուտ ունեցող բեկ չի եղել։

Դեռևս XVI դարի վերջին Ջեզիրեի քուրդ ցեղապետը 12.000 ոչխար, 10.000 հավ ուներ[138]։ Երբ նա մահացավ, նրա գանձարանում հայտնաբերվեց ավելի քան 200.000 ոսկե դրամ, թանկարժեք բրդյա բազմաթիվ գործվածքներ և այլն։ Բալուի քուրդ բեկն ուներ ավելի քան 10.000 ոչխար և անհաշիվ այլ հարստություններ[139]։ Նկատի ունենալով նման հարստությունների կուտակումը քուրդ բեկերի ձեռքում, կառավարությունը, Շարաֆ խանի տվյալներով, ձգտում էր եկամտաբեր շրջանները վերցնել իր անմիջական հսկողության տակ։ XVI դարի վերջին Ջեզիրեի ցեղապետ Միր Ազիզին, Շարաֆ խանի բառերով ասած, «սուլթանական կառավարության կողմից» նվիրաբերվեց Ջեզիրեն այն պայմանով, որ երեսուն անհավատներով (իմա՝ հայերով) բնակեցված գյուղերը դառնան սրբազնագույն պետական տիրություններ, և նա (էմիրը) պետական գանձարանը մուծի հիշյալ գյուղերից տարեկան 60.000 ոսկեդրամ»[140]։ Միր Ազիզի ենթարկվելը Օսմանյան կայսրությանը ընդհանուր դժգոհություն է առաջացնում քուրդ երևելիների մոտ, և նրան հիջրեյի 990 թ. (1590—91) սպանում են[141]։

XVIII դարում քրդական ցեղերի քաղաքական վիճակն Արևմտյան Հայաստանում, բարենպաստ հանգամանքների բերումով, ավելի ևս ամրապնդվեց։ Ղ. Ինճիճյանի հաղորդած ստույգ տեղեկություններից երևում է, որ քրդական ցեղերը այս դարում տարածված էին Պատմա-

136 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 361. հմմտ. Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 39։

137 Evliya Çelebi, e. III, s. 225, 226.

138 «Шараф-намэ», с. 242.

139 "Chéréf-nameh", t. II, Ième p., p. 28.

140 Նույն տեղում, էջ 196։

141 Նույն տեղում, էջ 197։

կան Հայաստանի համարյա բոլոր նահանգներում ու գավառներում։ «Քրդստան և կամ Քիւրդաստան, պարտ է իմանալ զմեծ մասն Մեծին Հայոց»[142],— գրում է մեր հեղինակը։ Քրդերի զգալի մասը, ինչպես նշվեց, վաչկատուն ցեղեր էին, սակայն կային նաև նստակյաց երկրագործներ։ «Առհասարակ յերկուս բաժանի աղգ քրդաց,— գրում է Ղ. Ինճիճյանը,— ի զիւղաբնակ և ի վրանաբնակ։ Գիւղաբնակք են որք ունին զհաստատ բնակութիւն ի գիւղօրէս և ի քաղաքս։ Իսկ վրանաբնակք են որք չունին զհաստատ բնակութիւն այլ աստ և անդ չու առնեն, յայն սակս ի լեզու քրդաց կոչին Ուլուս, որ նշանակէ Չու առնօղ, և ի տաճկաց Կէօշէր կամ Կէօշերէվլի որ զնոյն նշանակէ»[143]։

Նստակյաց քրդերը սովորաբար անվանվում են իրենց նահանգների անուններով՝ խնուսցի, մանազկերտցի, մշեցի, սասունցի, բաղիշեցի և այլն։ Բայազետի քրդերը XVIII դարում մեծավ մասամբ անվանվել են սելիվանցիք, իսկ Բաղեշի ու նրա շրջակայքի քրդերը հիմնականում, ինչպես դա նախորդ դարերում էր, ռուզակի կամ ռոժակի ցեղից էին (Ղ. Ինճիճյանի մոտ Ռոշկացիք ձևով է ներկայացված[144])։ Ինչ վերաբերում է վրանաբնակ ցեղերին, ապա նրանք «...կոչին սովորաբար ոչ յանուն տեղեաց, այլ յանուն ցեղից, որք են բազմութեամբք, զօր օրինակ՝ Բանենարցի, Սիենանցի, Բաարքցի, Շարխիանցի, Սիբկցի, Հասնանցի, Բարազկցի, Մրմանցի, Օմբրկցի, Շեխբելրնցի, որք ի գարնան սփռին ի լերինս Մշոյ՝ և այլոց գաւառաց Մեծին Հայոց։ Ռիշվանցիք կամ Բիշվանք ի Փոքր Հայս, որք բաժանեալ են 12 տոհմ»[145]։ Վրանաբնակ քրդերը ապրում են խմբերով, այսպես կոչված օբաներով, իսկ «իւրաքանչիւր օպա կացուցանեն իբրև մի մի գիւղ, որք ոչ երբէք խառն ի միասին բնակին, ունին մի մի պէյ, իբրև դատաւոր, յորոց վրայ գոն և այլ պէյք գլխաւորք և ի վրայ ամենեցուն տիրէ պէյ ոմն գլխաւոր քան զամէնեսին իբրև ցեղապետ»[146]։

Քրդական ցեղերի միջև գոյություն ունի անվերջ թշնամություն և պայքար։ «Եւ զի բազումք ի ցեղից անհաշտ թշնամիք են միմեանց, ստէպ ստէպ պատերազմ տուեալ ընդ միմեանս, ...և զմեռանելն ի մարտի համարին փառք և պարծանք իւրեանց»[147]։

142 Ղ. Ինճիճյան, էջ 51։

143 Նույն տեղում, էջ 52։

144 Նույն տեղում։

145 Նույն տեղում։

146 Նույն տեղում, էջ 54։

147 Նույն տեղում, էջ 55։

Իրենց ինքնուրույն գոյությունը պահպանելու համար վաչկատուն այս ցեղերը դիմում էին միակ հուսալի հենարանի՝ զենքի. «Եւ այսպէս այս ազգ թափառական և անգլուխ, առանց թագաւորի, և միշտ յաշխարհն օտարաց բնակող ի վաղուց ժամանակաց անտի, անխառն և անվտանգ պահէ զինքն միշտ յամենայնէ՝ իւրով կորովութեամբ և իւրով զինուք»[148]։

Երբ թերթում ենք Անանուն Վանեցու տարեգրության և XVIII դարի հայկական այլ աղբյուրների էջերը, ապա տեսնում ենք, որ համարյա յուրաքանչյուր տարի Վանի փաշաները անընդհատ պատերազմական գործողությունների մեջ են գտնվել նահանգի մեջ մտնող Բաղեշի, Խոշապի, Խնուսի, Մանազկերտի և այլ վայրերի քուրդ բեկերի ապստամբ զորքերի հետ։ Այս առումով, ավելի ծանր վիճակում են գտնվել Դիարբեքիրի, Ամիդի թուրք փաշաները, որոնք հաճախ սպանվել են քուրդ ապստամբների դեմ մղված պատերազմներում։ Այդ ընդհարումներից, բնականաբար, շարաշար տուժում էր հայ ժողովուրդը։ Իսկ այն վայրերում, ուր կատարյալ տիրություն էին անում քուրդ բեկերը, օրինակ, իրենց ժառանգական հյուքյումեթներում, և ուր համեմատական խաղաղություն էր տիրում, հայ գյուղացիությունը իրեն քիչ թե շատ անվտանգ է զգացել։ Այդ մասին է խոսում Ղ. Ինճիճյանի հետևյալ վկայությունը։ Խոսելով Դիարբեքիրի նահանգի Հզու հյուքյումեթի մասին, նա գրում է. «Գոլով հիւքիւմէթ, իշխանութիւն գաւառիս է ի ձեռս պէյին որ է ինքնագլուխ, և ոչ է ընդ իշխանութեամբ փաշային Տիարպէքիրոյ, և գրեթէ միշտ է պատերազմ ի մէջ փաշային և բնակչաց սորա, ունի ընդ իւրև բազմութիւն գիւղօրէից, որոց բնակիչք ընդ կիսոյն քուրդք, և ընդ կիսոյն հայք որք ոչ որոշին ի տաճկաց. զի գլխաւոր հայոց է սպիտակ որպէս և տաճկացն. հայք ոչ տան անդ հարկս, որպէս և յայլ կողմանս ինչ Քրդիստանու, համարձակ կատարեն զպաշտոն քրիստոնեութեան»[149]։

Որ XVIII դարում քրդական ցեղերը սկսել էին տարածվել նաև Բարձր Հայքում և Արևմտյան Հայաստանի հյուսիսային վայրերում, երևում է դարձյալ Ղ. Ինճիճյանի վկայություններից։ Խոսելով Էրզրումի նահանգի մասին, նա գրում է. «Բնակիչք նահանգին Էրզիրումայ՝ են օսմանեանք, հայք և բազումք քան զամենեսին քուրդք։ Դան այլուստ և այլ պէսպէս ցեղք վրանաբնակ քրդաց, որք յամարայնի

148 Նույն տեղում, էջ 56։
149 Նույն տեղում, էջ 232։

ափին ի լերինս նահանգին, մանաւանդ ի մեծ գոտիս Պինկէօլայ՝ յարօտաբեր վայրս»[150]։ Նախկին Դարանաղյաց գավառում «են երեւելի գիւղօրէք ի Դերջան, յորս նստին քուրդ պէկք»[151]։ Կամախում՝ «իշխանութիւն գաւառին սեփհական և անուանի ցեղին կոչեցեալ Սաղրը օղլու. յորմէ յորդւոց յորդի լինին պէյ Կամախայ», ուր «360 գիւղօրէք են ընդ իշխանութեամբ պէյին»[152]։ Կեղիում կամ Քղիում՝ «իշխան սորա է քուրդ պէյ, որ ընդ ժամանակս ինչ էր ընդ իշխանութեամբ փաշային Տիարպէքիրոյ, այլ բազում ժամանակք են յորմէ հետէ էանց ընդ իշխանութեամբ փաշային Էրզիրումայ»[153]։ Վերին Կեղիում ու նրա գյուղերում՝ «...Բազմութիւնք ապստամբ քրդաց»[154]։ Ստորին Կեղիում ու նրա մերձակայքում «...բնակին բազմութիւն ապստամբ քրդաց։ Յառաջագոյն միայն կողմն որ հայի ի մելիքան գիւղաքաղաք, էր ընդ իշխանութեամբ Էրզիրումայ փաշային. իսկ կողմն որ հայի ի Կեղի գիւղաքաղաք, էր ընդ իշխանութեամբ փաշային Տիարպէքիրոյ. սակայն այժմ երկոքին կողմանք ևս են փաշային Էրզիրումայ. այլ լեառն գիւղօրէք ինչ որպէս ասացաք թողեալ կան յիշխանութեան քրդաց»[155]։ Էրզրումի նահանգի Տուժիկ գավառում՝ «Բնակիչք նորա քուրդք, որոց ցեղ կոչի Շեխհասանցիք, բայց են ապստամբք ի փաշայէն Էրզիրումայ՝ աւազակութեամբ պարապեալ, որք ստէպ ստէպ կողոպտեն զկարաւանս, ընդ որս զօրու ծանու բազում անգամ պատերազմեալ այլևայլ փաշայք, ոչինչ իւիք կարացին յաղթել կամ նուաճել. զի տեղի նոցա անառիկ և անմատչելի գոլով ամրանան ի ներքս. և փոքր գնդաւ ընդդէմ կան բազմութեան զօրաց»[156]։ Ջուլամերկում՝ «իշխանութիւն գաւառիս է ի ձեռս տոհմին քրդաց որք կոչին Հաքեարի»[157]։ Իսկ եթե այդ նույն Ջուլամերկում կար նաև «...միշտ ոմն ի հայոց մելիք», ապա նա «...գլխաւոր հրամանատար եղեալ հրամանաւ Ճուլամերկի պէյին, զամենայն իշխանութիւն ի գործ ածէ, բաց ի յարեանհեղութենէ»[158]։

150 Նույն տեղում, էջ 64։
151 Նույն տեղում, էջ 97։
152 Նույն տեղում, էջ 101—102։
153 Նույն տեղում, էջ 106։
154 Նույն տեղում, էջ 107։
155 Նույն տեղում, էջ 109։
156 Նույն տեղում, էջ 111։
157 Նույն տեղում, էջ 158։
158 Նույն տեղում, էջ 161։

* * *

Հայ ավատական դասի քայքայման պայմաններում, XVI—XVIII դարերում, հայ հասարակության մեջ գերիշխող դիրք գրավեց հոգևորականությունը։ Այդ նա էր, որ հավակնում էր հանդես գալ ազգային հավաքականության անունից ու ղեկավարել ազատագրական շարժումները՝ ուղղված օտար տիրապետողների դեմ։ Նա դեռևս տնտեսապես հզոր էր, նրա տրամադրության տակ կային խոշոր վանքապատկան տիրույթներ, որոնք գնալով ընդարձակվում էին գլխավորապես հայ մեծատունների՝ «հոգու փրկության» համար արած նվիրատվություններով, այսպես կոչված «ոխվ»-երով[159]։ Այդ մասին XVI—XVIII դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանները հաղորդում են ընդարձակ տվյալներ։ Նվիրաբերվում էին ոչ միայն հողակտորներ (արտեր), այլև ջրաղացներ, խանութներ, տներ, այգիներ, բանջարանոցներ, եկեղեցական սպասքներ և այլն[160]։ Բերենք մի քանի օրինակներ. 1546 թ. խոջա Էդգարն «զԱնկեղենց կես ջաղցին» գնեց և «ոխվ (յիշատակ) արար Վարագայ սուրբ նշանիս»[161]։ 1581 թ. տանուտեր պարոն Ղամբարն «...չարէք մի և խոջենց ջաղացին էառ և ետուր ի դուռն սուրբ Կարապետին»[162]։ 1584 թ. «Ցամի ՌԼԳ (1584 թ.),—կարդում ենք մի հիշատակարանում,— ես Դօվլաթ բէկ, թոռն Մալիութին, գնեցի հալալ արդևանց իմոց ոսկով հող, տուի ի դուռն սուրբ Կարապետին (Յոհաննու վանից Կարպոյ) յիշատակին»[163]։ Ե. Լալայանի հավաքած Վասպուրականի հայերեն ձեռագրերի ցուցակի մի ընդարձակ հիշատակարանում խոսվում է ս. Կիրակոս վանքին մեծատունների կատարած նվիրատվությունների մասին։ Այսպես՝ «Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զխալաթ, որ զկապան արտ գնեց, ոխվ արար ի դուռն սուրբ Կիրակոսին, ...զՎարդիկ ...որ զպաղեխն ոխվ արարին և դուռն սուրբ Կիրակոսին։ ...Յիշեցէք ի Քրիստոս զՄրզբրունց Վարդիկն, որ ետուր զնէս արտին սուրբ Կիրակոսի

159 Պետք է լինի վակֆ, արաբերեն وقف բառից, որը նշանակում է «կանգ առ»։ Այդպես էին կոչվում եկեղեցական ու մզկիթապատկան հողերը և այլ ստացվածքներ, որոնք ենթակա չէին օտարման և մնում էին որպես եկեղեցու կամ մզկիթի հավիտյան սեփականությունը ու օգտվում էին հարկային արտոնություններից։

160 Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 390, 459, 481—482, «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի» էջ 636, 668, 740—744, 773—774, 780, ձեռագիր № 4969, էջ 360ա, № 5759, էջ 141բ—142ա։

161 Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 432։

162 Նույն տեղում, էջ 509։

163 Նույն տեղում։

վանից զբ. պախեղն, ...Դարձեալ յիշեցէք ...Ստեփանոսին, որ ետուր զայն պախեղերք, որ զՂազարիմինէ գնեց՝ ձեռամբն Զենդեն աղին և ոխվ արար ի վերայ սուրբ Կիրակոսին» և այլն[164]։ 1614 թ. մի ճառընտիրում կարդում ենք հետևյալ ուշագրավ հիշատակարանը. «Ի ժամանակս յետինն վասն ծովացեալ մեղաց բարձեալ էր սէր և խաղաղութիւն յամենայն երկրէ և տիրեալ բռնութիւն և հարկապահանջութիւն. և ոչ ուստէք գտանի ողորմութիւն, բայց ի տեղիս տեղիս շարժեն ի սէրն Քրիստոսի, ոմն պատարագ և ընծայ նուիրելով, ոմն կնճակ հաստատ պահելով, ոմն յիշատակ դնելով յամենայնէ, եթէ խաչ է կամ Աւետարան, և թէ ինչ այլ արդիւնք, և ոմն ոխվ առնելով, եթէ ագարակ և կամ ջրաղաց և այլ ոք գութան որպէս որ այս բարի և հաւատարիմ քրիստոնեան Աւետիսն որ է ի գեղջին Մուշեղշենայ, շարժեցաւ ի սէրն սբ. Առաքելոցն և ետ զջրաղացն, զի յիշատակ բարի մնասցէ իւրն և ամենայն նախնեացն ի թուականութեան հայոց ՌԿԳ (1614 թ.)»[165]։ Սրանով բավարարվենք, քանզի նման վկայություններ շատ կարելի է բերել։

Համաձայն Համ. Ոսկյանի ուսումնասիրության, միայն Վասպուրական-Վանում կար 64 վանք, իսկ Տարոն-Տուրուբերանում (Բաղեշի շրջանում)՝ 48[166]։

Վանքերի գլուխ հաճախ կանգնած էին լինում հոգևոր սքեմ հագած նախկին ավատատեր-իշխաններ։ Վանքապատկան կալվածքները, չնայած նույնպես ենթարկվում էին չարաշահումների ու կամայականությունների, ինչպես առանձին պետական պաշտոնյաների, այնպես էլ տեղական ֆեոդալների կողմից, սակայն ունեին որոշ հարկային արտոնություններ։ Միայն էր, սակայն, հոգևորականությանը ներկայացնել որպես ապահարկ դաս։ Այդ մասին որոշակիորեն ասված է կանոնադրություններում։ Այսպես, Էրզրումի կանոնադրության 38-րդ հոդվածում կարդում

164 «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», էջ 623—630։

165 «Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին մխիթարեանց ի Վիեննա», Վիեննա, 1895, № 228, էջ 476։ Անհրաժեշտ է նշել, որ ոչ միայն վանքապատկան հողերն էին ընդարձակվում XVI—XVII դարերում ի հաշիվ նվիրատվությունների։ Նույն ձևով ու նույն միջոցներով թուրք ավատատերերը նվիրաբերելով իրենց տրամադրության տակ եղած պետական հողերը մզկիթներին որպես վակֆ, ազատում էին ձերբազատվել պետության հսկողությունից։ Եթե այդ իրավունքը XVI դարում ամենից առաջ ձեռք բերեցին «գազի-մյուլքի» տեր ավատատերերը, ապա XVII դարում այդ իրավունքը տարածվեց նաև զեամեթների ու թիմարների վրա։ Այս միջոցով թուրք ավատատերերը ժառանգաբար արդեն տիրանում էին կալվածքի եկամտին (տե՛ս В. Д. Смирнов, Кучибей Гемюрджинский, с. 158—159)։

166 Հ. Ոսկյան, Վասպուրականի—Վանի վանքերը, Վիեննա, 1940։

ենք. «Այս լիվայում որոշ հոգևորականներ, որոնք հայտնի են սևագրլուխներ (karabaşlar) անունով, իրենց իրավասության տակ վանքեր ունեն, այդ վանքերի համար նրանց վրա առաջնորդական հարկ (marhasiye akçesi) անվան տակ որոշ քանակությամբ ակչե է արձանագրված։ (Հարկերը) դավթարի համաձայն վճարելուց հետո, նրանք իսպենջ չեն տալիս։ Իրենց սխալ ծիսակատարության համաձայն նրանք գոյություն ունեցող ամուսնության հարկերը և բեյթուլմալները (beytülmal) պիտի տնօրինեն եղած նվիրական որոշումների համաձայն և ըստ իրենց հայեցողության, ոչ ոք արգելք չպիտի լինի... Հիշյալ վանքերը ցանած ու հնձած արտերի համար բահրա պիտի տան։ Այս վանքերի ջրաղացներից, այգիներից, պարտեզներից և արտերից նոր դավթարում արձանագրվածից ավելի ոչինչ չպիտի վերցնել»[167]։ Վերը մատնանշված առաջնորդական հարկը (մարհասիյե), որը տարեկան միանվագ գումար էր, վանքի փոխարեն, ինչպես դա երևում է Կամախի կանոնադրության 4-րդ հոդվածից, գանձել են հայ բնակչությունից՝ տարեկան տասից տասնհինգ ակչեի չափով[168]։

Խոսելով Մշո ս. Կարապետ վանքի մասին, Էվլիա Չելեբին վկայում է, որ վանքի «...կարվածքները շատ մեծ են» (اوقافی عظیمدر) և որ վանականները փաշային «հինգ բիսե դրամ և անսահման քանակությամբ նվերներ են տալիս» ու «յուրաքանչյուր տարի վանք այցելող մարդկանցից շատ մեծ քանակությամբ հարստություն հավաքում»[169]։ Այս վկայությունից երևում է, որ վանքը ստիպված է եղել իր ստացած եկամտի մի զգալի մասը նվերների ձևով տալ թուրք փաշային, մի փաստ, որն ավելորդ անգամ խոսում է վանքերի հարկային առանձնաշնորհում ունենալու դեմ։ Հետաքրքիր են նաև Աղթամարի վանքի մասին է. Չելեբու հաղորդած տեղեկությունները։ «Վանքը շատ ծառաներ (զուլամներ) ունի — ասում է նա,— որոնք այցելուներին շատ մեծ հարգանք ու հյուրասիրություն են ցույց տալիս»։ «Նրանց բարիքները,— շարունակում է նա,— այնքան շատ են, որ (այնտեղ կարելի է) գտնել մինչև իսկ թռչունի կաթ ու հեռավոր երկրների բույսեր»[170]։

Վանքերի հարստացումը վայրիվերո այդ ժամանակներում հայ հոգևորականության բարձր խավի ներկայացուցիչների մոտ առաջ էր

167 «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 27։

168 Նույն տեղում, էջ 44։

169 Evliya Çelebi, c. III, s. 229.

170 Նույն տեղում, էջ 192։

բերել բարքերի անկում։ Սրվել էին հարաբերությունները Էջմիածնի Մայր Աթոռի, Աղթամարի կաթողիկոսության և Կ. Պոլսի պատրիարքության միջև։ Վերջիններները խլել էին Արևմտյան Հայաստանի՝ Էջմիածնի համազգային կաթողիկոսության ենթակա վիճակները։

Արևմտահայ հոգևորականության մեջ իր գերիշխող դիրքով առանձնանում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը։ Թե ինչ իրավունքներից ու արտոնություններից էին օգտվում Կ. Պոլսի հայ պատրիարքները, կարելի է ամբողջական դաղափար կազմել 1764 թ. հունիսի 3-ի (1177 թ. զիլհիջջե ամսի 3-ի) այն սուլթանական բերաթով, որը Պասմաճյան Գրիգոր պատրիարքին տվել է սուլթան Մուստաֆա III-ը[171]։ Պատրիարքների լայն իրավունքների մասին է վկայում նաև Աբդուլ Համիդ I-ի՝ Զաքարիա պատրիարքին տված ֆերմանը։ Բերենք հիշյալ ֆերմանից որոշ տվյալներ։ Նախ՝ պատրիարքարանի աթոռի վրա նստելու համար Զաքարիա պատրիարքը արքունի գանձարանին միանվագ վճարել է 100.000 ղուրուշ[172]։ Այդ գումարի գանձման մասին ակնարկելուց հետո, սուլթանական ֆերմանն արձանագրում է «...զայս բարձրագործ պերաթս իմ տուի և հրամայեցի, որ ի վերոգրեալ Զաքարիայ անուն վարդապետն՝ (որոյ լրասցի զվէրջն բարեաւ) երթայ ի վերոգրեալ Կոստանդնուպօլսոյ, և ցրուեալ Ուրումելու և Անատօլու և Թապի (հպատակ) եղեալ տեղորայքն բնակեալ յառաջնորդաց և քահանայից. և այլ հայոց ժողովրդոց վերայ հնուց եղեալ կանոն՝ և զօրինաց իւրեանց վերայ Պատրիարք լիցի»[173]։ Եվ թող այսուհետև «հայոց ժողովրդաց մնծք և փոքունք» ենթարկվեն Զաքարիա պատրիարքին և «յուղիղ խօսակցութենէն նորա աւելի բան չանեն. և ի Պատրիարգութեանն նորա թապի եղեալ տեղօրէից հանելոյ և նստուցանելոյ արժանի եղեալ առաջնորդք և սևագլուխք և քահանայքն ի վերոգրեալ Պատրիարգն ի վերայ զօրինաց իւրեանց հանելոյ և նստուցանելոյ՝ որ լինի՝ յայլմէ մարդ միջամուխ չի լինին, և չի խառնուին և Պատրիարգին մինչև մատնահարեալ արգն որ չի լինի՝ դատաւորի արգով և արդուհալով՝ մէկին առաջնորդութիւն չի տրուի, և այլ վակֆական եղեալ բաներնին՝ Պատրիարգին գիտութեամբն լիցի. յայլմէ մարդ միջամուխ չի լիցի»[174]։

Սուլթանական ֆերմանում ընդգծվում է պատրիարքին ենթակա վակֆային տիրույթների անձեռնմխելիությունն ու մուաֆության (ապա-

171 Տե՛ս Հ. Սիրունի, էջ 283։

172 «Դիւան հայոց պատմութեան», հ. Ժ, էջ 221։

173 Նույն տեղում։

174 Նույն տեղում։

հարկ լինելու) իրավունքը. «...ի Պատրիարգութեանն թապի տեղոց ի վերայ հին օրինաց իւրեանց,— ասված է ֆերմանում,— յեկեղեցական եղեալ զայգի և պախճայ և շիֆթլիկ և շայիր, և արտեր. և ջաղացքք և այաղմայ և բանայիր, և վանքեր, և տներ և խանութներ. և պաղաբեր և անպտուղ ծառք. և այլ սոյնպէս եկեղեցւոյ վախֆ եղեալ իրք և տավարներն առաջի կանոնի վերայ զայս բարձրագործ պերաթովս հայոց Պատրիարգ եղեալ Զաքարիայ անուն վարդապետի կողմանէ բռնել և զապթ անել տուի՝ յայլմէ միջամուխ չի լինին. և եկեղեցեաց և վանքերուց փոխանորդ լիցի»[175]: Իսկ պատրիարքարանի ապահարկ լինելու մասին, ֆերմանում կարդում ենք. «Եւ ի վերոգրեալ Զաքարիայ վարդապետն՝ (որոյ լրասցի զվերջն բարեաւ) 'ի համեմատի իւրոյ ինքն՝ և դրան քեահիեայիւն միատեղ տասն և հինգ մարդկանց խարաճ և ավարիզ, և կանոն եղեալ թեքլիֆ (թեքյալիֆ-ի օրֆիլն Մ. Զ.) չի ուղվի և ի զապթս եղեալ քաղաքաց մէջն եղեալ յեկեղեցեաց և վանքերուց մէջն բնակեալ քահանայից, և սեադլխից թէֆթիշ, այսինքն քննութիւնն և հիսապնին Պատրիարգին և վեքիլներուն գիտութեամբն տեսնուի»[176]:

Վակֆի իրավունքով հայոց պատրիարքների գերատեսչությունը տարածվում էր 200-ից ավել վանքերի վրա: Նկատի ունենալով էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսների՝ հովվյալների վրա ունեցած դերն ու կշիռը քաղաքական կողմնորոշման խնդրում, սուլթանները նրանց, ինչպես և պատրիարքներին հատկացնում էին հողային մեծ տարածություններ: 1774 թ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսը սուլթանից ստացավ նման հրովարտակ-արտոնագիր, համաձայն որի «կարդաւորք աղատք են յամէն հարկապահանջութէնից»: Կաթողիկոսը պարտավոր է «վերահասու ի գործել ի վերայ ամեն յիշատակաց վագրֆ անուանեալ և այլք մի ձեռնամուխ լինիցեն ի նա»[177]:

Հողային խոշոր կալվածքներ էին ձեռք բերել, դարձյալ վակֆի իրավունքով, Վարագա սբ. Նշանը, Մուշի սբ. Կարապետը, Սեբաստիայի սբ. Նշանը, Աղթամարի ու Սսի կաթողիկոսները, որոնք իրենց տրամադրության տակ ունեին 300-ից ավել հեկտար հողային տարածություններ, մանր ու խոշոր եղջերավոր անասունների ամբողջ հոտեր և այլն:

Սուլթանական ֆերմանը հանգանակություն կատարելու լայն իրավունքներ է ընձեռում պատրիարքին. «...և պատրիարգի կողմանէ ողորմութիւնք հաւաքելոյ համար ուղարկած վարդապետաց անցած և

175 Նույն տեղում, էջ 223:

176 Նույն տեղում, էջ 225:

177 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 46ա, թերթ 1 և 2:

դարձած տեղորէից գաւառապետաց և բռնաւորաց կողմանէ միջամուխ չի լինին»[178], զգուշացնում է ֆերմանը: Վերջապես՝ սուլթանական հրովարտակում, անշուշտ ձևականորեն, կրոնադարձության հարցի իրավունքը վերապահվում է բացառապես հայոց պատրիարքին. «և մէկ հայուն իւր (պատրիարքի— Մ. Զ.) կամքն չեղած՝ զօրով տաճիկ չանեն»[179]:

Կ. Պոլսի պատրիարքները ենթարկվում էին էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսներին, սակայն ինչպես պարզ երևում է Մ. Օրմանյանի ուսումնասիրությունից, այդ հպատակությունը լոկ ձևական բնույթ է կրել, քանզի «Կ. Պոլսեցիք շատոնց դադարած էին էջմիածինէ սպասել իրենց գործերուն կարգադրութիւնը, վասն զի ոչ միայն հեռաւոր էին, այլ տարբեր պետութեան ներքո գտնուելով՝ չէին կրնար Օսմանեան կառավարութեան գործերուն միջամտել»[180]:

Միայն Սիմեոն Երևանցի կաթողիկոսն էր, որ փորձեց սանձել Կ. Պոլսի հայոց պատրիարքներին: Այդ նպատակով նա ձգտեց Կ. Պոլսում «կաթողիկոսական փոխանորդութիւն հաստատել» պատրիարքական իշխանության վրա ուղղակի ազդեցություն բանեցնելու համար, սակայն որոշակի արդյունքի չհասավ: Արևմտահայ ամիրաները ընդդիմացան կաթողիկոսին, պատճառաբանելով, թե «այսուհետև երկու գլուխք լինին ի Կոստանդնուպոլիս»: Ուստի կաթողիկոսը «Ջամբռում» սուր հարձակումներ է գործում Կ. Պոլսի պատրիարքության վրա: Շոշափելով արևմտահայ վիճակների պատրիարքության իրավասությանն անցնելու հարցը, Սիմեոն Երևանցին գրում է. «Սկսան ընդվզիլ և ամբարտաւանիլ յանդր նստող առաջնորդք, թողուլ զհոգևորն կանոն, և առյոսն արկանել զպատիւն հայրապետին» և թե «Պոլիս նստող Փաթրիկ կոչեցեալքն, գնալով ի յամբարտաւանութենէ ի յամբարտաւանութիւն, և զիշխանութիւն նորին (այսինքն՝ Մայր Աթոռի— Մ. Զ.) ի յինքեանս գրաւելով հետեցան ի ճանապարհին ճշմարտութեան»[181]:

Բացի էջմիածնի և Կ. Պոլսի կենտրոններից, XVIII դարում շարունակում էին իրենց գոյությունը պահպանել նաև Աղթամարի և Սսի (Կիլիկիո) կաթողիկոսությունները, որոնք, սակայն արդեն կորցրել էին իրենց երբեմնի նշանակությունը: 1731 թ. մի հիշատակարանում Կիլի-

178 «Դիւան հայոց պատմութեան», հ. ժ, էջ 224:

179 Նույն տեղում:

180 Մ. Օրմանյան. էջ 2751:

181 Սիմեոն Երևանցի. Ջամբռ, Վաղարշապատ, 1875, էջ 56 (այսուհետև՝ Սիմեոն Երևանցի):

կիայի կաթողիկոսների մասին ասվում է, թե նրանք «Երերեալ տատանեալ շրջէին տեղեաց ի տեղ, և ոչ կարէին երկար մնալ» աթոռում, «ի սակս տառապանացն զոր կրէին յապստամբ բռնակալացն», որի պատճառով «պահպանութիւն գոյից աթոռոյն ի ձեռս ամուսնաւոր քահանայից»[182] էր մնում։ Այդպիսիներից վերջինն էր Հուսիկ քահանա ասեցին, «որ կոչեցաւ տէր Յուսիկ»[183]։ Նա վախճանվում է 1748 թ. հունվարին, որից հետո կաթողիկոսական աթոռն անցնում է Աջապահյան տոհմի ձեռքը։ «Աջապահեանք անգամ մը որ կաթողիկոսութիւնը ձեռք անցուցին, զայն այլևս իրենց տոհմէն դուրս չհանելու համար մտածեցին կանուխէն յաջորդնին օծել»[184],— գրում է Մ. Օրմանյանը։

Առավել անմխիթար վիճակում էր գտնվում Աղթամարի կաթողիկոսությունը։ 1740 թ. արտագրված մի հիշատակարանում ասված է, թե Աղթամարի Նիկողայոս Սպարկերտցի կաթողիկոսն, որն ուներ նաև աթոռակիցներ, «...Վասն անյարմար կացութեանն, և զի զաթոռն ի սպառ անշքացոյց, զեկեղեցական միաբանսն ցրուեաց, և զկնաւոր աշխարհականս բնակեցոյց ի վանքն»։ Աղթամարի այս կաթողիկոսը ոմն Ալեքսանդր աբեղայի ձեռքով, անշուշտ կաշառքով, սուլթանական կառավարությունից հրովարտակ է ձեռք բերում Վանի, Բաղեշի, Մուշի և նրանց շրջակայքերի վիճակներին տնօրինելու մասին։ Այդ հրովարտակի օգնությամբ նա վտարում է Էջմիածնի նվիրակ Հովհաննես վարդապետին՝ նրա ձեռքից խլելով հավաքված նվիրական գումարը։ Այս քայլը զայրացնում է Ղազար Ջահկեցի կաթողիկոսին և Աղթամարի կաթողիկոսությունը ճանաչում է Մայր Աթոռի գերագույն իրավունքները[185]։

Աղթամարի կաթողիկոսության վիճակը XVIII դարում այսպես է բնորոշում Մ. Օրմանյանը. «Աղթամար կղզիացեալ և մոռացեալ կացութիւն մը ունէր, և իր իրաւասութեան գաւառներն ալ ոչ մի նպաստաւոր հանգամանք չներկայանալուն, աթոռն ալ շարունակեալ անկման ճամպուն մէջ կը յառաջէր»[186]։

Էջմիածնի Մայր Աթոռը արևմտահայ բոլոր գավառներից, Փոքր Ասիայի և Ռումելիի հայաբնակ վայրերից գանձում էր նվիրական հասույթներ։ Սիմեոն Երևանցին «Ջամբռում» մանրամասն անդրադառնում է Էջմիածնի նվիրակների լիազորություններին ու այցելելիք վայրերին[187]։ Կաթողիկոսի քարտուղար Երեմիա Օշականցին, իր հերթին, նույնպես ներկայացնում է 1765 թվականի նվիրակության վայրերի մի ցուցակ[188]։ Համաձայն նրա, նվիրակությունները բաժանվում էին երեք խմբի.

«ա) Նուիրակական վիճակք Սրբոյ Աթոռոյս, յորոց առնու ի ձեռն նուիրակաց ի յերիս ամս մի անգամ զնուիրական, զգանձանակական, զհոգեբաժնական, զկտակական զարդիւնս և զվեճեղէնս յիշատակիս։

բ) Նուիրական և Առաջնորդական վիճակք Սրբոյ Աթոռոյս, որք և Տէրունիք անուանին, յորոց ի յառնուլն զվերոգրեցեալ նուիրաւսն արդիւնսն Սուրբ Աթոռոյս, ըստ երից ամացն առնու նաև զառաջնորդական արդիւնսն ի ձեռն նուիրակաց, որոց նուիրակունքն Առաջնորդ ևս կոչին։

գ) Այնք վիճակք, յորոց ի յառնուլն զնուիրական արդիւնսն Սրբոյ Աթոռս ըստ երից ամացն, առնու նաև ի տարին մի անգամ զիւղս, զպանիրս զմատաղցու չորեքոտանիս եւ զայլս այսպիսիս ուտելիս եւ վեճեղէնս»[189]։

Առաջին ու գլխավոր խմբի մեջ մտնում էին՝ Կ. Պոլիսը, Ադրիանապոլիսը, Ղրիմը, Թոխատը, Անկարան, Էրզրումը, Կարսը, Բայազետը, Վանը, Դիարբեքիրը։

Հաճախակի էին այն դեպքերը, երբ նվիրակները յուրացնում էին հավաքված գումարը։ 1765 թ. նվիրակ գանձապահներին ուղղված Սիմեոն Երևանցու մի նամակից պարզվում է, որ նվիրակները չեն ցանկացել կենտրոն տրամադրել հավաքված գումարը, պատճառաբանելով, թե «Նախանցեալ նուիրակ Զաքարիա վարդապետն առեալ է»։ Սիմեոն կաթողիկոսը «կոչեալ զԶաքարիա վարդապետն ի հարց, նա ասաց թէ՝ ես զերեք ամաւ յառաջ ժողովեալ գանձակադրամսն առեալ եմ, իսկ գ (3) ամիս գոն յամենայն գանձանակսն ամբողջապես», ուստի և Սիմեոն Երևանցին գրում է. «զի զերեք ամի գանձանակադրամսն լրիվ առցէ»[190]։

Կ. Պոլսի հայոց պատրիարքները արևմտահայությունից գանձում ու պետությանն էին հանձնում պետական հարկերի մի մասը՝ արքունական տուրք՝ միրիե անուններով, ինչպես նաև մուկատա'ան, որը հայկական աղբյուրներում հանդիպում է մուգաթա, մուխաթա, միրի մու-

182 «Դիւան հայոց պատմութեան», հ. Գ, էջ 720։

183 Նույն տեղում։

184 Մ. Օրմանյան, էջ 2940։

185 Նույն տեղում, էջ 2955։

186 Նույն տեղում, էջ 2868—65։

187 Սիմեոն Երևանցի, էջ 44—51։

188 «Դիւան հայոց պատմութեան», հ. Գ, էջ 797—806։

189 Նույն տեղում։

190 «Դիւան հայոց պատմութեան», հ. Գ, էջ 150. հմմտ. Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, Կահիրե, 1952, էջ 713։

խաթա ձևերով։ Թե ինչքան էր կազմում յուրաքանչյուր վիճակից ստացվող մուկատա՝այի գումարը, դժվար է ասել, կասկածից վեր է սակայն, որ դա կազմելու էր պատկառելի մի թիվ։

XVI—XVIII դարերի հայ մատենագրության էջերում ավելի ու ավելի հաճախակի ենք հանդիպում հոգևորականության բարքերի անկման սուր քննադատությանը։ Այսպես, դեռևս XVI դարի մի հիշատակարանում կարդում ենք.

Մեր ազգի առաջնորդներն բովանդակ զԱստուած թողեր են,
Զհոգւոց առաջնորդութիւնն ի Տաճկաց երթեալ կու խնդրեն.
Թէ զկաթողիկոսն ասեմ՝ արծաթով ըզնա մեծարեն,
Թէ զեպիսկոպոսքն ասեմ՝ տամղաճոյ նրման բամբասեն.

Հայոց վարդապետքն ամէն դրրամի համար քարոզեն,
Ով որ որ դրրամ չի տայ՝ զայն փութով թըղթով կ՚անիծեն։
Մեր ազգի իրիցաներն հանապազ զիրար կու նենգեն,
Անարժան պատարագօք աշխարհիս պատիժ կու բերեն[191]։

Վանական միջավայրում բույն դրած ապականություններն ավելի գունեղ են ներկայացրել Գր. Դարանաղցին և Առ. Դավրիժեցին։ «Եւ վանորէից աբեղայքն,— գրում է Գր. Դարանաղցին,— որ ամէնքն առհասարակ սուտ եպիսկոպոսք են եղեալ վասն միմեանց նախանձու... թողեալ էին զլուսաշարդ վանորայսն, սիրեալ էին ի գեղորայսն և անդեայք և այգիք և բուրաստանք և հօտք խաշանց և առջարոց բազմութիւնս ստացեալ էին և եղեալ էին իբրև զմի ի մեծատանց աշխարհականացն և կալեալ էին ի կանանց տանտիկնայս ի վարձու և զանուանքն հացթուխ էին եղեալ»[192]։ Մեկ այլ տեղ, անդրադառնալով հոգևորականությանը, ասում է, որ նրանք «...ագահութեան և փառամոլութեան ախտից աղագաւ, որ զյաւիշտակութիւն գայլոց կու գործեն»[193]։ Պատկերն ամբողջացնում է Առ. Դավրիժեցին. «Վասն զի ամենայն վանորայք ազգիս Հայոց՝ իւրաքանչիւր սեպհականութիւն ունէր իւր զինչս առանձին, այգի և բուրաստան, փէթակ և տուն, և մարան, և համբարանոցս, և զմուտս ստացուածոց. նաև զմուտ հասարակաց վանիցն մասունս արարեալ՝ յինքեանս բաժանէին։ Եւ զայն ամենայն ինքեանց, և ազգայնոց՝ և իւրեանց հաճելեաց արանց ծախէին ի պէտս կարեաց։ Եւ զնուիրեալ տեղիսն Աստուծոյ՝ որք բնակարան են նշխարաց սրբոց և սքանչելագործ, և շնորհակիր նշանաց Աստուծոյ, լցեալ էին զայնոսիկ կանամբք և տանտիկնօք, իւրեանց ազգայնօք»[194]։ Ըստ Առ. Դավրիժեցու, բարոյալքվել էին նաև հոգևորականության ցածր խավերը. «Սոյնպէս և գեղական երիցունք՝ անուամբ միայն քահանայք, այլ ոմանք առեալ զիշխանութիւն մէլիքութեան, և ոմանք տանուտէրութեան՝ և ոմանք պոռնիկք և երկկանայք, ոմանք յարեցեալք յիշխանս այլազգեաց, արբանեակք չարեաց գործոց նոցա՝ և մատնիչք քրիստոնէից, ոմանք ի մարմնաւոր արուեստս և ի հողագործութիւնս պատաղեալ իբրև զաշխարհականս, և բնաւին թողեալ զժամ և զպատարագ։ Ոչ կանխէին ի ժամ աղօթից յեկեղեցի, և ոչ լինէր լսելի ձայն ժամակոչի ի գեղօրայս, և բնաւին բարձեալ ի նոցունց շնորհ քահանայութեան, բայց տակաւին զինքեանս քահանայս անուանէին, և գործէին զգործ քահանայութեան, ոչ իբրև զքահանայ՝ այլ իբրև զմարմնաւոր արուեստաւոր՝ վասն մարմնաւոր վարձու իւրոյ»[195]։

XVI դարի վերջերին և XVII դարի սկզբներին գահակալած կաթողիկոսների մասին Առ. Դավրիժեցին գրում է. «Եւ ի շրջագայութեան իւրեանց ի մէջ ժողովրդեանն, թագաւորական ծառայ և այլազգի զօրականս շրջեցուցանէին ընդ ինքեանս, և զիրաւունս և զհասս՝ որք ի ժողովրդենէն՝ ճշդիւ և բռնութեամբ ուժգին առնուին որպէս զորդիսն Հեղեայ. և կաթողիկոսքն՝ որպէս ինքեանք արծաթով և կաշառօք ընկալեալք զաստիճան կաթուղիկոսութեան, սոյնպէս և ինքեանց ձեռնադրեալ եպիսկոպոսունքն և քահանայքն, տգէտք, խոտանք, և անպիտանք, ըստ սաղմոսին, որք էին լեալ պաշտօնեայք որովայնի՝ հանապազ ի գիներբուս դեղերեալք՝ գուսանօք իբրև զմարմնաւոր իշխանս, յառաւօտէ մինչև ցերեկոյ հետևեալ կատակաց և լկտի բանից՝ և դատարկութեան»[196]։ Կ. Պոլսի պատրիարքները հետ չէին մնում էջմիածնի կաթողիկոսներից։ Գր. Դարանաղցին այսպես է նկարագրում պատրիարքի շքախումբը. «Եւ եկին բազում քահանայք և ի նոցանէ ոմանք, բազում աղաչանօք հազիւ ի հաւանութիւն ածեալ, ելեալ ընդ նոսա պալարակալ կառօք և երիվարօք և շատ քահանայք առաջի և զկնի գնալով, մեծաւ փառաւորութեամբ, որպէս իւր փառամոլ բարքն է»[197]։

191 Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 594։
192 Գր. Դարանաղցի, էջ 296։
193 Նույն տեղում, էջ 415։
194 Առ. Դավրիժեցի, էջ 288։
195 Նույն տեղում, էջ 289։
196 Նույն տեղում, էջ 290։
197 Գր. Դարանաղցի, էջ 131։

Խոսելով հայ հոգևորականության բարքերի մասին, չի կարելի եղած բազմաթիվ փաստերի մեջ չանդրադառնալ երկու վկայության, որոնք լույս են սփռում նրանց ընչաքաղցության, բարոյական նկարագրի վրա։ Առաջինը, դա Փիլիպոս կաթողիկոսի (1633—1655) օրոք էջմիածնի և Սսի կաթողիկոսությունների միջև 13 կետից բաղկացած համաձայնությունն է, որ կնքվել է Փիլիպոս կաթողիկոսի նախաձեռնությամբ։ Համաձայնության մեջ ասված է. «Ամենևին զինչ և իցէ պատճառաւ ոք եպիսկոպոս զայլոյ վիճակ մի հափշտակեսցէ», «զի եպիսկոպոս թէ ոչ հրամանաւ կաթուղիկոսին իւրոյ՝ այլ կաշառօք և այլազգեաց բռնութեամբ համարձակեալ իշխեսցէ այլոց վիճակի, լուծցի ի կարգէն», «զիրաւունս և զհասոյթս՝ որ ի ժողովրդենէն կարգեալ է եպիսկոպոսաց և երիցանց, ըստ հրամանի հայրապետական կանոնաց, առցեն եպիսկոպոսք և երիցունք, և մի զմիմեանս զրկեսցեն, որոց վասն տրրտունջ և դժգոհութիւն յորովս լսեմք հանապազ»[198] և այլն։

Հոգևորականության այս բարոյալքումը իր բացահայտ արտահայտությունն էր գտել հատկապես վատշվեր Մելքիսեթ կաթողիկոսի ժամանակ այն աստիճան, որ ժողովուրդը ընդվզում է հայ հոգևորականության ներկայացուցիչների դեմ։ Այս տեսակետից խիստ ուշագրավ է այն բողոքագիրը, որն ուղարկել են Վան քաղաքի ու Վասպուրականի նահանգի արհեստավորները, դավլաթավորները, իշխանները, տանուտերերը վերոհիշյալ կաթողիկոսին։ Բողոքագրի հեղինակները հանդես են գալիս «խեղճ և տառապեալ» ազգի անունից։ Բողոքագրի սկզբում նշելով, որ ամենուրեք տիրում է «օրինակաց քակմունք, կանոնաց արհամարհութիւնք, և եկեղեցական կարգաց այլայլութիւնք», հեղինակները մատնացույց են անում դրա պատճառները՝ «վասն արծաթասիրութեան քո», «ի վերայ եպիսկոպոսի» «այլ ոմն տգէտ և հերձուածող» «եպիսկոպոս կու օրհնես», որը «բազում չարիք ծնանի, աղմուկ և խռովութիւն, մատնութիւն և արեան հեղմունք»։ «Զի ոչ թէ ի մին տեղի, և մին աթոռի եղեալ ես երկու առաջնորդ, և երկու եպիսկոպոս, այլ ի բազում տեղիս, գիտեմք, որ մեկ թեմի, երկու և երեք, չորս և հինգ եպիսկոպոս ձեռնադրեալ ես և առաջնորդ կարգեալ։ Այս ի՞նչ օրենք է, որ մեկ կնոջն հինգ այր լինի»։ Այնուհետև, անդրադառնալով կաթողիկոսի նվիրակներին, բողոքագրի հեղինակները գրում են. «...յինչ երկիր որ նուիրակ յուղարկես՝ նա կու ընտրես՝ յոր տեղ որ չար և լիրբ, անզգամ, անամօթ եւ ամբարտաւան մի կայ, որ ոչ յԱստուծոյ երկնչի, եւ ոչ ի

198 Առ. Դավրիժեցի, էջ 331—333։

մարդկանէ ամաչէ, զայնպիսիք կու առաքես, որ զարդարեալ երիվարօք, եւ պճնեալ հանդերձիւք, եւ կրկին պաշտօնիւք գան, եւ գոռոզաբար խրոխտան եւ բազում ցոփութեամբ եւ անկարգութեամբ եւ արբեցողութեամբ զաշխարհս վրդովեն... եւ երիվարօք շրջին իբրեւ զբռնաւորս եւ պճնին, եւ ի կերակուրս եւ յմպելիս ծախեն զժողովեալսն իւրեանց, յոլով կաշառս տան բռնաւորաց, եւ բազում տուգանս այլազգաց վասն հակառակասէր բարուց իւրեանց, վասն որոյ ազգս Հայոց տաղտկացեալ է ի գարշահոտութենէ վարուցն այսպիսեաց»[199]։ Ապա բերվում են այլ պատճառաբանություններ՝ հոգևորականների տգիտությունը, նրանց խոսքերով ասած՝ «խաւարն, որ զլոյսն մերժէ», էջմիածնի հարստությունների վաճառքը օտարներին և այլն[200]։

Հոգևորականության այս հոռի բարքերն էին պատճառը, որ և՛ էջմիածնի կաթողիկոսությունը, և՛ Կ. Պոլսի պատրիարքությունը ընկել էին ծանր պարտքերի տակ՝ դառնալով ծանր բեռ նախ և առաջ հասարակ ժողովրդի համար։ Խոսելով Կ. Պոլսի պատրիարքության պարտքի մասին, Առաքել Դավրիժեցին գրում է. «Եւ պատճառ պարտուցս էին, նախ սոսկ միայն կոչմամբ և եթ պատրիարգք անուանեալ առաջնորդքն, որ նստին թագաւորական իշխանութեամբ, և արծաթոյ ընտրութեամբ սպրդեալ ի ներքս մտանեն՝ յանձանց, և ի սուտակասպասից ընծայեալք, և ոչ յԱստուծոյ։ Եւ երկրորդ՝ խազմասէրքն և խռովարարքն ի ժողովրդականաց, որք վասն փառասիրութեան, և վասն նախանձու, և վասն մարմնաւոր շահուց ակնկալութեան, գումարտակ լինէին, ոմանք ի վերայ այսմ առաջնորդի, և ոմանք այնմ առաջնորդի, և սուտակասպաս արբանեակք, և զօրավիգք լինէին նոցա, և ապա գնացեալ առ դավթարդար, և առ վէզիր, և առ թագաւորն, տային կաշառս յոլով նոցա, և վանէին զախոյանն, և առնուին զիշխանութիւն սոսկ անուն պատրիարգութեան և առաջնորդութեան։ Եւ այլ ևս բազմապատիկ կաշառս ի դրունս իշխանացն ցրուէին աստ և անդ, և այսպէս առնելով բազմացաւ բարդեցաւ, և դիղացաւ պարտքն և եհաս մինչ ի ԽՌ (40.000) ղուռուշն»[201]։

199 Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, հ. 2, Կ. Պոլիս, 1888, էջ 279—293։

200 Նույն տեղում։ Գր. Դարանաղցին հոգևորականության որոշ ներկայացուցիչների ավելի խիստ ածականներով է որակում՝ «պոռնիկ քահանայ», «անարակ», «բոզ», «լիրբ» և այլն (Գր. Դարանաղցի, էջ 477)։

201 Առ. Դավրիժեցի, էջ 335։ Պատրիարքարանի պարտքերի մասին տե՛ս նաև Հ. Սիրունի, էջ 437—440։

Օսմանյան կենտրոնական կառավարությունը հայ հոգևորականության հարցում հետապնդում էր երկու գլխավոր նպատակ. ա) նայում էր նրանց, որպես եկամտի կարևոր աղբյուր. կաշառքի չափն էր որոշում, թե կառավարությունը ում է ճանաչելու հոգևոր այս կամ այն բարձր պաշտոնում և բ) ձգտում էր իր թշնամի Իրանի տիրապետության տակ գտնվող էջմիածնի գերագույն իշխանությունից հեռու պահել արևմտահայ հատվածը[202]։ Այս տեսակետից չափազանց բնորոշ է XVII դարի 30-ական թվականներին տեղի ունեցած դեպքերը Սահակ կաթողիկոսի անձի շուրջը։ Փախչելով խանական իշխանությունների հարուցած հալածանքներից՝ էջմիածնի հայտնի մուխաթայի (միանվագ պարտքի) պատճառով, Սահակ կաթողիկոսը փորձում է դառնալ օս-

202 էջմիածնի նվիրակներին Թուրքերը հաճախ նայում էին որպես լրտեսների։ Ի միջի այլոց, մեզ է հասել 1508 թ. գրած մի ողբ, որը վերնագրված է «Նահատակութիւն էջմիածնի նուիրակաց»։ Այնտեղ կարդում ենք, որ նվիրակները՝

Ոնց որ հասայն յԱմասիայն՝
Լոք մատնեցին զինքն ի յատեան,
Անդ անօրէնք ժողովեցան,
Որդիք Նոեին և կորստեան,
Պիղծ Յուդային եղեն նման,
Որ մատնեցին զտէրն ի յատեան,
Յասմամբ եկեալ զԴաւիթ տարան
Պարոնորդուոյն գուռն ի տիվան,
Ասին չաշուտ են միաբան,
Սօֆին զրկել ի Ֆռանկստան։

(Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 384—386)։ Նվիրակներն աշխատում էին ապացուցել, որ իրենք հեռու են քաղաքական շահագրգռություններից և կատարում են սոսկ եկեղեցական հանձնարարություններ։ «Ես,— ասում էր նրանցից մեկը,— իշխավանտ եմ, ով որ գնէ յինէն իւր՝ դրամով գնէ և ով որ ոչ գնէ՝ ոչ տա դրամ» (Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. Բ, էջ 148)։ Սա ինքնապաշտպանության արտահայտություն էր։

Հայերի մեջ կային այնպիսի բանտարկուներ, որոնք օսմանյան կառավարության ներկայացուցիչներին հասկացնել էին տալիս, որ էջմիածնի նվիրակները կողոպտում են երկիրը, մեծ քանակությամբ դրամական միջոցներ տեղափոխում իրանական Հայաստան ու դրանով զինում իրանացիներին Թուրքիայի դեմ (տե՛ս Սիմեոն Երևանցի, էջ 93 և 95, էջ 243. հմմտ. Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. Բ, էջ 147)։

Արևմտահայ հոգևորականության բարձր խավի ներկայացուցիչների բողոքի հիման վրա, Մեհմեդ IV սուլթանը XVII դարի կեսերին արգելեց նվիրակներին մեռոնի «բաշխումը» օսմանահպատակ հայկական գավառներում, եթե նախօրոք ձեռք չեն բերի հատուկ արտոնություն սուլթանական ֆերմանով (Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. Բ, էջ 148)։

մանյան տիրապետության տակ գտնվող հայերի կաթողիկոս, անջատելով այդ թեմը էջմիածնի իրավասությունից։ Իր ծրագրերն իրականացնելու ճանապարհին Սահակ կաթողիկոսը գտնում է համախոհներ՝ հանձինս Սսի Հովհաննես կաթողիկոսի եղբորորդի Պողոս վարդապետի և Կ. Պոլսի պատրիարք Զաքարիայի։ Այս վերջինին այսպես է բնութագրում Առ. Դավրիժեցին. «...և էր Զաքարիա վարդապետս յերկրէն Վասպուրականի՝ և էր յայսմ ժամանակի առաջնորդ ազգին Հայոց՝ որք կային ի Կոստանդնուպոլիս, զի անուամբ պատրիարգութեան՝ և թագաւորական մուղադայիւ և հրամանաւ նստեալ էր առաջնորդ ի Կոստանդնուպոլիս։ Եւ էր սա յոյժ ներհակ Մովսէս կաթուղիկոսին»[203]։ Իր համախոհների հետ Սահակը դիմում է ներկայացնում սուլթան Մուրադ IV-ին, որպեսզի նա «...հրամայեսցէ մերովք օրինօք զամենայն քրիստոնեայս՝ որք իցեն ազգաւ Հայ, որք կան ընդ իշխանութեամբ ինքնակալ թագաւորութեանդ Օսմանցւոց»[204]։

Եվ, բնականաբար, սուլթանը ընդառաջում է դիմումին, քանի որ այդ քայլը բխում էր օսմանյան պետության շահերից։ Ահազանգված, էջմիածնի Մովսես կաթողիկոսը Արևմտյան Հայաստանի մի շարք երևելի մարդկանց միջոցով, որոնց մեջ պատմագիրը հիշատակում է խոջա Երեմիային, խոջա Մախսուտին և վանեցի խոջա Ռուհիջանին, որ «...էր այս վէզիրիս (մեծ վեզիր Խոսրով փաշայի— Մ. Զ.) քուրքչի պաշի և հաւատարիմ, և հաճոյական տպասաւոր առաջի նորա»[205], ձգտում է խափանել ազդապառակտիչ այս գործը։ Սահակի կողմնակիցները գործը գլուխ բերելու համար մեծ վեզիրին խոստանում են 10.000 ղուռուշ։ Իսկ երբ էջմիածնականները, իրենց հերթին, դիմելով մեծ վեզիրին հայտնում են, թե «խնդրեմք յաշխարհաշէն ի խաղաղարար տէրութենէ հզորիդ՝ զի մի մատնեսցես զաղքատ և զտառապեալ ժողովուրդս (ընդգծումը մերն է— Մ. Զ.) ի ձեռս դոցա, զի դոքա վասն փառամոլութեան և ագահութեան իւրեանց մատնեն զողորմելի ռիթթն ի ներքոյ ծանր հարկի, որ է ժողովրդեանն մեծ սիթամ (տուգանք) և գործողացն մեղք»[206], մեծ վեզիրը պատասխանում է. «...անխելք հայեր, զի՞արդ ոչ տամ նոցա զկաթողիկոսութիւն, զի նոքա ի տարեւոջն զԺՌ (10.000) ղուռուշ յաւելուն ի գանձարան թագաւորին»[207]։

203 Առ. Դավրիժեցի, էջ 241։
204 Նույն տեղում։
205 Նույն տեղում, էջ 242։
206 Նույն տեղում, էջ 244։
207 Նույն տեղում։

Նման պայմաններում, խոջա Ռուհիջանը ստիպված է լինում առաջարկել հետևյալը. «...փառաւոր տէր իմ, եթէ զողորմելի և զտառապեալ ազգն Հայոց, վասն գանձի վաճառես նոցա, ինձ վաճառեա, ես ոչ թէ ԺՌ (10.000) զուռուշ, այլ ԻՌ (20.000) զուռուշ տամ»[208]։ Հաղթում է այն կողմը, որն ավելի մեծ կաշառք է տալիս։ Այսպիսով, հայ մեծատունների քմահաճույքից էր կախված այս կամ այն հոգևորականին պատրիարքական աթոռի վրա բազմեցնելը։ Իսկ ամեն անգամ որևէ մեկին պատրիարքական աթոռին նստեցնելու համար, անհրաժեշտ էր սուլթանական գանձարանը մուծել, համաձայն 1764 թ. հունիսի 3-ի (1177 թ. զիլհիջջե 3-ի) սուլթանական հրովարտակի, 100 հազար ակչե, որպես փեշքեշ (նվեր) և 100 հազար ակչե, որպես մուկատա՝ա[209]։ Եվ բնական է, որ պատրիարքների հաճախակի փոփոխմամբ շահագրգռված էր նախ և առաջ սուլթանական կառավարությունը։ Ռայկոտը, անդրադառնալով հայ կաթողիկոսությունների ու պատրիարքությունների հարցին, գրում է, որ Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունները «...կոչված են բավարարելու թուրքերին», որոնք համոզված են «...թե իրենց իսկ շահերը թելադրում են պահել այդ պատրիարքությունները... քանի որ պատրիարքների յուրաքանչյուր գահակալություն եկամուտ է բերում իրենց»[210]։

Եվ կառավարությունը գնալով բարձրացնում էր պատրիարքության գինը։ 1657 թ. Թովմաս Բերիացին մեծ վեզիր Ս. Քյոփրյուլլյուից պատրիարքության հրովարտակ ստացավ՝ վճարելով 400 հազար ակչե[211]։ Այսպիսով, ամեն ինչ գնվում և վաճառվում էր Թուրքիայում. պատահական չէ, որ ժամանակակիցները Թուրքիան ներկայացնում էին որպես կաշառակերության դասական երկիր։ Կաշառվում էին բոլորը՝ մեծից մինչև ամենափոքր պաշտոնյան։

Հոգևորականության կողմից դրամական եկամուտների յուրացումն ու իրենց պաշտոնների շարաշահումը մեծ չափերի հասավ XVIII դարի առաջին քառորդին՝ կապված Երուսաղեմի պատրիարքության դիզած խոշոր պարտքերի հետ։ 1711 թ. Երուսաղեմի պատրիարք Հովհաննես Պալբքեսերցին պաշտոնանկ է արվում, քանզի վանական հասույթները

208 Առ. Դավրիժեցի, էջ 245։

209 Հ. Սիրունի, էջ 282—283։

210 *Chevalier de Ricaut*, Histoire de l'Estat présent de l'Eglise grecque et de l'Eglise arménienne, traduit de l'anglais par H. Rosemond, Amsterdam, 1698, p. 397.

211 Մ. Օրմանյան, էջ 2518։

«զիրաւունս և զողորմութիւնս նուիրեալս յուխտաւորաց» վատնել էր «ի կամս իւր»։ Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես Կոլոտը Երուսաղեմի հիշյալ պատրիարքին անվանում է «...անյագն ի չարիս, Բելն երկրորդ, մերկացեալ ի շնորհաց, նոր հրեայ և հին հեթանոս»[212]։ Հովհաննես Կոլոտ պատրիարքը ստիպված է լինում «նորանոր փոխառութեանց դուռը փակելու համար կտրատել և ջնջել պաշտօնական կնիքը՝ յորոց վերայ գրեալ էր անուն սրբոյ աթոռոյն, և որով զմուրհակս պարտուցն կնքէին, և որ հասարակ կնիք կամ օրթայի կնիք կանուանէր»։ Կ. Պոլսի պատրիարքը «կնիք պարտուց կանուանէ զայն»[213]։ Երուսաղեմի պատրիարքության պարտքերը 1714 թ. վերջերին հասան մեծ չափերի։ Ուստի, անհրաժեշտություն զգացվեց Կ. Պոլսում և արևմտահայ բոլոր գավառներում հանգանակություն կատարել։ Իսկ երբ շարունակվում էր հանգանակության հավաքումը, Կ. Պոլսում 1718 թ. հուլիսի 5-ին բռնկվեց մեծ հրդեհ, որը տևեց 36 ժամ «և Պոլսի մեծ մասը մաքրեաց». պատրիարքարանը ու մայր եկեղեցին իրենց շրջակայքերով ամբողջապես այրվեցին[214]։ Ստիպված, առժամանակ, դադարեցվեց հանգանակությունը։ 1720 թ. սակայն, «Թէ Կ. Պոլսոյ և գաւառներու մէջ բացուած հանգանակութիւնները այնչափ ինչ արտադրած էին, որ թէ պարտքերը վճարելու կը բաւէին, և թէ նորոգութիւններ անելու ու նոր կալուածներ գնելու կը նպաստէին»[215]։

Թե ի՞նչ էին նշանակում այդ պարտքերը, կատարված հանգանակությունները և թե ի՞նչ աստիճանի էր ընկած հոգևորականության բարոյական դիմագիծը նաև XVIII դարում, երևում է 1721 թ. գրիչ Կիրակոս երեց Ալիփունարցու գրած «Ողբի» հետևյալ տողերից.

Պատրիարգներն իրար անկան,
Վեց բիւր եղեւ պարտքն ի լման,
Վէճն ու կռիւն մաշեցան,
Այ սուրբ յաթոռ հայիֆ սէնի։

Այն անիրաւ նուիրակնուն,
տաճկի ըռեխտով ձի կու հեծնուն,
շարժմունքն ամէն գետ օսմանցուն,
այ սուրբ մեռոն հայիֆ սէնի։

212 Նույն տեղում, էջ 2727։

213 Նույն տեղում, էջ 2824։

214 Նույն տեղում, էջ 2815։

215 Նույն տեղում, էջ 2824։

Վարդապետք այլ քարոզողք չեն,
ժողովրդեան կաշառք խնդրեն,
այն որ չըտայ կու հալածեն,
այ դաս ու քարոզ հայիֆ սէնի։

Առաջնորդներն կանոնք չըբռնեն,
կաշառքի համար խաթր կանեն,
ձեռնադրածին հարցում չառնեն,
այ աստիճան հայիֆ սէնի։

Սեւագլուխքն թէ կամիս տես,
զոմանց զգործն լաւ է թէ չլսես,
զամէնեցուն թէ մեկնեմ ես,
այ սուրբ վեղար հայիֆ սէնի։

Իրիցաներն ոմանք ոչ կան,
լիրբ են անզուք (յանդուգն), անբարտաւան,
պատարագեն ւ են անարժան,
այ սուրբ խուրհուրդ հայիֆ սէնի։

Իրիցփոխանք ամէն թերի,
լի են չարէօք, չունին բարի,
օրենքն նոցա ձեռքն գերի,
այ սուրբ կանոնք հայիֆ սէնի[216]։

Պատահական չէ, որ պատրիարքների ու բարձրաստիճան հոգևորականների ձեռքում կուտակվում էին հսկայական հարստություններ, որոնք բնորոշում են նրանց բարոյական կերպարը։ Այսպես, մեծ հարստություն էին դիզել Հովհաննես Կոլոտ և Զաքարիա պատրիարքները։ Վերջինիս կտակից պարզվում է, որ նա «...Իրեն ժառանգութենէն 30.000 մարչիլ կամ դահեկան տէրությունն էառ, 20.000 ալ իրեն յաջորդող պատրիարքն էառ, և մնացած 92.000 դահեկանը զանազան նպաստներու յատկացուցած էր, կտակակատար նշանակելով Սիմեոն Տէր Մովսէսեան, Զօպան Հովուեան, Յովհաննէս Տագէսեան, Յովհաննէս Լիմոնճեան և Յակոբ Կիլլապեան ամիրաները»[217]։

Ի դեպ, սերտ էին պատրիարքների և բարձրաստիճան հոգևորականների կապերը հայ մեծահարուստ ամիրաների հետ։ Վերջիններն էին, որ հաճախ քսակի ուժով պատրիարքական աթոռին էին բազմեցնում իրենց համար ցանկալի այս կամ այն բարձրաստիճան հոգևորականին։ Այսպես, 1749 թ. ռուսջուկցի հայ ամիրաները, մեծ կաշառք տալով կառավարությանը, Երուսաղեմի միաբան Պրոխորոն վարդապետի համար՝ Հակոբ Նալչյան պատրիարքի փոխարեն, սուլթանից պատրիարքության հրովարտակ ստացան։ Երբ սուլթանական այդ հրովարտակի դեմ հանդգնեց պոլսահայ ժողովուրդը, ապա հանկարծ «Բացեալ եղեւ դուռն պահարանին [պատրիարքարանի], և ելին անտի ենիչերիք և չուխատարք» մեծ թվով, որոնցից ոմանք Պրոխորոնին «ի պատրիարքարան տարին», իսկ այլք մահակներով հարձակվեցին ժողովրդի վրա ու անխնա ծեծեցին այն աստիճան, որ «ոմանց գլուխքն պատառեալ էր, և ոմանց թևքն խախտեալ» և խուճապի ընթացքում «սկսան թօթափիլ ի վերայ միմեանց» ու ստեղծվեց այնպիսի մի ողբալի վիճակ, երբ դեպքի ականատեսը բացականչում է, թե «բազմագութն Տէ՛ր այլ մի ևս ցույց տացէ»[218]։

Մեծահարուստ Յաղուբ ամիրան, արքունի վաճառապետը, որ է «Պազիրկեան պաշը», քսակի ուժով 1752 թ. մայիսի 16-ին երկրորդ անգամ Հակոբ Նալչյանին բազմեցնում է պատրիարքական աթոռին[219]։

* * *

XVI—XVIII դարերում Արևմտյան Հայաստանի հասարակական-տնտեսական կյանքում գնալով ավելի ու ավելի մեծ դեր սկսեց խաղալ նոր ծնունդ առնող առևտրական բուրժուազիան, հանձինս, նախ և առաջ, խոջաների, չելեբիների, իսկ XVIII դարից՝ ամիրաների։ Հայ վաճառականությունը հիշյալ դարերում ամրապնդվում էր ոչ միայն Հայաստանի սահմաններից դուրս, որտեղ ուներ իր զարգացման համար նպաստավոր հող, այլև բուն Հայաստանում։

Ամերիկա և Հնդկաստան տանող ծովային ճանապարհների հայտնագործությունից հետո էլ Առաջավոր Ասիան դեռևս ամբողջապես չէր կորցրել իր երբեմնի նշանակությունը եվրոպական առևտրի համար. այսպես կոչված «լևանտյան» առևտրի ոլորտները կարևորությունից չէին զրկվել, Սև ծովի և Տրապիզոնի վրայով կատարվող առևտուրը դեռևս աշխույժ էր։ Սև ծովից դեպի Իրան և Հնդկաստան տանող առևտրական ուղիներն անցնում էին Հայաստանի ու Ադրբեջանի վրայով. Հայաստանի մի շարք քաղաքներ տարանցիկ առևտրի կենտրոններ էին։ Տարանցիկ առևտրի ուղիները հիմնականում հետե-

216 Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Ե, էջ 15։
217 Մ. Օրմանյան, էջ 3196—3197։

218 Նույն տեղում, էջ 2968։
219 Նույն տեղում, էջ 2979։

վյալներն էին՝ Կ. Պոլիս—Թոխատ—Էրզրում—Թավրիզ, Զմյուռնիա—Թոխատ—Էրզրում—Թավրիզ, Տրապիզոն—Էրզրում—Թավրիզ, որոնք խափանվել էին XVI դարի վերջերին Թուրք-պարսկական պատերազմների հետևանքով երկրի ընդհանուր ավերածության, Թուրքերի կողմից Անդրկովկասը գրավելու և հետագայում ջալալիների ապստամբությունների պատճառով։ Սակայն, ինչպես կարելի է եզրակացնել աղբյուրների հաղորդած վկայություններից, XVII դարի 20—30-ական թվականներից սկսած այդ առևտրական ուղիները կրկին դարձել էին խիստ բանուկ։

Ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեն, խոսելով XVII դ. Թոխատի մասին[220], գրում է. «Հատկապես նկատելին Թոխատում այն է, որ այս քաղաքը Արևելք տանող խոշոր տարանցիկ կայաններից մեկն է։ Այնտեղ անվերջ քարավաններ են գալիս Պարսկաստանից, Դիարբեքիրից, Բաղդադից, Կոստանդնուպոլսից, Զմյուռնիայից, Սինոպից և այլ վայրերից»[221]։ Նույնն էր վիճակը նաև XVIII դարում. «Ի Թօքատ գտան յառաջագոյն և գտանին ևս վաճառականք,— կարդում ենք Ղ. Ինճիճյանի մոտ,— զորոց նման սակաւ ունի տէրութիւն օսմանեան ընդ ամենայն սահմանս իւր (ընդգծումը մերն է— Մ. Զ.), որ յԱսիա, անդ յաճախեն երթևեկութիւն կարաւանաց յամէնայն կողմանց ... Յառաջագոյն աստ գային նաև վաճառականք հնդկաց ընդ Մուսուլ, նոյնպէս և վաճառականք պարսից, բայց ի բազմաց հետէ խափանեցաւ»[222]։ 1777 թ. Հակոբ Դիվրիկեցի տարեգիրը, գտնվելով Թոխատում, գրել է. «և Թօքաթ գեղեցիկ քաղաք, լցեալ ամենայն բարութեամբ առատապես, բազում վաճառական երթայ ամենայն կողմանց և առնէ շատ մեթահս ի նմանէ և մարդկանց վայելչութիւն և վարքն նմանի Ըսթամպոլու և ունի շատ խաներ, ի առս և ի տուրս կատարեալ առատապէս»[223]։

---

220 Թոխատի բնակչությունը հիմնականում բաղկացած էր հայերից։ XVI դարի վերջին Թուրքերին գերի ընկած մի ոուս գրում է. „А жильцы в том во всем Тукате живут все люди амалицкие» («Описание турецкой империи, составленное русским бывшим в плену у турок в XVI в.», СПб., 1892, с. 19).

221 *J. B. Tavernier*, p. 11—12. («Ce qu'l y a enfin le plus remarquable de Tocat, est que cette ville est un des plus grands passages de l'Orient, et qu'il arrive incessament des caravanes de Perse, de Diarbequir, de Baghdad, de Constantinopole, de Smyrne, de Synope et d'autres lieux»).

222 Ղ. Ինճիճյան, էջ 292։

223 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 459։

Որպես տարանցիկ առևտրի կենտրոն, Էրզրումը ամենևին չէր զիջում Թոխատին։ «Էրզրումում,— գրում է Տավերնիեն,— կան շատ քարվանսարաներ։ Այս քաղաքը, ինչպես և Թոխատը, Թուրքիայի մեծ տարանցիկ կայաններից մեկն է»[224]։

XVIII դարում Հայաստանով ճանապարհորդած Պիտտոն դե Տուրնֆորը, խոսելով Էրզրումի մասին, նշում է. «Այս քաղաքը Հնդկաստանից եկած ապրանքների համար տարանցիկ առևտրի կենտրոն է և հանդստավայր... (Հնդկաստանից բերվող) բոլոր ապրանքները, որոնցից գլխավորներն են՝ Պարսկաստանի մետաքսը, բամբակը, թմրադեղերը, տարբեր գույնի մահուդը, անցնում էին միայն Հայաստանի վրայով»։ «Մենք զարմացել էինք,— այնուհետև գրում է նա,— տեսնելով Էրզրում ներմուծված այդքան մեծ քանակությամբ ներկ, որը բոյա են անվանում։ [Դա] ներմուծում են Պարսկաստանից ու օգտագործում կաշիների ու բրդյա գործվածքների ներկման համար»[225]։

Իսկ Ղ. Ինճիճյանը, խոսելով Էրզրումի վաճառականության մասին, գրում է. «Վաճառականութիւն Էրզիռումայ ծաղկեալ է յոյժ. և գլխաւոր վաճառք են բերք նորա։ Առաքէ ի Գաղղիա, Յօլանտա և յԱնգղիա Թիֆտիկ այծի. առաքէ ի Մոսկով և անտի Պուխարա զմորթ ջրշան, ուստի կազմեն ի Պուխարա Ղազարայ մուշտակաց իւրեանց. զմորթ ջրի ոչխարի. ուստի մոսկովք կազմեն իւրեանց գլխարկս. առաքէ ընդ պէսպէս աշխարհս նաև զտմորձիս այսր կենդանւոյ, ի տաճկաց կոչեցեալ Գունաուզ հայասի, որ ի գործ ասի ի դեղորայս, և ի Կոստանդնուպօլիս յաւուր սուլթան Համիտի մի օխան վաճառէր 70 ղուռուշի մորթս գայլոյ, կուզ կենդանւոյ և կատուի, ի Պարսս առաքէ անօթս պղնձիս պախրոեղէնս։ Ինքն առնու յայլոց սահմանաց օսմանեան տէրութեան պէսպէս հրահալելիս, նիւթս գունոց. նաև երկաթ՝ որ գայ ի Սամախոռէ, որ ի յՈւռումելի, առնու նաև ի Մոսկովէն, զի որ ելանէ ի Կեղի սանճագ որպէս է նուազ։ Ի Թոխաթէն առնու պղնձեղէն անօթս, զի շինեալն իւր ստորին է քան զնորայն։ Ի փաշայութենէ Ախալցխայի առնու մանաւանդ շրջակայ ոլորտն Էրզիռումայ քաղաքին զանազան պտուղս, զոր օրինակ՝ խաղող, թուզ, նուռն, ձէթ և այլն։ Ի Պարսից առնու զպէսպէս վաճառս նորա, նաև զՀնդկաց, և ի Գաղղիոյ և ի Գերմանիոյ և այլն, զզանազան վաճառս նոցա»[226]։

---

224 Նույն տեղում, էջ 20։

225 *Pitton de Tournefort*. Relation d'un voyage du Levant, v. II, Lyon, 1717, p. 262.

226 Ղ. Ինճիճյան, էջ 63—64։

Ղ. Ինճիճյանի այս և այլ վկայություններից երևում է, որ արևմտահայ գավառներից արտահանության հիմնական առարկան եղել է հում նյութը և գյուղատնտեսական մթերքները, իսկ Եվրոպայից ներմուծել է արդյունաբերական ապրանքներ։ Ավելորդ չենք համարում բերել Ղ. Ինճիճյանի նաև այս վկայությունը. «...Գլխաւոր վաճառք Հայաստանեայց են բերք նորա, զոր օրինակ բամբակ, մետաքս, ասր և այլն, և ազգի ազգի արմտիք՝ ցորեան, գարի, սիսեռն և այլն։ Ի պտղոց՝ խաղող, չամիչ, չոր ծիրան և այլն, բուպ, այսինքն՝ պէքմէզ, նառտէնկ, գինի, օղի՝ հանեալ ի թթոյ, մեղր և մեղրամոմ, գազպէ, պանիր, թիւթիւն։ Եւ ի կենդանեաց՝ արջառ, ոչխար, այծ, երիվար ընտիր, և միս ապխտեալ ի Գայսէրիոյ, և ապխտեալ ձկունս մանաւանդ տառեխ։ Ի ներկոց առաքէ որդան կարմիր այսինքն շիշեկ, տորոն, գղմոր։ Եւ ի դեղորէից առաքէ խաշնդեղ մինչ յԵւրոպա, ուր յանուն պարսից կոչի, նոյնպէս և մամուտիե զոր յառաքէ յԻզմիր, և անտի յԵւրոպա, և զգունտուղ հայասի, պէսպէս մորթս արջառոյ ոչխարի այծի և գայլոյ, կուզ կենդանւոյ, և կատուի զմորթ ջրշան ի Մոսկովստան, և անտի ի Պուխարայ, զԹիֆտիկ այծի ի Գաղղիա, ի Հոլանտա, և յԱնգղիա, զսէկ այսինքն՝ սախդիան ի Գայսերիոյ առաքէ ասա և անդ»[227]։ Իսկ արտասահման առաքվող արդյունագործական հիմնական ապրանքներն եղել են հետևյալները. «Առաքէ և պէսպէս արուեստակերտ գործածս իւր ներկեալ կտաւ և մանած Մարաշոյ կտաւ և ալաճայ Արտուինոյ, ներկեալ կտաւ, Զիթ, Ալաճա և Պէհեազլը Տիարպէքիրոյ, կտաւ Աստառի Սեբաստոյ, Պօղասի Թոխաթու, ցփսի նաև բամբակախառն շինեն ի Մոկս, պէսպէս պղնձի անօթս էրզիռումայ, մանաւանդ Թոխաթու, ասուեղէն գուլպա որ ի Խզու, գորգ այսինքն՝ խալի, կապերտ որ է քիլիմ, շրէղ այն է շիրիշ զոր գործեն յողին խոտոյ, օճառ՝ զոր ի տեղիս տեղիս շինեն ճարպով որ լինի յոռի, և ի տեղիս տեղիս իւղով կտաւատի, որ լինի օճառ պատուական, վարդաւիշկ այսինքն՝ կիլ սուլի հրսնիմանսուրայ և այլն»[228]։

Անշուշտ, ինչպես նախորդ դարերում միջազգային առևտրի կարևոր հոդվածներից մեկը թանկարժեք քարերն էին, որտեղ հայ վաճառականները գլխավոր դեր էին կատարում։ Կոմս Մարսիլլին այդ մասին գրում է. «Թանկարժեք քարերը նույնպես դարձան առևտրի առարկա։ Հայերն այդ առևտրում առաջին տեղն են գրավում. նրանք

227 նույն տեղում, էջ 45—46։

228 նույն տեղում, էջ 46։

այդ քարերը ձեռք են բերում Պարսկաստանի այն մասերից, որոնք սահմանակից են Մոնղոլիային։ Այդ քարերը նրանք բերում են Ասիայի զանազան նավահանգիստները և ամենագեղեցիկները բերում են Եվրոպայի համար, իսկ նվազ արժեքավորները թողնում են Կոստանդնուպոլսի համար, ուր առաջներում քարերը գնահատվում էին միայն ըստ խոշորության։ Այժմ արդեն քրիստոնյաները սովորեցրել են թուրքերին ձեռք բերելու ճաշակ քարերի գնահատման հարցում»[229]։

Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի վաճառաշահ խոշոր կենտրոններում կատարվող առևտրի զգալի մասը գտնվում էր հայ վաճառականության ձեռքում։ «Հայերը փոքրասիական նահանգներում,— գրում է Մ. դ'Օսոնը,— շատ հաճախ են իրենց նվիրում վաճառականությանը։ Այդ նրանք են, և ոչ թե մուսուլմանները, որ կազմում են այդ հարուստ քարավանները, որոնք յուրաքանչյուր տարի գնում են Ասիայի տարբեր շրջանները, որպեսզի այնտեղ տարածեն աշխարհի չորս մասերի արտադրությունը»[230] (pour y répandre les productions des quatres parties du monde)։ «Ասիայի մեջ, — գրում է Պիտտոն դե Տուրնեֆորը,— Վենետիկի, Ֆրանսիայի և Գերմանիայի զանազան ապրանքների վաճառքով հայերն են զբաղվում»[231]։ Մի այլ տեղ, նույն հեղինակը, դիմելով չափազանցության, գրում է, թե «...հայերը միմիայն վաճառականությամբ են զբաղվում և բովանդակ կարողությամբ սրան են հետամուտ»[232]։

Արևելքի առևտրական խոշոր նավահանգիստ Զմյուռնիայում հայ մեծահարուստ վաճառականները հաճախ միանվագ գնում էին Եվրոպայից բերված ապրանքները։ Առ. Դավրիժեցին, օրինակ, երբ խոսում է նման մեծահարուստներից մեկի՝ Անտոն Չելեբիի մասին, գրում է. «Եւ էր սա ի քաղաքէն Բուրսայոյ՝ որոյ տուն և տեղիք և բնակութիւն անդ ի Բուրսայ էր։ Այլ և յԻզմիր քաղաքի ևս ունէր տունս և ապարանս, նա և ի Կոստանդնուպօլիս ունէր զտունս և զապարանս հոյակապս... Եւ էր իւր գործ վաճառականութիւն, որոյ պատճառէ երբեմն ժամանակաւ ի Կոստանդնուպօլիս լինէր, և երբեմն ի Զմիւռին լինէր, որ էր Իզմիր։ (Եւ յորժամ գային կարաւանք վաճառականաց՝ յաշխարհէն Պար-

229 *Le comte de Marsigli*, L'état militaire ottoman, Amsterdam, 1732, p. 50—51.

230 *M. d'Ohsson*, v. IV, p. 207.

231 *Pitton de Tournefort*, Relation d'un voyage..., lettre XX.

232 նույն տեղում։

սից ի քաղաքն Յիզմիր, զամենայն բեռինս կարաւանին միանգամայն գնէր, զինչ և լինէր, թէ ապրիշում և թէ թաֆարիզ, և միանգամայն վճարէր զգինն։ Սոյնպես և յաշխարհէն Ֆռանկաց՝ յորժամ դային ծովով նաւքն բարձեալ բեռամբ պատուական ստացուածովք, զնաւին բեռն միանգամայն ինքն միայն գնէր և վաղվաղակի զգինն վճարէր)»[233]։

Ֆրանսիացիները Արևելք էին արտահանում առավելապես պերճանքի առարկաներ, հախճապակի և բրդյա գործվածքներ[234], անգլիացիները՝ ամենաբազմազան գույների լոնդոնյան գործվածքներ, «...բացառությամբ սև, դեղին ու մոխրագույն գործվածքների, որոնք Թուրքերը երբեք չեն հագնում»[235]։ Վենետիկցիները և ջենովացիները առավելապես՝ մետաքսյա ու բրդյա «բարձրորակ գործվածքներ»[236] էին արտահանում դեպի Փոքր Ասիա։ Արևելքից դեպի Եվրոպա էին արտահանվում բացի գործվածքեղենի մի շարք տեսակներից, նաև մետաքսից ու մուշտակից ինչպես ասվեց առավելապես հում նյութ և սննդամթերքներ[237]։ Ահա այս տարանցիկ առևտրից գանձված մաքսերը, ըստ Մ. դ'Օսոնի, կազմում էին օսմանյան կառավարության եկամտի կարևորագույն հոդվածներից մեկը[238]։ Իսկ հայ վաճառականների ապրանքները դեպի Եվրոպա տեղափոխողները, Ժ. Շարդենի վկայությամբ, հաճախ հոլանդացիներն էին[239]։

Այսպես, հայ վաճառականները շրջում էին Եվրոպայի ու Ասիայի խոշոր վաճառաշահ կենտրոնները ու կնքում առևտրական մեծ գործարքներ։ Ուշագրավ է XVII դարի կեսերին Թոխատի խոշոր վաճառական Հակոբի թողած հիշատակարանը, որտեղ նա գրում է. «Դարձեալ յիշեցէք զանարժան մեղօք լի անպիտան վաճառական Յակոբ որ մինչև Ը ամ ի վերայ աշխարհիս շրջէ բազում ընչիւք ծախիւք վաճառէի զինչս իմս եթէ ծովով կամ ցամաքով, զամէնայն զերկիրս տեսանէի։ Ի յերկիրն Ֆռանկաց տեսայ բազում անգամ ի Կ. Պոլիս վաճառեցի զինչս իմ, ի յերկիրն Յունաց բովանդակ տեսի, մինչ ի Հալապ, Բաղդատ, Շամ, Երուսաղեմ տեսայ, այլև պարսից երկիրն զամէն մինչ ի

233 Առ. Դավրիժեցի, էջ 338—339։

234 *Michel Febvre*, L'état présent de la Turquie..., Paris, 1675, p. 286 (այսուհետև՝ *M. Febvre*).

235 Նույն տեղում, էջ 287։

236 Նույն տեղում։

237 Նույն տեղում, էջ 288—289։

238 *M. d'Ohsson*, v. IV, p. 237.

239 *J. Chardin*, t. I, Paris, 1811, p. 10.

Խորասան տեսայ։ Բ անգամ զերկիրն Օսբեկստուն տեսայ։ Այլև Ը անգամ ի յերկիրն Հնդստան գնացի»[240]։

Սակայն Թուրքիայում առևտրական հարաբերությունների զարգացումը մեծապես խանգարում էր քարավանային առևտրի անապահով լինելը։ Ժ. Տավերնիեն, խոսելով առևտրական ուղիների վտանգավոր լինելու մասին, գրում էր. «Ամբողջ Թուրքիան լի է ավազակներով, որոնք թափառում են մեծ խմբերով ու ճանապարհին սպասում վաճառականներին։ Եթե նրանք հանդիպում են հարուստ վաճառականների, ապա կողոպտում են նրանց ու շատ հաճախ զրկում կյանքից»[241]։ «Վաճառականները,— գրում է Մ. դ'Օսոնը,— ...անվերջ ենթարկվում են ավազակների հարձակումներին»[242]։ «Թուրքիան,— գրում է Մ. Ֆեբվրը,— աշխարհի ամենադժվարամատչելի երկիրն է ճանապարհորդների համար, ոչ այնքան ճանապարհների անսարքության... որքան բազմաթիվ վտանգների գոյության պատճառով։ Ամենուր հայտնվում են ավազակներ, որոնք կատարում են ամեն տեսակի ոճրագործություններ»[243]։ Միակ անվտանգ տեղը վաճառականների համար, ըստ Մ. դ'Օսոնի, այսպես կոչված, բեդեստեններն (քարվանսարները) էին «...ուր անվտանգությունը մեծապես ապահովված է»[244]։ Նահանգների կուսակալները, փոխանակ առևտրական քարավանների անվտանգությունն ապահովելու, հաճախ իրենք էին միաններում ավազակներին, թույլ էին տալիս քարավաններ կողոպտել մեծ ճանապարհների վրա՝ ավարը կիսելու պայմանով[245]։ Հ. Գրենվիլը իր կառավարությանը հղած իր զեկուցագրում, հատուկ անդրադառնալով այս հարցին, գրում է. «Ցամաքային երթևեկության համար (Թուրքիայում) որոշակի ապահովություն չկա, ինչպես դա ծովային երթևեկության պարագայումն է։ Այդ մասին կարելի է դատել հե-

240 Մատենադարան, Մագիստրոսի թղթ. № 30, էջ 144։ 1662 թ. զմյուռնացի մի այլ հայ վաճառական թողել է հետևյալ ուշագրավ հիշատակարանը. «...Աւարտեցաւ ի թվին հայոց ՌՃԺԱ ամին ի յունուար իա(21)յաւուր շաբաթու ի քաղաքն Զմիւռնիայ)... և այլ կայր գիրքս այս ի ձեռքն իմում, ոչ կարեցի աւարտել, զի էի վաճառող ընչից, երթայի քաղաքէ ի քաղաք յայլ երկիր որ կոչի Տալիա, ի քաղաքս Լիկուանա ի թագաւորութեան Գրանդուկայ Ֆերդինանդոս Սեղիկի...» (Նույն տեղում, թղթպ. № 36, էջ 79)։

241 *J. B. Tavernier*, t. I, p. 2.

242 *M. d'Ohsson*, v. IV, p. 208.

243 *M. Febvre*, p. 292,

244 *M. d'Ohsson*, v. IV, p. 209.

245 *M. Febvre*, p. 159—160.

16—497

տեսյալ օրինակով. մեծ վեզիր՝ Ռահիբ փաշան, որը Հալեպի փաշայի պաշտոնից (1755—1757) բարձրացավ վեզիրի աստիճանի, երբ, երեք հազար ձիավորներով, գալիս էր ստանձնելու իր պաշտոնը, ճանապարհին կողոպտվեց մի խումբ ավազակների կողմից, որոնք թվական առումով ավելի շատ էին և ավելի զինված»[246]։

Ղ. Ինճիճյանը խոսելով Շապին Կարահիսարի մասին, հաղորդում է. «Երկիր սորա զուարճալի և արգաւանդ, այլ առ ահի աւազակաց թողեալ կայ անգործ, քանզի այս դաշտ իբր ի բազմութիւնս է դադար և որչ աւազակաց, մանաւանդ յառաջ քան զսուլդան Համիտն, յորում ժամանակի աւազակք սփռեալ կային, որք յանձուկ վայրաց յարձակեալ ի վերայ ճանապարհորդաց կողոպտէին և սպանանէին»[247]։

Առևտրի ծավալման խոչընդոտներից մեկն էլ պիտի համարել այն բարձր մաքսերը, որ վճարելու էին օսմանահպատակ վաճառականները, այն ժամանակ, երբ եվրոպացիներից գանձվող մաքսն աննշան էր։

Ապրանքները ենթարկվում էին բազմազան ու բազմապիսի մաքսերի։ Ղ. Ինճիճյանը մանրամասն բերել է այն մաքսերի ցուցակը, որոնք գանձվում էին Էրզրումի սահմանը մտնող յուրաքանչյուր ապրանքից[248]։ Այդ ցուցակը Թուրքիայի տվյալ ժամանակաշրջանի տնտեսական պատմությունն ուսումնասիրողների համար որոշակի արժեք է ներկայացնում։ Մաքսատան պաշտոնյաները եղել են բավական խիստ, և ապրանքը թաքցնողները ենթարկվել են տուգանքի։ «Վաճառք եկեալք յօսմանեան սահմանաց,— գրում է Ղ. Ինճիճյանը,— որք մտանեն ի յԷրզրիում՝ ի վաճառիլ անդ, և ի յոչ վաճառիլն՝ ունին գնալ ի սահմանս պարսից, վճարեն 11 առ 100, այսինքն՝ որչափ ինչ տայ վաճառն եկեալ ի սահմանաց պարսից։ Վաճառ փախուցեալ յայսպիսի տրոց, ընդ իմանալն, տայ ի տուգանս այնչափ ինչ, որչափ ինչ ունէր տալ ի վճարելն զմաքս. յորմէ մի մասն առնուն սառաֆն, քեաթիպն և արաբեճի պաշին, որ է տիտապան, իսկ մնացեալ մասն առնու մատնիչն, այսինքն ի 10 զուռուշէն, զերիսն առնուն վերադրեալ երեք անձինք, իսկ մնացեալ եօթն զուռուշ առնու մատնիչն»[249]։

Յուրաքանչյուր նահանգ ուներ իր սեփական չափն ու կշիռը։ Դրամն անվերջ արժեքազրկվում էր։ Բարոն դե Տոտտը իր հուշերում այս մասին գրում է. «Դրամն այն աստիճան է կորցրել որակը, որ

246 *H. Grenville*, p. 55.

247 Ղ. Ինճիճյան, էջ 327.

248 Նույն տեղում, էջ 72—75։

249 Նույն տեղում, էջ 72։

կեղծ դրամահատներն այսօր Թուրքիայում աշխատում են ժողովրդի օգտին. ինչպիսին էլ լինի նրանց ձուլած դրամը, միևնույն է Մեծ Տիրակալի (սուլթանի) հատածը ավելի ցածր է իր արժեքով»[250]։

Կարևոր խոչընդոտներից մեկն էլ, անշուշտ, Փոքր Ասիայի տարբեր մասերում ու մասնավորապես արևմտահայ գավառներում առաջացած քրդական դերեբեյությունն էին։ Դրանց ստեղծած քաոսի ու անիշխանության պայմաններում երբեմնի վաճառաշահ կենտրոններ՝ Վանը, Բիթլիսը, Մուշը, մինչև իսկ, որոշ առումով, Դիարբեքիրը ոչ միայն առևտրական աշխուժացում չեն ապրել, այլ, ընդհակառակը, անկում են ապրել։ Մատնանշված քաղաքները հիմնականում բավարարել են գյուղատնտեսության կարիքները։

Չնայած նման դժվարություններին ու խոչընդոտներին, XVI—XVIII դարերում Թուրքիայի ներքին և արտաքին[251] առևտրի ասպարեզում հայ առևտրականները ունեցան զգալի հաջողություններ։ Խնդրո առարկա ժամանակաշրջանի հայկական աղբյուրներում հաճախակի են հիշատակվում հայ հարուստ վաճառականների անունները, աչքի են ընկնում հատկապես Վանի հայ վաճառականները։ Եվ պատահական չէ, որ Էվլիա Չելեբին, սխալ ընդհանրացումով, նշում է, որ Վանի «հայերը հարուստ վաճառականներ են»[252]։ Վանի հայ վաճառականները հայկական աղբյուրներում հայտնի են «գոլաթաւորք» անունով (մեծահարուստ իմաստով)։

Հայ վաճառականության դերը մեծանում է հատկապես XVI դարի վերջերից սկսած, երբ Օսմանյան կայսրության մեջ վաշխառուական կապիտալը նորընթաց մի զարգացում է ապրում։ Ունենալով դրամա-

250 *Tott baron de*, Mémoires sur les Turcs..., Amsterdam, 1784, t. I, p. 109.

251 Նշենք, որ արտաքին առևտուրը բացառապես գտնվում էր օտարերկրացիների ձեռքում. հայ վաճառականները միայն համագործակցում էին նրանց հետ (*M. d'Ohsson*, v. IV, p. 211. Le commerce extérieur est presque tout entier dans les mains des étrangers):

Արտաքին առևտուրը կենտրոնացված էր օտարերկրացիների ձեռքում, այսպես կոչված, կապիտուլյացիաների հիման վրա, երբ օտարերկրացիները Թուրքիայում ձեռք էին բերում լայն արտոնություններ. Թուրքական դատարանը իրավասու չէր դատել օտարերկրացիներին, նրանք վճարում էին աննշան մաքս (ապրանքի արժեքի միայն 3 տոկոսը և այլն)։ 1740 թ. ֆրանսիացիներին հաջողվեց Թուրքիայից կորզել հավիտենական կապիտուլյացիա (այդ մասին տե՛ս *F. Abelans*, L'évolution de la Turquie dans ses rapports avec les étrangers, Paris, 1928, pp. 54—55)։

252 "Evliya Çelebi seyahetnâmesi", seriyi hazirlayan Reşat Ekrem, Istanbul, 1944, s. 45.

կան մեծ միջոցներ, ֆինանսավորելով սուլթանի պալատականներին, և երբեմն էլ հենց իրեն՝ սուլթանին, վաշխառու վաճառականության այս թևը Արևմտյան Հայաստանում և առհասարակ Առաջավոր Ասիայում կոչվում էր «չելեբի»[253]։ Նրանք մեծ ազդեցություն էին ձեռք բերել ղեկավարող շրջանների վրա։ Մեծահարուստ Անտոն Չելեբիի մասին Առ. Դավրիժեցին գրում է, որ նա «...յոյժ երևելի և հռչակեալ այնքան, մինչ զի յայտնի էր ի դուռն Թագաւորին Օսմանցւոց, նա և ի հեռաւոր աշխարհս ի Ֆռանկաց»[254]։ Չելեբիները կազմում էին հայկական արիստոկրատիան և, ըստ երևույթին, արևմտահայ առևտրական բուրժուազիայի մյուս խոշոր թևը՝ խոջայությունը[255], ձգտել է ձեռք բերել ազնվականական «չելեբի» բարձր տիտղոսը[256]։ Հետաքրքրական է նշել, որ Առ. Դավրիժեցու մատնանշած Մարխաս Չելեբին «...խանենց խոջայ Թումայի որդին»[257] էր։ Այս Մարխաս Չելեբին այն աստիճան հարուստ էր, որ Վարագա վանքից կողոպտված Սուրբ Նշանի համար քուրդ բեկին առաջարկում է յոթ հազար ղուռուշ։ «Եւ ի հազար ղուռուշին սկիզբն արար Մարխաս Չալապին տալով, և եհաս մինչ յեօթն հազար ղուռուշ, զի տացէ զսուրբ Նշանն և Սուլեյման բէկն ոչ էր»[258],— գրում է նրա մասին Առ. Դավրիժեցին։

---

253 «Չելեբին» (Թուրք.— چلبى) ազնվական մակդիր էր, որը տրվում էր սուլթանազուն իշխաններին և բառացի նշանակում է «աստվածաշուք», «դիցաշուք»։ Չելեբիների մասին ավելի մանրամասն տե՛ս Հ. Սիրունի, էջ 483—489։

254 Առ. Դավրիժեցի, էջ 338։

255 «Խոջա» (պարսկ.— (خواجه) նշանակում է «տեր» «իշխող», «հարուստ» և այլն։ Իրանում խոջա էին անվանում հարուստ վաճառականներին. նույն իմաստով էլ օգտագործվում էր Թուրքիայում։ Նշենք, որ XVI—XVII դարերի հայկական ձեռագրերի հիշատակարաններում հաճախակի հանդիպող խոջաներից ոչ բոլորն էին, անշուշտ, խոշոր վաճառականներ։ Երբեմն գրիչներն օգտագործում են «խոջա» բառը հարգանք մատուցելու քիչ թե շատ հարուստ ընտանիքի որևէ անդամի։ Երբեմն, կարծես, ընդգծելու համար, թե խոսքը վերաբերում է խոշոր վաճառական խոջայի, գրիչները անում են նման նշումներ՝ «Պարոնաց պարոն խոջայ Ըռաւհիջան», «Մելիք սօլթան խոջէ» և այլն։ Եվ, առհաստատակ, պետք է նշել, որ աղբյուրներում բազմիցս հիշատակվող «մելիք», «պարոն», «իշխան», «տեր» անվանումները կորցրել են իրենց նախկին բացարձակ իմաստը։ Այդ անվանումների տակ պետք է հասկանալ առևտրական բուրժուազիայի խոշոր ու միջին խավի ներկայացուցիչներին։ Հայ իրականության մեջ «խոջա» տերմինի նշանակության մասին տե՛ս Հ. Սիրունի, էջ 476—483։

256 Տե՛ս Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 67։

257 Առ. Դավրիժեցի, էջ 513։

258 Նույն տեղում, էջ 513—514։

XVII դարի հայ չելեբիների մեջ նշանավոր էր Աբրահամ Չելեբին, որը հայտնի էր «Ապրօ Չելեպի» անունով։ XVII դարի ձեռագրերի հիշատակարաններում նա հաճախ է հիշատակվում որպես եկեղեցիների վերակառուցողի։ Ապրո Չելեբին դիրք ու ազդեցություն է ունեցել պետական ներկայացուցիչների մոտ։

Նշանավոր է եղել նաև խոջա Երեմիայի որդի Մաղաքիա Չելեբին, որը մեծ վեզիր Մելիք Ահմեդի միջոցով վերացնել է տվել հայ եկեղեցիների վրա նշանակված «Քյուրեքչի ակչեսի» («Թիավարական տուրք») կոչված միանվագ հարկը Կ. Պոլսում։ «Մաղաքիա Չելեպի որդի երևելի իշխանին Երեմիայի Համթեցւոյ՝ այր պիտանի ի բազում գործս ազգիս Հայոց առ մեծամեծ իշխանաւորս Հազարացւոց, որ ի ժամանակս Մելիք վեզիրին պակասեցոյց քիւրեկճիի վարձ ի վերայ եկեղեցացն, որոյ վասն բազում լինէր աղմուկ շփոթի յազգս մեր»[259]։

Առ. Դավրիժեցին հիշատակում է նաև մի այլ երևելի հայի անունը՝ Շահին Չելեպին, որ «...էր այր նշանաւոր ի դրան Թագաւորին»[260]։

XVII դարի չելեբիների մեջ, ելնելով աղբյուրների տվյալներից, ամենաազդեցիկները եղել են Հալեպցի Պետիկ և Սանոս Չելեբի եղբայրները։ Սիմեոն Լեհացին, 1616 թ. Հալեպում հանդիպելով Պետիկ Չելեբուն, նրա մասին գրում է հետևյալը. «Զի էր Պետիկն մեծ ոմն երևելի, զի որպէս փաշայ մի շրջէր երեսուն, քառասուն եասախչով, ունէր ենկիչերիք, սբահիք, և ասին թե քսան և չորս ղուլամ ամալ ունի, կոմրուկն, մուխթասիպութիւնն, սուպաշայութիւնն, խաներն, համամնին, և այլն ամենայն նորա ձեռքն էր»[261]։

Սանոս Չելեբին սուլթան Մուրադ IV-ի հրամանով նշանակվել է էրզրումի մաքսապետը և այդ պաշտոնավարության ընթացքում գերությունից ազատել է ավելի քան հազար հայ՝ վճարելով նրանց փրկագինը[262]։

Հայ խոջաների մեջ էլ կային մեծահարուստներ, որոնք նույնպես, ինչպես չելեբիները, մեծ ազդեցություն ունեին սուլթանական պալատի վրա։ Այդպիսիներից էր, օրինակ, հայ խալիֆա Աստվածատուրը։ «...այլ տէր և թիկունս կայր,— նրա մասին գրում է Գր. Դարանաղցին,— յարքունուստ եւ շատ հոգաբարձուք ի դրան արքային, նախ՝ խալիֆայ Աստուածատուր հայ ազգաւ, որ սիրելի էր յաչս ամենայն արքայական

---

259 «Դիւան հայոց պատմութեան», հ. ժ, էջ 84։

260 Առ. Դավրիժեցի, էջ 281։

261 Սիմէոն գպրի Լեհացւոյ «ուղեգրութիւն», էջ 318։

262 Հ. Սիրունի, էջ 488։

քունեացն թագաւորին՝ յաւուրս սուլթան Օսմանին...»[263]։ 1610 թ. Երուսաղեմի հայոց վանքի պարտքերի մարման գործում էական աջակցություն են ցույց տվել Հալեպում գտնվող «...անուանի խոջայս և վաճառականս»[264], որոնց թվում՝ խոջաներ Ախիջանը, Ավետը, Ղարիբջանը, Սիրաքը, Փոլատը՝ Վանից, Առաքել, Ավետիք, Զաքարե, Ոսկան, Սաֆար, Սուքիաս և այլք Ջուղայից, Ջեխիջան Բաղիշեցին, Թումաջան Ամդեցին, Պաղտասար Ուռհայեցին, Մագսուտ, Պետիկը և Վանտին՝ Հալեպից[265]։ 1687 թ. Խոջա Նահապետը Ամստերդամում իր սեփական տան մեջ հատուկ տեղ է հատկացնում հայկական տպարանին[266]։

XVII դարի Կ. Պոլսի հայ խոջաների մեջ հիշատակվում է վանեցի խոջա Ռուհիջանը[267], երզնկացի խոջա Հովսեփը և որդին՝ խոջա Հովհաննեսը[268], խոջա Դավիթն և այլք։ Սրանց մեջ ամենանշանավորը եղել է խոջա Ռուհիջանը, որը մեծ դեր է կատարել իր ժամանակաշրջանի հայ հասարակական կյանքում։ XVII դարում Կ. Պոլսի հայ խոջաների կենտրոնը գտնվել է Խոջավանում։ «Ամենայն վաճառականք հայերք շատք կան անդ յամենայն աշխարհաց»[269],— գրում է Գր. Դարանաղցին։

XVI դարի տաղերգու Հովսեփ Սեբաստացին հետևյալ կերպ է փառաբանել հայ խոջաներից մեկին՝ Խրտրին.

Հանց գիտուն մարդ զարմանալի
  չէ տեսեալ յոք ժամանակի,
Որ թէ հազար բան նա խօսի
  հազարէն մէկ բան դալատ չունի,
Եւ հոգեսէր մարդ և բարի,
  պարկեշտ կացօք ըստ օրինի,
Եւ ընչաւէտ առաքինի
  առատաձեռն ի պարգևի,
Փոքր անձն մարդ է հանդիսի
  խելօքն արագ իմաստիւք լի,
Հազրճուապ և խիստ արի
  չկարէ մարդ տալ պատասխանի...

263 Գր. Դարանաղցի, էջ 202։
264 «Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն», էջ 276։
265 Հ. Սիրունի, էջ 478։
266 Նույն տեղում։
267 Առ. Դավրիժեցի, էջ 242—245։
268 Գր. Դարանաղցի, էջ 361։
269 Նույն տեղում, էջ 168—169։

Շատ ռամիկ մարդ և յոռի
  Կ'ասեն նմա թէ չէ բարի,
Կամապաշտիցն յամառի
  Եւ անգիտաց յիմար թուի,
Իսկ յիմաստնոցքն նա գովի,
  Խոնա Խրտրը մեծարելի[270]։

Անդրադառնալով խոջաների ունեցած դիրքին ու ազդեցությանը հայ իրականության մեջ ու ակնարկելով Հովսեփ Սեբաստացու խոջա Խրտրին գովերգող այս բանաստեղծությունը, Աշ. Հովհաննիսյանը գրում է. «Խրտրի մեջ Հովսեփը անձնավորում է արևմտահայ միջավայրում դիրք ստացած խոջաների իդեալական տիպարը։ XV—XVI դարերից ի վեր այստեղ խոջաները նշվում են որպես ազդեցիկ հայ ռեսներ ու տանուտերեր, եկեղեցու ու վանքի վերանորոգողներ ու նվիրատուներ, գրչագրերի պատվիրատուներ և այլն։ Իրենց ձեռքն առնելով հանրային գործերի ղեկը՝ հաճախ նրանք մեծարվում են որպես «խնամակալք ընդդեմ այլազգեաց»։ Հավանորեն նրանց մեջ կային այնպիսիները, որոնք իրոք անդրադառնում էին եկեղեցու և ժողովրդի նվաստացած վիճակին և երազում նրանց բարվոք ապագան»[271]։

Հ. Ս. Անասյանը «XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում» մենագրության մեջ չելեբիներին ու խոջաներին փորձում է ներկայացնել որպես առանձին դասեր և մինչև իսկ հակադրում է մեկը մյուսին։ Մենք հակված ենք ենթադրելու, որ այս հարցում ավելի ճիշտ մոտեցում ունի Հ. Ճ. Սիրունին։ Նա գրում է. «Մեր կարծիքով ուրույն դասեր չէին չելեբիներն ու խոջաները։ Չելեբիները նախկին խոջաներ էին բոլորն ալ. նախկին վաճառականներ և սեղանաւորներ, որոնք որոշ դիրքի հասնելէ հետո կձգտէին ձեռք ձգել չելեբիի տիտղոսն ալ, ավելի տիրական դիրք գրաւել պետական գործերուն մեջ և ապահովել անոնց հեղինակությունը և դիրք նաև հայ հասարակությանքներէն ներս»[272]։ Եվ ճիշտ է, անշուշտ, Հ. Սիրունին, երբ նշում է, թե «Շատերը հայ չելեբիներէն հայ խոնաներու զաւակներ էին»[273]։ Հոր կուտակած հարստությունը, ըստ երևույթին, հիմք պիտի հանդիսանար ապահովելու պետական բարձրաստիճան պաշտոնյաների համակրանքն ու ստանալու չելեբիական տիտղոսը։ Ամթեցի խոջա Երե-

270 Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 237։
271 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. Բ, էջ 38։
272 Հ. Սիրունի, էջ 491։
273 Նույն տեղում։

միայի որդին էր Մաղաքիա Չելեբին, իսկ Մարխաս Չելեբին վանեցի խոջա Թումայի որդին էր և այլն։

XVIII դարում հայ չելեբիներին փոխարինելու եկան, ինչպես նշվեց, ամիրաները[274]։ «Թուրքահայերուն մէջ 1750 էն ասոնց է,— գրում է Հ. Մրմրյանը,— որ կը շեշտուի այս մակդիրն [ամիրա] աւելի պաշտօնապէս առհասարակ։ Անկէ առաջ յիշատակագրուած կը տեսնենք՝ հին թուրքահայերուն մէջ աւելի գործածուած Հօճա, Չելեպի, Տէօվլեթաւոր, Մահտեսի, Աղայ և այլն պատուանունները»[275]։

Համաձայն նույն Հ. Մրմրյանի ուսումնասիրության, ամիրաների մի մասը արևելահայ ծագում են ունեցել, եկել են տարբեր ժամանակ Երևանից, Ագուլիսից, Ջուղայից, Թավրիզից, Իսպահանից և այլն։ Գալով Կ. Պոլիս և Զմյուռնիա, նրանք «հաստատեցին Փոքր ամիրայութիւններ մը Զորպաճի, Մահտեսի և այլն անուններով։ Եւ ասոնք ալ... յարելով օսմանեան մեծ անձնաւորութեանց ժամանակին բանուկ և անցուկ միջոցներովը՝ գլուխ կեցան պետական գործերու (ճարտարապետութեան, պատկերահանութեան, ոսկերչութեան ու սեղանաւորութեան) Աղայ, Հոճայ Պաշի անուններով՝ իբր հաւատարիմներ տէրութեան, և՝ իբրև դարձեալ այնպիսիներ՝ պետ կարգեցան ու կոթողեցան տոհմային ալ գործերու՝ ճոճայ, միւթեվելլի կամ չէլէպի անուններով։ Ամիրայութեան ծագումն այսպես կը գտնենք Կ. Պոլիսի և Փոքր Ասիայի ու Կիպրոսի մէջ»[276]։

Ամիրաներից ոմանք հասել են մինչև պատրիարքական աստիճանի։ Այսպես, «1679-ի մեծատուններէն էքմեքճի պաշի՝ Սարգիս՝ աշխարհիկ վիճակովը բարձրացաւ մինչև պատրիարքական տեղապահութեան, ապա ընդունելով եկեղեցական վիճակ՝ եղաւ պատրիարք»[277]։

Դարասկզբին՝ 1700—1707 թթ. ընթացքում, «...շատ ազդեցիկ էր Խօճա Մարգար Պարթևազն գործօն և հարուստ հայ մը, որ ջերմ կուսակիցն ալ էր Աւետիք պատրիարքի»։ 1702 թ. հիշատակվում են՝ «...Իբր ազդեցիկ ու մեծատուն անձնաւորութիւններ՝ Թիւթէլ օղլու Յովհաննէս, Սահապայար Երեմիա, Թիւթէլ օղլու Յարութիւն և Էսկի օղլու Նիկողոս, որ եղան նաև հակառակորդներ Աւետիք պատրիարքի[278]։ Սրանք, մի շարք այլ ամիրաների հետ դաշնակցած, տապալում են Աւետիք պատրիարքին[279]։

Դարի առաջին քառորդում, Երուսաղեմի սբ. Հակոբ վանքի պարտքերի մարման հարցի հետ կապված աղբյուրներում, հիշատակվում են հետևյալ հայ մեծատունների անունները. «Պոլսեցի Մահտեսի Իսրայէլ, Մահտեսի Լուիթֆի, Ակնեցի Երեւանենց Մահտեսի Սեղբեստրոս Մանուէլեան՝ Պաղիրկեան պաշի, որ էր ամենաճոխ սեղանաւոր, ու եղաւ վաճառապետ արքունի, իր ժամանակին Կ. Պոլսի մէջ ամէնէն մեծատուն հայը, որոյ հարստութիւնն առակաւորեալ է ցարդ հայ ժողովուրդին բերանը»[280]։

Այս նույն ժամանակահատվածում հիշատակվում է նաև Կեսարիայի Դարսիախ գյուղից Արապօղլու Մելիտոնը՝ «...ճարտարապետ վեհ. Սուլթան Ահմետ Գ, որ Բ. դռան ալ մեծարուն էր»[281]։ Աչքի ընկնող վաճառականներից էին նաև Հովույան Մահտեսի Հարութիւնը՝ «...Նախահաւն Հովուեանց տոհմին», կեսարացի Սարգիս Խալֆան, «...որ ժամանակին արքունի ճարտարապետն ու Ղալաթիայի եկեղեցին վերաշինողն ու միւս եկեղեցիներուն ալ պաշտպան հոգաբարձուն էր»[282]։ Սրանք բոլորն էլ աղբյուրներում հիշատակվում են «Պերճաշում» մակդիրով։

Հովհաննես Կոլոտ պատրիարքի օրոք հիշատակվում են Բաստեանց տոհմի (Բաստօղլու) ներկայացուցիչները[283]։ Հենց նույն պատրիարքի ժամանակ աչքի ընկնող հայ կաթոլիկ վաճառականներից են եղել «...Ճեվահիրճի Մաղաքիա Չելեպին, ազգական Քեսմիւրճեան Երեմիա Չելեպիին, և Սեղբոսեան Յովհաննէս Չելեպի կամ Մարգիզ՝ մատենագիր ամիրան»[284]։ Սրանք տարբեր առիթներով հանդես են եկել պատրիարքի դեմ։

1730—1745 թթ. ընթացքում «...փայլած է Կ. Պոլսի հրապարակին վրա, Բաղեշէ գաղթական մեծատուն Եուսուֆ չելեպին՝ Կ. Պոլսի Եուսուֆեանց նախահայրը, որ և հիմնագործը կը համարուի Կ. Պոլսի նշանաւոր հայ սահաթճիներուն, ինքը թուի թէ իր ժամանակի

274 «Ամիրա» (արաբ.— امير) բառը առաջացել է միր, էմիր բառերից, որը նշանակում է հրամանատար, իշխան և այլն։

275 Հ. Մրմրյան, Մասնական պատմութիւն հայ մեծատուններու 1400 էն 1900, Կ. Պոլիս, 1910, էջ 8։

276 Նույն տեղում, էջ 22—23։

277 Նույն տեղում, էջ 49—50։

278 Նույն տեղում, էջ 51։

279 Նույն տեղում, էջ 52։

280 Նույն տեղում։

281 Նույն տեղում։

282 Նույն տեղում։

283 Նույն տեղում, էջ 57.

284 Նույն տեղում։

հնչուն ժամացոյցները բերել կուտար գլխաւորապես Անգղիայէն ու կը կարելէր՝ պատկառելի հարստութեան մը հետ՝ պատկառելի անուն և դիրք»[285]։

XVIII դարի 50—60-ական թվականներին կառուցվում է Կ. Պոլսի նշանավոր Մեծ Նոր-խանը՝ Զաքմաքչիլար Յոգուշիի վրա, որը դառնում է «...Վալիտէ խանի հետ՝ գլխաւոր կեդրոն ու օթևան սեղանաւոր և վաճառական հայ մեծատուններուն, մանաւանդ սեղանաւորներուն, որ այդ հսկայական շենքերուն մէջ աւելի հսկայակուտ առևտրական ձեռնարկներով...։ Մեծ Նոր-խանը մանաւանդ՝ հայ ամիրաներուն խորանն եղած է հարիւր տարիի չափ»[286]։ Այս ժամանակաշրջանում աչքի ընկնող ամիրաներից են եղել Մուրադյան Բաղդասարն ու նրա որդին՝ Գասպարը[287]։

Սակայն դարի կեսերի ամենախոշոր գործիչն եղել է «...Մեծ գանգարը 18-րդ դարուն, Ակրնցի Եաղուպ աղան, որ նորոգած՝ է հիմէն Մուշի Ս. Կարապետի վանքը»[288]։ Հակոբ Նալյան պատրիարքը նրան անվանում էր «...Վաճառապետ արքունի, Նոր Յովսեփ գեղեցիկ ժամանակին և երկրորդ Զօրաբաբել տաճարաշէն»[289]։

Յաղուբ ամիրայի ժամանակ «...փայլում են նաև Ապուչեխցի Ազարեան ամիրաները, որոնց տապանաքարերը կը կենան տակաւին Սկիւտարի հայ գերեզմանատունը, Ակրնցի Մոմճի Սարգիս ամիրան՝ խասի գիւղի Մոմճեաններուն նախահայրը...»[290]։

Յաղուբ ամիրայից հետո «...փայլած են մեծ վեզիրին վաճառապետ (պազիրկեան պաշի) Պողոս Ղազար և Ասլան ամիրաները, որ և բանտարկուեցան յետ մահուան վեզիրին և ազատեցան բարեխօսութեամբ մը, բայց Ղազար ամիրան ինկաւ ու իրենց երեքին միանգամայն յաջորդեցին Ճանսուղեան Յարութիւն, Սարգիս ոմն և Սաքսեան Մարտիրոս»[291]։

XVIII դարի 60-ական թվականներին նշանավոր հասարակական գործիչ էր նաև «...արքունի ոսկերիչ ու դրամապետ Տիւզ Միքայել

283 Հ. Մրմրյան, Թուրքահայոց հին վաճառականութիւն և վաճառականք, Կ. Պոլիս, 1908, էջ 10։

286 Հ. Մրմրյան, Մասնական պատմութիւն հայ մեծատուններու..., էջ 66։

287 Նույն տեղում, էջ 59։

288 Հ. Մրմրյան, Թուրքահայոց հին վաճառականութիւն..., էջ 66։

289 Նույն տեղում։

290 Հ. Մրմրյան, Մասնական պատմութիւն հայ մեծատուններու..., էջ 61։

291 Նույն տեղում, էջ 65—66։

ամիրան՝ հայ հռոմեականը», որը դարձավ հռչակավոր Տյուզ ամիրաների նախահայրը[292]։

Դարի 80-ական թվականներին հիշատակվում են «...Պալգարանցի Մահտեսի Յարութիւն ամիրան, որ էր ժամանակին Սարաֆիյար Քեհեասին ու ամենէն հզորն հանրային գործերուն մէջ։ Այս ժամանակ կը յիշուի նաև Ճեղայիրցի Գափտան Հասան փաշայ մը, ծագումով հայ, որ Կ. Պոլիսի մէջ շատ շինուածոց հետ՝ շինեց նաև նավային մեծ զօրանոց երկու տարուան մէջ և ծաղկեցուց նաւավարութեան ուսումը նոր կարգերով։ Ռոտոսթոցի էր ինք, և տղայ հասակին գացած իր ճեղայիր, ուր քաջութեամբ և վարչական կարողութեամբ նշանաւոր եղաւ, անկէ մղուեցաւ Ապանիա և ապա ի Պոլիս ուր հասաւ մեծ պաշտօններու»[293]։

Դարավերջին՝ «Հայ մը Թիւլպենտի վրայ ձեռագործ նկարակերտութեան դիւան ըրաւ ի Քուշկունճուք, որով նոյն կողմերն և ի Սկիւտար եազմանիութեան արհեստը բարգաւաճելով՝ մինչև ցայսօր հարիւրաւոր հայ աղքատիկ ընտանեաց ապրուստին պատճառ եղաւ»[294]։ Ամիրաների շարքում հիշատակվում է նաև Թուրքիայի հռչակավոր պատմաբան-արևելագետ Մուրաջեա դ'Օսոնը (Հովհաննես Հիսարյանը)[295]։

Հայ ամիրաների ու խոշոր վաճառականների ձեռքում կենտրոնանում էր հսկայական հարստություններ, որոնք կարող էին ձեռք բերվել միայն ժողովրդական լայն զանգվածների դաժան շահագործման միջոցով[296]։ Արծաթասիրությունը, փառամոլությունը, նենգությունը, ժողովրդական լայն զանգվածների թշվառ վիճակի նկատմամբ ողած

292 Նույն տեղում, էջ 64։

293 Նույն տեղում, էջ 72—73։

294 Նույն տեղում, էջ 75։

295 Նույն տեղում, էջ 77—78։

296 Ամիրաների առևտրական հարստությունների մասին մասնակի գաղափար կարելի է կազմել Երուսաղեմի սբ. Հակոբ վանքում փորագրված այն հիշատակարանից, ուր խոսվում է Երուսաղեմի տարբեր վանքերին ամիրա Յաղուբ աղայի ու նրա տիկնոջ՝ Սողոմեյի, կատարած նվիրատվությունների մասին։ Ավելորդ չենք համարում մեջբերել այն. «Նուէրք Եաղուպ աղայի ի գանձս Ս. Աթոռոյն և Ս. Տեղեաց Քրիստոսի յերուսաղէմ՝ ի յիշատակ իւր և ազգատոհմին իւրոյ։ 1 արծաթի ջահ 56 օքքայ՝ կախեալ ի մէջ գմբեթի եկեղեցւոյն Ս. Յակոբոյ և ի ներքոյ նորին կանթեղք 8. 1 մեծ և պատուական վարագոյր Աւագ խորանին ոսկեթել ասեղնագործ, յորոց վերայ տեսանին կերպարանք վիշապաց. 2. ծաղկեայ տիպայ գոգնոց, 1 իւղաբերից շուրջառ, 1 ատոֆա վարագոյր. Ս. գլխադրի, և որմոց նորին պատկերք տնօրէնութեան փրկչին, գործ սքանչելի՝ հանդերձ արծաթի շրջանակաւ և վանդակաւն. 1 արծաթ կանթեղ ի մատուռն Մակարայ Հայրապետի. 1 ոսկեթել թաւիշագործ (կլապիրան աթլաղ տօրումայ) վարագոյր՝ Ս. Էջմիածինի խորանին. 1 պղինձ ծորակ տնտեսական, երկա-

անտարբերությունը։ տիրապետող այս վերնախավի մեծագույն մասի կենցաղի բնորոշ գծերն էին։ Վաճառականությունը գերազանցապես մայրաքաղաքում,— գրում է Հ. Մրմրյանը,— զերծ չէր «...ստոր կիրքերէ, արծաթասիրութենէ, փառամոլութենէ ու նախանձընդդեմ հակառակութիւններէ, որ պատճառ եղան իրենց բարեկեցիկ թշուառութեանց»[297]։ 1794 թ. հրատարակած մի բանաստեղծության մեջ Ղ. Ինճիճյանը սուր քննադատության է ենթարկում հայ ամիրաների, մեծ ու միջին վաճառականների հոռի վարքագիծն ու կենցաղը, նրանց տգիտությունը։

Ունին հնշտալի՝ տեղիս ի զընին,
Ընդ նեղուց ծովուն՝ յամառանոցին
Այլ չունին ինչ սիրտ՝ կեանք բանականին
Ըղմայելել նովա՝ ի գործ Արարչին։

Առաքինութիւնք բարոյականին
Կրթողականօք՝ ըզկերս սանձողին,
Օտար են սոցա՝ յանօգտից սակին,
Որք են դեղք կենաց՝ երկարօղք նըմին։

Ստանան գոհար՝ առ ի զարդ անձին,
Որ յինքեան է զարդ՝ ոչ ըստացողին,
Մերժեն ըզբարին՝ բարոյականին,
Որ մարդոյն է զարդ՝ ւ՝ ոչ ինքն ինքնին.
Ոմանց լիացեալք՝ և յաւելորդին
Ողբան չունել ինչ՝ ըզկարեւորին,
Քաղց ծարաւ ընչից՝ նախանձ ընկերին,
Ոչինչ ցուցանէ՝ զոր յանձին ունին։
Այլ արդեամբք ողբան՝ չունել զոր ունին,
Ունին իզձ անյագ՝ փոխանակ ընչին,
Ոչ իշխեն ընչին՝ այլ յըզձից իշխին[298]։

* * *

XVI—XVIII դդ. Արևմտյան Հայաստանում հայ գյուղացիությունը կազմում էր բնակչության ճնշող մեծամասնությունը։ Բացի հայերից, այնտեղ ապրում էին թուրք, քուրդ, թուրքմեն և այլ գյուղացիներ, որոնք ըստ երևույթին, բաժանում էին միևնույն՝ շահագործվող դասակարգի ճակատագիրը։ Նրանք հայտնի էին մի ընդհանուր անվամբ՝ «ռայաթ». այդ հասկացողության տակ աղբյուրներում նկատի է առնվում գյուղացիությունն առհասարակ, անկախ նրա ազգային ու դավանական պատկանելիությունից։ Հետագայում, սակայն, «ռայա» կամ «ռեայա» տերմինը, որը արաբերեն «ռայաթ» բառի հոգնակի ձևն է, Թուրքիայում ստացավ նոր իմաստ՝ որպես «ջիզիե» (գլխահարկ) վճարող կամ ոչ մուսուլման հպատակ նշանակությամբ[299]։

Կլիմայական բարենպաստ պայմանների շնորհիվ Արևմտյան Հայաստանի շատ նահանգներում հողագործությունից առատ բերք էր ստացվում։ Այդ մասին են վկայում XVI—XVIII դարերի աղբյուրները։ Խոսելով Էրզրումի դաշտի մասին, Էվլիա Չելեբին գրում է. «Բերդի հյուսիսային և արևմտյան կողմերում Էրզրումի դաշտն է, որն ըստ երկարության ու լայնության երկուական փարսախ տարածությամբ կանաշապատ ու բերքառատ մի դաշտ է և ունի հարյուրավոր բարեշեն գյու-

---

Թեայ արտաքին մեծ դուռն Վանայ (որ է երկաթագործութեան գլուխ-գործոց), Ս. Յարութեան, 1 ոսկի կանթեղ 600 տրամ ի վերայ գերեզմանին Քրիստոսի, 1 շուրջառ, 1 սաղաւարտ, 1 վակաս։ Ս. Յովհաննէս եկեղեցոյ՝ 1 լեհ չիթ վարագոյր, 1 տիպայ վարագոյր, 1 տիպայ գոգնոց։ Ա. Թորոս եկեղեցոյ՝ 1 արծաթ ոսկեղոծ սկիհ, 1 տիպայ գոգնոց։ Ս. Հրեշտակապետ եկեղեցոյ՝ 2 տիպայ գոգնոց, 1 լեհ չիթ վարագոյր, 2 քարեայ աշտանակ մոմեղենք։ Ս. Փրկիչ եկեղեցոյ՝ 1 տիպայ գոգնոց. 1 զոյգ քարեայ աշտանակ մոմեղենք, Ս. Աստուածածնի գերեզմանին՝ 1 տիպայ գոգնոց, 1 սաղաւարտ, 1 վարշամակ, 3 շապիկ, Ս. ծնունդյան եկեղեցոյն՝ 1 շուրջառ, 1 սաղաւարտ, 1 վարշամակ, 1 փորուրար, 3 շապիկ, 1 արծաթ բուռվար։ Ս. Նիկողայոս եկեղեցոյն Յոպպէի՝ 1 շուրջառ, 1 սաղաւարտ, 1 վարշամակ, 1 փորուրար, 4 շապիկ, 1 լեհ չիթ վարագոյր»։ Տիկին Սողոմեն՝ Ս. Յարութիւն տաճարին մեջ կանանց վերնատանը՝ 2 տիպայ գոգնոց 1 չիթ Լեհ վարագոյր և Քրիստոսի գերեզմանին հանդեպ խաչելութեան պատկերի ոսկեզօծ շրջանակ քանդակագործ». (տե՛ս Հ. Մրմրյան, Մասնական պատմութիւն հայ մեծատուններու..., էջ 67—68)։ Կասկածից վեր է, որ թվարկված մեծարժեք նվերները աննշան մի գումար պետք է լինեին Յաղուբ աղայի և նման այլ ամիրաների համար։ Երբ թուրքերը, մեղադրելով Յաղուբ աղային սուլթան Օսման II-ի դեմ կազմակերպված դավադրության մեջ, գլխատում են նրան, մխիթարյան հայր Միքայելի 1752 թ. հուլիսի 1-ի թվակիր նամակի վկայությամբ, բանագրավում են նրա «...զամենայն ինչ, այսինքն՝ զպալատասարաս տունս, զձիանս, զարդարանս, և զգանձ ի յարքունիս առին, և զայս ամենայն տեսեալ տաճիկք ափշեալ ասէին. Իյֆիր փատիշահ մը Օլմուղսը (անհավատ, ի՞նչ է, թագավոր ես դարձել) (տե՛ս «Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ...», էջ 150)։

297 Հ. Մրմրյան, Մասնական պատմութիւն հայ մեծատուններու..., էջ 94։

298 Նույն տեղում, էջ 94—95։

299 XVI—XVII դարերի կանոնագրքերում հողագործ բնակչության նկատմամբ «ռայա» տերմինի օգտագործման հետ միաժամանակ հանդիպում ենք այնպիսի բառակապակցությունների, ինչպիսիք են «անհավատ ռայաներ» (reaya keferesi կամ reayai-kefere), «Թուրք ռայաներ» (reaya-1 etrak), «մուսուլման ռայաներ» (reaya-1 müslimin), «զիմմի ռայաներ» և այլն (տե՛ս O. L. Barkan, Kanunlar, s. 102, 35, 200, 251, 253 և այլն)։

ղեր»[300]; «Եւ դաշտքն (Էրզրումայ) ունին զթանձրութիւն խոտոց և շրջաբերութիւն սերմնաւոր խոտոց»[301],— գրում է Հակոբ Կարնեցին։

Երզնկայի ու նրա շրջանների մասին է. Չելեբին գրում է. «...Այստեղ ձյուն տեղում է, բայց երեք օրից ավելի չի մնում։ Ամառ ու ձմեռ բանջարեղենը անպակաս է։ Հացահատիկի բոլոր տեսակներն առատ են այստեղ»[302]; «Եւ ունի քաղաք մեծ Հայոց զԵզնկայ, որ լի է ամենայն բարութեամբ, բամպակօք, այգեստանօք, և մրգաբեր ծառօք»[303], կարդում ենք Հ. Կարնեցու մոտ։ Խոսելով Մշո դաշտի կամ Մշո հովտի մասին, է. Չելեբին գրում է, որ դա «մի խիստ ընդարձակ ու բաց դաշտավայր է»։ Դաշտի խոտն այնքան առատ է, ասում է ճանապարհորդը, որ եթե որևէ բանակի ձիերն ու անասունները գիշեր-ցերեկ արածեն, «դաշտի խոտը չի պակասի»[304]։

Հացահատիկային կուլտուրաների հիմնական կենտրոնները, է. Չելեբու հաղորդած տեղեկությունների համաձայն, եղել են Էրզրումի, Մշո, Սեբաստիայի (Սրվազի) դաշտերը, Դիարբեքիրի շրջակայքն ու Վանը, որոնց մասին նա չափազանցված է գրում։ Այսպես, Սեբաստիայի մասին գրում է. «...Եթե Արաբիայում կամ Ռումելիայում և Հունաստանում սով լինի, ապա այդ քաղաքի հացահատիկը բոլորին կկենդանացնի... ցանքսերը շատ մեծ են, բերքն ու առատությունը անհաշիվ են»[305]։ Դիարբեքիրի մասին խոսելիս նա ասում է, որ «վիլայեթն ընդարձակ է ու բարեշեն, ցանքսերը շատ են ու բերքն առատ»[306]։ «Վանն ընդարձակ ու առատ երկիր է, բերքերի առատության տեսակետից նմանը չունի, 7 տեսակ սև ու յուղալի գարի ունի, սիսեռի, բակլայի ու այլ տեսակի բերքերի քանակը միայն աստված գիտի»,— գրում է է. Չելեբին։

Խիստ նպաստավոր էր Արևմտյան Հայաստանի տարածքը անասնապահության զարգացման համար։ Այնտեղ կային ընդարձակ արոտավայրեր, որոնց մասին մեզ տեղեկացնում է դարձյալ է. Չելեբին։ Խոսելով Անատոլիայում գտնվող հայտնի արոտավայրերի մասին, նա գրում է. «Ամենանշանավորը Բինգյոլի յայլան է (Էրզրումի շրջանում) ... Դիարբեքիրում՝ Կարադաղի յայլաղը... Վանի մոտ՝ Վերեքի

[300] Evliya Çelebi, c. II, s. 200.
[301] «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 548։
[302] Evliya Çelebi, c. II, s. 345.
[303] «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 549։
[304] Evliya Çelebi, c. III, s. 228.
[305] Նույն տեղում, էջ 200։
[306] Նույն տեղում, հ. 4, էջ 48։

(Վարագի) յայլաղը, նորից Վանա լճի եզերքում՝ Սուրհանի (Սիփանի) յայլաղը... Էրզրումի մոտ, Բայբուրդի շրջանում՝ Մուշօղլանի յայլաղը, Սրվազի մոտ՝ Կազանլի յայլաղը»[307]։

Արևմտյան Հայաստանի այգեգործական ու պտղագործական շրջանները, ըստ է. Չելեբու, եղել են Երզնկան ու իր շրջակայքը, Բիթլիսը, Վանն ու մասամբ Դիարբեքիրը։ Հատկապես զարմացրել են ճանապարհորդին Վանի այգիները, որոնց մասին, նա զարձյալ դիմելով շափազանցությունների, գրում է. «Վանի բերդի հարավ-արևելյան մասից... մինչև Արտամետ գյուղը, ըստ երկարության և լայնության 8 ժամ տարածության վրա ձգվող Վանի դաշտն ամբողջությամբ այգիներով, պարտեզներով ու կանաչազարդ բուրաստաններով է ծածկված, որոնց թիվը... 26 հազարի է հասնում։ Մարդն այս այգիների մեջ մտնելիս կորսվում է։ Յուրաքանչյուր այգում հոսող ջուր, ավազաններ ու շատրվաններ կան»[308]։

Բազմաթիվ լճերի ու գետերի առկայությունը թույլ էր տալիս զարգացնելու նաև ձկնորսությունը։ Վանա լճում որսում էին «տառեխ» կոչված ձուկը, որը արտահանում էին[309]։ Աղբյուրներում հիշատակվում են նաև Արևմտյան Հայաստանի մյուս փոքր լճերը. Քեշիշ-գյոլ, Աղ-գյոլ, Աղրի-գյոլ՝ Վանի վիլայեթում, Բուլանըկ-գյոլ, Նազիկ-գյոլ՝ Խնուսի շրջակայքում, ուր «գարնանը,— գրում է Շարաֆ խանը,— շրջակայքի բնակիչները առատ ձուկ են որսում»[310]։

Չնայած երկրի հողը խիստ բարեբեր ու արգավանդ էր, սակայն մշակելի հողային տարածությունների մի զգալի մասը մնում էին ամայի, անմարդաբնակ էին դառնում ամբողջ շրջաններ։ Ղ. Ինճիճյանը, խոսելով արևմտահայ գավառներում գյուղատնտեսության զարգացման համար խիստ բարենպաստ պայմանների գոյության մասին, ցավով ստիպված է արձանագրել հետևյալը. «Իսկ եթէ ըստ արժանեաց լինէր մշակեալ երկիր նրա ըստ իւրում առատաբեր արգասաւորութեան բազմապատիկ առաւել պտղաբերէր զայս ամենայն արդիւնս, այլև մարթ էր հնարել էր ի նմա զայն բերս, յորոց այժմ (XVIII դարի վերջին Մ. Ջ.) առ պակասութեան արուեստի զրկեալ կայ»[311]։

[307] Նույն տեղում, հ. 3, էջ 234։
[308] Նույն տեղում, հ. 4, էջ 188—189։
[309] Նույն տեղում, էջ 131—132։
[310] «Chéréf-nameh», t. II, lème, pp. 225—226.
[311] Ղ. Ինճիճյան, էջ 45։

Եվ այսպես՝ օսմանյան պետության դաժան կարգերը խոչընդոտում էին գյուղատնտեսության զարգացմանը։ Տեղի ֆեոդալ-կալվածատերերի ու պետական պաշտոնյաների[312] կամայականությունը չափ ու սահման չուներ։ Եվ, բնականաբար, գյուղացին չէր վայելում իր քրտինքով աճեցրած առատ բերքը։

Գյուղացիները իրենց վրա կրում էին պետական ապարատի պաշտոնյաների ու տեղական կալվածատեր-ֆեոդալների շահագործման ամբողջ ծանրությունը և տնքում էին ինչպես պետության, այնպես էլ տեղական ֆեոդալների օգտին գանձվող բազմապիսի հարկերի տակ։

Գյուղացիների շահագործումը սաստկացնելու, ինչպես և պետության ռազմական հսկայական ծախսերն ապահովելու համար, նվաճողֆեոդալները ձգտել են ամեն կերպ օրինականացնել գյուղացիների ամրակցումը հողին։ Այդ մասին են վկայում XVI դարի թուրքական կանոնամները։ Համաձայն այս օրենսդրական վավերագրերի, դավթարներում գրանցված գյուղացին իրավունք չուներ ինքնակամ թողնել իր ապրած վայրն ու գնալ մի ուրիշ տեղ։ Իր հողակտորը թողնելու և հեռանալու դեպքում ֆեոդալին իրավունք էր վերապահվում փնտրել նրան և, եթե փախուստից չէր անցել տասը տարի, ետ բերել իր նախկին բնակավայրը ու տուգանել պատճառած «վնասների համար»։ «Եվ եթե ռայաթը,— գրված է Էրզրումի կանոնամեում,— իր տրամադրության տակ հող ունենալով հանդերձ փախչի, ապա սիփահին (ֆեոդալը) օրենքով իրավունք ունի նրան ետ դարձնել իր նախկին վայրը։ Սակայն մի տեղում տասը տարուց ավել ապրողներին ետ բերելը արգելված է»[313]։ «Եթե դավթարում արձանագրված ռայաթները ցրվեն, համաձայն օրենքի (նորից) իրենց տեղերը պիտի բերվեն»,— կարդում ենք Գյուրջիստանի վիլայեթի կանոնամեում։

---

312 Այդ պաշտոնյաներից հայկական աղբյուրներում առավելապես հանդիպում ենք դեֆթերդարը, ալայբեյին, ենիչերի-աղասին, ռուբաշին, մուհթասիբը, էմինը, ամիլը, նաիբը, շահնեն և այլն։ Դեֆթերդար էին կոչվում ֆինանսական գործերով զբաղվող պաշտոնյաները։ Ենիչերի-աղասին տեղական ենիչերական կայազորի պետն էր, որը միաժամանակ հետևում էր շրջանի կարգուկանոնին։ Մուհթասիբը (բառացի՝ հաշվառու) այն պաշտոնյան էր, որը հետևում էր արհեստավորների ու վաճառականների ծախած ապրանքների գներին, ապրանքների չափի ու կշռի ճշտությանը։ Էմինը գյուղական վայրերում ֆեոդալների հավատարմատար ներկայացուցիչն էր։ Ամիլը գյուղացիներից ֆեոդալի օգտին բնատուրք ու դրամական տուրք հավաքող էր։ Նայիբները (քաղաքային վայրերում անվանվում էին կադիներ կամ զադիներ) շարիաթական դատավորներն էին, շահնեն՝ քաղաքագլուխը։

313 «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 22։

Որ գյուղացին փաստորեն կախման մեջ էր գտնվում տեղի ֆեոդալից, երևում է նաև նրանից, որ կանոնամեներում կալվածատեր-ֆեոդալը (sahib-i arz) իր շրջանի ենթակա ու գրանցված գյուղացու նկատմամբ անվանվում է «տերն ռայաթի» («sahib-i raiyet»)։ Անհրաժեշտ է միաժամանակ նշել, որ ֆեոդալը Օսմանյան կայսրության մեջ, ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի ֆեոդալի, գյուղացու անձի նկատմամբ չուներ իրավական իշխանություն, որովհետև նա «հողի տերը» չէր, այլ հողը տրված էր նրան ժամանակավոր օգտագործման համար։

Որպես «տերն ռայաթի» թուրքական օրենսգրքերում, ֆեոդալին իրավունք էր վերապահված գրանցված գյուղացուց պահանջել կատարելու բազմաթիվ պարհակներ, նույնիսկ այն դեպքում, երբ վերջինս ցանքը կատարել էր ոչ թե իր, այլ մի ուրիշ կալվածատիրոջ հողում[314]։

Քրիստոնյա գյուղացիությունը ենթարկվում էր կրոնական ու ազգային խտրականության, բռնության, կամայականության, նրան մշտապես սպառնում էր ֆիզիկապես ոչնչացվելու վտանգը։ Սակայն, ինչպես շատ պատկերավոր գրել է ֆրանսիացի հեղինակ Միշել Ֆեբվրը, «նրանք (թուրքական ֆեոդալները) հանդուրժում են քրիստոնյաներին ու հրեաներին այն պատճառով, որ նրանցից ավելի մեծ շահ ունեն, քան իրենց հավատակիցներից ու թույլ են տալիս նրանց ապրել ճիշտ այնպես, ինչպես դա արվում է ոչխարների ու մեղուների հետ՝ նրանց կաթի ու մեղրի համար»[315]։

Ինչպես ամբողջ կայսրությունում, այնպես էլ նրա կազմի մեջ մտնող Արևմտյան Հայաստանում XVI դարի երկրորդ կեսին գյուղացիների վիճակը անհամեմատ վատթարացավ։ Քննադատության չի դիմանա արդի թուրք պատմագրության որոշ ներկայացուցիչների փորձերը հպատակ քրիստոնյաների վիճակի բարվոք ցույց տալը, որը, ըստ նրանց, հետևանք էր կայսրության մեջ տիրող «արդարության», «կարգ ու կանոնի» և այլն։ Գործը հասնում է այնտեղ, որ միջնադարյան օրենսգրքերի (կանոնամեների) խոշորագույն մասնագետ Օ. Լ. Բարկանը պնդում է, որ հպատակները (նկատի ունի հայերին), միանգամայն արդար գտնելով թուրքական օրենքները, պահանջում էին, որ իրենց մոտ նույնպես կիրառվեն դրանք ու վերացվեն նախկին տիրակալների սահ-

---

314 *А. С. Тверитинова*, К вопросу о крестьянстве..., с. 25.

315 *M. Febvre*, p. 217. (Is souffrent dans leurs pays les chrétiens et les Juifs en considérant du profit qu'ils en retirent plus que de ceux de leur religion et les laissent vivre, comme l'on fait les brebis et les abeilles, à cause de leur lait et de leur miel").

մանած կեղեքիչ օրենքները։ Ի հաստատումն իր այս դրույթի, Բարկանը բերում է Էրզրումի 1540 թ. կանոննամեի առաջին հոդվածը, ուր ասված է. «Բայբուրդի և Էրզրումի սանջակները գրանցելիս (բնակիչները) կայսերական հրամանի համաձայն հին դավթարում նախապես արձանագրվել էին։ Ռայաթները, առևտրականները և օսմանյան երկրի մյուս բնակիչները չկարողացան տոկալ Հասան Փաշիշահի (Ուզուն Հասանի) կանոնի համաձայն կիրառվող օրենքներին և դիմելով բարձր արքայական գահին, խնդրեցին, որ Ռումի (օսմանյան) օրենքը (գործադրվի) նաև իրենց նկատմամբ»[316]։

Հենց իր՝ Օ. Լ. Բարկանի կողմից հրատարակված կանոննամեները հերքում են նրա դրույթը։ Նախ՝ մատնանշված թուրքական օրենքները միշտ չէ, որ կիրառվել են հայկական նահանգներում ու գավառներում. տիրապետողը եղել է թուրք փաշաների ու քուրդ բեկերի սանձարձակ կամայականությունները, և երկրորդ՝ այդ նույն օրենքներում համարյա միշտ նշվում են հարկային սիստեմի և հարկահանության ձևերի գրեթե համատարած և մշտական աղավաղումների և դրանց հետ կապված՝ ապօրինությունների և բռնությունների անարգել տարածման մասին։

Էսատ Ուրասը իր հերթին գրում է, որ օսմանյան տիրապետությունը հայերին բերել է միայն «բարվոք», «արդար» ու «դրախտային» կյանք. «Օսմանյան հայերը հանգիստ կյանք էին վարում, զբաղվում էին առևտրով ու արհեստներով և շատ գոհ էին իրենց վիճակից։ Զինվորական պարտադիր ծառայությունից ազատված լինելու հետևանքով, աճում էր նրանց ընտանիքի անդամների քանակը ու գնալով բարելավվում նրանց նյութական վիճակը»[317]։ Թուրքական պաշտոնական պատմագրության՝ «Թարիխի», մեջ պարզորեն շեշտվում է, որ կառավարության «օսմանյան սիստեմն ապահովում էր յուրաքանչյուր հպատակի պատիվն, ունեցվածքն ու անձը»[318]։

XVI դարի երկրորդ կեսից Օսմանյան կայսրության ռազմական ու քաղաքական հզորությունը սկսեց անկում ապրել։ Սկսած 1571 թ. Թուրքիայի կրած ռազմական պարտություններն ու տարածքային կորուստները դարձան ավելի ու ավելի ծանր։ Խարխլվեց օսմանյան պետության հզորության գլխավոր հիմքը՝ ռազմաավատական համակարգը, մի հանգամանք, որ գլխավորապես հետևանք էր վաշխառուական կապիտալի զարգացմանը։

316 «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 19։

317 *Es'at Uras*, Tarihte Ermeniler ve ermeni meselesi, Ankara, 1950, s 152.

318 "Tarih", c. III, Istanbul, 1931, s. 3—4.

Օսմանյան կայսրության անկման պատճառների հարցը վաղուց է գրավել մասնագետների ուշադրությունը[319]։ Սովետական մասնագետները ապացուցել են, որ կայսրության անկման գլխավոր պատճառը՝ նրա ռազմաավատական համակարգի մեջ տեղի ունեցած էական փոփոխություններն էին, որոնք սկսվել էին դեռևս շատ վաղուց՝ XVI դարի առաջին կեսին։ Միայն Կոչիբեյին էր թվում, որ սուլթան Սուլեյման Կանունիի ժամանակ երկրում ամեն ինչ իդեալական էր։ Նա որպես իրականություն էր ուզում ընդունել այն, ինչ Օսմանյան կայսրության մեջ ձևականորեն ուզում էր իրագործել սուլթան Սուլեյմանի ժամանակաշրջանի օրենսդիր Մուֆտի Էբուսուուդը։ Ինչպես ցույց են տալիս պատմական փաստերը, սուլթանի կողմից վավերացված Էբուսուուդի օրենքները գրեթե որևէ ազդեցություն չունեցան ընդարձակածավալ Օսմանյան կայսրության բազմաթիվ նահանգների վարչական ու սոցիալական կյանքի վրա։ Նահանգների զգալի մասը, և հատկապես ասիական նահանգները, շարունակեցին ապրել կիսանահապետական, կիսաֆեոդալական ու քոչվորական կյանքով։ Սուլթան Սուլեյմանին չհաջողվեց ամրապնդել կայսրության՝ քաղաքականապես ու տնտեսապես մասնատված ժողովուրդների և ցեղերի ռազմավարչական խախուտ միավորումը։

Կոչիբեյն, իհարկե, չէր նկատում, որ իր նկարագրած երևույթները օսմանյան ֆեոդալական հասարակության ներսում առաջացած ճգնաժամի հետևանք էր, ճգնաժամ, որը պայմանավորված էր այդ հասարակության զարգացման ներքին օրինաչափություններով՝ ավատական հողատիրության համակարգի մեջ տեղի ունեցած էական փոփոխություններով (նրա իսկ խոսքերով ասած՝ «մեծ ու փոքր տիրույթների», ոչ ավատական ծագում ունեցող մարդկանց ձեռն անցնելը), մի հանգամանք, որն իր հերթին, պայմանավորված էր առևտրավաշխառուական հարաբերությունների զարգացմամբ ու խոշոր կենտրոնախույս ուժ

319 *Այդ մասին տե՛ս В. Д. Смирнов*, Кучибей Гёмюрджинский..., с. 186—270; *А. С. Тверитинова*, Восстание..., с. 36—51. *H. A. R. Gibb* and *H. Brown*, Islamic Society and the West civilization on Moslem Culture in the Near East, I, London, New York, Toronto, 1950, pp. 173—199; *А. С. Тверитинова*, Второй трактат Кочибея, Ученые записки Института востоковедения, т. VI, М.—Л., 1963, с. 254—258; *А. Ф. Миллер*, Мустафа паша Байрактар, М.—Л., 1947, с. 29—60 и т. д.

դարձած ֆեոդալների հսկայական հարստությունների կուտակմամբ։ Մյուս կողմից, Կոչիբեյի նկարագրած երևույթները հետևանք էին այն հանգամանքի, որ թուրքերը՝ զավթելով հսկայական տարածքներ Եվրոպայում, Ասիայում ու Աֆրիկայում, այլևս անկարող էին յուրացնել դրանք, և բավարարվում էին միայն հարկերով, տուրքերով ու ռազմատուգանքներով։

Մինչև XVI դարի վերջը, այսինքն մինչև ճգնաժամային երևույթների բացահայտ դրսևորումը, թուրքական ռազմաավատական պետության ղեկավարող շրջանները չէին հետաքրքրվում արտադրության հարցերով։ Այստեղ, Կ. Մարքսի մատնանշած արևելյան պետության երեք գերատեսչություններից մեկը՝ ռազմական տեսչությունը, այսինքն՝ հարևան ժողովուրդների կողոպուտը, ամենագործուն ձևով էր դրսևորվում։ Սակայն 1571 թ. հետո, երբ սկսվեց սեղմվել նվաճումների թափը ու խիստ կրճատվեց ռազմական ավարը, թուրք ֆեոդալները սկսեցին ամենագաժան ձևով շահագործել նախ և առաջ նվաճած երկրների, ապա և իրենց երկրի գյուղացիությանը։

XVI դարի վերջին, փաստորեն, թուրքական ռազմաավատական կարգին փոխարինելու եկավ ավատական կալվածատիրական նոր համակարգը։ Կալվածատեր-ավատատերերի համար հողագործությունն արդեն հարստության ոչ թե օժանդակ, այլ հիմնական աղբյուր էր։ Ավատատեր-կալվածատերերը սաստկացրեցին գյուղացիների շահագործումը՝ զրկելով նրանց ոչ միայն հավելյալ, այլև անհրաժեշտ արդյունքից։ Դա անխուսափելիորեն բխում էր վաշխառուական կապիտալի հենց բնույթից։ Ի. Փեչևին նշում էր, որ հիջրեյի 988 թ. (1581—1582 թթ.) կայսրության բոլոր նահանգներում գյուղացիները ենթարկվում են ահավոր կեղեքման։ Այս բոլորի հետևանքով, աղբյուրների վկայությամբ, խիստ կրճատվում են գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, ու պետությունը կանգնում էր ֆինանսական լուրջ դժվարությունների առաջ։ Թուրք պատմաբան-տնտեսագետ Մ. Ակդաղն այս երևույթը ձգտում է բացատրել արտաքին առևտրի ներգործած բացասական հետևանքներով։ Ըստ նրա, Եվրոպան այնքան ցորեն էր արտահանում Թուրքիայից, որ շուտով երկրում զգացվեց հացահատիկի պակաս[320]։ Իրականում, սակայն, կանգնելով ֆինանսական ճգնաժամի առաջ, պետությունը, ինչպես և խոշոր ու մանր ավատատերերը սաստկացրել էին գյուղացիների շահագործումը ու խիստ ավելացրել հարկերի ու տուրքերի չափն այն աստիճան, որ քայքայված գյուղացին ի վիճակի չէր զբաղվելու գյուղատնտեսական մթերքների արտադրությամբ։ Մ. Ակդաղը մեկ այլ տեղ ստիպված է խոստովանել, որ մշակելի հսկայական հողային տարածությունները XVI դարի վերջում վերածվել էին արոտավայրերի[321]։ Եվ դարձյալ Մ. Ակդաղը նշում է, որ գյուղատնտեսության հիմքերի քայքայման պայմաններում, գյուղացիները զանգվածորեն լքում էին իրենց հողակտորներն ու փախչում խոշոր քաղաքներ, որը Թուրքիայի պատմության մեջ մտել է որպես «Մեծ փախուստի» (Büyük kaçgunluk) տարիներ[322] ընդհանուր անունով։

Ֆինանսական ճգնաժամի առաջին նշաններն ի հայտ եկան սուլթան Սելիմ II-ի ժամանակ՝ 1562—1563 թվականներին[323]։ 1592 թ., համաձայն իտալացի Լորենցո Բերնարդոյի, ճեղքվածքը պետական բյուջեում կազմում էր տարեկան կես միլիոն դուկատ[324]։ Քյաթիբ Չելեբին պետական բյուջեում տարեցտարի ավելացող ճեղքվածքի մասին բերում է հետևյալ հետաքրքիր տվյալները.

Թվական	Պետ. եկամուտ յուկերով[325]	Պետ. ծախս յուկերով
հիջրեի 972 թ. (1564/ թ.)	1830	1890
» 1000 թ. (1591/92 թ.)	2934	3634
» 1005 թ. (1596/97 թ.)	3000	9000[326]

Մուստաֆա Սելանիկին անհանգստությամբ արձանագրում էր, որ «Պետական գանձարանի եկամուտներն այլևս չեն փակում ծախսերը, որից և առաջանում են ֆինանսական հսկայական դժվարություններ»[327]։

---

320 *M. Akdağ*, № 55, s. 511.

321 Նույն տեղում, էջ 550։

322 *M. Belin*, Essais sur l'histoire économique de la Turque, "Journal Asiatique", v. IV, Paris, 1964, pp. 282—283.

323 *M. Akdağ*, s. 550.

324 *M. Belin*, Essais..., p. 281—283.

325 Մեկ յուկը հավասար է եղել 100.000 ակչեի (տե՛ս *В. Д. Смирнов*, Кучибей Гёмюрджинский..., с. 161)։

326 *А. С. Тверитинова*, Восстание..., с. 38.

327 "Tarih-i Selâniki", s. 186 ("Irad hazine-i amire masraf kifayat etmeyüb azim muzayakalar çekildi").

Նման պայմաններում, կառավարությունն անընդհատ կտրել էր տալիս նոր ակչեներ (akçe-i cedid), որոնց մեջ արծաթի տոկոսը գնալով պակասում էր։ Եթե 1580 թ. ակչեի 20 տոկոսն էր արծաթ, ապա 1610 թ.՝ 10 տոկոսը[328]։ Այդ ակչեները սկսվեցին անվանվել «կեղծ ակչեներ» («կալպ», «զույուֆ», «մաղշուշ» անուններով)[329]։ Ի վերջո, գործը հասավ ակչեի իսկական արժեքազրկմանը («Kesad-i akçe»)։ Սուլթան Օսման II-ի ժամանակ արդեն ակչեները այնքան բարակ էին դարձել, ինչպես «թղթի թերթիկը»[330]։ Ընկավ նաև ոսկու տոկոսը ոսկեդրամների մեջ, փոքրացավ քաշը։

«Կեղծ ակչեները» շրջանառության մեջ դրվելու պայմաններում սուլթանական կառավարությունը, ելնելով պետական եկամտի շահերից, գյուղերում գտնվող իր բոլոր հարկահան ներկայացուցիչներին հրամաններ էր արձակում, որպեսզի հարկերը գանձվեն միայն մաքուր արծաթով և ոսկով[331]։ Դա գյուղացիության բացարձակ կողոպուտ էր նշանակում։

Գյուղատնտեսական մթերքների գները սկսում են անշեղորեն բարձրանալ։ Միայն 1595—1596 թթ. ընթացքում, Մ. Ակդաղի հաշվումներով, գները բարձրանում են մոտ 10 անգամ[332]։ 1598 թ. հետո, երբ սկսվում է ջալալիների շարժումը, թանկությունն հասնում է աներևակայելի չափերի։ «Գների անընկան այս բարձրացումը,— գրում է Մ. Ակդաղը,— հետևանք էր մի կողմից ջալալիների խռովության, իսկ մյուս կողմից՝ ակչեի արժեքազրկմանը»[333]։ Այս նույն ժամանակաշրջանին վերաբերող հայերեն մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք հետևյալ բնորոշ տողերը. «...այսմ ամի թուին ՌԽԳ (1594 թ.) բազում հարկապահանջութիւն եղաւ ի թագաւորէն եւ այլ ամենայն զաւրացն նորա, որ անուն ծանր է մեզ գրել. բայց ձեզ ամենեցուն յայտնի է. այս տարի մեկ գլուխն Դ, Ֆլի խարաճ տուին, շատ մարդ ի հաւատոցն սատան եւ ելան. ուրացան զՔրիստոս Աստուածն մեր եւ շատ մարդիկ փախստեալ եղեն. այսմ յամի յերկրէ յերկիր եւ ոչ գոյր հանգիստ նոցա ամենայն գիւղ եւ քաղաք միատպէս էր եւ այլ բազում հարկ էր, որ ծանր է

[328] M. Akdağ, s. 519.

[329] Ավելի մանրամասն տե՛ս M. Belin, Essais..., Նաև՝ Afet Inan, Aperçu général sur l'histoire économique de l'empire turc-ottoman".

[330] M. Belin, Essais..., p. 293.

[331] M. Akdağ, s. 528.

[332] Նույն տեղում, էջ 543։

[333] Նույն տեղում, էջ 532։

մեզ գրել. մեկ ֆլի որ ժամ հաց եփէին հանց դառն էր ով որ ուտէր ի խելացն կու թափէր եւ կմարէր, այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց»[334]։ Մի ուրիշ ձեռագրում խաչատուր գրիչը Վանից արձանագրում է. «... որ իբրև զչար գազան յարուցեալ կան ի վերայ մեր. և եմք իբրև զգառինս ի մեջ գայլոց, որ միշտ և հանապազ սուտ և զուր ասելով կողոպտեն և շարշարելով շարշարեն զմեզ անխնայաբար, որպէս զԻսրայել ի մէջ Եգիպտացւոցն»[335]։

Ֆինանսական ճգնաժամից դուրս գալու նպատակով օսմանյան կառավարությունը, աղբյուրների վկայությամբ, «թեքյալիֆ-ի դիվանիյե»-ն (պետական հարկերը) կամ «թեքյալիֆ-ի շակկան»[336] (արտակարգ հարկերը) այդ տարիներին ավելացնում է մոտ 25 անգամ։ Միայն որպես «ավարիզ» յուրաքանչյուր հարկատու տնից պահանջվում է տարեկան 500 ակչե[337]։

Փաստորեն գյուղացիությունը խեղդվում է հարկերից։ Առավել ծանր էր ոչ-մուսուլման գյուղացիության վիճակը։ Եվ, անշուշտ, նրանց է ակնարկում Կոչիբեյը, երբ գրում է մեղադրական հետևյալ տողերը թուրք ղեկավարող շրջանների հասցեին. «Մի խոսքով, այն ճնշումներն ու բռնությունները, որոնց ենթարկվում են խեղճ ռայաթները, ոչ մի ժամանակ, աշխարհի ոչ մի երկրում, ոչ մի պետության մեջ չեն եղել։ Եթե որևէ իսլամական պետության մեջ որևէ մեկին ամենափոքր նեղություն պատճառվի, ապա նրան դատաստանի ժամանակ դրա պատասխանատվությունը կընկնի տիրակալի և ոչ թե նրա պաշտոնյաների վրա և տիրակալը չի կարող արդարանալ տիեզերքի տիրոջ առջև ասելով՝ «Ես իմ հպատակներին հանձնել էի այս մարդկանց։ Ցրտից սարսռած ճնշվածների հոգոցները խորտակում են տները, իսկ կեղեքվողների արտասուքները խեղդում են կայսրությունը կորստյան ալիքների մեջ։ Անհավատությունից աշխարհը չի կործանվի, այլ կանգուն կմնա, իսկ բռնությունից նա չի կանգնի»[338]։

[334] «Յուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վիեննա», էջ 749։

[335] Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 547—548։

[336] Պատմագիր Ջեվդեթը «թեքյալիֆ-ի շակկան» բացատրում է «բռնությունների շարան» (انواع مظلم) (տե՛ս M. Belin. Essais..., p. 539):

[337] M. Akdağ, s. 539.

[338] "Risale-i Koçibey", Istanbul, 1860, s. 17.

Իր հերթին, պատմագիր Մ. Սելանիկին խիստ մռայլ է նկարագրում XVI դարի վերջում Օսմանյան կայսրության մեջ ստեղծված դրությունը։ «Պետության նահանգներում,— գրում է նա,— արտակարգ հարկերը հպատակ ժողովրդին հասցրին այն բանի, որ նրա համար զզվելի դարձավ այս աշխարհը և այն ամենը, ինչ գտնվում է այնտեղ։ Սիփահիները 20 տարուց ավելի է, ինչ զբաղված են կրոնի թշնամիների դեմ պատերազմով, և քանի տարի է ահա, որ արևելյան նահանգները (նկատի ունի հայկական նահանգները— Մ. Զ.) տանում են պատերազմի ծանրությունը... կառավարիչներն ու դատավորները զզվեցրին երկրի հպատակներին, մեկը մյուսի հետևից անվերջ կրկնվում են սուլթանական միևնույն հրատապ հրամանները, «թող գանձեն ավարիդ, նյութդյուլ և կյուրեկչի կամ դրանց փոխարենը» ... իսկ խարաջ վճարող հպատակներից, ահա արդեն քանի տարի է «բեգելի համար» («գինու փոխարեն»), «ավելացում գահակալման առթիվ» անուններով հարկադրում են վճարել 300-ական ակչե»[339]։

Գտնվելով ծանր կացության մեջ, փնտրելով եկամտի նոր աղբյուրներ, օսմանյան պետությունը XVI դարի վերջերից սկսեց խոշոր կալվածատերերին ու վաշխառուներին վաճառել այսպես կոչված մուկատա՝աները[340]։ Մուկատա՝աներ էին կոչվում կայսրության որևէ միավորի կամ հարկատու շրջանի հարկերի նախնական փոխանցումը կապալառության հիման վրա որևէ մի վաշխառուի կարճ կամ երկար ժամկետով (tahvil)։ Վաշխառուին մուկատա՝ան տրվում էր համաձայն հարկահանման մատյաններում նախատեսված գումարի։ Ով որ ավելի շատ էր միանվագ գումար մուծում պետությանը, նրան էլ տրվում էր մուկատա՝ան իլթիզամի (կապալի) իրավունքով[341]։ Մուկատա՝ան նոր երևույթ չէր կայսրության մեջ։ XVI դարի առաջին կեսին վերաբերող կանոնադրություններում հանդիպում ենք մուկատա՝ա իլթիզամի երևույթներին, երբ այդ պաշտոնին նշանակված պաշտոնյաները, այսպես կոչված մյուլթեզիմները (կապալառուները), գյուղացու նկատմամբ բռնություններ են գործադրել։ Դիարբեքիրի վիլայեթի կանոնագրքի 12-րդ հոդվածում կարդում ենք. «Դիարբեքիրի վիլայեթում դավթարից դուրս եղողները առանձին են գրանցված, որոշ մարդիկ՝ իլթիզամ (iltizam) առնելով՝ գնացել են գյուղերը և՝ «ձեզ մոտ դավթարից դուրս մարդիկ կան» ասելով, ռայաթներին բազմատեսակ նեղություններ են պատճառել։ Թիմարի տերերից ոմանք իրենց գյուղը և մշակելի հողերը շենացնելու համար դրսից մարդիկ են բերել, իսկ դրսի էմիրները «դուք դավթարից դուրս եք» ասելով, մի քանի տարվա փող պահանջելով, դարձյալ ռայաթների ցրվելու պատճառ են դարձել...»[342]։

Բռնության ու կեղեքումների տեղի չտալու նպատակով, սովորաբար պետությունը մյուլթեզիմի կողքին նշանակում էր հատուկ պաշտոնյա՝ մյուֆեթիշը (հսկիչը)։ Շատ հաճախ այդ պաշտոնը ստանձնում էին տեղական կադիները։ Մուկատա՝այի տեր վաշխառուները կաշառում էին մյուֆեթիշներին ու, այնուհետև, գյուղացիության նկատմամբ գործադրում ամեն տեսակի բռնություն ու կամայականություն՝ կողոպտելով ու հասցնելով նրանց ծայրահեղ աղքատության։ Այս տեսակետից ուշագրավ են XVII դարի թուրք պատմագիր Կարա-Չելեբիզադեի խորհրդածություններն այդ մասին։ Շարադրելով 1654—1655 թթ. դեպքերը, նա գրում է. «Գանձարանի դատարկվելն առաջ է բերում մինչ այդ չտեսնված հազար ու մի դժվարություններ։ Պետական պաշտոններն, ինչպես նաև պետական եկամուտները, կապալով վաճառվում են նրանց, ովքեր ավելի շատ են վճարում... Պետության թույլտվությամբ կապալառուները իրենց կամքն են թելադրում խեղճ ժողովրդին։ Կառավարությունը անզոր է դարձել դրանց դեմ որևէ միջոցներ ձեռք առնել։ Եթե բողոքողների ձայնը ի վերջո լսվի Ստամբուլում, նրանց անմիջապես նետում են բանտերը ու հարկանում փայտով. բախտավոր կլինեն նրանք, եթե այնտեղից դուրս գան ողջ ու առողջ»[343]։

Այսպիսով բողոքելն իմաստ չուներ։ Իսկ եթե պատահեր, որ գյուղացիության բողոքի հետևանքով մայրաքաղաքից բողոքավայր որևէ քննիչ գար, մյուլթեզիմներն անմիջապես կաշառում էին նրան ու հետո հաշվեհարդար տեսնում բողոքավորների հետ[344]։ Մուկատա՝աները վաճառվում ու վերավաճառվում էին ու երբեմն այնպես էր պատահում, որ

339 *А. С. Тверитинова*, Восстание..., с. 47—48.

340 Մուկատա՝աները 1694—95 թթ. սուլթանական մի ֆերմանով տրվում էին կապալառուներին ցմահ ու անվանվում էին մալիքանե (տե՛ս *B. A. Cvetkova*, L'évolution du régime féodal turc..., "Etudes historiques", Sofia, 1960, p. 196)։

341 Իլթիզամ (արաբ.)— եկամտի մի քանի տեսակները կամ ամբողջ եկամուտը կապալով տալու կարգը. այստեղից էլ՝ իլթիզամով տալ հասկացողությունը։ Մյուլթեզիմը իլթիզամ ստանալու համար պարտավոր էր նախապես պետական գանձարանին համապատասխան երաշխավորություն և ապահովություն տալ։

342 «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 66։

343 *M. Belin*, Essais..., p. 329—330.

344 *А. Ф. Миллер*, Мустафа паша Байрактар, с. 38.

հարկատու օբյեկտն էր հասնում այն մյուլթեզիմը, որը մուկատա'ան վերագնել էր երրորդ, չորրորդ անձնավորություններից։ Պարզ էր, թե ինչպես կվարվեր գյուղացիության հետ վերջին մյուլթեզիմը։ Քյաթիբ Չելեբին նշում էր, որ մուկատա'այի յուրաքանչյուր վերավաճառող վաշխառու ձգտում էր ապահովել իր ծախսերն ու իր շահույթը[345]։

Վաշխառուները խեղդում էին ժողովրդին պարտքերի տակ։ 1584 թ. Ամասիայի դատավորին ուղղված սուլթանական մի հրովարտակից տեղեկանում ենք, որ վաշխառու Չակալոզլու Հաջի Մեհմեդը կարողացել է կուտակել 30.000 ոսկի (ֆլորի) և անհաշիվ շարժական ու անշարժ գույք[346]։

Վաշխառուների ամենամեծ զոհերը մարաբա գյուղացիներն էին։ XVI դարի վերջերից այս հաստատությունն, ըստ երևույթին, տարածված է եղել հատկապես Արևմտյան Հայաստանի հարավում և հարավարևմտյան շրջաններում։ «Մուրաբայություն» կամ «մարաբայություն» կոչված այս հաստատությունը վաշխառուները հետևյալ ձևով էին շահագործում. գյուղացին պարտք էր վերցնում վաշխառուից ու իր տրամադրության տակ եղած հողը, անասունները, այգին ու պարտեզը գրավ էր դնում նրա մոտ և պարտավորվում էր տարեկան աճեցրած բերքի կեսը նրան հանձնել։ Նման պայմաններում կիսարարությունը որքան էլ հարատևեր, գյուղացին երբեք չէր ազատվում իր պարտքերից։ Եթե գյուղացին հրաժարվում էր կիսարարության սկզբունքից, ապա նրա ամբողջ ունեցվածքն անցնում էր վաշխառուի ձեռքը։ Փաստորեն գյուղացին դառնում էր վերջինիս սարուկը։ Ահա և մարաբա հաստատության մասին հիջրեյի 1042 (1632—1633) թվականին վերաբերող Մ. Ակդաղի հրատարակած վավերագրերից մեկը, որն ավելորդ չենք համարում թարգմանաբար մեջ բերել այստեղ. «Սա է. Խարպուտի (Խարբերդի) ենթակա Կեսրիկ գյուղի բնակիչներից Վարդանը... որդին ու եղբոր տղան՝ Սեմիկը և Մուշեղը և Դավթի որդի Կոկիսը շարիաթական դատարանում Խարպուտի Կասաբայի բնակիչներից Էլհաջ Ջաֆերի որդի Հասան Չելեբիի ներկայությամբ մեկ-մեկ խոստովանեցին, որ կարիքի դրդմամբ այս Հասան Չելեբուց վերցրել են երեք հարյուր ռիալի ղուրուշ ու փոխարենը նրա համար դարձել մարաբաները. ցանքսի ենթակա գարու ու ցորենի կեսը հիշյալին է պատկանում, իսկ մյուս կեսը իրենցն է, իրենց

[345] *B. A. Cvetkova*, L'évolution du régime féodal turc..., "Etudes historiques", p. 195.

[346] *M. Akdağ*, s. 553.

մուլք հողերում ինչ որ մշակենք, բերքի ժամանակ տասանորդը տալուց հետո, կես առ կես սկզբունքով բերքը պիտի բաժանենք... Եվ իրենց տրամադրության ներքո գտնվող ունեցվածքն ու մուլքերից նրա մոտ գրավ դրեցինք և երաշխավորեցինք նրան, որ եթե երբևիցե կամենանք դուրս գալ մարաբայությունից, ապա դա հնարավոր է հիշյալ Հասան Չելեբուն երեք հարյուր ղուրուշ գումար լրիվ վճարելուց հետո միայն...»[347]։

Թուրք ավատատերերի, վաշխառուների՝ գյուղացիների այս անմարդկային շահագործմանը մշտապես լծորդվում էր պետական-վարչական մարմինների կողմից կատարվող կամայականությունները։ Դա, ի միջի այլոց, շատ պատկերավոր ձևով նկարագրված է Միշել Ֆեբվրի կողմից։ Ահա թե ինչ է գրում նա. «Նահանգներում փաշաները դարձել են փոքրիկ թագավորներ և վարվում են իրենց հպատակների հետ համարյա նույնությամբ, ինչպես Մեծ տիրակալը (սուլթանը— Մ. Ղ.) ու իշխում են հպատակների ինչպես ունեցվածքի, այնպես էլ, մասնավորապես, կյանքի նկատմամբ, որոնց, երբեմն, զայրույթի պահին առանց դատի ու դատարանի մահվան են դատապարտում։ Նրանք հազար ու մի խժդժություններ են կատարում՝ գալով իրենց կառավարման ենթակա շրջանները։ Նրանց գործակալները ավերում են գյուղերը՝ գողանում, կողոպտում ու ամայի են դարձնում այն գյուղերը, որտեղից որ նրանք անցնում են... Նրանց վայրագությունների մասին ամբողջ հատորներ կարելի էր գրել, սակայն այդ մասին ես լռում եմ...»[348]։

Մի անանուն հեղինակ 1646 թ. գրում է թուրք փաշաների կեղեքումների մասին. «Ամենայն ապրանք թուրքացն բռնութեամբ է և անիրաւութեամբ, ուստի փաշայքն պարարտանան կար զօրութեամբ քրիստոնէից և հրէից, իսկ թագաւորն գիրանայ ընչիւք փաշայիցն, զոր օրինակ առուին լնուն և առատացուցանեն զգեստս, իսկ գետքն հուսկ յետոյ իջանեն ի ծովն և կորուսանեն զգալն ևս իւրեանց և զհամբաւ ջրոյն ևս»[349]։

[347] Նույն տեղում, էջ 536։

[348] *M. Febvre*, p. 93—94. ("Les Bachas sont de petits rois dans les provinces, et agissent presque le mesme pouvoir que le Grand Seigneur, tant sur les biens que sur la vie des particuliers qu'ils condamnent quelques fois à la mort dans la colère sans aucune forme de procez. Ils font mille désordres en se rendant au lieu de leur gouvenrement. Leurs gens ruinent la campagne, volent, pillent et désolent les villages par où ils passent... On ferait des volumes entiers de leurs tyrannies que je passe icy sous silence...").

[349] Մատենադարան, ձեռ. № 1496, էջ 309բ։

Այսպիսով, ինչքան մեծանում էր կենտրոնական կառավարության պետական բյուջեում առաջացած ճեղքվածքը, ինչքան տնտեսապես հզորանում էին նահանգներում նշանակված բարձրաստիճան պետական պաշտոնյաները ու փաստորեն դառնում անկախ, այնքան սաստկանում էր գյուղացիության շահագործումը կայսրության մեջ ու նրա սահմանների մեջ մտնող Արևմտյան Հայաստանում։ Փաշաները, քաջ գիտենալով իրենց պաշտոնի կարճատև լինելը,— գրում է Մ. Ֆեբվրը,— «...գործադրում են սարսափելի գազանություններ և կամայականություններ այն աստիճան, որ խեղճ ժողովուրդը հուսահատության է մատնվում և ստիպված թողնում է իր հողակտորը ու թափառում երկրե երկիր, փոխանակ աշխատելու ու մշակելու հողը, քաջ իմանալով, որ իր արտադրած բարիքը գնալու է բռնակալների քսակը»[350]։ Պատերազմներն այլևս ռազմավար չէին խոստանում օսմանցի զավթիչներին և Մեհմեդ IV-ի ժամանակ «...պետական գանձարանն ամբողջությամբ դատարկ էր»[351]։ 1643 թվականին, համաձայն Քյաթիբ Չելեբու, պետության տարեկան եկամուտը կազմել է 361.800.000 ակչե, իսկ ծախսերը՝ 500.000.000 ակչե, այսինքն՝ ճեղքվածքը կազմել է 138.200.000 ակչե[352]։ 1650 թվականին՝

եկամուտներ	ծախսեր	ճեղքվածք
532.900.000	687.200.000	154.300.000[353]

«Կանդիայի դժբախտ պատերազմից ի վեր,— գրում է պատմագիր Կարա-Չելեբիզադեն,— պետական գանձարան չմտավ և ոչ մի հատ դինար կամ դիրհեմ. զորքը ռոճիկ չի ստանում, մայրաքաղաքը ամեն ինչի կարիք ունի, Կրետեում՝ բանակը նույնպես, մինչև իսկ հացի պակաս է զգացվում»[354]։

Նման իրավիճակում, 1653 թ. կառավարությունը սուլթանի գլխավորությամբ խորհրդակցություն է անցկացնում, որը Քյաթիբ Չելեբու բառերով ասած, «պիտի փնտրեր հիվանդի ցավն ու բուժեր նրան մինչև նրա անբուժելի դառնալը»[355]։ Խորհրդակցությունում մի շարք միջոցառումներ են մշակվում, սակայն դրանք ոչ մի դրական հետևանք չեն

[350] M. Febvre, p. 233–234.

[351] M. Belin, Essais..., p. 311.

[352] Նույն տեղում, էջ 316։

[353] Նույն տեղում, էջ 319։

[354] Նույն տեղում, էջ 325։

[355] Նույն տեղում, էջ 325—326։

ունենում։ «Քանի որ չի կարելի միայն խոսքով բուժել ցավը,— գրում է պատմագիր Նաիման,— աչք փակեցին և սովորականի նման լռեցին»[356]։ Քննադատելով կառավարության կողմից պետական բյուջեի ճեղքվածքը փակելու նպատակով ձեռք առած միջոցառումները, Կարա-Չելեբիզադեն գրում է. «Միթե այսօր ուրիշ ելք չկա, քան հարկերի ավելացումը, յուրաքանչյուր վեց ամիս մեկ անգամ պետական պաշտոնների վաճառքն ու երեք ամիս մեկ անգամ պետական գանձարանից մի քանի հարյուր քիսե հանելը...»[357]։

Այսպիսով, օսմանյան տիրապետությունը Արևմտյան Հայաստանի հայ գյուղացիությանը բերում էր անլուր դժբախտություններ։ Եթե այս բոլորին ավելացնենք նաև արշավանքների ժամանակ օսմանյան բանակի գործադրած ոճիրները, վիճակը կդառնա ավելի պարզ։ Թուրքական զորքերի արշավանքներն ու ասպատակումները սովորաբար ուղեկցվում էին չտեսնված ավերումներով ու գազանություններով։ Նրանց հորդաները գործում էին հրով ու սրով, զարհուրելի մոլեգնությամբ ու դաժանությամբ։ Հաճախ էլ արշավանքի մեկնելիս ու վերադառնալիս, օսմանյան զորքը և ենիչերիները, ամիսներով ռոճիկ չստանալու պատճառով, ճանապարհին բացահայտորեն կողոպտում էին բնակչությանը։ Մերթ ընդ մերթ օսմանյան բանակը տեղավորվում էր տներում՝ դառնալով ծանր բեռ ժողովրդի համար։ 1618 թ. Ամիդում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Յայսմ ամի խիստ նեղութեան կայեաք, որ խալիլ փաշայ վազիրն երեկ Յամիթ, ի Պարս՝ ի պատերազմն գնալոյ բազում զօրօք։ Երեկ թաթար խանն ԽՌ (40.000) հեծելօք բազում նեղութիւն արարին գեղօրէիցն... խիստ նեղութիւն կրեցաք՝ իշան զօրքն ի տներն և յեկեղեցիքն, զպատերազմի վերջն Աստուած գիտէ»[358]։

XVII դարի հեղինակ Հակոբ Կարնեցին «Տեղագիր վերին Հայոց» աշխատության մեջ նկարագրելով հայրենի հողի հարստությունը՝ գյուղատնտեսական մթերքների առատությունը, հակադրում է դրան, մյուս կողմից իր ժողովրդի ծանր վիճակը, մի վիճակ, որը, ինչպես տեսանք, հետևանք էր թուրքական հարկային սիստեմի անտանելիության և թուրք պետական պաշտոնյաների կամայականության։ Նա գրում է. «...Զի ցեղ ու ցեղ և ազգի ազգի սուտ պատճառաւ հարկապահանջութիւնն և կեղե-

[356] Նույն տեղում, էջ 327։

[357] Նույն տեղում, էջ 333։

[358] Մատենադարան, ձեռ. № 10021, էջ 169բ։ Համանման տեղեկություններ տե՛ս Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, հ. 2, էջ 424։

քելն անասելի է և անպատմելի, անողորմ առնուլն ի քրիստոնէից։ Զի ինձ այսպես թուի, թէ Դանիել վասն չորրորդ գազանին, թէ ահեղ էր և զարմանալի, ուտէր և զմնացեալսն առ ոտն կոխէր»[359]։

XVI—XVII դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանները լի են տրտունջներով, արցունքներով ու հայ ժողովրդի ծանր վիճակի նկարագրությամբ։ Այդ հիշատակարաններում հաճախակի կարելի է հանդիպել այսպիսի տողերի. «ի դառն և ի վշտաբեր ժամանակիս, յորում կամք ի նեղութիւնս, ի տառապանս, ի այլասեռից ազգաց, զի զամենեսեան չարչարեն և նեղեն, տուժեն և տանջանեն, կեղեն և կեղեքեն, և այլ ազգի-ազգի վշտաւք տանջեն»[360]։

1642 թ. շարադրած հիշատակարանում կարահիսարցի գրիչ Մանուելը գրում է, որ ձեռագրի ընդօրինակման աշխատանքները կատարել է «ի նեղ և ի դառն ժամանակիս, որ վասն ծովացեալ մեղաց մերոց ընդ բոմամբ ածեալ աշխարհս ընդ չարաշուք և ընդ մարդախողխող և ընդ գազանադէմ ազգին նեստողաց (թուրքերի), զոր ազգի-ազգի նեղութեամբ և չարչարանօք և հարկապահանջութեամբ կեղեքեն և աւերեն զաշխարհս, և ոչ ուստէք հասանի օգնութիւն ոչ յերկնէ և ոչ յերկրէ, այլ ոչ ուստէք»[361]։

XVII դարի վերջերին «Սրբազան դաշինքի» պետությունների դեմ մղված պատերազմների հետևանքով օսմանյան պետությունն ընկել էր ֆինանսական ծանր ճգնաժամի մեջ։ Կառավարությունը բանակի կարիքներն ապահովելու նպատակով դիմում էր եկամտի նորանոր աղբյուրների հայտնաբերմանը։ Հիջրեյի 1098 (1686—87) թվականին, պատմագիր Ռաշիդի վկայությամբ, ամբողջ կայսրության ռայաթներից բռնությամբ գանձում էին «իմգադի-սեֆերիե» («օգնություն պատերազմի կարիքների համար») կոչված միանվագ գումարը, որի չափը մատնանշված չէ պատմագրի մոտ[362]։ Այնուհետև գործի դրվեց բնակչությունից ոսկյա ու արծաթյա զարդեղենների բռնի հավաքման տարածված պրակտիկան։ 1688 թ. քրիստոնյա հպատակներից սկսեցին գանձել «ոյուսյում-ի համբր» («գինու համար հարկ») կոչված հարկը[363], որը մի նոր անտանելի բեռ դարձավ ժողովրդական հոծ զանգվածների համար։ Այդ մասին է վկայում դարձյալ պատմագիր Ռաշիդը[364]։ Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում տեղ-տեղ բռնկվում էին գյուղացիական ապստամբություններ[365]։

Նկատի ունենալով երկրում ստեղծված վիճակը, XVII դարի 90-ական թվականներին մեծ վեզիրի պաշտոնը ձեռք բերած Ֆազըլ Մուստաֆա փաշան ստիպված եղավ թեթևացնել ժողովրդից գանձվող ու «ապօֆա փաշան ստիպված եղավ թեթևացնել ժողովրդից գանձվող ու «ապօրինի» («բիդ՚աթ») անվանված հարկերն ու տուրքերը։ Այսպես, իշեցվեցին ավարիզի, սյուրսաթի, իշթիրայի, միայն քրիստոնյա հպատակներից գանձվող «ոյուսյում-ի համբ-ի» (գինու համար) և «ոյուսում-ի սաարաբ-ի» («օղու համար») գանձվող հարկերի ու տուրքերի չափը[366]։ Սակայն ռազմաճակատում մեծ վեզիրի սպանվելուց հետո, նորից հարկերն սկսեցին գանձել նախորդ տարիների ընթացքում թույլ տրված «սխալների» հետևանքով կուտակված պարտքերը[367]։ Գյուղացիները սկսեցին զանգվածորեն լքել իրենց գյուղերը, ապաստանվել քաղաքներում՝ մի կերպ իրենց ֆիզիկական գոյությունը պաշտպանելու նպատակով։ Գյուղացիների կողմից լքված գյուղերը, Ռաշիդի վկայությամբ, կառավարությունը սկսեց փաճառել կալվածատերերին, մյուլթեզիմներին ցկյանս[368]։

1699 թ. Կարլովիցի հաշտության պայմանագրի կնքումից հետո, աղբյուրների վկայությամբ, կառավարությունը դադարեցրեց գյուղացիությունից գանձել այսպես կոչված «արտակարգ հարկերը» («թեքյալիֆ-ի շակկա»), սակայն դրանով ժողովրդական լայն զանգվածների վիճակը չբարելավվեց։

1697—1702 թթ. ընթացքում մեծ վեզիր Ամջազադե Հյուսեյն փաշան՝ վերացնելով հանդերձ գյուղացիների վրա դավթարներում արձանագրված պարտքերը, իր հերթին, փնտրեց եկամտի նոր աղբյուրներ։ Նրա

---

359 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 562։

360 Մատենադարան, ձեռ. № 4796, էջ 433բ։ 1604 թ. Վարագա վանքում արտագրված մի ձեռագրում կարդում ենք. «...յամենայն կողմանց պաշարեալ է զմեզ վիշտս և խռովութիւն և ցասումն յահէ անօրինաց, քանզի ի ժամանակիս յայս մեկ ոչ ունիմք հանգիստ և դատարումն՝ ոչ յամարայնին և ոչ ի ձմերայնի, ոչ յեղանակս գարնանային և ոչ յաշնանային, ոչ տիւ և ոչ գիշեր, ոչ շաբաթ և ոչ ամիս այլ միշտ և հանապազ յերերեալ և սասանեալ կամք։ Յորժամ ննջիմք, ասեմք՝ «ե՞րբ լիցի առաւօտ»։ Եւ յորժամ առաւօտ լիցի, ասեմք, «ե՞րբ լիցի երեկոյ»։ Եւ այսպէս յամենայն կողմանէ վիշտ և խռովութիւն...» (Ղ. Փիրղալեմյան, Նշխարք..., հ. Ա, № 641)։

361 «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ», հ. 1, էջ 321։

362 *Raşid*, c. I, s. 496.

363 Նույն տեղում c. I, s. 250. տե՛ս նաև *H. A. R. Gibb*, and *Harold Bowen*, Islamic society and the West, v. I, London, 1957, p. 27.

364 *Raşid*, c. II, s. 37—38.

365 Նույն տեղում։

366 *Raşid*, c. II, s. 99, 149.

367 *C. Orhonlu*, s. 4.

368 *Raşid*, c. II, s. 288—289.

հրամանով այլևս հաշվի չէին առնվում այն արտոնությունները, որոնցից օգտվում էին գյուղացիության այն խմբերը, որոնք կատարում էին պարհակային աշխատանքներ (կամուրջների և ճանապարհների շինարարություն, լեռնանցքների հսկողություն, պոստային ծառայություն և այլն)[369]։ Ավելացվեցին քաղաքային բնակչությունից գանձվող հարկերը[370]։ XVIII դարի սկզբից հրապարակորեն սկսեցին վաճառվել արհեստներով զբաղվելու համար տրված կառավարական արտոնագրերը, այսպես կոչված գեդիկները[371]։ Կրճատվեցին բանակի վրա ծախսվող որոշ գումարներ, կրճատվեց էսամե (թոշակ) ստացող ենիչերիների թիվը, որը տեղի տվեց ենիչերիների անվերջ ապստամբությունների ու պետական հեղաշրջումների։ Ի դեպ, Ղ. Ինճիճյանը, խոսելով Էրզրումի մասին, բերում է ռամկական հայտնի ասացվածքն այն մասին, որ «Էրզրումուն մեյվասը շոք, բահչեսի յոկ, ենիչերիսի շոք, էսամեսի յոկ», այսինքն՝ Էրզրումի պտուղը շատ է, պարտեզ չունի, ենիչերիները շատ են, թոշակ չեն ստանում[372]։ Այդ իսկ պատճառով ենիչերիները իրենց թոշակը «գանձում էին» ժողովրդից։ Բաղդասար գրիչն Էրզրումից 1758 թ. գրում է այդ «գանձման եղանակի» մասին. «...Քաղաքիս ինկիչարիքն ամենայնքն զոռպայ են դարձեր ամենայն օր կու արբենան, կու կողոպտեն զքաղաքի խեղճ եւ ողորմելի քրիստոնեայսն ոմանք Ի(20) հոգով ոմանք Լ(30) կամ Խ(40) հոգով կու գնան քրիստոնէից տունն. կուտեն, կու խմեն և վերջ փեշքաշ մի այլ կառնուն այն տանէն, ապա թէ կելանեն ու գնան միւսին տունն»[373]։

XVIII դարի սկզբի Թուրքիայի համար բնորոշը դարձավ ֆինանսական դժվարությունները, ժողովրդական (գյուղացիական) հուզումները, ավատատերերի անջատողական ձգտումները, ենիչերական անվերջ խռովությունները ու մեծ վեզիրների ստեպ-ստեպ փոփոխությունները։

Պետական գանձարանը դարի սկզբում ամբողջովին դատարկվել էր։ Այս իմաստով հիշարժան է սուլթան Ահմեդ III-ի գահակալության առթիվ (1703 թ.) թուրքական պատմագրության մեջ հիշատակված միջադեպը։ Երբ ենիչերիները, ըմբոստանալով, սուլթանին հայտնում են, որ նա գահ չի բարձրանա մինչև չվճարի իրենց «ջյուլյուս ակչեսին» («գանձակալության առթիվ բաշխված գումարը»), սուլթանը պատասխանում է. «Իմ գանձարանը ձերն է, և դուք գիտեք, որ այն գանձարանը, որ ես ընդունեցի չի պարունակում և ոչ մի ակչե...»[374]։

Աղբյուրներում չափից դուրս ժլատ ու դրամասեր ներկայացված Ահմեդ III-ը[375] անցնելով իշխանության գլուխ, դիմեց ամեն միջոցի պետական գանձարանը ու իր իսկ կարողությունը առասպելական չափերով մեծացնելու նպատակով։ Առաջին քայլն այդ ուղղությամբ, ինչպես վկայում է Ռաշիդը, հարկերի ու տուրքերի խիստ ավելացման միջոցով կատարվեց։ Հատուկ ֆերմանով կարգադրվում էր ընդարձակել արծաթյա հանքերի շահագործումը[376]։

Կառավարության այս հարկային քաղաքականությունը իր արտահայտությունն է գտել ժամանակի ձեռագրերի մի շարք հիշատակարաններում։ 1708 թ. Լիմ անապատից գրիչ Կարապետը արտագրում է ճառընտիրը «...ի դառն և ի նուրբ ժամանակիս, որ վասն բազում մեղաց իմոյ, և անուղղայ գնացիցս բազմացեր են անօրենքն և նեղեն զմեզ ի հարկապահանջութիւն, և յայլ ազգի ազգի նեղութիւնս...»[377]։ 1710 թ. գրիչ Աբրահամ եպիսկոպոս Թեքիրդաղցին (հետագայում՝ Աբրահամ կաթողիկոսը) գրում է. «Ի թվին ՌՃԾԹ (1710) սեպտեմբերի Ժ(10) եղեւ գրաւ գրոյս, ի դառն ժամանակիս, որում գերի կամք ի ձեռս հագարացւոց այլազգեաց Օսմանցոց. և յայսմ ամի կամեցաւ վեզիրն, որ է թագաւորի փոխանորդ Ի. Ի (քսանական) ղոշ. գլխաՀարկ առնուլ, որ է խարաճ»[378]։

Հարկերի ու տուրքերի խիստ ավելացումից բացի, գյուղացիներին մեծապես հարվածում էր դեռևս սուլթան Մուստաֆա II-ի ժամանակ ստեղծված մալիքանե հաստատությունը, որը փոխարինելու էր եկել նախկինում լայն տարածում ստացած մուկատա՝աներին։ Մալիքանեն նախկին մուկատա՝ան էր, որը տրվում էր մալիքանեն գնած վաշխառուին կամ որևէ պետական բարձրաստիճան պաշտոնյային՝ ցկյանս։ Մալիքանեն նպաստում էր գյուղացիության սանձարձակ շահագործմանը. դա ստիպված էր խոստովանել նույնիսկ պետական դավթարդարը (ֆինանսական վերակացուն)՝ մեծ վեզիրին հղած զեկուցագրում.

---

369 *С. Ф. Орешкова*, с. 43.

370 *М. С. Мейер*, Восстание городских низов в Стамбуле в 1730 г., «Народы Азии и Африки», № 4, с. 36.

371 *С. Ф. Орешкова*, с. 43.

372 Ղ. Ինճիճյան, էջ 75։

373 *Մուրմար*, էջ 91։

374 *M. Belin*, Essais..., p. 192.

375 *De la Croix*, Abrégé chronologique de l'histoire ottomane, t. II, Paris, 1768, p. 715; *M. Mignot*, Histoire de l'empire ottoman..., p. 237, 317; *Mary Lucille Shay*, The ottoman empire from 1720 to 1734, p. 17, 22.

376 *Raşid*, c. IV, s. 4, 34, 176.

377 *Մատենադարան*, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, № 133, էջ 516։

378 «Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանին հայոց», էջ 967։

«...Մալիքանեյի տերը կիսելով եկամուտը, զիջում է այն կոնցեսիայի իրավունքով մի ուրիշին, որը, իր հերթին, նույն ձևով այն վաճառում է մի նոր տիրակալի այն հաշվով, որ մալիքանեն դառնում է մի ծանր բեռ, որն ընկնում է հարկատուների վրա։ Ավելին, քանի որ մալիքանեն սերբեստ (ազատ) է, ճնշման ենթակաները չեն կարող իրենց հույսը դնել ոչ վալիների, և ոչ էլ կադիների (դատավորների) հովանավորությանը։ Եվ սրանք (վերջինները), տեսնելով այս ռեժիմի պատճառով իրենց եկամուտները նվազած, գյուղացիների նկատմամբ թույլ են տալիս հազար ու մի հալածանք, հազար ու մի հրապարակային ստորացում»[379]։ Այս դեկուցագրի հիման վրա, 1715 թ. հրապարակված հատուկ ֆերմանով վերացվում են Մուստաֆա II-ի ժամանակ ստեղծված մալիքանեները ու նորից վերականգնվում է իլթիզամի (կապալառություն) հաստատությունը։ Սակայն շուտով, ինչպես այդ մասին վկայում է Ռաշիդը, մալիքանեների հրապարակային վաճառքը կրկին դրվում է աճուրդի։ Ժամանակակից թուրք պատմաբան Մյունիր Ակթեփեն, անդրադառնալով մալիքանեների վերականգնման հարցին, գրում է. «Կարճ ասած՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացության. ժամանակ առ ժամանակ իլթիզամի տրված տեղերը ավելի բարձր գնով մալիքանեյի իրավունքով վաճառվել է, և ժամանակ առ ժամանակ ևս մալիքանե հանդիսացող վայրերը ավելի բարձր գնով տրվել են իլթիզամի, և, այսպիսով, ի վերջո՝ ապահովել է պետության ցանկացած եկամուտը»[380]։

Ժողովրդական լայն զանգվածների շահագործման միջոցով պետական եկամուտները ապահովելու համար 1716 թ. կառավարությունը կարգադրում է բաց թողնել ոսկեդրամներ, որտեղ ոսկու տոկոսը իջեցվում էր այն աստիճան, որ Ռաշիդի բառերով ասած «մի իսկական ամոթ էր երկրի համար»[381]։

1717 թ. թուրք-ավստրիական պատերազմը ստիպեց կառավարությանը փնտրելու եկամտի նոր աղբյուրներ, իսկ երբ սուլթանը ստիպված սկսեց օգտագործել նաև, այսպես կոչված, սեփական ներքին գանձարանը (էնդերուն), ապա այդ ծախսերի փակումը, բնականաբար, նորից բարդեց աշխատավոր զանգվածների ուսերին[382]։

Սուլթան Ահմեդ III-ի իշխանության տարիները Թուրքիայի պատմության մեջ մտան, որպես «լալե դեվրի» («կակաչների դարաշրջան») ընդհանուր անունով։ Ստամբուլի տարբեր մասերում, հաճախ Եվրոպայից հրավիրված ճարտարապետների օգնությամբ, կառուցվում էին շքեղ պալատներ, հոյակապ պարտեզներ՝ բազմաթիվ շատրվաններով, հանգստավայրեր, այն ժամանակ, երբ ծայրահեղ աղքատության մեջ էին գտնվում քաղաքային ու հատկապես գյուղական բնակչությունը։ Մայրաքաղաքում ժողովրդական լայն զանգվածների վիճակն այն աստիճան ծանր էր, որ սուլթանի ու սուլթանական պալատի նկատմամբ եղած խոր ատելությունն ընդհանուր էր, որը և ի վերջո հասցրեց 1730 Պատրոնա Խալիլի գլխավորությամբ համընդհանուր ապստամբությանը։

Նեվշեհիրլի Դամադ Իբրահիմ փաշայի մեծ վեզիրության տարիներին կառավարության գլխավոր հոգսը պետական գանձարանի եկամուտների ապահովման հարցն էր։ 1719 թ. մեծ վեզիրը հատուկ ֆերման հրատարակեց, համաձայն որի գյուղացիներին ամենախիստ ձևով արգելվում էր թողնել իրենց բնակավայրերը ու գաղթել մայրաքաղաք։ Ֆերմանը, սակայն չունեցավ և ոչ մի արդյունք[383]։ Ռաշիդի վկայությամբ, մեծ վեզիրի ֆերմանի գլխավոր նպատակը «Ռայաթից հարկերի գանձման ապահովումն էր»[384]։

1723—1724 թվականների ընթացքում, ռուսական զորքերի մերձկասպյան արշավանքի կապակցությամբ, երբ սրվեցին ռուս-թուրքական քաղաքական հարաբերությունները, դեռևս պատերազմ չհայտարարած, 1724 թ. փետրվարին (ջեմազիուլ-էվվել 1136 թ.) սուլթանական կառավարությունը հատուկ ֆերման հրատարակեց կայսրության մեջ պատերազմի կարիքների համար «իմդադ-ի սեֆերիյե» հավաքելու մասին[385]։ 1724 թ. մայիս (էվաիլ-ի ռամազան 1136) թվակիր արխիվային մի փաստաթղթում, որը մեջ է բերում Մյունիր Ակթեփեն Պատրոնա Խալիլին նվիրված աշխատության մեջ, ուղղակիորեն ասվում է. «Ռումելիում և Անատոլիայում գտնվող խասսերի, վակֆերի, զեամեթների ու թիմարների իրավասության ներքո գտնվող գյուղերում ու ավաններում հողագործությամբ զբաղվող ու դավթարում արձանագրված գյուղացիներից ռայաթական հարկեր, ընդհանուր հաշվով, բենակ և այլ օրինական («rüsümet—i kanuniye») հարկեր են գանձվել. մուսուլման և զիմմի (քրիստոնյա) ռայաթներից ոմանք լքելով իրենց

379 *M. Belin*, Essais, p. 201.
380 *M. Aktepe*, s. 5.
381 *Raşid*, c. II, s. 142.
382 *M. Belin*, Essais..., p. 205.

383 *J. Hammer*, t. XIV, p. 57.
384 *Raşid*, c. III, s. 78.
385 *M. Aktepe*, s. 8.

վաղնջական հայրենի վայրերն այլևս չեն զբաղվել հողագործությամբ (ziraat ve hiraseti terk)... և «ռյուայում-ի ռայաթի» հարկերը չվճարելու ձգտումով եկել են Ստամբուլ ու զբաղվել այլ գործերով»[386]։ Մեկ այլ վավերագրից, որը նույնպես հրատարակել է Մյունիր Ակթեփեն, պարզվում է, որ դեպի մայրաքաղաք և այլուր փախուստ տված գյուղացիների պարտքերը վճարել են համագյուղացիները[387]։

Մինչև 1727 թ. Համադանի հաշտության պայմանագրի կնքումը, հարկերի ու տուրքերի գանձումը գյուղական ու քաղաքային ազգաբնակչությունից, ինչպես վկայում են աղբյուրները, հասել են մեծ չափերի ու անտանելի բեռ դարձել ժողովրդական լայն զանգվածների համար։ Միայն Թուրքիայի համար խիստ բարենպաստ պայմանագրի կնքումից հետո, երբ կայսրությունը մեծ հանդիսավորությամբ տոնում էր թշնամու նկատմամբ տարած հաղթանակը, կառավարությունը հնարավոր գտավ վերացնել պատերազմի տարիներին գանձված մի շարք հարկերը։ 1727 թ. դեկտեմբեր (էվասիտ-ուլ-ռեբիուլ ախիր 1140) թվակիր սուլթանական ֆերմանում ասված է. «Արևելյան պատերազմի ընթացքում, ծայրահեղ անհրաժեշտությունից դրդված, անհատույց գանձված «թեքյալիֆ-ի օրֆիյեյից», «շակկայից» և «իմդադ-ի սեֆերիյեյից» գյուղացիները ամբողջովին քայքայվել են» «և որ այժմ՝ պատերազմի ավարտից հետո, փադիշահական արդարությամբ այդ բոլորը վերանում են, և աղքատ գյուղացուց պետք է գանձել միայն խաղաղ ժամանակաշրջանի համար նախատեսված հազերիյեյեն և ուրիշ ոչինչ»[388]։

Սակայն մի երկու տարի անց, Իրանի հետ պատերազմական գործողությունների վերսկսելը առիթ տվեց կառավարությանը նորից ժողովրդից գանձելու արտակարգ ու ապօրինի կոչված հարկերի ու տուրքերի մի ամբողջ շարք։ Մի կողմից պատերազմի հետևանքով երկրի ընդհանուր ավերվածությունը, մյուս կողմից դաժան հարկատվությունը՝ գյուղացիությանը հասցրին ծայրահեղ աղքատության գիրկը։

Մյունիր Ակթեփեյի վկայությամբ, թուրքական աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ վավերագրեր այն մասին, թե ինչպես զեամեթի ու թիմարի տեր ավատատերերը, վոյվոդաները, քեղխուդաները, կադիներն ու նաիբները գյուղացիներից հարկեր գանձելիս թույլ են տվել բռնություններ ու կամայականություններ։ «Կարճ ասած,— գրում

386 Նույն տեղում։

387 Նույն տեղում։

388 Նույն տեղում, էջ 10։

է Մ. Ակթեփեն,— մինչև մոտ 1730 թիվը, լինի Անատոլիայում, լինի Ռումելիում գտնվող սանջակներում և կազաներում մի կողմից ռայաթի (գյուղացիության), մյուս կողմից մյուլթեզիմների, մալիքանեյի տերերի, թիմարի, զեամեթի ու խասսի տեր ավատատերերի, այլևայլ եկամուտ ստացող պետական պաշտոնյաների միջև տևական ընդհարումներ էին տեղի ունենում»[389]։

Մյունիր Ակթեփեն թուրքական արխիվներում պահպանված վավերագրերից մեջ է բերել գյուղացիների՝ սուլթանական կառավարությանը հղած մի շարք բողոքագրեր, որոնք որոշակի լույս են սփռում գյուղացիության վիճակի վրա։ Վավերագրերում խոսքը վերաբերում է թուրք գյուղացիությանը[390], սակայն դժվար չէ պատկերացնել, թե ինչ վիճակում կարող էր լինել քրիստոնյա գյուղացիությունը։

1730 թ. Պատրոնա Խալիլի ապստամբության հետևանքով գահ բարձրացած Մահմուդ I-ի առաջին քայլերից մեկը եղավ ժողովրդական լայն խավերին, նախ և առաջ գյուղացիությանը, որոշ հարկերից ազատելը։ Մ. Մինյոյի վկայությամբ, երբ Մահմուդ I-ը Պատրոնա Խալիլից հարցրեց, թե ինչ վարձատրություն կպահանջեր իրենից ստացած գահի փոխարեն, նա պատասխանեց. «...Անհապաղ վերացնել այն հարկերը, որ բռնակալ Իբրահիմը ամբողջ կայսրության մեջ բարդել էր ժողովրդի վրա, և որը պատճառ դարձավ նրա մահվան և Ահմեդի գահընկեցությանը»[391]։

389 M. Aktepe, s. 13.

390 Ավելորդ չենք համարում թարգմանաբար բերել այդ բողոքագրերից մեկը, որը թվագրված է 20 շեվվալ 1141 թ. (29 մայիս 1729 թ.)։ Վավերագրում ասված է. «Հզոր ու գթառատ նորին մեծություն մեր սուլթանը ողջ լինի.

Ձեզ գրում են Շումնու կազային ենթակա Կայաջրկ կոչված գյուղի թիմարի տեր գյուղացի ձեր ստրուկները։ Երբ մենք մեր վրա գրանցված «շարիաթական աշարը», «ռեսմ-ի մյուշերեդը», «ռեսմ-ի բենակը», «ռեսմ-ի չիֆթը» և այլ մեր հարկերն ու տուրքերը օրենքի ու դավթարի համաձայն մեր սիփահուն վճարեցինք, և երբ ոչ մի զանցանք չէինք գործել, մեր սիփահի Ահմեդ կոչեցյալը, միայն և միայն ագահության պատճառով, ապօրինի կարգով դավթարում արձանագրվածից ավել խեղճ աղքատներից «ռեսմ-ի չիֆթի» հետ միասին քսաներկուական ակչե բռնությամբ առնելուց բացի անվճար մեր ձեռքից խլեց պարեն, ոչխար ու գառ, հորթ ու գարի և այլ պարենամթերք. բացի այդ մեր ընտանիքի անդամներին ձրի աշխատեցրեց։ Բացի այդ մեր փեթակներում եղած մեղրից պահանջեց «ռեսմ-ի կովան...»։ Բողոքագրի վերջում սուլթանին խնդրում են նման ապօրինությունների առաջն առնել (նույն տեղում)։

391 M. Mignot, p. 342—343.

1732—1733 թվականներին Նադիրկուլիի Թուրքիայի դեմ վարած պատերազմները ստիպեցին կայսրությանը պահել մի մեծ բանակ, որի կարիքների ապահովումը դարձյալ ընկնում էր ժողովրդական զանգվածների վրա։ Պատմագիր Սամիի վկայությամբ, կենտրոնական կառավարությունը հանձնարարում էր նահանգների կառավարիչներին իրենց հայեցողությամբ հավաքել հարկերն ու տուրքերը ու շտապ կարգով ոտքի կանգնեցնել ռազմական ջոկատներ[392]։ «Պատերազմը Պարսկաստանի հետ,—գրում է Յոզեֆ Համմերը,—հրամայական անհրաժեշտություն էր դարձնում հատուկ միջոցներ ձեռնարկելը՝ պետական գանձարանը և պետական ֆինանսները բազմապատկելու նպատակով»[393]։

1740 թ. Նադիր շահի հետ պատերազմը պատճառ էր դարձել գյուղացիների դեպի մայրաքաղաք փախուստին, որը նպաստել էր և գյուղատնտեսության հետագա անկմանը։ Մայրաքաղաքում պարենամթերքների գները խիստ աճում են։ Կառավարությունը, Սուրհիի վկայությամբ, հրաման է արձակում գյուղացիներին անհապաղ իրենց նախկին բնակավայրերը վերադառնալ[394]։

Նադիր շահի հետ հաշտության պայմանագրի կնքումից հետո գյուղացիության վիճակը ոչ միայն չբարելավվեց, այլ ընդհակառակը՝ ավելի վատացավ։ Այդ մասին է վկայում Հ. Գրենվիլը 1766 թ. հունիսի 12-ի իր զեկուցագրի մեջ։ Նա գրում է. «Մի բան թվում է իրական ու անվիճելի. դա այն է, որ չնայած Թուրքերը ահա երեսուն տարի վայելում են խաղաղությունը, բայց բնակչությունը փոխանակ աճելու, ճիշտ ընդհակառակը՝ նվազում է, թեպետ Կոստանդնուպոլսի արվարձանները շարունակ մեծանում են, սակայն գյուղը, բովանդակ կայսրության մեջ, մեր աչքի առաջ դառնում է անմարդաբնակ։ Ես ճանաչում էի երևելի մարդկանց, որոնք քառասուն տարվա ընթացքում առիթներ են ունեցել մշտապես ճանապարհորդելու այս կայսրության հեռավոր անկյունները։ Նրանք ինձ ասացին, որ այլևս չեն գտել գեղեցիկ գյուղերի հետքերը, որոնք իրենք մի ժամանակ հանդիպել էին իրենց ուղևորության ընթացքում։ Ես արդեն վերևում խոսեցի փաշաների դիշատիչության մասին. սրանք կարող են իրենց պաշտոնում մնալ միմիայն կաշառքի ու ընծաների ուժով. արծաթի օգնությամբ նրանք միշտ կարող են գնել իրենց ոճրագործությունները ու անպատիժ մնալ։ Այդ նրանք են, որ ամենից շատ են պատճառ դառնում այս գեղեցիկ երկրամասերի ամայացմանը։ Սրան պիտի ավելացնել նաև ներկայիս Մեծ Տիրակալի... հնարամտությունը՝ այնքան հաճախ են փոխում փաշաներին նահանգներում, որն առիթ է ծառայել հանրահայտ Թուրքական առածի, որ երբեք երկու տարվա խոտ չի բուսնի այն վայրերում, որտեղից անցել է մի փաշա»[395]։

Ղ. Ինճիճյանը, որպես ականատես, գրում է համարյա նույնը։ Խոսելով Երզնկայի մասին, նա հատուկ շեշտում է, որ «Հստ ոմանց ասելոյ յառաջագոյն ունէր 250 գիւղօրէս, այլ այժմ ի պատճառս կեսելոյ յառաջագոյն ունէր նորա լքեալ կան և անմարդաղեքելոյ իշխանաց բազում գիւղօրէք նորա լքեալ կան և անմարդաբնակ, և գիւղօրէք ինչ կործանեալք կամ ընդ կիսոյն քայքայեալք»[396]։ Մի այլ տեղ, անդրադառնալով Մշո գավառին, նա գրում է. «Աստ և անդ ի ձորն և ի շրջակայ լերինս (Մշո արևելքում— Մ. Ղ.) երևին բազում աւերակք գիւղօրէից և շէնից»[397]։ Նման վկայություններ շատ կարելի է բերել։

Գյուղերն ամայանում են նաև պարբերաբար կրկնվող երաշտից ու նրան ուղեկցող սովից։ Այդպիսի մի սարսափելի սովի մանրամասն ու սրտաճմլիկ նկարագրությունը 1758 թ. թողել է Հակոբ դպիր Տիգրանակերտցին։ Սկզբում նա նկարագրում է երաշտին նախորդող սաստիկ ցրտերը, որը կատարյալ աղետ է դարձել ժողովրդի համար։ «Ի թուականութեանս հայոց ՌՄՁ (1757) յամսեանն նոյեմբերի, հնչեաց հողմն սաստիկ հիւսիսային, կծու և ցրտաբեր, որ իսկոյն սառուցեալ պաղեցոյց զամենայն երկիրս, և օդն խռովեալ և պղտորեալ իբրև գծով ալեկոծեալ և սկսաւ ձիւնել. և տեղացեալ ոչ իբրև զձիւն, այլ ամենևիմբ նման փոշւոյ ծածկեալ զերեսս երկրի. և օր աւուր խստացեալ առաւելաւ ցուրտն մինչ զի մեծ գետն Տիգրիս սառուցեալ պաղեցաւ, յորոց վերայ զաւուրս Խ(40) կարաւանք և ճանապարհորդք բեռամբ և գրաստիւք երթևեկս առնէին... Ուստի ամենայն արուեստք և գործք խափանեցան, ոչ կարէր ոք ելանել արտաքոյ շինութեանց և բնակութեանց վասն սաստկութեան ցրտոյն ևս յահէ գայլոց, որք կատաղեալ ուտէին կենդանի մարդ։ Եւ վասն այսմ սաստկութեան ցրտոյն ամէնայն պտղատու ծառք և տունկք զօսացեալ չորացան, և այսպիսի նեղութեամբ և տառապանօք էանց ձմեռն այն. բազումք աղքատացան և

392 *Sami*, s. 49, 50.
393 *J. Hammer*, t. XV, p. 75.
394 *Saphi*, s. 177.

395 *H. Grenville*, p. 71.
396 Ղ. Ինճիճյան, էջ 98։
397 Նույն տեղում, էջ 190։

չքաւորաց՝ վասն չունելոյ զածուխ և զփայտ և զհանդերձս ծածկութիւն՝ պաղեցեալք չորացան և մեռան։

Եւ ի փոխել թուականիս ՌՄԷ (1758), և հասանել ի մարտի ամիսն, և յեղանակըս գարնանայինսն թուլացաւ պաղն, բայց որպէս ի ժամանակս Եղիա մարգարէին եղեն ի վերայ երկինք պղնձի և երկիր երկաթի... Քանզի եղեւ երաշտութիւն անձրևի... Մինչ ի սաստիկ շորութենէ երկրին սկսան ցամաքիլ ի բնէ և վաղեմի բղխեցեալ մեծամեծ աղբիւրք»։ Երաշտին հաջորդում է մարախը «...որք իբրև զսպառազինութիւն անթիւ զօրաց՝ գոյացեալք ի մերձակայից Նինուէոյ, ծածկեցին զամենայն դաշտս և զգաւառս, և կերեալ զամենայն արտօրայս և զբոյսս դալարս և ընդեղենաց... որ բնաւին չմնաց ինչ ուտելոյ ոչ մարդկան և ոչ անասնոց մինչև զբանջարեղէնս, վասնորոյ տիրեաց սովն երկրին այնմիկ ահարկու սաստկութեամբ... զի ցորենի քիլեն է(7) ղուրուշէն վաղեաց ցԺե(15) ղրշ. և Իե(25) ղրշ. և զկնի սակաւ աւուրց Լ(30) և Խ(40) և ապա Ծ(50) մինչև զվաթսուն ղուրուշ եգիտ տեղի»[398]։

Սովը տարածված էր ոչ միայն Տիգրանակերտում, այլև արևմտահայ գավառների մեծ մասում։ «Եւ տիրեալ սով ի Նիմուէ Քաղաքէն մինչև զՍեբաստիա, և ի Բերիոյ մինչև զԱրզրում։ Այսքան միջոց ոչ գտանիւր կերակուր ուտելոյ»[399],— գրում է մեր հեղինակը։

Նույնը վկայում է նաև Ղ. Ինճիճյանը նշելով, որ «...տիրեաց սովն կորստական ի Մուսլայ մինչ ի Սեբաստ, և ի Հալպայ մինչ յԷրզրում. մի քիլէ ցորենոյ որ յառաջագոյն վաճառէր 7 ղուռուշի, վաճառեցաւ 15, 25 ղուռուշի յետ սակաւուց 30, 40 և նաև ղուռուշի, աղքատք յետ վաճառելոյ զկահ և զկարասիս իւրեանց նուաստ գնով ի գտանել հաց, վաճառեցին ապա նաև զորդիս իւրեանց դիւրագին քան զյաւանակս»[400]։

398 «Դիւան հայոց պատմութեան», հ. Ժ, էջ 197։

399 Նույն տեղում։ Աստվածատուր, Հովհան և Առաքել Ակնեցիների ժամանակագրության մեջ կարդում ենք. «Թուին հայոց ՌՄԶ (1757) հոկտեմբերէն սկսաւ սղութիւն, որ չափ մի ցորենն Ը(8) ղրուշ ելաւ և ՌՄԸ (1758) փետ(րուար)ին մինչ յուլիս ցորենին չափն Դ(4) ոսկի մինչ Ե(5) ոսկի, չափն Իե (25) Օե(այ) էր։ Եւ բազում տեղ հայրք զորդիսն և մայրք զդստերսն իւրեանց վաճառեցին և բազում զսանդեայ մանկունս ընկեցին ի փողոցն և բազումք ի ճանապարհի սովամահ եղեն» («Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 475)։

400 Ղ. Ինճիճյան, էջ 205։

Սովը խլել է մարդկային մեծ զոհեր. «...սկսան աղքատքն հաշել և մաշել, և հիւծեալ սովալլուկ մեռանել, այնքան բազումք յարանց և կանանց և գրեթէ ոչ գտանիւր փողոց յորում ոչ գտանէին դիակունք մարդկանց մեռելոց, որք մնային անթաղք ի բազում աւուրս, եւ իբրև զգէշս անասնոց զիշատեցեալք և կերեալք լինէին ի շանց»[401]։

Գործը հասնում է մինչև իսկ մարդակերության։ «Եւ օր քան զօր,— գրում է Հակոբ դպիրը,— զօրացաւ սովն և սաստկացաւ մինչ զի սկսան ուտել զանսուրբ կենդանիսն, զգորտ, և զկրիայ և այլ սողունս վայրենիս, և ապա զկատու և զշուն, որ ոչ մնաց ի տունս և ի փողոցս և յետոյ հարկեցեալ սկսան զկենդանի մարդու գողանալ, մորթել և ուտել, յորոց ոմանք ի նոցանէ յայտնեալք եղեն և կալեալ բերին առաջի քաղաքապետին, որոնց վերայ զվճիռ մահու հատեալ մասն մասն յօշոտելոյ»[402]։

1758 թ. մարտի 23-ին Կ. Պոլսից հղած իր նամակում Զաքարիա և Մկրտիչ վարդապետները, որպես անմիջական ականատեսներ, նույնպես նկարագրել են սովի և նրա աղետաբեր հետևանքների մասին. «Աստ այսպէս, իսկ յԱնատոլու ամենեին է խեղճութիւն և մանաւանդ ի Տիարպէքիր, ուր բազումք սովալլկեալք, անկեալ մեռանէին ի հրապարակի, և շունք զմարմին նոցա ուտէին, և այն զկնի ուտելոյ զմիս մանկանց իւրեանց»[403]։

Սովի ճիրաններին մատնված գյուղացիները զանգվածորեն լքում են հայրենի վայրերը՝ իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու հույսով։ «Եւ այսպէս հողաբլուր աւերակք եղեն ամենայն գիւղք և շէնք, եւ չկարծեմ, թե այլեւս շինելոց են մինչև զյաւիտեանս[404]...»,— գրում է Հակոբ դպիրը։

1768 թ. ռուս-թուրքական պատերազմի հենց սկզբից, Վասքֆի վկայությամբ, ռազմաճակատում կրած ծանր պարտությունները ստիպեցին սուլթան Մուստաֆային իր գանձարանից տալու 3500 քիսե գումար բանակի կարիքները բավարարելու համար[405]։ Այս առումով խիստ ուշագրավ է Հ. Գրենվիլի զեկուցագրի այն հատվածները, ուր բացահայտվում է, թե ինչ էր նշանակելու ժողովրդի համար դանձա-

401 Նույն տեղում, էջ 198։

402 «Դիւան հայոց պատմութեան», հ. Ժ, էջ 199։

403 «Մայր գիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար», էջ 191—192։

404 Նույն տեղում։

405 Vasif, c. II, s. 34.

ռանից (էնդերուն) դրամ բաց թողնելը։ «Երբ (պետության մեջ) դրամը պակասում է,— գրում է նա,— Մեծ Տիրակալը ստիպված է լինում իր սեփական գանձարանից տալ գումար և նույնիսկ վաճառել իր թանկարժեք արդուզարդը (օրինակ, որին հետևում է Բ. Դոան բարձրաստիճան պաշտոնյաները)։ Նման քայլի դիմելուց հետո, նրան թույլատրվում է ժողովրդի վզին փաթաթել կրկնակի տասանորդ (աշար), կրկնակի խարաջ և հատկապես կրկնակի ավարիզ. այս վերջին հարկը շատ հաճախ է գործի դրվում և հսկայական գումարներ է բերում։ Օրինակներ կան, երբ չքավոր ընտանիքներից գանձում էին տասը ղուրուշ, իսկ հարուստներից՝ մինչև ութ հարյուր»[406]։

Օգտվելով պատերազմական վիճակից, կենտրոնից հեռու նահանգներում այանները[407] գլուխ բարձրացրին և նրանցից ոմանք իրենց անկախ հռչակեցին։

1768—1774 թվականների պատերազմից հետո, ստիպված է խոստովանել Ի. Հ. Ուզունչարշըլը, «...մինչ այդ նահանգներում տիրող անիշխանությունն ու ապօրինությունը վարչական կյանքում անասելի չափերի հասավ, կարգ ու կանոնը առհասարակ վերացվեց։ Յուրաքանչյուր վալի, քաջ իմանալով իր իշխանության ժամանակաշրջանի սահմանափակվածությունը (սովորաբար իշխանության գլուխ մնում էին ընդամենը մեկ-երկու տարի)... ակսում էր դաժանորեն ճնշել ու կողոպտել գյուղացիական հոծ զանգվածներին»։ «Այդ էր պատճառը,— եզրակացնում է Ի. Հ. Ուզունչարշըլը,— որ նահանգներում ընկճված, ճնշված ժողովուրդը քարը քարի վրա չէր դնում»[408]։

Առաջվա նման կառավարությունը աճուրդի էր հանում հարկերի հավաքման ցկյանս մենաշնորհը («Ber vech-i malikâne»), որոնց տերերը, իրենց հերթին, կողոպտում էին ժողովրդին՝ հասցնելով նրան ծայրահեղ աղքատության գիրկը։

Այսպիսով, նահանգի փաշան, վալին, այանը, մալիքանեների տեր վաշխառուն ձեռք-ձեռքի տված կամ թե, երբեմն, իրար դեմ ըմբոստացած արյունաքամ էին անում գյուղացիներին ու քաղաքների աշխատավոր զանգվածներին։

1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ կայսրությունն ընկավ աղետալի վիճակի մեջ։ Մեծ վեզիրը սուլթանից պահանջում է 3000 մինչև 4000 քիսե։ Սուլթան Աբդուլ Համիդ I-ը մեծ վեզիրին հղած պատասխան նամակում բացահայտում է երկրի ողբերգական վիճակը։ «Ես գիտեմ ձեր ամբողջ վիշտը,— գրում է նա,— դուք ինձանից անհապաղ պահանջում եք 3-ից 4000 քիսե. ավաղ. ասված վկա, որ ես ձեզ կուղարկեի իմ սեփական գումարը (موجود اولسه علم الله كندو خرجلغودخى گوندريرايدم), սակայն գանձարանը լրիվ դատարկ է, և դրամի հարցը ինձ հանգիստ չի տալիս ո՛չ ցերեկը և ո՛չ գիշերը։ Ես մտածում էին «ջեբելու» հարկի և ջիզիեյի գանձման մասին, սակայն ինձ պալատում ասացին, որ մեկը քննարկման ընթացքում է, իսկ մյուսն՝ արդեն օգտագործված է ձեր կողմից։ Իմ աչքից ոչ մի պահ չի վրիպում բանակի կարիքները, դուք դրանում համոզված եղեք։ Միայն դուք ինձ ուղարկեք բույուրուլդուները (հրամանագրերը) ջիզիեյի գանձման մասին, ինչպես և ջեբելու հարկի դավթարը։ Ես մի միջոց կգտնեմ այստեղից գումար պոկելու, եթե ինձ չհաջողվի հավաքել մեծ գումար, ես ձեզ պարբերաբար կուղարկեմ նվազագույնը 300-ից 500 քիսե։ Դրամի այս պակասը, ասված վկա, ինձ զրկում է ամեն մի հանգստից։ Թող ասված փրկի կայսրությունը»[409]։

Կառավարությունը ստիպված եղավ դիմել արտաքին վարկերի օգնությանը, սակայն մերժում ստացավ։ Նման պայմաններում, երկրում անասելի չափերի հասավ ժողովրդից գանձվող հարկերի ու տուրքերի չափը։ Գյուղացիները ենթարկվում էին այնպիսի անլուր չարաշահումների ու խոշտանգումների, որ Ջևդեթի վկայությամբ, սուլթան Սելիմ III-ը բացականչել է. «Ոչ մի կեղեքում, ոչ մի հալածանք չէր թույլատրված պետական իշխանության մարմինների կողմից։ Աստ-

---

406 *H. Grenville*, p. 45—46.

407 Այաններ էին կոչվում քաղաքների, իսկ հաճախ էլ ամբողջ շրջանների կառավարիչները։ Մ. դ' Օսոնը նրանց մասին գրում է. «Վարչական գործերում քաղաքի կուսակալին օգնում էին երկու կամ երեք մարդիկ, որոնք ընտրվում էին գավառի ականավոր մարդկանց կողմից ու հաստատվում սուլթանական պալատի կողմից։ Որոշ վայրերում նահանգական այդ պաշտոնը դարձել էր ժառանգական» (տե՛ս *M. d'Ohsson*- v. VII, p. 286)։

408 *I. H. Uzunçarşılı*, c. IV, I kıs., s. 437.

409 "Tarih-i Cevdet". c. IV, s. 119. Երկրի ծանր վիճակի մասին նման խոստովանություն կատարել է նաև Աբդուլ Համիդի նախորդ՝ Մուստաֆա III-ը, իրեն վերագրված մի քառյակի մեջ ասում է. «Կործանված է այս տիեզերքը (կայսրությունը—Մ. Զ.), մի կարծիր, թե մեր օրերում այն կվերականգնվի... մեր հույսը ամբողջովին ու հավետ մնաց (Աստուծո) ողորմածությանը» ("Yıkılıpdır bu cihan, sanma ki bizde düzele... Işimiz kaldı heman lem-yezele, *J. H. Danişmend*, c. IV, s. 40).

ված մի օր բոլորից էլ հաշիվ է պահանջելու. ի՞նչ ենք պատասխանելու նրան»[410]։

Իսկ այդ բոլորը կատարվում էր այն ժամանակ, երբ, դեռ սուլթան Աբդուլ Համիդի կյանքի վերջին տարում (1789), սուլթանական հատուկ ֆերմանով (որն ամբողջությամբ բերված է Ի. Հ. Ուզունչարշըլիի կողմից[411] և մանրամասն պատմվում է Պողոս Կաղզվանցու տարեգրության մեջ), ամբողջ երկրում բնակչությունից բռնությամբ հավաքել էին ոսկյա ու արծաթյա զարդեղենները։ «Ընդ աւուրս ընդ այնոսիկ՝ պատրիարքութեան վեհին մերոյ Զաքարիայ աղգասիրի և եպարքոսին օսմանցւոց Եուսուֆ փաշային, յորում ժամանակի դեռ կայր սուլթան Համիդ արքայն նոցա, սա որ նախ հնարեաց առնուլ զմարդ ի հպատակաց վասն պատերազմի որպէս ի վերն յիշեցաք, և նոյնպէս խորհրդով սորա հնարեցաւ հաւաքումն արծաթոյ յերից աղգաց, այսինքն՝ ի յունաց՝ ի հրէից և ի հայոց։ Նախ՝ ի յունաց հինգ հազար օխայ արծաթ տալ ի գործարան դրամահատութեան։ Նոյնպէս ի հրէից, երեք հազար օխայ և ի հայոց չորս հազար օխայ. եթէ չէսնաֆաց և եթէ յեկեղեցեաց և այլ ուստի և իցէ պատրաստել և տալ՝ որպէս ասացի ի տպարանս դրամոյ. վասն որոյ՝ և սաստիկ հրամանաւ պատուիրեցին անյապաղ հատուցանել զայնքան արծաթն, դրամն տասն փարայ հաշուով առնուլ զգինսն ի զարպխանայէն դու որքանոյ կարես առնուլ առ, նոցա չէ ինչ փոյթ. ո՜հ աւաղ ցաւոյս, և դառնութեան ժամանակին յոր հասաք, թէ ի կողմանէ յամ ըստ ամէ ԵՃ(500) մարդոյ տալոյն, և թէ զայս չորս հազար օխայ արծաթոյն լրութեամբ հատուցանելոյն, զորս ի ժողովելն՝ և ի տեղն հատուցանելն»[412]։ Այնուհետև, Պողոս Կաղզվանցին արձանագրում է. «Թէպէտ ծանր էր բեռն ի վերայ ազգին մերոյ, բայց վասն սիրոյ սուրբ հաւատոյն՝ յոժար կամօք յանձն առին զայս հարկ թագաւորական հատուցանել»[413]։

Միշտ չէ, անշուշտ, որ գյուղացիությունն անտրտունջ տանում էր այդ չարաշահումներն ու ծայրահեղ հալածանքները։ Տեղ-տեղ, ինչպես տեսանք, կամ բարձրացնում էր իր բողոքի ձայնը, և կամ թե դիմում էր ուղղակի ապստամբության։ Դեռևս դարի սկզբում, Ռաշիդի վկայությամբ, Էրզրումի բնակչությունը հավաքական բողոքագիր է

410 Նույն տեղում։

411 *I. H. Uzunçarşılı*, c. IV, I kis., s. 602.

412 «Գիւան հայոց պատմութեան», հ. Ժ, էջ 336։

413 Նույն տեղում, էջ 337։

ուղարկում մայրաքաղաք կուսակալ Խալիլ փաշայի դեմ, քանի որ նա «...Հիշյալ նահանգի աղքատ բնակչության նկատմամբ կամայականություններ ու անիրավություններ էր թույլ տալիս»[414]. 1741 թ. Վանի նահանգի բնակչությունը բողոքում է ոմն Օմար փաշայից[415]։ Անանուն Վանեցու վկայությամբ Վանի շրջակայքի ռայաթը, չդիմանալով բռնություններին, 1702 թ. ապստամբել ու սպանել է կեղեքիչ Թոխմախ Միրաքին։ 1767 թ. Կարսի ու նրա շրջակայքի բնակչությունը ապստամբում է փաշայի դեմ ու բարկոծելով սպանում նրան։ Ապստամբությունը ճնշելու համար կառավարությունը ստիպված է լինում դիմել Վանի կուսակալի զորքերի օգնությանը։ Գյուղացիական ապստամբություններ են տեղի ունենում նաև Փոքր Ասիայի այլ շրջաններում[416]։

Հովհաննես Սեբաստացին վկայում է իր հայրենի քաղաքում հայ և թուրք աշխատավորության համատեղ պայքարի մասին՝ ընդդեմ բռնակալների։ «Յայսմ ամի (ՌՄԼ—1781),— գրում է նա,— սաստիկ նակալների։ «Յայսմ ամի (ՌՄԼ—1781),— գրում է նա,— սաստիկ խորհուրդիւն անկաւ ի մէջ այլազգեաց, որք հանեալ զսանճախն (դրոշակը) և միաբանեալք այրեցին զապարանս քաղաքապետին, որ կոչիւր Սարօղլի։

...Եւ յետ Բ(2) ամաց (ՌՄԼԹ—1790) եկն իշխանութեամբ ի քաղաքս Սեբաստիա Թուրունճօղլի կոչեցեալ բդեշխն և սկսաւ նեղել զքաղաքացիսն հարկապահանջութեամբ, վասն որոյ միաբանեալ քաղաքացիսն՝ ընդդիմացան նմա և, պատերազմեալ՝ արտաքսեցին ի քաղաքէն»[417]։

* * *

Ինչպիսի՞ հարկեր ու տուրքեր էին գանձում բնակչությունից արևմտահայ գավառներում։ Այս հարցերը շոշափելիս հարկ է հենց սկզբից նշել, որ օսմանյան հարկային սիստեմը XVIII դարում երկրում ստեղծված նոր իրավիճակում բավականին փոփոխությունների ենթարկվեց։ Տիրապետողը դարձավ թրքահպատակ շրջաններում թուրք պեռական պաշտոնյաների ու ավատատերերի, իսկ քրդական շրջաններում՝ քուրդ խաների, բեկերի կամայականությունը։ Օրենքը համարյա կորցրել էր իր ուժը։ Ուստի, սկզբում կքննարկենք XVI—XVII դդ., ապա՝ և XVIII դ. երկրում տիրող հարկային համակարգը։

414 «Tarih-i Cevdet», t. IV, s. 196.

415 «Ս անր ժամանակագրություններ», հ. 1, էջ 373։

416 *J. Hammer*, t. XV, p. 8, 16, 155—156.

417 Հովհ. Սեբաստացի, էջ 103։

XVI—XVII դարերում օսմանյան հարկային համակարգը սերտորեն առնչված էր ավատատիրական ռենտայի տարբեր ձևերի հետ։ Համաձայն օսմանյան օրենսդրության՝ բոլոր հարկերը բաժանվում էին երկու հիմնական խմբի՝ ա) հարկեր, որոնք հիմնվում էին մուսուլմանական շարիաթի վրա (rüsüm-i şeriye կամ tekâlif-i şeriye) և բ) հարկեր, որոնք հիմնվում էին սովորույթի վրա (rüsüm-i örfiye կամ tekâlif-i örfiye)։ Ուսումնասիրողների մեծամասնությունը կողմնակից են այս բաժանմանը[418]։ Համմերը սովորութային հարկերն իր հերթին բաժանում է երեք խմբի՝ գլխահարկ, հողային և եկամտի վրա նշանակված հարկեր[419]։ Ա. Վեֆիկը հարկերի գանձման հիմքում դնում է շարիաթական օրենսդրությունը։ Մ. Ակդաղը Օսմանյան կայսրության մեջ գանձվող հարկերը բաժանում է երկու որոշակի խմբի՝ ա) «ռայաթ» (rüsüm-i raiyat). հարկեր, որոնք գանձվում էին տեղական ավատատեր կալվածատիրոջ կողմից և բ) «թեքյալիֆ-ի դիվանիյե» (tekâlif-i divaniye), հարկեր, որոնք գանձվում էին պետության կողմից[420]։ Բուլղարացի թուրքագետ մեդիևիստ Վ. Պ. Մուտաֆչիեվան գտնում է, որ Օսմանյան կայսրության մեջ «...հարկերը պետք է բաժանվեն երկու հիմնական խմբերի՝ պետության կողմից գանձված ռենտայի և ռենտայի, որը տրվելու էր օսմանցի ավատատիրոջը»[421]։

Ծանոթանալով Արևմտյան Հայաստանի բնակչությունից գանձվող հարկերի համար գլխավոր աղբյուր հանդիսացող օսմանյան օրենքներին, գտնում ենք, որ ընդունելի պետք է համարել Մ. Ակդաղի և Վ. Պ. Մուտաֆչիեվայի տեսակետները։ Բանն այն է, որ միջնադարյան Թուրքիայում իրագործվում էր «ամեն ինչ շարիաթին» և «շարիաթը ամեն ինչին» հարմարեցնելու պրակտիկան։

Պետության օգտին գանձվող հարկերի մեջ գլխավորը ջիզիեն էր՝ գլխահարկը, որը հայկական աղբյուրներում մեծ մասամբ «խարաջ» է անվանվում[422]։ Սա ամենածանր հարկն էր ոչ միայն այն պատճառով, որ գոյություն չուներ հաստատուն չափ, այլև նրա համար, որ ջիզիեն

[418] *A. C. Тверитинова*, Восстание..., с. 32—33.

[419] *J. Hammer*, Das Ossmanischen Reiches Statisverfassung und Staatsverwaltung, bd. 1, p. 214—215.

[420] *M. Akdağ*, s. 540—541.

[421] *V. P. Mutafçieva*, De l'exploitation féodal dans les terres de population bulgare..., "Etudes historiques", Sofia, 1960, p. 149.

[422] «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 270, 381, 384, 418, 420, 483, 517 և այլն։

հնարավորություն էր տալիս բացահայտ կողոպտել ժողովրդին։ Ջիզիե էին պահանջում ոչ միայն տեղի բնակիչներից, այլև տվյալ վայրից հեռացվածներից և, նույնիսկ, մեռածների հաշվով, եթե նրանց անունները դեռևս չէին հանվել հարկացուցակներից։ Ձևականորեն օրենքը պահանջում էր հաշվի առնել հարկատուի նյութական վիճակը։ Հարկատուները բաժանվում էին հարուստների (ալա), միջակների (էվսատ) և աղքատների (էդնա), սակայն իրականում այդ սկզբունքը գրեթե չէր կիրառվում։ Բացի այդ՝ ջիզիեյի գանձման ժամանակ բնակչությունից վերցնում էին նաև տարբեր անվանումներով («մյուբաշիրիյե»[423], «թահսիլդարիյե»[424], «քեֆիլլեմե»[425], «ղուլամ հակկը»[426], «զիյադե-ի ջյուլյուսի հյումայուն»[427], «բեդել-ի համար»[428]), լրացուցիչ գլխահարկ։ Հենվելով թուրքական աղբյուրների վրա, այս կապակցությամբ Մ. Բելենը գրում է. «1632 թ. մայիսի 29-ին սուլթան Մուրադը (Մուրադ IV-ը— Մ. Ղ.) կանչեց իր մոտ... իր վեզիր խոսրով փաշային՝ հանձնարարելով սիփահիներին գանձել «ջիզիեն» (պետության օգտին)։ Եվ ավելին, նա խոստացավ մեծ ղուլամիյե մյուլազիմներին (սպաներին) մատուցվելիք յուրաքանչյուր ծառայության համար։ Նույն վեզիրը ռայաթներին ծանրաբեռնեց «ջիզմե-փահա», «թաուկ-փահա», «արփա-փահա» և այլ հարկերով (նշանակում է «գյուղ մտնելու, այնտեղ ապրելու և անասնակերի գումար»—Մ. Ղ.)»[429]։

[423] Մյուբաշիրիյե— արաբերեն «մյուբաշիր» բառից է, որը նշանակում է «հրամայիչ» «վերակացու»։ Մյուբաշիրիյին այն գումարն է, որը սովորաբար տրվում էր մյուբաշիրին, այսինքն՝ վերակացուին։

[424] Թահսիլդարիյե (արաբ.)—թահսիլդարին, այսինքն՝ ջիզիե հավաքողին տրված գումարն է։

[425] Քեֆիլլեմե— ջիզիեն հաճախ գանձվում էր գյուղական համայնքից, որպեսզի ապահովվի ջիզիեյի հավաքումը. տեղական մուխթարները (լիազորները) տալիս էին վկայագրություններ նրանց, ովքեր այս կամ այն պատճառով չէին կարողացել վճարել հարկերը։ Այս վկայագրության փոխարեն նրանք հպատակներից վերցնում էին գումար՝ «քեֆիլլեմե» անվան տակ։

[426] Ղուլամ հակկը— ղուլամ նշանակում է ծառա. խոսքն այստեղ վերաբերում է այն պաշտոնյային, որն ուղարկված էր պետության կողմից։ «Ղուլամ հակկը» նշանակում է «ծառայի իրավունքը» կամ «ծառայի (ստանալիք) հարկը»։

[427] Բառացի՝ «լրացուցիչ գահակալման առթիվ» (*A. C. Тверитинова*, Восстание..., с. 48).

[428] Բառացի՝ «գինու համար» (նույն տեղում)։

[429] *M. Belin*, Essais..., p. 306.

Գանձվող ջիզիեյի գումարը, որպես օրենք, եղել է 25 ակչե։ Սակայն ոչ ամենուր և ոչ միշտ է պահպանվել այդ քանակը։ Համաձայն Բիթլիսի կանուննամեի, միևնույն գավառում մի տեղի հայ բնակչությունից գանձել են 35 ակչե, իսկ մի այլ տեղից՝ 55[430]։ Սակայն Շարաֆ խանի տվյալներով, XVI դարի կեսերին Բիթլիսի վիլայեթի պետական հաշվառումից հետո, Բիթլիս քաղաքի 4000 «անհավատ հայերից» գանձել են 70-ական ակչե, որպես ջիզիե[431]։

XVI դարի երկրորդ կեսին ջիզիեյի չափը գնալով բարձրանում է։ «Սկսած 1545 թվից,— գրում է Մ. Ակդաղը,— նկատվում է ջիզիեյի չափի ավելացում։ Մենք տեսնում ենք, թե ինչպես Ադանայի սանջակում Յավուզի ժամանակ 20 ակչե նախատեսված ջիզիեն միանգամից բարձրացվում է 48-ի...

Մուրադ III-ի ժամանակ ջիզիեյի չափը բարձրացել էր 85 ակչեի, իսկ Մեհմեդ III-ի գահ բարձրանալուց հետո ջիզիեն դառնում է 140 ակչե»[432]։

XVI դարի վերջին, պետական գանձարանի կատարած գերածախսերի և ծագած ֆինանսական ճգնաժամի հետևանքով, պետությունն իր հպատակներից որպես ջիզիե սկսեց գանձել, Կոշիբեյի տվյալներով, մինչև իսկ 240 ակչե[433]։ Այսպիսով, ջիզիեն պետական գանձարանի գլխավոր հոդվածներից մեկն էր։ «Եթե պետությունը դրամի կարիք է ունենում,— գրում է Էբասկի Էլիասը,— ապա հարկի այս տեսակը (ջիզիեն— Մ. Ղ.) կրկնապատկվում է։ Եվ այդ կարիքը, որը հանում է ծնվում, չունի այլ աղբյուր, բացի այն մարդու երևակայությունից, որին հանձնված է հարկի այդ տեսակի գանձումը»[434]։

XVII դարում վիճակը ավելի ևս վատացավ[435]։ Աղբյուրների վկայությամբ միևնույն տարում երբեմն ջիզիե էին գանձում երկու անգամ։ «ՌՄԻԱ (1772) մայիսի 15 Վանայ կողմն երկու խարաջ առին հայոց— կես դուրուշ էլ խարամ խարաջ»[436],— գրված է ժամանակագրության մեջ։ Հարկահավաք պաշտոնյաները թույլ էին տալիս կոպիտ կամայականություններ։ 1694 թ. արտագրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ ի թվին մերում ՌՃԽԳ (1692 թ.), ի դառն և ի նեղ ժամանակիս, որում նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց, զի ահա եկն հարկն ի վերայ Հիզանայ և կողոպտեցին զամենայն. և այրեցին զգեղօրայքն և զջաղացն և ամենայն... զորն գտին գերեցին, վասն ծովացեալ մեղաց մերոց»[437]։

Ջիզիե հարկից քրիստոնյա հպատակները կարող էին ազատվել միայն պետական հիմնարկներում, հանքավայրերում աշխատելիս կամ պինվորական ծառայության դեպքում։ Սսի լիվայի կանունի 12-րդ հոդվածում գրված է. «Վերոհիշյալ բերդի անհավատների, հին ժամանակներից մինչև այսօր, հիշյալ բերդի (Գեովյուլեք կոչված բերդը— Մ. Ղ.) պաշտպանության և հիշյալ բաջը (մաքսը) գանձելու գործում օժանդակություն ցույց տալու համար ներված (mu'af) լինելով, ջիզիե և ծիսի հարկ չեն տալիս և նախկին սուլթաններից տրված հրովարտակ (մանշուր) ունեն»[438]։ Էրզրումի կանուննամեի 57-րդ հոդվածի համաձայն, Էրզրումի շրջակայքի քսաներեք գյուղի ռայաթները «...կազայում հեղած պաղլեզի (şab) չորս հանքերում աշխատելու համար ջի-

---

430 «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 46։

431 Chéréf-nameh", t. II, tère, p. 209—291. Հաճախ ջիզիեյի չափը այնքան մեծ է եղել, որ բնակչությունը դժվարացել է այն վճարել։ 1621 թ. մի ձեռագրի հիշատակարանում գրիչ Հակոբը Ամիդից հայտնում է, թե խարաջն այնքան շատ է եղել, որ տեղի բնակչությունը բողոքել է փաշային։ Վերջինս հրավիրում է հատուկ դիվան քննելու այդ հարցը։ Փաշան «Ասաց քրիստոնէից, թէ «ի՞նչ կիտէք խարաճ»։ Ասացին «Դ (3) ֆոնյա ու կէս։ Տովլաթի փաշայ կարողութիւն չունինք, խիստ զապուն ինք... Անիծած հաղարացի ազգն Տաճկաց ժողովեցան միարան և ասացին փաշային, թէ «կարող են որ ի տան»։ Եւ ապա փաշան ասաց. «Գնացէք և տվեցէք շահի մի այլ ավելի» (Մատենադարան, ձեռ. № 8104, էջ 244բ)։

432 M. Akdağ, s. 558.

433 В. Д. Смирнов, Кучибей Гёмюрджинский..., с. 142—143. 1594 թ. արտագրված մի ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ «...այս տարի մէկ գլուխն Դ (4) ֆլի խարաճ տուին» («Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վիեննա», էջ 749)։

434 Ebasci Elias, Etat actuel de l'Empire ottoman, t. I, Paris, 1792, p. 232 ("Si l'Empire a besoin d'argent, cette espèce de capitation est doublée, et ce besoin qui nait souvent. n'a quelquefois pas d'autre source que l'imagination de celui qui a l'administration de cet impôt").

435 1690 թ., կանգնելով ֆինանսական ծանր վիճակի առաջ, պետությունը ստիպված եղավ մինչ այդ վակֆերին եկամուտ արձանագրված ջիզիեն չհատկացնել այլևս այդ հաստատություններին և բռնագանձել միայն պետական գանձարանի օգտին (տե՛ս M. Belin, Essais,... p. 346)։

436 «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 475։ 1629 թ. Բասենից գրիչ Հակոբ սարկավագը հաղորդում է, որ ձեռագիրն արտագրված է «...ի դառն և ի տխուր ժամանակիս, որ յոլով վիշտ ու նեղութիւն կայր յայլազգեաց, որ տարի Դ (3) խարաճ առին»։ (Մատենադարան, Մագիստրոսի թղթպ. № 36 (265), էջ 69)։

437 Մատենադարան, Մագիստրոսի թղթպ. № 64, էջ 108։

438 «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 110։

գիեից, իսպենջից, բահրայից և այլ հարկերից... ազատված են եղել»[439]։

Բացի ջիզիեից ու «թեքյալիֆ-ի դիվանիյեից», պետական հարկերի մեջ մտնում էին նաև «ավարիզը» կամ «ավարիզ ակչեսին» (avariz akçesi), «սուրսաթը», «իմդադիյեն» կամ «իմդադ-ի սեֆերիյեն» (imdadiye կամ imdad-i seferiye), զանազան պարհակային աշխատանքները (ճանապարհաշինություն, բերդաշինություն, կամուրջների կառուցում ու վերանորոգում և այլն) կամ դրանց փոխհատուցումը դրամով։

Ավարիզ՝ արաբերեն «արիզ» բառի հոգնակի ձևն է, որ նշանակում է «պատահական (հասույթներ)»։ Ավարիզի տակ հասկացվում էր կարիքի ու անհրաժեշտության դեպքում պետության կողմից բնակչության վրա նշանակված ամեն տեսակի տուրքեր։ Ավարիզը գանձվում էր չորս-հինգ տարին մեկ անգամ, իսկ երբեմն էլ ավելի հաճախ՝ ամեն մի ծխից կամ ընտանիքից։ XVI դարի վերջում յուրաքանչյուր հարկատու տնից պետությունը պահանջել է 500 ակչե գումար[440]։ Մ. Ակդաղի հաշվումներով, այդ տարիներին մի ոչխարը արժեր 70—80 ակչե, երբ դարի առաջին կեսին այն արժեր 15—20 ակչե[441]. ստացվում է, որ միայն որպես «ավարիզ» յուրաքանչյուր տնից պետք է վերցնեին 5—6 ոչխար։

Սուրսաթ՝ թուրքերեն բառ է, որն ըստ երևույթին, նշանակում է «պարենամթերքի պարտադիր մատակարարում»։ Այս հարկի մասին Կոչիբեյը տալիս է հետևյալ բացատրությունը. «Այս հարկը դրվում է ռայաթների վրա պատերազմի ժամանակ։ Սուրսաթը տրվում է ցորենի, գարու, այլուրի, փայտի ձևով այն չափով, ինչ չափով որ նախատեսված է, և ռայաթները իրենք են բերում դրանք նախօրոք պետության կողմից նշանակված վայրը։ Մինչև որ անհրաժեշտ քանակը չապահովվի, հավաքը կատարվում է գիշեր ու ցերեկ. գանձարանը դա չի վերցնում անվերադարձ, այլ վճարում է դրամ։ Դրանց (այսինքն՝ պարենամթերքի— Մ. Զ.) արժեքը վճարվում է փադիշահի գանձարանից, և այսպիսով սեփականության իրավունքը չի խախտվում։ Սակայն եթե պատերազմ չկա, ապա ռայաթին սուրսաթ նշանակել չի կարելի, օրենք չկա»[442]։

Այստեղ խոսվում է հատուցման մասին, որը օրենքով պիտի վճարեին պետական պաշտոնյաները վերցրած ապրանքի համար, սակայն իրականում, ինչպես դա խոստովանում է Մ. Պակալրնը, «ապրանքի արժեքը չէր վճարվում»[443]։

Օսմանյան բանակի արշավանքների ժամանակ բնակչությունից պարենամթերքի բռնի հավաքման մասին շատ արժեքավոր տեղեկություններ է թողել, դեռևս XV դարի վերջում, իտալացի ճանապարհորդ Անջիոլելլոն։ «Եթե պատահի, որ անցնելով սահմանը, բանակը մտնի թշնամու երկիրը ու պարենի կարիք զգացվի,— գրում է նա,— ապա արփաէմինները (այսպես էին կոչվում պարեն հավաքող պաշտոնյաները— Մ. Զ.) պարտավոր են իրենց տիրակալին հայտնել այն վայրերը, ուր առատ հաց կա ու հրամայել, որ յուրաքանչյուր քաղաք հանձնի որոշված քանակի հաց ու գարի, անհնազանդության դեպքում, համայնքը կենթարկվի պատժի ու ոչնչացման»[444]։

Թե ինչքան ծանր էր սուրսաթը բնակչության համար, վկայում է նաև Առաքել Դավրիժեցին։ Խոսելով 1605 թ. պարսկա-թուրքական ընդհարումների մասին, նա գրում է. «Եւ ի շարժմանէ այսց երկուց տիեզերակալացս՝ որք զարթուցեալք են ի պատերազմ, եթե Սարգարն (Սինան փաշան— Մ. Զ.) որ եկն յարևմտից, և թէ շահն՝ որ ի կողմս արևելից՝ թէ որքան աւերումն և քանդումն եղև աշխարհի, թէ ի գալն և թէ ի դառնալն, թէ որքան ծանրաբեռն հարկապահանջութիւն եղեալ ի վերայ ժողովրդեանն և բռնութեամբ առին. նոյնպէս և զուրսաթն՝ որ զկնի զօրացն բերել տային (ընդգծումը մերն է— Մ. Զ.)»[445]։

XVII դարի վերջում, 1693 թ. սուլթանական հատուկ հրովարտակով, կայսրության բոլոր նահանգներում սուրսաթը պահանջում էին միայն դրամով[446]։ Ամենայն հավանականությամբ, այդ հրովարտակից առաջ էլ սուրսաթը գանձել են դրամով։ Մ. Ֆերվրը վկայում է, որ հաճախ հարևանները հավաքվում էին ու վճարում պետական սուրսա-

---

439 Նույն տեղում, էջ 31։ Էվլիա Չելեբին վկայում է, որ «Վանում երեք հայկական թաղեր կան, (հայերը) բերդի ծառայողներ են և խարաջի (ջիզիեյի— Մ. Զ.) փոխարեն պարտավոր են բերդը մշտապես նորոգել (տե՛ս Evliya Çelebi, c. V, s.173)։

440 M. Akdağ, s. 539.

441 Նույն տեղում, s. 531։

442 А. С. Тверитинова, Второй трактат Кочибея, УЗИВ, т. VI с. 245.

443 M. Z. Pakalın, Osmanlı tarih deyimleri ve terimleri sözlügü, c. III, Istanbul, 1955, s. 300.

444 Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 361։

445 Առ. Դավրիժեցի, էջ 78։

446 M. Belin, Essais..., p. 349—350.

թը, հակառակ դեպքում «խեղճ աղքատին սաստիկ ծեծի էին ենթարկում»[447]։

«Թեքյալիֆ-ի դիվանիյեի» մեջ, ինչպես ասվեց, մտնում էր նաև «իմդադ-ի սեֆերիյեն», որը գանձվում էր պատերազմների ժամանակ. այս հարկը, ինչպես և ավարիզն ու սուրսաթը, դարձել էր մշտապես գանձվող պետական հարկ, մանավանդ XVII—XVIII դարերում։ Մարտիրոս Խալիֆան իր ժամանակագրության մեջ նշում է, որ Թամուր փաշան «ի ՌՃՁԲ (1733 թ.) գնաց ի վերայ Սալմաստու և կողոպտեաց զնա, էառ զՁիշագ, երեք չորս հազար մարդ սուր քաշեց, և դարձեալ եկաւ ի Վան, եկաց աւուրս ինչ իմտատի սաֆարեայ ժողովեաց՝ քան զվաքսուն էնսայ աւելի (ընդգծումը մերն է— Մ. Ղ.)»[448]։

Նշենք, որ այս հարկն անվանվում էր նաև «իմդադ-ի ջիհադիյե» («օգնություն սրբազան պատերազմի համար»), «բեդել-ի նյուզյուլ» («իջևանի փոխարեն») և այլն։ Հարկերի չափը ճիշտ ու որոշակի չէր սահմանված, դա կախված էր պետական պաշտոնյաների և ռազմական գերատեսչությունների կամքից ու խղճից։

Պետական հարկերի մեջ որոշակի տեղ ունի նաև ռազմական կոռվորությունը։ 1551 թ. մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «...յայսմ ամի (1551 թ.) եկեալ վազիր փաշայն բազում և անթիւ զօրօք, և գնաց դէպ յարևելս ի Շահաստան, և յոյժ նեղեցին և չարչարեցին զքրիստոնեայսն ի հարկապահանջութիւն։ Եւ հանին զբազում արհեստաւորս վասն շինութեան Ղարսայ բերդին»[449]։ 1561 թվականին,— գրում է Զաքարիա Վարագեցի գրիչը,— «...բերաւ ջուրն Շամիրամայ ի քաղաքս Վան չորս ամիս բազում աշխատանք երկիրն և քաղաքն ի վերայ դատելով և ապա բերաւ ջուրն. զի ութ հազար սարակ (գործաւոր) ի քաղաքէն գնաց՝ թող զերկիրս (վիճակն Վանայ) և զայլս ի յոտար յաշխարհէ»[450]։ 1566 թ. գրված մի հիշատակարանում կարդում ենք, թե՝ «յայսմ ամի շինեցաւ պարիսպն Արճիշոյ քաղաքին, և Վան քաղաքին տէր որ ասի Հիւսէյին փաշայ հուքիմ արար ի վերայ բազում քաղաքաց և գիւղօրէից. և ժողովեաց բազում մարդիկ հայ և քուրդ, տաճիկ և ասորի, և շինեաց զպարիսպ քաղաքին՝ ի տարի և կէս թամամեցին»[451]։ 1624 թ. արտագրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք հետևյալ ուշագրավ տվյալները. «Այս յամս (1624 թ.) պարսից թագաւորն՝ շահ Ապասն եկեալ էառ զՊաղտատ և զՄոսոլ։ Եւ մեք Յամիթ խիստ նեղութիւն կայաք, որ փաշան ու սպահին ու ենկիչարքն և այլ մեծամեծքն առանց թագաւորի հրամանացն նոր պարիսպ շինեցին, ամէն։ Աւր որ լուսանայր ի քաղաքէն վարպետ ու մշակ կոչ տանէին ի պարիսպի շինելն։ Ֆաթվայ արարին զգերեզմանի քարերն և զիւրեանց գօտերն, քակեցին և բերին ի պարիսպն»[452]։

Ֆեոդալական ռենտայի երեք հիմնական ձևերի մեջ մտնող հարկերը անհամեմատ ավելի բազմաթիվ էին, քան «թեքյալիֆ-ի դիվանիյեյի» հարկերը։ Հայկական նահանգներին վերաբերվող կանոնադրությունների համաձայն, այստեղ գոյություն ունեին ֆեոդալական ռենտայի բոլոր երեք ձևերը՝ պարհակային, բնատուրքային և դրամական։ Դարձյալ, համաձայն այդ օրենսդրական վավերագրերի, ֆեոդալական ռենտայի երեք ձևերի մեջ գերիշխողը բնատուրքն էր։ Սակայն մենք առիթ ունեցանք նշելու, որ այդ վավերագրերը վերաբերում են միայն XVI դարի առաջին կեսին ու, հետևապես, չեն արտահայտում դարավերջից սկսած Օսմանյան կայսրության հասարակական-տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները։ Ինչպես ցույց է տալիս Վ. Պ. Մուտաֆչիեվան, թուրքական տիրապետության տակ գտնվող Բուլղարիայում դարավերջից սկսած դրամի ծարավ թուրք ֆեոդալների ռենտայում գերակշռողը արդեն դարձավ դրամական ռենտան[453]։ Նույն երևույթը պիտի տեղի ունեցած լիներ նաև Արևմտյան Հայաստանում։ Այդ միտումը նկատելի էր արդեն Արևմտյան Հայաստանին վերաբերող կանոնադրություններում։ Էրզանիի լիվայի կանոնադրությունում, խոսելով ֆեոդալի օգտին հայ գյուղացու պարհակային աշխատանքի մասին, ասվում է. «Նրանց (իմա՝ հայերի) ըրգադիեի հարկը մեկ շնչից տասներկու մուշակ (հավանաբար հայերեն մշակ բառն է— Մ. Ղ.) է, որի մեկ օրը վեց օսմանյան ակչեի հաշվով՝ քսանչորս ակչեի է հավասար։ Վերցնում են երկու մասով՝ գարնան սկզբին ու հունձքի ժամանակ»[454]։ Գյուղացու՝ ֆեոդալի օգտին պարհակային պարտականությունները XV դարում և XVI դարի սկզբում՝ տարեկան 7 օր էր, մինչդեռ Սուլեյման Կանունիի ժամանակ կրճատվեց 3 օրվա[455]։ Դա կատարվեց ֆեո-

447 *M. Febvre*, p. 164—165 ("Ou bien, l'on battra tant ce pauvre misèrable").

448 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 487։

449 Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 449—450։

450 Նույն տեղում, էջ 466։

451 Մատենադարան, ձեռ. № 4470, էջ 406ա։

452 Մատենադարան, ձեռ. № 1299, էջ 272ա։

453 *V. P. Mutafçieva*, De l'exploitatien féodale..., p. 155—157.

454 «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 87։

455 *V. P. Mutafçieva*, De l'exploitation féodale..., p. 148.

դալի օգտին բռնագանձվող դրամական ռենտայի հատուցման ճանապարհով։ Բնատուրքային ռենտայից, կանոնագրքերում բոլորից հաճախ հանդիպում են հետևյալ տուրքերը՝ ուշրը կամ աշարը (տասանորդ), բահրան, սալարիեն, իսպենջը, ջրելու իրավունքը (hakk-i şurub), անասնապահությունից գանձվող հարկերը և այլն։

Աշարը կամ ուշրը Թուրքերի մոտ նշանակում էր ֆեոդալ-կալվածատերի օգտին մուսուլման ռայաթից վերցված բնատուրքը՝ հողագործության արտադրանքի 1/10-րդի, իսկ երբեմն էլ՝ ավելի չափով։ Սակայն հայկական նահանգներին վերաբերող օսմանյան կանոնագրքերից պարզ երևում է, որ աշարը վերցրել են ոչ միայն մուսուլման ռայաթներից, այլև ոչ-մուսուլմաններից, տվյալ դեպքում՝ հայերից։ Այսպես, Էրզրումի կանոնագրքում կարդում ենք. «...Հին արևելյան էմիրների ստանձնած պարտավորությունների, շարիաթական վավերագրերի և աշխարհապավեն փադիշահի կարգադրության համաձայն նրանց (այսինքն՝ ոչ-մուսուլմանների— Մ. Զ.) այգիներն ու հողերը գրանցված են տասանորդի և սալարիե գանձելու հիման վրա»[456]։

Բահրա— բառացի նշանակում է մաս, բաժին։ Այսպես էր կոչվում հողային ռենտան, որը գյուղացին վճարում էր կալվածատեր-ֆեոդալին՝ տարեկան բերքի 1/5-րդից մինչև 1/3-րդի չափով։ «Այգուց և պարտեզից բահրա վերցնելը համապատասխանում է շարիաթին և օրենքին»[457],— կարդում ենք Էրզրումի կանոնագրքում։ Ելնելով կանոնագրքերի հոդվածներից, կարելի է ենթադրել, որ բահրան ու խումուսը (հնգորդը) միևնույն հարկի տարբեր անվանումներն են։ Ըստ որում այդ վավերագրերից պարզ երևում է, որ ոչ-մուսուլմաններից, տվյալ դեպքում հայերից, գանձված այս բնատուրքն ավելի մեծ է եղել, քան մուսուլմաններից։ Երզնկայի կանոնի երրորդ հոդվածում այդ մասին ասվում է հետևյալը. «Արձանագրված է, որ մուսուլմանների և թե անհավատների (հայերի— Մ. Զ.) ցանքսերից (հարկը) հինգից մեկի (hums) հիման վրա պիտի վերցնել։ Սակայն արձանագրված է, որ մուսուլմանների այգիներից, բամբակից, պտուղներից և բանջարանոցներից յոթից մեկը պիտի վերցնել»[458]։

456 «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 21։

457 Նույն տեղում, էջ 23։

458 Նույն տեղում, էջ 34։ Այդ մասին տե՛ս նաև Խարբերդի լիվայի կանոնագրքի 3-րդ հոդվածը։ Այս տեսակետից ուշագրավ է Էրզանի լիվայի կանոնների դավթարի 18 և 19-րդ հոդվածները։ Առաջին հոդվածում, մուսուլմաններից որպես խումուս

Սալարիեն (կամ սալարլըկ— պարսկերեն՝ سالار բառից է, որը նշանակում է առաջնորդ, հրամանատար, պետ) տարեկան բերքի մի մասն է, որը գանձվում էր գյուղացիությունից պետական պաշտոնյաների ղեկավարների (վեզիրների, միրիմիրանների, սանջակբեյերի և այլոց) օգտին։ «Որպես սալարիե,— կարդում ենք Էրզրումի կանոնագրքում,— բերքի մեկ տասներորդ մասից մեկ տասներորդ (öşür) վերցնելուց հետո, յուրաքանչյուր քառասուն քիլեից վերցվում է մեկ քիլե»[459]։

Սալարիե վերցնելիս ֆեոդալները, ըստ երևույթին, կամայականություններ են թույլ տվել, ուստի կանոնագրքի հոդվածը պարտավորեցնում է. «Բերքահավաքի ժամանակ ռայաթների հացահատիկը չափելուց հետո սալար առնողները, առանց հապաղելու, անմիջական պատրաստ եղած բերքը պիտի չափեն և ռայաթներին չձանձրացնեն և չնեղեն»[460]։

Կալվածատեր-ֆեոդալի օգտին գանձվող հարկերի մեջ կարևոր տեղ ունի իսպենջը, որը բացառապես գանձվում էր քրիստոնյա գյուղացիներից։ Ըստ երևույթին, ճիշտ են այն հեղինակները, որոնք գրում են, որ իսպենջը կապ չունի պենջիկի[461] հետ։ Արևելագետ Պաուլ Վիտտեկը գտնում է, որ «իսպենջն» ու «պենջիկը» տարբեր հասկացություններ են և որ «իսպենջ» բառը, հավանաբար սլավոնական ծագում ունի։ Իր այս տեսակետը նա հիմնավորում է մեջ բերելով մի կանոնագիր, ուր ասված է, որ «իսպենջ» բառը վերցվել է «անհավատների լեզվից»[462]։ Այստեղից արվում է այն եզրակացությունը, որ «իսպենջը» հողօգտագործման համար գանձված հարկն է։ Օ. Լ. Բարկանը

(հնգորդ) վերցվել է ոչ թե բնատուրք, այլ նրա դրամական արժեքը՝ տարեկան հազար երեսուն (1030) օսմանյան ակչե, իսկ հաջորդ հոդվածում, հայ գյուղացիներից՝ 4000 ակչե, համարյա քառապատիկը (տե՛ս նույն տեղում, էջ 86—87)։

459 Նույն տեղում, էջ 21։

460 Նույն տեղում, էջ 23։

461 Ասիայի ու Եվրոպայի նվաճման ժամանակ Թուրքերը հինգ գերիներից վերցնում էին մեկին տարբեր ծառայությունների համար (իսկ հետագայում օսմանյան կանոնավոր բանակի շարքերը լրացնելու նպատակով), յուրաքանչյուր գերուն գնահատելով 125 ակչե, վերցնում էին նրանց «արժեքի» մեկ հինգերորդը որպես փրկագին։ Դա կոչվում էր պենջիկ կամ խումուս (տե՛ս Aşikpaşazade, Tevarih-i al-i Osman, Leipzig, 1929, s. 50):

462 *Paul Wittek*, Devshirme and sharia, Bulletin of school of oriental and african studies university of London, vol. XVII, part 2, London, 1955, p. 272.

գտնում է, որ իսպենջը նույն ինքը «ռեսմ-ի չիֆթն»[463] է, որը գանձվում է մուսուլման ռայաթներից։ «Մենք կարող ենք ասել,— գրում է նա,— որ սա (իսպենջը— Մ. Զ.) ռեսմ-ի չիֆթն է կամ նրա տարատեսակը, որը գանձվում էր հարկատու, յուրաքանչյուր հասուն ոչ-մուսուլման տղամարդուց»[464]։

Հայկական նահանգներին վերաբերող կանոնադրությունների «իսպենջ»-ին վերաբերող հոդվածները խոսում են Օ. Լ. Բարկանի հայտնած այս կարծիքի օգտին։ Այսպես, Էրզրումի կանոնադրությունում ասված է. «վերոհիշյալ լիվայի անհավատներն իրենց խարաջները վճարելուց հետո, իրենց սիփահիներին, հնագույն օրենքի համաձայն, ամեն մի հարկատու շնչի դիմաց, չիֆթի հարկի փոխարեն, 25 ակչե, իսպենջ (ispenc) պետք է վճարեն, (իսպենջը) վճարելուց հետո նրանք իրենց հողի համար չիֆթի հարկ, դեռնյումի հարկ չպիտի վճարեն»[465]։ Դիարբեքիրի վիլայեթի կանոնադրությունում ասված է. «Անհավատներին (հայերին—Մ. Զ.) չիֆթի հարկ գրված չլինելով ամեն մեկ հարկատուի համար քսանհինգ ակչե իսպենջ... է արձանագրված»[466]։

Այսուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ իսպենջը փաստորեն կալվածատեր-ֆեոդալի օգտին գանձվող գլխահարկ էր, քանի որ իսպենջը գանձվում էր բոլոր հպատակ ոչ-մուսուլմաններից «անկախ նրանից, թե նրանք հողը մշակում էին, թե ոչ»[467]։ «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ դավթարում» մատնանշված բոլոր տեսակի հարկերի մեջ իսպենջը առաջնակարգ տեղ է գրավում։

Արևմտյան Հայաստանի և առհասարակ արևելյան երկրների կլիմայական պայմաններում ոռոգման հարցը գյուղատնտեսության համար կենսական նշանակություն ունի։ Ուստի կալվածատեր-ֆեոդալի օգտին գանձվող «ռեսմ-ի միրաբին» (resm-i mirabi) կամ «հակկ-ի շուրուբ» կոչված հարկը ֆեոդալական ռենտայի կարևորագույն հոդվածներից մեկն էր։ Եվ պատահական չէ, որ այդ հարկը, որ հաճախ առիթ է տվել չարաշահումների, իր արտացոլումն է գտել Էրզրումի,

463 Ռեսմ-ի չիֆթ (*resm-i çift*) չիֆթլիկն օգտագործելու համար գանձված հարկի անունն է, որը, սովորաբար, գանձվում էր մուսուլման գյուղացիներից։ Չիֆթլիկը մի հողակտոր էր, որը կարելի էր մշակել մի զույգ եզան օգնությամբ։ «Չիֆթ» պարսկերեն նշանակում է «զույգ», այստեղից էլ չիֆթլիկ բառը։

464 *O. L. Barkan*, Çiftlik (Islam ansiklopedisi), c. II, İstanbul, 1945, s. 393.

465 «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 21։

466 Նույն տեղում, էջ 65։

467 *M. Z. Pakalın*, Osmanlı tarih deyimleri ve terimleri..., c. III, s. 300.

Մալաթիայի և մի շարք այլ վայրերի կանոնադրություններում։ Էրզրումի կանոնադրությունում այդ մասին կարդում ենք. «Վերոհիշյալ լիվայում ջրի մի քանի առու կա, որոնցով գյուղերի ցանքսերն են ջրում։ Սրանից առաջ վերոհիշյալ վիլայեթը գրանցող էմինը կայսերական դավթարում արձանագրել էր, որ առուների ջուրը բավարար է գյուղերի ցանքսերի համար։ Սակայն հուլիս ամսին ջուրը քշանալու պատճառով չի բավարարում. հերթի սպասող և իրենց հողերը ջրելու իրավունք ունեցող անձանց հիշյալ ջուրը շտալով, մոտակա գյուղերի բնակիչներին ջուրն ըստ ցանկության ավելի գնով վաճառելով, (ջրի տերերը) ռայաթներին նեղություն և բռնություն են պատճառել... Որոշ գյուղերի ռայաթների արտերը մնացել են առանց ջրի, ցանքերը չորացել են և փչացել (որովհետև նրանք) ավելորդ գումար վճարելու կարողություն չեն ունեցել։ Դրանով ռայաթներին խիստ նեղություն է պատճառվել»[468]։

Ֆեոդալական ռենտայի դրամական ձևերից հայկական շրջաններին վերաբերող կանոնադրություններում առավելապես հանդիպում ենք հետևյալ հարկերի, որոնք ոչ բոլոր դեպքերում և ոչ ամենուր էին միատեսակ գանձվում՝ «ռեսմ-ի բաղ» (հարկ այգիների համար), «ռեսմ-ի բոստան» (հարկ բանջարանոցների համար), «ռեսմ-ի կովան», «ռեսմ-ի կուվվերե» (հարկ մեղվաբուծության համար), «ռեսմ-ի աղնեմ»[469] (հարկ ոչխարաբուծության համար), «ռեսմ-ի արուա» (հարկ ամուսնության համար), «ռեսմ-ի ասիյաբ» (հարկ աղացի համար) և այլն։

Ֆեոդալական ռենտայի աշխատանքային ձևերից կանոնադրություններում ամենից հաճախ հիշատակվում է «բրդադիյեն» կամ «ռեսմ-ի բրդադիյեն»[470]։ Այսպես էր կոչվում տարվա ընթացքում գյուղացու պարհակային աշխատանքը՝ մի քանի օրվա տևողությամբ։ Բացի այդ օրինական կոչված պարհակային աշխատանքից, ֆեոդալները թույլ են տվել ապօրինություններ, որոնք իրենց արտացոլումն են գտել կանոնադրություններում։ Դիվրիկի լիվայի կանոնադրությունում կարդում ենք. «Սանջակի բեյերը, սուբաշիները և այլ սիփահիները, որսի գնալ ցանկանալով, ռայաթներին բազմիցս քշել-տարել են, աշխատանքից կտրել

468 «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 28։

469 Այս հարկը, համաձայն կանոնադրությունների, ունեցել է իր տարատեսակները։ Հաճախակի են հիշատակվում «ադեթ-ի աղնեմ», «ռեսմ-ի աղբլ», «ռեսմ-ի կըշլակ», «ռեսմ-ի յաթակ», «ռեսմ-ի յայլակ», «չորանբեգի» և այլն (այդ մասին տե՛ս «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», ծանոթագրություններ, էջ 128—138)։

470 «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 108,45։

և օրերով ստիպել հսկել իրենց ձիերին»[471]։ Մի այլ տեղ ասված է. «Սանջակի բեյերը և սիփահիները ռայաթներին մի քանի օր խոտհնձի տանելով խանգարել են նրանց աշխատանքը»[472]։

Կանոննամեներում զգալի տեղ են հատկացված տեղական կալվածատեր ֆեոդալի և կամ տեղական կառավարչի օգտին գյուղացիների պարտադիր «նվիրատվություններին» թվարկմանը՝ զանազան մուսուլմանական տոների առթիվ, այնպիսի հարկեր, ինչպիսիք են՝ «բայրամշեք»-ը կամ «իյդիյեն» (տոնականը), «սելամլըկը» և այլն։ Վերջինն իրենից ներկայացնում էր մի հարկ, երբ գյուղացին պարտադիր կարգով նվերներ էր տալիս նոր նշանակված ֆեոդալին կամ մի որևէ բարձրաստիճան պետական պաշտոնյայի։

Կանոննամեներում հիշատակվում են նաև հարկեր, որոնք գանձվում էին կալվածատեր-ֆեոդալների կամ պետական պաշտոնյաների կողմից «բիդ՝ատներ» ընդհանուր անունով։ Բիդ՝ատը արաբերեն բառ է, որը նշանակում է «նորամուծություն», այսինքն՝ շարիաթի սկզբունքներին չհամապատասխանող և նրան հակասող[473]։

Բացի այդ, եկամտի լրացուցիչ աղբյուրներ որոնելու ճանապարհին ֆեոդալները հաճախակի տուգանում էին գյուղացիներին, վերցնելով նրանցից «բադիհավա» կոչված տուրքը[474]։

Եվ, վերջապես, ֆեոդալական ռենտայի կարևորագույն աղբյուրներից մեկն էլ քաղաքներից ու քաղաքատիպ վայրերից, առևտրական կետերից ու տարանցիկ առևտրի կենտրոններում վաճառվող ապրանքներից գանձված հարկն էր՝ այսպես կոչված բաջը։ Այս հարկը, հիմնականում, նույնպես չէր մտնում «թեքյալիֆ-ի դիվանիյեի» մեջ։ Հայկական նահանգներին վերաբերող կանոննամեներում «բաջը» զգալի տեղ է գրավում։ Այս հարկը կոչվում էր նաև «բաջիբազար» (շուկայական բաջ»), «թամղա-ի սիյահ («սև կնիք»), «բաջ-ի բուզուրգ» («մեծ բաջ»), «իհտիսաբ ռեսմի» («հաշվառուի հարկ») և այլն։ Օ. Լ. Բարկանը հետևյալ բացատրությունն է տալիս այդ տերմինների մասին, որոնց հետ չի կարելի չհամաձայնվել, փաստաթղթերի հետ ծանոթանալուց հետո։ «Բաջ բառը,— գրում է նա,— օգտագործվել է հարկի իմաստով, բաջ-ի թամղա նշանակում է կնիքի հարկ։ Դա յուրաքանչյուր ծախված ու գնված ապրանքի, մշակված կտորի, քաղաքում մորթված կենդանու համար գանձվող հարկն է։ Այդ հարկը մեծ մասամբ կոչվում էր նաև «թամղա-ի սիյահ»։ Տարանցիկ առևտրի համար գանձվող հարկը կոչվել է բաջ-ի թամղա. թամղան այստեղ օգտագործվել է «բաջ», այսինքն՝ ընդհանրապես հարկ, իմաստով»[475]։

Հիմնականում սրանք են Արևմտյան Հայաստանի բնակչությունից պետության ու կալվածատեր-ֆեոդալների օգտին գանձվող հարկերը։ Մենք կանգ չառանք Թուրքիա այցելած մի շարք եվրոպացի, ինչպես և հայ հիշատակագիրների վկայությունների վրա, քանի որ դրանք կրում են խիստ պատահական բնույթ և հեռու են կայսրության մեջ տիրող հարկային դրության ճիշտ պատկերը ներկայացնելուց։ Այդպիսի հեղինակներից է, օրինակ, Միշել Ֆեբվրը։ Նրա տվյալներով, արևելյան քրիստոնյաները վճարում էին խարաջ, շաշաթ (շքեղության տուրք), շիրա (խաղողի տուրք)[476]։ 1684 թ. արտագրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «...ի ժամանակս թագաւորութեանն տաճկաց սուլթան Մահմետի... հարկապահանջութիւնս յոլովս ի վերայ աշխարհի իւրոյ հարուցանէր, խնդրելով ի մեծամեծս իւրոց գանձս բազում անուն իմն եղեալ է քեպուռ աղչասի։ Եւ յետոյ իշթիրայ անուամբ հարկ իմն եղեալ ծանր է վերայ ամենայն սահման...»[477]։ 1596 թ. ձեռագրի մի հիշատակարանում հանդիպում ենք բաթաշաթ անվանված հարկի[478]։ Ենթադրում ենք, որ քեպուր աղչասին և իշթիրան այստեղ պետք է նշանակի մուկատա՝ան գնած մյուլթեզիմին վաճառելիք հարկերի ընդհանուր գումարը (իշթիրա արաբերեն նշանակում է՝ գնում, իսկ քեպուր աղչա հավանաբար՝ մեծ ակչե)։ Չկարողացանք պարզել, թե ինչ հարկ է բաթաշաթը։

Այս բոլորին պետք է ավելացնենք նաև աշխատավոր հայ ժողովրդի շահագործումը «սեփական» կեղեքիչների՝ հայ հոգևորականության ու վաճառականների կողմից։

Կաթողիկոսական աթոռը Սսից էջմիածին տեղափոխելուց հետո (1441 թ.), վերջինս կրկին դարձավ հայ հոգևորականության կենտրոնը։ Էջմիածինն աշխատում էր ամեն կերպ իր ձեռքը վերցնել հայերից (որտեղ էլ որ նրանք ապրելիս լինեին) հարկահավաքման գործը։ Ինչպես

---

471 Նույն տեղում, էջ 53։

472 Նույն տեղում։

473 Նույն տեղում, էջ 53, 60, 93, 94, 95 և այլն։

474 Այդ մասին տե՛ս V. P. Mutafçiyeva. O osmanskijey Kategorii podatkowej "bad-u-hava", "Przêglad Orientalyczny", 1958, № 3.

475 "İslâm ansiklopedisi", c. II, İstanbul, 1952, s. 189.

476 M. Febvre, p. 375—376.

477 Տե՛ս «Արարատ», 1888, էջ 486—487։

478 Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 549։

արդեն տեսանք, XVI—XVIII դարերում գնում էր լարված պայքար էջմիածնի ու կրոնական այլ կենտրոնների միջև՝ հոգևոր տուրքերի գանձման իրավունք ձեռք բերելու համար։ Այս հարցում ընդդեմ էջմիածնի հատուկ համառություն էին ցուցաբերում Կ. Պոլսի պատրիարքները, որոնք հաճախ հովանավորվում էին սուլթանական կառավարության կողմից։

Սիմեոն Երևանցի կաթողիկոսը «Ճամբռում» բերում է շատ հետաքրքիր տվյալներ, որոնք բացահայտում են էջմիածնի կաթողիկոսների իսկական նպատակները։ Էջմիածինն ամեն կերպ ձգտում էր բացառիկ մենաշնորհ ձեռք բերել, այսպես կոչված, նվիրական հարկերը գանձելու իրավունքի մեջ[479]։

Նվիրակների միջոցով էջմիածինը գանձում էր «աթոռահաս», «քառասնիք», «խոստմունք», «հոգեբաժին», «հիշատակ», «աջահամբույր», «մատաղ», «գավազանապտուղ», «փոքրավորեք», «ժամուց», «պաշտոնէից» և այլ այսպիսի հասույթներ ու տուրքեր։

Իհարկե, այդ բոլոր տուրքերը համարվում էին կամավոր, սակայն դրանք նույնքան պարտադիր էին, ինչպես և պետական հարկերը։ Հոգևորականությունն ամեն կերպ օգտագործում էր ժողովրդի սնոտիապաշտությունը նրանց կեղեքելու համար։ Էջմիածնի հիմնական ապրանքի՝ «սրբալույս» մեռոնի գները էջմիածնի նվիրակների կողմից անընդհատ բարձրացվում էին։ Եկեղեցականների հետ մեռոնաշարաշահման գործում մրցում էին աշխարհականները։ «Նուիրակք ոմանք,— գրում է Ե. Քեոմյուրճյանը,— էմրով պէրաթի սուրէթով պոռնիկք և բոզարածք աշխարհականք յաշխարհականաց ապականեցին խանգա-

479 Տե՛ս Սիմեոն Երևանցի, էջ 63—99։ Սիմեոն Երևանցին առհասարակ արհամարհանքով է խոսում Կ. Պոլսի պատրիարքության մասին, ընդգծելով պատրիարքների ապականվածությունը. «Այսպէս է եւ ի Կոստանդնուպոլիս, որ ո՛չ է երկիր եւ քաղաք Հայոց, այլ Յունաց, յորում նստիր Յունաց պատրիարգն՝ որպէս և արդէն իսկ նստի։ Իսկ ի յետին ժամանակս, եւ ի ցան եւ ցիր լիներն ազգիս, եւ ոմանց ևս անդր գնալով ի վաճառականութիւն, եւ ի բազմանալն օր ըստ օրէ, և ի տնաւորիլն իսկ, սկսան եւ զեկեղեցիս իսկ ստանալ յատուկ Հայոց, վասն որոյ և հարկ եղեւ զի առաջնորդ մի ևս ունիցին, զոր և ունեցան իսկ հրամանաւ կաթողիկոսին։ Յետ այնորիկ ի զօրանալ թագաւորութեանն Օսմանցւոց, և ի յաճախել իշխանացն և ժողովրդոց մերոց անդ, սկսան ընդվզիլ և անբարտաւանիլ յանդր նստող Առաջնորդքն, և թողուլ զհոգևորն կանոն, եւ առ յոտն հարկանել զպատիւն Հայրապետին, հրամանագրով այլազգի թագաւորին նստիլ ինքնագլուխ՝ կանոնելով և զհարկս տալ յարքունիս յամէ յամ, յորոց և փաթրիկ անուանել։ Ուստի եւ ի հասարակութենէ գոնէկաց սովորութիւն եղև պատրիարգ կոչել» (նույն տեղում, էջ 56)։

բեցին զկարգ սուրբ եկեղեցական ի Թրակիա և ի Մակեդոնիա և յեղբ Տանուիս գետոյ և ի փոքր յԱսիա»[480]։ Հաճախ, ինչպես նշել ենք, էջմիածնի նվիրակները հավաքված գումարները սեփականացնում ու ծախսում էին անձնական կարիքների համար[481]։

Այս բոլորի հետևանքով հայ եկեղեցու ձեռքում կուտակվում էին հսկայական հարստություններ։ Նախ և առաջ դա վերաբերում է էջմիածնին, որի հարստությունները ապշեցրել էին այստեղ այցելած Տավերնիեին։ «Ես երբեք չէի հավատա,— գրում է նա,— որ քրիստոնյա եկեղեցիներում այդքան հարստություն կլինի», որ «այստեղ (էջմիածնում) կան այնպիսի հարուստ զարդարանքներ, որ չի կարելի գտնել և ոչ մի քրիստոնյա եկեղեցում»[482]։

* * *

Արդ, կանգ առնենք այն փոփոխությունների վրա, որոնք տեղի ունեցան XVIII դարում օսմանյան հարկային համակարգում։ XVIII դարում, հատկապես նրա երկրորդ կեսից սկսած, վիլայեթների կառավարիչները նախկին խաստերի փոխարեն, որպես ռոճիկ պետությունից ստացան իրենց իրավասության ներքո գտնվող նահանգների բնակչությունից «խաղաղ» ժամանակ (իսկ այդպիսի ժամանակ համարյա չէր լինում) այսպես կոչված «ֆմդադ-ի հազարիյե», իսկ պատերազմի դեպ-

480 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. Բ, էջ 146։

481 Նույն տեղում։ Արևմտահայ գավառներում նվիրակների ընդվզեցուցիչ գործունեության մասին Մ. Օրմանյանը գրում է. «Արդէն իսկ ընդհանուր դժգոհութեան առիթ տուած էին էջմիածնի նվիրակները, զորս մայր աթոռն աւելի թուով և աւելի հաճախակի կղրկէր իր կարոտութենէն ստիպած։ Նվիրակները իրենց հանգանակութեանց փոխարէն մյոռոն բաշխելու պաշտոնն ունէին, որով կգեղծվէին շափազանց գումարներ պահանջելով, րոնանալով և կեղեքելով, հոգևորական պատիժներ սպառնալով, առաջնորդներ և քահանաներ արգելելու կամ փոխելու ալ կմիջամտէին, և ամէն կողմ խռովութիւն կտիրէին, կուսակցութիւններ կկազմէին, և ոչ միայն եկեղեցականներ անոնցմէ ձանձրացած էին, այլ և ժողովրդականք զզուանք կզգային։ Իրաց կացութիւնը այնչափ ձանձրացած էր, որ մինչև իսկ օսմանեան պետութեան դիմումներ եղան, որպէսզի Պարսից տերութիւնն սահմաններն եկող նուիրակները արգիլէ, որոնք ոչ միայն ժողովուրդը կկեղեքէին, այլև պետական տուրքերու վճարման արգելք կըլլային։ Մեծ Եպարքոսութեան կողմանէ ալ այդ իմաստով հրահանգներ ղրկուեցան կուսակալներուն։ Նուիրակներու այդ գործերը, արդյունքներու անհավատարիմ կիրառութեան հետ խառնուելով, դուռ բացին հակաթոռ կաթողիկոսութիւն մը ստեղծելուն» (Մ. Օրմանյան, էջ 2533)։

482 *J. B. Tavernier*, t. I, p. 35.

քում՝ «իմդադ-ի սեֆերիյե» կոչվող հարկերը։ Օրենքով այդ հարկերի ընդհանուր գումարը որոշվելու էր յուրաքանչյուր տարվա համար տեղական նշանավոր մարդկանց կողմից կազմված հանձնաժողովով ու հաստատվելու էր շարիաթական դատարանով։

Թե ինչքան ծանր էր «իմդադ-ի հազարիյեն» և «իմդադ-ի սեֆերիյեն» ժողովրդի համար հարկերի որոշակի չափերի բացակայության պատճառով, երևում է Ղ. Ինճիճյանի հետևյալ վկայություններից։ Խոսելով Էրզրումի մասին, նա գրում է. «Իմտատի հազերիէ Էրզիռումայ ամի ամի է 55 քսակ, զոր տայ ի յաշնան։ Իմտատի սեֆերիէ ևս է 55 քսակ։ Մենզիլն (իջևանելու փոխարեն) Էրզիռումայ ամի ամի է 60 քսակ, զորոյ զկէսն տայ ի գարնան ի մարտի. և զկէսն ի յաշնան։ Այսպէս են որոշեալ տուրք, բայց որպէս գրեցաք ի կառավարութեան օսմանեան տէրութեան բազում անգամ փոփոխեն այսպիսի տուրք (ընդգծումը մերն է— Մ. Ջ.)։ Իսկ զմասարքին (ծախսը) ի վեց ամսոյ ի վեց ամիս ցուցանեն փաշային. և նա արկանէ ի վերայ ժողովրդեան և ի ժողովին զայն ծախս քաղաքային, ժողովէ ինչ և վասն անձին իւրոյ իբր իգրամիե (նվեր) (ընդգծումը մերն է— Մ. Ջ.)։ Ի քաղաքին Էրզիռումայ զայսպիսի տուրս միայն հայք վճարեն, բայց ի գիւղօրէս Էրզիռումայ՝ Հայք և տաճիկք ևս վճարեն։ Բաց ի յորոշեալ տրոց աստի՝ բազում անգամ տայ Էրզիռում և այլ տուրս, որ լինին ի հրամայելոյ թագաւորին. զոր օրինակ է իշտիրա (ընդգծումը մերն է— Մ. Ջ.)»[483]։

«Իմդադ-ի հազարիեի» և «իմդադ-ի սեֆերիյեի» գանձման բնագավառում թույլ տրված կոպիտ կամայականությունների մասին նշում է Ղ. Ինճիճյանը, երբ խոսք է գնում Վանի նահանգի մասին. «Բայց տուրք (Վանայ) փաշային զոր առնու ի յիմտատիէ և ի իյայլրգ (ռոճիկ), վիշտ մեծ հասուցանէ մանաւանդ քրիստոնէից, զի ոչ պահանջէ յորոշեալ ժամանակին կամ ըստ որոշեալ հաշուին, որ է 100 զուռուշ ամսոյ յամիս բնակչաց Վանայ քաղաքին, այլ զայլրիսն, ողջոյն տարւոյն միանգամայն պահանջէ հարկանելով և տանջելով. պատճառս բերեալ թէ փոխանակ սակաւ առ սակաւ տալոյ, միանգամայն տայք և զերծանիք, իսկ յետ շորից կամ հնգից ամսոց դարձեալ տանջել սկսանի տալ զյետագայ տարւոյն աւուրս. յետ քանի մը ամսոց՝ զմիւս յետագայ տարւոյն

483 Ղ. Ինճիճյան, էջ 75։ Իշտիրան, որի մասին խոսք է գնում այստեղ և մուբաիյեն (պետության պարենամթերքի պարտադիր վաճառք նախօրոք սահմանված գներով) կատարյալ մի մտրակ էր ժողովրդի համար։ Հաճախ գանձված պարենամթերքի փոխարեն ոչինչ չէին վճարում։

և այսպէս զօրինաւոր տուրսն առիք իւր առեալ, ժողովէ տուրս արտաքոյ օրինաց ի վեր քան զկարողութիւն բնակչաց, մինչև անհնար լինել վճարել (ընդգծումը մերն է—Մ. Ջ.)»[484]։

Ղ. Ինճիճյանը, խոսելով Դիարբեքիրի նահանգի մասին, փորձում է տալ նահանգում տիրող հարկային համակարգի ընդհանուր պատկերը. «Զոր, կարծում ենք, հեռու է ամբողջական լինելուց։ Այսուհանդերձ, ավելորդ չենք համարում այն բերել անշան կրճատումներով։ «Զանազան տարեկան ծախք քաղաքիս են,— գրում է նա,— իմտատի հազարիէ, որ է իբրև 40 քսակ։ Իմտատի սէֆէրիէ 80 քսակ։ Մենզիլն՝ սահմանեալ է իբրև 40 քսակ։ Իմտատի սէֆէրիէ 80 քսակ։ Մենզիլն՝ սահմանեալ վասն Պաղտատու և Ըստամպօլու, է 40 քսակ։ Մասարքին՝ դատաստանաւ որոշեալ ցուցանեն փաշային, և նա արկանէ ի վերայ արուեստաւորաց այսինքն՝ էնաֆից։ Խշլա իւրաքանչիւր ոք տայ 23 փարայ և 1 փող, իսկ բնիկ քաղաքացիք Ամթայ տան 66 փարայ և 2 փող, ուստի բովանդակ տարեկան տուրք խշլային է իբրև 30 քսակ։ Բաց ի տրոցս աստի երբեմն երբեմն արկանէ փաշայն ի վերայ ժողովրդեան տուգանս կամ նէրէմէ։

... Իսկ յառաջ ժամանակաւ քրիստոնեայք բաց ի վերոգրեալ տրոցս՝ բազում այլ ևս տուրս տարեկանս ունէին հատուցանել, Ա. Գալէ թամիրի, 60 քսակ, որ է նորոգութիւն բերդին և ապարանից փաշային։ Բ. Քիրա, իբրև 10 քսակ, որ է ծախք վասն բնակարանին զօրաց։ Գ. Հասբր անհէսի, իբրև 4 քսակ, որ է տուրք վասն սէրայից ի պէտս փաշային և զօրաց նորա. վասն այսր կարգեալ կայր նաև գլխաւոր ոք կոչեցեալ Հասբր քեխեասի։ Դ. Պուլղուր անհէսի, 150 զուռուշ, զի փաշայն ամի ամի տայր ժողովրդեան ցորեան առ ի գործել պուլղուր ի պաշար զօրաց իւրոց, յայն սակս ժողովուրդք կարգեալ ունէին զոմն ի հոգալ զայս գործ, որ կոչէր Պուլղուր քեխեասի։ Բայց ի ժամանակս Կիւլ Ահմեդ փաշային Տիարպէքիրոյ, յառաջին աւուրս սուլտան Համիտին, բնակիչք քաղաքին միաբան դիր աղերսանաց՝ ի Դուռն տուեալ, թէ առ անհնարին առաւելութեան տրոց՝ ոչ մնացի քրիստոնեայս զօրութիւն ինչ, և քսակս իբրև 15 առ միջնորդս ծախեալ վճիռ կամ խաղդի Հիմայուն ընկալան ի սուլտան Համիտէն ազատ լինել ի տրոց աստի»[485]։ Հազիվ թե հաջորդ սուլթանի՝ Սելիմ III-ի ժամանակ այդ մատնանշված «խաթթ-ի հումայունը» շարունակած լիներ իր իրավական ուժը պահել։ Իսկ «խաթթ-ի հումայունի» պատճառով «կորցը-

484 Նույն տեղում, էջ 137։

485 Նույն տեղում, էջ 218։

բած» գումարը, տեղի կառավարիչները լրացրել են զանազան պաշտոնվաճառներով տուգանելով քրիստոնյա հպատակներին։ «Այլ բարձումն այսոցիկ տրոց,— գրում է Ղ. Ինճիճյանը, —պատճառ եղև յաճախութեան տուգանաց՝ զոր ստէպ ստէպ արկանեն ի վերայ քրիստոնէից»[486]։

Որ տուգանքը (ջերիմեն) որոշակի տեղ էր գրավում օսմանյան հարկային համակարգում, երևում է Ղ. Ինճիճյանի այն վկայությունից, թե Թոխատում վոյվոդայի եկամուտն հիմնականում ապահովվում էր տուգանքների միջոցով։ Նա գրում է. «Մալիքեանէ Թոգաթու սովորաբար է 64 քսակ։ Հարկն ռայեային ամի ամի ի 60 էն մինչ ի 65 քսակ։ Մաքսն վաճառի 45 քսակի։ Վոյվոտայութիւնն է 250 քսակի։ Առ ի լրացուցանել վոյվոտային զայս ամենայն սակ գրեալ է ի ֆերմանի նորա թէ լրացուցցի ի ճերիմէէն, այսինքն ի տուգանելն վոյվոտային զոք ի քաղաքացոց ի պատիժ, զնոյն տուգանս տացէ ի գանձն արքունի. և այսպէս լրացուցէ զիւր պարտս տարեկան տրոց. յայսմանէ բռնաւոր իշխանաց քաղաքին ճամարձակութիւն առեալ յանիրաւի տուգանեն զայս ոք և զայն (ընդգծումը մերն է— Մ. Ջ.)»[487]։

Արևմտահայ բնակչության համար ամենածանր ու ստորացուցիչ հարկը XVIII դարում, ինչպես դա նախորդ դարերում էր, մնում էր ջիզիեն։

Այս հարկի գանձումը հաճախ տեղի է տվել բազմաթիվ չարաշահումների։ Նախ, ինչպես միշտ, միօրինակություն գոյություն չի ունեցել հարկաչափի մեջ. միշտ չէ, որ կիրառվել է բնակչությունը երեք խմբերի (հարուստների, միջակների, աղքատների՝ ալա, էվսատ, էդնա) բաժանելու ընդունված կարգը։ Հարկահավաքները թույլ են տվել բազմաթիվ կամայականություններ, և նույնիսկ, հայկական աղբյուրների վկայությամբ, հայկական նահանգներում գանձել են երկու տեսակի ջիզիե և այլն։

Դարի առաջին երեսնամյակում ջիզիեի չափը, Մ. Մինյոյի վկայությամբ, կազմել է 4 էքյու (զուրուշ)։ Այս հարկը,— գրում է նա,— գանձվում է «...որպեսզի ոչ մի գյավուր չկարողանա խուսափել տուրքից, որին դատապարտեց մեծ մարգարեն նրանց կուրությունը պատժելու համար։ Այս առումով բաշխարաջի (գլխահարկի) գործակալներն իրավունք ունեն կանգնեցնելու յուրաքանչյուր գյավուրին և նրանից պահանջել չորս էքյու (զուրուշ) գլխահարկ մինչև նա չներկայացնի անդորրագիր, որը հաստատեր այդ տարվա համար նրա վճարած լինելու։ Այդ անդորրագիրը գրված է կանաչ, կարմիր, կապույտ կամ մի այլ գույնի թղթի վրա, որը յուրաքանչյուր տարի փոփոխվում է։ Եվ բնակիչները, որոնք վճարել են այս պարտքը իրենց ապրած բնակավայրում, ուղևորության դուրս գալիս, որպեսզի չբանտարկվեն ու երկրորդ անգամ գլխահարկ չվճարեն, անդորրագիրը միշտ պահում են իրենց մոտ»[488]։ Նույնն է վկայում նաև Հ. Գրենվիլը XVIII դարի 60-ական թվականներին[489]։ Հ. Գրենվիլը խոսում է նաև ջիզիեի գանձման եղանակի ու գանձման ժամանակ թույլ տրված կամայականությունների մասին։ «Գլխահարկը,— գրում է նա,— բաժանվում է երեք խմբի. հարուստները վճարում են տասնմեկ զուրուշ։ Արհեստավորները և երկրորդ խմբի մարդիկ վճարում են հինգ զուրուշ և քսան փարա, երրորդ խումբը, որի մեջ մտնում են երկրագործները, աղքատները, առանց բացառելու նույնիսկ մուրացկաններին, վճարում են երկու զուրուշ և 30 փարա... Կանայք և երեխաները խարաջ բոլորովին չեն վճարում (դա հաճախ խախտվում էր—Մ. Ջ.), սակայն այսուհանդերձ պարզված չէ, թե որ տարիքից են պատանիները սկսում վճարել։ Նրանք, ովքեր կապացուցեն, թե իրենք 40 տարի շարունակ առանց ընդմիջման մուծել են խարաջ, ընդմիշտ ազատվում են վճարելուց...։

... Խարաջի հարկահավաք պաշտոնյաները հարստանալու նպատակով, խաբում են Տիրակալին՝ կիսելով եկամուտը և տալով անդորրագիր երկրորդ կարգի այն մարդկանց, որոնք ենթակա էին առաջին կարգի անդորրագրի, և նույնպես՝ երրորդ կարգի անդորրագիր են տալիս նրանց, ովքեր պետք է ստանային երկրորդը... Աղքատները, որոնք հնարավորությունից զուրկ են, միանվագ վճարման հետաձգում են ստանում միայն նվերներ տալուց հետո, իսկ այնուհետև նվերների և վճարելիք խարաջի չափը հաճախ դառնում է կրկնակի։

Նահանգներում մեծ շրջաններ ընդգրկող համաճարակը, գումարած խարաջի գանձման ժամանակ թույլ տրված կամայականությունները ստիպում են յուրաքանչյուր տարի մեծ թվով մարդկանց լքել իրենց հայրենիքը...

Նահանգների փաշաները, երկրամասի անմարդաբնակ դառնալու պատճառը քողարկելու նպատակով, ստիպում են տեղում մնացած բնա-

486 Նույն տեղում, էջ 219։

487 Նույն տեղում, էջ 291։

488 M. Mignot, p. 451—452.

489 H. Grenville, p. 37.

կիշներին՝ իրենց համար նախատեսված անդորրագրերից բարձրերը ստանալ, և այս ճանապարհով դրամով լրացնում են հեռացածների վճարելիք գումարը»[490]։

Հայկական նահանգներում գլխահարկի գանձումը միշտ չէ, որ աղբյուրներում հիշատակվում է ղուրուշով, երբեմն օգտագործվում է նաև ոսկին՝ երկուսուկես ղուրուշ արժեքով։ Ասվեց նաև, որ հայկական աղբյուրներում խոսվում է կրկնակի «կոտոր», «հարամ», այսինքն՝ ապօրինի խարաջի գանձման մասին։ Հարությունի Խալֆայանի տարեգրության մեջ հիշատակվում է. «...ՌՄԹԱ (1771—1772)... երկու խարաջ առին հայոց, կէս ղուռուշ էլ խարամ խառաջ»[491]։ Նույն այդ տարեգրի մոտ, կարդում ենք. «ՌՃԽԹ (1699—1700)... կրկին հայոց մարդագլուխ մեկ ղուռուշ խարաջի կոտոր ժողովեցին դավթարով»[492]։ Մի այլ տեղ, նույն հեղինակը հիշատակում է. «ՌՃԿԸ (1718—1719)... եկն Հաճի Ալի փաշայն, սա աւելի խարաջ մ'էառ ի հայոց»[493]։

Պիտի ենթադրել, որ այդ ապօրինի խարաջի գանձումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ հարկի գանձման ժամանակ թույլ տրված կամայականություն։ Հարկերի գանձման ընագավառում թույլ տրված կամայականությունների մասին է խոսում նաև 1751 թ. սուլթան Մահմուդ I-ի հրատարակած այսպես կոչված «Ադալեթնամեն» («Արդարության հրովարտակ»), ուր սուլթանը ամենախիստ ձևով զգուշացնում էր նահանգների պետական բարձրաստիճան պաշտոնյաներին դադարեցնել գյուղացիներից գանձվող հարկերի հարցում թույլ տրված ամեն տեսակի ապօրինությունները։ «Ադալեթնամեում» արգելված հարկերի մեջ հիշատակվում են դեվր (գավառային հարկ), զահիրեբահա (պարենամթերքներից գանձվող հարկ), նալեհա (պայտի համար վերցված հարկ), յազիջի ակչե (գրագրության փող), մուֆտ մուջա նաիմ (հարկեր այն վայրերի համար, ուր ուղևորները անվճար հանգստանում են) և այլն[494]։

Առաջվա նման, ժողովրդի համար մի կատարյալ բեռ էր «ավարիզը» կամ «ավարիզ-ի դիվանիյեն»։ Այս հարկի մասին Հ. Գրենվիլը գրում է իր կառավարությանը. «Ավարիզը դա մի տուրք է, որն անխտիր գանձվում է յուրաքանչյուր տնից, և յուրաքանչյուր խանե

490 Նույն տեղում, էջ 37—38։

491 «Դիւան հայոց պատմութեան», հ. ժ, էջ 143։

492 Նույն տեղում, էջ 126։

493 Նույն տեղում, էջ 129—130։

494 J. Hammer, t. XV, p. 21.

(տուն) ամենաքիչը վճարում է երեք ղուրուշ... այսօր տների վրա բաշխված այս տուրքը անհամեմատ ավելի մեծ է ու վճարում են համաձայն ընտանիքի մեծության ու տանտիրոջ հարստության»[495]։

Հարկերի գանձման վիճակը շատ ավելի վատ էր կենտրոնական պետության նկատմամբ ապստամբ՝ քուրդ խաների գերիշխանության տակ գտնվող նահանգներում՝ Վասպուրականում, Մոկսում, Տարոնում, Զարսանջակում և այլուր։ Ցավոք, աղբյուրների ժլատ տեղեկությունները հնարավորություն չեն ընձեռում մեզ անդրադառնալու նաև այդ հարցերին։ Նշենք միայն, որ Ղ. Ինճիճյանը, անդրադառնալով մեզ հետաքրքրող այս հարցին, նշում է, որ Բաղեշի խանը իր խանությունը հաստատելու համար սուլթանական կառավարությանը տված մեծ կաշառքի դիմաց «...արկանէ ծանր ծանր տուրս ի վրայ բնակչաց մանաւանդ ի վրայ քաղաքացւոց. շարշարէ և ի բանտ արկանէ մինչև յառնուլ»[496]։

* * *

Անհրաժեշտ է նշել նաև, որ սոսկալի պատուհաս էին դարձել ժողովրդի գլխին համաճարակն ու բնական աղետները՝ պարբերաբար կրկնվող երկրաշարժերը, հրդեհները։ 4 սեպտեմբեր 1615 թվակիր իր նամակում իտալացի ճանապարհորդ դելլա Վալլեն նշում էր, որ «համաճարակը համարյա մշտապես թագավորում է... Թուրքիայում ու խլում տասնյակ հազարավոր մարդկային զոհեր»[497]։

Խոսելով XVI դ. վերջերին տեղի ունեցած երկրաշարժերի մասին, Առաքել Դավրիժեցին գրում է. «Թուին ՌԼԳ (1583) շարժ եղև յԵղնկան, յունիսի ԺԵ քաղաքն առհասարակ փլաւ, ԺԵՌ այր և կին մեռան։ ԵԳ մարդ այլ ի ներքև հողոյն մնաց, զորս կիսամահ հանեցին, որն ապրեցաւ՝ որն մեռաւ և որն սախաթ մնաց»[498]։ 1598 թ. մեծ երկրաշարժ է տեղի ունենում Ամասիայում և Զորումում[499], 1648 թ.՝ Վանում ու նրա շրջակայքում[500]։

495 H. Grenville, p. 39.

496 Ղ. Ինճիճյան, էջ 171։

497 Della Vallé, t. I, Rouen, 1645, p. 70.

498 Աղ. Դավրիժեցի, էջ 631 և հետ։

499 Նույն տեղում, էջ 632։

500 Նույն տեղում, էջ 489—494 («Յաղագս շարժին որ եղև ի Վան քաղաքին, և իւրում շրջակայ երկրին»)։ 1646 թ. մի ձեռագրի հիշատակարանում Ղուկաս գրիչը կատուցից գրում է. «...Ի թվին ՌՁԵ (1646)։ Որ և ի սոյն ամի եղև ահագին շարժ

Գյուղացիները մեծապես տուժում էին նաև համաճարակի հետևանքով իրենց անասունների զանգվածային կոտորումից։ «Թվ. ՌԽԴ (1595),— գրում էր Գր. Դարանաղցին,— արջառոց չորքոտանեաց մահն անկաւ և տարածեցաւ յարևելից մինչև ի մուտս արևու։ Եւ նեխեցաւ երկիրն ի գիշոյ հոտոյն, որ ամարային էր եղանակն...»[501]։ Գրիչ Ավետիսը 1596 թ. գրում է «...ի թուականիս հայոց ՌԽԵ (1596) ի դառն և ի նեղ ժամանակիս, որ յայսմ ամի խաշանց մահ երեկ, բաղում տաւար հատաւ վասն ծովացեալ մեղաց մերոց»[502]։

1701 թ. մարտի 7-ին «...սաստիկ շարժ եղև ի քաղաքն Վան»[503]։ Մեկ շաբաթ անց, մարտի 15-ին «...դարձեալ ահագին շարժ եղև ի հասարակ աւուրն, յորմէ բաղումք տունք խախտեցան ի քաղաքն»[504]։

1770 թ. երկրաշարժ է արձանագրված Էրզրումում։ «Թվին ՌՄԺԹ (1770)-ին երկիրն Արզրումու այնպես ժաժ ելաւ, բոլոր բովանթակ գեղան անցաւ, Հասանղալաու պարիսպներ բլաւ, հոգտենքերի ամսոյն[505]։

Մեծ ավերածություններ է գործում երկրաշարժն 1784 թ. Երզնկայում։ «Երկրաշարժութիւն դիպաւ առ ժամանակօք մերովք յամին 1784, ի վերջնում աւուր յուլիսի, յաւուրս սուլդան Համիտի,— գրում է Ղ. Ինճիճյանը,— երկրաշարժութիւն սաստիկ յոյժ և զորաւոր, որով մեծ մասն քաղաքին հանդերձ բնակչօք խորասոյզ եղեալ ի 8000 տանց անտի հազիւ մնացին 5 կամ 600 տունք։ Այլև երեք մերձակայ գիւղօրէք առհասարակ հանդերձ բնակչօք իւրեանց անհետ եղեն. Սիլեյման փաշայն որ ի չավուշ պաշիութեան (ոստիկանապետ) դուղ էառ, և ի գնալն ի ճանապարհի ի Կոստանդնուպօլսոյ մինչ ի յԵզնկա բաղում կեղեքեանս և զրկանս գործեաց. անդէն ի նմին երկրաշարժութեան հանդերձ արամբք իւրովք գետնասոյզ եղև, որով և ընկալաւ զանուն Եերէ պաթան։ Ուժգնութիւն այսր երկրաշարժութեան եհաւ մինչև ի

յերկիրս Վանա(յ), ի յարութեան Ճրագալացի շաբաթ աւրն ի մէջ գիշերի և արար բաղում յաւեր, մանաւանդ ի Վան և Վարագ։ Եւ բաղում եկեղեցիք տապալեցան և շինուածք կործանեցան, և բաղում ոգիք մեռան ի յաւերակի, վասն ծովացեալ մեղաց մերոց» (Մատենադարան, ձեռ. № 6989, էջ 351բ)։

501 Գր. Դարանաղցի, էջ 24։

502 Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 416։

503 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 421։

504 Նույն տեղում։

505 Նույն տեղում։

քաղաքն էրզիռում, որ զաւուր երիս կամ չորս կայր յերերի, բայց չեղև ինչ վնաս տանց կամ բնակչաց»[506]։

Այս երկրաշարժը ավերածություն է գործում նույնիսկ Մուշում. տուժում է սբ. Կարապետ վանքը։ «Յամին 1784 թ.,— գրում է Ղ. Ինճիճյանը,— եղև երկրաշարժութիւն ի սուրբն Կարապետ, զորպէս և յԵզնկա, և կործանեցաւ բաց յայլ շինուածոց՝ պարիսպք հարաւակողման, սենեակք, սեղանատունն (զոր նորոգեալ էր անուանի Եաղուպն ակնցի՝ որ յաւուրն սուլդան Մահմուտին)»[507]։ Այս երկրաշարժի մասին է խոսում նաև Պողոս վարդապետ Սասունցին, հայտնելով, որ երկրաշարժը տեղի է ունեցել վարդավառի կիրակի օրը[508]։

1771 թ. ահավոր ժանտախտը խլում է տասնյակ հազարավոր մարդկային զոհեր, ըստ որում 40 հազար հայերի։ «1771 զօրացաւ ժանտախտն,— կարդում ենք Ղ. Ինճիճյանի մոտ,— թիւ մեռելոցն միայն ի մէջ երից ամսոց գտաւ 32 հազար, որ ոչ սակաւ նուազեցոյց զբազմամարդութիւն քաղաքիս և ի յետագայ ժանտախտին որ յաւուրս սուլտան Սելիմի մեռեալ ասեն իբր 40 հազար յազգէս հայոց»[509]։

Մայրաքաղաքում համարյա յուրաքանչյուր տարի տեղի ունեցած մեծ հրդեհների մասին, աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ հիշատակություններ։ Հատկապես Աբդուլ Համիդ I-ի ժամանակաշրջանը բնութագրվում է հաճախակի կրկնվող ու ամեն ինչ մոխիրի վերածող հրդեհներով[510]։

Ուշագրավ է 1720 թ. Մ. Մինյոյի՝ Կ. Պոլսի հրդեհի մասին թողած նկարագրությունը, որը լույս է սփռում նման պահերին քրիստոնյա հպատակների ծանր վիճակի մասին։ «Հրդեհը բռնկվեց հրեաների թաղամասից։ Մի անիմաստ ու նվաստացուցիչ օրենքով, արգելված է ինչպես քրիստոնյաներին, այնպես էլ հրեաներին օգնություն ցույց տալ այն տներին, ուր նրանք չեն ապրում։ Իսկ այն մարդիկ, որոնք նշանակված են կրակը մարելու համար, գործում էին խիստ դանդաղ, որովհետև ասում էին նրանք, այրվում են միայն գյավուրների տներն ու ինչքերը... Այս դժբախտությունը մեծ թվով արհեստավորների, առևտրականների և նույնիսկ մեծահարուստների վերին աստիճանի

506 Ղ. Ինճիճյան, էջ 99։

507 Նույն տեղում, էջ 196։

508 Մուրմար, էջ 157։

509 Ղ. Ինճիճյան, էջ 214։

510 *J. H. Danişmend*, c. IV, s. 62.

թշվառության գիրկը նետեց։ Ժողովուրդը մի քանի օր շարունակ պաշարեց սարայը (պալատը) օգնություն հայցելով սուլթանից, օգնություն, որը դարձել էր անհրաժեշտություն այսքան դժբախտների վիճակը բարվոքելու համար, սակայն Ահմեդը, հանգիստ էր իր հարեմի խորքում, հրճվում էր ոսկով լի վազերի տեսքով, որն ամեն օր բազմապատկվում էր...»[511]։

Մարքիզ դե Վիլնյովը իր կառավարությանը հղած զեկուցագրում նշում է, որ հրդեհների դեպքում մեծապես օգտվում էին ենիչերիները՝ դիմելով կողոպուտների։ Չէր բացառված, որ հենց նրանք էին քաղաքը հրդեհում։ «Երբեմն էլ,— գրում էր ֆրանսիացի դեսպանը,— ահռելի հրդեհներ էին ծագում առանց պատճառը իմանալու։ Կրակը միանգամից ոչնչացնում էր հինգից մինչև վեց հազար տնից բաղկացած մի ամբողջ թաղամաս։ Հրդեհի հետևանքով առաջացած խուճապից օգտվում էին ենիչերիները և կողոպտում ամեն ինչ»[512]։

* * *

XVI դարում և XVII դարի առաջին երեսնամյակում Հայաստանի տարածքի վրա մղված թուրք-պարսկական անվերջ պատերազմները մեծ վնաս էին պատճառել քաղաքային կյանքին, հետևաբար և արհեստագործությանը։ Թուրքական տիրապետության հաստատումից հետո գյուղական ու քաղաքային բնակչության բացարձակ կողոպուտը հարկերի ու բռնությունների միջոցով ծանր հարված հասցրեց դեռևս նախորդ դարերում թուլացած Արևմտյան Հայաստանի տնտեսությանը։ Հատկապես դա նկատելի էր Հայաստանի հարավ ու հարավ-արևմտյան մասերում, ուր XVI—XVII դարերում տիրում էին կիսաֆեոդալական, կիսանահապետական հարաբերություններ։ Հայաստանի այս մասերում առավելապես զարգացած էր գյուղատնտեսությունը, քաղաքներն ու քաղաքային կյանքը աննշան դեր էին կատարում։ «Այս վայրերում (Խլաթ, Արճեշ, Խնուս, Բիթլիս և այլն),— գրում էր դեռևս XV դարի վերջի Ջ. Բարբարոն,— ես առանձնապես ոչինչ չտեսա, բացառությամբ արտադրվող վուշե գործվածքների... արտադրում են նաև շատ գորգեր և մի քիչ էլ մետաքսյա (գործվածքներ)։ Նրանց մոտ առատ է միսը (հատկապես ոչխարի), գինին ու մրգերը, որոնք արտահանում

511 *M. Mignot*, p. 244.

512 *A. Vandal*, p. 167.

են Սև ծովի ափն ու շրջակա քաղաքները»[513]։ Օսմանյան տիրապետությունը ոչնչով չնպաստեց Հայաստանի այս մասերի զարգացմանը։ Քաղաքների մի զգալի մասի արհեստավորները քաղաքային ազգաբնակչության պահանջները բավարարելու հետ մեկտեղ, հիմնականում սպասարկում էին գյուղատնտեսությանը։ Քաղաքների ու քաղաքատիպ ավանների զգալի մասի տները հողածածկ էին ու իրենցից ներկայացնում էին մի տխուր պատկեր։ «Խնուսում,— գրում է Էվ. Չելեբին,— բոլոր տները հողով էին ծածկված, կղմինդրով տներ չկային»[514]։ «Բայբուրդում մոտ 1000 հողածածկ տներ կան. քաղաքը 19 իսլամ և 7 հայկական թաղեր ունի»[515]։

Արտադրողական ուժերի հետագա վերելք ու դրա հետ միաժամանակ առևտրական հարաբերությունների որոշ զարգացում ապրեցին միայն մի շարք վաճառաշահ կենտրոններ։ Խոսքը վերաբերում է նախ և առաջ այնպիսի քաղաքների, ինչպիսիք են՝ Էրզրումը, Երզնկան, Թոխատը և այլն։ Դա պիտի բացատրել մասամբ նրանով, որ այս քաղաքները հիմնականում գտնվում էին ավերիչ պատերազմների ոլորտից դուրս և տարանցիկ առևտրի մեծ մայրուղիների վրա։ Մյուս կողմից դուրս և տարանցիկ առևտրի մեծ մայրուղիների վրա։ Մյուս կողմից էլ, հանրահայտ է հայերի դերը Փոքր Ասիայի արհեստների զարգացման գործում։ Հայտնի է, որ դեռևս սելջուկների ժամանակ «Հայերի ձեռքին էր գտնվում մետաղամշակությունը, այնքան որքան Հայաստանում հնուց ի վեր մշակում էին մետաղը, և որ «ընդհանրապես տեղական արդյունագործության մեջ մեծ դեր էին խաղում հայերը»[516]։

Հենց այս պատճառով էլ, հայ և օտար աղբյուրների վկայությամբ, սկսած դեռևս Բայազեդ II-ից, թուրք ղեկավարող շրջանները պարբերաբար հայ արհեստավորներին Արևմտյան Հայաստանի զանազան մասերից բռնի բշել են դեպի Ստամբուլ[517]։ Էվլիա Չելեբին մինչև իսկ

513 Հովհ. Հակոբյան, *Ուղեգրություններ*, հ. Ա, էջ 197—198։

514 *Evliya Çelebi*, c. II, s. 333—335.

515 Նույն տեղում։

516 *В. А. Гордлевский*, Государство сельджуков Малой Азии, с. 103.

517 *J. B. Çark*, Türk devleti hizmetinde Ermeniler, Istanbul, 1953, s. 11—12. (այսուհետև՝ *J. Çark*). Դեռ Բայազեդ II-ը կ. Պոլսի ասիական ափում Գյուղելհիսարի բերդի կառուցման համար Փոքր Ասիայից արհեստավորներին բռնի տարավ Ստամբուլ (տե՛ս *В. Чемерзин*, История Турции, т. I, СПб., 1878, с. 113). 1473 թ. Դերջանում՝ Ուզուն Հասանին հաղթելուց հետո սուլթան Մեհմեդ II. Ֆաթիհը Էրզրումի, Երզնկայի, Բաբերդի, Դիվրիկի, Սեբաստիայի, Դիարբեքիրի և այլ վայրերի հայ արհեստավորներին հավաքեց ու բռնությամբ տեղափոխեց Ստամբուլ։ Հետագայում՝

նշում է Ստամբուլի այն թաղամասերի անունները, ուր բնակվել էին Արևմտյան Հայաստանից ու Փոքր Ասիայից բռնագաղթած հայ արհեստավորները։

XVI—XVII դարերում Արևմտյան Հայաստանի խոշոր քաղաքները վերածվել էին ռազմական ամրոցների ու քաղաքացիական վարչության կենտրոնների։ Արհեստագործական արտադրությունը, որ կարգավորվում ու ղեկավարվում էր պետության կողմից, պետք է նախ և առաջ բավարարեր բանակի, պալատի ու ֆեոդալների պահանջները։ Խոսելով Էրզրումի մասին, Էվ. Չելեբին նկատում է, որ սուլթանական կառավարությունը «...հատուկ ուշադրության առարկա է դարձրել այս բերդը և այնտեղ անհաշիվ ռազմամթերք է կենտրոնացրել և 6 վաշտի աղաներ է ավելացրել» և որ այնտեղ ներկայումս «2500 կուլ (ենիչերի) և բերդապահ և 12 աղաներ կան։ Միջնաբերդում ցորենի ամբարներ, 180 հատ թնդանոթ կա»[518]։

Խոշոր քաղաքներն ունեին իրենց բեդեստենները[519], քարվանսարաները, ուր իրացվում էին ոչ միայն արտաքին աշխարհից բերված ապրանքները, այլև տեղական արդյունագործության իրերը։ Մեծամ մասամբ, ինչպես մայրաքաղաքում՝ Կ. Պոլսում, այնպես էլ Արևմտյան Հայաստանի քաղաքներում, արհեստագործը միաժամանակ իր ապրանքի վաճառողն էր։ Քարվանսարաները սովորաբար լինում էին երկու տեսակ՝ առաջինը նշանակված էր ուղևորների ու ուխտագնացների, երկրորդը՝ վաճառականների համար։ Յուրաքանչյուր քարվանսարա տրվում էր կամ միևնույն երկրի բնակիչներին, կամ միևնույն ապրանքներ վաճառողներին։ Եթե որևէ մեկը ցանկանար ձեռք բերել հընդկական գործվածքեղեն, մահուդ, գորգեր, ապա պետք է գնար հատուկ

1479, 1516, 1534 թ. տեղի ունեցան հայ արհեստավորների նոր բռնի տեղահանումներ՝ մայրաքաղաքում վերարնակեցնելու համար։ 1534 թ. Վանից Կ. Պոլիս արտաքսվածների մեջ էր XVI դարի Կ. Պոլսի անվանի ոսկերիչներ՝ Բաբա Ջերոն Ղազազյանն ու Գասպարը (այդ մասին տե՛ս Y. Çark, s. 11—12)։ Հաճախ հայ «հյուսներ», «քարգործներ» անվան տակ դեպի Կ. Պոլիս ու այլ վայրեր էին արտաքսվում հայ ճարտարապետները՝ սուլթանական պալատներ կառուցելու համար (տե՛ս Ա. Ալպոյանյան, Պատմություն հայ գաղթականության, հ. Գ, մասն Ա, Կահիրե, 1961, էջ 256)։

518 Evliya Çelebi, s. II, s. 209.

519 Բեդեստեն էր կոչվում մեծ ծածկված շուկան, ուր սովորաբար հերթականությամբ շարված էին լինում միատեսակ ապրանքներով առևտուր անող վաճառականները։

քարվանսարա[520], ինչ վերաբերում է բեդեստեններին, ապա դրանք յուրահատուկ մի քաղաք էին քաղաքի մեջ։ Խոշոր քաղաքների բեդեստեններում կարելի էր գտնել ցանկացածը, ինչպես տեղական արհեստագործական արտադրության, այնպես էլ ներմուծված ապրանքներ[521]։

Արհեստագործական արտադրության ամենախոշոր կենտրոնը Թուրքիայում XVI—XVII դարերում Ստամբուլն էր, ուր արհեստավորների զգալի մասը հայեր ու հույներ էին։ Ստամբուլում բնակչության սննդի ու կենցաղային իրերի, ինչպես և արհեստավորների արտադրական գործիքների արտադրության համարյա բոլոր պահանջները բավարարվում էին տեղական արհեստագործական արտադրությամբ։

Աղբյուրների տվյալներից երևում է, որ Արևմտյան Հայաստանում առավելապես զարգացած էին արհեստագործության հետևյալ ճյուղերը՝ մետաղամշակման հետ կապված արհեստները, տեքստիլ արդյունագործությունը, կաշվի արտադրության հետ կապված արհեստները, գորգերի արտադրությունը, բրուտագործությունը, շինարարական արհեստները[522]։

520 J. Chardin, t. II, Paris, 1811, p. 47.

521 Այսպես, խոսելով Երզնկայի մասին, Էվ. Չելեբին վկայում է, որ «...քաղաքում քարակերտ փոքրիկ բեդեստեն կա, ուր ամեն տեսակ թանկարժեք ապրանքներ են վաճառվում։ Շուկայում 50—100 փոքր խանութներ կան» (Evliya Çelebi, c. III s. 203). «Սեբաստիայում,— մի ուրիշ տեղ գրում է թուրք ճանապարհորդը,— ...Ուլու-Ջամիի մոտ բարեշեն և հարուստ բեդեստեն կա, ուր մոտ հազար խանութներ կան» (նույն տեղում, էջ 206)։

522 XVI—XVIII դարերի մաս ժամանակագրություններում հանդիպում ենք արհեստագործական բազմաթիվ ապրանքների անունների. գործվածքեղեններից՝ աթլաս, ալաջա, շալ, ապրեշում, խալիչա, ծիրանի, կապերտ, զումաշ, շալ, գոտի, ուղտի ծածկույթ, քթան (քեթեն), հագուստ ու կոշիկ, գդակ, խալաթ, շուրջառ, չուխա, սոլ, տրեխ, փիլոն, քյուրք (մուշտակ), ֆերեճե և այլն, արհեստներից՝ դարբին, խզար, խզող, հացագործ, սահաթսազ, զարդերից՝ մատանի, մերճան, պոնճուխ, թանկագին քարերից՝ ալմաս, յաղութ, զմրուխտ, ջավահիր և այլն (տե՛ս «Մաս ժամանակագրություններ», հ. 1, էջ 449 և այլն)։ Անհրաժեշտ է նշել, որ XVI—XVII դարերի հայկական աղբյուրները խիստ ժլատ են հայ արհեստագործների մասին հաղորդած տեղեկություններում, ուստի և դրանով բավականին դժվարացնում են ուսումնասիրողի վիճակը։ Եթե Երեմիա Չելեբու մոտ հիշատակվում են Կ. Պոլսի հայ արհեստագործության որոշ ճյուղերի մասին նման ակնարկներ համարյա բացակայում են։ Համաձայն Երեմիա Չելեբու, Կ. Պոլսում հայերը առավելապես զբաղվում էին հացագործությամբ՝

Վարպետին հացածախից
ի հայոց ազգէս ամենայն։

Խոսելով Վանի զարգացած արհեստագործության մասին, Էվ. Չելեբին գրում է. «(Այստեղ) շենքեր կառուցող այնպիսի վարպետ ճարտարապետներ կան, որոնց նմանը միայն Սակըզում (Հոդոսում) կգտնվի. դերձակները հիանալի ֆիրենգի (եվրոպական) հագուստներ են կարում»։ Կամախի մասին նա հիշատակում է. «Այս քաղաքի հայտնի արտադրանքներից մեկն էլ այնտեղ պատրաստվող նուրբ, սակայն ամուր վրանի կտորն է, որի նմանը չի կարելի գտնել և ոչ մի երկրում... ժողովրդի բերանում ասացվածք է դարձել՝ Կամախի կտորը, Երզնկայի ընկույզը, Բայբուրդի աղջիկը»[523]։ «Աշխարհում Տրապիզոնի ոսկերիչների նման կատարելագործված վարպետներ չկան։ Այնպիսի ձիասանձեր, բուրվառներ, վարդաջրի ամաններ, սրեր, խոհանոցի դանակներ են պատրաստում, որոնց նմանը այլ երկրներում չի ճարվում»[524]։ «Բիթլիսում պատրաստված «շեյխանի», «մեկրավի» և «զիարդին» անունով հայտնի սրերը նմանը չունեն և ոչ մի երկրում։ Դերձակները հիանալի վարպետներ են։ Խախաղորդարաններում և ներկատներում դեղին, վարդագույն, երկնագույն, կանաչ, մանիշակագույն և այլ բազմերանգ ընտիր կոշիկներ են պատրաստում։ Այստեղ այցելողները դրանք գնում են նվերներ անելու համար։ Այստեղ (արտադրվող) կաշիները արտահանվում են մինչև Ֆրանկիստան (Եվրոպա— Մ. Ղ.) ու այնտեղ բարձր են գնահատվում»[525]։

Արևմտյան Հայաստանում բացի արհեստագործական արտադրությունից որոշ տեղ ուներ նաև արդյունահանությունը։ Երկրի ընդերքը հարուստ է եղել օգտակար հանածոներով։ Հատկապես մեծ նշանակություն ուներ Գյումուշխանեի արծաթի հանքերը։ Կամախի, Կաղզվանի ու այլ վայրերի աղահանքերը նկարագրելուց հետո, Գյումյուշխանեի արծաթի հանքերի մասին Էվ. Չելեբին գրում է. «...այստեղ գտնված արծաթի հանքերը ոչ մի երկրում չկան... Բնակիչները ամբողջությամբ ազատված են հարկերից և պարտավոր են արծաթի հանքերը մշակել։ ...Ունի մոտ 70 արծաթի հանքեր, որոնց մի մասը շահագործվում է ու մի մասն էլ անգործության է մատնված»[526]։ Ի միջի այլոց ոչ միայն այստեղ՝ Գյումյուշխանեում, այլև այլ հանքավայրեր ծայրահեղորեն հետամնաց թուրքական ավատատիրական հարաբերությունների պայմաններում չէին շահագործվում։ «(Կաղզվանի) երկու տեղում,— գրում է Էվ. Չելեբին,— ոսկու և արծաթի հանքեր կան, սակայն քանի որ ծախսը եկամտից շատ է, ուստի առայժմ չեն շահագործվում»[527]։

Հանքային հարստությունները մեծ մասամբ պատկանում էր պետությանը, որոնք տրվում էին կամ կապալառուներին (մյուլթեզիմ) և կամ դրանք կառավարվում էին պետության հատուկ հավատարմատարների՝ էմինների կողմից։ Ինչպես կապալառուները, այնպես էլ էմինները պարտավոր էին յուրաքանչյուր տարի պետությանը տալ որոշակի քանակությամբ հանքանյութ, որոշակի չափով։ Նախատեսված քանակից ավելի արդյունահանված հանքանյութը պատկանում էր իրենց։ Ուստի և կապալառուներն ու էմինները դաժանորեն շահագործում էին հանքում աշխատող, այսպես կոչված, ռանչպարներին։

XVIII դարում Արևմտյան Հայաստանի քաղաքների մեծ մասը անկում էր ապրում։ Կենտրոնական պետության թուլացումը, անջատողական տրամադրությունների դրսևորման հետևանքով, քրդական դերեբեյությունների առաջացումը ու քաղաքական անապահովությունը մեծապես հարվածել էին առևտրին ու արհեստագործությանը։ Աղբյուրների վկայությամբ, Արևմտյան Հայաստանի այնպիսի քաղաքներ, ինչպիսիք էին Բիթլիսը, Մուշը, Խլաթը, Մանազկերտը, Բայազետը և նույնիսկ որոշ առումով Վանը կորցրել էին իրենց երբեմնի նշանակությունը ու վերածվել փաստորեն սոսկ գյուղաքաղաքների. այս վայրերի արհեստագործությունը հիմնականում ծառայում էր գյուղերի արհեստագործությունը հիմնականում ծառայում էր գյուղատնտեսությանը։ Առևտրի ու արհեստագործության զարգացման տեսակետից բացառություն էին կազմում, ինչպես արդեն նշվեց, Արևմտ-

---

Երեմիա Չելեբին հիշատակում է նաև կղմինդրագործ հայ արհեստավորներին՝

Անցանինք ըզշինականս
որ ըզկղմինդր ատ շինել փութան։

«Պատմութիւն Ստամպոլայի» հեղինակը հիշատակում է նաև մի շարք այլ արհեստներ, որոնցով զբաղվում էին հայերը։ Էվ. Չելեբին իր «Ուղեգրության» առաջին հատորում, որը նվիրված է Կ. Գոլսի կյանքին, նշում է հայ կղմինդրագործների (քիրեմիթճի), բեռնակիրների, իսարարների (բաղանաչի), ականահետների (լաղըմջի), փորագրիչների (քալեմքեար), երաժիշտների մասին (այդ մասին տե՛ս Հ. Սիրունի, էջ 492—498)։

523 *Evliya Çelebi*, c. II, s. 345.

524 Նույն տեղում, էջ 91։

525 Նույն տեղում, c. IV, s. 120—121.

526 Նույն տեղում, c. III, s 336.

527 Նույն տեղում, c. II, s. 334.

յան Հայաստանի այնպիսի վաճառաշահ կենտրոններ, ինչպիսիք են՝ Կարինը, Թոխատը, Ամասիան, Սեբաստիան, Երզնկան և այլն։

Ամենազարգացած արհեստագործության ճյուղը մնում էր, ինչպես և նախորդ դարերում, մետաղամշակությունը, որի զարգացման համար Արևմտյան Հայաստանում, ինչպես և ամբողջ Թուրքիայում կային լուրջ նախադրյալներ՝ հումքի, հանքային հարստությունների (պղինձ, երկաթ, ոսկի, արծաթ և այլն) առատությունը[528], դարերի ավանդույթ ունեցող հմուտ արհեստագործության առկայությունը, դեռևս եվրոպական մետաղամշակման արտադրանքի թույլ թափանցումը Թուրքիայի խորքերը և այլն։ Հայտնի հանքերից, XVIII դարում Թուրքիայի անկման պայմաններում, միայն քչերն էին շահագործվում։ Ղ. Ինճիճյանը գործող հանքերից հիշատակում է Դիարբեքիրի նահանգի Արղանա-Մադենի և Տրապիզոնի նահանգի Գյումյուշխանեի հանքերի մասին։ Առաջինի մասին, նա գրում է. «Ի լերինս իւր ունի հանքս արծաթոյ, պղնձոյ, և մանաւանդ ոսկւոյ 3 ժամու հեռի յԱրղնոյ և իբր չորեքօրեայ հեռի ի հանքաց կապանին. են անդէն 10 բովք (օճախք) վասն արծաթոյ, և 15 վասն արծաթոյ։ Եթէ սաստիկ աշխատեսցին, բերէ օր ըստ օրէ 15 կամ 20 օգգա արծաթ ոսկեխառն, բայց ոչ նուազնափ մատանէ ի գանձն արքունի»[529]։

Հանքերի թերի շահագործումը հետևանք էր Թուրքիայի ծայրահեղ հետամնացության ու քաղաքական հանգամանքների, որի մասին է ակնարկում Ղ. Ինճիճյանը[530]։ Նրա մոտ մատնանշված է նաև Գյումյուշխանեում աշխատող վարձվորների շահագործման եղանակներն ու նրանց վիճակի նկարագրությունը[531]։ Մետաղագործությունը զարգացած էր մի շարք քաղաքներում՝ Էրզրումում, Վանում, Թոխատում, Երզնկայում, Սեբաստիայում և այլուր։ Մետաղագործության մեջ ամենից զարգացածը պղնձագործությունն էր, որի մեծ հռչակ ունեցող կենտրոնը Թոխատն էր. «Ի կողմանէ արուեստաւորաց,— կարդում ենք Ղ. Ինճիճյանի մոտ,— մարթ է կոչել զԹոքաթ քաղաք պղնձագործաց կամ գազանճոց, որոնց գործ համբաւեալ է և ընտիր համարեալ քան զայլ ամենայն տեղեաց օսմանեան տէրութեան. յայն սակս պղնձի անօթք Թոքաթու՝ սեղանք, կրակարանք, կաթսայք և այլն, սփռին յԷրզրում, ի Կոստանդինուպօլիս, յԱմասիա և անտի ի Սամսուն և յայլ նահանգս»[532]։ Թոխատ քաղաքը և նրա հոծ արհեստավորությունը մեծապես տուժում են 1775 և 1792 թվականների մեծ հրդեհներից. «Ոչ սակաւ վնաս էր ի հրկիզութիւն որ եղև ի յՕգմեյտանին ի 1775 և հրդեհն մեծ ի 1792»[533]։

Մետաղամշակման հետ կապված արհեստները, և մասնավորապես պղնձագործությունը զարգացած էր նաև Երզնկայում, Սեբաստիայում։ Վանը մնում էր արվեստի աստիճանի հասած ոսկերչական արհեստի կենտրոնը։

Արևմտյան Հայաստանում զարգացած էին նաև կաշեգործության հետ կապված արհեստները։ Գործվածքեղենի արտադրության կենտրոններ էին համարվում Սեբաստիան և Թոխատը։ Վերջինիս մասին, Ղ. Ինճիճյանը գրում է, որ քաղաքում «բազում գտանին ևս երկաթագործք, դարբինք, ոստանայնկք, ջուլհակք, պասմաճիք և խաղաղորդք կամ թապագք և ներկարարք մորթոց, աստ և անդ առաքէ կարմիր կտաւ, պասմայ չիթ, պասմայ չէմպէր և պոզանի»[534]։

Տվյալ ժամանակաշրջանի աղբյուրներում հիշատակված են նաև այլ արհեստների ներկայացուցիչներ՝ հյուսներ, մսագործներ, ժամագործներ, հացագործներ, որմնադիրներ, պայտառներ, թաղիքագործներ, գորգագործներ և այլն։

XVI դարի վերջերից, կայսրության մեջ առևտրավաշխառուական հարաբերությունների զարգացումը իր ոլորտի մեջ ներգրավեց նաև արհեստագործական արտադրությունը։ Իրացման շուկան անցավ առևտրական կապիտալի ձեռքը, սակայն արհեստագործները ձգտում էին, առաջվա նման, իրենք իրացնեն սեփական արտադրանքը։ Սակայն

528 «Հայաստան ունի և բովս ոսկւոյ և արծաթոյ,— կարդում ենք Ղ. Ինճիճյանի մոտ,— մի՝ առ եզերբ գետոյն Եփրատայ ի Կապանմատէն, որ է առատագոյն քան զամենայն բովս ընդարձակ տէրութեան օսմանեանց. և երկրորդ՝ առ եզերբ Տիգրիսի ի յԱրղանա, ուր ելանէ և պղինձ, ունի և երկաթ ի Պարխար, ի Տիվիրիկի, ի Զնքուշ, ի Կեղի, ի Մուշ և ի Մոկս։ Պէսպէս տեսակս ընտիր քարանց, մանաւանդ ի Բաղէշ և մագնետիս քար ի Տիվիրիկի, և երկայնաքար յԱլճավազ և ի Մուշ. նաթ և ծծումբ բազում ի Բաղէշ, սպիտակ նաթ ի Սղերտ, Կիւհերշիէ, ի Թորդում և յԵզընկա, բորակ զոր ժողովեն ի ջուրց Վանայ ծովուն. պաղեղ այսինքն՝ շապ, ի Շապինգարահիսար. այլ առատ քան զամենէսին ունի աղէհանքս պատուականս ի Թորդում, յԱշխալա, ի Լէզկի, ի Խնուս, ի Կամախ, ի Կաղզուան, ի Ճանիք գիւղ Վանայ, ի Տիարպեքիր և այլն, (Ղ. Ինճիճյան, էջ 44—45)։

529 Ղ. Ինճիճյան, էջ 241։

530 Նույն տեղում, էջ 398։

531 Նույն տեղում, էջ 399։

532 Նույն տեղում, էջ 290։

533 Նույն տեղում, էջ 291։

534 Նույն տեղում, էջ 290։

դա չէր գլխավորը. կայսրության մեջ առևտրական կապիտալի գործունեության ոլորտի ընդլայնման ու հետևաբար արտադրության և վերարտադրության պրոցեսի հետագա ընդլայնմանը խանգարում էին օսմանյան ռազմաավատատիրական կարգերը։ Նման պայմաններում երբեք առևտրավաշխառուական հարաբերությունների զարգացումը չէր հասցնելու կապիտալիստական հարաբերությունների ձևավորմանը։ Կ. Մարքսը իր ժամանակին նշում էր, որ վաշխառության ու առևտրի միջոցով, առևտրական կապիտալի վերածմանը արդյունաբերական կապիտալի խանգարում էին գերիշխող ավատատիրական հարաբերությունները գյուղում և համքյարական կազմակերպությունը՝ քաղաքում[535]։

Պետությունը ցեխային (համքյարական) կազմակերպությունների միջոցով իր ձեռքն էր վերցրել արհեստակցական արտադրության ղեկավարությունը։ Ահմեդ Ռեֆիկի հրատարակած վավերագրերից երևում է, որ ձևականորեն ազատ ճանաչված արհեստագործը փաստորեն ամբողջովին կաշկանդված է եղել։ Համաձայն վավերագրերից մեկի, արհեստագործին, հակառակ իր կամքի, բռնությամբ պետք է ուղարկեին նախկին աշխատավայրը, հակառակ դեպքում նա կենթարկվեր համապատասխան պատժի[536]։

Համքյարական կազմակերպությունները գերազանցապես տնտեսական կազմակերպություններ էին, որոնք պիտի, նախ և առաջ, ապահովեին իրենց շարքերը ներգրավված արհեստագործների մասնագիտական շահագրգռությունները։ Համքյարություններին մոլեռանդ կրոնական շղարշով պարուրելը[537] մի միջոց էր միայն իսկական նպատակները քողարկելու համար։ Համքյարական տնտեսական կազմակերպությունները, նախ և առաջ, կոչված էին բոլոր միջոցներով պաշտպանելու տվյալ արհեստի մենաշնորհային իրավունքները, հետևաբար նաև շարքային անդամի շահագրգռությունները։

Պետության կողմից յուրաքանչյուր արհեստագործական արտադրանք հարկադրման էր ենթարկվում։ Պետությունը, նախ և առաջ, շահագրգռված էր, որ արհեստագործները ծառայեն բանակի պահանջներին։ Այդ նա էր, որ կարգավորում էր գները, հետևում էր արտադրության որակին, սահմանում էր խստագույն հսկողություն չափի ու կշռի վրա և այլն, և այլն։ Մրցակցության բացակայությունը Թուրքիայում քաղաքային տնտեսության ավատատիրական ղեկավարման ամենաբնորոշ կողմն էր։

Ամենայն հավանականությամբ, XVI—XVIII դարերում հայ արհեստավորները չեն ընդգրկվել Թուրքիայում գոյություն ունեցող համքյարությունների (ֆուտավվաթ) մեջ, ուր իշխում էր մուսուլմանական մոլեռանդությունը։ Իսկ եթե առանձին վայրերում հայերը մուսուլման արհեստավորների հետ ընդգրկված են եղել որևէ էսնաֆության մեջ, ապա ղեկավարությունը, համաձայն XVII դարի սուլթանական մի հրամանի, գտնվելիս է եղել բացառապես մուսուլմանների ձեռքում[538]։ Ասենք, որ հայ արհեստավորները ունեցել են էրզրումում մշակված իրենց կանոնադրությունը, որը կապված է եղել քրիստոնեական ավանդույթների ու ծեսերի կատարման հետ։

XVIII դարի երկրորդ կեսին, էսնաֆություններն ամբողջ ասիական Թուրքիայում կանգնել էին քայքայման եզրին ու կորցրել էին իրենց երբեմնի արհեստագործական արտադրությունը, առևտուրը կարգավորող դերը։ Սուլթանական կառավարությունն, ինչպես նաև էսնաֆության վերնախավը փորձեցին կանգնեցնել էսնաֆության քայքայման պրոցեսը, որի մասին վկայում է 1773 թ. Մուստաֆա III-ի հրատարակած ֆերմանը։ Այնտեղ ասված է, որ սուլթանը, ընդառաջելով էսնաֆական կազմակերպությունների ղեկավարների դիմումներին՝ էսնաֆական ավանդական կանոնադրության և իրավունքների վերականգնման ու նրանց խախտումների արգելման մասին, պահանջում է իշխանության բարձրագույն մարմիններից, ինչպես նաև կադիներից (շարիաթական դատավորներից) ձերբակալել և ծանր մարմնական պատժի ենթարկել ամեն տեսակի «գրգռիչներին և խռովարարներին», որոնք «պատճառ են հանդիսանում էսնաֆի մեջ անհամաձայնության, խռովության ու փորձում են չարանենգ գործունեությամբ լուծարքի ենթարկել դարերով ձևավորված էսնաֆի հնավանդ կարգն ու կանոնադրությունը»[539]։ Սուլթանական ֆերմանը չունեցավ և ոչ մի արդյունք։

Քաղաքային ազգաբնակչության թիվը XVIII դարում ոչ միայն չէր մեծանում, այլև ընդհակառակը գնալով պակասում էր։ Ղ. Ինճիճյանի

535 *К. Маркс*, Капитал, т. I, стр.775.

536 *Ahmet Refik*, Hicri on birinci asırda Istanbul hayatı, Istanbul, 1932, s. 36, № 69.

537 *Համքյարություններն ունեին իրենց կանոնադրությունը, այսպես կոչված, «ֆուտավվատնամեն» (այդ մասին տե՛ս Afet Inan*, Aperçu général..., p. 54—61).

538 *Ahmet Refik*, Hicri On birinci asırda Istanbul hayatı, s. 55, № 102.

539 *I. H. Uzunçarşılı*, c. IV, Ikis., s 527.

տվյալներով Արևմտյան Հայաստանի քաղաքները ազգային պատկանելիության առումով դարձել էին խայտաբղետ և ստացել էին կիսամահմեդական և կիսահայկական երանգ։ Քաղաքների մեծ մասում հայերն արդեն, անբարենպաստ պայմանների հետևանքով, կազմում էին փոքրամասնություն։ XVII դարում Տավերնիեյի ու այլոց վկայությամբ, պատկերը ճիշտ հակառակն էր՝ հայերը կազմում էին բնակչության բացարձակ մեծամասնությունը։ Այսուհանդերձ, XIX դարում, հատկապես կառավարության կողմից դերեբեյությունների վերացումից ու քիչ թե շատ քաղաքական անդորրը վերականգնելուց հետո, նկատվում է հայ ազգաբնակչության նկատելի աճ։ Մենք ոչ մի հիմք չունենք կասկածի տակ առնելու Ղ. Ինճիճյանի տվյալները, երբ աղբյուրներում բացակայում են վիճակագրական այլ տվյալներ։

Արևմտյան Հայաստանի ամենամարդաշատ քաղաքը՝ Կարինը, ուներ 100 հազար տուն բնակիչներ, որից միայն 10 հազարն էին հայեր։ «Բնակիչք Էրզիռումայ,— կարգում ենք Ղ. Ինճիճյանի մոտ,— ի ժամանակս Դահմասին առ զօրապետութեամբ Ահմէտ փաշային՝ (որ էր Պաղտատու վալի) ի համար արկեալ գտան **90.000 տուն տաճկաց**, և 10.000 տուն հայոց, այս հաշիւ ստուգ իմն է համարեալ առ Էրզիռումցիս, իսկ անտի և այսր քանզի թաղք տաճկաց բազմացան, և անդաստանք տու վալի) ի համար արկեալ գտան 90.000 տուն տաճկաց, և 10.000 տուն հայոց, յորոց չորս մասն են օտարականք, և մի մասն բնիկ քաղաքացիք հայք»[540]։

Այնպիսի մի վաճառաշահ կենտրոն, ինչպիսին էր Երզնկան, XVIII դարի վերջին ուներ ընդամենը 8000 տուն բնակչություն։ «Տարածութիւն քաղաքիս ընդարձակ, բայց բնակիչք ըստ համեմատութեան սորա սակաւք, իբր 8000 տունք»[541],— կարդում ենք դարձյալ Ղ. Ինճիճյանի մոտ։ Քաղաքը մեծապես տուժեց նաև, ինչպես արդեն նշվեց, երկու մեծ երկրաշարժերից։ Խոսելով Մանազկերտի մասին, Ղ. Ինճիճյանը բերում է հետևյալ հետաքրքիր և միաժամանակ բնորոշ տեղեկությունները. «Գլխաւոր քաղաք գաւառին պարսպապատ, յարևմուտս հարաւոյ Եփրատայ. իբրև միով ժամաւ հեռի ի նմանէ և 5 աւուրքք յԷրզիռումայ, առ գետակաւն որ կոչի յիւր անուն, ունի բերդ ամուր և աղբերակունս, շինուածք քաղաքիս են ի սևորակ քարանց, յառաջագոյն էին ի սմա տունք 6000, այլ այժմ մնացին տունք իբր 107, յորոց 7 կամ 8 տունք են հայոց, մնացեալքն քրդաց»[542]։ Բայազետում՝ «բնակիչք նորա տունք իբր 5000, որք ըստ մեծի մասին են քուրդք, և միայն իբրև 700 տունք են յազգէս հայոց», Կարս քաղաքի բնակչությունը՝ «...ըստ համեմատութեան ընդարձակութեան իւրոյ սակաւք, որք ըստ մեծի մասին են քուրդք, և մնացեալքն յազգէս հայոց»[543]։

Վասպուրականի կենտրոն Վանը ուներ 15.000 տուն բնակչություն, որից միայն երկու հազարն էին հայեր։ Վանի բնակիչ թուրքերը, գտնվելով Իրանի սահմանից ոչ հեռու, հիմնականում զբաղվում էին զինվորականությամբ, կոչվում էին վանկուլի ու ապրում հայերի հաշվին։ «Բնակիչք քաղաքին Վանայ,— գրում է Ղ. Ինճիճյանը,— են տունք իբր 15000 յորոց 2000 են հայոց, իսկ մնացեալքն տաճկաց, որք ըստ մեծի մասին գրեալք են ի զինուորութիւն յորդւոց յորդի, և կոչին ըստ տաճկաց գուլ, որոնց թիւն ըստ հին օրինաց պարտ է լինել 12 հազար, ամենքին թոշակաւոր զինուորք, որք առնուն ի թոշակ իւրեանց՝ այն է էօլեֆէ՝ զհարկս առեալս ի հայոց»[544]։

Բաղեշի բնակչությունը XVIII դարի վերջին կազմում էր «...տունք իբրև 5000, յորոց իբր 1500 տունք են յազգէս հայոց և 900 կամ 300 տունք եազուպի ասորւոց և սակաւ ինչ տունք նեստորականաց, զորս անդէն կոչեն նեստո, որք յառաջագոյն բազումք էին։ Տունք ի բաց թողեալք յասորւոց և ի հայոց, եղեն այժմ բնակարանք և տունք քրդաց»[545]։ Մուշ քաղաքն ուներ ութ հազար տուն բնակչություն, «...Ըստ մեծի մասին քուրդք, յառաջագոյն բազմութիւն էին ի սմա հայոց, այլ այժմ սակաւք մնացին՝ ի 5 թաղս որոշեալ, յորոց իւրաքանչիւր թաղք ունին մի մի քարաշէն եկեղեցի»[546]։

Արևմտյան Հայաստանի խոշոր քաղաքներից մեկի՝ Դիարբեքիրի բնակչությունը «... դրեթէ ընդ կիսոյ մասին տաճիկք և ընդ կիսոյ մասին քրիստոնեայք, ի մէջ քրիստոնէից բազմութիւն են ազգիս հայոց՝ կրկնապատիկ առաւել քան զայլ ամենայն ազգս քրիստոնէից»[547]։ Պատմական Փոքր Հայքի երկու խոշոր կենտրոնները՝ Սեբաստիան և Թոխատը ունեին 2 հազար, 2500 տուն հայեր։ «Զթիւ բնակչաց քա-

540 Ղ. Ինճիճյան. էջ 67։

541 Նույն տեղում, էջ 99։

542 Նույն տեղում, էջ 112։

543 Նույն տեղում, էջ 120։

544 Նույն տեղում, էջ 140։

545 Նույն տեղում, էջ 172։

546 Նույն տեղում, էջ 187։

547 Նույն տեղում, էջ 218։

զաքիս (Սեբաստիա— Մ. Զ.),— գրում է Ղ. Ինճիճյանը,— վերոգրեալ Յակոբ եպիսկոպոս ասաց. լինել իբրև 15 հազ. տուն, իսկ այժմ ասին լինել 10 հազ. յորոց իբրև 2000 տունք են ազգիս հայոց, իսկ մնացեալքն տաճկաց»[548]։ Իսկ Թոխատում՝ «...տունք իբր 16000, յորոց իբր 2500 են յազգէս հայոց, 300 ի յունաց, իսկ մնացեալքն տաճիկք»[549]։

Արևմտահայ քաղաքային ազգաբնակչության մի մասն, այսպիսով, թողել էր հայրենի աշխարհը և բնակություն հաստատել Եվրոպայի ու Ասիայի հայ գաղթավայրերում, ինչպես նաև Փոքր Ասիայի արևմտյան մասի և կայսրության մեջ մտնող արաբական երկրների քաղաքներում՝ Բրուսայում, Հալեպում, Բեյրութում, Դամասկոսում, Բաղդատում, Երուսաղեմում, Իզմիրում, Կուտինայում, Ուրֆայում, Մալաթիայում, Կեսարիայում և այլուր։ Մեծ թվով հայ բնակչություն կար Կիլիկիայում։ XVIII դ. արևմտահայ քաղաքային բնակչության հոծ զանգվածները կենտրոնացված էին Կ. Պոլսում և Զմյուռնիայում։ Ի հաշիվ արևմտահայ գավառների, հայ բնակչության թիվը մայրաքաղաքում այս դարում էլ գնալով մեծանում էր։ «Հայոց թիւն ի Կ. Պոլիս,— գրում է Հ. Գ. Մրմրյանը,— ամէն ատեն հազիւ 150.000-ն անցած է»[550]։

* * *

Ինչպիսի՞ն էր հայ համայնքների իրավական վիճակը Օսմանյան կայսրության մեջ։

«Ամենացածր բարբարոսական աստիճանում» գտնվող թուրք ֆեոդալների գերիշխանության տակ չկար կյանքի ու գույքի ապահովություն։ Զուրկ մարդկային ամենատարրական իրավունքներից, կրոնական կույր մոլեռանդության պայմաններում, հայ աշխատավորությունը ենթարկվում էր ամենադաժան հալածանքների ու անլուր տառապանքների։

Թուրք-պարսկական պատերազմների ժամանակ տասնյակ հազարավոր հայեր գերի էին ընկնում թուրքերի ձեռքը, որոնք տարբեր շուկաներում վաճառվում էին որպես ստրուկներ։ Սիմեոն Լեհացին նկարագրում է Ստամբուլի «Եսիր բազարում» («Ստրուկների շուկա») հայ գերիների վաճառահանման ծանր պատկերը. «Որք ծերք են և

548 Նույն տեղում, էջ 285։

549 Նույն տեղում, էջ 290։

550 Հ. Մրմրեան, Մասնական պատմութիւն հայ մեծատուններու..., էջ 49։

պառաւք նստել են։ Իսկ զաղջկունս և զմանկունս, զտղայս և զաղվորերես կանայս տէլլալնին առեալ ի ձեռս զնոսա՝ շուրջ ածէին և ծախէին որպես զձի և զջորի, և զայս ժողովեալ ի տեղի ինչ կամ ի մեյտանի՝ իբրև զոչխարս ի փարախի։ Իսկ գնողքն եկեալ բանային զերեսս և զծօցս կոյս աղջկանց և զամենայն մարմինս նոցա շոշափէին յոտաց մինչև ի գլուխ, զի մի փոս, խոց կամ այլ ինչ սպի վեր ունիցին։ Եւ նոքա լուռ ու անմռունչ կային, և զորս հաճէին՝ գնէին, և որոշեալ ի հօրէ, ի մօրէ կամ ի քուերաց և յեղբարաց բաժանեալ առեալ տանէին ի տուն»[551]։

Դարձյալ Սիմեոն Լեհացին, այսպես է նկարագրում հայ ժողովրդի իրավազուրկ վիճակն ու տառապանքը. «Եւ յայնմ ամի (1613 թ.), յորում ես էի Թօխաթ, ել հրաման շար, թէ եկեղեցիս և վանորայս մի վառեսցեն մոմեղեն ճրագ, այլ եղէ, և թէ ուրեք գտանէին՝ տուգանէին։ Եւ այսպիսի տառապանք և նեղութիւն էին ի ձեռս տաճկաց, վասն որոյ յոյժ աղքատ և չքաւոր են, զի միշտ զրկեն, զգվեն, տուգանեն, զրպարտեն և առաւել հարկս պահանջեն»[552]։ XVII դարի վերջում արտագրված մի ձեռագրի հիշատակարանում, հայ ժողովրդի ընդհանուր վիճակն այսպես է պատկերում գրիչը. «...այլազգիքն են կատաղէր, զմեզ ի խիստ և ի նեղ լծէր, որ ամէն օր զմահ ի բերան ենք արեր, թէ յերբ մեռանենք ի նոցանէ ազատենք»[553]։ Եվ, առհասարակ, օսմանցի ֆեոդալները քրիստոնյա հպատակներին, Մ. Ֆեբվրի խոսքերով ասած, «...նայում էին բացառապես որպես ստրուկների»[554]։ Նրանք ցանկանում էին, որ քրիստոնյա հպատակի արտաքինն իսկ խոսեր նրա ստրադաս վիճակի մասին։ Այսպես, 1588 թ. հայ, ինչպես և հրեա տղամարդկանց կարգադրվում է սպիտակ փավեղի փոխարեն կրել սև գդակ[555]։ Այս մասին Սեբաստիայում 1664 թ. արտագրված մի ձեռագրում կարդում ենք. «...զազգն քրիստոնէից տուլպատն, զմատանին, զապրիշումի գօտին, զգեղին մասն և զփափուճն, զդանակն եասախ արարին և ի սուգ պահեցին ի թուականութեան ՌՃԺԳ (1664) ամին ի քաղաքն Սեբաստիա»[556]։ 1672 թ. Բաղեշում արտագրված մի մաշտոցի հիշատակարանում այդ մասին ասվում է «Զի յայսմ ամի

551 «Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն», էջ 3։

552 Նույն տեղում, էջ 134։

553 Մատենադարան, Մագիստրոսի թղթպ. № 24, էջ 101։

554 M. Febvre, p. 18.

555 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 516։

556 Մատենադարան, Մագիստրոսի թղթպ. № 24, էջ 81։

եկն փաշայն ի Ստամբուլայ ի քաղաքն Բաղէշ և բազում վիշտ ու նեղութիւն հասոյց քրիստոնէից և արար զաղազայ, թէ քրիստոնեայ անուն ու դիցէ գօտի։ Եւ ամենեքեան ... ընկեցին զգօտիս իւրեանց և եդին քօլոզ, ոմն զալփախ և ոմն թաղիս, ոմն գլուխ ի բաց շրջէր (ի) վերայ երկրիս...»[557]։ Մի քիչ այլ էր պատկերը Իրանի տիրապետության տակ ընկած Արևելյան Հայաստանում։ Պիետրո դելլա Վալլեի վկայությամբ, այստեղ «քրիստոնյաները, ինչպես և այլք, կարող են ազատորեն կրել այն հագուստները, որոնք կրում են պարսիկները։ Նրանց թույլատրվում է կրել կանաչ գույնի (հագուստ), մի բան, որը խստագույնս արգելված է քրիստոնյաների համար Թուրքիայում»[558]։ Քրիստոնյա հպատակների վախը բռնակալներից այնքան մեծ էր, որ ոչ ոք չէր հանդգնում հարուստ երևալ կամ շքեղ մի տուն կառուցել[559]։

Արևմտյան Հայաստանի քաղաքներում քրիստոնյաներին թույլ էր տրվում բնակվել միայն հատուկ թաղամասերում։ Նրանց արգելված էր կառուցել նոր եկեղեցի կամ նորոգել հները, իսկ կառուցվածներն էլ գրավվում էին մզկիթների վերածելու համար։ Անշուշտ, աղբյուրների հաղորդած բազմաթիվ վկայություններից[560] երևում է, որ օսմանյան բռնակալները, դիտելով եկեղեցիների վերանորոգման հարցը որպես կարևորագույն եկամուտներից մեկը, հաճախ թույլ են տվել կատարել վերանորոգումներ միայն մեծ կաշառք ստանալուց հետո։ Այդ հանգամանքը նկատել է Պ. դելլա Վալլեն։ Նա գրում է. «(Թուրքիայում) եթե մի հին հայկական եկեղեցի ավերվի, ոչ ոք չի կարող հույս ունենալ կառուցելու մի ուրիշը, անգամ վերանորոգել այն կամ մի հատ քար դնել շենքի վրա, եթե նախօրոք դրամի միջոցով (կառավարությունից) թույլտվություն ձեռք չբերվի»[561]։

Եկեղեցիների վերակառուցման իրավունքի մասին ահա՛ թե ինչ է գրում Ահմետ Ռեֆիկը։ «Ստամբուլի եկեղեցիների մասին գոյություն

557 Մատենադարան, ձեռ. № 4904, էջ 284բ։

558 *Della Vallé*, t. II, Rouen, 1745, p. 172. «Թուրքերի մոտ,— գրում է Ռայկոտը,— գլխապանից են ճանաչում, թե մարդիկ որ կրոնին կամ ինչ դիրքի են պատկանում, որից իմանալու են, թե ում հետ կարելի է թշնամանալ անպատիժ կերպով» (Հ. Ա. Անասյան, «XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում», էջ 33)։

559 *M. Febvre*, p. 166.

560 Այդ մասին տե՛ս Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 465, 521, 528, 547—548, նաև՝ Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, հ. 2, էջ 396—398 և այլն։

561 *Della Vallé*, t. II, p. 228.

ունեցող օրենքները շատ խիստ էին։ Կայսրության կողմից Կ. Պոլսի նվաճումից հետո մի եկեղեցի նորոգելու համար պիտի դիմում կատարվեր կայսերական դիվանին, որն ուղարկում էր եկեղեցու վայրը իր ավագ ճարտարապետներին ու վարպետներին, թաղի մուսուլման ծերակույտը հավաքվում էր, և նա էր, որ հաստատելու էր, թե նախապես այնտեղ եկեղեցի եղել է, թե ոչ։ Վկաների անուններն արձանագրելուց հետո սկսում էին քննարկել վերակառուցման ենթակա եկեղեցին... Նորոգումը ավարտելուց հետո, անհրաժեշտ էր նորից այդ մասին հաղորդել դիվանին։ Եկեղեցին դարձյալ ենթարկվում էր չափումների ու ավարտագիր տրվում էր միայն այն ժամանակ, երբ հաստատվեր, որ (եկեղեցու) նորոգումը կատարված է նախագծման համապատասխան, առանց մի որևէ սանտիմետր ավելացնելու»[562]։

Եթե եկեղեցին մի փոքր բարձր լիներ, քան շրջակայքի տները, ապա այդ եկեղեցին ենթակա էր քանդման։ 1565 թ. հոկտեմբերի 3-ի (973 թ. ռեբիուլ էվվել) սուլթան Սուլեյմանի՝ Ստամբուլի կադիին ուղղած մի հրովարտակից իմանում ենք, որ Կ. Պոլսի եկեղեցիներից մեկը շրջակայքից բարձր լինելու պատճառով ենթակա է քանդման. հրովարտակը նախազգուշացնում է, որ հետ այսու քյաֆիրները (անհավատները) նման երևույթ թույլ չտան[563]։ 1565 թ. հունիսի 2-ի (972 թ. զիլքադե 3) թվակիր սուլթան Սելիմ II-ի մի հրովարտակից իմանում ենք, որ մուսուլմանների բողոքի հիման վրա քանդվում է Կ. Պոլսի Սուլու Մանաստրի հայկական եկեղեցու կողքին կառուցված շինությունը[564]։

Պատահում էին դեպքեր, երբ կառավարության ներկայացուցիչներից թույլտվություն ստանալուց ու եկեղեցին վերանորոգելուց հետո, այն վերածում էին մզկիթի։ 1647 թ. մեծահարուստ Սանոս Չելեբուն հաջողվում է թույլտվություն ստանալ Էրզրումի սբ. Ստեփանոս եկեղեցու վերանորոգման համար։ Սակայն մի քանի տարի անց, եկեղեցին վեր է ածվում մզկիթի[565]։

1592 թ. մի հիշատակարանում կարդում ենք. «Դաժանացեալ կատաղեցան այլազգիքն. և անհնարին վիշտս և տառապանս հասուցին ազգիս մերոյ ի Սեբաստիայ քաղաքիս. և որ ողբալին է եկեղեցի

562 *Ahmed Refik*, On altıncı asırda Istanbul hayatı, Istanbul, 1935, s. 34.

563 Նույն տեղում։

564 Նույն տեղում, էջ 46—47։

565 Մատենադարան, Մագիստրոսի թղթ. № 34, էջ 92։

սուրբ Լուսաւորիչն մերոյ՝ առին ի ձեռաց մերոց և արարին իւրեանց մզկիթ»[566]։ 1659 թ. գրիչներից մեկը հայտնում է, որ Հայրենի քաղաքում ու շրջակա գավառներում եկեղեցիներից շատերը վեր են ածվել մզկիթների ու բաղնիքների։ Նա գրում է.

Կարնո քաղաքս պատուական
Որ մայր Յիսուսի է կառուցման
Յեկեղեցիք բազում որ կան
Մեջ քաղաքս թիւ յորելեան,
Տաճկունքն առին զամենեսեան,
Արին մզկիթ և զորն համամ[567]։

Հիշատակարաններում բազմաթիվ են վկայությունները եկեղեցիների քանդման ու ավերման մասին։ Բերենք մի երկու օրինակ։ 1577 թ. մի գանձարանի հիշատակարանում, գրված Վանում, կարդում ենք, որ ձեռագիրն ավարտվել է «ի թագաւորութեան տաճկաց սուլթան Մուրատին և ի տեղապահութեան Շամիրամայկերտին՝ Ահմատ փաշային, որ յայսմ (ՌԻԶ) ամի բազում եկեղեցիս քակեաց վասն մեղաց մերոց»[568]։ «...ի թուականին հայոց ՌԿԳ (1614),— կարդում ենք մի այլ ձեռագրում,— ի դառն և ի նեղ ժամանակիս, որ այլազգաց ենք ի ծառայութիւն։ Ոհ չդառնացեալ աւուրքս որ հասին ի վերայ մեր, զի մօլեքն և սողթեքն յարեան ի վերայ քրիստոնէիցն, և քակեցին զերեք խորան և խաւար ածին զեղկելի գրչիս»[569]։

Քրիստոնյա հպատակն իրավունք չուներ վկա լինելու դատարանում, ուր քննվում էր մահմեդականների գործը։ Եթե որևէ թուրք հարձակվեր քրիստոնյայի վրա, վերջինս իրավունք չուներ դիմելու ինքնապաշտպանության[570], հակառակ դեպքում խստագույնս կպատժվեր, կհավատափոխվեր և այլն[571]։ Իսկ դատարաններում էլ, երբ քննվում էր քրիստոնյայի գործը, դատավորները «...դիմում էին նրանց խոզ, շուն, գյավուր (անհավատ) բառերով»[572]։

Օսմանյան կայսրության մեջ հաճախակի էին հպատակ ժողովուրդների բռնի մահմեդականացման դեպքերը, որը հայերը անվանում էին տաճկացում։ «Տաճիկք մեծ վարձք համարելով զքրիստոնէից ուրանալ զՔրիստոս և ի մահմեդի օրենս և ի կրօնս դառնալ,— գրում է Գրիգոր Դարանաղցին,— զխաչ և զեկեղեցի բեկանել և խորտակել և հաւատացեալք որ ոչ հաւատքն Մահմեդն և չար կրօնից նորին ազգիազգի տանջանօք չարչարեն և հրով այրեն և համարեն պաշտօն աստուծոյ մատուցանել»[573]։ Թուրքերը հայերին հավատափոխ էին դարձնում կամ բռնությամբ և կամ թե նրանց գայթակղեցնելով՝ տնտեսական ու քաղաքական արտոնություններով։ Համաձայն շարիաթի, եթե որևէ մի քրիստոնյա ընդուներ իսլամի հավատը, ապա նա միանգամից տեր կդառնար իր բոլոր ազգակիցների ունեցվածքին։ «Որտեղից է.— հարցնում է զարմացած մի թուրք ծանոթ մի հայի,— որ դուք՝ քրիստոնյաներդ, աճում եք, իսկ մենք, ընդհակառակը, քչանում, փոխանակ բազմանալու։ Այնինչ թվում է, թե մենք ձեզ հետ համեմատած մրջյունի նման պիտի բազմանայինք հետևյալ երկու պատճառով. նախ՝ շատ կանայք ունենալու պատճառով, որը մեզ թույլ է տրված, և, երկրորդ՝ այն պատճառով, որ մենք ամեն օր մեր կողմն ենք ընդունում ձերոնցից զգալի թվով մարդկանց բռնությամբ կամ շահագրգռելու միջոցով։ Նրանք թուրք են դառնում կամ գլխահարկը չվճարելու և կամ թե իրենց կատարած հանցանքի համար մահապատժից խուսափելու նպատակով (ընդգծումը մերն է— Մ. Ղ.)»[574]։

Թուրքերի տիրապետության տակ գտնվող արևմտահայերի համար ամենաանտանելին կրոնական հալածանքներն էին, որոնք երբեմն հասնում էին այնպիսի ծայրահեղությունների, երբ կեղծ ու շինծու մեղադրանքների հիման վրա սպանվում էին հարյուրավոր ու հազարավոր անմեղ մարդիկ։ Այդ մասին վկայում են բազմաթիվ ձեռագիր հիշատակարաններ, ժամանակագիրներ և նահատակվածների մա-

566 Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 458։

567 «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 291—292։

568 Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 502։

569 Ղ. Փիրղալեմյան, Նշխարք..., հ. Բ, 677, էջ 193բ։

570 «Չի թույլատրվում որևէ մի քրիստոնյայի,— գրում է Մ. Ֆեբվրը,— պաշտպանվելու իր վրա հարձակվող թուրքից. նրա միակ փրկությունը փախուստն է։ Իսկ եթե նա այդ չարեց, ապա պիտի թույլ տա իրեն անարդել, ծեծել... իրավունք չունենալով ձեռք բարձրացնելու» (տե՛ս M. Febvre, p. 152)։

571 Գր. Դարանաղցի, էջ 467—468։

572 M. Febvre, p. 173. «Եւ ասմանցիք,— կարդում ենք 1551 թ. մի հիշատակարանում,— նեղեն զազգս հայոց բուխտան ասելով՝ և սուտ վկայ կացուցանելով որոյ փրկեսցէ զմեզ տէր Աստուած ի յանօրինաց և ի չարեաց ամէն» (Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 275)։

573 Գր. Դարանաղցի, էջ 152։

574 M. Febvre, p. 109.

սին գրված վարքերը[575]։ Սպանություններն ու բազմապիսի հալածանքները հատկապես հաճախակի դարձան XVII դարում։ Առաքել Դավրիժեցին իր «Պատմության» մեջ բերում է մի շարք այդպիսի օրինակներ[576]։

Թուրքական տիրապետության տակ հեծող հայկական նահանգների բնակչության համար կատարյալ մի պատուհաս էր դևշիրմեն՝ մանկահավաքը։ XV—XVII դարերում կատարվող դևշիրմեն (հպատակ քրիստոնյա երեխաների բռնի հավաքում), որը նպատակ ուներ համալրելու թուրքական ենիչերական կանոնավոր բանակի շարքերը, իրենից ներկայացնում էր ոչ այլ ինչ, քան օրինականացված բռնություն։ Դա մի հզոր միջոց էր թուրք ֆեոդալների ձեռքին՝ իրենց համաձուլման (ասիմիլյացիայի) քաղաքականության իրականացման ճանապարհին։ Դևշիրմեի փաստը Թուրքիայում ակնառու կերպով ցույց է տալիս նվաճված երկրների բնակչության իրավազուրկ ստրկական վիճակը[577]։

Դևշիրմեն սկզբնական շրջանում ըստ անհրաժեշտության կատարվել է «երբ, հինգ տարին մեկ անգամ», իսկ XVI դարում Ռումելիում փաստորեն յուրաքանչյուր տարի։ «Հավաքը,— ասում է Կոչիբեյը,— կատարվում էր բացառապես արնաուտներից (ալբանացիներից), բոսնիացիներից, հույներից, բուլղարներից ու հայերից, իսկ ուրիշ ազգերից արգելված էր»[578]։

Դիմելով դևշիրմեին՝ թուրքերը փաստորեն խախտում էին շարիաթի սկզբունքները, ինչպես այդ մասին նշել է արևելագետ Մասինիոնը 1954 թ. Քեմբրիջում կայացած արևելագետների 23-րդ կոնգրեսում[579]։ Ըստ երևույթին, հարցն այն է, որ «ամեն ինչ շարիաթին» և «շարիաթը ամեն ինչին» հարմարեցման Թուրքիայում տարածված պրակտիկան այստեղ ևս իրագործվում էր։ Թուրքերի առաջ դրված

575 Այդ մասին տե՛ս Հ. Մանանդյան, Հ. Անառյան, Հայոց նոր վկաները, հ. 2, Վենետիկ, 1912, էջ 353, 373, 517 և այլն։

576 Առ. Դավրիժեցի, էջ 405—436։

577 Դևշիրմեի մասին ավելի ընդարձակ տե՛ս Մ. Կ. Ջուլալյան «Դևշիրմեն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների», ՊԲՀ, 1959, № 2—3, էջ 247—256։ «Պարզ ասած, թուրքական կառավարությունը,— գրում է էբասկի էլիասը,— հիմնված է ենթակայության վրա։ Դա ստրուկների մի երկիր է, որտեղ ազատ մարդիկ հանդիսանում են միայն օտարերկրացիները» (*Ebasci Elias*, t. II, p. 50)։

578 *В. Д. Смирнов*, Кучибей Гемюрджинский..., с. 100.

579 *Paul Wittek*, Devshirme and Sharia ('Bulletin of the School of Oriental and African Studies University of London", 1955, v. XVII, part 2, p. 271).

գործնական նպատակները (նորանոր երկրների նվաճումը, ռազմականապես, քաղաքականապես և տնտեսապես նվաճված երկրների հնազանդեցումը, ենթակա ժողովուրդների դիմադրական ուժի չլատումը ու կողոպուտի ապահովումը) իրագործվում էին զանազան մեթոդներով, իսկ երբեմն էլ անկախ այն բանից, թե արդյո՞ք դրանք համապատասխանում էին շարիաթի սկզբունքներին, թե ոչ։ Իհարկե այդ գործնական քայլերը հաճախ պարուրվում էին կրոնական շղարշով։ Այսպես, Ալա-էդդինը, սուլթան Օրխանի եղբայրը, որին թուրքական աղբյուրները վերագրում են դևշիրմեի հղացման գաղափարը, խորհուրդ էր տալիս սուլթան եղբորը, ասելով. «պարտվածները հաղթողների գերիներն են. նրանց (հաղթողներին— Մ. Ջ.) են պատկանում նրանց (պարտվածների—Մ. Ջ.) ինչքերը, կանայք ու զավակները, իբրև օրինավոր ստացվածք։ Եթե երեխաները բռնի մահմեդականացվեն ու իբրև մարտիկներ պետական ծառայության մեջ առնվեն, կշահեն իրենց թե՛ ժամանակավոր և թե՛ հավիտենական փրկությունը»[580]։

Հայկական աղբյուրներում մանկահավաքի սկիզբը նշվում է 1519 թվականը։ Անանուն Սեբաստացու ժամանակագրության մեջ կարդում ենք հետևյալը. «ի թուին ՋԿԸ (1519) բարկութիւնն Աստուծոյ սաստկացաւ և սուլթան Սելիմն տղայ ժողովեց ի քրիստոնէից»[581]։ Սակայն Հ. Ն. Ակինյանը, ըստ երևույթին, ձեռքի տակ չունենալով այս աղբյուրը գրում է. «Հայ պատմագիրներու և հիշատակագիրներու մոտ առաջին անգամ մը կը հիշուի մանկաժողովը 1531 թվականին»[582]։ Սակայն վկայություն կա և այն մասին, որ հայերից մանկահավաք կատարվել է դեռևս 1464 թվականին՝ Անատոլիայի շրջաններից։ Այդ մասին մի ձեռագրի հիշատակարանում ասված է հետևյալը. «...իսկ անաւրեն առքայն տաճկաց ժողովեաց զքրիստոնէից մանկուսն և երեր Ըստամբոլ, իսկ եպիսկոպոսն եկեալ ի հետ մանկանցն և երեր զթուղթ ազատութեան հայոց, իսկ անօրեն առքայն ոչինչ համարեցաւ զթուղթն»[583]։

Աղբյուրների վկայություններից երևում է, որ մանկահավաքները հայկական նահանգներում համեմատած Բալկանյան երկրների հետ

580 *J. Hammer*, t. I, p. 120—121.

581 «Մանր ժամանակագրություններ», հ. 1, էջ 169։

582 Ն. Ակինյան, Մաղաքիա Դերջանցի, «Հանդես ամսօրյա», 1952, № 11—12, էջ 591։

583 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (կազմեց Լ. Ս. Խաչիկյան), հ. Բ, Երևան, 1956, էջ 302։

սկսվել են ավելի ուշ, այսինքն միայն XVI դարում և կատարվել են ավելի քիչ, քան Բալկաններում։ Այսպես, ըստ մանր ժամանակագիրների տվյալների, հայկական նահանգներում մանկահավաքներ կատարվել են 1531, 1536, 1543, 1547, 1550, 1590 և 1622 թվականներին[584]։ Այս երևույթը պիտի բացատրել նրանով, որ Թուրքիայի ասիական մասում թուրքերի վիճակը համեմատաբար ավելի կայուն էր, քանի որ դեռ XII դարից թուրքական զանազան ցեղերի Փոքր Ասիա ներխուժելու հետևանքով կենտրոնական Անատոլիայում թուրքերն արդեն կազմում էին տեղի ազգաբնակչության զգալի մասը։ Մինչդեռ Բալկաններում թուրքերը մեծ ջանք պիտի գործադրեին զանազան մեթոդներով[585] երկրին իսլամական կերպարանք տալու համար։ Արևմտյան Հայաստանում թուրքերը նման ջանքերի կարիք չունեին, քանի որ սուլթանական կառավարությունը, որպես մշտական հսկողություն, օգտագործում էր քուրդ ֆեոդալների ռազմական ուժը։ Հենց դրանով պիտի բացատրել այն կարևոր հանգամանքը, որ մանկահավաքներ եղել են գերազանցապես բուն Հայաստանից դուրս, անդրեփրատյան հայաշատ քաղաքներից։ Որ բուն Հայաստանից ևս կատարվել են մանկահավաքներ, վկայում է 1531 թ. մի ձեռագրի հիշատակարանը։ «Թվին ՋԺ (1531) սուլթան Սուլեյման՝ որ է Սէլիմի տղայն,— ասված է հիշատակարանում,— ենիչարա համար տղայ ժողվեց ի հայոց ազգէս, այսչափ տեղեացս այս տարի ժողովնցին՝ ու զապագայն Աստուծոյ է գիտելի. ի Տրապիզոնա, ի Համշէնու, ի Սպերու, ի Բաբերդու, ի Դերջանայ, ի յԵղնկա, ի Կամխա, ի յԱշխարհովիս... (մի քանի քաղաքների անուններ չեն կարդացվում, գրում է հիշատակարանը հավաքող Ղ. Փիրղալեմյանը— Մ. Ջ.), Տիվրիկա. մինչև ի Վան ի ծովափն զխեղճն և զաղէտ ծնողացն ով կարէ պատմել»[586]։

Ըստ սուլթանական հրովարտակների, յուրաքանչյուր երկու-երեք կամ հինգ տարին մեկ անգամ 8—20 տարեկան երեխաներից ու պատանիներից, իսկ երբեմն էլ մինչև իսկ ծծկեր երեխաներից ֆիզիկապես «ամենաուժեղներին» ու գեղեցիկներին ընտրում ու հավաքում

584 «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 169—171։

585 Մեթոդներից մեկն էլ ազգաբնակչությանը բռնի Բալկաններից տեղահան անելն էր, որը կոչվում էր «սյուրգուն» և ազատված տեղերը թուրքերով վերաբնակեցնելը (տե՛ս O. L. Barkan, Osmanlı imperatorluğunda çiftçi sınıfların hukuki statüsü, Ülkü, c. IX, 1937, s. 107)։

586 Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 6։

էին ենիչերության համար[587]։ Երեխաներին ծնողներից բաժանելու պատկերը ներկայացնում էր մի կատարյալ ողբերգություն։ Ահա Թադեոս Սեբաստացու նկարագրած մի այդպիսի ցնցող պատկեր.

Ողորմագին դիմօք արտասուէին
Ծնողքն և ազգականքն և եղբարք նոցին
Մինչ զի զամենեսեան ի յողբ շարժէին,
Զոր ոչ կարէ պատմել լեզու մարդկային։

Անազգեստ լինէին, քուրձ զգենուին,
Մոխրաթաւալ անձամբ աղաղակէին
Տարակուսեալ հոգով ի տան նստէին,
Հանգուցեալ մեռելոցն երանի տային։

Յորժամ բաժանեն զնոսա ի ծնողաց,
Անդ եղև աղաղակ մեծ կոծումն և լաց,
Որպէս որ բաժանեն, զգառն ի մաքեաց
Եւ եղև մեծ աղետ տարակուսանաց[588]։

Սուլթանական հրովարտակներից երևում է, որ մանկահավաքի պաշտոնյաները հալածում ու սարսափ էին տարածում իրենց իրավասությանը հանձնված գավառներում այն աստիճան, որ հպատակները բողոքում էին սուլթանական կառավարությանը[589]։ Բռնություններով ու կոպիտ կամայականություններով լի էր 1543 թ. հայկական գավառներում կատարված մանկաժողովը, որի մասին Մ. Ջամչյանը գրում է. «Յետ քանի մը ամաց դարձեալ եղև այսպիսի մանկաժողով, և որք վերակացուք էին արար գործոյ՝ բաղում աղետալի գործ գործէին ընդդէմ կամաց թագաւորին, խորտակէին զտունս և զկողոպտէին, ուրէք-ուրէք այրէին և զեկեղեցիս. որպէս յԵւդոկիա (Թոխաթ) և տան այրելն և քակելն զութն եկեղեցիս միանգամայն ի միում աւուր, յապրիլի 9, ի թուիս հայոց ՋՂԲ (1543)»[590]։

Այս դժոխային դրությունն էր պատճառը, որ Մաղաքիա Դերջանցի վարդապետը երկրորդ անգամ (առաջին անգամ 1531 թ.)՝ 1543 թ.

587 I. H. Uzunçarşılı, Osmanlı devleti teşkilatının kapukulu ocakları, c. I, Ankara, 1943, s. 14.

588 Հ. Ն. Ակինյան, Մաղաքիա Դերջանցի, «Հանդես ամսօրյա», 1952, № 11—12, էջ 592։

589 I. H. Uzunçarşılı, Osmanlı devletinin..., s 11—12.

590 Մ. Ջամչյան, էջ 513։

մեկնում է Կ. Պոլիս՝ Կամախի, Դերջանի և Բաբերդի գավառներում մանկահավաքը խափանելու նպատակով։ Նրան հաջողվում է սուլթանից գրություն ստանալ ու խափանել մանկաժողովը վերոհիշյալ գավառներում։ Սակայն, ինչպես երևում էր Գ. Դարանաղցու վկայությունից, Մ. Դերջանցին հանձն է առնում մանկահավաքի փոխարեն հատուկ հարկ տալ սուլթանական կառավարությանը՝ «օղլանջի ստակ» անվան տակ։ Այդ մասին Գ. Դարանաղցին գրում է. «Եւ այլ ասեն՝ թէ տղայժողովն, որ եղեւ ի սուլթան Սէլիմի աւուրսն, նա՛ գնաց վարդապետն ի յԸստամպոլ, այնքան տքնութիւն արար ի դրունս արքային և ժտութիւն արար, մեծ ստիպով խնդրեաց տեսանել զերեսս արքային մինչ ծանուցին թագաւորին և նա կոչեաց առ ինքն եւ եհարց զվարդապետն. Զի՞նչ խնդրես... ասէ վարդապետն, եթե գտի շնորհս առաջի քո, նա՛ կամ է զՀարզուլումի (Կարնոյ) տղայ ժողովելն ինձ օժիտ այնեաս և ի տեղի գին տղայոցն տակաւ հարկս դնես։ Եւ հաճոյ թուեցաւ թագաւորին, հրամայեաց այնպէս լինել, որ կուգայր տղայոց ժողովն մինչ ի Սեւաստ, և անդից դառնայր և ոչ գայր ի մեզ. և գիտեմք, որ երեք տարին անգամ մի կուգայր հարկահանն տղայժողովին, որ օղլանջի ստակ ասէին»[591]։

Ստանալով մոլեռանդ մուսուլմանական դաստիարակություն, ենիչերիները դառնում էին ռազմատենչ սուլթանների հիմնական հենարանը։ XVI դարի վերջերից ենիչերիների բանակը փաստորեն հանդիսացավ երկրի լիիրավ տերն ու տնօրենը, շարիք ու պատուհաս դառնալով նախ և առաջ քրիստոնյա հպատակների գլխին։ Թե ինչ շարիք են եղել ենիչերիները հայ հոծ զանգվածների համար, վկայում է Սիմեոն Լեհացին։ «Եւ այնպէս շար էին եանչարիքն,— գրում է նա,— որ քրիստոնէից չի տային ձի հեծնալ, ոչ ջորի, ոչ լաւ շուխա ագանիլ, ոչ այգի, ոչ տուն մեծ, այլ զամենայն յափշտակէին ի ձեռաց։ Նաև առաջնորդաց չտային քննել հաս-չհաս կամ օրէնք պահել, զի թէ որ կամէր ելին առնուլ և չհասութք լինէր, չերթային առ հովիւ կամ առաջնորդ, այլ (երթային առ) ենչարի մի և տային կաշառ, և նա գայր իրիցուն թօփուղով պսակ տայր առնել, և նա ակամայ պիտէր խօսիցն չելնէր, ապա թէ ոչ բաղում չարիս անցուցանէր ի գլուխն և վնաս և տուգանք ձգէր զնոսա, այլ և եկեղեցեաց և վանօրէից։ Եւ թուրքաց աշխարհն ամենայն այդպէս են»[592]։

591 Գր. Դարանաղցի, էջ 340—341։

592 «Սիմէոն գրի Լեհացւոյ ուղեգրութիւն», էջ 193։

Հայ աշխատավորության համար մեծ չարիք էին նաև աղջկա ժողովները, որ կատարվում էին թուրք փաշաների ու սուլթանների հարեմների համալրման համար։

XVIII դարում երկրում կարգուկանոնի վերացման պայմաններում հայերի իրավական վիճակը ավելի ևս վատացավ։ Կրոնական անհանդուրժողականության հաճախակի կրկնվող երևույթները, «կամավոր» ու բռնի կրոնադարձության, նահատակությունների մասին աղբյուրներում վկայակոչված բազմաթիվ փաստերը ավելորդ անգամ խոսում են քրիստոնյա հպատակների ստրկական վիճակի մասին։ «Զորանը և դրա վրա հիմնված մուսուլմանական օրենսդրությունը,— գրում է Կ. Մարքսը,— աշխարհագրությունն ու համայն աշխարհի ժողովուրդների ազգագրությունը հանգեցնում է երկու կեսի՝ ուղղահավատների և անհավատների հասարակ ու հարմարին բանաձևի։ Անհավատը դա «գյավուրն» է, նա թշնամի է։ Իսլամն անիծում է անհավատների ազգը և անընդհատ թշնամության վիճակ է ստեղծում մահմեդականների և անհավատների միջև»[593]։

XVIII դարում, ինչպես դա նախորդ դարերում էր, թուրք-իրանական պատերազմների ընթացքում գերեվարում ու որպես ստրուկներ վաճառում էին խաղաղ հայ բնակչությանը։ «Զօրքն տաճկաց,— ասված է մի ձեռագրի հիշատակարանում,— գերէին ազգն հայոց և բերեալ վաճառէին կամ բռնադատէին, թէ ուրացիր զՔրիստոս, ոմանք հաւատն ուրացան, և ոմանց որք ոչ ուրացան սրոյ ճարակ տային կամ վաճառէին...»[594]։

Քրիստոնյա հպատակների մի մասը ստիպված էր լինում գրկել իսլամը փրկվելու համար ստորացուցիչ ծանր բեռից՝ ջիզիեից։ Դեռ Մ. Մինյոն XVIII դարի 30-ական թվականներին շեշտում է այդ հանգամանքը։ «Քանի որ մեծ Տիրակալն ունի մեծ թվով հպատակներ,— գրում է նա,— որոնք սերնդե-սերունդ պահպանել են իրենց նախնիների դավանանքը, այդ պատճառով այս հարկը (ջիզիեն— Մ. Զ.) մեծ եկամուտներ է ապահովում, սակայն և պակասում է օր ավուր, քանզի, չնայած զուրանն արգելում է հալածել գյավուրներին ու ստիպում է իրենց վճարել գլխահարկ, այսուհանդերձ գերիշխող կրոնը իր մեջ է ընդգրկում շատ շատերին մի երկրում, որտեղ ոչ մի պաշտոն չի

593 К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. X, с. 6.

594 Մատենադարան, ձեռ. № 6382, էջ 552։

կարելի ձեռք բերել կամ վստահության արժանանալ առանց մուսուլման դառնալու»[595]։

1747 թ. շեյխ-ուլ-իսլամն Դիարբեքիրի կուսակալի հետ մի հանդիպման ժամանակ ասել է. «Աշխարհում անհավատությունից բացի այլ հանցանքները ենթակա են ներման»[596]։ Նման պայմաններում է, որ աղբյուրներում արձանագրված են արևմտահայ որոշ հատվածների կրոնադարձության փաստերը. Թրքացան, օրինակ, ակնեցի և համշենցի հայերի մի մասը։ Ակնի գավառում,— գրում է Ղ. Ինճիճյանը,— «բնակիչքն յազգէն տաճկաց՝ գէթ ըստ մասին ի հայոց դարձան ի ԺԷ և ի ԺԸ դարուն, ուստի ի տեղիս տեղիս տունք նոցա կամ ազգատոհմք տակաւին պահեն զհայկական անունս գաւառին և կոչին խաչուկկիլ, վարդանկիլ, կնքահայրկիլ և այլն»[597]։ Իսկ ինչ վերաբերում է Համշենի հայության Թրքացման դրդապատճառների մասին, ապա Ղ. Ինճիճյանը տալիս է հետևյալ բացատրությունը. «Բնակիչք երկրին յառաջագոյն հայք էին, այլ ի յելս ԺԷ դարուն և ի սկիզբն ԺԸ երրորդին առհասարակ հանդերձ ամենայն շրջակայ գիւղօրէիւք դարձան ի տաճկութիւն սակս բռնութեան հարկապահանջութեան (ընդգծումը մերն է— Մ. Զ.), բայց գտանին տակաւին ի նոսա ի քրիստոնեայք, յորոց գիւղօրէս կանգուն կամ տակաւին եկեղեցի իւրեանց՝ ի վաղուց մնացեալ... Իսկ տաճիկք խօսին մինչև ցայժմ հայերէն ի գործ ածեն ի գիւղօրէս ինչ անուանս Կնքահայր և Կնքամայր, պահեն պահս և զայլ ծէսս և օրէնս քրիստոնէական հաւատոց, յաճախեն յեկեղեցիս և այլն. ոմանք կէսկէս են հավատովք, արտաքուստ միայն ցուցանելով զտաճկութիւն»[598]։

Վասպուրականում և առհասարակ Հարավային Հայաստանում, ուր իշխում էին քուրդ բեկերը, տեղի էին ունենում նաև քրդացման դեպքեր։ Իսլամն ընդունած որևէ մի հայ այլևս իրավունք չուներ վերադառնալու հայ համայնքի ծոցը։ Այդպիսի փորձեր կատարողները սովորաբար ողբերգական վախճան էին ունենում։

Օսմանյան ղեկավարող շրջանները, ինչպես տեսանք, փորձում էին քրիստոնյա հպատակներին վերապահված հաղուստով իսկ վիրավորել նրանց մարդկային արժանապատվությունը։ 1727 թ. սուլթան

595 *M. Mignot*, p. 450.

596 *I. H. Uzunçarşılı*, c. IV, I kis., s. 362.

597 Ղ. Ինճիճյան, էջ 303։

598 Նույն տեղում, էջ 396։

Ահմեդ III-ը կարգադրել էր քրիստոնյա կանանց լայն օձիքով վերարկուներ չհագնել ու մուշտակ չկրել։ Պատմագիր Վասըֆը 1757 (1171) թվականի դեպքերին անդրադառնալիս, գրում է, թե Կ. Պոլսի քրիստոնյա և հրեա հպատակներն անցել էին շարիաթով սահմանված հագնվելու կարգը, ուստի «սուլթանական խաթթ-ի հումայունով կարգադրվեց, որ հետ այսու ընդունված կարգը խանգարողները կպատժվեն»[599]։

Հավանաբար, այս և համանման այլ հրամանները նկատի ունի 1760 թ. հունվարի 10-ին Կ. Պոլսից գրած նամակում հայ կաթոլիկ մի կրոնավորուհի. «Քաղքիս տէրն ալ մէկ նասխ (բծախնդիր) քրիստոնեայ ատոզ մարդ մի է. Թիւրլիւ Թիւրլիւ (տեսակ-տեսակ) եասախներով (արգելքներով) կու շարշարէ զիւր քրիստոնեայ ռայեները։ Իրեն կեօրէ (ըստ իրեն) ալ գտէր է մէկ ըՍտամպուլ էֆենտիսի մի, որ ան ալ քրիստոնէից հասըմ (թշնամի) է։ Հիմակ կնքտոց չետիկ բապուռը (հողաթափ) կարմիր հանգցնել տուին, հրեաներուն մաւի (կապույտ) չետիկ բապուռը թէ կնքտոց և թէ երիկ մարդոցը վերցուցին, անոնց ալ սեւ հագցնել տուին»[600]։

Համաձայն Ի. Հ. Ուզունչարշըլըի, կառավարության նման խրատություններին, իբր դեմ է եղել մեծ վեզիր Ռահիբ փաշան։ Նա գրում է. «Մուստաֆա III-ը գահ բարձրանալուց հետո հրամայել էր քրիստոնյա և մովսեական հպատակներին սև հագնվել։ Մեծ վեզիր՝ Ռահիբ փաշան նկատի ունենալով քրիստոնյաների թիարաններում կառավարությանը մատուցած ծառայությունները Տիրակալի կողմից նման քայլն համարել է անհարմար, ուզեցել է այն վերացնել, սակայն հանդիպել է փադիշահի դիմադրությանը։ Դժվարին կացության մեջ ընկած Ռահիբ փաշան, երկար մտածելուց հետո, գտել է ելքը, պատրիարքներին և հրեաների ռաբինին իր մոտ կանչելով քաղաքավարի ասել է հետևյալը. «Պատերազմի մեջ ենք գտնվում, մեր Փադիշահը սուգի մեջ է ու հարմար է գտել, որ իր հպատակները սև հագնվեն»[601]։

Քրիստոնյա հպատակների հագուստի հարցում կիրառվող խտրականությունը գնալով ավելի է սաստկանում։ 1772 թ. օգոստոսի 29-ին Մխիթարյան միաբան Հովհաննես Այվազյանը Մելքոնյան աբբային գրած նամակում, ի միջի այլոց, գրում է, թե «...յաւուրս յայսոսիկ ել

599 *I. H. Uzunçarşılı*, c. IV, I kis., s. 395—396.

600 «Մայր դիւան Մխիթարեանց Վենետիկոյ...», էջ 331։

601 *I. H. Uzunçarşılı*, c. IV, II kis., s 395—396.

եասախ սաստիկ ի թագաւորէն վասն ապաշուք և անպարկեշտ ֆօթօզից և անհեթեթ մեծութեան եախայից (օձիք) ֆերաճէից, եւ ևս զի մի կարասցեն կապիլ յերեսս այն սատանայնոր ձևով զեմպիլ պիշիմի (զամբյուղաձև) եազմախն (լաչակ կամ քող) զոր նոր հնարեալ են առ ի կիսով չափ բաց թողուլ զերեսս, եւ զփեռշեմոն (բարշ) զոր այժմ կորեն կանայք՝ ցուցանել մարդկանց, մանաւանդ այս եասախ եղեւ վասն տաճկաց և հոռոմոց, եւ մասնաւորապես վասն տաճկաց զի մի կարասցեն զգենուլ յօտար գոյն ֆերաճէ, բայց եթե կանանչ և ֆստխի, եւ մասնաւորապէս վասն հայոց եւ հոռոմոց՝ զի մի կապեսցեն ի գլուխս փոխանակ գունաւոր եմենիի (եաղմաշղարշ), ճերմակ տիլպենտ (շղարշ) եւ ճերմըկեղէն, այլ գունաւոր ինչ եւ զգեցին մթագոյն ֆերաճէ (կանանցի զգեստ)։ Եւ այս հրաման այնքան սաստիկ՝ մինչև բազմաց եթէ հոռոմոց են եթէ տաճկաց զֆօթոզն՝ որ քան զտուեալ չափ առաւել գրաւ, հրապարակաւ ի քաղաքամիջի անդ կտրեցին կիսով չափ ընդ մազին, եւ զեախան ֆերաճէին կտրեալ բովանդակ՝ ծակեցին ի միջոյ եւ արկեցին ի պարանոցն և միոյ ուրումն քիթքն կտրեցին վասն զեմպիլ պիշիմի եազմախ կապելոյն, եւ զմիոյ ուրումն ի կտրելն զֆօթօզն՝ ճըղքեցին դանակաւ եւ զերեսն։ Եւ հրաման սաստիկ թերզիներուն (դերձակներին), զի թե ոք կարեսցէ զեախայ ֆերաճէի մեծ տան զտուեալ չափն թերզիպաշիքն, իթն մատնեսցի անխնայ»[602]։

Կարճ ասած՝ Օսմանյան կայսրությունը ստեղծել էր ազգային ճնշման, կրոնական խտրականության, մոլեռանդության ու անհանդուրժողականության մի համակարգ, որի նմանը XVIII դարում չուներ աշխարհի և ոչ մի երկիր։

602 Նույն տեղում, էջ 185։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVI—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Գտնվելով օտար նվաճողների տիրապետության տակ, հայ ժողովուրդը իր հայրենիքի երկու հատվածներում էլ, բնականաբար, ձգտում էր քաղաքական անկախության ու սեփական ճակատագրի տնօրինման։ Սակայն, սեփական ուժերով այդ նպատակն իրագործելն, Օսմանյան կայսրության և սեֆյանների պետության հզորության պայմաններում, համարյա բացառվում էր։ Ուստի և հայ ժողովուրդը փնտրում էր այլևայլ ուղիներ օտարերկրյա տիրապետության կործանարար մթնոլորտից փրկվելու համար։

Հայ ազատագրական շարժման փորձեր կատարվել են դեռևս XV դարի երկրորդ կեսին[1]։ Աղթամարի հայոց կաթողիկոս Զաքարիա II-ը (1434—1464) օգտվելով կարակոյունլուների տիրակալ Ջիհանշահի (1437—1467) բարյացակամ վերաբերմունքից, ձգտում էր վերականգնել Վասպուրականի հայոց թագավորությունը։ Սակայն նրան չհաջողվեց իրագործել իր փայփայած երազները։ Նրա հաջորդը՝ կաթողիկոս Ստեփանոս IV-ը (1465—1489), դարձյալ Ջիհանշահի օգնությամբ, Զաքարիա կաթողիկոսի հորեղբորորդի Սմբատ Սեֆեդինյանին[2] օծեց Վասպուրականի հայոց թագավոր։ Սմբատի հայոց թագա-

1 Այդ մասին մանրամասն տե՛ս М. К. Зулалян, Армения в первой половине XVI в., с. 83—87.

2 1021 թ. Վասպուրականի Սենեքերիմ Արծրունի թագավորի Սեբաստիա տեղափոխվելուց հետո, Աղթամարն ու նրա շրջակայքը մնացին նրա «ազգականներից» Սեֆեդինի արքայունի իշխանության տակ։ Վերջինիս շառավիղները ժառանգական սեփականություն դարձրին Աղթամարում սկզբնավորված կաթողիկոսությունը։ XII դարի կեսին Աղթամարը դառնում է հայ Սեֆեդին իշխանի արծրունյաց ծագում ունեցող կնոջ օժիտը։ Սեֆեդինն, այսպիսով, հիմք է դնում նոր կաթողիկոսական հարստու-

վոր օծվելու մասին ժամանակակից մի հիշատակարանում կարդում ենք հետևյալը. «Եւ ապա եկն (յէջմիածնէ) յԱղթամար տէր Ստեփաննոս արհիեպիսկոպոսն և ամենեքին ծովեզերայքն ժողովեցան և ձեռնադրեցին զտէր Ստեփաննոս կաթողիկոս ամենայն Հայոց բազում եպիսկոպոսօք, վարդապետօք, կրօնաւորօք, քահանայիւք և ժողովրդեամբք» և այնուհետև՝ «Եւ յայնժամ օծեցին զպարոն Սմբատ թագաւոր ըստ նախնեաց իւրոց Գագկայ, զի ի վաղուց անտի ազգս Հայոց չէր տեսեալ թագաւոր։ Փրկիչն մեր Քրիստոս զօրացուսցէ զնա և բարձրացուսցէ զաթոռ իշխանութեան մերոյ և զաթոռ յԱղթամարա և զսուրբ Աջն լուսաւորչաց և զաթոռակալն մեր՝ զտեսուչ բանաւոր հօտիս զամենագով զտէր Ստեփաննոս կաթողիկոս ամենայն Հայոց և զնախնիս իւր ամէն»[3]։ 1466 թ. Մոկսի Փասավանքից Իսրայել գրիչը հայտնում է, որ ավետարանն արտագրված է «ի հայրապետութեան նորընծայ կաթողիկոսի տէր Ստեփանոսի և թագաւորին Սմբատայ»[4]։ Աղթամարից Ներսես արքեպիսկոպոսը՝ Ստեփանոս կաթողիկոսի եղբայրը, ընդօրինակում է մի մաշտոց՝ «ի հայրապետութեան տեառն տէր Ստեփանոսի և ի նոր թագաւորիս մերոյ պարոն Սմբատին»[5]։ Գրիչ Թովմա Մինասենցը խնդրում է հիշել «...ևս առաւել ստացողի սուրբ գրոցս Սմբատ թագաւորին և ծնաւղաց նորին պարոն Գուրջիբեկին և Դանիա խաթունին»[6]։

Այս մի քանի հիշատակումներով էլ սահմանափակվում է Սմբատի թագավոր օծվելու մասին եղած վկայագրությունները։ 1467 թ. մահանում է Ջիհանշահը ու այդ նույն տարում վերանում է նաև Վասպուրականի հայոց թագավորությունը։

Այնուհանդերձ, Վասպուրականի հայոց թագավորության միջոցով հայ պետականության վերականգնման փաստը ինքնին մեծ հետաքրքրություն է առաջացնում հետազոտողների մոտ ու վկայում հայ ժողովրդի ազատության ձգտելու անսասան կամքը։

թյան։ Սմբատը սերում էր հենց այս հարստությունից. (այդ մասին տե՛ս Ն. Ակինյան Գաւազանագիրք..., էջ 30—39, տե՛ս նաև՝ "Le liber pontificalis des catholicos d'Akhtamar", par Frédéric Macler, "Journal Asiatique", t. CII, Paris, 1923, № 1, pp. 40—42)։

3 Ն. Ակինյան, Գաւազանագիրք..., էջ 111։

4 Նույն տեղում, էջ 113։

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում։

* * *

XVI—XVII դարերում քաղաքական որոշ հանգամանքների պայմաններում հայ ազատագրական միտքը ընթացավ հիմնականում Եվրոպայի հետ անվերջ բանավարություններ վարելու ուղղությամբ։ Սակայն Եվրոպայի օգնությամբ Հայաստանի ազատագրության գաղափարը, փաստորեն, լոկ մի պատրանք էր։ Անգամ եթե Եվրոպան նույնիսկ ձգտեր օգնել Արևելքի իր հավատակիցներին օտար տիրապետությունը թոթափելու հարցում, նա անզոր էր թուրքական ռազմական հզորության առաջ։ Ամբողջ XVI դարը այն ժամանակաշրջանն էր, երբ տարանջատված եվրոպական պետությունները իրենք էին գերճիգեր գործադրում թուրքական վտանգը Արևմտյան Եվրոպայից հեռացնելու համար։ 1535 թ. կնքված պայմանագրով, Ֆրանսիան Օսմանյան կայսրության դաշնակիցն էր Հաբսբուրգների դեմ մղված համատեղ պայքարում։ Ավստրիայի ու Գերմանիայի քաղաքներն ու գյուղերը սուլթանական բանակների կողմից հրի ու սրի էին ենթարկվում։ Կաթոլիկ աշխարհի միջնաբերդն ամբողջությամբ կլանված էր լութերականության դեմ մղվող պայքարով։

Ահա այսպիսի անբարենպաստ պայմաններում, սկսած XVI դարի կեսերից, հայերը դիմում էին Արևմտյան Եվրոպայի պետությունների օգնությանը։ Ինչո՞ւ էին հայ ղեկավար շրջանները իրենց հայացքը սևեռել դեպի կաթոլիկ Եվրոպան։

XII—XIII դարերում Կիլիկիայում ծավալված քաղկեդոնական-միաբանողական (ունիթոռական) շարժումը XIV—XV դարերում տարածվում է նաև բուն Հայաստանում։ Պապական միսիոներներն սկսում են կաթոլիկության եռանդուն պրոպագանդա մղել Հայաստանում, միաժամանակ վարելով քաղաքական ագիտացիա, պատրանք ստեղծելով պապական եկեղեցու օգնությամբ հայերին ազատագրելու մասին։ Հայաստանի մի շարք վայրերում և հատկապես Նախիջևանի գավառում, պապական գործակալներն ունեցան որոշ հաջողություն։ Հայ բնակչության մի մասն ընդունեց կաթոլիկությունն ու փաստորեն խորթացավ բնակչության հայադավան հատվածին։ Նրանց անվանում էին «ունիթոռներ», «ֆրանկներ», հաճախ՝ «ախթարմաներ», երբեմն այդ բառի տակ հասկանալով «վհուկներին»։

Հայ եկեղեցին ունիթոռների դեմ անցավ գրոհի։ Այս ուղղությամբ հատկապես եռանդուն գործունեություն ծավալեցին Սյունյաց՝ Գլաձորի և Տաթևի վանական դպրոցների կարկառուն ներկայացուցիչները։

Ունիթոռների դեմ եռանդուն պայքարողներից էր Հովհան Որոտնեցին, որը Թովմա Մեծոփեցու ասելով, բոլոր գավառներից ժողովեց բազմաթիվ աշակերտներ ու պայքարեց Երնջակի գավառի քրիստոսատյաց ախթարմաների դեմ[7]։ Հ. Որոտնեցու գործը շարունակեցին նրա աշակերտներ Գրիգոր Տաթևացին, այդ «անմար արեգակն» ու «երկրորդ լուսավորիչն» և այլք[8]։ Դեռ 1335 թ. Գրիգոր երեցը քաղկեդոնական ուսմունքը համարում էր «թույն մահաբեր իժից»[9]։ «Դա զարմանալի է ու միաժամանակ, եթե ուզում եք իմանալ, հրաշալի բան է,— գրում է Ժ. Շարդենը։ — Չնայած, որ հայերը վաղուց ի վեր գտնվում են մուսուլմանական տիրապետության ներքո... սակայն ամուր կառչած են իրենց հավատին։ Նրանք պաշտպանում են այն ու չեն ուզում մի այլ հավատք ընդունել, հավասարապես ընդդիմանալով, ինչպես իրենց տիրակալներ մուսուլմաններին, այնպես էլ հռոմեական եկեղեցու միսիոներներին»[10]։

1439 թ. Ֆլորենցիայի ժողովի դեմ եռանդուն հանդես է եկել Մկրտիչ Նաղաշը[11]։ Այն հայ եպիսկոպոսները, որոնք մասնակցել էին եկեղեցական տիեզերական ժողովին, վախենալով ժողովրդական ցասումից, չեն հանդգնել վերադառնալ հայրենիք ու գերադասել են մնալ Իտալիայում[12]։ Կաթողիկոսական աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելը մասամբ պիտի բացատրել հայ հոգևորականության հակաքաղկեդոնական ավանդույթներով, քանի որ Սսի աթոռի վրա բազմած մի շարք կաթողիկոսներ հակված էին ընդունելու կաթոլիկությունը[13]։

7 Կ. Կոստանյանց. Ողբ սրբոյն կաթողիկոսութեան Ստ. Օրբելյանի, Տփղիս, 1895, էջ 22։

8 Նույն տեղում։ Հայ կաթոլիկ պատմաբան Ա. Պալճյանը անդրադառնալով Հ. Որոտնեցու ու Գր. Տաթևացու հակաունիթոռական պրոպագանդային գրում է, որ նրանք իրենց «...թյուր վարդապետությունը բանիվ և գրով ամենայն մեջ կսերմանեին, ամեն քար կշարժեին, ամեն հնարք կհնարեին, որ ժողովուրդը Հռոմա քահանայապետի հնազանդութենէ օտարացնեն» (Ա. Պալճյան, Պատմութիւն կաթուղիկէ վարդապետութեան ի Հայս, Վիեննա, 1878, էջ 71)։

9 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1954, էջ 269։

10 J. Chardin, t. II, p. 184. Կաթոլիկական պրոպագանդային ընդդիմանում էին նաև Թուրքիայի տիրապետության տակ ընկած բալկանյան ժողովուրդները, պատասխանելով, թե «իրենք ավելի շուտ թուրքեր կդառնան, քան թե կմիանան ձեզ՝ լատիններին» (տե՛ս Ladislav Hadrovicz, Le peuple serbe et son église sous la domination turque, Paris, 1947, p. 25).

11 Ա. Պալճյան, Պատմութիւն կաթուղիկէ վարդապետութեան ի Հայս, էջ 87։

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում, էջ 49։

Սակայն կային հայ գործիչներ, որոնք երազում էին հայոց թագավորությունը վերականգնել «ֆրանկների» (կաթոլիկ աշխարհի) օգնությամբ։ Այդպիսիների թվին էր պատկանում, օրինակ, Առաքել Բանությամբ։ Այդպիսիների թվին էր պատկանում, օրինակ, Առաքել Բաղիշեցին։ Իր «Ողբ մայրաքաղաքին Ստամպօլա և վասն գալստեան ֆրանկաց ազգին և ազատել զաշխարհս հայոց, Առաքել վարդապետէ ասացեալ» պոեմում նա ողբում է Կոստանդնուպոլսի անկումը 1453 թվականին։ Հեղինակը հույս է հայտնում, որ Բյուզանդիան կվերականգնվի, իսկ այնուհետև՝ ֆրանկների օգնությամբ Հայաստանն իր անկախությունը կնվաճի։ Ֆրանկները Արևելք արշավելով ամենուր հաղթանակ են տանելու՝

Արդ բարձրանայ եղջիւր խաչին
Փառօք խաչեալ թագաւորին,
Հեթանոսաց ազգն ամենայն
Առհասարակ կործանեսցին[14]։

Իսկ այնուհետև՝

Ազգքս հայոց պայծառասցի
Զի յայլազգեացն ազատեսցին.
Բերկրեալ ցընծան ամենեքեան
Որպէս յաւուրս Լուսաւորչին[15]։

XVI դարի բանաստեղծ Կարապետ Բաղիշեցին, նշելով, որ «գերի եմք ողորմելի» օտարների ձեռքում և «ոչ ունիմք մեք թագաւոր», գրում էր, որ հայերի ազատագրումը գալու է «արիական ազգ»-ից, այսինքն՝ Արևմտյան Եվրոպայից։

«Լինի ձեզ ազատութիւն
Ի յազգէն այն արիական»[16],— գրում է նա։

Բուն Հայաստանում, ինչպես հայտնի է, վաղուց էր տարածված այսպես կոչված «Ներսիսյան տեսիլը»[17], որը Հայաստանի ազատա-

14 Հ. Ս. Անասյան. Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1953, էջ 72։

15 Նույն տեղում, էջ 73։

16 «Հանդես ամսօրյա», 1937, էջ 337։

17 «Ներսիսյան տեսիլի» բովանդակությունը հետևյալն է. իբրև թե IV դարում կաթողիկոս Մեծն Ներսեսը կանխագուշակել է իր ժողովրդի ապագան, այն է՝ Արշակունյաց և լուսավորչաց հարստության անկումը, հայ եկեղեցու անջատումը տիեզե-

գրումը կապում էր «ֆրանկների արշավանքի» հետ։ Դեռ XIII դարում Վիլհելմ Ռուբրուկը նշում էր, որ «Ներսիսյան տեսիլի» գաղափարը տարածված է Հայաստանում։ «Ամբողջ Հայաստանում այս մարգարեությանը հավատում են, ինչպես Աստվածաշնչին»[18],— գրում է Վ. Ռուբրուկը։ Կ. Պոլսում Ռուբրուկին հանդիպած հայ հոգևորականը ասել է, որ «ինչպես Լիմբոսում սպասում էին Քրիստոսի գալստյան՝ ազատվելու համար, այնպես էլ մենք սպասում ենք ձեր գալստյանը՝ ձերբազատվելու համար այս ստրկությունից»[19]։ Եվ դարեր շարունակ «Ներսիսյան տեսիլի» ազդեցության տակ հայերը օգնություն էին ակնկալում Արևմուտքից։ Կղեմես Գալանուսը[20], XVII դարի թեատինյան այդ քարոզիչը, երկար տարիներ ապրելով հայերի մեջ, գրում է այդ «մարգարեության» մասին. «Ուստի և հայերը խստորեն ճնշված անհավատների լծի տակ, սովորություն ունեին հաճախ դիմել մեզ՝ իտալացիներիս, մի հարցով. «Երբ պիտի գան վերջապես հռոմեացիները՝ մեր երկիրը և մեր ժողովուրդը ազատելու համար»[21]։

Եվրոպական երկրների Արևելք կատարած խաչակրաց արշավանքը որոշ հայ ժամանակագիրներ, այդ թվում և Մատթեոս Ուռհայեցին, համարում էին «Ներսիսյան տեսլի» իրականացում։ Սակայն, թե ինչպես վարվեցին «փրկիչ»-խաչակիրները՝ հանրահայտ է։ Հիասթափվեց նաև ինքը՝ Մ. Ուռհայեցին։ Նա դառնորեն նկարագրում է «փրկիչնե-

---

[18] *Guillaume de Roubrouck*, Ambassadeur de Saint Louis—Récit de son voyage, trad. de l'origine latin et annoté par Louis de Backer, Paris, 1877, p. 286.

[19] Նույն տեղում։

[20] XVII դարի առաջին կեսին Կ. Գալանուսը Անդրկովկասում կաթոլիկ միսիոներներից մեկն էր. մի քանի տարի նա ապրել է Վրաստանում, այնուհետև տեղափոխվել է Կ. Պոլիս, ուր սովորել է հայերեն, տարել է կաթոլիկական պրոպագանդան Հայաստանում։ Հայտնի է Հայաստանի և մասնավորապես հայ եկեղեցու պատմության վերաբերյալ աշխատություններով. գրել է և՛ հայերեն, և՛ լատիներեն (տե՛ս *Clement Galanus*, Consillatio Ecclesiae Armenae cum Romanae, t. I—II, Roma, 1650—1654)։

[21] Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. Ա, էջ 496. (Hic quotidie solent Armenii, duro in fedelium juge depressi, a nobis proces et expertere, dicentes: Ec qnando venient Romani ad redimendum locum nostrum et gentum?»)։

ցի» վայրագությունները Եդեսիայում 1173 թվականին. «իսկ ի յամսեանն սահմի ի յաւուր կիրակէի ճաշուն հասանէր ի վերայ Ուռհայոյ չար աղետ դառնութեան, որ ուրացաւ հայր զորդի, և որդի զհայր, վասն զի լաց և ողբ և աղաղակ էր առհասարակ յամենայն քաղաքն, և արտասուօք, սգով և տրտմութեամբ տուն առ տուն, վասն զի եհան վարեաց ի տանէ զամենայն քաղաքն, և այրել հրամայիցեն զորս ի տան գտանէին... և ոչ մնաց ինչ շարութիւն, զոր ոչ ածէին ի վերայ քաղաքին Ուռհայոյ յազգէ ֆռանկաց...»[22]։

Վերը նշեցինք, որ հայ եկեղեցու գործիչների մեծագույն մասը, որոնք հավակնում էին գլխավորել հայ ժողովրդի ազատագրական պայքարը, հանդես էին գալիս կաթոլիկ պրոպագանդի դեմ ու մերժում Եվրոպայից օգնություն ստանալու գաղափարը։

Կաթոլիկ աշխարհի պրոպագանդան հայերի ազատագրման հարցի շուրջը իր արտահայտությունը գտավ միայն այն շրջաններում, հատկապես հայ գաղթավայրերում, որոնք առևտրական սերտ հարաբերություններ ունեին Արևմտյան Եվրոպայի երկրների հետ։ «Ունիտորների պրոպագանդը մի հայտնի չափով ընդառաջում էր առևտրական բուրժուազիայի պահանջներին,— գրում է Ա. Գ. Հովհաննիսյանը։ — Սրա գլխավոր մի պատճառն այն էր, որ ունիտորական պրոպագանդը սկսվեց մի ժամանակ, երբ առաջավոր ասիական քաղաքները ապրում էին տնտեսական քաղաքական անկում»[23]։ Իսկ հայ առևտրական բուրժուազիան, հատկապես XVI դարից մեծապես շահագրգռված էր Եվրոպայի հետ առևտրական հարաբերությունների վերականգնմամբ։

Կաթոլիկական պրոպագանդան Հայաստանում տարածում էր այն գաղափարը, որ երկրի փրկության միակ ուղին եվրոպական պետությունների միջամտությունն է։ Սակայն մինչ «անհավատների» լուծը թոթափելը, ինչպես խորհուրդ էր տալիս Կղեմես Գալանուսը, հայերը պետք է թոթափեին սեփական «խավարի» ու «սատանայի» իշխանությունը, այսինքն՝ պետք է հրաժարվեին հայ դավանանքից։ Հայերի բոլոր դժբախտությունների պատճառը կաթոլիկ միաբանները համարում էին այն, որ հայերը «սուրբ հավատացյալներ» չեն, այլ՝ հերձվածողներ։ Հռոմի պապին չենթարկվելու համար, ինչպես այդ մասին գրում է դելլա Վալլեն, նրանք «պատժված են աստուծո կողմից»

---

[22] «Պատմութիւն Մատթեոսի Ուռհայեցւոյ», Երուսաղեմ, 1869, էջ 325։

[23] Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. Ա, էջ 495։

("Puni de Dieu")[24]: Առաջարկվող դեղատոմսը մեկն էր՝ ընդունել կաթոլիկ եկեղեցու գերիշխանությունը։

Հիշեցնելով հայերին իրենց ողբալի ու ծանր վիճակը օտար տիրապետողների լծի տակ ու ակնարկելով «Ներսիսյան տեսիլը», Կղեմես Գալանուսը կոչ էր անում հպատակվել հռոմեական եկեղեցուն. «...Այլ ևս զգոյշ եղէք, եթէ ճշմարիտ հաւատս և զառաջնորդութիւնն Հռովմայ սուրբ աթոռոյս, և զխաբէութիւնսն հակառակորդացն վկայեն և բացահայտեն ինքեանք սուրբ հարքդ և վարդապետք, գիրքդ, մատենիք և ճառընտիրք եկեղեցւոյդ ձերոյ... Այլ աղերսանք և ժառութիւնն իմ առ ձեզ է միայն վասն ձերոյ հոգևոր և մարմնաւոր օգտութեան, որպեսզի ի ձեռն միաբանութեանդ փրկեսջիք ոչ միայն հոգւով ի տերութենէ սատանայի, այլև մարմնով ի լծոյ անհաւատից (ընդգծումը մերն է—Մ. Զ.)»[25]։

Այսպիսով, եթե հայերը ուզում են ազատվել նվաճողների լծից, ապա պետք է քավեն իրենց նախնիների «մեղքերը», հրաժարվեն իրենց դավանանքից ու մտնեն Հռոմեական եկեղեցու ծոցը,— այս էր կաթոլիկ գաղափարախոսների նախապայմանը։ Դա «այն կախարդական շրջանակն էր, որի շուրջը պտտեցնում էին հայերին միսիոներները»[26]։

* * *

1547 թ. թուրքերի Արևելք կատարած արշավանքի նախօրեին, հավանաբար էջմիածնում, Ստեփաննոս Սալմաստեցի կաթողիկոսի մոտ տեղի է ունենում հատուկ խորհրդաժողով՝ քննարկելու հայ ժողովրդի ազատագրության խնդիրները։ Խորհրդաժողովին բացի եկեղեցականներից մասնակցում էին նաև հայ իշխանները։ «Սխալ չպիտի լինի ենթադրել,— գրում է Աշ. Հովհաննիսյանը,— որ խոսքը ոչ միայն հայ մելիքների, այլև հայ խոջաների ու «դովլաթավորների» մասին կարող էր լինել։ Սրանց մասնակցությունն այդ ժողովին ակնհայտ է թեկուզ այն փաստից, որ պատվիրակությունն սկսելու էր իր գործունեությունը Վենետիկից, քաջ համոզված, որ, ինչպես գրում էին հանրապետությանն ուղղած իրենց աղերսագրի մեջ հայ «իշխանները» «թեպետ հեղինակութեան առաքելոցն Պետրոսի՝ Հռոմ քաղաքն է գերիշխան», սակայն Վենետիկն է «բանալի և փականք բովանդակ քրիստոնեութեան»[27]։

Ստեփաննոս Սալմաստեցին ժամանակի ամենակրթված անձնավորություններից մեկն էր։ Երկար տարիներ Կ. Պոլսում ապրելու պատճառով կոչվում էր նաև Պոլսեցի[28]։ Նա «Այր իմաստուն և գրասեր» էր, «հմուտ բազում գիտութեանց», որոնց թվում՝ լատիներենն ու պարսկերենը։ Եղել էր հայ գաղութներում, շրջագայել էր մի շարք երկրներ մինչև «յերկիրն լեհաց և Մոսկովաց» ու, հետևաբար, «առեալ էր զտեղեկութիւն բազում իրաց»[29]։ Լեոյի հավաստիացումով, նա քաջածանոթ էր Արևմտյան Եվրոպայի քաղաքական տրամադրություններին ու հանգամանքներին[30]։

Անշուշտ, հայ կաթողիկոսները ձգտում էին, նախ և առաջ պաշտպանել էջմիածնի ու հայ եկեղեցու գերագույն շահերը, որոնք տևական պատերազմների հետևանքով վտանգի էին ենթարկվում։ Սակայն, պաշտպանելով հայ եկեղեցու շահերը, նրանք փաստորեն նպաստում էին հայ ժողովրդի օտար տիրապետությունից ազատագրվելու գործին։ Պետք է նշել նաև այն, որ կաթողիկոսներից ոմանք տոգորված էին նաև հայրենասիրությամբ ու նրանց խորապես հուզում էր հայ ժողովրդի ճակատագիրը[31]։ Ստ. Սալմաստեցու կաթողիկոսությունը համընկնում էր, ինչպես արդեն տեսանք, հայ ժողովրդի ծանր, հուսահատական օրերին։

Էջմիածնի խորհրդաժողովը որոշեց Արևմտյան Եվրոպա ուղարկել մի պատվիրակություն Ստեփաննոս Սալմաստեցու գլխավորությամբ՝ Հայաստանի ազատագրման հարցի շուրջ բանակցություններ վարելու։ Իրեն աթոռակից դարձնելով Միքայել Սեբաստացուն ու կաթողիկոսական գործերը նրան հանձնելով, Ստեփաննոս Սալմաստեցին 1548 թ. ճանապարհ ընկավ դեպի Կ. Պոլիս։ Մ. Զամչյանը, անշուշտ, իրավացի չէ, պնդելով, թե նա առժամանակ մեկուսանալու նպատակով էր գնում

---

[24] *Della Vallé*, t. II, p. 320.

[25] Հ. Ս. Անասյան, *XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում*, էջ 49։

[26] *Г. А. Эзов*, Сношения Петра Великого с армянским народом. Документы, СПб., 1898, с. XIX.

[27] Աշ. Հովհաննիսյան, *Դրվագներ...*, հ. Բ, էջ 27։

[28] Մ. Օրմանյան, էջ 2237։

[29] Մ. Զամչյան, էջ 517։

[30] Լեո, *Հայոց պատմություն*, հ. Գ, էջ 187։

[31] Համանման դեր Բալկաններում կատարում էր ուղղափառ եկեղեցին, պաշտպանելով սլավոն ժողովուրդների շահերը թուրքերի դեմ (տե՛ս Ladislav Hadrovicz, Le peuple serbe et son église sous la domination turque, pp. 11—25)։

Եվրոպա։ «Նեղեալ յոյժ ի դառնութենէ ժամանակին և ի բռնութենէ օտար ազգաց խորհեցաւ մեկուսանալ անտի զժամանակ ինչ»[32]։

Կ. Պոլսի վրայով կաթողիկոսը մի արքեպիսկոպոսի ուղեկցությամբ մեկնում է Վենետիկ և Վենետիկյան հանրապետությանն է ներկայացնում հայ իշխանների «Աղերսագիրը» ("Supplica delli signori Armeni"):

Այդ աղերսագրի բովանդակությունը բերում է Ղ. Ալիշանը[33]։ Վենետիկյան հանրապետության երկար փառաբանումից հետո աղերսագրի հեղինակները գրում են. «Եւ մեք խեղճ Հայքս ի մասին Պարսից ի ներքոյ խիստ տառապանաց այլազգէնից, կու սպասեմք ձեր գալուն, ինչպես սուրբ նախահարքն սպասէին փրկչին Քրիստոսի։ Գիտեմք, որ ի զգօնութենէ տէրանց Վենետաց պիտի մեր փրկութիւնն և ազատութիւնն։ Կուղարկեմք մեր պատրիարքն Ստեփանոս, շատ պատճառանաց համար, առ մեծապայծառ տէրութիւն ձեր և մեր կողմանէ յանձնէ զմեզ առ ձեզ, և հետո շնորհ ընէք իրեն որ կարենա երթալ և համբուրել զոտս ամենասրբազան պապին»[34]։

Կաթողիկոսի՝ Հռոմ ուղևորությունը համընկնում էր 1550 թ. կաթոլիկ եկեղեցու հոբելյանական տարուն։ Հենվելով այս փաստի վրա, Մ. Չամչյանը կաթողիկոսի դեպի Հռոմ առաքելությունը փորձում է մեկնաբանել կրոնական բնույթով։ Ըստ նրա, կաթողիկոսը նպատակադրվել է «երթալ յուխտ սրբոյն Պօղոսի ու Պետրոսի»։ Վկայակոչելով կաթոլիկ հոգևորական Գուալտեր Արեթինուսին, Մ. Չամչյանը պնդում է, թե իբր կաթողիկոսը մեկնել է Հռոմ իր հպատակությունը հայտնելու պապին և երկու եկեղեցիներին միավորելու։ «Եցոյց Ստեփաննոս զհպատակութիւն իւր, զոր ունէր առ սրբազան պապն, և զմիաձայնութիւն ի բանս հաւատոց»[35],— գրում է նա։

Կաթողիկոսը, սիրալիր ընդունելությունից հաղթահարված և նկատի ունենալով իր պատվիրակության առաջ դրված քաղաքական ակնկալությունները, ստիպված է եղել նույն տարվա օգոստոսի 2-ին գրավոր հնազանդություն հայտնել Հռոմի պապին, և, ինչպես նշում է Գուալտեր Արեթինուսը, իրեն ենթակա 27 եպիսկոպոսների անունից ընդունել է ֆլորենտյան եկեղեցաժողովի որոշումները[36]։ Սակայն այդ

32 Մ. Չամչյան, էջ 517։

33 Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, էջ 326—330։

34 Նույն տեղում։

35 Մ. Չամչյան, էջ 518։

36 Աշ. Հովհաննիսյան, Գրվագներ... հ. Բ, էջ 31։

նույն Գուալտեր Արեթինուսը, նկարագրելով իր հանդիպումները Ստ. Սալմաստեցու հետ ու նշելով, որ նա էր «Այր բարեբարոյ, գովելի քաղաքավարությամբ, իմաստուն մտօք», դառնացած ավելացնում է, որ կրոնական խնդիրներում ինքը շատ և ծանր վիճաբանություններ է ունեցել հայոց Հայրապետի ու նրա մարդկանց հետ։ Հենց իր՝ Գ. Արեթինուսի բառերով ասած. «Ես ունէի ընդ նմա և ընդ նորայսն ընդունելութիւն մեծ և ստեպ հարցեալ տեղեկանայի ի նմանէ բազում ինչ վասն անցիցն պարսիցն և թաթարաց, այլ բազում եղև և ծանր ի միջի մերում վիճաբանութիւնք ի վերայ իրաց կրօնի»[37]։

Որ Ստեփաննոս Սալմաստեցու ուղևորությունը Հռոմ հետապնդում էր քաղաքական նպատակներ, երևում է նաև Ղ. Ալիշանի հետևյալ տողերից. «Գրվածին հայերեն բնագիրը չէ հայտնված, այլ իտալերեն թարգմանություն կա, հորում կու պակսին (ցանկալի) անվանք գրողացն, այն ատենի մեծամեծաց հայոց. գուցե առանձին ծածուկ նշանակած ըլլան, վասն զի զգուշավոր գրվածքին քանի մի խոսքեն գուշակվի՝ որ քաղաքական խնդրո համար էր կաթողիկոսը զրկելնին»[38]։

Համաձայն Գ. Արիթինուսի, կաթողիկոսը 1550 թ. Հռոմից մեկնում է Գերմանիա՝ Կարլ V կայսեր մոտ, որպեսզի այնտեղից էլ Լեհաստանի ու Ռուսաստանի վրայով վերադառնա հայրենիք։ Կաթողիկոսի՝ Կարլ V կայսեր հետ վարած բանավարությունների մասին առայժմ ոչ մի տեղեկություն հայտնի չէ։ «Վիեննայի պետական դիվանը որևիցէ հիշատակարան չէ պահպանած այս մասին, որչափ քննությունքս համոզեցին զիս»[39],— գրում է Ն. Ակինյանը։

Պարզ է, որ Կարլ V-ը զբաղված լինելով մի կողմից Թուրքերի դեմ պաշտպանական պատերազմներով, մյուս կողմից՝ լութերականների դեմ պայքարով, չէր կարող միջոցներ հատկացնել Ստեփաննոս Սալմաստեցու ծրագրերը իրագործելու համար։

Համաձայն Մ. Չամչյանի, կաթողիկոսը Գերմանիայից անցնում է Լեհաստան և այնտեղից Ռուսաստանի վրայով վերադառնում հայրենիք ու գահակալում ևս մի քանի տարի։

Ուսումնասիրողների մեծ մասը հակված են ենթադրելու, որ կաթողիկոսը 1551 թ. մահացել է Լեհաստանում ու այնտեղ էլ թաղված է։ Լեհահայ տարեգրություններից մեկում գրված է. «Ի թվին հայոց ՌԱ

37 Մ. Չամչյան. էջ 518։

38 Ղ. Ալիշան. Հայ-Վենետ, էջ 325։

39 Ն. Ակինյան. Ազատության շարժումներ ԺԵ—ԺԶ դարուն հայոց մեջ, «Հանդես ամսօրյա», 1918—1919, № 11—12, էջ 147։

(1552) հունվար 14. Տր. Ստեփանոս կաթողիկոսն եկն ի Փռանգստանէն ի Լով քաղաքն վախճանեցաւ»[40]։ 1555 թ. Լվովում գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Դարձեալ աղաչեմ աղօթից մի մոռանայք զԳրիգոր Վարագեցի նորաբողբոջ քաջ բարունապետն և... զուսուցիչն (իւր) զՍտեփաննոս կաթողիկոս Սալմաստեցին, որ ի Ռ (1551) թուին հայոց առ Քրիստոս փոխեցաւ յիլով քաղաքին և եդ յաթոռ եպիսկոպոսութեան իլովայ զԳրիգոր վարդապետն»[41]։

Եվ, վերջապես, Լվովի հայոց եկեղեցու բակում կա մի տապանաքար, որի վրա կաթողիկոսը պատկերված է լատին եկեղեցու տարազով։ Հ. Ս. Անասյանը գտնում է, որ այս տապանաքարը կեղծիք է, մի կեղծիք, որ կատարված է XVII դարի երկրորդ կեսում Հռոմից Լեհաստան ուղարկված՝ պրոպագանդայի լատին գործակալների և կամ նրանց հայազգի գործակիցների ձեռքով, որպեսզի կաթողիկոսը կաթոլիկացված ներկայացվի բռնի դավանափոխության ենթարկվող հայերին[42]։ Աշ. Հովհաննիսյանը համամիտ է այս կարծիքին։ «Հավանական է,— գրում է նա,— որ տապանաքարը պատրաստված լինի ոչ թե XVI, այլ XVII դարում, երբ լեհահայերը լատինադավություն ընդունեցին և տրամադիր էին Լվովում մեռած կաթողիկոսին հրամցնել իբրև կաթոլիկադավանի»[43]։ Համենայն դեպս, գերեզմանաքարի վրա կա հետևյալ արձանագրությունը. "Hoc sepulcrum est reverendissimi PATRIS STEPHANI patriarchae majoris Armeniae qui Romae fuit et Leopoli adveniens animam suam deo tradidit A. D. 1551", այսինքն՝ «Այս է տապան սրբազան հօրն Ստեփաննոսի, Հայոց Մեծաց պատրիարքի, որ գնաց ի Հռովմ և եկեալ ի Լէոպոլիս փոխեցաւ առ Աստուած յամի տեառն 1551»[44]։

Կարևորն այստեղ, Ստեփաննոս Սալմաստեցու մահվան տարեթիվը որոշելը չէ, այլ այն, որ նա, լինելով հայ ազատագրական մտքի նշանավոր ներկայացուցիչներից մեկը, հետագայի գործիչների վրա թողեց մեծ ազդեցություն։ Ազատագրական դեգերումներն, հետագայում, սերտորեն առնչված են նրա անվան հետ։

40 Ղ. Ալիշան, Կամենից, Վենետիկ, 1896, էջ 19։

41 Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 454—5. հմմտ. Հ. Ս. Անասյան, Դիտողություններ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրության վերաբերյալ, «Էջմիածին», 1956, № 8—9, էջ 97։

42 Հ. Ս. Անասյան, Դիտողություններ..., «Էջմիածին», 1956, № 8—9, 11—12։

43 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. Բ, էջ 33։

44 Հ. Ս. Անասյան, Դիտողություններ..., «Էջմիածին», 1956, № 8—9, էջ 93—96։ Գրաբար թարգմանությունը Հ. Ս. Անասյանինն է։

Մեկնելով հայրենի Սեբաստիա քաղաքը, Միքայել Սեբաստացի կաթողիկոսին զբաղեցնում էր այն միտքը, թե ինչպես պետք է շարունակել իր նախորդի սկսած գործը։ 1562 թ. Սեբաստիայում նա գումարեց մի նոր գաղտնի խորհրդաժողով, որը որոշում ընդունեց Հայաստանի վիճակը բարվոքելու նպատակով Արևմուտք ուղարկել մի նոր պատվիրակություն։ Այս անգամ կաթողիկոսի փոխարեն կաթոլիկ Եվրոպա մեկնելու համար առաջ քաշվեց տոհմիկ անձնավորություն, Թոխատեցի Աբգար դպիրը, որը հետագայում հայտնի դարձավ որպես հայ նշանավոր տպագրիչներից մեկը։

Աբգարը վայելում էր արքայական ծագում ունեցողի համբավ ու մեծ կշիռ ու ազդեցություն ունեցող անձնավորություն էր։ Աբգարի որդին՝ Սուլթանշահը, մի գրության մեջ հայտնում է, որ իր հայրը սերում է Սենեքերիմ Արծրունու տոհմից, իսկ մի այլ տեղ հանդես է գալիս որպես Տրդատ Արշակունու և Գագիկ Բագրատունու բարունակ[45]։ «Ուղիղ թե սխալ,— գրում է Աշ. Հովհաննիսյանը,— այդ չէ կարևորը, ժամանակակիցները ըստ երևույթին համոզված էին հավատացած լինել Աբգարի բարձր ծագման վերսիաներին, և դա հենց, անձնական մյուս բարեմասնություններից անկախ, վճռական դեր պիտի կատարած լիներ նրան իբրև պատվիրակի հրապարակ քաշելու համար»[46]։

Ի տարբերություն նախորդ ծրագրի, Միքայել Սեբաստացու ծրագիրը ավելի լայն էր ու ընդգրկում էր ինչպես Արևելյան, այնպես և Արևմտյան Հայաստանի քաղաքական շահերը, այլ կերպ ասած, ուղղված էր ինչպես թուրքերի, այնպես էլ սեֆյանների դեմ։ Այստեղ այլևս խոսք չի կարող լինել հայերի՝ սեֆյանների նկատմամբ կողմնորոշման մասին։ Եթե հայկական որոշ ձեռագրերում հիշատակվում են Շահ Իսմայիլի հայերի նկատմամբ ունեցած բարյացակամության մասին, ապա Թահմասպ I-ի ժամանակաշրջանից բացի կրզլբաշների կատարած վայրագություններից այլ հիշատակություն չի մնացել։ «Սեբաստիայի ժողովը, — գրում է Լեոն,— նշանավոր է այն կողմից, որ նա ցույց էր տալիս, թե ձգտումը դեպի քաղաքական ազատության միայն արևելյան հայությանը չէր հատուկ Պարսկաստանի սահմաններում, այլ հավասարապես և արևմտյան հայության, որ ապրում էին օսմանյան տիրապետության տակ»[47]։

45 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. Բ, էջ 40։

46 Նույն տեղում։

47 Լեո, Հայոց պատմություն, հ. Գ, էջ 190։

Թե ինչ խնդիրներ էին դրված Աբգարի պատվիրակության առաջ, թվարկում է Սուլթանշահը. «նախ՝ զի յիշեցուցէ զառաջին դաշինս և զառաջին երդմունքն», այսինքն՝ վերանորոգել «Դաշանց թուղթը», երկրորդ՝ «զմիտս Հռոմայեցւոց թէ որպիսք կան ընդ հայս», երրորդ՝ «զի յոժարեցաւ... ի վտարանդեալ հայոցս» (հավանաբար, այստեղ խոսքը վերաբերում է հայ գաղթականներին) և չորրորդ՝ «Միջնորդ լինել ի ճանապարհորդել հայրապետացն մերոց ի Հռոմ»[48], այսինքն, նախապատրաստել էջմիածնի ու Սսի հայոց կաթողիկոսների այցը Հռոմ։

Նախքան Հռոմ մեկնելը, Աբգարի պատվիրակությունը մինչև 1564 թ. աշունը մնաց Վենետիկում։ Ամենայն հավանականությամբ, Աբգարը այստեղ Վենետիկյան հանրապետության ղեկավարության հետ շոշափում էր Հայաստանի քաղաքական ազատագրության հեռանկարները։

Անհանգստացած Աբգարի պատվիրակության ճակատագրով, Միքայել Սեբաստացին 1563 թ. ապրիլին Հռոմի պապին հղեց մի ծածկագիր թուղթ, որը բացահայտում է Աբգարի պատվիրակության քաղաքական նպատակները։ Մեզ է հասել այդ գրության լատիներեն թարգմանությունը. «Գրութիւն լիցի ձերումդ սրբութեան, զի յամի տեառն 1562-ի քսաներորդ աւուր ամսեանն մայիսի՝ Ես Միքայել կաթողիկոս առաքեցի ի քաղաքէն Սեբաստիոյ առ ոտս ձեր զԱբգար դեսպան մեր երկու թղթովք՝ մին՝ յընծայութիւն հպատակութեան սրբութեանդ յանուն մեր ամենեցուն և միւսն՝ առ ի վկայութիւն անձին պատգամաւորի... խնդրելով զի հաստատեսջիք և նորոգեսջիք զկոնդակն զայն, զոր երբեմն ամենաերջանիկն և բարեհիշատակն Սեղբեստրոս պապ և սուրբն Կոստանդինաւնոս կայսեր էր արքայիւ մերում Տարգատայ և սրբոյն Գրիգորի առաջնոյ պատրիարքի և կաթողիկոսի մերոյ, և աղաչիմք հաստատել զնոյն և առ մեզ յուղարկել, նորոգելով զվաղեմին զայն բարեկամութիւն ի մէջ մեր, որպէսզի եղիցի մի հոտ և մի հովիւ, որով և ընդ հուպ իցէ մեզ ակն ունիլ ազատութեան ի գերութենէ ասի ձերովդ սատարութեամբ... Այլ ձեռք մեր ամփոփեալ են և լեզուք մեր կարկեալ ի մէջ այլակրօնից, որոյ վասն իսկ ոչ գիր նամակի և ոչ ընծայս նուիրաց արժանի ձերումդ սրբութեան մարթ է մեզ եղել։ Եւ երկիւղ պաշարեալ է զմեզ ոչ միայն յարտաքնոց, այլ և

48 «Հանդէս ամսօրյա», 1906, էջ 323։

ի շար քրիստոնէից... եւ արդ՝ եթէ այն մեր դեսպան այդր ժամանեալ իցէ, նա ինքն եղիցի որպէս բերան մեր»[49]։

Կաթողիկոսի գրությունը հետաքրքրեց պապին ու նա հրամայեց փնտրել Աբգարին ու հրավիրել Հռոմ։ Պապի տված հարցերին, Աբգարն իր մասին տալիս է հետևյալ տեղեկությունները, որը թարգմանաբար բերում է Գալեմքյարյանը. «Անունս Աբգար, հայազգի, ծնած եմ քաղաք մը, որ կը կոչվի Թոխատ, կղերական եմ և գպիր, Հռոմ եկա, վասն զի տասը տարի առաջ ուխտ ըրած էի գալու և իմ մեծ որդիս բերելու, որպեսզի կաթողիկէ վարդապետությունը սորվի, բայց որդիս մեռաւ, և այս պատճառով ուշացա այս շափ ատեն՝ որպէս զի կարենամ իմ Սուլթան անուն որդիս բերել, որ հիմա հետս է այստեղ։ Մեր պատրիարքն իմանալով բաղձանքս, խնդրեց ինձմէ, որ ինքը շատ գոհ պիտի ըլլա՝ եթե իրեն անվամբ Հռոմ գամ, որով կրնամ նաև կատարել իմ ուխտս, և այսպես ալ եղավ»։ Իրեն Հռոմ ուղարկող կաթողիկոսի մասին տրված հարցումին Աբգարը պատասխանում է. «Միքայել է անունը, կը նստի էջմիածին, պարսից իշխանության մեջ և ինձի անձնապես հանձնեց նամակ մը, որ տամ նորին սրբության, և պաշտոն տվավ՝ որ հանուն յուր և բովանդակ ազգին, որ իր իշխանության տակ է, մատուցանեմ հպատակություն նորին սրբության, ինձ հանձնեց օրինակն այն արտոնագրին, զոր տված են ս. Սեղբեստրոս և Կոստանդիանոս կայսրը մեր Տրդատ թագավորին և ս. Գրիգոր Լուսավորչին, մեր առաջին պատրիարքին, սույն արտոնագիրը վերստին հաստատելու և նորոգելու համար այն բարեկամությունը, որ նշանակված է արտոնագրին մեջ, հռոմեական եկեղեցվո հետ։ Պատրիարքը Սեբաստիա եկավ երեք տարի առաջ, և քաղաքիս ս. Աստվածածին եկեղեցվո մեջ խոսակցեցավ շատ եպիսկոպոսներու, վարդապետներու և ուրիշ պատրիարքի մը հետ, և այսպես խորհուրդ կազմեցին և հասարակաց միաբանությամբ որոշեցին նաև հանուն ուրիշ շատերու, որոնք ներկա չէին, ինչպես կհաստատվի իրենց ստորագրություններեն, և զիս ուղարկեցին վերոհիշյալ նպատակի համար»[50]։

Այս բոլորից հետո, պապը Աբգարից պահանջում է շարադրել հայկական դավանանքի հիմնական գծերը։ Ձուլենալով այդ հարցում լիազորություն, Աբգարը պապին է ներկայացնում 1564 թ. նոյեմբերի 8-ի թվակիր մի գրություն այդ հարցի շուրջը, որի մեջ համեմատելով

49 Նույն տեղում։

50 «Հանդէս ամսօրյա», 1912, էջ 387։

հռոմեական եկեղեցին «արևի», իսկ հայկականը՝ «ճրագի» հետ, Աբգարը հայտնում է պապին, որ եթե կաթոլիկ Եվրոպան հայերին ռազմական օգնություն ցույց տա, ապա, իր կարծիքով, հայերը պատրաստ կլինեն ընդ ամենայնի ենթարկվել նրան։ Ահա Աբգարի հայտարարության այդ մասը համաձայն Մ. Չամչյանի. «Այս է հաւատք, խոստովանութիւն, պահք և աղօթք մեր ամէնէցուն, այլ ի ժամանակի աստ յաւուրս տառապանաց և նեղութեանց և անհնարին անձկութեանց հանդէսի մեր նուազեալ են, զի թէ յայտնապէս քարոզեսցուք ի լուր այլազգէնից, ի հուր արկանեն մեզ. բայց թէ հաճեսցի Աստուած՝ զի զերծեսցուք ի գերութենէ աստի, զոր ինչ է հրաման տաջիք՝ ի գլուխ մեր եղիցի, զի յառաջիկայս ժամանակի ոչ գոյ մեր՝ ոչ սուր և գաւազան իշխանութեան։ Եթե դուք ուղղել կամիցիք ի մերայոց յանցաւորաց՝ և ստիպել ի զգաստութիւն ըմբոստացեալ այնպիսւոյն՝ անկանի ի հաւատոց»[51]։ Աբգարը, նախքան հայկական դավանանքի մասին խոսելը, հայտարարել է պապին, թե «Մեք Հայք՝ որք ի ստրկութեան եմք ընդ իշխանութեամբ Թուրքաց և պարսից» ("Nos Armeni qui in captivitate sumus sub potestate Turcarum et Persarum") մի հանգամանք, որն ավելորդ անգամ ընդգծում է այն, որ հայերի քաղաքական առաքելությունը Եվրոպա ուղղված էր Թուրք ու պարսիկ տիրապետության դեմ։

Հռոմի պապը հավանություն տալով Աբգարի այս բացատրությանը, թույլատրեց նրան վերադառնալ Հայաստան հետագա բանակցությունների համար կաթողիկոսին Հռոմ հրավիրելու։ Համաձայն Սուլթանշահի, «ի նմանէ թագաւորաղն երկիր առ իս. և այժմ փառաւորեալ իբր արքա առաքեմ զքեզ առ պատրիարքն զի բերեսցես զնա առ մեզ»[52]։

Աբգարը հապաղեց Հռոմում՝ ձեռնամուխ լինելով Վենետիկում հայերեն «Սաղմոսի» տպագրության գործին։ Նրան հայտնի էր դարձել, որ Թուրքերը կասկածել են իր առաքելության նպատակի վրա, ուստի «Սաղմոսի» հրատարակությունը արդարացուցիչ հանգամանք պետք է լիներ նրա համար[53]։ Եվ հիրավի, երբ նա Կ. Պոլիս վերադարձավ ու կալանքի ենթարկվեց կառավարության կողմից, ապա այդ հանգամանքը օգնեց նրան շուտով ազատ արձակվելու։ 1567 թ. նա Կ. Պոլսում տպարան հիմնեց ու հրատարակեց մի շարք գրքեր։ 1569 թ. նա

51 Մ. Չամչյան. էջ 522 և հետ։

52 «Հանդէս ամսօրյա», 1906, էջ 324։

53 Նույն տեղում։

մեկնում է Էջմիածին՝ կաթողիկոսին զեկուցելու Հռոմ կատարած իր քաղաքական առաքելության մասին։ Նա մահանում է 1572 թվականին, փաստորեն անավարտ թողնելով իր ստանձնած գործը։

Կաթոլիկ աշխարհից ակնկալություններ էին սպասում նաև Սսի կաթողիկոսները։ 1575 թ. Սսի Խաչատուր կաթողիկոսը Գրիգոր XIII պապին հղած նամակում, ակնարկելով «Դաշանց Թուղթը», օգնություն էր հայցում Հռոմից։ «Ծանուցում լինի վեհ իմաստութեան քո,— գրում է Խաչատուր կաթողիկոսը,— հոգևոր Տէր, երբ քո եպիսկոպոսն ու վարդապետն առ մեզ նամակաւ եկին, փարատեցաւ սուգն ու տխրութիւն ի սրտից մերոց։ Որպէս ի ծագել արեգականն փարատի խաւարն աշխարհէս, այնպէս փարատեցաւ տրտմութիւնն և իբրև զառաքեալ ի տէր ընկալաք եպիսկոպոսն, և վարդապետն քո, բայց ոչ իշխեմք խօսել, զի զամենայն ի սուր կու քաշեն։ Բազում անգամ խորհուրդ է արարեալ, թէ սուր ի վէրայ քրիստոնէից դնենք, ով չի դառնա՝ կտրեն։ Ծանիցէ վեհ իմաստութիւն քո, ես ծերացայ, մեր հոգևոր որդին Աղաբիա բաբունապետն Աստուծոյ և քեզ յանձն եղիցի»[54]։

Հիրավի, Խաչատուր կաթողիկոսից հետո Աղաբիա Ջուղայեցի կաթողիկոսը շարունակում է բանավարությունները Հռոմի պապի հետ՝ ակնկալելով ռազմական օգնություն ու պատրաստակամություն հայտնելով ընդունելու կաթոլիկ դավանանքը։ 1584 թ. Գրիգոր XIII պապին հղած նամակում, Աղաբիա կաթողիկոսը բացահայտում է հայ ժողովրդի դժբախտ ճակատագիրը օսմանյան տիրապետության տակ. «եմք իբրև զմի այգի առանց պարսպի և պահնորդի ցրուեալք աստ և անդ, և եմք զետ ոչխար ի մէջ գայլոց և որպէս զգառինք ի մէջ առիւծոց, և ամենքին եմք գերի ի ներքոյ անողորմ տէրանց, որք վասն մերոց ամենայն օր տանջեն և շարչարեն զմեզ ագահութեամբ և ոչ կըշտանան բնաւ զի անանկ և աղքատ եմք և ոչ կարեմք շարժել քայլ մի առանց երկիւղի մեծ փորձանաց»[55]։

Թե ինչ արդյունքներ տվեցին արված դիմումներն ու բանավարությունները կաթոլիկ աշխարհի միջնաբերդի հետ, դիպուկ ձևակերպում է Աշ. Հովհաննիսյանը. «Հնազանդության իրենց թղթերով հայ կաթողիկոսները ենթադրում էին Մահմեդի սրից հալածված հայ եկեղեցու

54 «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ», հ. 2, էջ 1201 և հետ։

55 Ա. Պարեյան. Պատմութիւն կաթուղիկէ վարդապետութեան ի Հայս, էջ 309։

ու ժողովրդի համար ապահովել պապական գավազանի եռանդուն միջամտությունը։ Սակայն խոստումնառատ պապերը շարունակ հանդես էին գալիս անվճարունակ պարտապանների վիճակում»[56]։ Մի այլ տեղ, անդրադառնալով «Դաշանց թղթի» կրկին ասպարեզ դուրս բերելու քաղաքական դրդապատճառներին, հայերի ակնկալությունների ու եվրոպական դիվանագիտության բուն նպատակների մասին, Աշ. Հովհաննիսյանը իրավացիորեն գրում է. «Աբգարի պատվիրակությունը... մի փորձ էր՝ հրահրելու հայոց պատմության նախաբեմից հետ քաշված հին խնդիրը։ Հարց էր հարուցվում իսլամի դեմ կազմակերպելիք համաքրիստոնեական արշավանքի միջոցով վերականգնել ոչ միայն հայերի քաղաքական անկախությունը, այլև նրանց համազգային եկեղեցական միությունը։ Ուստի հարկ եղավ վերհիշել «Դաշանց թուղթը», հուզել փաստապես հայ-հռոմեական անգո դաշինքի «վերանորոգության խնդիրը»[57]։

Իսկ «ամենաքրիստոնյա» կաթոլիկ պապերից ոմանք իրականում ամենևին էլ շահագրգռված չէին հայերի պատճառով Թուրքերի հետ ստեղծելու քաղաքական լարված վիճակ։ Նրանք, ընդհակառակը, մինչև իսկ ձգտում էին Հաբսբուրգների կայսրության ու Վենետիկյան հանրապետության դեմ պայքարում օգտագործել օսմանյան պետության ռազմական հզորությունը։ «Խոսք չի կարող լինել այն մասին,— եզրակացնում է Աշ. Հովհաննիսյանը,— թե սեփական ժողովուրդների ազատությունները ոտնահարող եվրոպական Արևմուտքը մտահոգված էր ազատություն նվաճելու Իրանում կամ Թուրքիայում տառապող քրիստոնյա ռայայի համար և գեթ խաղաղություն բերելու սրանց»[58]։

* * *

XVII դարի 50—60-ական թվականներին Թուրքիայի լուծը թոթափելու նպատակով ձեռնարկված ազատագրական դեգերումները նոր փուլ են թևակոխում։ Այդ ազատագրական շարժումների պատմությանը, ինչպես նշվեց, հատուկ ուսումնասիրություն է նվիրել Հ. Ս. Անասյանը։ Աշխատության մեջ կարմիր թելի նման ընդգծված է

56 Աշ. Հովհաննիսյան Գրվագներ..., հ. Բ, էջ 48։

57 Նույն տեղում, էջ 54։

58 Նույն տեղում, էջ 56։

եվրոպական պետությունների և մասնավորապես Լուդովիկոս XIV-ի հետամտած գաղութատիրական ու նվաճողական ձգտումները։

Չնայած հայ ազատագրական միտքը վաղուց ի վեր ակնկալում էր օգնություն հյուսիսից՝ Ռուսաստանից, այսուհանդերձ, XVII դարում հայերի ազատագրական ակնկալությունները հիմնականում կապված էին «ոչ թե բացառապես կամ առաջին հերթին Ռուսաստանի, այլ Մերձավոր Արևելքում քաղաքական նպատակներ հետամտող եվրոպական պետությունների, և սրանց թվում նաև Ռուսաստանի հետ»[59]։

XVII դարի 50—60-ական թվականների հայ-եվրոպական նոր բանավարությունների համար հիմք է ծառայել եվրոպական պետությունների Թուրքիայի դեմ 1645-ից մինչև 1669 թվականը մղած, այսպես կոչված, Կանդիայի պատերազմը։ Կանդիայի կամ Կրետեի պատերազմի ժամանակ, երբ նորից օրակարգի հարց էր դարձել Թուրքիայի դեմ ձեռնարկվելիք խաչակրաց արշավանքի գաղափարը, հռոմեական պապի և Ֆրանսիայի «Արև-արքայի»՝ հռոմեական եկեղեցու այդ «անդրանիկ դստեր», գործակալները պատրանքներ էին տարածում Արևելքի քրիստոնյա ժողովուրդների, ի թիվս որոնց և հայերի մեջ օսմանյան տիրապետության դեմ համատեղ հանդես գալու կոչով։ Կաթոլիկ Եվրոպայի գործակալները սերտ կապեր էին հաստատել Արևելքի երեք եկեղեցիների ղեկավարների հետ, դրանք են՝ Անտիոքի հունաց պատրիարք Մակարը, Կիլիկիայի հայոց կաթողիկոս Խաչատուր Գաղատացին և Հալեպի ասորի հակոբիկյանների կաթողիկոս Անդրեասի հետ։

Գտնվելով հռոմեական եկեղեցու գաղափարական ազդեցության տակ, Խաչատուր Գաղատացի կաթողիկոսը 1663 թ. փետրվարի 12-ի թվակիր մի նամակում՝ ուղղված Լուդովիկոս XIV-ին, օգնություն է հայցում «Արև-արքայից»։ Նա գրում է. «Բացի այդ, բարձրյալն աստված թող ձեզ օրհնի այնպիսի օրհնությամբ, որ ոչ ոք չկարողանա խլել ձեզանից, և ձեր սրտի մեջ ներշնչի հավատի զգացումները՝ ազատելու համար բոլոր քրիստոնյաներին և հատկապես մեր խեղճ ազգին, որպեսզի կարողանանք երջանկությունն ունենալ ճշմարիտ հավատի և հոգու անդորրության մեջ փակելու մեր աչքերը»։ Իսկ այնուհետև շարունակում է. «Հույս և հավատ ունենք, որ ձեր օրհնյալ ձեռքերով կկատարվի մեր փրկությունը»[60]։

59 Աշ. Հովհաննիսյան. Գրվագներ..., հ. Ա, էջ 216։

60 Հ. Ս. Անասյան. XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 98։

Հետագայում, Կիլիկիայի հայոց կաթողիկոսը երկու անգամ մեկնում է Կանդիա՝ հետամուտ լինելու հայոց ազատագրական ձգտումներին։ «Փաստն այն է, —գրում է Հ. Ս. Անասյանը,— որ Կիլիկիայի հայոց խաչատուր Գաղատացի կաթողիկոսը 1668 թ. Կանդիա էր գնացել վենետիկյան ընդհանուր հրամանատար Ֆրանչեսկո Մորոզինիի մոտ... և այս առիթով Մորոզինիին Կիպրոսից նվեր էր տարել Ս. Մամասի մարմինը... Խաչատուր Գաղատացու նմանօրինակ մի այցելությունը հիշատակվում է նաև 1657 թ., երբ Կանդիայում նա հանդիսավորապես պատարագել է հիշյալ Մորոզինիի և Մարկիզ Վիլլայի (Villa) ներկայությամբ ու վերջինիս նվիրել Սեբաստիայի Քառասուն-Մանուկներից Ս. Նիկողայոսի աջը, ինչ որ ցույց է տալիս, թե հայերն արդեն երկար ժամանակից ի վեր կապեր ունեին Կանդիայի վենետական ղեկավարության հետ, դեռ Մահտեսի Մուրատի 1666 թ. առաքելությունից առաջ»[61]։

Ուրեմն, արևմտահայ մի հատվածի գլուխ կանգնած Կիլիկիայի հայոց կաթողիկոսը իր հույսն ամբողջությամբ կապել էր Կանդիայի պատերազմում եվրոպացիների հաղթանակի հետ։ «Կանդիայի քսանհինգամյա պատերազմը,— այնուհետև կարդում ենք Հ. Ս. Անասյանի մոտ,— իր ժամանակին թվացել էր մի հուսատու փարոս, որին ձգտել էին ազատագրության ծրագրեր մշակող արևմտահայ ղեկավարները։ Սուլթանական բռնակալ պետության դեմ տարվող օրհասական այդ կռիվը հայերի և առհասարակ արևելյան ստրկացված քրիստոնյա ժողովուրդների կողմից վճռական հանգրվանն էր համարվել այն դարավոր պայքարի, որ քրիստոնյա Արևմուտքը, ինչպես հավատում էին նրանք, մղում էր մահմեդական Արևելքի դեմ «հանուն քրիստոնեության հաղթանակի» և «հանուն Արևելքի քրիստոնեության ազատագրության»[62]։

Քննադատելով Հ. Ս. Անասյանի հայտնած այս կարծիքը, Հ. Սիրունին, թվում է մեզ, թույլ է տալիս չափազանցություններ նշելով, որ «... ոչ մեկ աղբյուր ունինք նման հայկական աջակցություն մը կարենալ ապացուցանելու համար քրիստոնեական դատին՝ հանուն Կրետեի համար մղված կռիվներուն մեջ, ոչ իսկ նման աջակցություն մը ենթադրելու համար։ Փոխարեն՝ գիտենք որ հայեր կային Կրետեի դեմ գործող Թուրք բանակին մեջ և անոնց միջնորդությամբ է, որ Թուրք հրամանատարը Կրետեի մեջ եկեղեցի մը կղիչ հայոց»[63]։ Որ հայերի ազատագրական **ակնկալությունները կարող էին կապված լինել Կանդիայի պատերազմի հետ**, ինչպես իրավացիորեն գրում է Հ. Ս. Անասյանը, **ապացուցվում է թեկուզև հայերի՝ Հայր Օտտոմանի հետ ունեցած բանավարություններով, որոնց անդրադառնում է նաև Հ. Սիրունին։**

Ո՞վ էր Հայր Օտտոմանը[64], որը միջազգային կյանքում տեղիք էր տվել մեծ աղմուկի։ Դոմինիկյան այս կրոնավորը սուլթան Իբրահիմի (1640—1648) կարծեցյալ որդին էր, որին վերապահված էր էական դեր խաղալու Օսմանյան **կայսրության դեմ** ծրագրված խաչակրության մեջ՝ **գործիք դառնալով կայսրության թշնամի պետությունների** ձեռքին։ Համաձայն Թուրքական աղբյուրների, Հայր Օտտոմանը (Օսմանը) ծնվել է սուլթան Իբրահիմի Զաֆիրա ստրկուհուց։ Սուլթանը արտակարգ սեր է տածել դեպի այս ստրկուհին, որն առաջ է բերել վալիդե-սուլթանուհու նախանձը։ Սուլթանը ստիպված կարգադրել է Զաֆիրային ու որդուն տեղափոխել Եգիպտոս։ Ուղևորության ընթացքում, 1644 թ. սեպտեմբերի 28-ին, սուլթանի հարճն ու զավակը գերի են ընկնում Մալտայի ասպետների ձեռքը, որն էլ առիթ է ծառայում 25 տարի տևած Կրետեի պատերազմին[65]։ Այս երեխան Մալտայի դոմինիկյան վանքում ստանալով կաթոլիկ դաստիարակություն՝ դառնում է Հայր Օտտոման և որպես խրտվիլակ առաջ քաշվում միջազգային քաղաքական ասպարեզ։

Եվ ահա, ինչպես այդ մասին վկայում է Հայր Օտտոմանի կենսագիր Հայր Բուլգարինին, գալով Փարիզ այս արկածախնդրին է դիմում բաղիշեցի խոջա Հաջի կամ Մահտեսի Մուրադը, առաջ քաշելով հայհունական միացյալ ապստամբության ծրագիրն՝ ուղղված օսմանյան տիրապետության դեմ։ «Այս միջոցներին,— գրում է Հայր Բուլգարինին,— Փարիզում մի հայ աղնվական, որը հանճարեղ և մեծ հաստատակամության տեր մարդ էր, եկավ Հայր Օտտոմանի մոտ՝ նրան խրա-

---

61 Նույն տեղում, էջ 129—130։

62 Նույն տեղում։

63 Հ. Սիրունի, էջ 526։

64 Հայր Օտտոմանի կյանքի և գործունեության վերաբերյալ տե՛ս *Chevalier de Jean*, L'histoire du prince Osman, fils du Sultan Ibrahim, Empereur des Turcs et frère de Mahomet IV, Paris, chez Estienne Layson, 1670: "Vie du Duc Dominique de St. Thomas, fils d'Ibrahim, empereur des Turcs", par le P. Jacques Bullet, Besançon, 1719; "Histoire des trois derniers empereurs des Turcs depuis 1623 jusqu'à 1677", traduite de l'anglois de Ricaut, t. II. Paris, 1682, p. 61.

65 *J. Hammer*, t. X, 77—79.

խուսելու համար Արևելյան Կայսրությունը վերականգնելու գործում, հանձնարարական նամակներով, որոնք գրված էին Ալեքսանդրիայի հունական պատրիարքի և նրա ընդհանուր տեղապահ Կոզմա Մավրիկ Պալեոլոգի կողմից, որը Արևելքի քրիստոնյա վերջին կայսրերի արքայական զարմից էր։ Նա (Հայը) անկարելի չէր համարում այդ բանի հաջողությունը, եթե դրանում օգնեին լատինական զինված ուժերը, հունածես պատրիարքների և եպիսկոպոսների անունից նրան վստահեցնելով, որ Հունաստանի նահանգները և Հայաստանի մեծագույն մասը, որոնք առավելապես քրիստոնյա բնակչություն ունեն և թուրքական փոքրաթիվ զորքով են պահպանված, կթոթափեն օսմանյան լուծը և թագավոր կհռչակեն նրան (Հայը Օտտոմանին)։ Նա հայտնում էր, որ Ալեքսանդրիայի պատրիարքի դիտումն էր, եթե կարողանար համաձայնության գալ հունածես ուրիշ եպիսկոպոսների հետ, շարժման մեջ դնել մոսկովցիներին, վալաքներին, եթովպացիներին (այսինքն)՝ մի ամբողջ կիսաշխարհ, Օսմանյան Կայսրության զանազան կողմերից ներխուժելու համար»[66]։

1666 թ. Փարիզ ժամանած բաղիշեցի Մահտեսի Մուրադը, Հ. Ս. Անասյանի կարծիքով, «...Հայաստանի խոջա-իշխաններին» պատգամավորն էր»[67], լիազորված մի անձնավորություն հայ խոջայության կողմից, այն խոջայության, որը «Թուրքիայի ահռելի ուժի դեմ հրապարակ գալով հայ ժողովրդի ազատագրության անունով, իր ծրագրերն իրագործելու համար հարկադրված էր դաշնակիցներ որոնել արտաքին աշխարհում, որով, պապական դիվանագիտության և ֆրանսիական կապիտալի Արևելքում ունեցած դյուրիչ ազդեցության տակ, մի կողմից առաջ էր մղում զինակից հոգևորականության սպարագլուխներին, որպեսզի նրանք կրոնական ղիջողության ճանապարհով նպաստավոր հող ստեղծեին կաթոլիկ Եվրոպայում, մյուս կողմից իր ծրագրերի ուղղակի հետապնդման համար հրապարակ էր քաշում խոջայական դասի երևելի ներկայացուցիչներից մեծ վաճառական բաղիշեցի Մահտեսի Շահմուրատին»[68]։

Չափազանցնելով արևմտահայ բուրժուազիայի (խոջայության) դերն ու նշանակությունը արևմտահայ հասարակական կյանքում և համարելով նրան արևմտահայ ազատագրական ձգտումների մղիչ

66 Հ. Ս. Անասյան, *XVII դարի ազատագրական շարժումներն...*, էջ 104։

67 Նույն տեղում, էջ 112։

68 Նույն տեղում, էջ 113։

ուժը, ինչպես դա մի ժամանակ անում էր Լեոն իր «Խոջայական կապիտալում», Հ. Ս. Անասյանը գրում է. «Արևմտահայ ազատագրական շարժման դրոշակակիրն, ուրեմն, մեծ ուժ ներկայացնող հայ բուրժուազիայի առաջավոր թևն էր, այլ խոսքով, շարժման մղիչ ուժը արևմտահայ առևտրական բուրժուազիան էր, որը մերձարևելյան առևտրի ընդհանուր վերելքի այս դարաշրջանում պետք է լուսավորեր ազգային զարթոնքի և ազատագրական ճիգերի ուղին Արևմտյան Հայաստանում»[69]։ Ինչպես երևում է, պոլսահայ արիստոկրատիան հեղինակի կողմից բաժանվում է երկու թևերի, երկու հակամարտ խմբավորումների՝ խոջաների ու չելեբիների, ըստ որում խոջաներին նա համարում է առաջադիմական, իսկ չելեբիներին՝ պահպանողական։ Չելեբիները, հեղինակի կարծիքով, հենվում էին հոգևորականության էջմիածնական հոսանքի վրա, իսկ խոջաները՝ հոգևորականության սսական կամ, այսպես կոչված, «լատինասեր» կուսակցության վրա, որը, գոնե արտաքնապես, հակում էր ցույց տալիս դեպի եկեղեցական բարենորոգումների հարցը, դրանով իսկ հույս ունենալով համաձայնության եզրեր գտնելու կաթոլիկ աշխարհի հետ։

Հ. Ս. Անասյանի այս դրույթը կազմում է այն առանցքը, որի շուրջ հյուսված է XVII դարի արևմտահայ ազատագրական շարժումներին նվիրված նրա ամբողջ տեսությունը, մի տեսություն, որը չի հիմնավորվում գիտական փաստերով։ Հեղինակը, փաստորեն, հակասում է ինքն իրեն՝ մի կողմից նշելով, որ «Օսմանյան Թուրքիան իր տնտեսական զարգացմամբ դեռևս շատ հետամնաց էր։ Թուրքական ավատական հասարակության մեջ արտադրողական ուժերի զարգացումը շատ դանդաղ էր ընթանում և նույն համեմատությամբ էլ երկար էր տևում ավատատիրության քայքայումը, որ նկատելի երևույթ էր դեռևս XVI—XVII դդ.։ Այդ պատճառով արտադրության կապիտալիստական եղանակի հաղթանակը շատ ավելի ուշ է հասունացել Թուրքիայում, քան, օրինակ, Արևմտյան Եվրոպայի որևէ երկրում»[70], մյուս կողմից, նա նշում է, թե Թուրքիան ապրում էր «Մերձարևելյան առևտրի ընդհանուր վերելքի շրջան»[71], և այդ ֆոնի վրա մեծ տեղ է հատկացնում հայ առևտրական բուրժուազիային արևմտահայ հասարակական կյանքում։

Մյուս կողմից, սխալ կլիներ նշել, որ XVII դարում Թուրքիայում առհասարակ առևտրի աշխուժացում չի նկատվում։ Սույն աշխատու-

69 Նույն տեղում, էջ 41։

70 Նույն տեղում, էջ 10։

71 Նույն տեղում, էջ 11։

թյան նախորդ էջերում սկզբնաղբյուրների ընձեռած հնարավորություններ սահմանում փորձել ենք ներկայացնել առևտրի ու առևտրական հարաբերության վիճակը Թուրքիայում ընդհանրապես, և Արևմտյան Հայաստանում՝ մասնավորապես։ Առևտրական հարաբերությունների աշխուժացումը դեռևս ընդհանուր վերելք չի կարող նշանակել։ Չի բացառված, որ Հ. Ս. Անասյանը արևմտահայ բուրժուազիա տերմինի տակ գերազանցապես հասկանում է պոլսահայ իրականությունը, պոլսահայ արիստոկրատիային։

Բնութագրելով XVII դարի Թուրքիայի տնտեսական վիճակը, Աշ. Հովհաննիսյանը նկատում է, որ «...Միջազգային առևտրի օվկիանոսային ուղիների հայտնագործումից հետո մերձարևելյան երկրները, որոնց թվում նաև Թուրքիան, XVI—XVII դդ. մտել էին ոչ թե վերելքի, այլ վայրէջքի և ճահճացման շրջան։ Հետզհետե իջնելով կապիտալիստական Եվրոպայի կիսագաղութային կցորդը դառնալու աստիճանին՝ Թուրքական ֆեոդալիզմը այդ դարերում տեղի էր տալիս տնտեսական և քաղաքական դեգրադացիայի։ Քայքայվողը ոչ թե թուրքական ֆեոդալիզմն էր, այլ եվրոպական գաղութարարների և տեղական խոշոր ու մանր ֆեոդալների առաջ նահանջող օսմանյան կենտրոնացած ռազմական պետությունը»[72]։ Այնուհետև, շարունակելով իր միտքը, նա գրում է. «Այս դարերում Թուրքիայի տնտեսությունը հանգչում էր մանր արտադրության և դրա հետ կապված ապրանքափոխանակության ու վաշխառուական կապիտալի հիմքերի վրա...» և որ «...Ապրանքա-փողային հարաբերությունները նախադրյալ էին, բայց ոչ թե նշան կամ հայտարար կապիտալիզմի։ Ոչ առևտրական և ոչ էլ վաշխառուական կապիտալը ինքյան դեռ բավարար հիմք չեն ծառայում կապիտալիզմի (կամ, որ միևնույն է, կապիտալիստական արտադրության) գոյացման համար»[73]։ Ապա՝ «Թուրք բռնակալության և ֆեոդալական անարխիայի ճիրաններում խեղդված այդ երկրում,— շարունակում է Աշ. Հովհաննիսյանը,— նպաստավոր պայմաններ չկային ապրանքա-փողային հարաբերություններից կապիտալիստական հարաբերություններին անցնելու կամ գեթ կապիտալիստական կացութաձև առաջացնելու։ Իսկ եվրոպական կապիտուլյացիաների առկայությունը և եվրոպական ինպորտի ճնշումը, ոչ միայն չէին նպաստում Թուրքիայի

72 Աշ. Հովհաննիսյան, Հ. Ս. Անասյան, «XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում», ՊԲՀ, 1963, № 1, էջ 235—248։

73 Նույն տեղում, էջ 240։

կապիտալիստական արտադրության սկզբնավորմանը, այլև ընդհակառակը, ստեղծում էին Թուրքական ֆեոդալիզմի դեգրադացման և Թուրքական ռազմաֆեոդալական կայսրության աստիճանական կազմալուծման ու անկման նախադրյալներ»[74]։

Այսքանը լավ։ Սակայն, եթե չի վրիպել մեր ուշադրությունից, Հ. Ս. Անասյանն իր մենագրության և ոչ մի էջում որոշակիորեն չի պնդում, թե Թուրքիան XVII դարում թևակոխում էր կապիտալիզմի փուլը։ Ընդհակառակը, մեջ բերելով Ֆ. Էնգելսի այն հայտնի դրույթը, թե «Թուրքական, ինչպես և ամեն մի այլ տիրապետություն, անհամատեղելի է կապիտալիստական **կարգերի հետ...», եզրակացնում է,** որ «Թուրքական այդ դիշատիչ կարգը համապատասխանում է երկրի տնտեսական հետամնացության և արգելակում Օսմանյան կայսրության ժողովուրդների ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական ու մշակութային կյանքի զարգացումը»[75]։ Այս բոլորից հետո մնում է զարմանալ, թե ինչու Հ. Ս. Անասյանը այդքան վճռական դեր է հատկացնում XVII դարի արևմտահայ իրականության մեջ առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչներին։ Անհամոզիչ են հնչում նաև Հ. Ս. Անասյանի կողմից առևտրական ու վաշխառուական կապիտալի ներկայացուցիչների միջև անջրպետ դնելու միտումը, այստեղից հեղինակի կողմից արված հեռու գնացող իր բոլոր տեսական հետևություններով հանդերձ։ Ե՛վ շելեբիները, և՛ խոջաները զբաղվում էին առավել կամ պակաս չափով և՛ վաշխառությամբ, և՛ առևտրով։ Եվ անշուշտ ոչ միայն նրանք։ Դրամապրանքային հարաբերությունների զարգացումը իր ոլորտի մեջ ներգրավել էր նույնիսկ հայ հոգևորականության վերնախավին, որը սերտորեն համագործակցում էր հայ առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչների՝ խոջաների հետ։ «Առևտրական բուրժուազիան հաճախ ասպարեզ էր դուրս գալիս,— գրում է Աշ. Հովհաննիսյանը,— որպես եկեղեցու նվիրատու ու վարկատու, որպես նրա շինարարական ու կուլտուրական ձեռնարկությունների մեկենաս։ Իր հերթին, վանական-եկեղեցական տնտեսությունները զբաղված էին իրենց հողերի ու կալվածքների, կրպակների, տների, ջրաղացների, դինգերի և այլ կարգի այլ գույքերի ու ձեռնարկների «աշխարհային» գործերով։ Վանքը հանդես էր գալիս ոչ միայն որպես կալվածատիրական ձեռնարկների կազմակերպող, այլև որպես նրանց արտադրանքի

74 Նույն տեղում։

75 Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն..., էջ 11։

վաճառահանող։ Վանք և շուկա. ուխտագնացություն և կարավանագնացություն սերտ շաղկապված են միմյանց։ Եկեղեցին սուզվում էր շուկայի նյութական հոգսերի մեջ, շուկան կարիք էր զգում եկեղեցու «հոգևոր» սպասարկման»[76]։

Այսպիսով՝ XVII դարի առևտրական կապիտալի գործունեության ոլորտի ընդլայնման պայմաններում հայ հոգևորականությունը պիտի հրաժարվեր նախկին դարերում հայ իրականության մեջ դեկը միանձնյա իր ձեռքերում պահելու հավակնությունից՝ որոշ զիջումներ անելով առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչներին։ Այսքանը միայն և դրանից ոչ ավելի։ Եվ մեր խնդրո առարկա ժամանակաշրջանում հայ եկեղեցու, ու գլխավորապես Էջմիածնի աթոռին բազմած սևազգեստ հոգևորականներն էին, որոնք ձգտում էին ինչպես միշտ տնօրինել ազգային կյանքն ու գլխավորել հայ ժողովրդի ազատագրական նկրտումները։ Այս իմաստով, դժվար է համողվել Հ. Ս. Անասյանի այն պնդման հետ, թե՝ «Մեր կարծիքով, տվյալ շրջանում ազատագրական ձեռնարկումների արևմտահայ ու արևելահայ մասերի միջև օրգանապես կապ գոյություն չի ունեցել և չէր կարող ունենալ այն պատճառով, որ այդ ձեռնարկումները նախ ուղղված էին տարբեր երկրների դեմ, մի կողմում Թուրքիայի դեմ, մյուս կողմում՝ Պարսկաստանի դեմ, երկրորդ՝ նրանք կատարվում էին քաղաքական տարբեր ուղիներով, որքան էլ այդ տարբեր ուղիները կապված լինեին Արևմուտքի հետ։ Թեև երկու ուղիներն էլ դեպի Հռոմ էին տանում, բայց դրանք քաղաքականապես հակոտնյա էին միմյանց։ Մի կողմից Եղիազար Այնթապցու և մյուս կողմից Հակոբ Ջուղայեցու միջև տեղի ունեցած այն երկարամյա պայքարը, որ արտահայտում էր արևմտահայ և արևելահայ միջավայրերի հասարակական որոշ հոսանքների բախումը, հավանաբար իր ներքին բովանդակությամբ ընթանում էին գերիշխանության այն տեվական ու համառ պայքարով, որը տեղի ուներ Արևմտյան Եվրոպայում Բուրբոնյան և Հաբսբուրգյան տների միջև, հայկական շարժումների երկու մասերին թույլ չտալով ընդհանուր հուն գտնել և օրգանապես կապվել միմյանց հետ, որքան էլ ազատագրման իդեն ու գաղափարն ընդհանուր լինեին։ Դալով Վատիկանին, որը միսիոնարների միջոցով լայն կապեր ուներ հայկական երկու կողմերի հետ, այս դեպքում նա, ելնելով Եվրոպայում ունեցած իր ընդհանուր շահերից, խաղում էր երկու լարի վրա, Արևելքի կապակցությամբ իր դիվանագիտական խրախուսանքին արժանացնելով հավասարապես թե՛ Բուրբոններին և թե՛ Հաբսբուրգներին»[77]։

Արդ՝ վերադառնանք Կանդիայի պատերազմից սպասվող ակնկալությունների պատմությանը։ Փարիզում և այլուր արքայական հանդիսությանց արժանանալուց հետո, 1668 թ. Հայր Օտտոմանը մեկնում է Կրետե կղզին, ցնծությամբ դիմավորվում մալտայան ասպետների կողմից։ Նա նամակներ է հղում դեռևս 1645 թ. Կանդիան գրաված թուրքական զինվորական ուժերի ղեկավարներին, որպեսզի նրանք անպատամբություն բարձրացնեն արյունարբու սուլթան Մեհմեդ IV-ի դեմ ու գահը հանձնեն օրինավոր տիրոջը՝ Հայր Օտտոմանին։ Այս ձեռնարկումները հակառակ արդյունք են ունենում, ու Մալտայի ասպետները ստիպված են լինում Հայր Օտտոմանին հեռացնել Կանդիայից։ Եվ, ի վերջո, 1669 թ. սեպտեմբերի 6-ին գրավելով Կրետե կղզին, թուրքերը վերջ են դնում Հայր Օտտոմանի արկածախնդրությանը։ Դրանով իսկ խորտակվում է հայերի այն բոլոր հույսերը, որոնք կապվում էին Կրետեի պատերազմում եվրոպացիների հաղթանակի հետ։ Այդ մասին Հ. Ս. Անասյանի գրքում կարդում ենք. «...արևմտահայերը, Կանդիայի պատերազմի վերջին շրջանում իրենց ազատագրական հույսերը կապելով այս պատերազմի հաջող ելքի և Հայր Օտտոմանի ծրագրերի հետ, հայոց թագավորությունը վերականգնելու ակնկալություններ ունեին, իսկ Կանդիայի միացած երեք գլխավոր պետությունները,— Հռոմ, Փարիզ և Վենետիկ,— հայերի, հույների և ուրիշ ժողովուրդների միջոցով Օսմանյան Կայսրության մեջ ներքին խլրտումներ ու պատերազմի մեջ դիվերսիա առաջացնելու նպատակով թեև խոստանում էին նրանց ցանկություններին բավարարություն տալ, բայց նպատակ չունեին բնավ իրենց խոստումները կատարելու, նույնիսկ եթե իրենց հաջողվեր Մահմեդ IV-ի իշխանությունը տապալել։ Նույնը պետք է ասել նաև առանձին՝ Լուդովիկ XIV-ի համար, որը Կանդիայի պատերազմից հետո, հայոց ազատագրական շարժման երկրորդ շրջանում, շարունակում էր օրորել հայերին և մյուս քրիստոնյա ժողովուրդներին՝ ազատագրության հույսերով, նրանց շարժումները Թուրքիայի վերաբերմամբ իր պատրաստած պլանների հաջողության համար օգտագործելու նպատակով»[78]։

---

76 Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ..., հ. Բ, էջ 170—171։

77 Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն..., էջ 7—8։

78 Նույն տեղում, էջ 239—240։

Կանդիայի պատերազմից հետո հայ ազատագրական իղձերը բացառապես կապվում էին Լուդովիկոս XIV-ի արքունիքի հետ։ Պատերազմից հետո Ֆրանսիան, որ մինչ այդ քողարկել էր իր հակաթուրքական կոալիցիային մասնակցելու փաստը, բացահայտորեն Թուրքիայի նկատմամբ վարում էր հարձակողական քաղաքականություն։ Եթե Կոլբերը, Լուդովիկոս XIV-ի այդ տաղանդավոր մինիստրը, շշգուշացներ արքային Թուրքիայի դեմ մղվելիք հնարավոր պատերազմում Ֆրանսիայի համար աղետաբեր հետևանքների մասին, ապա «Արևարքան», պատերազմ հայտարարած կլիներ Թուրքիային։ Ֆրանսիայի տնտեսական շահերը այնքան մեծ էին կայսրության մեջ, որ համարյա բացառվում էր պատերազմը Թուրքիայի դեմ։ Կապիտուլյացիաների միջոցով, ինչպես տեսանք, Ֆրանսիան ձեռք էր բերել Թուրքիայում լայն տնտեսական արտոնություններ առևտրի բնագավառում։ Եվ Կոլբերի համար ավելի կարևոր էր այդ կապիտուլյացիաների վերանորոգման հարցը, քան պատերազմը Թուրքիայի դեմ, որը նա համարում էր արկածախնդրություն ու շարիք Ֆրանսիայի համար։ Սակայն Կանդիայի պատերազմի ու նրան հաջորդած ժամանակաշրջանում Ֆրանս-օսմանյան հարաբերությունները ծայր աստիճան լարվել էին։ Սուլթանական կառավարությունը անբարյացակամ, ուղղակի թշնամական վերաբերմունք էր ցույց տալիս Կ. Պոլսի ֆրանսիական դեսպաններին։

Ֆրանսիական արքունիքում Թուրքիա կատարվելիք խաչակրաց արշավանքի գաղափարը գնալով ավելի ու ավելի կողմնակիցներ էր շահում, արքունի պալատական Ն. Բուալոն ոգեշնչում էր Լուդովիկոս XIV-ին՝

Քեզ կսպասեմ ես վեց ամսում
Հելլեսպոնտի ափերում[79]։

«Այս իրադրության մեջ,— գրում է Հ. Ս. Անասյանը,— հայոց պատվիրակ Մահտեսի Մուրատը, որ այս շրջանում Փարիզում էր ապրում և իր ներկայացրած հանգամանքով իսկ շփման մեջ էր ֆրանսիական պետական շրջանների հետ, պետք է որ Կանդիայի պատերազմի վերջանալուց հետո շարունակեր զարգացնել իր կապերը ֆրանսիական արքունիքի հետ, քանի որ, նույնիսկ Կանդիայի պատերազմի ընթացքում, երբ հայոց ազատագրության խնդիրն ուղղակի հայր-օտտոմանյան ծրագրերի հետ էր կապված, հայկական ակնկալությունների գլխավոր կռվանը դարձյալ Լուդովիկ XIV-ն էր եղել»[80]։

Իսկ հայերը դիմում էին Լուդովիկոս XIV-ին նորից առաջնորդվելով «Ներսիսյան տեսիլի» առասպելով։ Այդ մասին են վկայում Արևելյան Հնդկաստանի ֆրանսիական ընկերության կողմից Իրան ուղարկված գործակալներ՝ դա Լալենի ու դը Լա Գուզի Երևանից Լուդովիկոս XIV-ին 20 մայիսի 1665 թվակիր նամակը և Սպահանում հաստատված կապուչինների հոգևոր առաջնորդ Ռաֆայել Դյու-Մանի 1670 թ. օգոստոսի 20-ին Կոլբերին հղած նամակը, մի հանգամանք, որը մի անգամ ևս ապացուցում է, որ ազատագրական շարժումը համընդհանուր, համահայկական երևույթ էր։ «Հայերի տառապանքները, օրինակ,— գրում է Ռ. Դյու-Մանը,— ժամանակին նախատեսել են նրանց պատրիարքները, ս. Ներսեսը և ս. Գրիգորը, որպես աստվածային մի պատիժ նրանց խաղմարար ոգու, և հռոմեական եկեղեցուց հեղձվելու համար»։ «Բայց,— նշում է Ռ. Դյու-Մանը,— նույն մարգարեացողները նախատեսել են նաև նրանց փրկությունը ֆրանսիական մի թագավորի ձեռքով». «Թող որ,— այսպես է ավարտվում այս գրությունը,— ներկայիս գահակալող մեծ թագավորը կամ նրա հաջորդներից որևէ մեկը՝ լինի այն անձը, որին ս. Ներսեսի մարգարեության համաձայն վերապահված է Ասիայի աշխարհիկ և հոգևոր վերանորոգումը»[81]։

Իրենց հերթին վերոհիշյալ դը Լալենը և դը Լա Գուզը գրում են. «Բերդում, ինչպես քաղաքում (Երևանում) կան ստվարաթիվ հայեր և բոլորը, անխտիր, ինչպես նաև Թուրքիայում մեր տեսած հայերը, որոնք հեծում են օսմանցիների բռնակալության տակ, ամեն օր իրենց թշվառությունների վախճանն են ակնկալում Ձեր վեհափառության հաղթական զենքերից, և գիտակ լինելով Նրա մեծությանն ու հզորությանը՝ առանձնահատուկ մեծարանք ունեին Նրա առաքինությունների և մեծ բարեմասնությունների հանդեպ, և Նրա մասին տարածված համբավն ու հասարակական կարծիքը նրանց հավատալ են տալիս, որ իրենց մարգարեությունների իրականացման ժամանակումն են գտնվում, ու այդ մասին այնքան են համոզված, որ նրանք Ձեր Վեհափառության մասին խոսում են միմիայն որպես իրենց ազատության

[79] Տե՛ս Th. Lavallée. Histoire de l'empire ottoman. Paris. 1885. p. 321 («Je t'attends dans six mois sur les bords de l'Hellespont»).

[80] Նույն տեղում, էջ 151։

[81] Raphael du Mans. Estat de la Perse en 1662. Paris. 1885. p. 302. հմմտ. Ա. Հովհաննիսյան. Դրվագներ..., հ. Բ, էջ 177։

վերականգնողի և իրենց եկեղեցիների ու հավատի պաշտպանի մասին։ Նրանք հավերժորեն բաղձում են իրենց հույսերի շուտափույթ իրականացումը և հաստատապես հավատում են, որ գոյություն չունի ոչ մի հեռավոր երկիր, ուր Ձեր Վեհափառությունը չկարողանա հասցնել Իր բանակների ուժը, ինչպես և Իր անվան փառքը»[82]։

Իսկ կաթոլիկ աշխարհն, այս անգամ, հանձինս Լուդովիկոս XIV-ի, ինչպես դա պարզորոշ երևում է Ռ. Դյու-Մանի Կոլբերին հղած վերոհիշյալ նամակից, փաստորեն նորից առաջ էր քաշելու հայերի հետ կրոնական «ունիայի» հարցը։ Մյուս կողմից, հայերը դարձյալ պետք է օգտագործվեին Արևելքում կաթոլիկ Եվրոպայի «մութ» նպատակների իրականացման ճանապարհին։ Ակնարկելով այս մասին, Աշ. Հովհաննիսյանը նրբորեն նկատում է. «Ազատագրական լեգենդի այս վերսիայի եկեղեցական-դավանաբանական տենդենցը ակնբախ է։ Անհնարին չէ, որ այդ պահին շատերն այդպես էլ պատմում էին լեգենդը։ Բոլոր «Ֆրանկների» մեջ Լուդովիկ XIV-ն էր հենց այն թագավորը, որի հռչակը հիրավի տարածված էր նաև Մերձավոր Արևելքում։

Այդ մասին հոգում էին մանավանդ նաև միսիոներները, որոնք միախառնելով հավասարաստիս «պրոպագանդի լույսը» «Արև-թագավորին» քաղաքական ճառագայթների հետ, մոլեգին ջանք էին անում թափանցելու լևանտյան առևտրականների «մութ» հոգեհատակը։ Ոտք դնելով տրորված շավիղների վրա՝ նրանք ևս հասկացնել էին տալիս, թե հարելով Հռոմի եկեղեցուն, հայերը կարող կլինեն հույս դնել Լուդովիկի թևարկության վրա։ Եթե ցարդ արևը բարձրանում է արևելքից, այնուհետև արևմուտքից է ելնելու նա։ Հայերի մեջ այս պատրանքը պիտի ծագեր, ելնելով մանավանդ Լուդովիկի Թուրքիայի հետ այդ ժամանակ ունեցած բախումներից»[83]։

Եվ այսպես, 1672 թ. Մահտեսի Մուրադը անձամբ ներկայանում է «Արև-արքային» ու «միանգամ ևս» նրան հիշեցնում հայկական խնդրի մասին։ Հ. Ս. Անասյանի կարծիքով, Մահտեսի Մուրադը Լուդովիկոսի ունկնդրությանը արժանացած կարող էր լինել 1670 թ. առաջ[84]։ «Արև-արքային» Մահտեսի Մուրադը հայտնում է, որ «Ես ինձ երջանիկ եմ համարում, որ կարողանում եմ միանգամ ևս Ձեզ հավաստել այն երախտագիտության մասին, որ մեր ազգը ունի հանդեպ Ձեզ, որ

82 Հ. Ս. Անասյան, *XVII դարի ազատագրական շարժումներն...*, էջ 155։
83 Աշ. Հովհաննիսյան, *Դրվագներ...*, հ. Բ, էջ 175—176։
84 Հ. Ս. Անասյան, *XVII դարի ազատագրական շարժումներն...*, էջ 161։

պաշտպանն եք կրոնի և մեր հայրերի սուրբ հավատի»[85]։ Այնուհետև նա շարունակում է. «Ձեր վեհափառությանը հայտնի է այն ողբալի կացությունը, որի մեջ գտնվում է մեր դժբախտ ազգը, ինչպես այդ մասին Ձեզ գրել ու բացատրել են բազմաթիվ անգամներ մեր ազգի պատրիարքները, ինչպես և տանուտերերը, ձեզանից օգնություն ու պաշտպանություն խնդրելով, և ինչպես ես էլ եմ Ձեզ հայտնել նույն բանը սրանից առաջ բանավոր կերպով, ըստ այն պաշտոնի, որ հանձնված էր ինձ... Դուք գիտեք, Տեր, որ այսօր Արևելքի քրիստոնյաները գտնվում են ողորմելի կացության մեջ, և այլևս չկարողանալով տանել իսմայելականների (Թուրքերի— Մ. Ջ.) լուծը, բոլորն էլ պատրաստ են ապստամբելու Մեծ Թուրքի (սուլթանի—Մ. Ջ.) և նրա փաշաների դեմ, որին, Ձեզ հայտնի է, կմասնակցեն նաև բուն հույները, Սև ծովի հույները, վրացիները և սիրիացիները։ Այս բոլոր ժողովուրդները համոզված են, որ Ձերդ վեհափառությունը չի հապաղի ձեռնարկելու ազատագրական արշավանքը, որին երկար ժամանակ մենք սպասում ենք նրանից, որպեսզի զենքերը ձեռքին ապստամբենք հենց որ քրիստոնեության զորքերը երևան Ձեր վեհափառության առաջնորդությամբ»[86]։ Ապա, պարզելով Լուդովիկոս XIV-ի առաջ հայերի ազատագրման իր ծրագիրը, Մահտեսի Մուրադը հատուկ ընդգծում է. «Հայերը, որոնք շատ ստվարաթիվ են Վանի, Բիթլիսի, Թոխաթի, Սեբաստիայի, Կարինի, Կարսի և մերձակա շրջանների մեջ, միանալով հույների և մյուս քրիստոնյա ազգաբնակությունների հետ, կկարողանան շփոթություններ առաջ բերել Անատոլիայի ներսում և դիմադրել մինչև քրիստոնեական զորքերի հասնելը, որովհետև, Տեր, հարստահարությունները, ճնշումներն ու բռնություններն այդ երկրում ամեն սահման անցած լինելով՝ ժողովուրդներն այլևս չեն կարողանում տանել այդ ստրկությունը և որոշել են ազատվել նրանից»[87]։

Վերոհիշյալից պարզ երևում է, որ հայ ազատագրական շարժման պարագլուխները կապեր էին հաստատել հույների, վրացիների (Թուրքիայի տիրապետության տակ ընկած Վրաստանի մասին է խոսքը) և ասորիների ղեկավարների հետ։ Օսմանյան կայսրության մեջ ճնշված ու հալածված այս ժողովուրդները, բնականաբար, պետք է դաշնակցեին հայերի հետ։

85 Նույն տեղում, էջ 159։
86 Նույն տեղում, էջ 297։
87 Նույն տեղում, էջ 161։

Մահտեսի Մուրադի՝ «Արև-արքայի» առաջ արտասանած ճառից երևում է նաև, որ ազատագրության գործին նվիրված հայ գործիչները, իբրև թե կապեր են հաստատել «պարսկական սահմանակից նահանգների կառավարիչների հետ». Մահտեսի Մուրադը նշում է, որ «Շահը սուլթանի հայտնի թշնամին է և միայն նպաստավոր առիթի է սպասում նրա դեմ պատերազմ վերսկսելու համար. այնպես որ, երբ քրիստոնեական զորքերը կմոտենան ու կհարձակվեն Արշիպելագի և Կիպրոսի ծովի ափերի վրա, և այն ժամանակ, որ Ձեր վեհափառության բանակները կգրավեն Կ. Պոլիսը՝ մինչ մոսկովցիները կհարձակվեն Տրապիզոնի վրա, պարսիկները կներխուժեն Բաղդադի կողմից»[88]։ Արդյո՞ք սա արդեն նախօրոք իրանական ղեկավարների հետ համաձայնեցված ծրագիր էր, թե Մահտեսի Մուրադի հավանականությունից ոչ զուրկ ենթադրությունը ու «Արև-արքային» շահագրգռելու հակումը, քանի որ Օսմանյան կայսրության դեմ Իրանի հետ եվրոպական պետությունների ընդհանուր դաշինք ստեղծելու խնդիրը վաղուց դարձել էր միջազգային դիվանագիտության օրակարգի հարցը։ Դժվար է ասել։

Հոլանդիայի հետ սկսված պատերազմը և այդ պատերազմում ֆրանսիական բանակների սուլթանական պալատի վրա ազդեցիկ նշանակություն ունեցող հաղթանակները և, վերջապես, Կոլբերի ջանքերով նոր կապիտուլյացիաների ձեռք բերումը դուրս հանեցին «Արևելյան հարցն» իր սուր վիճակից։ Այսուհանդերձ, Փարիզում հաստատված հայ ներկայացուցիչները դեռևս շարունակում էին իրենց հույսերը կապել Լուդովիկոս XIV-ի ենթադրյալ խաչակրաց արշավանքի հետ։

XVII դարի 80-ական թվականներին Օսմանյան կայսրության բանակները մի անգամ ևս սպառնում էին Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայի պետություններին։ Թուրքական հրոսակախմբերը, ինչպես դա 1664 թ. էր, նորից շարժվում էին Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի վրա։ Նման պայմաններում Լուդովիկոս XIV-ն առաջարկում էր Ավստրիայի Լեոպոլդ կայսրին 90 հազարանոց օգնական բանակով «անցնել Գերմանիա, պատվար կանգնել բարբարոսների առաջխաղացումների դեմ և արտաքսել նրանց Գերմանիայից»[89], այլ կերպ ասած՝ Եվրոպայի քաղաքական հորիզոնում նորից ուրվագծվում էր Թուրքիայի դեմ խաչակրաց արշավանքի հնարավորությունը։

38 Նույն տեղում, էջ 162։

89 Նույն տեղում, էջ 189։

Ահա այս ժամանակ է, որ Փարիզում, ինչպես դա երևում է Երևանի Մատենադարանի № 4618 ձեռագրի հիշատակարանից (էջ 173ա—175ա)[90], հայտնվում են մի շարք երևելի հայ գործիչներ, որոնց թվում՝ Կ. Պոլսի նախկին պատրիարք Հովհաննես Թութունջին։

Հովհաննես Թութունջին, ինչպես և Մահտեսի Մուրադը թողել են մի հիշատակարան, որտեղ նկարագրվում է Հովհ. Թութունջիի ուղևորությունը Եգիպտոսից դեպի Հաբեշստան և ապա՝ Իտալիա՝ մինչև Լիվոռնո քաղաքը։

1680 թ. վերջերին Հովհաննես Թութունջին վերադառնում է Փարիզ, ուր գտնվում էր Մահտեսի Մուրադը։ Հետագայում 1683 թ. փետրվարին, նորից լինելով Փարիզում, Մահտեսի Մուրադի, Զաքարիա Սիսիանցու և այլոց հետ միասին, նա այցելում է Վերսալի և Սենկլուի արքայական պալատները[91]։ Նույն թվականի վերջին Հովհաննես Թութունջին հեռանում է Փարիզից։

Այնուհետև, Վասպուրականի անանուն տարեգրություններից մեկում, հանդիպելով հետևյալ վկայության Հովհաննես Թութունջիի մասին, թե «եղև գլուխ ազգին ֆռանկաց» և «ելն ի վերա Թուրքին», Հ. Ս. Անասյանը փորձում է պարզել այս առեղծվածը։ Ըստ նրա «ֆռանկաց» ասելով այստեղ չպետք է հասկանալ ֆրանսիացիներին, քանի որ 1689-ից մինչև 1696/97 թթ. տևած այսպես կոչված «Աուգսբուրգյան լիգայի» (Ավստրիա, Իսպանիա, Շվեդիա, Հոլանդիա և գերմանական մի շարք իշխանություններ) դեմ մղած պատերազմի հետևանքով Ֆրանսիան փաստորեն հրաժարվել էր Արևելքի դեմ խաչակրաց արշավանք ձեռնարկելու գաղափարից։ Հեղինակի ենթադրությամբ Հովհ. Թութունջին մասնակցած կարող էր լինել «Սրբազան լիգայի» (լիգան ստեղծվել էր 1684 թ., որի կազմում էին Ավստրիան, Լեհաստանը, Վենետիկը և Մալթան, որին և 1686 թ. միացավ Ռուսաստանը)՝ Թուրքիայի դեմ մղած մեծավ մասամբ հաղթական պատերազմներին[92]։ Աշ. Հովհաննիսյանը անհավանական է գտնում Հ. Ս. Անասյանի այս կարծիքը։ «Մեզ, ի դեպ, հարցական է թվում,— գրում է նա,— Թութունջիի մասնակցությունը հակաթուրքական որևէ պատերազմի և կարծում ենք, թե չէր սխալվում Ալպոյաճյանը, երբ գրում էր, թե Եվրոպայի նրա առաքելությունը «կապ ուներ Թուրքերի

90 Նույն տեղում, էջ 183։

91 Նույն տեղում, էջ 202։

92 Նույն տեղում, էջ 215։

դեմ մղած պայքարին և Թուրքին վրա գնալու նախապատրաստություն մըն էր, եթե ոչ ճշմարիտ արշավ մը, որ իրագործելու չեմ կարծեր թե առիթ ունեցած ըլլա այս արկածախնդիր եկեղեցականը, որ գործնականապես եթե այս տեսակ ձեռնարկ մը կատարած ըլլար իր կյանքի վերջին տարիները Տրապիզոն անցնելու պիտի չհամարձակեր»[93]։

Հովհաննես Թութունջիի մահով փաստորեն արևմտահայ ազատագրական շարժումները, ավելի ճիշտ կլիներ ասել, կաթոլիկ Եվրոպայի հետ դիվանագիտական բանավարությունները կանգ են առնում։ «Կարելի է ասել,— գրում է Հ. Ս. Անասյանը,— որ արևմտահայ ազատագրական շարժման դերակատարներից Հովհաննես Թութունջիի մահով նշվում է նաև XVII դարի շարժումների դադարումը»[94]։ Արևմտահայ ազատագրական շարժումները գլխավորելու հավակնությամբ հանդես եկած հայ հոգևորականության ու առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչները «...անշուշտ կարողացան համոզվել, թե դատարկ բան էր հայոց փրկությունը ձեռք բերելու համար քրիստոնյա Եվրոպայի դռներ թակելը, ավելի քան քսան տարվա ջանքերն ու սպասումները իզուր էին անցել»[95]։

Անդրադառնալով արևմտահայ ազատագրական շարժումների ավարտի հարցին, Վ. Ա. Հակոբյանը գրում է. «Դժբախտաբար, դեպքերի բերումով 1683 թ., երբ Թուրքիային հետ շպրտեցին Վիեննայի պատերի տակից և այնուհետև նա շարունակեց թավալգոր ապրել իր թուլացումը, եվրոպական պետությունները փոխանակ օգտագործելու այդ մոմենտը, զբաղվեցին իսպանական ժառանգության համար մղվող պատերազմով, իսկ Ռուսաստանը՝ Հյուսիսային մեծ պատերազմով։ Այդ պայմաններում արևմտահայ և արևելահայ ազատագրական շարժումներին եվրոպացիները պետք չունեին՝ Թուրքերի դեմ օգտագործելու համար։ Մյուս կողմից՝ ինչ-ինչ պատճառներով գլուխ չէր գալիս Թուրքերի լծի տակ հեծող փոքր ժողովուրդների ազատագրական միասնական պայքարի կազմակերպումը։ Ըստ էության սրանք (և ոչ միայն սրանք) են արևմտահայ ազատագրական շարժման դադարի պատճառները»[96]։ Այս բացատրությունը կարիք ունի ճշգրտման։ Չնայած

93 Աշ. Հովհաննիսյան, Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 238։

94 Հ. Ս. Անասյան, XVIII դարի ազատագրական շարժումներն..., էջ 220։

95 Նույն տեղում, էջ 218։

96 Վ. Ա. Հակոբյան, Մեծարժեք մենագրություն, «Տնդեկագիր» (հաս. գիտ.), 1962, № 9, էջ 87։

1699 թ. Կարլովիցի պայմանագրով Թուրքիան, պարտություն կրելով «Սրբազան լիգայի» պետություններից, հսկայական տարածքային կորուստներ ունեցավ, սակայն դեռևս մնաց ռազմականապես հզոր պետություն։ Այդ մասին են վկայում XVIII դարի առաջին կեսում Թուրքիայի ռազմական որոշ հաջողությունները։ Հիշենք, թեկուզ, 1711 և 1713 թվականների պրուտյան ու Ադրիանապոլիսի պայմանագրերը։ Մյուս կողմից, օսմանյան ղեկավար շրջանները ճարպկորեն օգտագործում էին եվրոպական պետությունների միջև գոյություն ունեցող հակասությունները ու դրանով իսկ ջլատում նրանց համատեղ գործունեության որևէ մի հնարավորություն։

Պատմությունը մի անգամ ևս գալիս էր ապացուցելու, որ հայ (արևմտահայ և արևելահայ) ազատագրական շարժման տրորված ուղիները (բանավարություններ կաթոլիկ Եվրոպայի հետ) ոչ մի դրական արդյունքի չէին կարող հանգեցնել։ XVII դարի Արևմտյան Հայաստանում ծավալված ազատագրական շարժումների պատմությանը ուշադիր հետևող յուրաքանչյուր ոք պարզորեն կնկատի, որ իրոք, այդ շարժումները շարունակվում էին նախընթաց ուղիներով և ոչ մի կերպ չի կարող համոզվել Հ. Ս. Անասյանի այն պնդումների հետ, թե այդ շարժումները արևմտահայ իրականության յուրահատուկ պայմաններում էին խմորվում ու օրգանական ոչ մի կապ ու առնչություն չունեին արևելահայ շարժման հետ։ «Տարօրինակ է բացասել արևելահայ ու արևմտահայ շարժումների մեջ եղած կապերի առկայությունը,— գրում է Ա. Գ. Հովհաննիսյանը,— երբ XV դարի 70-ական թվականներից ի վեր և մինչև XVII դարի կեսերը հայ ազատագրական շարժումների հետ կապված բոլոր անցքերը խմորվում էին սոցիալ-քաղաքական համանման իրադրությունների մեջ, հասունանում Թուրք-պարսկական երկարատև ու ավերիչ պատերազմներից առաջացած տվյալների համաղգային ժխորում, մտնում քաղաքական նպատակադրումների և դիվանագիտական բանակցությունների արևմտաեվրոպական միևնույն պատրիչ ուղիների մեջ և ձևակերպվում ազատագրական լեգենդի տրադիցիոն կաղապարների օգնությամբ։ Եվ նկատենք, որ Հայաստանի երկու հատվածներում էլ շարժման սուր ծայրն ամբողջ այդ ժամանակամիջոցի ընթացքում առաջին հերթին շրջվում էր Թուրքական բռնատիրության դեմ»[97]։

97 Աշ. Հովհաննիսյան, Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 243։

Հ. Ս. Անասյանը փորձում է Եղիազար Այնթապցուն, ինչպես և այլ «լատինասեր» հոգևորականներից ոմանց, ինչպիսիք են Խաչատուր Գաղատացին և Հովհաննես Թութունջին, ներկայացնել որպես խոջայության, հեղինակի կարծիքով՝ բուրժուազիայի առաջավոր թևի ներկայացուցիչների դաշնակիցներ։ «Երուսաղեմի արևմտահայ կաթողիկոսությունը հանձին Եղիազար Այնթապցու,— գրում է Հ. Ս. Անասյանը,— ներդրավված էր ազատագրական այն շարժման մեջ, որին գլխավորում էր արևմտահայ առաջավոր առևտրական բուրժուազիան» և որ այդ բուրժուազիայի վրա հենվելով Եղիազար Այնթապցին ձգտում էր ստեղծել էջմիածնից անկախ արևմտահայ կաթողիկոսություն[98]։ «Պատմական աղբյուրների մեջ,— որոշակիորեն գրում է Աշ. Հովհաննիսյանը,— չեմ հանդիպում որևէ վկայություն, ուսկից երևար, թե արևմտյան կաթողիկոսությունը առաջ էր եկել արևմտահայերի համար քաղաքական ազատություն նվաճելու կամ արևմտահայ անկախ թագավորություն հիմնելու մտադրությունից» (ընդգծումը մերն է— Մ. Զ.)[99]։

Հ. Ս. Անասյանը որպես փաստարկ Եղիազար Այնթապցու «հայրենասիրական» ու «ազատագրական» ձգտումներին նվիրված լինելուն, վկայակոչում է 1663 թ. նրա ու Սսի Խաչատուր Գաղատացու կաթողիկոսի միջև կնքված «գաղտնի դաշինքը»։ «Ինչպես գիտենք՝ Խաչատուր Գաղատացին Հայոց ազատագրության գաղափարին էր նվիրված,— գրում է Հ. Ս. Անասյանը։ — Հենց այս ժամանակ նա այդ նպատակով հարաբերություններ էր մշակում Հալեպում ֆրանսիական հյուպատոսի և լատին միսիոնարների հետ և նամակներ էր գրում Հռոմ՝ Ալեքսանդր VII պապին, ու Փարիզ՝ Լուդովիկ XIV թագավորին։ Սակայն շատ բնական է, որ արևմտահայ ընդհանուր շարժում առաջ բերելու համար միմիայն Կիլիկիայի կաթողիկոսի ուժերը բավական չէին։ Նրան հարկավոր էր և Երուսաղեմի պատրիարքի նման մի հեղինակավոր անձնավորության գործակցությունը, և եթե ներդրավվեր վերջինս այդ շարժմանը, կարող էր մեծ օգուտ բերել գործին, իսկ նրա թշնամությունը, ընդհակառակն, խոչընդոտ կդառնար։ Հավանաբար ուղղակի այս նպատակով էր Խաչատուր Գաղատացին Երուսաղեմ գնացել՝ Եղիազարի տրամադրությունը շոշափելու և բանակցելու համար, հույս դնելով հին բարեկամության վրա։ Բայց իր խոշոր ծրագրին նրան

98 Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն..., էջ 267։

99 Աշ. Հովհաննիսյան, Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 247։

աջակից դարձնելու համար հարկավոր էր և մի համարձակ փոխադարձություն։ Այս հիման վրա է, որ պետք է ծնունդ առած լինի Եղիազարի արևմտահայ կաթողիկոսության խնդիրը, որի իրագործումը երկու կողմերի համար ձեռնատու էր հավասարապես, որովհետև դրանով մի կողմից Եղիազար Այնթապցու իշխանությունը կընդարձակվեր, մի բան, որ կշահագրգռեր նրա անհատականությունը, մյուս կողմից՝ կաթողիկոսական այս նոր իշխանությամբ, որի իրավասությունը պիտի տարածվեր Կիլիկիայի կաթողիկոսությունից դուրս՝ Օսմանյան Կայսրության բոլոր սահմանների վրա, սակայն (լատինասիրական— Մ. Զ.) ազդեցությունը տիրող կդառնար ամբողջ արևմտահայության վրա՝ հօգուտ արևմտահայ ընդհանուր շարժման»[100]։

Եվ վերջին հաշվով՝ այդ «գաղտնի դաշինքի» կնքման խնդրում էական դեր պիտի կատարած լիներ, ըստ Հ. Ս. Անասյանի տեսության, լատին միսիոներները։ «Ուրիշ կերպ չի բացատրվի Խաչատուր Գաղատացու ընթացքը,— գրում է նա։ — Տիրող պայմաններում մի օրից մյուսը իր ոխերիմ թշնամուն (նկատի ունի Խաչատուր Գաղատացուն— Մ. Զ.) բարեկամ և անկեղծ գործակից դառնալու երևույթը ներքին ուժեղ դրդապատճառ է պահանջում։ Եղիազարի դեմ Խաչատրի ունեցած պայքարը լատին միսիոնարներն էին իրենց ձեռքն առել, եթե չասենք, թե բուն դրդողն էլ հենց նրանք էին. հետևաբար՝ առանց նրանց համաձայնության անկարելի բան էր Խաչատրի անակնկալ հաշտությունն ու մերձեցումը «հերձվածող» Եղիազարի հետ. և եթե արևմտահայ առանձին կաթողիկոսության ծրագիրը Եղիազարի սեփական ծրագիրն էր, ինչպես կարծում են Չամչյանը և ուրիշներ, թույլատրելի է ենթադրել նաև միսիոնարների մասնակցությունն այդ խնդրի մեջ՝ Եղիազարին հրապուրելու համար, ելնելով մի կողմից նրա անհատական փառասիրական հակումներից, մյուս կողմից՝ նրա շեշտված հայրենասիրական զգացմունքներից»[101]։

Եվ ահա այսպես՝ պաշտպանության տակ վերցնելով փառասեր ու արկածախնդիր այս հոգևորական գործչին, Հ. Ս. Անասյանը գրում է. «Արևմտահայոց առանձին կաթողիկոսություն հաստատելու նրա ձեռնարկումն իր ժամանակին հայության մի մասի (ճիշտ կլիներ ասել հայության մեծագույն մասի— Մ. Զ.) կողմից արտակարգ հարված է համարվել Հայկական եկեղեցու միասնության դեմ և այդպես էլ միա-

100 Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն..., էջ 250—251։

101 Նույն տեղում, էջ 251—252։

կողմանիորեն ավանդվել մեզ՝ ժամանակակից երկու մատենագիրների կողմից։ Սրանցից առաջինը հայտնի մտավորական և հասարակական գործիչ Երեմիա Չելեբի Քյոմուրջյանն է, հակա-եղիազարյան ճակատի պարագլուխն իսկ, ... և Միքայել Չամչյանը, օգտվելով հանդերձ այլ և այլ մանր հիշատակարաններից, Երեմիա Չելեբիի տիրական ազդեցության տակ է գրել Եղիազար Այնթապցու մասին։ Երկրորդը՝ Զաքարիա Քանաքեռցին է... սա ևս, լինելով էջմիածնի ազդեցության շրջանում աճած ու ապրած մարդ, Եղիազարի գործունեությունը ներկայացնում է միևնույն գունավորումով, ինչ որ Երեմիա Չելեբին»[102]։ Հետագա բոլոր ուսումնասիրողները, գրում է Հ. Ս. Անասյանը, գտնվում են այս երկուսի ազդեցության տակ։ «Այսպիսով՝ հայ պատմագիտությունը,— շարունակում է նա,— հռոմեական Չամչյաններից մինչև լուսավորչական Օրմանյանները, գտնվելով դեպքերին ժամանակակից աչառու, կրքոտ ու միակողմանի աղբյուրների ազդեցության տակ, չի կարողացել ճիշտ և արժանավոր գնահատական տալ Եղիազար Այնթապցու գործունեությանը։

Եղիազար Այնթապցուն նկարագրում են որպես վերին աստիճանի փառամոլ, եսասեր ու խորամանկ մարդ. սակայն այս գծերը նրա անհատական նկարագրի որքան էլ ստույգ հատկանիշները կազմեն, այսուհանդերձ ոչ մի դեպքում բավարար չեն նրա առաջ բերած հասարակական հսկայական շարժումը բացատրելու»[103]։

Ակնբախ է, որ այստեղ չափից դուրս գերագնահատված է մի մարդու գործունեությունը, որը պարզապես ճարպկորեն օգտվելով արևմտահայ լայն զանգվածների դժգոհությունից՝ կապված էջմիածնի նվիրակների շարաշահումների հետ, մեծ վեզիր Մ. Քյուփրյուլյուին մեծապես կաշառելով 1664 թ. հատուկ հրովարտակով փորձեց արևմտահայ թեմերը անջատել էջմիածնից ու ստեղծել արևմտահայ անկախ ու ինքնուրույն կաթողիկոսություն։ Թե պատմական ինչպիսի պայմաններում Եղիազար Այնթապցին դարձավ արևմտահայերի կաթողիկոսը, սպառիչ պատասխան է տալիս Աշ. Հովհաննիսյանը։ «Փառամոլությունից կամ հայրենասիրությունից անկախ,— գրում է նա,— Եղիազարի քաղաքականության հասարակական-քաղաքական շոշափելի և ակնբախ մղիչները մեկից ավելի են։ Թվարկենք կարևորները՝ 1) թուրք ռազմա-ֆեոդալական պետության քաղաքակա-

102 Նույն տեղում, էջ 242—243։

103 Նույն տեղում, էջ 243—244։

նությունը, որը հայ եկեղեցական հիերարխիայի ներսում տեղի ունեցող հակամարտությունները ծառայեցնում էր հայ ժողովրդական մասսաների կեղեքման ու ստրկացման նպատակին, 2) լատին միսիոնարների և նրանց թիկունքին կանգնած պապական Հռոմն ու կաթոլիկ պետությունները, որոնք շարունակում էին հայ եկեղեցու պառակտումը իրենց մերձարևելյան պրոպագանդայի ու գաղութարարական քաղաքականության օգտին, 3) թուրք և պարսիկ պետությունների, արևելահայ խոջայական դասի և պոլսահայ չելեբիական և խոջայական մեծատունների իրարամերժ շահագրգռությունները, որոնք օգտագործվում էին Եղիազարի և նրա գործակիցների կողմից արևմտահայ անջատ կաթողիկոսությունը կազմակերպելու համար»[104]։

Նման պայմաններում, բնականաբար, Եղիազար Այնթապցու պառակտիչ գործունեությունը միայն կարող էր վնաս պատճառել XVII դարի հայերի ազատագրական շարժումներին։ Չի կարելի այստեղ չհամաձայնվել Բաբկեն Կյուլեսերյան կաթողիկոսի հետևյալ հարցադրման հետ. «Թուրքիո հայոց կաթողիկոսությունը» բերավ որևէ բարիք հայ ժողովրդին։ Բոլոր անոնք, որ զբաղած են հայ եկեղեցվո պատմությամբ և անոր առնչությամբ հայ ժողովրդի անցուցած տագնապներուն հետ, դառնությամբ է որ կարձանագրեն Եղիազարի նախաձեռնությամբ փորձված այդ պառակտումը հայ եկեղեցվո ծոցին մեջ, որ հայ ժողովուրդը ևս պիտի ճեղքեր երկուքի»[105]։

Հ. Ս. Անասյանը առաջինն է հայ պատմագիտական գրականության մեջ, որ Եղիազար Այնթապցուն վերագրում է «հայրենասիրություն» ու ազգային-ազատագրական նպատակներ։ Որ նա «...այդպիսի նպատակ չէր էլ հետապնդում... ակներև դարձավ այն պահին, երբ նրա հակառակորդները տակտիկական ճարպիկ խաղով հայոց ընդհանրական կաթողիկոս դարձրին նրան [1682 թ.]»[106]։

* * *

Շարադրված նյութից ակներև է, որ XV դարից մինչև XVII դարի վերջը հայերի՝ Արևմուտքի նկատմամբ ունեցած ազատագրական

104 Աշ. Հովհաննիսյան, Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 247։

105 Հ. Սիրունի, էջ 522։

106 Աշ. Հովհաննիսյան, Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 248։

ակնկալությունները հիմնազուրկ էին։ Հայերի քաղաքական կողմնորոշման միակ ճիշտ ուղին գնալով հզորացող Մոսկովյան պետության օգնության վրա հույս դնելն էր։ Հանրահայտ է, որ Կ. Պոլսի անկումից հետո, Մոսկվան հանդես էր գալիս որպես Բյուզանդիայի ժառանգորդ, որպես «երրորդ Հռոմ» և, բնականաբար, Ռուսաստանն էր լինելու այն պետությունը, որը հանդիսանալու էր օսմանյան լծի տակ տառապող քրիստոնյաների ապավենն ու ազատարարը։ «Զարմացած Եվրոպան,— գրում է Կ. Մարքսը, —որ Իվան III-ի իշխանության սկզբում հազիվ թե նույնիսկ նշմարում էր Լիտվայի և թաթարների արանքը սեղմված Մոսկվայի գոյությունը, ապշահար դիտում էր իր արևելյան ծայրերում գլուխ բարձրացրած հսկայական իմպերիայի անակնկալ երևումը և ինքը՝ Թուրք սուլթան Բայազետը, որի առաջ դողում էր նա (Եվրոպան), առաջին անգամ մոսկովցիներից լսեց հանդուգն ճառեր»[107]։

Դեռ Կանդիայի պատերազմի ժամանակ, հույն-հայկական ազատագրական շարժումը իր հայացքը սևեռել էր Ռուսաստան և նրանից օգնություն էր ակնկալում։ Հույները մեծ նշանակություն էին տալիս Թուրքական տիրապետության դեմ պայքարում Ռուսաստանի մասնակցության հարցին։ Ռայկոտն ասում էր, թե «հույներն առանձին համարում և սեր ունեն դեպի մոսկովցիները, որոնք մի քանի հին մարգարեությունների համաձայն կոչված են այս ժողովուրդը դուրս բերելու այն բռնակալությունից, որի տակ գտնվում է նա»[108]։ Եվ հիրավի, պատմությունն ապացուցեց, որ հենց Ռուսաստանը հանդիսացավ այն երկիրը, որը ազատություն բերեց Հունաստանին և Հայաստանին։

XV դարի վերջերին գրավելով Ղրիմի թերակղզին, Թուրքերը հնարավորություն ստացան ոտք դնելու Ռուսաստանի հարավային տափաստանները ու փորձեցին իրենց ենթարկել Հավատակից Կազանի և Աստրախանի բնակիչներին։ Իվան Ահեղը խորտակիչ հարված հասցրեց նրանց փայփայած երազանքներին, իսկ 1569 թ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանը մեկընդմիշտ վերջ տվեց Թուրքերի փորձերին՝ Թուրքիայից վասալական կախում ունեցող հյուսիս-կովկասյան խանությունների միջոցով շրջափակելու ու մեկուսացնելու ռուսներին և դրանով իսկ, հնարավորություն ստեղծեց վերջիններիս համար ելք ունենալու **Կովկաս ու Անդրկովկաս։**

---

107 *K. Marx*, Secret diplomatic history of the eighteenth century, London, 1898, p. 81; *Հմմտ.* „История дипломатии", М., 1941, с. 197.

108 Հ. Ս. Անասյան, *XVII դարի ազատագրական շարժումներն..., էջ 134։*

XVI դարից Վրաստանը քաղաքական լայն կապեր էր հաստատել Ռուսաստանի հետ Թուրքական ագրեսիային դիմագրավելու նպատակով։ Վրացիները, ինչպես և հայերը, վաղուց արդեն բարեկամական հարաբերություններ ունեին Ռուսաստանի և ռուս ժողովրդի հետ։ Հայերն ամեն կերպ ձգտում էին էական դեր կատարել «...վրացիների ու ռուսների միջև հանդուցավորող կապերն ամրապնդելու համար»[109]։

Ռուսաստանի հետ վարած դիվանագիտական բանակցություններում վրաց թագավորներից ոմանք օգտագործում էին հայ բանագնացներին։ «Թաթարական **լծի թոթափումից անմիջապես հետո,**— գրում է Վ. Կ. Ոսկանյանը,— Իվան III-ն ընդունեց Վրաստանի Ալեքսանդր թագավորի դեսպաններ Նարիմանին, Դեմյանին և Խոջի-Մարումին։ (Այս վերջինը, հավանաբար, հայ «խոջա» Միրաքն է, որը հայտնի դեմք էր վրացական արքունիքում և որը դիվանագիտական առաքելություններ էր կատարել Եվրոպայում)»[110]։ Վրաց թագավորը բացահայտելով իր երկրի ծանր վիճակը օտար տիրապետողների լծի տակ, խնդրում էր ցարի օգնությունն ու հովանավորությունը։ 1592 թ. Կախեթի թագավոր Ալեքսանդր II-ը Ֆեոդոր Իվանովիչ ցարի մոտ ուղարկում է Խուրշիդ և Արամ անուններով հայ բանագնացների։ 1598 թ. Ալեքսանդր թագավորը դեսպանի լիազորություններով Մոսկվա է ուղարկում «հայադավան» Լևոնին[111]։

Ռուսաստանը, սակայն, Թուրքիայի դեմ մղած պայքարում ձգտում էր Իրանի հետ միասնական ճակատով հանդես գալու։ Իրավացի է Աշ. Հովհաննիսյանը, երբ նկատում է, որ 1604 թ. Բուտելինի և Պլեշչեևի գլխավորությամբ կազմակերպված ռուսական արշավանքը Անդրկովկասում հետամուտ էր «...ընդառաջել հարավից արշավող շահ Աբասին և իրագործել Դերբենդի, Բաքվի և Շամախու շրջանների միակցումը Ռուսաստանին»[112]։ Չնայած այս արշավանքը անհաջողությամբ ավարտվեց, սակայն մեծ արձագանք ունեցավ վրացիների ու հայերի մոտ։

---

109 Աշ. Հովհաննիսյան, *Հայերի ռուսական օրիենտացիայի նախապատմությունից, ՊԲՀ, 1958, № 1, էջ 94։* Այդ մասին տես նաև *M. X. Сванидзе.* Из истории грузино-турецких взаимоотношений в XVI—XVII вв. (1578—1639 гг.), автореферат докт. дис., с. 32.

110 *V. A. Voskanian*, Les Arméniens à Moscou du XV au XVIIème siècle Revue des études arméniennes, Paris, 1972, t. IX, p. 427.

111 Աշ. Հովհաննիսյան, *Հայերի ռուսական օրիենտացիայի նախապատմությունից, էջ 95։*

112 *Նույն տեղում։*

Եվ այսպես, XVI—XVII դարերում ռուսների արտաքին քաղաքականությունը նախ և առաջ Անդրկովկասի հարցում, բացառապես ուղղված էր Թուրքերի դեմ։ Այս հանգամանքը չէր կարող իր արձագանքը չգտնել օսմանյան լծի տակ տառապող հայ ժողովրդի ներկայացուցիչների մոտ, որոնք քաղաքական ակնկալություններ պիտի ունենային Ռուսաստանից։ Այդ քաղաքական ակնկալությունները դրսևորվում էին մինչև իսկ գեղարվեստական գրականության ու ժողովրդական բանահյուսության մեջ, ուր Մոսկովյան պետությունը հանդես էր գալիս Արևելքի ճնշված ժողովուրդների փրկարարի դերում։

Հայ ժողովրդի Ռուսաստանից ունեցած քաղաքական ակնկալությունների մասին է խոսում «Թագուհի մի ես տեսայ ի քաղաքն, յԱնգունիայ» պոեմը, որը, հավանաբար, գրված պետք է լինի Իվան III-ի ժամանակ։ Մի քանի վարկածներով մեզ հասած այդ պոեմի գլխավոր հերոսը Իվան III ցարն է, որի հարսնացուն՝ հույն Սոֆիա Պալեոլոգը խնդրում է ռուսական ցարին ազատագրելու Կ. Պոլիսը[113]։

1550 թ. Կարապետ Բաղիշեցին, ակնարկելով հայոց քաղաքական ակնկալությունները Ռուսաստանից, իր չափածո երկում գրում էր.

Ի սառնամանիք հիւսիսն
է Ռուսս ազգն բրնական
Աշխարհն է նոցա Մոսկով
Մինչ ի ծովն Կազբիական,
Եւ ազգն նոցա գերի է
Թաթարն նեռողական
Այն՝ւ արձակ անկեալ է նա,
Որ հասնի մինչև ի Կաֆայն[114]

Հայերի քաղաքական ակնկալությունները Ռուսաստանից մեծապես աճեցին XVII դարում և հատկապես նրա երկրորդ կեսին, երբ ռուսական դիվանագիտությունն ու ռուսական հատուկ ռազմական զորամասերը եռանդուն գործունեություն ծավալեցին Կովկասում։ Ռուսաստանի միջազգային դիրքը ավելի ամրապնդվեց, երբ Ուկրաինան վերամիավորվեց Ռուսաստանի հետ։

1670 թվականից հետո Ռուսաստանը պատերազմական եռանդուն գործողություններ ծավալեց Թուրքիայի դեմ։ Ուկրաինայի միացումը

113 Նույն տեղում, էջ 97. տե՛ս նաև Աս. Մնացականյան, Հայ միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 272, 565։

114 Աշ. Հովհաննիսյան, Հայերի ռուսական օրիենտացիայի նախապատմությունից, էջ 98։

Ռուսական կայսրության սահմանները հասցրեց ընդհուպ մինչև Սև ծովը, մի հանգամանք, որը նոր, միանգամայն իրական հույսեր ներշնչեց Թուրքերի կողմից ստրկացված ժողովուրդներին։ Թուրքերի դեմ մղած պատերազմներում, հայերի համակրանքն ամբողջությամբ ռուսների կողմն էր։ Նկատի ունենալով «Սրբազան լիգայի» պատերազմները Թուրքիայի դեմ, որին մասնակցում էր և Ռուսաստանը, Զաքարիա Ագուլեցին գրում է. «Թէ Մօսկով, թէ լեհ, թէ Տրիջան (sic!) այստեղ կռիվ տվին, օսմանցանէ 185 հազար մարդ ըսպանեցաւ։ Մին դարդակ բերթ առին (օսմանցիք), դարձան, եկին Ատրանայ թէ թագաւոր, թէ զօրք։ Օսմանցիք այսպէս մնացին խայտառակ»[115]։

Կայսրուհի Սոֆիայի իշխանության տարիներին, Ռուսաստանը 1686 և 1687 թթ. երկու անգամ արշավանք ձեռնարկեց դեպի Ղրիմ։ XVII դարի 80—90-ական թվականներին, Թուրքիայի դեմ պատերազմում «Սրբազան լիգայի» երկրների ռազմական հաջողությունները մեծապես ոգևորեցին Թուրքերի կողմից ճնշված ժողովուրդներին. ապըստամբեցին սերբերը, բուլղարները, հույները, ալբանացիները։ 1686 թ. մեծ ապստամբություններ բռնկվեցին Բուլղարիայի Տոնովոյի և Սոֆիայի նահանգներում։ Բալկանյան սլավոնական ժողովուրդների համակրանքն ու սերը ամբողջությամբ Ռուսաստանի կողմն էր։ Ոտքի կանգնեց ամբողջ Վալախիան, որի իշխանը դիմեց Սոֆիա կայսրուհուն՝ խնդրելով ռազմական աջակցություն։ Ռուսաստանին էին դիմում այդ ժամանակ հայերն ու վրացիները։

1671 թ., երկրորդ անգամ, Սպահանի հայ առևտրական ընկերության հանձնարարությամբ Մոսկվա ժամանեց Լուսիկենցը (Լուսիկովը), որը հայտնեց դեսպանական պրիկազին, որ առևտրական պայմանագրի շուրջն անելիք առաջարկներից բացի ինքը, որպես «քրիստոնեական հավատքի մարդ», ցարին ունի ասելու նաև գաղտնի ասելիք («ծածուկ արզ»)[116], որը վկայում է այն մասին, թե Լուսիկենցի դեսպանությունը քաղաքական առաքելություն էր։ «Ծածուկ արզն», ըստ երևույթին, անմիջականորեն վերաբերում էր հայ ժողովրդի քաղաքական ազատագրմանը և ուղղված էր նախ և առաջ Թուրքիայի, ու, չէր բացառված, նաև Իրանի դեմ։ Եվ որպեսզի Իրանի դեմ արված

115 Զաքարիա Ագուլեցի, Օրագրություն, Երևան, 1938, էջ 106։

116 Վ. Կ. Ռսկանյանն առաջինն է եղել մեզանում, որ հրատարակել է Լուսիկենցի գործունեության մասին վերոհիշյալ նյութերը. տե՛ս „Армяно-русские отношения в XVII в (документы)», ч. I, Ереван, 1953, с. 70—71.

Լուսիկենցի որևէ առաջարկը տեղի չտար կասկածի կամ մեղադրանքի շահի կողմից, «ծածուկ արդի» բովանդակությունը պիտի գաղտնի մնար Իրանի տիրակալից։

1672 թ. Աղվանից Պետրոս կաթողիկոսը Ալեքսեյ Միխայլովիչ ցարին հղած մի նամակում, կանգ առնելով Լուսիկենցի գործունեության վրա, ողջություն ու բարեկեցություն է մաղթում ռուսական ցարին, նրան հաղթանակ ցանկանում թշնամիների դեմ ու աղերսում պաշտպանության տակ վերցնել հայ ժողովրդին[117]։

XVII դարի 70-ական թվականներին Ալեքսեյ Միխայլովիչ ցարին էր դիմում նաև էջմիածնի հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին, մի հանգամանք, որ խոսում է այն մասին, որ հայերը վերջնականապես թեքվում էին դեպի Ռուսաստանը։

1699 թ. հունվարի 26-ին Կարլովիցում Թուրքիայի հետ «Սրբազան լիգայի» պետությունների կնքած պայմանագրից հետո, հայերը իրենց ազատագրական հույսերը բացառապես կապեցին Ռուսաստանի հետ։ «Հայ ազատագրական շարժման և հայ ազատագրական մտքի վերոնական շրջադարձը դեպի Ռուսաստան, —գրում է Ա. Գ. Հովհաննիսյանը,— տեղի ունեցավ միջազգային քաղաքական նոր այն իրադրության մեջ, որ ստեղծվեց Կարլովիցի դաշնագրությունից հետո։ Սկսվում էր պատմական նոր մի շրջան, երբ Ռուսաստանը հանդես էր գալիս որպես միակ այն երկիրը, որի հետ կարող էին ազատագրական ռեալ հեռանկարներ կապել ոչ միայն հայ իշխող հասարակախավերը, այլև հայ ժողովրդական մասսաները։ Ե՛վ Իրանում, և՛ Թուրքիայում այդ շրջանում ստեղծվում էր մի վիճակ, որը նորից այժմեական էր դարձնում հայերի քաղաքական ակտիվ ինքնապաշտպանության խնդիրը»[118]։

Հենվելով ռուսական աջակցության վրա, XVIII դարի սկզբից Անդրկովկասի հայաշատ շրջաններում ու բուն Հայաստանում ծայր են առնում հայ ժողովրդի զինված ելույթները թուրք ու պարսիկ զավթիչների դեմ, որոնք, ի վերջո, հանգեցնում են ռուսական զենքի օգնությամբ Արևելյան Հայաստանի **ազատագրմանը։**

* * *

Նշեցինք, որ դեռևս XVIII դարի սկզբում, հայ իրականության ու Անդրկովկասի զեկավար շրջանները աչքի առաջ ունենալով Արևելքում

117 Նույն տեղում։

118 Աշ. Հովհաննիսյան, Հայերի ռուսական օրիենտացիայի նախապատմությունից, էջ 107—108։

Ռուսաստանի վարած գործուն քաղաքականությունն ու իրական շահերը, Ռուսաստանը համարում էին իրենց ամենահուսալի հովանավորն ու դաշնակիցը։ Նշեցինք նաև, որ Իսրայել Օրու ծրագիրը շոշափում էր ոչ միայն արևելահայ, այլև արևմտահայ լայն զանգվածների ազատագրական իղձերը։ Արևմտահայ ժողովուրդը արդեն հրաժարվել էր եվրոպական պետություններին դիմելու անցյալի փորձից և իր հայացքը, ինչպես և իր արևելահայ եղբայրները, սևեռել էր դեպի Ռուսաստան՝ հայցելով նրանից օգնություն։ Այս իրողությունն ավելի պարզ դրսևորվեց XVIII դարի 60-ական թվականներին, երբ ռուսական գահին բազմած Եկատերինա II-ը, շարունակելով ու զարգացնելով պետրոսյան արևելյան քաղաքականությունը, մեծ հույսեր ներշնչեց թուրքերի կողմից ճնշված ժողովուրդներին, որոնց թվում հայ ժողովրդի լայն զանգվածներին։

Դեռևս 1760 թ. հունիսի 17-ին Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Շամախեցին հատուկ կոնդակ է հղում Ելիզավետա կայսրուհուն, խնդրելով ընդառաջել ռազմական և տնտեսական օգնություն հայցելու նպատակով Ռուսաստան մեկնած վրաց թագավորին. «Եւ մի անտէս և անոյշս առնիցեք զմնծահաւատ Արքայդ այդ եկեալդ առ ոտս Ձեր և զմեզ աստի աղաչօղս , այլ որպէս հոգայք զՁեր օրհնեալ և բարգաւաճեալ ազգդ, խնդրեմք նոյնպէս զազգս մեր ողորմելի և զազգն վրաց, վասն զի մեք ևս եմք հաճապազ աղօթողք սակս հաստատուրեան թագաւորութեանդ Ձերոյ (ընդգծումը մերն է— Մ. Ղ.)»[119]։ Ջնայած այս կոնդակը հանգամանքների բերումով չհասավ իր հասցեատիրոջը, սակայն մնաց, որպես կարևորագույն վավերագրերից մեկը հայ ազատագրական շարժման պատմության մեջ։

Հակոբ Շամախեցու հաջորդ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ժամանակ էջմիածնի և ռուսական արքունիքի միջև հաստատվեցին է՛լ ավելի սերտ քաղաքական հարաբերություններ։ 1766 թ. օգոստոսի 1-ի թվակիր հատուկ նամակով Սիմեոն Երևանցին դիմում է Եկատերինա II կայսրուհուն և նրա որդի Պավել Պետրովիչին։ Կայսրուհին սիրալիր ընդունում է կաթողիկոսի պատվիրակ՝ էջմիածնի միաբան Դավիթ վարդապետին և 1768 թ. հուլիսի 30-ին հանձնում նրան մի հրովարտակ, որտեղ մասնավորապես ասված էր. «Հուսադրում ենք բոլորովին Սիմեոն ամենապատվելի պատրիարքին և պատվելի յուզբաշիներին և կառավարիչներին և բոլոր հայկազանց, առավելապես մեր ռուսաց

119 «Դիւան հայոց պատմութեան», հ. Գ, էջ 121։

կայսրության հովանավորության տակ ապրողներին, պահել նոցա մեր բարձրագույն կայսերական ողորմության և հովանավորության ներքո»[120]։

1773 թ. ռուսահայ թեմի առաջնորդ է նշանակվում Հովսեփ Արղության արքեպիսկոպոսը (1743—1801), որը և դարձավ հայ ազատագրական շարժման ամենագործունյա ու ամենակարկառուն դեմքերից մեկը։ Վայելելով մեծ հեղինակություն ռուսական արքունիքում, նա մասնակցել է համազգային ընդհանուր գործերին, մասնավորապես՝ Ղրիմից հայերի տեղափոխման, Նոր Նախիջևանի, ինչպես նաև Գրիգորիոպոլսի հիմնադրմանը։ Հովսեփ Արղությանը խորապես հետաքրքրվում էր նաև արևմտահայ ժողովրդի ազատագրման հարցով։ 1782 թ. դեկտեմբերին Գեորգիևսկյան ամրոցում նա գեներալ Պ. Ս. Պոտյոմկինի ուշադրությունը հրավիրում էր Արևմտյան Հայաստանի վրա, ուր նրա բառերով ասած, ապրում էին ավելի շատ հայեր, քան պարսկական նահանգներում[121]։

1783 թ. հունվարի 23-ին գեներալ Պ. Ս. Պոտյոմկինին գրած զեկուցագրի մեջ, Հովսեփ Արղությանը հույս էր հայտնում, որ ծրագրվող ռուսական արշավանքի ընթացքում Պ. Ս. Պոտյոմկինը կհասնի մինչև Արարատ՝ Երևան և էջմիածին։ Նա նշում էր, որ այստեղ համեմատաբար քիչ քանակությամբ հայեր են ապրում, մինչդեռ Արարատից այն կողմ ապրում են շատ հայեր, որոնք արիասիրտ մարդիկ են, սիրում են ռուսներին և սպասում են նրանց գալստյանը։ Շատ հավանական է, գրում էր նա, որ նրանցից շատերը իրենք կներկայանան գեներալին՝ նրա բանակի շարքերը մտնելու նպատակով։ Բացի այդ, ասված էր զեկուցագրում, այնտեղ ապրում են եզիդիներ, որոնք չնայած հեթանոսներ են, սակայն համերաշխ են քրիստոնյաների հետ[122]։

Գեներալ Պ. Ս. Պոտյոմկինին գրած մի ուրիշ զեկուցագրում, Հովսեփ Արղությանը «էլ ավելի բացահայտորեն խոսեց Թուրքական Հայաստանի մասին, հատուկ նշելով այնտեղի հայերի քաջության և ռուսասիրության մասին»[123]։

Անշուշտ, Հովսեփ Արղությանը անում էր նման եզրակացություններ հենվելով, նախ և առաջ, հայ ազատագրական շարժման ռահվիրա՝

120 Նույն տեղում, էջ ՃԻԸ—ՃԼ։

121 *А. Р. Иоаннисян*, Россия и армянское освободительное движение..., с. 43.

122 Նույն տեղում, էջ 44—45։

123 Նույն տեղում, էջ 45։

Հովսեփ էմինի՝[124] Արևմտյան Հայաստանում ազատագրական շարժման առաջնորդների հետ դարի 60-ական թվականներին ունեցած բանավարությունների վրա։ Հովսեփ Արղությանը քաջածանոթ էր Հովսեփ էմինի գործունեության հետ։

Դեռևս 1759 թ. մայիսին, իր ժողովրդին օտար լծից ազատագրելու մանկությունից փայփայած երազանքն իրականացնելու նպատակով, Հովսեփ էմինը՝ հնդկահայ այդ մեծ հայրենասերն, Անգլիայից ուղևորվում է Հայաստան։ Ավելի քան մեկ ամիս տևած ուղևորությունից հետո, Հովսեփ էմինը Հալեպի վրայով հասնում է Էրզրում և հյուրընկալվում է Ջենիս հայկական գյուղում։ Այստեղ Հովսեփ էմինը գյուղացիներին պատմում է իր կենսագրությունը ու բացահայտում իր ուղևորության քաղաքական նպատակները[125]։

Երկու ամիս անց, Հովսեփ էմինը ժամանում է էջմիածին և, տեղում ուսումնասիրելով Անդրկովկասի քաղաքական վիճակը, գալիս է վերջնական այն եզրակացությանը, որ Անդրկովկասի ժողովուրդներին, ինչպես և արևմտահայ զանգվածներին ընդունակ է փրկել միայն Ռու-

124 Հովսեփ էմինը ծնվել է 1726 թ. Իրանի Համադան քաղաքում, վաճառականի ընտանիքում։ Թուրք-իրանական պատերազմների ժամանակ էմինների ընտանիքը տեղափոխվում է Կալկաթա։ Փոքր հասակից, հակառակ հոր կամքին, որը ձգտում էր որդուն դարձնել վաճառական, Հ. էմինը երազում է դառնալ զինվորական ու գլխավորել հարազատ ժողովրդի ազատագրական շարժումը օտար տիրապետության դեմ։ Եվ ահա նա որոշում է մեկնել Անգլիա՝ ռազմական արվեստին տիրապետելու համար։ 1751 թ. նա գաղտնի մեկնում է Անգլիա և շուտով ճակատագրի բերումով կապեր է հաստատում անգլիական արիստոկրատիայի ականավոր ներկայացուցիչների հետ, այդ թվում նաև Անգլիայի թագավորի որդի կուբերլենդյան դուքսի հետ, որի միջնորդությամբ և ընդունվում է Վուլվիչի արքայական զինվորական ակադեմիան ու ձեռք բերում ռազմական գիտելիքներ։ Անգլիայից Հովսեփ էմինը նամակագրական կապ է հաստատում վրաց թագավոր Հերակլ II-ի հետ, որի համբավը տարածված էր համայն ողջ Եվրոպայում։ Էմինը նամակում հայտնում է վրաց թագավորին, թե ինքը պատրաստ է Անգլիայում ձեռք բերած գիտելիքները ի սպաս դնել վրաց պետության հզորացման գործին։ Նամակի վերջում Հ. էմինն առաջարկում է, հանուն վրաց պետության ուժեղացման, հովանավորության տակ վերցնել հայերին. այն ժամանակ, գրում է նա, Արևելքում և ոչ մի թագավորություն չպիտի կարողանա իր հարստությամբ ու փառքով մրցակցել Ձեզ հետ։ Հովսեփ էմինը, ինչպես և իր նախորդ Իսրայել Օրին, ի վերջո, հանգում է այն միակ ճշմարտության, որ հայերին փրկություն կարող է բերել միայն Ռուսաստանը, իսկ Վրաստանը հանդես էր գալու, որպես բնական դաշնակից (Հովսեփ էմինի կյանքի ու գործունեության մասին մանրամասն տե՛ս *А. Р. Иоаннисян*, Иосиф Эмин, Ереван, 1945)։

125 *А. Р. Иоаннисян*, Иосиф Эмин, с. 61.

սաստանը։ «Էմինի ծառայությունը այն է,— գրում է Ա. Ռ. Հովհաննիսյանը,— որ նա կարողացավ ըմբռնել մեծ ու հզոր ռուս ժողովրդի պետականության հետ հայերի և վրացիների սերտ միության պատմական անհրաժեշտությունը։ Լինելով անգլիական կրթության տեր անձնավորություն... նա կարողացավ մի շարք ձգտումներից ու ռոմանտիկ հափշտակումներից հետո, ճշմարտացի գնահատել ստեղծված պատմական իրավիճակը և հանգել միակ ճիշտ քաղաքական եզրակացությանը»[126]։

1762 թ. մարտին Հովսեփ Էմինը գալիս է ռուսական մայրաքաղաք։ Նրան ընդունում է ռուսական կանցլեր կոմս Մ. Ի. Վորոնցովը, որին նա մանրամասն պատմում է իր ծրագրերի մասին։ Պետերբուրգում Հ. Էմինը ազատագրական իր հույսերը ամբողջությամբ կապում էր նոր կայսրուհի Եկատերինա II-ի հետ, որը, դեռևս, գահ չբարձրացած, Էմինի հովանավորներից մեկին՝ Դյումարեսկին, ասել էր, որ ինքը կողմնակից է Հայկական պետականության վերականգնմանը, և որ ինքը մեծ համակրանք է տածում դեպի աշխատասեր հայ ժողովուրդը[127]։

Շուտով ռուսական արքունիքը Հ. Էմինի խնդրանքով նրան ուղարկում է Վրաստան՝ Հերակլի հետ տեսակցելու համար։ Աստրախանում, սակայն Ղզլարի պարետ՝ գեներալ-մայոր Ա. Ս. Ստուպիշինը նրան կասկածանքով է դիմավորում ու Հ. Էմինը ստիպված է լինում վերադառնալ Մոսկվա։ Այսուհանդերձ, Աստրախանում գտնվելու ժամանակ Հ. Էմինը ծավալում է լայն հայրենասիրական գործունեություն ու տեղի հայ բնակչությանը խանդավառում ազատագրական իր գաղափարներով։ «Էմինի կողմից հռչակված ազգային ազատագրական գաղափարները,— գրում է Ա. Ռ. Հովհաննիսյանը,— հայկական միջավայրում գտան բավականին լայն հասարակական արձագանք։ Հայերի անտանելի վիճակը ինչպես Իրանում, այնպես և Թուրքիայում, Օսմանյան կայսրության բացահայտ թուլացումն ու իրանական պետության անկումը և միաժամանակ Վրաստանի ուժեղացումն ու ռուսական (ցարիզմի) ծավալապաշտությունն արևելքում, ստեղծեցին բարենպաստ նախադրյալներ հայկական ազատագրական շարժման վերելքի համար»[128]։

126 Նույն տեղում, էջ 103։
127 Նույն տեղում, էջ 89։
128 Նույն տեղում, էջ 113։

Մոսկվայում ստանալով նոր անցագիր և նյութական օժանդակություն իր բարեկամներից, այդ թվում նաև Լազարյաններից, Հ. Էմինը 1763 թ. փետրվարին Աստրախանի վրայով ուղևորվում է դեպի Վրաստան։ Հերակլ թագավորն ընդունում է նրան մեծ ջերմությամբ և ուշադրությամբ ծանոթանում է նրա հանդուգն ազատագրական ծրագրի հետ, որի իրագործումն ինչ խոսք նպաստելու էր վրաց պետության հետագա ուժեղացմանը և հայ ժողովրդի փրկությանը։ Իսկ Հ. Էմինի ծրագիրն, ինչպես նշվեց, նախատեսում էր «...ոչ միայն հայկական մարզերի ազատագրումը Վրաստանի օգնությամբ, այլև ռուսական պետության պրոտեկտորատը հայ-վրացական դաշնակից պետության նկատմամբ։ Ռուսական մեծ պետության հետ սերտ համախմբվածությունը, որը պրոպագանդում էր Էմինը դեռևս XVIII դարի 60-ական թվականներին, հանդիսանում էր Անդրկովկասի ժողովուրդների համար ստեղծված ծանր վիճակից դուրս գալու համար միակ ու պատմականորեն արդարացված ելքը»[129]։

Սակայն Հերակլը, ինչպես ճիշտ նկատում է Ա. Ռ. Հովհաննիսյանը, ի վիճակի չէր հափշտակվելու Հ. Էմինի քաղաքական ծրագրով։ Դեռևս հզոր Օսմանյան կայսրությունից Հերակլը այն ժամանակ վախենում էր և չէր էլ մտածում նրա հետ պատերազմի մեջ մտնել հանուն հայկական հողերի ազատագրման։ Ինչ վերաբերում է թուլացած իրանական պետությանը, ապա Հերակլը միանգամայն բավարարված էր հարևան իրանական խանությունների վասալական կախմամբ[130]։

Դեռևս Մոսկվայում Հ. Էմինը ծանոթություն էր հաստատել Մշո սբ. Կարապետ վանքի[131] վանականներից մեկի՝ Տեր Սուքիասի հետ, որից իմացել էր, թե իր ծրագիրը ջերմ արձագանք կգտնի վանքի վանահայր Հովնանի մոտ։ Գտնվելով Վրաստանում, Հ. Էմինը նամակագրական լայն կապեր է հաստատում «Հայաստանի տարբեր մասերի» երևելիների հետ, սակայն պահպանվել են միայն Մշո սբ. Կարապետ

129 Նույն տեղում, էջ 131։
130 Նույն տեղում, էջ 129։
131 Այս վանքը կոչվում էր նաև Գլակավանք, քանի որ նրա առաջին վանահայրը եղել է ասորի վանական Զենոբ Գլակը, որն ըստ ավանդության վանահայր էր նշանակվել Գրիգոր Լուսավորչի կողմից։ Այս վանքն Արևմտյան Հայաստանում մեծ հեղինակություն ու ազդեցություն ուներ (տե՛ս Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց. Մեծ Հայք, Վենետիկ, 1822, էջ 98—102)։ Կ. Պոլսի պատրիարքարանից հետո Մշո սբ. Կարապետ վանքը Արևմտյան Հայաստանում հայկական եկեղեցու հիերարխիայի մեջ գրավում էր երկրորդ տեղը։

վանքի վանահայր՝ Հովնանի հետ ունեցած բանավարությունների մանրամասները։

Նախորդ գլուխներում, խոսեցինք արևմտահայ զանգվածների խեղճ ու իրավազուրկ վիճակի մասին։ Եվ բնական է, որ Հ. Էմինի ազատագրական պայքարի կոչը լայն արձագանք պետք է գտած լիներ արևմտահայ լայն զանգվածների շրջաններում։ Նրանք պատրաստ էին ապստամբելու ու զենքը ձեռքին պայքարելու իրենց դարավոր, սակայն ստրկացված երկրի ազատության ու անկախության համար։ Ահա Մշո սբ. Կարապետի վանահայրը՝ ժողովրդի ծոցից դուրս եկած ու ժողովրդի շահերով տառապող այդ հոգևորականը, արձագանքում է Հովսեփ Էմինին, պայմանով, որ վրաց Հերակլ թագավորը Արևմտյան Հայաստան օգնական ուժ ուղարկի, թեկուզ աննշան քանակությամբ։ Հովնանը, ինչպես գրում է Հ. Էմինը, պատասխան նամակում հայտնում է, որ «եթե նա (այսինքն՝ Հ. Էմինը) գա Թիֆլիսից թեկուզ, օրինակի համար, հիսուն վրացիների հետ, սակայն Հերակլի համաձայնությամբ այնպես, որ Թուրքերն իմանան, որ նա (Հերակլը) Էմինի բարեկամն է, ապա չորս հազար մարդիք պատրաստ կլինեն մտնելու նրա հրամանատարության ներքո, սակայն առանց Հերակլի համաձայնության կամ նրա կողմից պաշտպանության դա անհնարին է իրականացնել»[132]։

Այս և այլ հանգամանքները նկատի ուներ Հ. Էմինը, վրաց-Թուրքական հարաբերությունների սրման պայմաններում, երբ կոչ էր անում Հերակլին «...հինգ օրվա ընթացքում հավաքել հինգ հազար հեծյալ, տասը հազար հետևակ ու ներխուժել Բայազեդ, այնտեղից երեք օրվա ընթացքում հասնել Էրզրում և ապա շարժվել դեպի հարավ՝ Բիթլիս, Վան, Մուշ ու Թուցիկներ տարածել այն մասին, որ Հերակլը եկել է ազատագրելու Հայաստանը՝ իր հայրենի ժառանգությունը։ Այդ դեպքում Հերակլը ամենուր կհանդիպի ջերմ ընդունելության տեղացի հայերի կողմից։ Բայազեդում նրան սպասելու է 4000 մարդ, որոնց կմիանան ևս 12.000, իսկ Մշո հայերը կտրամադրեն 10.000 հեծյալ, ընդամենը 40.000 մարտիկներ կլինեն Հերակլի դրոշի ներքո»[133]։

Չափազանցության երանգներ պարունակող այս տվյալները ամենևին հիմնազուրկ չէին։ Դա բացահայտվում է Հ. Էմինի ինքնակենսագրական գրքում բերված Հովնանի մի նամակից, որտեղից պարզվում է, որ Հովնանը Էմինից ստացել է մի շարք նամակներ և որ տասնմեկ ամսվա ընթացքում նամակագրական կապեր է հաստատել Կ. Պոլսի, Զմյուռնիայի, Կեսարիայի, Թոխատի, Էրզրումի, Դիարբեքիրի, Վանի և Արևմտյան Հայաստանի այլ քաղաքների «Երևելի հայերի» հետ։ Համաձայն Հովնանի, նրան հաջողվել է թեքել նրանց Էմինի ձեռնարկած ազատագրական պայքարի գործին։

Խոսելով արևմտահայերի ապստամբության հեռանկարների մասին, Հովնանը, լավատեսորեն տրամադրված, նկարագրում է Օսմանյան կայսրության անկման մոտալ պատկերը, նշելով, որ Թուրքերը այլևս այն չեն, ինչ մի հարյուրամյակ առաջ էին, որ նրանց բերդերն ամրացված չեն և հեշտությամբ կարելի է գրավել դրանք, և որ Թուրքերն իրենք այլևս վստահ չեն իրենց պետության հարատևության վրա ու սպասում են նրա մոտալուտ կործանմանը։

Հովսեփ Էմինի անունը լայնորեն տարածված էր արևմտահայերի մոտ. նրա անվան շուրջ հյուսվում էին առասպելներ։ Այդ մասին է վկայում այն խուլ արձագանքը, որ գտել է 1765 թ. նոյեմբերի 13-ին Կ. Պոլսից Անանիա վարդապետին Ստեփանոս վարդապետի գրած նամակի հետևյալ տողերում. «...Որդի մի ի զարմէ թագաւորացն հայոց որք թագաւորեցին ի Կիլիկիոյ, մնացեալ է ասեն ի մոսկովաց երկրին, և նա անդ հասեալ ի հազարապետութեան պատիւ ի մէջ զօրացն մոսկովաց, ի ժամանակին յորժամ նորապսակ թագաւորն մոսկովաց առաքեաց զօրս թիկունս օգնականութեան նէմցեային ընդդեմ փրուսեային, սա բազում արութիւն քաջութեան ցուցեալ՝ ընդդէմ թշնամեացն և ի դարձին և յառաջ իսկ սիրելի եղեալ յաչս թագաւորին, խնդրեալ ասեն ի նմանէ թիկունս օգնականութեան դառնալ ի տէրութիւն թագաւորութեան իւրոյ։ Յայնհետէ թագաւորն մոսկովաց խորհեալ և թուլտուութիւն խնդրեալ վասն բանիս այսորիկ, այլոց թագաւորաց բարեկամաց իւրոց, ի գալ ամարանս եթէ հանդարտեսցի խռովութիւն վրացն ընդ տաճկաց, թագաւորեցուցանելոց է ասեն զսա ի տեղւոջ իւրում։ Ոչ գիտեմ զճշմարտութիւն պատմութեանս, և չեմ հաստատեալ յիրացն հաստատութեան ի վերայ, միայն թէ պատմողն զսոյն անձամբ խօսակից և ճանապարհորդակից էր պատգամաւորին, զոր առաքեալ էր թագաւորն մոսկովաց առ այլ թագաւորս»[134]։

132 *А. Р. Иоаннисян*, Иосиф Эмин, с. 147.

133 Նույն տեղում, էջ 144։

134 «Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար», էջ 228։

Հերակլը հավանություն է տալիս Արևմտյան Հայաստանում ապստամբություն կազմակերպելու մասին էմինյան ծրագրին, քանի որ 1764 թ. վրաց-թուրքական հարաբերությունները ծայրահեղորեն լարված էին, և պատերազմը թուրքերի հետ թվում էր անխուսափելի։ Նման պայմաններում, Հերակլը գտնում էր, որ վրաց պետության շահերը պահանջում էին հարվածել Թուրքիային թիկունքից՝ պաշտպանության տակ վերցնելով հայերի հնարավոր ապստամբական ելույթը։ Ուստի, վրաց թագավորը 1764 թ. մարտին էմինի մարդկանցից մեկի՝ Մահտեսի Գրիգորի միջոցով Հովնանին է ուղարկում հուսադրական մի նամակ։ Սակայն նամակատար Գրիգորը Երևանում ձերբակալվում է Երևանի խանի մարդկանց կողմից։ Գրիգորի մոտ հայտնաբերվում է նաև էմինի՝ Հովնանին հասցեագրած նամակը։ Էջմիածնի կաթողիկոս Սիմեոն Երևանցին, իմանալով նամակների բովանդակության մասին, ուղերձ է ուղարկում վրաց թագավորին, պահանջելով հեռացնել Հ. Էմինին Վրաստանից։ Կաթողիկոսը գտնում էր, որ էմինի գործունեությունն Անդրկովկասում և արևմտահայ գավառներում կարող են աղետաբեր հետևանքներ ունենալ հայերի համար։ Կաթողիկոսի երկյուղն հիմնազուրկ չէր։ «Ջամբռի» հեղինակն, անշուշտ, հոգու խորքում, երազում էր հայերի փրկությունը օտար լծից, սակայն գտնում էր, որ առանց հյուսիսի քրիստոնյա հզոր պետության օգնության հայերը միայնակ չեն կարող թոթափել այն։ Հայերի յուրաքանչյուր ինքնուրույն ելույթը Թուրքիայի և Իրանի դեմ հանդիսանալու էր, ըստ Սիմեոն Երևանցու, անպատասխանատու արկածախնդրություն իր բոլոր աղետաբեր հետևանքներով։ Կաթողիկոսը խորհուրդ է տալիս արքային խզել կապերը նաև սբ. Կարապետի վանահայր Հովնանի հետ։ «Յովհաննն որքան մարդ է,— գրում է նա արքային,— որ դու նորա գիր գրիցես վասն այդպիսւոյ բանի և գրատարն (Մահտեսի Գրիգորը— Մ. Զ.) ևս այդպես յիմար, որ ամենեցուն ցոյց տայցէ պարծելով։ Խնդրեմ զի լաւապես մտածեալ որոճայցես, և մանաւանդ զդա ևս զբաստացուցես զի զգիրն և զմարդիկս իւր յինքն ժողովեսցէ ու խոհեմութեամբ շարժիցէ, զի երկիրս այլազգոյ ձեռաց է և մեք ի ձեռս սոցա կամք»[135]։

Հերակլ թագավորը չէր կարող հաշվի չնստել կաթողիկոսի հետ և հրամայում է Հ. Էմինին հեռանալ Վրաստանից։ Վրաց արքան այդ քայլին դիմում էր, քանի որ 1764 թ. ամռանը, Կ. Պոլսում ռուսական

135 А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, с. 159

դեսպանի հետևանքով, թուրքական արշավանքի վտանգն արդեն վերացել էր, և նա չէր ցանկանում թուրքերի թիկունքում կազմակերպվող ապստամբության ղեկավարի հետ առնչությունների պատճառով սրել հարաբերությունները թուրքերի հետ։

Հովնանը բանադրվում է Էջմիածնի կաթողիկոսի կողմից, նրա դեմ ներկայացվում է տասը կետից բաղկացած մեղադրանք[136]։ Ամենածանր մեղադրանքներից մեկը կաթոլիկներին հովանավորելու մեջ էր։ Կաթողիկոսը նման մեղադրանք է ներկայացրել Հովնանին նրան հավատացյալների աչքում հեղինակազրկելու նպատակով։

Այնուհետև՝ Հովնանը մեղադրվում է այն բանում, որ նա ոչ միայն թույլ չի տվել Էջմիածնի նվիրակներին դրամ հավաքել Էջմիածնի օգտին հավատացյալներից, այլև իր նվիրակներին ուղարկել է այնտեղ, որը չի մտնում Մշո սբ. Կարապետի թեմի իրավասության տակ։ «...խաբես զժողովուրդսն Աստուծոյ, առնուս ի նոցանէ անիրաւութեամբ, —ասված է ամբաստանագրում, —և ճնշելով յանուն սրբոյ Կարապետին Քրիստոսի և վատնես շարաշար և անառակաբար ի կորուստ քոյդ կորուսեալ հոգոյդ և տուողացն։ Ով մոլեգնեալ դև, մտածե՞ս արդյոք, թե ո՞ւր մսխես զոր արիւնախառն ճմլես՝ զորմէ արգելում զգրիչս։ Կոյր թոչուն և գիշերաշրջիկ չղջիկդ, դու զրկեցեալ գոլով ի լուսոյ և զայլս կոյր համարես, գիտե՞ս թէ ո՞ւր շրջիս և զինչ գործես, զի՞ է քեզ ո՛վ անիծեալ և խանգարիչ տանս Հայոց՝ զրկել և կողոպտել զժողովուրդն Հայոց յանուն տանն սոցա, զտունս սոցա աւիրեալ զտունս այլոցն շինել»[137]։

Այնուհետև, Սիմեոն Երևանցու թողած «Հիշատակարանից» պարզվում է, որ «ապօրինաբար» հավաքված գումարի մի մասը Հովնանը հատկացրել է քուրդ բեկի որդուն. «բռնաւոր տեղւոյն Ալադին բեկին»։ Հիշատակարանից պարզվում է նաև, որ Հովնան այդ գումարը քուրդ բեկին տրամադրել է կամովին։ «Վասն զի՝ որպէս թէ երկրորդ աստուած ինքեան ստացեալ զբռնաւոր տեղւոյն զորդի Ալադին բէկին, կոյտս կոյտս տայր նմա, որ ո՛չ եթէ կանոնաւորապէս, և յաղագս նորին բռնութեամբ ինչ պահանջման, այլ անչափապէս և բազմիցս առանց նորին պահանջման այնու մտօք, զի միշտ բարեկամ մնասցէ ինքեան...»[138]։

136 Մատենադարան, ձեռ. № 2912, էջ 190—194։

137 Նույն տեղում, էջ 190—191։

138 «Դիւան Հայոց պատմութեան», հ. գ, հիշ. 1, էջ 227։

Հիշատակարանում մատնանշված Ալադին բեկի որդին, որի անունը Մաքսուդ բեկ էր, հաճախակի ապստամբել է սուլթանական կառավարության դեմ՝ օգտագործելով նաև Հովնանի իրեն հատկացրած դրամական միջոցները. «Ըզկեանս վանիցն կեղեքէր և անխնայ տայր պիղծ բռնաւորին տեղւոյն Մախսուտ բէկ կոչեցելոյն, որով զորանայր պիղծն և բազմիցս ապստամբիւր ի թագաւորէն Օսմանցոց։ Ուստի և յամենայնում ամի ելանէր յարքունուստ հրաման ի վերայ կարնոյ փաշային և այլոց, գնալ զօրու ի վերայ նորա և զգլուխն հատանել և զբերդն աւերել»[139]։

1768 թ. նոյեմբերին սկսած ռուս-թուրքական պատերազմը նոր թափ ու լիցքավորում տվեց հայ ազատագրական շարժմանը։ Եկատերինա II-ի մանիֆեստը՝ ուղղված բալկանյան երկրների ստրկացված քրիստոնյա ժողովուրդներին, իր արձագանքը գտավ նաև հայ ժողովրդի լայն զանգվածների մեջ։ 1769 թ. ամռանը Վրաստանին սահմանամերձ արևմտահայ գավառներում լուրեր են տարածվում Թուրքիայի դեմ Վրաստանի և Իմերեթիայի պատերազմի մեջ մտնելու և ռուսական արշավախմբային զորքի Կովկաս մուտք գործելու մասին։ Այս լուրերը բացառիկ տպավորություն են թողնում սահմանամերձ շրջանի հայության վրա, որոնք զանգվածորեն տեղափոխվում են Վրաստան։ Սալյանի ռուսական հյուպատոս Սուլյակովը հունիսի 12-ի իր զեկուցագրի մեջ հաղորդում էր, որ «Այժմ հայտնի դարձավ, որ թուրքական մարզերից ոչ քիչ թվով տեղաբնիկներ իրենց կանանցով և երեխաներով, ինչպես նաև իրենց ինչքով դիմեցին վրաց իշխան՝ Հերակլի պաշտպանությանը, խնդրելով նրանից վերցնել իրենք հովանավորության տակ, որը և արեց Հերակլը»[140]։

Ռուս-թուրքական պատերազմը և ռուսական զորքերի դեպի Կովկաս արշավելու հեռանկարը մեծ ոգևորություն առաջ բերեց նաև ռուսահայության մեջ, որոնք երազում էին իրենց հայրենիքի ազատագրության մասին։

1769 թ. հունիսի 8-ին արտաքին գործերի կոլեգիային ներկայացվեց չափազանց հետաքրքիր մի ծրագիր, որը նախատեսում էր հայկական մարզերի ազատագրումը և Ռուսաստանի հովանավորության ներքո Հայկական պետության ստեղծումը[141]։ Այդ ծրագրի հեղինակն էր Աստրախանի հայ մեծահարուստ Մովսես Սարաֆյանը։ Նա

139 *А. Р. Иоаннисян*, Иосиф Эмин, с. 154.

140 *А. Р. Иоаннисян*, Иосиф Эмин, с. 266.

141 Նույն տեղում։

ծրագրում առաջարկում էր հանուն «հայ ժողովրդի զարթոնքի» Թուրքիայի դեմ պատերազմի հանել վրաց թագավորներին՝ Հերակլին ու Սոլոմոնին և Վրաստան ուղարկել ռուսական բանակային կորպուս՝ ռուսական գեներալներից մեկի հրամանատարության ներքո։ Միաժամանակ, առաջարկվում էր հանձնարարել «երևելի» ու «հավատարիմ» մի ռուսահպատակի Ռուսաստանում բնակվող հայերից և վրացիներից կազմել կամավորական ջոկատ և ուղարկել Վրաստան։ Ջոկատի հրամանատարը, որը լինելու էր հայազգի, ենթարկվելու էր ռուսական արշավախմբային կորպուսի հրամանատարին։

Ծրագրի հաջորդ հիմնական հարցը Թուրքիայի դեմ պատերազմում Ղարաբաղի հայ մելիքների ներգրավումն էր։ Առաջարկվում էր, նախ և առաջ, գրավել Երևանը, որը իրական չէր, քանի որ այդ քայլը կտաներ միաժամանակ Իրանի հետ ռազմական ընդհարման։ Այնուհանդերձ, ծրագրի հեղինակը նշում է, որ Երևանի գրավումը մեծ ոգևորություն առաջ կբերեր հայերի մոտ և նրանցից հազարավորները Թուրքիայից, Իրանից կգային ու կմիանային ռուսական զորքին։ Այնուհետև, Երևանը ազատագրելուց հետո Հերակլ II-ը հարձակվելու էր Ախալցխայի և Կարսի, իսկ զորաբանակի մնացած մասերը՝ Բայազետի և ապա՝ Վանի վրա, հետո միացյալ բանակը շարունակելու էր առաջխաղացումը դեպի արևմուտք։ Ծրագրում մեծ տեղ էր հատկացվում արևմտահայերին, որոնք ամենուր ամենաեռանդուն գործունեություն էին ծավալելու հանուն իրենց հայրենիքի փրկության[142]։

Համաձայն Ա. Ռ. Հովհաննիսյանի կարծիքի, Հայաստանի ազատագրման այս կարևոր ծրագիրը, որը կազմվել է ռուսահայ ազդեցիկ շրջանների հավանությամբ, իր վրա կրում է Հ. Էմինի գաղափարների ազդեցությունը[143]։

Կաթողիկոսի բանադրանքից հետո, Հովնանը ստիպված է լինում փախչել Բալու։ Այնուհետև, 1766 թ. ամռանը Մաքսուդ բեկի նոր ապստամբության ժամանակ, երբ այս խնդրում մեղադրվում է նաև Հովնանը, Կ. Պոլսի պատրիարք Գրիգոր Բասմաջյանը պահանջում է, որ Մշո սբ. Կարապետի վանահայրն անմիջապես ներկայանա Կ. Պոլիս, հակառակ դեպքում սպառնում է նրան պատժել։ Պատրիարքը չէր հավատում Հովնանին ներկայացված մեղադրանքներին, և ըստ երե-

142 Մ. Սարաֆյանի ծրագրի բովանդակությունն ավելի մանրամասն տե՛ս *А. Р. Иоаннисян*, Иосиф Эмин, с. 270—277.

143 Նույն տեղում, էջ 274—275։

վույթին, ուզում էր օգնել նրան դուրս գալու ծանր վիճակից։ Հովնանին գրած նամակում պատրիարքն հայտնում է, որ իրենք «...Հոգ տարեալ և զգուշութեամբ խորհրդակցեալ ընդ մեծախորհուրդ իշխանացն մերոց գտաք զայն միայն հնար զի դու ժամանակ ինչ հեռանայցէիր յաչաց կեղեքողաց և գայիր ի քաղաքն»[144]։

Հովնանի բանադրանքի առթիվ շուտով կաթողիկոսը բողոքագիր է ստանում «Մուշի և Բաղեշի երևելի մարդկանց կողմից»[145], որտեղ պահանջվում էր վերականգնել Հովնանին իր պաշտոնում։ Նկատի ունենալով այս և այն, որ Հովնանը վայելում է Կ. Պոլսի պատրիարքի հովանավորությունը, որի արևմտահայ գավառների նկատմամբ ունեցած գերագույն իրավասության մասին կաթողիկոսը միշտ էլ թշնամաբար էր տրամադրված, ստիպված է լինում, ի վերջո, ներում շնորհել ծերունի Հովնանին։

Հովնանը վերադառնում է Մուշ ու ոգևորված ռուս-թուրքական պատերազմից, կրկին նախապատրաստվում է ապստամբությանը։ Հ. Էմինի ինքնակենսագրականից պարզվում է, որ Մուշում Հովնանը թաքցրել էր 8000 հրացան և «...պատրաստ էր հանձնելու չունեցողներին»[146]։ Հովնանը կապվում է Բասրայում գտնվող Հ. Էմինի հետ՝ նորից առաջ քաշելով ռուս-թուրքական պատերազմի բարենպաստ պայմաններում Արևմտյան Հայաստանում ապստամբություն բարձրացնելու ծրագիրը։ Ա. Ռ. Հովհաննիսյանը Հովսեփ Էմինին նվիրված մենագրության մեջ բերում է ռուսական արխիվներում պահպանված վկայություններ, որոնք խոսում են թուրքերի դեմ Արևմտյան Հայաստանում նախապատրաստվող ապստամբությունների մասին[147]։

Օգտվելով պատերազմական դրությունից, թուրքերի դեմ նախապատրաստվում էին ապստամբել ասորիներն ու եզիդիները։ Ասորիների կաթողիկոսը Սալմաստի հայ եպիսկոպոս Եսայու միջոցով նամակով հայտնում էր Հերակլ թագավորին, որ ինքը վրաց թագավորի տրամադրության տակ կդնի «քսան հազար ռազմիկ»։ Սալմաստի հայոց եպիսկոպոսը Հերակլի խնդրանքով բանակցությունների մեջ էր մտել նաև եզիդիների ցեղապետ Ջոբան աղայի հետ, որը հավաստիացնում էր վրաց թագավորին իր բոլոր հպատակներով հանդերձ

144 А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, с. 279.

145 Նույն տեղում։

146 Նույն տեղում, էջ 283։

147 Նույն տեղում, էջ 285։

անցնել նրա կողմը[148]։ Հերակլը 1769 թ. դեկտեմբերի 27-ին ռուսական արշավախմբի կորպուսի գեներալ Տոտլեբենին գրած նամակում հայտնում էր, որ ասորիները բազմիցս դիմել են իրեն՝ հայցելով օգնություն ընդդեմ թուրքերի[149]։ «Բոլոր այս տվյալները,— գրում է Ա. Ռ. Հովհաննիսյանը,— նկարագրում են թուրքերին ու իրանցիներին ենթակա հայերի ու այլ հպատակների մոտ առաջացած խոր հուզմունքի պատկերը՝ կապված ռուս-թուրքական պատերազմի հետ»[150]։

Սակայն հայերի, ասորիների և եզիդիների ցանկությունը չիրականացավ, քանի որ Տոտլեբենի զորքերը Կովկասում անհաջողության հանդիպեցին։ Դրությունը չփոխվեց նաև հետագայում, երբ 1771 թ. հունվարի 12-ին Տոտլեբենին փոխարինեց գեներալ-մայոր Սուխոտինը։ Ռուս-վրացական զորքերի ոչ մի ներխուժում Արևմտյան Հայաստան տեղի չունեցավ, որին այնքան սպասում էր Հովնանը՝ ապստամբություն բարձրացնելու համար[151]։

Պատերազմի ընթացքում ռուսներին համակրելու մեջ մեղադրվեց Կ. Պոլսի պատրիարք Գրիգոր Բասմաջյանը, որ սուլթանական հատուկ հրովարտակով պաշտոնազուրկ արվեց[152]։ Հավանաբար, վանահոր պաշտոնից հեռացվեց նաև Հովնանը. 1782 թ. այդ պաշտոնն արդեն վարում էր Աստվածատուր վարդապետը[153]։

XVIII դարի վերջում, երբ ռուսական արքունիքում կրկին օրակարգի հարց էր դարձել Անդրկովկասի աղատագրումը, նախատեսվում էր Ախալցխայի մարզը հանձնել Հերակլին, իսկ Արևմտյան Հայաստանը պետք է կցվեր իր «հիմնական կորպուսին», այսինքն նախկին իրանական նահանգներից կազմված Հայկական պետությանը, որը վայելելու էր մեծ ու հզոր Ռուսաստանի հովանավորությունը։

148 Նույն տեղում, էջ 287։

149 Նույն տեղում, էջ 289։

150 Նույն տեղում, էջ 291։

151 Նույն տեղում, էջ 292.

152 Նույն տեղում։

153 Նույն տեղում։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ա) Ձեռագիր աղբյուրներ

Ցանկ ՀՍՍՀ Մ. Մաշտոցի անվան պետ. Մատենադարանի օգտագործված ձեռագրերի (համարական հերթականությամբ)

1127	2039	4175	4912	6093	7786
1282	2672	4470	5057	6206	7816
1299	2775	4515	5315	6273	8104
1354	2845	4692	5345	6282	8939
1496	2912			6420	
1541	3178	4721	5348	7087	9222
1675	3843	4798	5398	7377	10021
1875	3872	4904	5675	7744	

Մատենադարան. Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ № 133։

բ) Տպագիր աղբյուրներ

Աբրահամ Երևանցի, *Պատմութիւն պատերազմացն, Երևան, 1938։*

Աբրահամ Կրետացի, *Պատմութիւն անցիցն իրոց և Նատր-շահին Պարսից, քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ Ն. Կ. Ղորղանյանի, Երևան, 1973։*

Ազարիա Սասնեցի, *Ողբ և վերայ հարուածոց արևելեան գաւառացն և աշխարհին Հայոց ի ձեռաց Ճելալեանց, «Հանդէս ամսօրյա», 1936։*

Առաքել Դավրիժեցի, *Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, սակս դիպուածոց Հայաստանեայց և գաւառին Արարատայ և մասին Գողթան գաւառի սկսեալ ի ՌԺԱ թուականին հայոց մինչ ի ՌՃԺԱ թ., Վաղարշապատ, 1896։*

Գրիգոր Դարանաղցի, *Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, հրատ. Մեսրոպ Նշանյանի, Եր ուսաղեմ, 1915։*

Գեորգ վրդ. Մալէիմ-օղլի, *Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկաբնակաց, Կ. Պոլիս, 1734։*

«Գիւան հայոց պատմութեան ԺԵ—ԺԹ դարեր», հրատարակեց Գիւտ Աղանեանց, Թիֆլիս, 1912։

Երեմիա Չելեբի, *Ստամպօլայ պատմութիւն, հ. I, Վիեննա, 1913, հ. II, Վիեննա, 1932, հ. III, Վիեննա, 1939։*

Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյան, *Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելոյ յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839։*

Զաքարիա Քանաքեռցի, *Զաքարեայ սարկաւագի պատմութիւն, հ. Բ, Վաղարշապատ, 1870։*

«ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (կազմեց Լ. Ս. Խաչիկյան), հ. Ա, Երևան, 1955, հ. Բ, Երևան, 1956, հ. Գ, Երևան, 1967։

Ղ. Ինճիճյան, *Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, Վենետիկ, 1806։*

Լալայան Ե., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915։*

Հակոբ Բաթուկեցի, *Ողբ ի վերայ Եւդոկիա քաղաքին՝ որ այժմ ասի Թոխաթ, զոր ոմն անօրէն Տէլու Հասան ասեն որ էկաւ, այրեաց և աւերեաց զաշխարհն (տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 608—610)։*

Հակոբ Կարնեցի, *Տեղագիր վերին հայոց, յիշատակարան ԺԷ դարու (հրատ. Կ. Կոստանյանց), Վաղարշապատ, 1903։*

Հովհ. Հակոբյան, *Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932։*

Հովհաննես Սեբաստացի, *Պատմութիւն Սեբաստիոյ, աշխատասիրությամբ Բ. Լ. Զուգասզյանի, Երևան, 1974։*

«Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար, 1707—1773», կազմեց Հ. Ղեվոնդ Տայեան, Վենետիկ, 1930։

«Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ», հ. 1, Վենետիկ, 1914, հ. 2, 1924։

«Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ», հ. 3, հորինեցին Հ. Բարսեղ Սարգիսյան և Հ. Գրիգոր Սարգսյան, Վենետիկ 1966։

«Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Ա—Զ, Երուսաղեմ, 1966—1972։

Մանանդյան Հ., Անանյան Հ., *Հայոց նոր վկաներ, Վաղարշապատ, 1903։*

«Մանր ժամանակագրություններ, XIII—XVIII դարերի», կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. 1, Երևան, 1951, հ. 2, Երևան, 1956։

«Մատենադարանի պարսկերեն վավերագրեր, հրովարտակներ», կազմեց Հ. Դ. Փափազյան, պրակ Ա, Երևան, 1958, պրակ Բ, 1959։

Մելիքսեթ-բեկ Լ. Մ., *Վրաց աղբյուրները Հայաստանի մասին, հ. 3, Երևան, 1955։*

Չամչյան Մ., *Պատմություն հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786։*

Պետրոս Դի Սարգիս Գիլանենց, *Ժամանակագրութիւն, Թիֆլիս, 1873։*

Սարգսյան Բ., *Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ, հ. 1, Վենետիկ, 1914, հ. 2, Վենետիկ, 1924։*

(Սիմէոն Լեհացի), *Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն (հրատ. Հ. Ակինյան), «Հանդէս ամսօրյա», 1934, 1935։*

Սիմեոն Երևանցի, *Ջամբռ, Վաղարշապատ, 1875։*

Ստեփանոս Թոխատեցի, *Ողբ և ոտանաւոր տաղ ի վերայ Եւդոկիա մեծի քաղաքին որ այժմ Թոխաթ ասի, զոր անօրէն և անհաւատ Տելու Հասան Ղարայ Եաղբէին դալի և ճելալի յայտնեցաւ, և զերկիրս Հայոց և Հոռոմոց յԱւհայոյ մինչև ի յԱւսկուտարն՝ ծովեզերօք և բոլորօքն հանդերձ էրեց և աւերեց, թալանեց և գերեց, զբազումն սպանեց և զշատս փախոյց, զոր ես Ստեփանոս Թոխաթեցի էրեցս՝ զորն աչօք տեսի և զորն ականջօք լուայ, և զսակաւ բանս ասացի անյարմար գոլով (տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, մասն Բ, էջ 605—608)։*

Սրվանձտյան Գ., *Թորոս աղբար, հ. 2, Կ. Պոլիս, 1888։*

«Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», կազմեց Հ. Յակոբոս Տաշեան, Վիեննա, 1895։

«Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա», հ. Բ, կազմեց Հ. Համազասպ Ոսկյան, Վիեննա, 1963։

«Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին», կազմեց Մեսրոպ վրդ. Քեշիշյան, Վիեննա, 1964։

«Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», կազմեց Ե. Լալայան, Թիֆլիս, 1915։

«Ցուցակ ձեռագրաց Հալաթիոյ ազգային մատենադարանին Հայոց», կազմեց Բարկեն Արոռակից Կարողիկոս, Անթիլիաս, 1961։

«Ցուցակ ձեռագրաց Մշոյ Սուրբ Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայից», կազմեցին Սահակ Ա. Մուրատյան, Նազարեթ Բ. Մարտիրոսյան, Երուսաղեմ, 1967։

Փափազյան Հ., Վաղարշապատ գյուղի 1725—1728 թթ. թուրքական հարկացուցակները («Բանբեր Մատենադարանի», № 5)։

Арутюнян П. Т., Тер-Авакимова С. А., Акопян В. А., Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов под редакцией академика А. Г. Иоаннисяна, т. II, ч. I—II, Ереван, 1965, 1967.

Соловьев С. М., История России с древнейших времен, т. VII—VIII, М., 1962.

Ahmet Cevdet (Paşa), Tarih-i Cevdet, c. I—XII, Bas. 2, Istanbul, Matbaa-i Osmaniyye, 1309 (1893).

(*Ahmet Vasıf*), Mehasin el asar ve hakayik-el-ahbar, c. I—II, Mısır, Bulak, 1246 (1830—1831).

Asım Küçükçelebizade Ismail, Tarih-i Çelebizade, Istanbul, Müteferika Matbaasi, 1153 (1740—1741).

Aşikpasazade, Die altosmanische chronik des Asikpaşazade auf Grund mehrerer neuendeckter Hendschriften, von neues herausgegeben von Friedrich Giese, Leipzig, 1929.

«Аграрный строй Османской империи XV—XVIII вв.». Документы и материалы. Составление, перевод и комментарии А. С. Тверитиновой, М., 1963.

Ayni Ali, Kavanin-i al-i Osman ve hulasa-i mezamin-i defter-i divan, Istanbul, 1280 (1863).

Ayni Omer Efendi, Kanun-i osmani mefhum-i defter-i hakâni, Belleten, 1951, c, XV.

Barkan Omer Lütfi, XV ve XV inci asırlarda Osmanlı Imperatorluğunda zirai ekonominin hukukî ve malî esasları, I cilt, kanunlar, Istanbul, 1945.

«Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI—XVII դդ. կանոնադրությունները)», թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի և Մ. Կ. Ջուլալյանի, Երևան, 1964։

Gökbilgin M. Tayyib, XV—XVI inci asırlarda Edirne ve Paşa livası, Vakıflar-mülkler-mukatalar, Istanbul, 1952.

Hüsamuddin Amasyalı, Amasya tarihi, c. I—IV, Istanbul, 1327 (1935).

Izzi Süleyman, Tarih-i Izzi, c. I—II, Istanbul, 1199 (1783).

Kâtib Çelebi, Fezleke-i tarih, c. I—II, Istanbul, 1286—1287 (1869—1870).

Kâtib Çelebi, Düstür-ul-amel fi islah-ul-halal, Istanbul, 1280 (1863).

(*Koçi Bey*), Risale-i Koçibey, Istanbul, 1277 (1860).

Koçi Bey risalesi, Şimdiye kadar elde edilememiş olan tarihi eserin tamamı. Eseri bulup tahsiye eden *Ali Kemali Aksüt*, Istanbul, 1939.

Raşid (Mehmet), Tarih-i Raşid, c. I—III. Istanbul, Ibrahim Müteferika matbaası, 1153 (1740—1741).

Subhi Mehmet, Sami, Subhi, Şakir tarihi (Tnrih-i Subhi), Istanbul, Darüttıbaat, 1198 (1784).

В. Д. Смирнов, Кучибей Гёмюрджинский и другие османские писатели XVII в о причинах упадка Турции, СПб., 1873.

А С. Тверитинова, Второй трактат Кочибея. Ученые записки Института востоковедения, т. VI, М.—Л., 1963.

А.С. Тверитинова, Книга законов султана Селима I, М., 1969.

(*Evliya Çelebi*). Evliya Çelebi seyahatnâmesi. c. 1—10, Istanbul, 1896—1938.

(*Evliya Çelebi*). Evliya Çelebi seyahatnâmesi, hazirlayan Reşat Ekrem Koçu, c. I—IV, Istanbul, 1938—1949.

(*Hammer J.*). Narrative of travels in Europe, Asia and Africa in the seventeenth century, by Evliya Efendi. Translated from the Turkish by the ritter Joseph von Hammer, vol, I—II, London, 1834—1850.

Münecim Başı Derviş Ahmed, Sahaif-ül ahbar, c. I—III, Istanbul, 1258 (1868).

(*Naima Mustafa*). Tarih-i Nâima, c. I—VI, Istanbul, 1280 (1863).

Naima, Annals of the Turkish empire from 1591 to 1650 of the christian era. Translated by Ch. Fraser. I, London, 1832.

(*I. Peçevi*), Tarih-i Peçevi, Istanbul, 1283 (1868).

(*M. Selâniki*), Mustafa Selâniki. Tarih-i Selâniki, Istanbul, 1281 (1865).

Solakzade Hamdemi, Tarih-i al-i Osman, Istanbul, 1297 (1879).

«Пространный реестр Гюрджистанского вилайета», турецкий текст издал, перевел, исследованием и комментарием снабдил С. С. Джикия, кн. I, текст, Тбилиси, 1947.

Précis historique de la guerre des Turcs contre les Russes... par *Vassif-efendi*. Traduit par P. A. Caussin de Perceval. Paris, 1820.

"Shéref-Nameh ou Histoire des Kourdes par Shéréf, prince de de Bidlis". publiée par V. Véliaminof-Zernof, texte persan, vol. I—II, St. Pbg. 1860—1862.

Шараф-Хан Бидлиси, Шараф намэ, перевод, передисловие, примечания и приложения Е. И. Васильевой, М., 1967.

"A Chronicle of the Early Safawids being the Ahsanu't-tawarikh of *Hasan-i Rumlu* ", Transl. and ed. by C. N. Seddon, Baroda, 1934.

Albert Vandal, Une ambassade française en Orient sous Louis XV. La mission du *marquis de Villeneuve*, 1728—1741, Paris, 1887.

(*de Bonnac*), Mémoire historique sur l'ambassade de France à Constantinople par le marquis de Bonnac, publié par M. Charles Schéfér, Paris, 1894.

(*Bonneval*), Mémoires du comte de Bonneval, vol. II, Paris, 1808.

M. Brosset, Histoire de la Géorgie depuis l'antiquité lusqu'au XIX siècle, SPB., 1849—1858.

Chardin Jean De, Voyages du chevalier Chardin en Psrse et autres lieux de l'Orient, t. I—IX, Paris, 1811—1820.

Conybeare Fr. C., A Catalogue of the Armenian manuscripts in the British Museum, London, 1913.

(*De la Croix*), Etat général de l'empire ottoman, par un solitaire turc. Trad. par M. de la Croix, vol. 1—3, Paris, 1695.

Della Vallé, Voyages, t. I, II, III, Rouen, 1645.

Febvre Michel, L'état présent de la Turquie où il est traité des vies, moeurs et coutumes des ottomans et autres peuples de leur empire, Paris, 1675.
Couvea, Antoine Fr. De, Relations de grandes guerres et victoires obtenues par le roi de Perse de Cha Abbas contre les empereurs de Turquie, Mahomet et Ahmed son fils. Trad. de l'origine portugais. Rouen, 1646.
Henry Grenville, Observations sur l'état actuel de l'empire ottoman. Edited by Andrew s. Ehrenkretz. The university of Michigan Press, 1971.
Le Comte de Marsigli, L'état militaire de l'empire ottoman, Amsderdam, 1732.
H. Mignot, Histoire de l'empire ottoman depuis son origine iusqu'à la paix de Belgrade en 1740, Paris, 1742.
Mans Raphael Du, Estai de la Perse en 166.), éditée et annotée par. Ch. Schéfér, Paris, 1885.
Tavernier J. B., Les six voyages de Jean Babtiste Tavernier en Perse et aux Indes, Paris, 1679.
Tournefort Pitton De, Relation d'un voyage du Levant, v. I—III, Lyon, 1717.
Tott (*Baron de*), Mémoircs sur les Turcs et les Tartarcs, vol. I—II, Amsterdam, 1784; Observations critiques sur les mémoires de M. le baron de Tott pour servir à l'histoire des Turcs et des Tartares par M. Peyssonnel, Paris, 1785.
Saint-Priest (*M. le Comte*), Mémoires sur l'ambassade de France en Turquie et sur le commerce des français dans le Levant, Paris, 1877.
Salaberry (*De*) Histoire de l'empire ottoman, tome III, Paris, 1748.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղ., *Այրարատ*, Վենետիկ, 1890։
Ալիշան Ղ., *Հայ-Վենետ*, Վենետիկ, 1896։
Ալիշան Ղ., *Հայապատում*, Վենետիկ, 1901։
Ալպոյաճյան Ա., *Պատմութիւն Եվդոկիոյ հայոց*, Կահիրե, 1952։
Ալպոյաճյան Ա., *Պատմութիւն հայ Կեսարիոյ*, Կահիրե, 1957։
Ալպոյաճյան Ա., *Պատմութիւն հայ գաղթականութեան*, հ. Գ, Կահիրե, 1961։
Ակինյան Ն., *Բաղեշի դպրոցը (1500—1704 թթ.)*, Վիեննա, 1952։
Ակինյան Ն., *Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ*, Վիեննա, 1920։
Ակինյան Ն., *Ազատութեան շարժումները ԺԵ—ԺԶ դարուն հայոց մեջ*, «Հանդէս ամսօրյա», 1918—1919, № 11—12։
Ակինյան Ն., *Հին պանդուխտ տաղասացներ*, Վիեննա, 1921։
Ակինյան Ն., *Մաղաքիա Դերջանցի*, «Հանդէս ամսօրյա», 1952, № 11—12։
Անասյան Հ. Ս., *Նպաստ մը հայոց ազատագրական պատմության. Մահտեսի Շահմուրատ և Հովհաննես Թութունջի*, «Երկունք», 1934, հոկտեմբեր-դեկտեմբեր։
Անասյան Հ. Ս., *Թուրքական տիրապետությունը Հայաստանում 17-րդ դարում*, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1951, № 5։
Անասյան Հ. Ս., *Հայ-հունական ազատագրական շարժման մի էջ Կանդիայի պատերազմի շրջանից (XVII դար)*, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1954, № 3։
Անասյան Հ. Ս., *Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին*, Երևան, 1953։

Անասյան Հ. Ս., *Դիտողություններ Ստեփանոս Սալմաստեցու կենսագրության վերաբերյալ*, «Էջմիածին», 1956, № 8—9, 11—12։
Անասյան Հ. Ս., *XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում*, Երևան, 1961։
Այվազովսկի Գ. Վ., *Պատմություն օսմանյան պետության*, հ. Ա, Բ, Վենետիկ, 1841։
Ավդալբեկյան Թ., *Գլխահարկը Թուրքիայում XVII—XVIII դարերում*, ՊԲՀ, 1959, № 1։
Բաբայան Լ. Հ., *Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության մեջ*, Երևան, 1970։
Զուլալյան Մ. Կ., *XVI դարում Արևմտյան Հայաստանում տիրող թուրքական հարկային սիստեմը* (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1958, № 2)։
Զուլալյան Մ. Կ., *Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանի տերիտորիայի վրա և նրանց հետևանքները (1500—1555 թթ.)*, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1959, № 3, «Թուրք-պարսկական պատերազմները... (1555—1590 թթ.)», «Տեղեկագիր» հաս. գիտ., 1961, № 3։
Զուլալյան Մ. Կ., *«Դեվշիրմեն» (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների*, ՊԲՀ, 1959, № 2—3։
Զուլալյան Մ. Կ., *Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանում և նրանց հետևանքները (1590—1639 թթ.)*, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ., 1967, № 2։
Զուլալյան Մ. Կ., *Է. Չելեբու «Սեյահեթ-Նամե»-ն որպես XVII դարի Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության աղբյուրներից մեկը*, ՊԲՀ, 1962, № 4։
Զուլալյան Մ. Կ., *Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ*, Երևան, 1966։
Լեո, *Հայոց պատմություն*, հ. Գ, Երևան, 1969։
Լեո, *Խոջայական կապիտալ*, Երևան, 1932։
Խաչիկյան Լ. Ս., *Հայկական գյուղական համայնքը XIV—XV դդ.*, ՊԲՀ, 1958, № 1։
Կոստանյանց Կ., *Գրիգորիս Աղթամարցին և իր տաղերը*, Թիֆլիս, 1898։
Կոստանյանց Կ., *Ողբ սրբոյն կաթողիկոսութեան Ստ. Օրբելյանի*, Տիֆլիս, 1895։
Հովհաննիսյան Աշ., *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*, հ. Ա, Երևան, 1957, հ. Բ, Երևան, 1959։
Հովհաննիսյան Աշ., *Հայերի ռուսական օրիենտացիայի նախապատմությունից*, ՊԲՀ, 1958, № 1։
Ղազարյան Հ. Մ., *Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ.*, Երևան, 1967։
Մարտիրոսյան Վ. Մ., *Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում*, Երևան, 1971։
Մրմրյան Հ., *Թուրքահայոց հին վաճառականութիւն և վաճառականք*, Կ. Պոլիս 1908։
Մրմրյան Հ., *Մասնական պատմութիւն հայ մեծատուններու 1400 էն 1900*, Կ. Պոլիս, 1910։
Նաջարյան Հ. Խ., *Թուրք-իրանական հարաբերությունները XVI դ. և XVII դ. առաջին կեսին և Հայաստանը*, Երևան, 1961։
Ոսկյան Հ., *Վասպուրականի-Վանի վանքերը*, Վիեննա, 1940։
Ոսկյան Հ., *Տարոն-Տարուբերանի վանքերը*, Վիեննա, 1953։
Ոսկանյան Վ. Կ., *Հայերը Մոսկվայում XV—XVII դդ.*, ՊԲՀ, 1971, № 1։

Ոսկանյան Վ. Կ., Դիլոյան Վ. Ա., Թուրքիայի քաղաքականությունը Անդրկովկասում XVIII դ. 20-ական թվականներին (նոր վավերագրեր), ՊԲՀ, 1964, № 2։
Ոսկանյան Վ. Կ., Մարտիրոսյան Վ. Մ., Նոր վավեռագրեր 1720-ական թվականների հայ ազատագրական շարժման վերաբերյալ, ՊԲՀ, 1962, № 4։
Սիրունի Հ., Պոլիս և իր դերը, հ. Ա, Բեյրութ, 1965։
Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Բ, կ. Պոլիս, 1914։

Абдурахманов А., Азербайджан во взаимоотношениях России, Турции и Ирана в первой половине XVIII века. Баку, 1964.
Арутюнян П. Т., Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, Ереван, 1954.
Ашрафян К., Падение державы Сефевидов (1502—1722). Очерки по новой истории стран Среднего Востока М., 1951.
Галоян Г. А., Россия и народы Закавказья, М., 1976.
Гордлевский В. В., Государство сельджукидов Малой Азии, М.—Л., 1941.
Гордлевский В. В., Внутреннее состояние Турции во второй половине XVI в. Труды Московского института востоковедения, сб. № 2, М., 1940.
Зулалян М. К., Армения в первой половине XVI века, М., 1971.
Иоаннисян А. Р., Иосиф Эмин, Ереван, 1945.
Иоаннисян А. Р., Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия Ереван, 1947.
Ибрагимов Г., Крестьянские восстания в Турции в XVI—XVII вв. «Византийский временник», М., 1953, № 7.
Крымский А., История Турции и ее литературы от расцвета до начала упадка, М., 1910.
Крымский А., История Турции и ее литературы, т. 1 (от возникновения до начала расцвета), М., 1916.
Миллер А. Ф., Краткая история Турции, М., 1945.
Миллер А. Ф., Мустафа паша Байрактар, М.—Л., 1949.
Новичев А. Д., Крестянское восстание в Турции в начале XV века, «Проблемы востоковедения», 1960, № 3.
Новичев А. Д., К вопросу о феодальных отношениях и положении крестьян в Турции во второй половине XV века, Ученые записки ЛГУ, № 249, 1961.
Новичев А Д., История Турции. Эпоха феодализма, Л., 1963.
Орбели И. А., Хасан-Джалал, князь Хаченский, СПб, 1909.
Орешкова С. Ф., Русско-турецкие отношения в начале XVIII века, М., 1971.
Папазян А. Д., Аграрные отношения в Ереванском ханстве в XVIII веке, Автореферат, Ереван, 1954.
Пайчадзе Г. Г., Русско-грузинские отношения в 1725—1735гг., Тбилиси, 1965.
Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Л., 1949.
Рахмани А., Тарих-и алем арай-и Аббаси, как источник по истории Азербайджана, Баку, 1961.
Сванидзе М. Х., Из истории грузино-турецких отношений в XVI—XVII вв. (на груз. яз.), Тбилиси, 1971.

Сванидзе М. Х., О юрдлуках и оджаклыках, как одной из форм землевладения в Османской империи, М., 1966.
Смирнов В. Д., Очерки истории турецкой литературы, СПБ, 1901.
Смирнов Н. А., Россия и Турция в XVI и XVII вв., М., 1946.
Тверитинова А. С., Восстание Кара-Языджи-Дели Хасана в Турции, М.—Л., 1946.
Тверитинова А. С., Законоположения о провинциях Османской империи в XV—XVI вв., «Краткие сообщения Института востоковеденя», т. XXVI, М., 1958.
Тверитинова А. С., К вопросу о крестьянстве и крестьянском землепользовании в Османской империи (XV—XVI вв.). УЗИВ, т. XVII, М., 1959.
Шенгелия Н., Турецкие налоги и обязательства по «Пространному реестру Гюрджистанского вилайета, «восточный сборник», т. I, Тбилиси, 1960.
Эфендиев О. А., Образование Азербайджанского государства Сефевидов в начале XVI в., Баку, 1961.
Abelons F., L'évolution de la Turquie dans ses rapports avec les étrangers, Paris, 1928.
Akdağ M., Osmanlı Imperatorluğunun kuruluş ve inkişafı devrinde Türkiyenin iktisadî vaziyeti, "Belleten", c. XIII, 1942, № 51, 55.
Akdağ M., Türkiyenin iktisadî ve ictimaî tarihi, c. I, 1242—1453, Ankara, 1952.
Aktepe Münir. Patrona isyâni (1730), Istanbul, 1958,
(*Altınay*) *Ahmed Refik*, Osmanlı devrinde Rafiziilik ve Bektaşılık, Istanbul, 1932.
(*Altınay*) *Ahmed Refik*, Osmanlı devrinde zorbalar, Istanbul, 1932.
Babinger F., Die Geschichtsschreiber der Osmanen und ihre werke, Leipzig, 1927.
Belin M., Essais sur l'histoire économique de la Turquie, d'après les écrivains originaux. "Journal Asiatique", vol. 3—5, 1864.
Belin M., Etude sur la propriété foncière en pays musulmans, et notamment en Turquie, "Journal Asiatique", vol. XVIII—XIX, 1873,
Belin M., Du régime des fiefs militaires dans l'islamisme et principalement en Turquie, "Journal Asiatique", vol. XV, 1870.
Browne E. G., A history of Persian literary in modern times A. D. 1500—1924, Cambridge, 1924.
Burmov A., Les problèmes de la conquête de la péninsule des Balkans par les Turcs, Etudes historiques, Sofia, 1961.
Cahun L., Introduction à l'histoire de l'Asie, Paris, 1896,
Çark Y., Türk devleti hizmetinde Ermeniler, 1453—1953, Istanbul, 1953.
Cvetkova B. A., L'évolution du régime féodul turc de la fin de XVIème jusqu'au milieu du XVIIème siècle, Etudes historiques, Sofia, 1961.
Danişmend I. H., Izahlı Osmanlı tarihi kronolojisi, c. I—IV, Istanbul, 1947—1955.
Emin Joseph, The life and adventures of Joseph Emin, an Armenian written in English by himself, London, 1792.
Fisher S. N., The foreign relations of Turkey 1481—1512, Urbana, 1948.
Galanus Clement, Consiliatio Ecclesiae Armenae cum Romanae, t. I—II, Rome, 1650—1654.

26—497

Hadrovicz L., Le peuple serbe et son église sous la domination turque, Paris, 1947.
Hammer J., Geschichte des Osmanischen Reiches, Bd. 1—10, Pest, 1827—1833. Zweite Ausgabe, Bd. 1—4, Pest, 1824—1935.
Hammer J., Histoire de l'empire ottoman, traduit de l'allemand, vol. I—XVII, Paris, 1835—1843.
Heyd W., Histoire du commerce du Levant, t. I—II, Leipzig, 1923.
Hilmi M., Kanunî Suleyman'ın 1533—1535 Bağdad seferi, İstanbul, 1933.
Inan Afet, Aperçu général sur l'histoire économique de l'empire turc-ottoman, Ankara, 1943.
"İslâm ansıklopedisi".
Jorga N., Geschichte des Osmanischen Reiches in Europe, Bd. I—V, Gotha, 1902—1913.
Jonquière de La, Histoire de l'Empire ottoman, t. I—II, Paris, 1914.
Karamursal Ziya, Osmanlı malî tarihi hakkında tetkikler, Ankara, 1940.
Lavallée Théophile, L'histoire de l'empire ottoman, depuis les temps anciens jusqu'à nos jours, Paris, 1855.
Lamartine A., Histoire de la Turquie, t. I—VIII, Paris, 1854.
Lavender Cassels, The struggle for the Ottoman empire 1717—1740, London, 1966.
Minorsky V., La Perse au XVème siècle entre la Turquie et Venise, London, 1933.
Minorsky V., The Middle East in western politics in the 13th, 15th and 16th centuries. "Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland", t. XVII, London, 1940.
Mohammed Ali Hikmat, Essai sur l'histoire des relations politiques irano-ottomanes de 1722 à 1747, Paris, 1937.
Mutafçieva V., De l'exploitation féodale chez les turcs de population bulgare sous la domination turque au XVème. et XVIème siècles. Etudes historiques, Sofia, 1961.
Mutafçieva V. P., Dimitrov St., Sur l'état du système des timars des XVIIème—XVIIIème s.s., Sofia, 1968; Les timars et la Nizam-i cedid selon le defter matricul des affermages de fiefs en 1804 et 1805, Sofia, 1971.
Orhouiu Cengiz, Osmanlı Imperatorluğunda aşiretlerin iskân teşebbüsü, (1691—1696), İstanbul, 1963.
Osson d'Ignatius Mouradgea, Tableau général de l'Empire ottoman, vol. I—VII, Paris, 1788—1824.
Pakalın M. Z., Osmanlı tarih deyimleri ve terimleri sözlüğü, c. I—III, İstanbul, 1946—1955.
Pélissié du Rausas, Le régime des capitulations dans l'empire ottoman, Paris, 1910.
Shay Mary Lucille, The ottoman empire from 1720 to 1734, Urbana, 1944.
Shopoff A., Les réformes et la protection des chrétiens en Turquie (1673—1904), Paris, 1904.

Sorel Albert, The eastern question in the eighteenth century. London, 1898.
"*Tarih*" (Yeni ve yakın zamanlarda Osmanlı—Türk tarihi), c, III, İstanbul, 1931.
Uzunçarşılı I. H., Osmanlı devleti teşkilatına medhal, İstanbul, 1941.
Uzunçarşılı I. H., Osmanlı devleti teşkilatlarından kapukulu ocakları, c. I—II, Ankara, 1943—1944.
Uzunçarşılı I. H., Osmanlı tarihi, c, I—IV, İstanbul, 1947—1959.
Uzunçarşılı I. H., Osmanlı tarihi, c. IV, I kısım, Karlofça anlaşmasından XVIII yüzyılın sonlarına kadar, Ankara, 1956.
Uzunçarşılı I. H., Osmanlı tarihi, c. IV, II kısım, XVIII yüzyıl, Ankara, 1959.
Uras Es'at, Tarihte Ermeniler ve ermeni meselesi, Ankara, 1950.
Wittek Paul, Devshirme and sharia, Bulletin of the school of oriental and african studies university of London, vol. XVII, part 2, London, 1955.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ*

Աբաղա փաշա (Ապաղա) 66, 162—175
Աբաս 103
Աբգար դպիր Թոխատեցի 349—354
Աբդի փաշա Վանի 74
Աբդուլ խան Բիթլիսի (Բաղեշի) 72, 212, 213
Աբդուլ-Հալիմ, Կարա Յաղբջի (Ղարայ-եաղբջի) 135—143, 146, 174
Աբդուլ Համիդ սուլթան 125, 130, 132, 208, 221, 283, 284, 309
Աբդուլլահ էֆենդի, շեյխ-ուլ-իսլամ 94
Աբդուլլահ փաշա 97, 103, 105
Աբդուլլահ փաշա Էրզրումի 113
Աբդուրրահման փաշա, Կարամանիայի կուսակալ 117
Աբրահամ Երևանցի 17, 97
Աբրահամ եպիսկոպոս Թեքիրդաղցի, գրիչ, կթղ. 273
Աբրահամ Կրետացի 17, 104—106
Աբրահամ Չելեբի (Ապրո Չելեբի) 245
Աբրահամ քահանա 39
Աղարեան ամիրաներ 250
Աղարիա Զուղայեցի կթղ. 353
Աղարիա Սասնեցի 137—140, 143, 147, 157
Աթանաս եպիսկոպոս 116
Ալաեդդին, Բաղեշի խան (Ալատտին) 112—114, 389, 390
Ալա-էդդին, եղբայր սուլթան Օրխանի 329
Ահարվերդի խան 57
դ՝ Ալեքսանդրի Վինչենցո 25, 50
Ալեքսանդր, Կախեթի թագավոր 378
Ալեքսանդր աբեղա 224
Ալեքսանդր պապ 372
Ալեքսանդր Զուղայեցի կթղ. 87
Ալեքսեյ Միխայլովիչ, 380
Ալի 136
Ալի փաշա Վանի 67
Ալի Զավուշ 197
Ալիբեկ 31, 118
Ալիխան 39
Ալիշան Ղ. 27, 37, 43, 49, 145—147, 151, 226, 346—348
Ալխաս Միրզա, շահ Թահմասպի եղբայր 39, 40
Ալպոյաճյան Ա. 144, 225, 312, 369
Ախիջան խոջա 246
Ակդաղ Մ. 12, 260—262, 266, 286, 288, 290
Աղիթեփե Մյունիր 12, 274—277
Ակինյան Ն. 29, 59, 329, 331, 338, 347
Ահմեդ 53
Ահմեդ (Ահմատ) սուլթան 57, 63, 65, 155, 158, 159, 310
Ահմեդ I սուլթան 112, 143
Ահմեդ III սուլթան 75, 76, 86, 99, 101, 102, 249, 272—274, 277, 335
Ահմեդ (Ահմատ) փաշա 42, 148, 320, 326
Ահմեդ փաշա, Բաղդադի վալի 103, 108
Ահմեդ փաշա Վանի 55
Ահմեդ Չելեբիի, վեզիր 74, 75
Ահմեդ Ռեֆիկ 185, 318, 324
Ահմեդ սիփահի 277
Ահմեդ Սոֆի Ուղուրլի 39
Աղանյանց Գյուտ 17
Աղաջդանփիրի 148
Առաքյան Հ. 328
Ամիրգունա (Էմիրկյունե) խան 65, 69, 156
Ամջազադե Հյուսեյն փաշա, մեծ վեզիր 271
Այնի Ալի 20, 196, 197
Այվազյան Հովհաննես 335
Այվազովսկի Գ. վ. 12, 74
Անանիա վարդապետ 387
216, 285
Անանուն Սեբաստացի 329
Անանուն Վանեցի 17, 73, 79, 96, 123, 216, 285
Անասյան Հ. 7, 9, 214, 244, 247, 324, 341, 344, 348, 354—364, 366, 369—376
Անդրեաս կաթողիկոս 355
Անկյուրեցի կաթողիկոս 98
Աննա Իվանովնա, կայսրուհի 103, 105, 107
Անջիոլելլո 291
Անտոն Չելերի 239, 244
Աշրաֆ 99—101
Աջապահյան Գաբրիել կթղ. 189
Աջապահյան տոհմ 224
Առաքել գրիչ 35
Առաքել խոջա 246
Առաքել Ակնեցի 280
Առաքել Բաղիշեցի 341
Առաքել Դավրիժեցի 17, 53, 55—62, 68—70, 72, 135—139, 148, 149, 156—158, 199, 226—229, 231, 232, 239, 240, 244—246, 291, 307, 328
Առաքել սարկավագ Սալաձորեցի 49
Ասլան ամիրա 250
Աստվածատուր Ակնեցի 280
Աստվածատուր գրիչ 39, 40
Աստվածատուր խալիֆա 245
Աստվածատուր վարդապետ 393
Ավգուստինոս Բաջեցի 59
Ավդուլլահ էֆենդի 79
Ավետ խոջա 246
Ավետիս 219
Ավետիս գրիչ 308
Ավետիք խոջա 246
Ավետիք պատրիարք 85, 86, 248, 249
Ավնի Օմեր էֆենդի 197
Ավշարոզլի 111
Արամ 377
դ՝ Արամոն, ֆրանսիական դեսպան 40, 42
Արապոզլու Մելիտոն 249
Արիստակես Խարբերդցի 165, 166, 168
Արղության Հովսեփ 382, 383
Աֆեթ Ինան 197

Բաբայան Լ. Հ. 8
Բաբինգեր 25
Բաբկեն աթոռակից կաթողիկոս 16
Բաղդասար գրիչ 272
Բաղդասար քահանա գրիչ 115
Բայազետ սուլթան 376
Բայազետ II սուլթան 25, 26, 31, 311
Բասմաջյան Գրիգոր պատրիարք 221, 391, 393
Բարբարո Ջ. 310
Բարկան Օ. Լ. 12, 20, 21, 257, 258, 295, 296, 298
Բարսեղ վարդապետ 49
Բեբե Սուլեյման 73
Բել 233
Բելեն Մ. 13, 14, 192, 287
Բերնարդո Լորենցո 261
Բոնապարտ Նապոլեոն 14
դե Բոնեվալ, կոմս 21
դե Բոնակ Մ., ֆրանսիական դեսպան 21, 35, 96
Բուալո Ն. 364
Բուլգակով, ռուսական դեսպան 128
Բուլգարինի 357
Բուխարով Դմիտրի 108
Բուտելին 377
Բուրբոններ 363

* Անվանացանկը կազմել է Էմմա Ստեփանյանը։

Բուրհանխան 113
Գագիկ Բագրատունի 349
Գալեմքյարյան 351
Գալոյան Գ. Ա. 8, 13, 105, 127
Գալուստ վարդապետ 86
Գասպար 312
Գասպար, որդի Մուրադյան Բաղդասար ամիրայի 250
Գափտան Հասան փաշա 251
Գզիրօղլի Մուստաֆա բեկ 148
Գինոս երեց գրիչ 168, 169
Գյուզելջե Մահմուդ փաշա 147
Գոկապախան Զրփլախ 148
Գոկապախան Զրփլախ 148
Գորդլևսկի Վ. Ա. 148, 186
Գրանդուկ Ֆերդինանդուս Սեղիկ 241
Գրենվիլ Հենրի 21,22, 207, 241, 278, 281, 305, 306
Գրիգոր XIII պապ 353
Գրիգոր Աղթամարցի 32
Գրիգոր Դարանաղցի 17, 56, 57, 69, 71, 137—139, 141, 143, 144, 147, 149, 150, 154, 156, 158—161, 163—165, 167—169, 171—173, 194, 226—229, 245, 246, 308, 326, 327, 332
Գրիգոր երեց 67, 340
Գրիգոր վարդապետ Եղվարդցի, գրիչ 118
Գրիգոր, գրիչ Կողոնիայից 154
Գրիգոր երեց Կողոնացի 171
Գրիգոր Լուսավորիչ 350, 351, 365, 385
Գրիգոր Մահտեսի 388
Գրիգոր Վարագեցի 348
Գրիգոր Տաթևացի 340
Գրիգոր քահանա 68
Գուայտեր Արեթինուս 346, 347
դը Լա Գուդ 365
Գուոջիրեկ 338

Դալուենասիպ 148
Դանիա խաթուն 338
Դանիել 61, 270
Դանիշմենդ Ի. Հ. 12, 46, 54
Դաշկով Ալեքսեյ, դեսպան 92
Դավիթ 230, 266
Դավիթ Բաղիշեցի 213
Դավիթ-Բեկ 98
Դավիթ խոջա 246
Դավիթ վարդապետ 381
Դավուդ խան Շիրվանի 95
Դաուդ-Բեկ 92
Դելի Հասան, եղբայր կարա Յաղըջիի 109, 142, 144, 147, 148, 173, 174
Դեկուորդ, ադմիրալ 14
Դեմյան 377
Դիլոյան Վ. Ա. 8
Դիշլենկ Հյուսեյն փաշա 170
Դյումարեսկ 384
Դյու-Ման Ռաֆայել 365, 366
Դովլաթ բեկ, թոռ Մալիութի 218
Դուռնաճի պաշի 124

Եգեն Մեհմեդփաշա 109, 110
Ելիզավետա կայսրուհի 381
Եկատերինա I 100
Եկատերինա II 120, 127, 381, 384, 390
Եղիա եպիսկոպոս 44
Եղիա մարգարե 280
Եղիազար Աչնթապցի 362, 372, 375
Եսայի եպիսկոպոս 392
Երեմիա խոջա 231, 245, 247
Եոլայ սրղմաղ 148
Երեմիա Օշականցի 225

Զալիվար (Տիլավար) օղլի Հուսեյն աղա 79
Զաքարե խոջա 246
Զաքարիա կթղ. Աղթամարի 337
Զաքարիա Ագուլեցի 379
Զաքարիա արքեպիսկոպոս 17
Զաքարիա գրիչ 63
Զաքարիա պատրիարք Կաղզվանցի 132—134, 221, 222, 231, 234, 284
Զաքարիա Վարագեցի 292
Զաքարիա վարդապետ 225, 281
Զաքարիա Սիսիանցի 369
Զաքարիա Քանաքեռցի 17, 374
Զաֆիրա ստրկուհի 357
Զենդ Քերիմ 126

Զենդեն աղա 219
Զեյնալ բեկ 79
Զենոբ Գլակ 385
Զորաբաբել 250
Զուլալյան Մ. Կ. 20, 135, 142, 156, 167, 328
Զուլֆիդար խան 55

Էբասկի Էլիաս 196, 288, 328
Էբուսուուդ, շեյխ-ուլ-իսլամ 192, 193, 259
Էդգար խոջա 218
Էլհաջ Ալի փաշա, Էրզրումի և Տրապիզոնի վալի 126
Էլհաջ Ահմեդ փաշա 110, 117
Էլհաջ Զաֆեր 266
Էմիր Շարաֆ 213
Էնգելս Ֆրիդրիխ 76, 361
Էսատ Ուրաս 258
Էսկի օղլու Նիկողոս 248
Էֆենդիև Օ. Ա. 8

Թադեոս գրիչ 30
Թադեոս Սեբաստացի 43, 331
Թահմազ Կուլի խան 69, 104, 105, 111
Թահմասպ I շահ 27, 35, 36—39, 42—47, 50, 213, 320, 349
Թահմասպ II շահ 95, 98, 99, 101—103
Թամուր 115
Թամուր փաշա 292
Թամուր փաշա Վանի 181
Թավիլ (Թավուլ) Ահմեդ Սաչը 148, 150, 153
Թեյմուրազ I թագավոր 105
Թեյմուրազ II թագավոր 381
Թիմուր 23, 43, 210
Թյուֆեկ օղլու Հարություն 248
Թյուֆեկ օղլու Հովհաննես 248
Թոխմախ Միրաք 285
Թովմա Մեծոփեցի 340
Թովմա Մինասենց 338
Թովմաս Բերիացի 232
Թորոս աղբար 66, 229, 269, 324
Թոփալ Օսման, սերասքյար 103
Թոքմաք խան 47
Թումա խոջա 244, 248
Թումաջան Ամդեցի 246
Թուրունճօղլի բդեշխ 285

Իբրահիմ 31
Իբրահիմ բեկ 74, 79
Իբրահիմ փաշա 36, 113
Իբրահիմ փաշա Էրզրումի 113
Իբրահիմ փաշա, վեզիր 142
Իբրահիմ փաշա, Դիարբեքիրի կուսակալ 117
Իբրահիմ սուլթան (1640—1648) 357
Իգնատիոս գրիչ 43
Իզզեթ փաշա, մեծ վեզիր 134
Իզդի, պատմագիր 18, 109
Ինճայ Արապ 115
Ինճիճյան Ղուկաս 11, 112—114, 177—185, 189, 190, 208, 214—216, 236—238, 242, 252, 255, 272, 279, 280, 302—304, 307—309, 316, 317, 319—322, 334, 385
Ինջաղան 148
Իսահակ Կոտենացի գրիչ 134
Իսկենդեր փաշա 40
Իսկենդեր Մունշի 149, 155, 156
Իսմայիլ շահ (Շահ Սմայիլ) 24—35, 39, 349
Իսմայիլ Միրզա, Թահմասպի որդի 43
Իսրայել 69, 263
Իսրայել գրիչ 49, 338
Իսրայել Մահտեսի 249
Իսրայել Օրի 77, 381, 383
Իսֆենդիար բեկ 212
Իվան IV Ահեղ 376—378

Լազարյաններ 385
Լալա Մուստաֆա փաշա 47, 49
Լալայան Ե. 16, 218
դե Լալեն 365
Լանկ Թամուր 43
Լեո 7, 10, 36, 345, 349, 359
Լեոպոլդ, կայսր Ավստրիայի 368
Լիգոր, իշխան Մոլդավիայի 121

Լիմոնճյան Հովհաննես 234
Լիվան-օղլի 185
Լյուդովիկոս Թագավոր 27
Լյուդովիկոս 81, 82, 355, 363—368, 372
Լութֆի Մահտեսի 249
Լուսիկենց (Լուսիկով) 379, 380
Լևոն 377
Լևոն Թագավոր 185

Խալիլ փաշա, Մարաշի բեկլերբեկ 78
Խալիլ փաշա կապուտան (ծովակալ) 163, 167
Խալիլ փաշա, վեզիր-ի-ազամ 170, 269
Խալիլ փաշա, էրզրումի կուսակալ 285
Խալիլ փաշա, սերդար 63, 65
Խալիլուլահ շիրվանշահ 24
Խալֆյան Հարութիւն 306
Խաչատուր Գաղատացի 355, 356, 372, 373։
Խաչատուր, կաթողիկոս Սսի 353։
Խաչատուր վարդապետ 88
Խաչատուր գրիչ 263
Խաչատրյան Պ. Մ. 32
Խաչիկյան Լ. Ս. 8, 204, 205, 329
Խդրբեկ 151
Խեղենիկ արքայուն 337
Խարբերդ խոջա 246, 247
Խոջի Մարում 377
Խոսրով փաշա 48, 66
Խոսրով փաշա, Դիարբեքիրի բեկլարբեկ 147
Խոսրով փաշա, վեզիր-ի-ազամ 170, 171, 231, 287
Խուրշիդ 377

Կալենդար օղլի 112, 150—152, 154, 155, 174
Կասեբս Լեվենդեր 15
Կասթելլա Միքայել-Անգեղոս 90
Կարա Մեհմեդ փաշա 65
Կարա Սաիդ 150
Կարախան 31
Կարակաշ 149
Կարաչելեբիզադե 18, 265, 268, 269
Կարապետ, սուրբ 218
Կարապետ Բաղիշեցի 341, 378
Կարապետ Բերկրեցի 27
Կարապետ Գրիչ 62, 273
Կարապետ եպիսկոպոս 51
Կարլ V կայսր 27, 347
Կարլ XII 78, 80
Կեմալմազ 111
Կընալը 150
Կիրակոս, սուրբ 218, 219, 389
Կիրակոս երեց Ալիփունարցի գրիչ 233
Կլիմենտ պապ 87
Կղեմես Գալանուս 342—344
Կյուլ Ահմեդ փաշա 303
Կյուլեսերյան Բարկեն կթղ. 375
Կյուլլապեան Հակոբ 234
Կոլբեր 81, 364—366, 368
Կոկիս, որդի Դավթի 266
Կոմիտաս վարդապետ 86, 87
Կոշիբեյ 18, 19, 135, 197, 259, 260, 263, 288, 290, 328
Կոջա Յուսուֆ փաշա, մեծ վեզիր 129, 131
Կոստանի(ն)անոս կայսր 350, 351
Կոստանյանց Յ. 32, 340
դե Լա Կրուա 21
Կրուշինսկի 77, 82

Հաբսբուրգներ 339, 363
Հակոբ գրիչ 288
Հակոբ գրիչ Մշեցի 28
Հակոբ դպիր 17, 18
Հակոբ եպիսկոպոս 322
Հակոբ պատրիարք 119
Հակոբ վանական 240
Հակոբ Բաթուկենց 146
Հակոբ Դիվրիկեցի 118, 123, 236
Հակոբ Զեյթունցի 151
Հակոբ Թոխատեցի 141
Հակոբ Կարնեցի 254, 269
Հակոբ Շամախեցի կթղ. 381
Հակոբ սարկավագ, գրիչ 289
Հակոբ Ջուղայեցի 362, 380
Հակոբ դպիր Տիգրանակերտցի 279, 281

Հակոբյան Հովհ. 25, 50, 291, 311
Հակոբյան Վ. Ա. 5, 7, 17, 370
Հաճի Ալի փաշա 306
Համզա Միրզա, շահ Թահմասպի որդի 50, 51
Համիդ I սուլթան 129, 185, 237, 242, 303, 308
Համմեր Յոզեֆ 13, 14, 56, 63, 86, 87, 106, 108, 111, 112, 122, 151, 177, 181—183, 192, 278, 286
Հաջի Դավուդ, Դաղստանի խան 92
Հաջի Նասուհ 109
Հասան փաշա 73
Հասան փաշա, սերդար 143—145
Հասան փաշա, Բաղդադի վալի 96
Հասան փաշա, էրզրումի 54, 56, 160
Հասան փաշա, Սալոնիկի կուսակալ 78
Հասան Զելեբի, որդի էլհաջ Ջաֆերի 266, 267
Հասան բեկ Ռումլու 18, 33, 35—38, 42, 43
Հասան Փադիշահ (Ուզուն Հասան) 258
Հարութիւն ամիրա Պալգարանցի 251
Հարութիւնյան Պ. Տ. 9, 13
Հեյդար 24
Հեյդար շեխ 39
Հենրիխ 42
Հերակլ I 127
Հերակլ II Թագավոր (Հերակլե, Հերակլես) 118, 119, 130, 383—386, 388, 390—393
Հեքիմ օղլու Ալի 102, 111
Հեքմաթ Մուհամմեդ Ալի 15, 39
Հիսարյան Հովհաննես 251
Հյուսամմուդին 136
Հյուսեյն փաշա 148, 174, 292
Հյուսեյն փաշա, Եթովպիայի միրիման 138, 139
Հյուսեյն փաշա Վանի 72
Հոսեփ Թացուեցի գրիչ 67
Հովասափ Սեբաստացի 246, 247
Հովհան Որոտնեցի 340
Հովհան Ակնեցի 280
Հովհաննես գրիչ 48
Հովհաննես գրիչ Վանեցի 29
Հովհաննես խոջա, որդի խոջա Հովսեփի 246
Հովհաննես վարդապետ, էջմիածնի նվիրակ 224
Հովհաննես կթղ. Սսի 231
Հովհաննես Արճիշեցի 36—38
Հովհաննես Թուքուանջի 369, 370, 372
Հովհաննես Կոլոտ, Կ. Պոլսի պատրիարք 89, 233, 234, 249
Հովհաննես Պալրքեսերցի, Երուսաղեմի պատրիարք 232
Հովհաննես Սեբաստացի 17, 110, 114, 115, 117, 285
Հովհաննեսիկ Ծարեցի, գրիչ 51
Հովհաննիսյան Ա. Ռ. 8, 13, 128, 384, 385, 391—393
Հովհաննիսյան Աշ. 5, 7, 9, 13, 26, 77, 78, 82, 83, 230—247, 301, 342—346, 348, 349, 353—355, 360—362, 365, 366, 369—372, 374, 375, 377, 378, 380
Հովնան վանահայր 385—393
Հովսեփ 250
Հովսեփ խոջա Երզնկացի 246
Հովսեփ էմին 383—388, 391, 392
Հովույան Մահտեսի Հարութիւն 249
Հովույան Զուպան 234
Հուդա 230
Հուսիկ քահանա Սսեցի 224

Ղաբուսուզ 111
Ղազազյան Բաբա Զերոն 312
Ղազար Ագուլեցի 53
Ղազար երեց 65
Ղազար Ջահկեցի կթղ. 224
Ղազարիմինե 219
Ղազի, Սալմաստի բեկ 56
Ղամբար 218
Ղարադաշ 148, 149
Ղարասահաթ 148
Ղարասաֆար Ախիջան 75
Ղարիբջան խոջա 246
Ղոճա Արապ 115

Ղորղանյան Ն. Կ. 104
Ղուկաս գրիչ 307

Ճանսուղեան Յարութիւն 250

Մագիստրոս 43, 119, 140, 241, 289, 323, 325
Մագուտ խոջա (Մախսուտ) 231, 246
Մաղեպա 78
Մալիուք 218
Մալկհոլմ Ջոն 15, 105
Մակար պատրիարք հունաց 355
Մահդի 125
(Մահմատ) Մահմադ փաշա 140, 143, 199
Մահմատ խան 74, 79
Մահմեդ 49, 154, 327, 353
Մահմեդ սուլթան 299
Մահմուդ 102
Մահմուդ շահ 99
Մահմուդ Ա սուլթան 90, 277, 306, 309
Մահմուդ փաշա 178
Մահմուդ փաշա Բայազետից 113
Մահմուդ փաշա, Սինանի որդի 168—169
Մահմուդիեյի Միհրաբ 113
Մաղաքիա Դերջանցի 329, 331, 332
Մաղաքիա Չելեբի, որդի խոջա Երեմիայի 245, 248
Մաղաքիա Չելեբի, ազգական Քյոմուրճյան Երեմիա Չելեբիին 249
Մանանդյան Հ. 328
Մանսուր 125
Մանուել գրիչ 270
Մանուել երեց 119
Մանսոզլի 148
Մասինիոն 328
Մատթեոս Ուռհայեցի 342, 343
Մարգար Պարթևաղն խոջա 248
Մարգարե գրիչ 37
Մարգիզ մատենագիր 249
Մարիամ Չելեբի 244, 248
Մարմաս Ս. 356
դե Մարսիլի 21, 238
Մարտիրոս գրիչ 30, 34, 171
Մարտիրոս խալիֆա 292
Մարտիրոսյան Նազարեթ 16
Մարտիրոսյան Վ. Մ. 8, 13, 91, 92, 97
Մարութա գրիչ 67
Մարքս Կարլ 14, 105, 260, 318, 333, 376
Մաքսուդ բեկ 390, 391
Մելիք Ահմեդ, մեծ վեզիր 245
Մելիք փաշա Վանի 72, 212
Մելիքսեթ կաթողիկոս 228
Մելիքսեթ եպիսկոպոս Սեբաստացի 140
Մելքոն դպիր 65
Մելքոնյան արքա 335
Մեհդե 39
Մեհմեդ II Ֆաթիհ սուլթան 23, 311
Մեհմեդ III սուլթան 288
Մեհմեդ IV սուլթան 230, 268, 363
Մեհմեդ փաշա, երրորդ վեզիր 138
Մեսիհ փաշա 26
Միանսարյան Մ. 60
Միլլեր 192
Մինչո Մ. 21, 99, 102, 277, 304, 309, 333
Միր Ազիզ, Ջեզիրեի ցեղապետ 214
Միրատ կամ Միրաք 27
Միրաք խոջա 377
Միքայել գրիչ 186
Միքայել հայր 252
Միքայել Սեբաստացի 345, 349, 350, 351
Միքայել ամիրա Տիւզ 250
Մխիթար սպարապետ 98
Մխլեիմյան Գևորգ վրդ. 82, 83
Մկրտիչ Նաղաշ 340
Մկրտիչ վարդապետ 281
Մյունեջիմ բաշի 18, 33
Մյունիխ ֆելդմարշալ 107
Մնացականյան Ա. 378
Մոհանմատ (Մոհամմեդ) Չաուշ 154
Մոմճեաններ 250
Մովսես կաթողիկոս 231
Լա Մոտրեյ 75
Մորոզինի Ֆրանչեսկո 356
Մրզբրվենց Վարդիկ 218
Մրմրյան Հ. 248, 250, 252, 322
Մոհամմեդ սուլթան 53
Մուհամմեդ Քյաղիմ 105
Մուշեղ 266
Մուստաֆա բեկ 148
Մուստաֆա աղա 116
Մուստաֆա փաշա, մովկեր 116
Մուստաֆա սուլթան 115, 116, 123
Մուստաֆա I սուլթան 162, 163
Մուստաֆա II սուլթան 75, 273, 274
Մուստաֆա III սուլթան 221, 281, 283, 319, 335
Մուտաֆչիևա Վ. Պ. 286, 293
Մուրադ (Մուրատ) սուլթան 48, 49, 68, 70, 212, 326
Մուրադ III սուլթան 63, 213, 288
Մուրադ IV սուլթան 162, 165, 172, 173, 190, 197, 198, 231, 245, 287
Մուրադ փաշա Կուլուջի 62, 152—155, 158, 162
Մուրադ Մահտեսի 356—358, 364, 366—369
Մուրատ խան 50
Մուրադյան Բաղդասար ամիրա 250
Մուրատյան Սահակ Ա. 16
Մուրթազա փաշա 69, 79, 167, 168

Յակուբ ակկոյունլու 24
Յաղուբ ամիրա 118, 235, 250—252
Յաղուպ Ակնցի 309
Յեկեն բդեշխ 110
Յուլարզստե 148
Յուսուֆ 34
Յուսուֆ փաշա 129
Յուսուֆ փաշա, Ուրֆալի վալի 79
Յուսուֆ փաշա, եպարքոս 284
Յուսուֆ Գոզանսոզլի 185
Յուսուֆ Չելեբի 249

Նադիր շահ (Նատր-շահ, Նադիրկուլի) 101, 103—110, 278
Նազրֆ Մուստաֆա էֆենդի, թուրքական դեսպան 110
Նահմա 64, 70, 136, 142, 166, 269
Նալյան Հակոբ պատրիարք 90, 235, 250
Նահապետ խոջա 246
Նաջարյան Հ. 8
Նարիման 377
Նեպլյուև Ի., ռուսական դեսպան 91—93, 95, 97
Նեռ 150, 230
Նեշենիրլի Դամադ Իբրահիմ փաշա, մեծ վեզիր 95, 101, 275, 277
Ներոն 30
Ներսես Մեծ կթղ. 341, 365
Ներսես արքեպիսկոպոս 338
Ներսես գրիչ 47
Ներսես Վարագեցի 41
Նիկողայոս Լեհացի գրիչ 162, 163
Նիկողայոս Սպարկերտցի, կթղ. Աղթամարի 224
Նյուֆեր Ջոն 50
Նշանյան Մեսրոպ 56
Նովիչև Ա. Դ. 8, 150
Նուհբեկ 113
Նուսուֆ փաշա 63

Շարաֆ պատմագիր 213
Շարաֆ, խան Բաղեշի (Բիթլիսի) 18, 19, 31, 35, 42, 55, 199, 210—214, 255, 288
Շարաֆ, քուրդ բեկ 31
Շարդեն Ժ. բ. 21, 25, 240, 340
Շահ-Աբաս 27, 52—56, 58, 60, 64, 66, 70, 149, 164, 170, 293, 377
Շահին Չելեպի 245
Շահմուրատ (մահտեսի) 358
Շահուուխ 210
Շահվերդի 147
Շամիրամ 38, 292
Շաքիր 18
Շեյ Մերի Լյուսիլ 15
Շենգելիա Պ. Լ. 8
Շոպով Ա. 15

Ոսկան խոջա 246
Ոսկանյան Վ. Կ. 8, 13, 377, 379
Ոսկյան Համազասպ 16, 219

Զակալօղլու Հաջի Մեհմեդ, վաշխառու 266
Զամչյան Մ. 7, 10, 17, 22, 43, 85, 86, 88, 89, 90, 119, 331, 345—347, 352, 373, 374
Զափարզադե Ահմեդ փաշա 118
Զեթեճի փաշա 114
Զելերի Էվլիա 18, 19, 195, 197, 198, 200—202, 211—214, 220, 243, 254—255, 290, 311—315
Զելերի Քյաթիբ 11, 18, 64, 136, 138, 148, 197, 261, 266, 268
Զելեբիզադե 18, 84, 97
Զեխիջան Բաղիշեցի 246
Զերքեզ Իսկենդեր փաշա 199
Զիլֆիդար փաշա 160
Զորան աղա 392
Զոմար փաշա 72
Զորլուլու Ալի փաշա 86
Զուգասզյան Բ. Լ. 110

Պալեոլոգ Մավրիկ 358
Պալեոլոգ Սոֆիա 378
Պալճյան Ա. 340, 353
Պակալին Մ. 291
Պաղտասար Ուռհայեցի 246
Պայճաձե Գ. Գ. 77, 100
Պավել Պետրովիչ, ցար 381
Պատրոնա Խալիլ 12, 102, 275, 277
Պարսամ քահանա 29
Պելիսիե դյու Ռոզաս 15
Պետիկ Զելերի 245, 246
Պետրոս առաքյալ 345, 346
Պետրոս I 76—80, 91, 93, 95, 96, 100
Պետրոս II 100
Պետրոս կաթողիկոս Աղվանից 380
Պետրոս դի Սարգիս Գիլանենց 93
Պետրուշևսկի Ի. Պ. 8, 19, 58
Պլեշչեև 377
Պողոս, սուրբ 346
Պողոս Կաղզվանցի 17, 18, 129, 132—134, 284
Պողոս Ղազար ամիրա 250
Պողոս վարդապետ Սասունցի 309
Պողոս վարդապետ, եղբորորդի Հովհաննես կթղ-ի 231
Պողոսյան Հ. Մ. 190
Պոտյոմկին Պ. Ս. 127, 128, 382
Պորտեր Ջեյմս 21, 22
Պրոխորոն վրդ., Երուսաղեմի միաբան 235

Ջանիբեկ Գիրայ խան 65
Ջանփոլադ Ալի (Ճանփոլատ Ալի փաշա) 148, 151—154, 162, 174
Ջանփոլադ զադե, քուրդ բեկ 151
Ջաֆեր փաշա 50
Ջեմշիդ 150
Ջենկինսոն 26
Ջեվադ բեյ, պատմաբան 164
Ջեվդեթ պատմագիր 18, 84—86, 127, 128, 130—134, 263, 283
Ջիկիա Ս. Ս. 20
Ջիհանշահ 337, 338
Ջղալ օղլի Սինան փաշա 58
Ջունեյդ 24

Ռաբսակ 153
Ռահիբ փաշա, մեծ վեզիր 117, 242, 335
Ռայկոտ 21, 232, 324, 376
Ռաշիդ պատմագիր 18, 78, 100, 270, 271, 273—275, 284
Ռաջաբ փաշա 79
Ռիշվան-զադե Սուլեյման փաշա 112
Ռոտա 25, 27, 29, 30
Ռուբրուկ Վիլհելմ 342
Ռուհիջան խոջա Վանեցի 231, 232, 244, 246
Ռուստամ խան 67

դե Սագրեդո 98
դե Սալարերի 21, 74
Սախելի զադե Ֆեյզուլլահ փաշա 115
Սակզյան Ա. 212
Սախիր փաշա 125
Սահակ կաթողիկոս 230, 231
Սահապայար Երեմիա 248
Սաղիր օղլի 217
Սամի պատմագիր 18, 278
Սանոս Զելերի 245, 325
Սարաֆյան Մովսես 390, 391
Սարգիս ոմն 250
Սարգիս ամիրա Ակնցի 250
Սարգիս գրիչ 47
Սարգիս էքմեքճի պաշի 248
Սարգիս խալֆա 249
Սարգիս Հիզանցի 55, 158
Սարգիս քահանա 53
Սարգիսյան Բարսեղ 16
Սարգսյան Գրիգոր 16
Սարօղլի քաղաքապետ 285
Սաֆար խոջա 75, 246
Սաֆի 109
Սաֆրաստյան Ա. Խ. 20, 41, 46, 110
Սելանիկի Մուստաֆա 18, 46, 50, 136, 261, 264
Սելիմ սուլթան 330, 332
Սելիմ Ցավուզ սուլթան 31—35, 288
Սելիմ I սուլթան 199, 329
Սելիմ II սուլթան 46, 47, 122, 264, 325
Սելիմ III սուլթան 130, 283, 303, 309
Սեղբեստրոս պապ 350, 351
Սեղբեստրոս Մանուէլեան Պաղիրկեան պաշի 249
Սեղբոսյան Հովհաննես Զելեպի կամ Մարգիզ 249
Սեմիկ 266
Սենեքերիմ Արծրունի 337, 349
Սեն Պրիեստ 15
Սեֆեդին իշխան 337
Սեֆիէդդին Իսհակ Արդեբիլի 24
Սեֆի շահ 67, 70
Սեֆեդինյան Ամբատ, Վասպուրականի թագավոր 337, 338
Սիլահդար Իբրահիմ փաշա 91, 96
Սիմավի Բաղրեդդին 25
Սիմեոն Երևանցի 17, 134, 222—225, 230, 300, 381, 388, 389
Սիմեոն Լեհացի 17, 140, 146, 245, 246, 322, 323, 332
Սինան փաշա, մեծ վեզիր 136, 150, 151, 54, 58, 60—62, 168, 291
Սիրունի Հակոբ 7, 10, 221, 229, 232, 244—247, 314, 356, 357, 375
Սիրաք խոջա 246
Սհաթ խան 74
Սյուրմեյան Արտավազդ արքեպս. 66
Սոլակզադե 18, 25, 170
Սոլոմոն Ալեքսանդրովիչ, Իմերեթիայի թագավոր 120, 127, 391
Սոլովյով Ս. Մ. 12, 93, 94
Սոլոմե, Ցաղուբ աղայի կինը 251, 252
Սորել Ալբերտ 15
Սոֆիա կայսրուհի 379
Սվանիձե Մ. Խ. 8
Ստեփանոս 219
Ստեփանոս վարդապետ 75, 387
Ստեփանոս Թոխատեցի 144, 145, 158
Ստեփանոս Սալմաստեցի, կթղ. 344—348
Ստեփանոս IV, կթղ. Աղթամարի 337, 338
Ստեփանոս Օրբելյան 340
Ստուպիշին Ա. Ս. 384
Սրապիոն գրիչ 153
Սրվանձտյան Գարեգին 17, 48, 66, 229, 269, 324
Սուրհի 18, 278
Սուլեյման բեկ 244
Սուլեյման փաշա 308
Սուլեյման Կանունի, սուլթան 35, 38, 39—42, 45, 47, 122, 259, 293, 325, 330
Սուլեյման փաշա, Ախալցխայի վալի 127
Սուլեյման փաշա Զլդբրի վալի 127, 128, 130,
Սուլեյման քուրդ 118
Սուլթանշահ 349, 350—352
Սուլյակով 390
Սուխոտին, գեներալ մայոր 393
Սուվորով Ա. Վ. 131
Սուրխա, Դաղստանի խան 92

Սուբիաս 385
Սուբիաս խոջա 246

դելլա Վալլե Պիետրո 21, 59, 307, 324, 343
Վանդալ Ալբեր 81, 82, 89, 90
Վանտի խոջա 246
Վասրֆ պատմագիր 18, 117, 121, 122, 124, 281, 335
Վարդան, բնակիչ Կեսրիկ գյուղի 266
Վարդան Բաղիշեցի 72
Վարդան գրիչ 47, 48
Վարդիկ 218
Վելզանզադե Մեվլանա Ահմեդ 152
Վելի փաշա, Այդինի կուսակալ 111
Վեֆիկ Ա. 286
Վիլլա. մարկիզ 356
դե Վիլնյով մարքիզ 21, 22, 81, 89, 90, 119, 310
Վիշնյակով 107
Վիտվորդ, անգլիական դեսպան 130
Վիտտեկ Պաուլ 295
Վորոնցով Մ. Ի. 384
Վրթանես գրիչ 28

Տագեսյան Հովհաննես 234
Տայդապան 74
Տայան Վանեղ 117
Տաշյան Հ. 37, 38
Տավերնիե Ժ. Բ. 21, 60, 69, 236, 237, 241, 301, 320
Տեր Մովսեսյան Սիմեոն 234
Տիշենդորֆ 192
Տիրայր վարդապետ 151
Տյուզ ամիրաներ 251
Տոյստոյ Պ. Ա. 78
Տոտլեբեն, գեներալ 393
դե Տոտտ 21, 242
Ա. Ս. Տվերիտինովա 8, 144, 192
Տրդատ Արշակունի 349
Տրդատ արքա 350, 351
Տուրնեֆոր Պիտտոն դե 21, 237, 239
Բաստեյանց տոհմ (Բաստօղլու) 249

Ցվետկովա Բ. 192, 195

Ուզդեմիր Օսման փաշա 49, 51
Ուզուն Հասան 23, 27, 34, 210, 258, 311
Ուզունչարշըլը Ի. Հ. 12, 73, 76, 78, 94, 95, 125, 192, 282, 284, 335
Ուլամա սուլթան 35
Ուլամե, Ադրբեջանի կառավարիչ 35, 36, 38, 40
Ուստաջլու Մուհամմեդ խան 31, 33

Փափազյան Հ. Դ. 8
Փեչևի Իբրահիմ 18, 39, 41, 42, 44, 45, 47, 50, 56, 61, 135, 144, 164, 172, 260
Փիլիպոս կաթողիկոս 228
Փիրի փաշա 40
Փիրղալեմյան Ղ. 17, 55, 65, 67, 70, 270, 326, 330
Փոլատ խոջա 246

Քեմալ-փաշա զադե 50
Քենան փաշա, Էրզրումի կառավարիչ 71
Քեշիշյան Մեսրոպ վրդ. 16
Քեոմյուրճյան Երեմիա Չելեբի 17, 87, 137, 148, 155—157, 249, 300 313, 314, 374
Քյասաբյան 148
Քյոփրյուլյու Ս. Մեծ վեզիր 232, 374
Քյոփրյուլյու-զադե Աբդուլլահ փաշա, Վանի վալի 96, 97
Քյուչյուք Ալի 185
Քյուփելի Առապ 117
Քոռօղլի 148
Քոսա Սաֆար 148
Քրիստոս 251, 252, 262, 327, 333, 346, 348, 389
Քրլու 148

Օմար փաշա 285
Օսման 111
Օսման սուլթան 245
Օսման սուլթան 161—163, 165, 166—168, 252, 262
դ'Օսոն Մուրաջեա, պատմաբան 10, 13, 192, 198, 239—241, 251, 282

Օտտոման հայր Օսման 357, 358, 363
Օրխան սուլթան 329
Օրհոնլու Զենգիզ 12, 187, 188
Օրմանյան Մ. 11, 83, 85—87, 89—91, 134, 185, 189, 223, 224, 232, 234, 301, 345
Ֆազլ Մուստաֆա փաշա, մեծ վեզիր 271
Ֆախրեդդին Մանօղլի 151, 153
Ֆարրուխ Յասար 24

Ֆերվր Միշել 10, 21, 241, 257, 267, 268, 291, 299, 323, 326
Ֆեզուլահ, նախարար Սեբաստիա 115
Ֆեկետե Լ. 20, 193
Ֆելզուլլահ էֆենդի 75
Ֆեոդոր Իվանովիչ, ցար 377
Ֆերդինանդ, արխիդուքս Թոսկանայի 152
Ֆերիոլ, ֆրանսիական դեսպան 86
Ֆիլիպովիչ Ն. 200, 201

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ագուլիս 248
Ագանա 146, 150, 153, 184, 185, 288, 379
Աղիլչեվազ (Արծկե) 41, 42, 61, 114, 179, 316
Ադրբեջան 24, 35, 38, 45, 63, 96, 101, 126, 130, 179, 235
Ադրիանապոլիս 14, 80, 85, 107, 225, 371
Ազզորի սանջակ 182
Ազով 80, 108
Ազովի բերդ 96
Աթաք 183, 184, 199
Ալաշկերտ 177, 178, 181
Ալաջա-Չայըր կոչված վայր 154
Ալբիստան 143, 154, 186
Ալեքսանդրիա 358
Ախալցխա 117, 127, 170, 182, 237, 391, 393
Ախալքալակ 47, 182
Ախուրյան գետ 181
Ակնի գավառ 334
Ակշեկալե (Ակշակալա) 42, 184
Աղ-գյոլ 255
Աղաքիս սանջակ 179
Աղբակ 29, 41, 44
Աղթամար 29, 32, 220—224, 337, 338
Աղթամար կղզի 24
Աղվանք 380

Աղրի-գյոլ 255
Աղք գյուղ 186
Ամասիա 5, 34, 40, 45—47, 49, 63, 97, 112, 139, 198, 230, 266, 307, 316, 317
Ամետիա գավառ 179
Ամերիկա 235
Ամիդ (Ամիթ, Համիթ) 62, 65, 66, 88, 137, 143, 183, 184, 202, 212, 216, 269, 288, 293, 303
Ամյուկ 37, 41, 43
Ամստերդամ 76, 246
Այդին (Այդին) 111, 150, 155, 187
Անատոլիա 26, 34, 40, 54, 84, 85, 96, 117, 125, 135, 143, 147, 150, 159, 164, 170, 201, 221, 254, 275, 277, 281, 329, 330, 367
Անգլիա 7, 14, 22, 76, 93, 95, 107, 122, 130, 237, 238, 250, 383
Անգունիա 378
Անդրկովկաս 7, 8, 27, 41, 46, 52, 53, 55, 58, 63, 64, 66, 91—94, 96, 105, 110, 127, 130, 150, 236, 342, 376—378, 380, 383, 385, 388, 393
Անթալիա 73
Անթիլիաս 16, 159
Անկարա 23, 152, 154, 167, 168, 187, 225
Ակյուրիա 88, 159

Անտիոք 355
Աշխարհովիա 330
Աշտարակ 104
Աջուրայի սանջակ 182
Առաջավոր Ասիա 235, 244
Առի կոմք գյուղ 116
Ասիա 14, 63, 177, 193, 209, 236, 239, 240, 260, 295, 322, 365
Ասիաբերդի սանջակ 179
Ասորեստան 62, 66
Ասորիք 153
Աստարաբադ 95, 100, 103
Աստրախան 91, 95, 376, 384, 385, 390
Ավստրիա 7, 40, 108, 129, 130, 132, 133, 339, 368, 369
Ատրպատական 53
Արաբիա (Արաբստան)
Արաբկիրի սանջակ 184
Արայի լեռ 104
Արարատ 382
Արարատյան դաշտավայր 50, 57, 58, 60, 156
Արարատյան նահանգ 59, 68, 70, 71
Արաքս գետ 34, 59
Արդվին 182, 238
Արդահան 47, 154, 182
Արդեբիլ, Արտավել 24, 62, 66, 99
Արծկե 28, 36, 40, 41—44, 57, 61, 74, 114, 179, 210
Արղանա 316
Արղանա-Մադեն հանքավայր 316
Արղնի 184, 316
Արճեշ (Լ) 28, 36, 39, 41—44, 51, 57, 67, 74, 179, 210, 292, 310
Արճեշի բերդ 42
Արշիպելագ 368
Արտամետ 62, 255
Արտուշի (Արտանուշ սանջակ) 182
Արփա չայ 181
Արևելյան Հայաստան 13, 35, 44, 45, 47, 63, 71, 96, 156, 324, 349, 380
Արևելյան Վրաստան 45, 63
Արևելյան Հնդկաստան 365
Արևելք 15, 21, 23—25, 35, 42, 57, 77, 80—82, 91, 103, 123, 132, 236, 240, 339, 342, 344, 355, 356, 358, 362, 366, 367, 369, 378, 380, 383
Արևմտյան Անատոլիա 147
Արևմտյան Եվրոպա 257, 339, 341, 343, 345, 359, 362, 368
Արևմտյան Հայաստան 5—7, 10, 11, 13, 19—23, 28, 33—35, 38, 39, 41—44, 54, 57, 65, 67, 71, 73, 105, 110, 119, 125, 126, 128, 146, 156, 176, 177, 187, 190, 191, 194, 200, 201, 203, 204, 208, 210, 213, 214, 216, 220, 221, 231, 235, 239, 244, 247, 255, 258, 265, 266, 268, 269, 286, 288, 289, 293, 294, 296, 297, 299, 310—317, 320, 321, 324, 330, 337, 344, 349, 355, 359, 360, 370, 371, 375, 382, 383, 385—388, 392, 393
Արևմտյան Վրաստան 128
Ափանաղ կամ երկրորդ Եփրատ գետ 144
Աֆրիկա 17, 64, 260
Բաբելոն 66, 71
Բաբերդ (Բայբուրդ) 23, 31, 149, 153, 154, 177, 255, 258, 311, 314, 330, 332
Բալթիկ ծով 6, 76
Բալու 184, 200, 202, 214, 391
Բաղդատ (դ) 28, 36, 38, 62, 66, 70, 71, 96, 103, 108, 110, 149, 236, 240, 293, 303, 320, 322, 368
Բայազետ 106, 113, 114, 177—179, 181, 215, 225, 315, 321, 386, 391
Բասեն 44, 49, 57, 86, 116, 170, 177, 178, 181, 289
Բաստիլի բերդ 86
Բասրա քաղաք 110, 126, 392
Բարզրեքի (Բերդագրակ) սանջակ 182
Բարկիս գյուղ 42
Բարձր Հայք 39, 109, 200, 216
Բաքու 52, 377
Բելգրադ 108, 147, 148
Բեհավենդի հովիտ 105
Բեյրութ 7, 322
Բենեքի (Բանակ) սանջակ 182
Բենիկուտուր սանջակ 179
Բեոլին 131
Բերդա սանջակ 179
Բերդագրակի սանջակ 182
Բերդակ գավառ 184
Բերիա (Պերա) 88, 102, 137, 280
Բերկրի 43, 44, 57, 67, 74, 179
Բիթլիս (Բաղեշ) 19, 28, 29, 31, 32, 35, 41—45, 50, 55, 59, 67, 72, 74, 75, 112—114, 179, 180, 190, 200, 210, 211—213, 215, 216, 219, 224, 243, 249, 255, 288, 307, 310, 314, 315, 316, 321, 323, 324, 367, 386, 392
Բինգյոլ 140, 217, 254
Բյուզանդիա 48, 341, 376
Բյուզանդիա քաղաք 70
Բոգնիկ գյուղ 111
Բոզոքի սանջակ 184
Բոյու 187, 188
Բոռ գյուղ (Բաղեշի) 50
Բոսնիա 54, 76, 121, 148, 154, 173, 201
Բրուսա (Բուրսա) 132, 135, 146, 150, 154, 168, 239, 322
Բոսֆորի սանջակ 154

Գալաթիա (Գաղատիա) 102, 119, 137, 153, 168
Գաղղիա (Ֆրանսիա) 90, 237, 238
Գանձակ, Գյանջա 65, 96, 101, 103, 107
Գավաշ 41, 44
Գենջ 202
Գեոմյուլեք բերդ 289
Գեորգիևսկ ամրոց 126, 382
Գերմանիա 27, 54, 56, 237, 239, 339, 347, 368
Գիլան 93, 95, 103
Գլաձոր 339
Գյոկկյումբեթ (Գեղանիստ) 68
Գյուզելհիսարի բերդ 311
Գյումուշխանե 149, 314—316
Գոզանտաղի 185
Գրիգորիոպոլիս 382
Գուգարք 182

Դաղստան 24, 46, 49, 64, 92, 103, 128, 130
Դամասկոս 135, 151, 322
Դամուրղափու 149
Դանուբ 122, 124
Դարանաղյաց գավառ 217
Դարգազի 38
Դարդանել 14
Դարսիախ գյուղ 249
Դերբենտ (դ) 64, 377
Դերջան 23, 33, 34, 39, 177, 217, 311, 330, 332
Դերջանի հովիտ 169
Դերսիմ 186
Դիադին 178
Դիարբեքիր 45, 61, 70, 73, 117, 124, 124, 135, 147, 179, 183, 184, 188, 195—197, 199, 200, 212, 216, 217, 225, 236, 238, 243, 254, 255, 265, 28, 303, 311, 316, 321, 334, 387
Դիվրիկ (Տիվրիկ) 118, 125, 129, 182, 184, 297, 311, 316, 330
Դնեստր 131

Եգիպտոս 66, 101, 357, 369
Եդեսիա 138, 343
Էթիոպիա 138
Եկեղյաց գավառ 56
Եղվարդ 97, 104, 109, 110
Եվդոկիա (Թոխաթ) 88, 137, 144, 225, 331
Եվրոպա 6, 14, 27, 40, 66, 80, 81, 83, 130, 131, 141, 176, 177, 187, 209, 238, 240, 260, 275, 295, 314, 322, 339, 343, 346, 349, 352, 355, 358, 360, 362, 366, 368, 370, 376, 377, 383
Երասխ գետ 59
Երզնկա 23, 28, 31, 44, 56, 137, 149, 153, 171, 177, 254, 255, 279, 294, 307, 308, 309, 311, 313, 316, 317, 320, 330

27—497

Երնջակի գավառ 340
Երուսաղեմ 16, 30, 56, 232—234, 240, 245, 249, 251, 322, 372
Երևան 7—10, 17, 20, 25, 32, 34, 36, 41, 50, 51, 56, 57, 60, 65, 68—70, 97, 98, 101, 103—106, 109, 110, 118, 119, 135, 149, 156, 178, 190, 212, 248, 326, 329, 340, 341, 365, 369, 378, 379, 382, 388, 391
Երևանի բերդ 56, 57, 65, 69, 70
Եփրատ գետ 144, 316, 320
Եփեսոսի ծովեղր 153

Զարեշատի սանջակ 181
Զեյթուն 190

Զեռնակա բերդ 79
Զըրբխան 179
Զմմառ 16
Զմյուռնիա, Իզմիր 125, 137, 236, 238, 239, 241, 248, 322, 387
Զմոին 153

Էգեյան կղզիներ 74
Էգեյան ծով 81
Էգիլ 183, 202
Էմբիա 42
Էնկել 140
Էջմիածին 34, 87, 118, 134, 156, 221—224, 227—231, 251, 299—301, 338, 340, 344, 345, 350, 351, 353, 362, 372, 374, 380, 383, 388, 389
Էրգանի 293, 294
Էրզրում (Արզրում, Կարին) 23—33, 35, 39, 40, 42—46, 49, 51, 57, 58, 63, 65, 66, 68, 69, 71, 88, 91, 92, 93, 96, 106, 109, 112—115, 125, 126, 135, 147, 154, 155, 160, 163—171, 177, 178, 181, 182, 187, 188, 191, 195—197, 199, 202, 203, 207, 208, 212, 216, 217, 219, 225, 236—238, 242, 245, 254—256, 258, 272, 280, 284, 289, 294—297, 302, 308, 309, 311, 312, 316, 317, 319, 320, 325, 326, 332, 367, 383, 386, 387
Էրզրումի, Կարինի բերդ 169
Էրզրումի դաշտ 57, 253, 254

Թադվան 114
Թալին 34,
Թամանի բերդ 96
Թամերետ 42
Թավսկերի սանջակ 182
Թավրիզ (Թեվրիզ) 23, 24, 29, 30, 33, 36, 38, 40, 48, 51, 52, 56, 60—63, 67, 70, 72, 98, 99, 102, 103, 151, 156, 179, 236, 248
Թարսիս 153
Թբիլիսի, Թիֆլիս, Տփղիս 16, 17, 20, 24, 47, 60, 96, 101, 103, 128, 340, 386
Թերալեթի սանջակ 182
Թերեք ամրոց 64
Թերջիլ 183, 184, 199, 210
Թեքման 177
Թմուկ բերդ 47
Թոխաթ (Թոքաթ) 125, 144—147, 188, 225, 236—238, 240, 304, 311, 316, 317, 321—323, 331, 351, 367, 387
Թորդում 316
Թորթում 42, 177, 178
Թրակիա 62, 301
Թումեք (Թմու) բերդ 47
Թուրքիա 12, 14, 19, 22, 23, 25—27, 29, 38, 44, 52—56, 62—64, 66, 71, 76—80, 83, 91—97, 99, 101, 105—108, 120, 122, 123, 126—128, 130, 131, 150, 156, 176, 187, 192, 230, 232, 237, 241, 244, 251, 253, 258, 260, 261, 272, 274, 276, 278, 286, 299, 307, 313, 316, 319, 324, 328, 330, 340, 354, 355, 358—371, 375—380, 384, 388, 390, 391

Իկոնիա (Կոնիա) 40, 117, 153, 155
Իմերեթիա 120, 390
Իսյան 189
Իսպահան 92, 103, 248
Իսպանիա 130, 369
Իտալիա 340, 369
Իրան 15, 25, 27, 33, 34, 38, 40, 45, 46, 47, 52—55, 58, 60, 61, 63—66, 71, 82, 91—96, 98—101, 103, 105—107, 109, 110, 126, 150, 213, 230, 235, 244, 276, 321, 324, 354, 365, 368, 377, 379, 380, 383, 384, 388, 391
Իրաք 164

Լազիստան 182
Լարենդա 117
Լեզկի 316
Լեհաստան 62, 80, 130, 147, 345, 347, 348, 369
Լեոպոլիս 348
Լեպանտո 47, 122
Լեռնային Սասուն 190
Լիբանան 121, 151, 152
Լիզ բերդ 113
Լիկուռնա 241
Լիմ անապատ 273
Լիվանեի սանջակ 182
Լիվոռնո քաղաք 369
Լիտվա 376
Լոնդոն 131
Լոռի 104
Լվով 348

Խարուբ սանջակ 184
Խամութ 178
Խաչեն 49
Խաս գյուղ 250
Խարբերդ (Խարպուտ) 184, 266, 294
Խեչերեսի ամրոց 114
Խերթվիսի սանջակ 182
Խերցուշի սանջակ 182
Խզու (Հզու) 184, 202, 216, 238
Խիարայ գյուղ 53
Խիզան 30, 53, 179, 210
Խլաթ (Ախլաթ) 31, 36, 39, 41, 43, 44, 47, 114, 179, 213, 310, 315
Խնուս 44, 57, 113, 177, 178, 181, 189, 213, 216, 255, 310, 311, 316
Խոյ 51, 61, 63, 98
Խոշաբ 41, 72, 74, 79, 179, 210, 216
Խոջավան 246
Խորասան 60, 62, 106, 241
Խութ 42
Խուջվանի սանջակ 181
Խուջուջանի սանջակ 181

Կագավերդ (Եղվարդ) 109
Կազան 376
Կազանլի 255
Կալա-Բայազետ սանջակ 179
Կալեր սանջակ 184
Կալկաթա 383
Կախեթիա 126, 377
Կահիրե 144, 225
Կաղզվան 44, 106, 181, 314—316
Կամախ, Քեմախ 23, 28, 34, 137, 177, 217, 314, 316, 330, 332
Կամախի ամրոց 34
Կամենից 348
Կայաբերկ գյուղ 277
Կանդիա 268, 355—357, 363, 364, 376
Կանեց գյուղ 163
Կապադովկիա 136
Կապանմադեն 316
Կասպիական (Խազարական) ծով 46, 378
Կաստամոն 153
Կասրե Շիրին 5, 71, 177
Կարագաղ 254
Կարամանիա 26, 112, 117, 135, 150
Կարրի 97, 104, 218
Կարլովից 6, 73, 74, 76, 187, 271, 371, 380
Կարկայի սանջակ 179
Կարս, Ղարս 34, 39, 43, 45, 49, 50, 60, 64, 65, 68, 97, 101, 104—106, 109, 110, 116, 118, 153, 178, 181, 182, 195, 197, 225, 285, 321, 367, 391
Կարսի ամրոց 50, 64, 292
Կաֆա 62, 145, 147, 378
Կեղի (Քղի) 113, 177, 178, 217, 237, 316
Կեչվանի սանջակ 181
Կեսանիի սանջակ 179

Կեսարիա 55, 112, 137, 151, 168, 181, 238, 249, 322, 387
Կեսրիկ գյուղ 266
Կեսկիմի սանջակ 182
Կերբելե 110
Կերեշտես (Հաջ Օվա) 135, 136
Կիլիկիա 11, 34, 137, 152, 153, 184, 185, 189, 190, 223, 322, 339, 355, 356, 372, 373, 387
Կիպրոս 248, 356
Կիպրոսի ծով 368
Կյուհերչիլե 316
Կյուշյուք-Կայնարջի 14, 122, 123, 131
Կողոնիա 154
Կոմք գյուղ 116
Կոստանդնուպոլիս (Ստամբուլ) 7, 10—12, 15, 17, 21—23, 32, 39, 40, 48, 51—55, 62, 66, 68, 72, 78, 81—83, 86—89, 92, 93, 95, 96, 98, 99, 101, 102, 108, 109, 113, 116, 119, 123, 124, 128, 130, 131, 133, 134, 136, 137, 146, 147, 149, 155, 158, 159, 160, 165, 172, 174, 180, 199, 207, 211, 221, 223, 225, 227, 229, 231—233, 236, 237, 239, 240, 245, 246, 248, 249, 250, 251, 265, 275, 276, 278, 281, 300, 303, 308, 309, 311—314, 317, 322, 324, 325, 329, 332, 335, 341, 342, 345, 346, 352, 364, 368, 369, 376, 378, 385, 388, 391, 392, 393
Կովկաս 7, 91, 120, 131, 376, 378, 390, 393
Կտուց 307
Կրետե 268, 355—357, 363
Կուբան 122
Կուբան գետ 131
Կուզուջան 177, 178
Կուտինա 322
Կուր գետ 96

Հարեշտան 369
Հալեպ 62, 64, 73, 135, 151, 153, 240, 242, 245, 246, 280, 322, 355, 372, 383
Համա 151
Համադան (տ) 66, 96, 98—101, 276, 383
Համշեն 330, 334
Հայաձոր 43
Հայաստան 5, 8, 24, 26, 27, 30, 32—35, 41, 46, 47, 53, 60, 61, 66, 70, 71, 73, 77, 100, 108, 110, 128, 147, 153, 157, 183, 184, 192, 209, 215, 230, 235, 237, 238, 310, 311, 316, 330, 339, 340, 341—343, 345, 349, 350, 352, 358, 371, 376, 380, 382, 383, 385, 386, 391
Հայկական բարձրավանդակ 26, 27
Հայկական լեռնաշխարհ 68, 185, 190, 209
Հայոց աշխարհս Արևելից 43
Հաջարի 113
Հաջրեքի սանջակ 182
Հասան կալա (Հասանղալա) 64, 88, 171, 308
Հարավային Ադրբեջան 52
Հարավային Հայաստան 19, 45, 123, 200, 201, 210, 211, 334
Հելլեսպոնտ 364
Հերցոգովինիա 201
Հեքյարի շրջան 181
Հիզան 289
Հիսընիքեֆ սանջակ 184
Հյուսիսային Կովկաս 126, 130
Հնդկաստան 235, 237, 241
Հոլանդիա 237, 238, 356, 369
Հոոդոս 314
Հռոմ 5, 56, 82, 84, 134, 340, 343—348, 350—353, 362, 363, 366, 372, 375, 376
Հունաստան 85, 240, 254, 358, 376
Հունգարիա 27, 64, 136

Ձնքուշ 316

Ղազախ 104
Ղազմի 62
Ղալաթիա 16, 18, 88, 132, 133, 249, 273
Ղարաբաղ 34, 49, 98
Ղարաղաջ 49
Ղարիբերդու երկիր 150
Ղափան 98
Ղեսերիկ (Կեսարիա՞) 55
Ղզլար 384
Ղրիմ 40, 49, 62, 101, 108, 122, 129, 145, 225, 376 379, 382

Ճապաղջուր 183, 184, 189, 199

Մաղենդարան 93, 95, 100, 101, 103
Մալաթիա 73, 112, 137, 141, 297, 322
Մալթա 357, 363, 369
Մախջելի (Մաճախալի սանջակ) 182
Մակեդոնիա 301
Մահմբտունք 43, 44, 67
Մահմուտանաբ գավառ 74
Մաճխելի (Մաճախալի) սանջակ 182
Մամրվան (Նարիման) 177, 178
Մայաֆարկին սանջակ 183
Մանազկերտ (Մանծկերտ) 44, 113, 177—181, 216, 315, 320
Մանիսա 137
Մաստաբա (Թալին) 34
Մարաղա 38
Մարանդ 51, 70
Մարաշ 78, 112, 135, 153, 163, 185, 188, 238
Մարբվան 111
Մարմարա ծով 14
Մարսել 86
Մեծ Հայք 11, 23, 209, 215, 385
Մեծկերտ գավառ 184
Մեհրան սանջակ 184
Մեղրագետ 113
Մերձավոր Արևելք 6, 26, 355, 366
Մերճիմեք (Ոսպնբլուր) 113, 114
Մեֆարկին (Նփրկերտ) սանջակ 184
Միխալիջ 155
Միհրանի 183, 199
Միջագետք 35, 54, 66, 71, 164
Միջերկրական ծով 122, 174
Մծբին 184
Մշո դաշտ 41, 212, 254
Մշո լեռներ 215
Մոլդավիա 121, 131
Մոկս, Մոկք, 179, 189, 238, 307, 315, 338
Մողնի 104
Մոնղոլիա 239
Մոսկովստան, մոսկովաց երկիր 238, 345
Մոսկվա (Մոսկով) 27, 56, 91, 123, 124, 129, 131, 237, 376—379, 384, 385
Մոսուլ (Մուսուլ) 35, 108, 135, 236, 280, 293
Մորեա 121, 122
Մջնկերտ 177, 178
Մուղան 98
Մուշ 11, 16, 31, 39, 41—45, 112—114, 179—181, 213, 220, 222, 224, 243, 250, 279, 309, 315, 316, 321, 385, 386, 389, 391, 392
Մուշեղշեն գյուղ 219
Մուտուկա գյուղ 163
Մուրսալ գյուղ 118

Յախնի թեփե կոչվող տեղ 104
Յաս 131

Նագիկ գյոլ 255
Նախիջևան (Նախչուան) 45, 48, 51, 55, 56, 60, 65, 67, 98, 103, 339
Նեմցե (Ավստրիա) 129, 133
Նեջեֆ 110
Նիդդե 168
Նինվե 172, 280
Նոր Նախիջևան 382

Շահաստան (Թավրիզ) 51, 98, 99, 292
Շամ (Դամասկոս) 240
Շամախք 28, 95, 104, 377
Շամիրամակերտ 326
Շապին Կարահիսար 147, 167, 168, 178, 184, 199, 242, 316
Շավշեթ 182
Շատախ 189
Շարաղուլ 67
Շեհրիզոր 73

Շեհրիգուր գավառ 179
Շեսխան երկիր 154
Շեվշարի (Շավշեթի) սանջակ 182
Շիրվան (Շրվան) 24, 39, 40, 46, 49, 61, 95, 103
Շնքուշ գավառ 184
Շորագյալի սանջակ 181, 182
Շվեդիա 91, 130, 369
Շումնու կազա 277

Ոստան 29, 37, 39, 41, 43, 44
Որմի 98

Զալդրան 33, 34, 63
Զանգր (Զանկր) 97, 184
Զարչիխան 114
Զարսանջակ 183, 184, 307
Զեշմեյի ծովախորշ 122
Զերնոգորիա 76, 121
Զիչագ 292
Զլդրը 47, 49, 106, 117, 127, 128, 130, 182, 195, 196, 197
Զմշկածագ 184, 214
Զորում 112, 115, 141, 188, 307

Պարխալի սանջակ 182
Պարխար 316
Պարսկական ծոց 126
Պարսկաստան (Պարսք) 31, 50, 59, 60, 64, 68, 92, 95, 98, 99, 105, 106, 111, 126, 127, 154, 156, 236, 237, 239, 240, 269, 278, 349, 362
Պետերբուրգ 76, 120, 384
Պետրեկ 199
Պոլտավա 78
Պոնտոս 62
Պոնտոս, Տրապեզոն 153
Պոնտոսի ծով 40
Պրուսիա 130
Պրուտ գետ 77, 79
Պուխարա 237, 238
Պուղտանաց աշխարհ 147

Ջանիկ (Ճանիկ) 143, 144, 184, 316
Ջանկա դաշտ 79
Ջավախք (Ջավախեթ) 106, 182
Ջեգիրե 31, 62, 184, 202, 214
Ջենիս գյուղ 383
Ջերմիկ սանջակ 184
Ջերմուկ 184, 199, 212
Ջուլամերկ 44, 179, 217
Ջուլֆա (Ջուղա) 60, 65, 246, 248

Ռեշտ 100, 103
Ռիմնիկ գետ 131
Ռշտունիք 44
Ռոդոստո (Թեքիրդան) 162
Ռումելի 62, 84, 96, 125, 131, 147, 221, 224, 237, 254, 275, 277, 328
Ռումի երկիր 61
Ռումի (Սեբաստիայի վիլայեթ) 194
Ռուսաստան 5, 7, 8, 14, 27, 46, 62, 64, 71, 76, 77, 79, 80, 81, 91, 93, 97, 100, 101, 106—108, 120—123, 126—129, 134, 347, 355, 369, 370, 376—381, 383, 390, 391, 393

Սալմաստ 56, 61, 62, 63, 210, 292, 392
Սալյան 390
Սալոնիկ 78
Սակրզ (Հոոդոս) 314
Սաղման բերդ 200
Սաղման գավառ 184
Սամախոռ 237
Սամսուն 317
Սասուն 189, 190
Սավուր 184, 189
Սարուխան 150, 155, 187
Սարուսուս 39, 44
Սեբաստիա (Սբվազ, Սեբաստ, Սիվաս) 42, 110, 111, 114—117, 125, 135—137, 139—141, 153, 166, 167, 184, 186, 188, 194, 197, 222, 238, 245, 255, 280, 285, 311, 313, 316, 317, 321—323, 325, 332, 337, 349, 350, 351, 356, 367
Սեբաստիայի (Սբվազ) դաշտ 254
Սենկլու 369
Սենջար սանջակ 184

Սեվերեկ 137, 184
Սերավի դաշտ 65
Սեփեդլու կոչված վայր 143, 168
Սինգոթի սանջակ 182
Սինոպ 236
Սիս 153, 185, 189, 222, 223, 228, 231, 289, 299, 340, 350, 353, 372
Սիսվան 151
Սիրիա 54, 121, 151, 152
Սիփան 255
Սկյուտար 250, 251
Սղերտ 184, 316
Սյունիք 98, 339
Սոլթանիա 38
Սոկման 210
Սողանլու 64
Սոֆիա 379
Սոֆյանի դաշտ 56
Սպահան 56, 62, 365, 379
Սպեր 177, 178, 330
Ստորին Կեղի 217
Սուրհան (Սիփան) 255
Սև ծով 7, 76, 80, 107, 108, 120, 122, 235, 311, 367, 349

Վալախիա 121, 131, 379
Վահանշեն 149
Վաղարշապատ 53, 223
Վան 17, 28, 29, 36—39, 41, 43—45, 48, 51, 55, 57, 61, 62, 67, 68, 69, 71, 72, 74, 75, 79, 96, 97, 101, 110, 135, 151, 178, 180, 195—197, 199, 200, 210, 212, 213, 216, 219, 224, 225, 228, 243, 246, 252, 254, 255, 263, 285, 289, 290, 292, 302, 307, 308, 312, 314, 315—317, 321, 326, 330, 367, 386, 387, 391
Վանի բերդ (Վանա) 36, 40, 41, 255
Վանա երկիր 28, 37, 43, 61, 69, 70, 115, 308
Վանա ծով 51, 255, 316
Վասպուրական 16, 17, 29, 36, 38, 39, 44, 51, 74, 79, 179, 218, 219, 223, 231, 307, 321, 334, 337, 338, 369
Վարագ 37, 72, 218, 222, 244, 255, 270, 308
Վարանդ 49
Վատիկան 362
Վարեն 130
Վենետիկ 7, 11, 12, 16, 26, 27, 37, 56, 64, 117, 151, 155, 239, 252, 270, 281, 328, 335, 344—346, 348, 350, 352, 353, 363, 369, 385, 387
Վերեք (Վարագ) 254
Վերին Կեղի 217
Վերին և Ստորին Աջարա 182
Վերին և Ստորին Իմերխեվ 182
Վերսալ 369
Վիեննա 16, 29, 38, 64, 134, 172, 219, 263, 288, 340, 347, 368, 370
Վրաստան (Դյուրջիստան) 20, 24, 31, 39, 42, 44, 46, 47, 62, 67, 76, 93, 94, 96, 100, 120—122, 126, 127, 128, 131, 166, 182, 256, 296, 342, 367, 377, 383, 385, 388, 390, 391

Տաթև 339
Տալիա 241
Տայք 182
Տանավիս գետ 301
Տավրոսի լեռնաշղթա 185
Տարոն 35, 44, 64, 219, 307
Տարոնո դաշտ 153
Տեվելու գավառ 185
Տիրերո երկիր 153
Տիգրանակերտ 17, 18, 280
Տիգրիս գետ 66, 279, 316
Տիզակ 49
Տոնովո 379
Տոսկանա 56, 152
Տրապիզոն 23, 31, 126, 153, 195, 196, 197, 235, 236, 314, 316, 330, 368, 370
Տրիեստ 133, 134
Տուժիկ գավառ 217
Տուրուբերան (Տարուբերան) 44, 179, 219

Ուլնիա 190
Ուկրաինա 378
Ուղթի սանջակ 182
Ուլքիլիսե (Էջմիածին) 34
Ուրմիա լիճ 61
Ուրֆա (Ուրհա) 73, 79, 97, 135, 138, 141, 174, 322, 343

Փասավանք 338
Փարիզ 66, 357, 358, 363, 364, 368, 369, 372
Փերի գավառ 184
Փոսխովի սանջակ 182
Փոքր Ասիա 11, 23, 25, 26, 61, 73, 78, 100, 109, 111, 117, 125, 131, 135, 136, 143, 150, 153, 158, 167, 168, 187, 191, 201, 224, 239, 240, 243, 248, 285, 301, 311, 312, 322, 330
Փոքր Արղահանի սանջակ 181
Փոքր Հայք 23, 184, 215, 321
Փուլ-ի Շիքեստե վայր 65

Քաջբերունի 44
Քառափոսիս գյուղ 68
Քարթլի 103, 105, 126
Քարսահ գետ 104
Քարքու 67
Քելքիթ 177
Քահրանի սանջակ 181
Քեմախ, կամախ 177
Քեմբրիջ 328
Քեշիշ-գյոլ 255
Քերման շահ 96, 101
Քերքուկ 103
Քիլիս 152
Քյութահիա 124, 147, 187
Քրդիստան 30, 31, 33, 38, 42, 73, 110, 121, 199, 200, 201, 209—211, 213, 215, 216
Քուշկունճուք 251

Օլթիի սանջակ 182
Օսբեկստուն, Ուզբեկիստան 241
Օվաջրկ սանջակ 179

Ֆեննեսկերտի կամ Ֆանասկերտի սանջակ 182
Ֆեննեքի (Փեննեք) սանջակ 182
Ֆլորենցիա 340
Ֆոկշան 131
Ֆռանկստան (փռանկաց աշխարհ, Եվրոպա) 147, 230, 244, 314, 348 364, 369
Ֆրանսիա 7, 14, 40, 76, 81, 83, 84, 90, 95, 107, 119, 122, 132, 239, 339, 355, 364, 369

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Գլուխ առաջին

Արևմտյան Հայաստանի քաղաքական վիճակը XVI—XVIII դդ. 23

Գլուխ երկրորդ

Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ . 135

Գլուխ երրորդ

Սոցիալ-տնտեսական հարաբերություններն Արևմտյան Հայաստանում XVI—XVIII դդ. 175

Գլուխ չորրորդ

Ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում XVI—XVIII դարերում 337
Օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկ 391
Անձնանուններ 404
Տեղանուններ 415

ՄԱՆՎԵԼ ԿԱՐԱՊԵՏԻ ՋՈՒԼԱՅԱՆ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XVI—XVIII դդ.

Հրատ. խմբագիրներ Ա. Հ. Զաքարյան, Ջ. Խ. Օրմանյան
Գեղ. խմբագիր Հ. Ն Գործակալյան
Տեխ. խմբագիր Հ. Մ. Մանուչարյան
Սրբագրիչ Մ. Վ .Հակոբյան

ИБ 346

Հանձնված է շարվածքի 19. 05. 1980 թ.։ Ստորագրված է տպագրության 20. 11. 1980 թ.
ՎՖ 09127։ Չափը 60×84 1/16, թուղթ № 1։ Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպագրություն, տպագր. 26,63 մամուլ., պայմ. 24,77, հրատ. 22,75 մամուլ։ Տպաքանակ 3000։ Պատվեր 497։ Հրատ. 5288։ Գինը 3 ռ. 70 կ.։

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ։
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019։ Երևան, Բարեկամության փ., 24։

Издательство АН Арм. ССР, Ереван, 375019, ул. Барекамутян, 24 г.
Типография Издательства АН Арм. ССР, Ереван, 375019,
ул. Барекамутян, 24.